ԱՐՏԵՄ ՕՀԱՆՋԱՆՅԱՆ

1915 թվականի

ԱՆՀԵՐՔԵԼԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Ավստրիական վավերագրերը հայոց ցեղասպանության մասին)

In Richtlinien für deutsche Journalisten vom 7. Oktober 1915:

Über die Armeniergreuel ist folgendes zu sagen: Unsere freundschaftlichen Beziehungen zur Türkei dürften durch diese innertürkische Verwaltungsangelegenheit nicht nur nicht gefährdet, sondern nicht einmal geprüft werden. Deshalb ist es einstweilen Pflicht zu schweigen. Später, falls direkte Angriffe des Auslandes wegen deutscher Mitschuld erfolgen sollten, muß man die Sache mit größter Sorgfalt und Zurückhaltung behandeln und stets hervorheben, daß die Türkei schwer von den Armeniern gereizt wurde.

9(47 925)
О-45

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐՏԵՄ ՕՀԱՆՋԱՆՅԱՆ

1915 ԹՎԱԿԱՆ.
ԱՆՀԵՐՔԵԼԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**(Ավստրիական վավերագրերը
հայոց ցեղասպանության մասին)**

Երեւան 1997

ԳՏՀ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ) 52
Օ-453

ՄԵԿԵՆԱՍՈՒԹՅԱՄԲ՝
Ավստրիայի Հանրապետության գիտության եւ երթեւեկության նախարարության ու

Կուլտուր-կոնտակտ կազմակերպության

Օհանջանյան Արտեմ,
1915 թվական. անհերքելի վկայություններ,-
Թարգմանիչ՝ Լեւոն Սարգսյան
Եր. : ՀՀ ԳԱԱ, 1997, 248 էջ:

Գրքին նախորդել է Վիեննայում 1989 թ. լույս տեսած «ARMENIEN Der verschwiegene Völkermord» գիրքը, որի թարգմանությունն է որոշ խմբագրումներով սույն հրատարակությունը:

ISAN
O—0503000000/(02) 97—1 997

ԳՄԴ 63.3(2Հ) 52

© Արտեմ Օհանջանյան, 1997 թ.

ՎԱՂԱՄԵՌԻԿ ԵՂԲՈՐՄ՝
ԺՈՐԺ ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻ
ՀԻՇԱՏԱԿԻՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գերմաներեն հրատարակության նախաբանը 5
Առաջաբան 7
Երկու խոսք 8
1. Հայկական Հարցը 11
2. Երիտթուրքերը 35
3. Հայկական ռեֆորմները 48
4. Առաջին աշխարհամարտը 71
5. Առաջին աշխարհամարտը եւ հայերը 79
6. Եղեռնը 85
7. Եղեռնի թվերը 108
8. Պատասխանատուները 116
9. Վերջին իրադարձությունները 120
10. Ռուսական հեղափոխությունը 125
11. Թուրքերի առաջխաղացումը Կովկասում 131
12. Անդրկովկասյան Հանրապետություն 147
13. Հայաստանի Հանրապետություն 153
14. Հայաստանի Հանրապետության խնդիրները 164
15. Բաքվի անկումը 173
16. Ամենայն Հայոց կաթողիկոսի դիմումը կայսր Կարլին 178
17. Փախստականների հարցը 180
18. Հասարակական կարծիքը Ավստրիայում 185
19. Ավստրո-Հունգարիայի օգնությունը 202
20. Մեղսակցությունը 215
Ամփոփում 229
Վերջաբան 233
Ուտո՞պիա 236
Թուրքական բանակի գլխավոր շտաբում ծառայող
գերմանացի սպաները 237
Թուրքիայում Գերմանիայի ու Ավստրո-Հունգարիայի
դեսպաններն ու հյուպատոսները 237
Թուրքիայի պետական գործիչները 238
Արխիվներ 240
Գրականություն 241
Անձնանունների ցանկ 243

ԳԵՐՄԱՆԵՐԵՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԲԱՆԸ

Ավստրիական մի պատվիրակության կազմում 1988 թ. սեպտեմբերի 12-ին ես Խորհրդային Հայաստան այցելեցի: Երեւանի Թատերական հրապարակում մենք ականատես եղանք հսկա զանգվածների ցույցերին: Ժողովուրդը «Արցախ», «Միացում» կոչերով իր համերաշխությունն էր արտահայտում Լեռնային Ղարաբաղի ապստամբությանը: Ինքս հիացած էի հայ երիտասարդությամբ, որը ամբողջ հոգով ձգտում էր աջակցել, օգնել արցախցիներին: Մարդիկ, օպերայի հրապարակում խումբ-խումբ հավաքված, քննարկում էին Ղարաբաղի քաղաքական իրավիճակը: Ես ավստրիական հեռուստատեսության խմբի հետ վավերագրական ֆիլմ էի պատրաստում Հայաստանի մասին, երբ սեպտեմբերի 21-ին խորհրդային զորքերը Երեւան մտան եւ տանկերով ու զրահամեքենաներով շրջապատեցին հրապարակները: Ժողովուրդը վրդովված էր եւ հուզված:

Հայտնի է, որ Ղարաբաղը պատմական Հայաստանի տարածքն է, ու այժմ նրա բնակչության 80 տոկոսը հայեր են: 1918 թ. ստեղծվեց Ադրբեջանի մուսաֆաթական հանրապետությունը, որը ձգտում էր Ղարաբաղի տարածքն իր կազմի մեջ մտցնել: Ցնունդ առավ Ղարաբաղի հարցը: Ղարաբաղի ներկայացուցիչների համագումարը 1918-ի հուլիսի 17-ին հրապարակեց իր բողոքը: Երբ 1918 թ. հոկտեմբերին անգլիացիները Անդրկովկաս մտան, հայերն ուրախացան, քանի որ Հայաստանը դաշնակից էր Անգլիային: Սակայն անգլիացիները թույլ չտվեցին Ղարաբաղը միացնել Հայաստանին ու հարցը թողեցին Փարիզի կոնֆերանսի որոշմանը: Նրանք խուսափում էին հարցը հօգուտ Հայաստանի լուծել, մտածելով, որ այդ քայլով կփակեն Բաքվի նավթի հոսքը դեպի Մեծ Բրիտանիա:

Հայաստանը Խորհրդային Միության կազմի մեջ մտնելուց հետո, 1920 թ. Ղարաբաղն ու Նախիջեւանը Հայաստանի մաս հայտարարվեցին, բայց շուտով տրվեցին Ադրբեջանին: Ընդհուպ մինչեւ գորբաչովյան վերակառուցման սկիզբը արցախահայությունը բողոքներ է հղել Մոսկվա՝ Հայաստանին միանալու պահանջներով: Սակայն միշտ էլ ապարդյուն: Հասարակության ժողովրդավարացումն ու բացախոսությունը հնարավորություն ընձեռեցին հայերին թե՛ Ղարաբաղում եւ թե՛ Խորհրդային Հայաստանում բորբոքել շարժումը: Ոտքի կանգնեց ողջ հայությունը: Սակայն դժվար էր կանխատեսել, որ այդ շարժումը որոշ մարդկանց ազգայնամոլության կմղի: Զարմանալին այն է, որ խորհրդային 70-ամյա ինտերնացիոնալիզմից հետո, գուցե եւ հենց դրա պատճառով, առաջացավ ազգային մոլեռանդությունը:

Սակայն իրականությունն այն է, որ Հայաստանն ու Ադրբեջանը երկու հարեւան երկրներ են, եւ անհնար է Հայաստանը Եվրոպա տեղափոխել կամ թե Ադրբեջանը՝ Միջին Ասիա: Հարեւանները պետք է իրար հետ լեզու գտնեն: Հարեւանների միջեւ հակամարտությունը միմիայն երրորդի օգտին է լինում: Ուրեմն՝ մնում է համբերությամբ, բանակցությունների միջոցով լուծել խնդիրը: Իսկ նացիոնալիզմը ժողովրդական զանգվածներին օգտագործելու միջոց է: Ինչո՞ւ չենք կարող, կամ թե չենք ցանկանում սովորել անցյալի դասերից: Սակայն սխալներն արդեն կյանքի ուժ են ստացել: «Այս հարցերում պետք է նկատի ունենանք մեր աշխարհագրական դիրքը»,- ասել է Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը: Սա պետք է լինի հայ ժողովրդի ամենակարեւոր խրատը:

ԱՐՏԵՄ ՕՀԱՆՋԱՆՅԱՆ

ԱՌԱՋԱԲԱՆ

Տարիներ են անցել Ղարաբաղյան շարժման թեժ օրերից, որոնց ականատեսն էի ես 1988-ին: Հիմա Ղարաբաղը վերստացել է իր հին Արցախ անունը: Ղարաբաղն իրեն անկախ է համարում եւ ունի իր կառավարությունը: Սակայն Արցախի հարցը դեռեւս վերջնական լուծում չի գտել: Թե ինչպիսին կլինի այդ լուծումը, դժվար է գուշակել: Դժբախտաբար, Արցախի հարցը, ինչպես եւ ողջ հայկական հարցը միայն հայերի կամոք չի լուծվում: Մեր աշխարհագրական դիրքը զբաղեցնում է նաեւ հզոր տերություններին: Սակայն ո՞վ պետք է պաշտպանի հայերի շահերը:

Ի՞նչ է ցույց տալիս անցյալը:

Սխալներ շատ են կատարվել: 1918-20 թթ. Եվրոպան եւ Ամերիկան չպաշտպանեցին հայերին: Այն, ինչ հայերին խոստացան Սեւրում, միայն թղթի վրա մնաց, ու ոչինչ չստացան հայերը:

Այսօր հայերի հակառակորդները, ինչպես եւ 1918-20 թվականներին, Եվրոպայի եւ Ամերիկայի նույն դաշնակիցներն են: Նրանց ճանապարհը դեպի Ադրբեջան ու Միջին Ասիա անցնում է Հայաստանով: Այսինքն՝ ծրագիրը նույնն է մնացել:

«Այս հարցերում պետք է նկատի ունենանք մեր աշխարհագրական դիրքը»,- ասել է Ամենայն հայոց կաթողիկոս, լուսահոգի Վազգեն Առաջինը 1988 թվականին: Կօգտվե՞ն, արդյոք, հայերը այս իմաստուն մտքից:

ԱՐՏԵՄ ՕՀԱՆՋԱՆՅԱՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Արտեմ Օհանջանյանը իր աշխատությունը սկսում է հայերի մեծ բարեկամ Լեփսիուսի ցիտատով. «Միայն քրիստոնյա հզոր երկրները պատճառ դարձան հայոց ազգի ողբալի ոչնչացմանը»: Այդպես նա ոճրագործության պատասխանատվությունը դնում է քրիստոնեական հզոր երկրների վրա:

Չկա հայ-թուրքական ավանդական թշնամություն, ընդհակառակը, մինչեւ տասնիններորդ դարը հայերը կոչվում էին «միլաթի սադիղա» (հավատարիմ ազգ): Ողբալի իրադրությունը սկսվեց այն օրվանից, երբ Օսմանյան կայսրությունը բալկանյան ժողովուրդներին ստիպված էր ազատություն տալ, եւ հայերն իրենց կրոնական ինքնավարությունը փոխեցին քաղաքական ինքնավարության համար պայքարով: Այդ պատճառով էլ Թուրքիան իր հողատարածքների կորստի վտանգ զգաց: Հզոր երկրների՝ ամերիկյան ու եվրոպական միսիոներների քարոզչության միջոցով հայերին պատիր հույսեր ներշնչեցին, որի արդյունքը բացասական էր: Նման ծրագիր ունեցող հայ փոքրամասնությունը Օսմանյան կայսրությունում հայ մեծամասնությանը դրեց բնաջնջման սպառնալիքի տակ*: Հայերի զոհերի մասին որեւէ փաստված թիվ չկա: Թուրքամետ գիտնականների (Ստանֆորդ, Զ. Շավ-Էզել, Քուրալ Շավ)** կարծիքով, «մոտավորապես 200.000 հայ ոչնչացան ոչ միայն տեղահանումների, այլեւ հիվանդությունների եւ ընդհարումների պատճառով»: Ամերիկյան հետազոտող դր Զ. ՄքՔարթին իր «Մուսուլմանները եւ փոքրամասնությունները, Օտտոմանյան Անատոլիայի բնակչությունը կայսրության վերջին տարիներին» գրքում սպանված հայերի թիվը տալիս է 600.000 մարդ***: Անորոշ թվով հայ կանայք ու աղջիկներ բռնի տարվել են մուսուլմանական ընտանիքներ: Նույնքան էլ մահմեդականացվել են:

Բայց ինչպիսի՞ն էր գերմանացիների ու ավստրո-հունգարացիների պահվածքը հայերի հալածանքների հանդեպ: Աղբյուրները հայտնում են, որ գերմանական եւ ավստրո-հունգարական դիվանագետները մինչեւ 1915 թ. ուշ ամառը, իսկ որոշ մարդիկ՝ էլ ավելի ուշ, համոզված էին, որ հայկական ընդհանուր ապստամբության դեմ օսմանյան կառավարությունը պետք է բռնություն գործադրի: Մինչեւ 1917 թ. նրանք շարունակում էին գործել թուրքերից փոխառնված այդ բնորոշումով: Կ. Պոլսի գերմանական դիվանագետների պահվածքի մասին, որոնք ջանում էին օգնություն մատուցել Թուրքիային նրա հակահայկական գործողություններում, արդեն գրվել է Լեփսիուսի կողմից ու վերլուծության ենթարկվել: Ավստրո-Հունգարիայի դիվանագետները եւս հավատում էին թուրքերի կողմից իրենց ներշնչվող այն գաղափարին, որ հայերն ըմբոստանում են եւ բռնել են թշնամության ուղին: Նրանք դեմ չէին թուրքական այն քայլերին, որ կատարվում էին ընդդեմ օսմանյան

* Wolfdieter Bihl, Die Kaukasus-Politik der Mittelmächte. Teil I (Wien-Köln-Graz 1975), S 166-181

** Stanford J. Shaw-Ezel/Kural Shaw. History of the Ottoman Empire and Modern Turkey. Vol. 2

*** Erich Peigl. Ein Mythos des Terrors. Armenischer Extremismus-seine Ursachen und Hintergründe (Freilassing-Salzburg 1986), S. 80.

իշխանությունների հանդես եկող հայերի նկատմամբ:

Բայց նրանք դեմ էին հայ ազգի, մանավանդ կանանց ու երեխաների հանդեպ հալածանքներին: Հետաքրքիր է, որ Պալավիչինին (Ավստրո-Հունգարիայի դեսպանը Կ. Պոլսում), ինչպես եւ Վանգենհայմն ու Հոհենլոհեն (գերմանական դեսպաններ) ոչ մի գրավոր բողոք չեն ուղղել Բ. Դռանը: Փաստաթղթերը ցույց են տալիս, որ Պալավիչինին միայն բանավոր բողոքել է:

1915 թ. մայիսի 1-ին նա Թալեաթին նախազգուշացրեց, որ հայ կանանց ու երեխաների հալածանքները կնպաստեն Թուրքիայի թշնամիների հակաթուրքական քարոզչությանը: Նրա զեկույցից պարզ երեւում է, որ շատ զգույշ էր խոսում թուրքերի հետ այդ մասին, որպեսզի չվիրավորի նրանց զգացմունքները: Տրապիզոնում Ավստրո-Հունգարիայի ներկայացուցիչ Կվյատկովսկին հնարավորին չափ փորձել է օգնել հայերին: Աղբյուրներից չի երեւում, թե Բուրյանը (Ավստրո-Հունգարիայի արտաքին գործոց նախարարը) կամ Պալավիչինին դիվանագիտական բողոքներին զուգահեռ ավելի ակտիվ դիրք են ընդունել, ասենք, տնտեսական ճնշումների գործադրումը, որով ճնշման տակ կդնեին թուրքերին: Գերմանացիները նույնպես այդ ուղղությամբ լուրջ միջոցներ չեն ձեռնարկել: Պալավիչինիի եւ Թրաուբմանսդորֆի (Ավստրո-Հունգարիայի կառավարության առաջին խորհրդատու) զեկուցումների մեջ հայերի վիճակի վերաբերյալ կան շատ սուր արտահայտություններ թուրքերի հանդեպ: Պալավիչինին արտահայտվում է հայոց տեղահանումների եւ ջարդերի մասին: Այսպես, 1916 թ. մարտի 10-ին նա գրում է. «Դա կմնա մի հավիտենական խարան թուրք կառավարության համար»:

Հայերի արտաքոց ողբերգությունն այն է, որ 1916 թ. ամռանը նրանք արդեն քաղաքականության օբյեկտ էին դարձել հզոր երկրների համար: Ռուսաստանը, որը Հայաստանին ինքնավարություն էր խոստացել, եւ այդ պատճառով հայերը զինվել էին (նրանց մեջ կային նաեւ թուրքահպատակ հայեր), Հայաստանը բաժանել էին ֆրանսիացիների եւ իրենց միջեւ, իհարկե, առանց հայերի հետ խորհրդակցելու: Իրենց պատկանող մասում նրանք ուզում էին կոզակներ եւ ռուսներ բնակեցնել ու հետո միացնել Ռուսաստանին:

Օհանջանյանը չի հենվում Անտոնյան փաստաթղթերի վրա*, որոնք վիճահարույց են: Նա հենվում է ավստրո-հունգարական փաստաթղթերի վրա, որոնք հիմնականում Ավստրո-Հունգարիայի գործիչների զեկուցագրեր են: Այս փաստաթղթերը ճշմարտացիության տեսակետից հեռու են վիճելի լինելուց: Դրանք խոսուն վկայություններ են:

Իհարկե, դա չի նշանակում, որ ես համամիտ եմ Օհանջանյանի գրած ամեն մի մտքի հետ: Նրա նշումներն ու բացատրությունները սուբյեկտիվ են, բայց նա հայ լինելով հանդերձ զարմանալի անաչառության է հասել: Հետաքրքրություն է ներկայացնում Օհանջանյանի թեզը. եթե տեղահանումների ժամանակ ավստրո-հունգարական ու գերմանական մի քանի գումարտակներ պաշտպանեին ժողովրդին, ապա զոհերի 2/3 մասը փրկված կլիներ:

Վոլֆդիթեր Բիհլ
Վիեննայի համալսարանի պրոֆեսոր

* Vahagn N. Dadrian, The Naim-Andonian Documents on the World War I Destruction of Ottoman Armenians: The Anatomy of a Genocide. In: International Jurnal of East Studies 18 (1986), S. 311-360.



Դարձնական ցուցանակ

1. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Թուրքերի կողմից Հայաստանը նվաճելուց հետո հայ ժողովուրդը զրկված էր ինքնուրույնությունից: Բարձր Դուռը որոշ արտոնություններ էր ընձեռել իր երկրում ապրող ազգային փոքրամասնություններին, ինչպես, օրինակ, կրոնի ազատ դավանանք, կրթական համակարգը, որը մինչ երիտթուրքերի իշխանության գալը թույլ վերահսկողության տակ էր գտնվում, անձնական կանոնադրության հարցերում ինքնավար դատավարություն: Բացի այդ, Հայոց պատրիարքարանը իրավունք ուներ Բ. Դռան առջեւ խոսելու ինչպես հայերի, այնպես էլ այլ քրիստոնեական փոքրամասնությունների անունից: Չնայած դրան, քրիստոնյաները դիտվում էին որպես «rajah» (հոտ) եւ նրանց նկատմամբ ամենուրեք վերաբերվում էին ինչպես երկրորդ կարգի քաղաքացիների[1]:

1863-ին milltei sadigha-ին (հավատարիմ ազգ, այպես էին կոչում հայերին, որովհետեւ նրանք համբերությամբ էին կրում իրենց լուծը) նույնիսկ մի նոր կանոնադրություն եւ ազգային ժողով ունենալու իրավունք տրվեց[2]:

Ղրիմի պատերազմից (1853-56 թթ.) ի վեր նկատվում էր հայերի վիճակի վատթարացում: Պարտություն կրած թուրքական բանակը պատերազմական գործողությունների թատերաբեմից նահանջելիս ավերում էր Հայաստանը: Դրան ավելացավ այն, որ Ղրիմի պատերազմից հետո Ռուսաստանից արտագաղթած չերքեզները քրդերի հետ միասին կողոպտում էին հայերին[3]: Հայերի դիմումներն ու բողոքները Բ. Դռանը արձագանք չէին գտնում, որի հետեւանքով 1867 թ. բռնկվեց Զեյթունի ապստամբությունը: Ֆրանսիացիները միջամտեցին, եւ ապստամբությունը դադարեցվեց, սակայն հայերի վիճակի բարելավում տեղի չունեցավ: 1839, 1856 եւ 1864 թվականներին Բ. Դռան կողմից հռչակված ռեֆորմների մասին օրենքները երաշխավորված էին միայն թղթի վրա, իսկ 1876-ին հռչակված օսմանյան սահմանադրությունը վերացվեց ռուս-թուրքական պատերազմից (1877-78) հետո[4]: Բարեփոխումները մնացին միայն որպես թղթի կտոր:

Հայ արհեստագործներն ու գյուղացիները միշտ երկու անգամ էին հարկ տալիս. մեկ անգամ՝ կառավարությանը, իսկ մյուս անգամ՝ բեյին: Գյուղացին պարտավորված էր շաբաթվա մեջ մի քանի օր բեյի համար աշխատելու, իսկ ձմռանը՝ նրա անասունները եւ հոտերը կերակրելու: Նրանք ճորտերի պես գյուղի հետ ծախվում կամ բաշխվում էին: Մարդասպանությունը կամ տուն ու կալվածք վառելը սովորական էին բեյի համար[5]:

Երբ բալկանյան ժողովուրդները եվրոպացիների օգնությամբ ազատագրվեցին

թուրքական լծից, հայերը հույս էին տածում, որ իրենք էլ կկարողանան ազատության հասնել Եվրոպայի քրիստոնեական պետությունների աջակցությամբ:

Եվրոպական փոքրամասնությունների ազգային խնդիրը 19-րդ դարում իր գագաթնակետին հասավ: *«Յուրաքանչյուր ազգ պետք է պետություն կազմի: Յուրքանչյուր պետություն պետք է միայն մի ազգ ընդգրկի»*[6]: Սա էր նշանաբանը:

Օտտո Բաուերը գրում է. *«Ազգային պետական շարժման համար խթան հանդիսացավ օտար տիրապետության թոթափման պահանջը: Այնտեղ, որտեղ օտար տիրապետությունը միաժամանակ նշանակում է ամբողջ ազգի ճնշում եւ շահագործում, այն թոթափելու պահանջը բացատրության կարիք չունի: Թուրք տիրակալները յուրացնում էին գյուղացիության աշխատանքի արդյունքի զգալի մասը: Այդ ժողովուրդը ստիպված էր իր տերերից գլխահարկով գնելու գոյության իրավունքը: Ատելի պայմանները, ինչպես, օրինակ, զենք կրելու կամ թամբած ձի նստելու արգելքը, արհամարհված rajah-ին ամեն օր զգալ էին տալիս ճնշված լինելու փաստը: Այնպես որ, ճնշված ժողովուրդը ստիպված էր ըմբոստանալ օտար տիրապետության դեմ, եթե շուտափույթ հաղթանակի միջոց էր նկատվում»*[7]:

Ազատագրական գաղափարների ազդեցության տակ հայ մտավորականները փորձեցին եվրոպական կազմակերպությունների հետ դաշինքի միջոցով իրականացնել ազատության պայքարի գաղափարները: Դա տեղի ունեցավ երկու ուղղությամբ: Նման մի գաղափար իրագործում էին Եվրոպայում սովորող հայ ուսանողները: Նրանք գտնվում էին իրենց հյուրընկալած երկրների ազգային շարժումների ազդեցության տակ եւ տարբեր կոմիտեների օժանդակությամբ հիմնում էին հայկական կազմակերպություններ: 1862-ին հայ ուսանողները Կ. Պոլսում հիմնեցին «Հայկ եւ Օրիոն» անվամբ մի գաղտնի կոմիտե, որը Մանչեստրի «Odd Fellows» մասոնական օթյակի մասնաճյուղն էր հանդիսանում: 1866-ին Կ. Պոլսում բացվեց մեկ այլ մասոնական օթյակ՝ «Սեր» անունով, որը «Grand Orient de France» օթյակի մասնաճյուղն էր: 1881-ին հայ ուսանողները Մոսկվայում հիմնեցին Հայրենասերների կազմակերպություն: 1887-ին Ժնեւում հիմնվեց Հայ Հնչակյան մարքսիստական կազմակերպությունը, իսկ 1890-ին Թիֆլիսում՝ Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցությունը:

Դաշնակցականները սերտորեն կապված էին ռուսական ծայրահեղ ահաբեկիչ կազմակերպության՝ «Նարոդնայա վոլյայի», ապագա Սոցիալ-հեղափոխականների կուսակցության հետ: Երկուսին էլ օգնում էր միեւնույն կազմակերպությունը[8]:

Մյուս ուղղությունն իրագործվում էր Թուրքիայում դպրոցներ բացած արտասահմանցի միսիոներների եւ գործակալների կողմից, որոնք մեծ մասամբ քրիստոնյա էին եւ ներարկում էին ազգային ու ազատատենչ գաղափարներ: Յոզեֆ Պոմյանկովսկին՝ Ավստրո-Հունգարիայի ռազմական կցորդը Կ. Պոլսում, իր հուշերում գրում է.

«Քրիստոնյա ազգությունների նկատմամբ թուրքերի վերաբերմունքում արմատական փոփոխություն կատարվեց միայն այն ժամանակ, երբ սկիզբ առավ ազատության համար քաղաքական պայքարը: Հույների հետապնդումները սկսվեցին անցյալ դարի սկզբներին, երբ ծայր առավ նրանց ազատագրական պայքարը: Հայկական ջարդերը սկսվեցին միայն 40 տարի անց, երբ այդ ժողովրդի մեջ, հավանաբար, անգլիացի կամ ռուս գործակալների գործունեության հետեւանքով, նկատելի դարձավ մի հեղափոխական շարժում՝ թուրքական լծից ազատագրվելու նպատակով»[9]:

Արտասահմանյան այդ քարոզչությունը Հայաստանում պարարտ հող գտավ, չէ՞ որ հայերը դարեր տեւող բռնությունների պատճառով պատրաստ էին ընկալելու ազատագրական յուրաքանչյուր գաղափար: Հունաստանը, Չեռնոգորիան, Սերբիան եւ այլ երկրներ ազատագրվեցին թուրքական տիրապետության լծից, ու այդ իրադարձությունները էլ ավելի բորբոքեցին թուրքերի հակակրանքը քրիստոնյաների նկատմամբ: Երբ սկիզբ առան հայերի ազատագրական շարժումները, այդ զգացումը վերափոխվեց ատելության՝ հայերի հանդեպ:

Ֆրիտյոֆ Նանսենն իր «Խաբված ժողովուրդ» գրքում գրում է. *«Անսահման էին կեղեքումները, կողոպուտներն ու դաժանությունները, որոնք այժմ էլ պետք է կրեին հայերը եւ որոնցում բռնակալ ու փչացած չինովնիկները, թուրքերից քաջալերված, մրցում էին քուրդ ավազակապետերի ու հրոսակախմբերի հետ»*[10]:

Միջամտելու հնարավորություն ընծեռվեց, երբ Ռուսաստանը , թուրքերի բուլղարական ջարդերից հետո, 1877-ի մարտի 19-ին պատերազմ հայտարարեց Թուրքիային: Երբ ռուսների հաղթանակն ակնհայտ դարձավ, հայկական Մեծ խորհուրդը Կ. Պոլսում 1877-ի հոկտեմբերի 21-ին առաջին անգամ որոշեց ժխտական դիրք ընդունել թուրքական կառավարության հանդեպ: Հայերը ռուսական ցարին ուղղված նամակով խնդրեցին իրականացնել հետեւյալ կետերը. 1) Ռուսաստանը Թուրքիային այլեւս չպետք է վերադարձնի մինչեւ Եփրատ ձգվող Մեծ Հայքի տարածքը: Ցարը պետք է դիտի այն որպես իր կայսերական տերության մի մաս եւ միավորի Արարատյան գավառի հետ: 2) Եթե ցարը իրականում խոստացել է տարածքային օգուտ չքաղել, ապա մենք Հայաստանի եւ հայ բնակչության հպմար խնդրում ենք ընծեռել այն բոլոր առավելություններն ու արտոնությունները, որոնք Նորին կայսերական մեծության կամքով տրվել են Բուլղարիային եւ բուլղար ժողովրդին: Դրանով Հայաստանը կստանար ռուսաց կայսեր հովանավորությունն ու երաշխիքը: 3) Այն դեպքում, եթե այս երկրամասը նորից վերադարձվելու լիներ օսմանյան կառավարությանը, նյութական երաշխիքներ պետք է տրվեն երկրում ռեֆորմներ անցկացնելու եւ քաղաքացիների իրավահավասարության համար: Այդ երաշխիքն այն է, որ ռուս զինվորները չհեռանան երկրից, իսկ ռեֆորմներն իրական օգուտ բերեն ժողովրդին: Դրա պայմաններն են.

ա) Ոստիկանների մեծ մասը պետք է հայեր լինեն,

բ) հայերը պետք է անցնեն նաեւ կանոնավոր զինամարզության,

գ) չերքեզներն ու քրդերը պետք է լրիվ հեռացվեն Հայաստանից կամ էլ, իջնելով իրենց սարերից, մշտական բնակիչներ դառնան քաղաքներում: Տեւական ժամանակ

նրանց պետք է արգելվի ոստիկան լինել,

դ) հայերը, առանց խտրականության, պետք է ընդգրկվեն պետական պաշտոններում, մասնավորապես հայ պետք է լինեն նշված գավառների վալիներն ու մութեսարիֆները: Բոլոր այս ռեֆորմների իրականացումից հետո միայն ռուսական բանակը պետք է ետ քաշվի գավառներից:

Փակագծերում 1-ին կետին ավելացված էր.

«Այս առաջարկությունը չի համապատասխանում մեր սրտի բաղձանքին: Բայց, եթե այս երկրամասերը բաժին ընկնեն Ռուսաստանին, ապա մեր ուժերից վեր կլինի դրա դեմ պայքարելը: Այդ պատճառով խնդրում ենք Ձերդ Սրբությանը հնարավորություն գտնել հոգևորականների ազդեցության միջոցով հասնելու այն բանին, որ փոփոխություններ տեղի չունենան այդ քաղաքների ու գյուղերի ներքին ազգային վարչակազմերում»[11]:

Պատերազմի սկզբից 6 ամիս անց ռուս զինվորները կանգնած էին Կ. Պոլսի մոտ: 1878-ի հունվարի 19-ին Ադրիանապոլսում կնքվեց զինադադար: Կ. Պոլսի հայ պատրիարք Ներսեսը Ադրիանապոլսի բարձրագույն հայ հոգևորականին՝ հայր Գևորգին պատվիրեց հայկական խնդրագիրը ներկայացնել ռուսական զինված ուժերի գլխավոր հրամանատար մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաևիչին եւ Թուրքիայում Ռուսաստանի դեսպան Իգնատեւին: Միաժամանակ նա Կ. Պոլսում ինը եպիսկոպոսների հետ միասին մի նոր խնդրագիր կազմեց եւ մեկական օրինակ ուղարկեց Ադրիանապոլիս՝ մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաեւիչին եւ ցար Ալեքսանդր Երկրորդին: 1878-ի փետրվարի 1-ի ամսաթվով խնդրագիրն ընդգրկում էր հետեւյալ պահանջները.

1. Հայաստանը պետք է ունենա գեներալ-նահանգապետ, որն անպայման պետք է լինի լուսավորչական դավանանքի հայ: Նա պետք է ընտրվի սուլթանի կողմից ցարի համաձայնությամբ: Նահանգապետը կունենա վալիի տիտղոս եւ մյուդիրի (մարշալի) կոչում:

2. Լուսավորչական դավանանքի հայեր պետք է լինեն նաեւ գավառների ու համայնքների նախագահները: Սակայն նրանց ընտրությունը պետք է կատարվի Հայաստանի պատգամավորների ժողովի կողմից եւ ներկայացվի Բ. Դռան համաձայնությանը:

3. Երկրում կարգ ու կանոնի պահպանումը պետք է լինի հայերի ձեռքում: Ոստիկանների շարքերը պետք է համալրվեն հայերով:

4. Դատավարությունը պետք է զերծ լինի շարիաթի օրենքներից եւ ենթարկվի հայ դատավորների նախագահությանը:

5. Պետք է վերացվեն արտոնյալ քրդերի (կուրբաշիների եւ դերեբեյերի) բոլոր արտոնությունները:

6. Հարկերը պետք է նորից եւ արդարացի բաշխվեն:

7. Պետք է կատարվի Վակիֆի վերաբերյալ օրենքների վերակառուցում: Նմանապես պետք է վերանայվեն հողատիրության մասին օրենքները:

8. Հայաստանի թուրքերի զինաթափում:

9. Հայաստանում նոր վարչական կառուցվածքի հաստատում, որը պետք է վերացնի սուլթանը՝ ցարի համաձայնությամբ:

10. Այն մասնակի ինքնավարության երաշխիքը, որով Զեյթուն քաղաքը ինքն իրեն կառավարում է արդեն հինգ դար ի վեր[12]:

Մի քանի օր անց հայերին ծանոթացնում են ապագա հաշտության պայմանագրի 16-րդ հոդվածին, որտեղ ասվում է.

«Քանի որ Թուրքիայի եվրոպական գավառներում գերիշխող կարգուկանոնը եւ շահագործումը նույն չափով տարածված են եւ փոքրասիական գավառներում, իրավիճակը փոփոխելու համար, իբրեւ երաշխիք, սուլթանը պետք է վարչական ինքնակառավարում հատկացնի հայերով բնակեցված Կովկասին սահմանամերձ գավառներին (Էրզրում, Մուշ, Վան, Տիգրանակերտ, Սեբաստիա եւ այլն), ինչպես եւ համապատասխան փոփոխություններ մտցնի վիլայեթների մասին օրենքի մեջ: Դրա համար պետք է լինի սուլթանի իրական երաշխիքը»[13]:

Թուրքիան պատրաստ չէր ընդունելու 16-րդ հոդվածը: Ի վերջո 16-րդ հոդվածի դրույթները 1878-ի փետրվարի 19-ի հաշտության պայմանագրում ստացան հետեւյալ ձեւակերպումը.

«Հայերի էվակուացումը ռուսների կողմից զբաղեցրած այն մարզերից, որոնք պետք է վերադարձվեն Թուրքիային, կարող էր բացասաբար անդրադառնալ երկու երկրների հարաբերությունների վրա, ուստի Բարձր Դուռը հայերով բնակեցված մարզերում առաջ է քաշում բարեփոխումների ու բարենորոգումների ծրագիր, երաշխավորում է հայերի անվտանգությունը քրդերից ու չերքեզներից»[14]:

Լսելով, որ ռուսները Մարմարա ծովի ափին են, Վիկտորիա թագուհին բացականչում է. *«Ուրեմն պիտի հեռանան այնտեղից»*[15]:

Եվրոպական մեծ տերությունները, Անգլիայի եւ Ավստրո-Հունգարիայի գլխավորությամբ, ստիպեցին ռուսներին Բեռլինում նոր բանակցություններ վարել: Այն օրերից, երբ Պրուսա-Գերմանիան մեծ կայսրություն դարձավ, Ավստրիան կորցրեց իր հզորությունը հյուսիսում եւ Իտալիայում: Ապա Գերմանիայի օգնությամբ Ավստրիան իր ուշադրությունը դեպի արեւելք ուղղելով՝ Օսմանյան կայսրության հողամասերի զավթումով սկսեց իր տարածքների ընդարձակումը: Որպեսզի Դալմատիայի դիրքը հուսալի դարձնի, Ավստրիան մտադիր էր Բոսնիա-Հերցեգովինան եւս միացնել իրեն: Այսպիսով, նա կկարողանար ուժեղացնել իր նավատորմը Ադրիատիկում: Իսկ սերբերին իր տիրապետության տակ առնելով, Ավստրիան նպատակ ուներ ուժեղացնելու իր արքայական դիրքը Եվրոպայում:

Զուգահեռաբար Գերմանիայի հետ միասին նա ձգտում էր պահպանել Օսմանյան կայսրությունը՝ այն օգտագործելով որպես շուկա եւ ծառայեցնելով որպես պահակ՝

Ռուսաստանի դեմ:

Մեծ տերությունների հետ Հայկական հարցը քննարկելու համար Եվրոպա մեկնեց հայկական պատվիրակություն՝ Հայոց ապագա կաթողիկոս Խրիմյան Հայրիկի ղեկավարությամբ: Այս ուղեւորության ընթացքում պատվիրակությունն այցելեց Լոնդոն, որտեղից Խրիմյան Հայրիկն օգնություն էր ակնկալում: Նա այն բազմաթիվ հայերից էր, ովքեր ի դեմս Անգլիայի, տեսնում էին իրենց գլխավոր դաշնակիցներից մեկին: Սակայն անգլիացիները կրկնակի խաղ էին խաղում: Կ. Պոլսում Անգլիայի դեսպան Լեյարդը հասկացրել էր հայերին, որ նրանց վիճակի ակնկալած բարելավումների ճանապարհը անցնում է միայն Լոնդոնով: Լեյարդը դրանով ազդելու երկու հնարավորություն էր ստանում. մեկ՝ հայերի վրա, որոնց խոստանում էր զբաղվել նրանց հարցով, եւ մեկ էլ Բարձր Դռան վրա, որին ուզում էր հայերի միջոցով մշտական սպառնալիքի տակ պահել: Պետք է ենթադրել, որ Անգլիան Բ. Դռանը անհրաժեշտության դեպքում տեղեկացնում էր հայերի ծգտումների մասին[16]:

Իսկ դրանից շատ առաջ Անգլիան միսիոներներ էր ուղարկել հեռավոր հայկական շրջաններ: Նրանք հիմնել էին կրոնական դպրոցներ ու քոլեջներ, ինչպիսիք են Բոսֆորի Ռոբերտ քոլեջը, Խարբերդի Եփրատ քոլեջը եւ Այնթափի Կենտրոնական քոլեջը:

«Այս ամենի նպատակն էր,- գրում է Հանս Լյուդվիգ Վեգեներն իր «Բրիտանական գաղտնի ծառայություններն Արեւելքում» գրքում,- *սիստեմատիկաբար հրահրել Թուրքիայում կրոնական հակազդեցությունները եւ այնքան ուժեղացնել հայերի ազգային ինքնագիտակցությունը, որ նրանք ներգրավվեն հակապետական գործունեության մեջ: Անգլիան ծեւանում էր Հայաստանի բարեկամ եւ պաշտպան, դրանով իսկ հասնելով այն բանին, որ հայերը հնազանդվեցին Անգլիային եւ թույլ տվեցին, որ իրենց օգտագործեն Թուրքիայի նկատմամբ որպես ճնշման միջոց»*[17]:

Հայկական պատվիրակները հիասթափություն ապրեցին Լոնդոնում: 1878-ի հունիսին Խրիմյան Հայրիկը պառլամենտի լիբերալ անդամ Ֆորստերի հետ զրույցի ժամանակ անգլիացիներից օգնություն խնդրեց Բեռլինի կոնգրեսի աղերսով: Ֆորստերը պատասխանեց.

«Ձգտեք չնեղացնել Ռուսաստանին, որը ձեր հարեւանն է: Այստեղ Անգլիայում գործիք չդառնալ պահպանողականների, ոչ էլ լիբերալների ձեռքին: Անգլիայի համար դժվար է հսկել Հայաստանը, որը մեզանից շատ հեռու է գտնվում: Սեւ ծովի հարավում բավականաչափ հայեր չեն բնակվում: Մինչդեռ Անգլիան ի վիճակի է պաշտպանելու միայն ծովափի բնակիչներին: Այդ պատճառով հարցնում եմ Ձեզ. «Ձեր ժողովուրդն ուժ կունենա՞ պաշտպանելու իր ինքնավարությունը, եթե այն ընձեռվի: Հայերն ունե՞ն այդ ուժը: Որովհետեւ Անգլիայի օգնությանը չպետք է վստահել»[18]:

Պառլամենտի անդամ Ֆորստերը լավ գիտեր, թե ինչու էր հայերին խորհուրդ տալիս անգլիական շահերի գործիք չդառնալ: Հայտնի էր, որ Անգլիան գաղտնի բանակցություններ է վարում Բ. Դռան հետ: Բեռլինի կոնգրեսից առաջ Անգլիան նախագ-

գուշական միջոցներ ձեռք առավ: Այն ռուսական կառավարությանը ստիպեց պարտավորվելու, որ Սան-Ստեֆանոյի նախնական պայմանագրում Հայաստանի վերաբերյալ տրված խոստումները ուժի մեջ մնան ոչ միայն Ռուսաստանի, այլեւ Անգլիայի համար: Դրանից բացի Անգլիան ստիպեց Ռուսաստանին հրաժարվել Ալաշկերտի եւ Բայազետի շրջաններից, որոնց հայ բնակչությունը հենց նոր էր բնաջնջվել, իսկ կենդանի մնացածները զանգվածաբար արտագաղթել էին Ռուսաստան:

Բայց քանի որ այս պայմանավորվածությունն անգլիացիներին կարծես բավականաչափ ապահովություն չէր տրամադրում, Բ. Դռան հետ բանակցությունների մեջ մտավ լորդ Սոլսբերին: 1878-ի հունիսի 4-ին նրանք գաղտնի կնքեցին պաշտպանական դաշնագիր: Այս դաշնագիրը Թուրքիային խոստանում էր Անգլիայի ռազմական օգնությունն այն դեպքում, եթե Ռուսաստանը ցանկանար ընդարձակել իր բռնակցված տարածքները հաշտության վերջնական պայմանագրում հաստատվելիք սահմաններից դուրս: Դրա փոխարեն Նորին կայսերական մեծություն սուլթանը խոստանում էր Անգլիային իրականացնել նշված շրջաններում ապրող Բարձր Դռան քրիստոնյա եւ այլ հպատակների պաշտպանության ու ապահովության համար (հետագայում՝ երկու տերությունների կողմից) բարեփոխումների միջոցառումներ:

Պայմանագրից բխող պարտավորություններն իրականացնելու հնարավորություն ստեղծելու համար սուլթանը Անգլիային է ընձեռում Կիպրոս կղզու գրավման եւ կառավարման իրավունքը[19]:

Հայոց պատվիրակությունը փորձեց կապ հաստատել եվրոպական բոլոր տերությունների հետ եւ նրանց ներկայացնել Հայկական հարցը: Բեռլինում հայերի խնդրանքը՝ Բիսմարկի հետ հանդիպելու, մերժվեց այն հիմնավորումով, թե վերջինս ուզում է չեզոք մնալ: Բիսմարկի կարծիքը Թուրքիայում բարեփոխումների մասին ճշգրտեց Բեռլինում Անգլիայի դեսպան լորդ Ռասելը, որը խոսել էր նրա հետ այդ հարցի շուրջ.

«Նա համամիտ էր անգլիական քաղաքականության բոլոր կետերին, բացի մեկից. դա մարդասիրություն էր քաղաքականության մեջ: Նա այն կարծիքին էր, որ ճնշման միջոցով բարենորոգումների դերը կարող էր չափազանցվել, որով այն ավելի վնասեց գործին, քան օգնեց: Օտարների ճնշման տակ դրա ընդօրինակելը Հայաստանում պատճառ է դարձել թուրքական մտքի անվճռականությանն այս խնդրում»[20]:

1878-ի հուլիսի 8-ին, կոնգրեսի 15-րդ նիստին, զարմանալիորեն արագ եւ առանց հայերի կողմից արված առաջարկությունների ներառման, թուրքերի համաձայնությամբ, որպես պայմանագրի 61-րդ հոդված ընդունվեց լորդ Սոլսբերիի կազմած հետեւյալ տեքստը.

«Բարձր Դուռը հանձն է առնում հայաբնակ վայրերում անհապաղ իրագործել տեղական պահանջներից բխող բարեփոխումներ ու բարենորոգումներ եւ ապահովել հայերի անվտանգությունը քրդերից ու չերքեզներից: Այդ նպատակով ձեռնարկած մի-

քոցառումների մասին նա պարտավոր է պարբերաբար հաղորդել պետություններին, որոնք պետք է հսկեն դրանց գործադրումը»[21]:

Ավստրիայի դեսպան Ցիխին Կոնստանդնուպոլսից գրած իր զեկուցման մեջ հայերի ինքնավարության ձգտումները մեկնաբանում է հետեւյալ կերպ. *«Հայաստանը, Բուլղարիայի պես, լոկ պատմաաշխարհագրական հասկացություն է: Հարյուրամյակներ ի վեր չկան որոշակի սահմաններ: Հայաստանը կանխորոշված է միայն այն բանի համար, որպեսզի ռուսական զավթողական նկրտումների համար ծառայի որպես նախօրոք արդեն պատրաստված ավար»*[22]:

Եվրոպացիները վախենում էին Թուրքիայում Ռուսաստանի տարածքային նվաճումներից: Եվ այդպիսով մնացած եվրոպական մեծ տերությունները, Ավստրիայի եւ Անգլիայի գլխավորությամբ, դեմ կանգնեցին Սան-Ստեֆանոյի պայմանագրին:

Հայկական բարեփոխումները սկզբից եւեթ դատապարտված էին ձախողման: Հայկական բարեփոխումների վերաբերյալ բանակցություններում Բիսմարկն ասաց, որ նրանց անցկացման առթիվ համաձայնությունը պետք է կայանա միայն Կոնստանդնուպոլսում: Այնուհետեւ նա նշեց, որ Թուրքիայում մեծ տերությունների ներկայացուցիչները պարտավոր չեն զենքով հնարավոր դարձնել հայկական բարեփոխումները: Սակայն դժվար է գտնել մի բանաձեւ, որը երաշխիք պարունակի իր մեջ նոր կրկնությունների դեմ, եւ նույնիսկ դրանք փնտրելը կարող է ցավալի հետեւանքներ առաջ բերել: Անընդհատ միջամտությունը Թուրքիայի ներքին գործերին, ասաց Բիսմարկը, չի համապատասխանում գերմանական եւ անգլիական քաղաքականությանը[23]:

Կոնգրեսը հողային առավելությունները տվեց եվրոպական տերություններին: Ավստրիան զբաղեցրեց Բոսնիան ու Հերցեգովինան, Անգլիան ստացավ Կիպրոսը, Հունաստանը՝ Թեսալիան եւ Էփիրուսի մի մասը, Սերբիան եւ Ռումինիան դարձան անկախ: Բուլղարիան ստացավ ինքնավար իշխանության կարգավիճակ, իսկ Ռուսաստանը ստիպված էր ազատել գրաված բոլոր շրջանները, բացի կովկասյան սահմանամերձ գոտում գտնվողներից: Սան-Ստեֆանոյի պայմանագրում բարեփոխումների իրագործումը դրված էր Ռուսաստանի վերահսկողության տակ: Մինչդեռ Բեռլինի պայմանագրում բարեփոխումները երաշխավորում էին այս ստորագրած տերությունները: Դրանով բարեփոխումների իրագործումը բարդանում էր եւ, ինչպես պարզվեց հետագայում, դառնում անհնար: Հայ պատվիրակությունը կարողացավ սոսկ իր դժգոհությունն արտահայտել բողոքի նոտայով:

«Հայկական պատվիրակությունը ստիպված է իր ափսոսանքն արտահայտել այն բանի համար, որ կոնգրեսը չընդունեց իր օրինական ու նույնչափ չափավոր պահանջները: Մենք կարծում էինք, որ մի քանի միլիոն մարդկանցից բաղկացած մի ժողովուրդ, որը մինչեւ այսօր թույլ չի տվել օգտագործելու իրեն որպես արտասահմանյան քաղաքականության գործիք, չնայած այն բանին, որ շատ ավելի է շահագործվել,

քան Թուրքիայի մնացած քրիստոնյա ժողովուրդները, մի ժողովուրդ, որը ոչ մի դժվարություն չի պատճառել թուրքական կառավարությանը, որը, ճիշտ է, որեւէ մեծ տերության ոչ հավատակիցն է, ոչ էլ ցեղակիցը, բայց չնայած դրան նույնչափ քրիստոնյա է, որչափ Թուրքիայի մյուս քրիստոնյա ժողովուրդները, որ այս դարում իրավունք ունի հուսալու նույն պաշտպանությունը գտնելու, ինչ եւ մյուսները:

Մենք կարծում էինք, որ այնպիսի մի ժողովրդի, որը հակված չէ քաղաքական որեւէ պճնասիրության, կընծեռվի իր սեփական կյանքով ապրելու եւ հայկական հողում հայ պաշտոնյաների կողմից ղեկավարվելու իրավունքը: Հայերը հասկացան, որ խաբվել են, որ իրենց իրավունքները ճանաչման չեն արժանացել, որովհետեւ իրենք խաղաղասեր են եղել, եւ որ իրենք, անկախ պահելով իրենց հին եկեղեցական կազմակերպությունը եւ ազգային ոգին, ըստ էության ոչնչի չեն հասել:

Հայկական պատվիրակությունը տունդարձի ճանապարհին դեպի Արեւելք իր հետ կտանի այդ դասը: Բայց սրանով նա արտահայտում է իր այն կարծիքը, որ հայ ժողովուրդը երբեք չի դադարի բարձրացնել իր ձայնը, մինչեւ Եվրոպան չբավարարի նրա պահանջները:

Բեռլին, 13 հուլիսի 1878»[24]:

Բեռլինի կոնգրեսում բարեփոխումների ծրագրի հաստատումը Բիսմարկը 1878-ի նոյեմբերի 2-ին մեկնաբանեց այսպես.

«Մեր պետական քաղաքականության հաղթանակը կլիներ, եթե մեզ հաջողվեր բաց պահել արեւելյան ուռուցքը եւ դրանով ձախողել մյուս մեծ տերությունների միասնությունը՝ ապահովելով մեր սեփական խաղաղությունը»[25]:

Լորդ Սոլսբերին եւս լկտիորեն հայտարարեց, որ չի հավատում ոչ Թուրքիայում բարեփոխումներին, ոչ էլ քրիստոնյաների համար որեւէ ազդու պաշտպանության: Նրա նպատակն էր միմիայն Ռուսաստանին ամեն գնով հեռու պահել Թուրքական Հայաստանը գրավելուց[26]:

Սակայն Լոնդոնում համայնքների պալատում Արգայլի դուքսը հայտարարեց.

«Ոչ մի տեղ աշխարհում մեր քաղաքականությունը չի բխել այսքան անբարոյական եւ անխոհեմ նկատառումներից»[27]:

Ինչ վերաբերում էր ռուսներին, ապա այն հայտնի է ավստրո-հունգարական պատվիրակության անդամ ֆոն Շվեգելի գրածից.

«Ռուսները համարյա թե կորցրին ամեն ինչ, ինչ որ գրավել էին կռվի դաշտում: Ռուսաստանը Ասիայում ստացավ մի կտոր հող (Ղարս, Արդահան), իսկ Եվրոպայում՝ Բեսարաբիան, որն իրեն հետ վերադարձվեց: Սրանց համար նա 1000 միլիոն ռուբլի ծախսեց եւ կորցրեց 150.000 մարդ»[28]:

1879 թ. գարնանը կառավարությունը բարեփոխական հանձնաժողով ուղարկեց հայկական վիլայեթներ: Ընդհանուր տպավորությունն այն էր, որ հայ ժողովուրդը կողոպտվում էր եւ ճնշվում, մինչդեռ օրենքը հանցավորներին, եթե նրանք բռնվում էին,

շատ մեղմ էր պատժում, քանի որ հայերը սոսկ rajah էին: Անշուշտ, կաշառքը լրացնում էր պակասը:

1879-ի դեկտեմբերի 12-ին ավստրո-հունգարական գլխավոր հյուպատոս Կվյատկովսկին Տրապիզոնից գրում է.

«Բարեփոխումներն իրականացնելու համար հարկավոր են որակյալ եւ կանոնավոր վարձատրություն ստացող ժանդարմերիա, ժրաջան եւ կարգին աշխատավարձ ունեցող վարչական մարմիններ, հոնորարներ ստացող դատավորների դաս, այնինչ փող չկա: Ստացվող հարկերը բանկիր Զարիֆի (սուլթանի անձնական բանկիրի) ծառայողները վերցնում են դրամարկղներից եւ ուղարկում բանկիրին: Գավառների համար քիչ բան է մնում, այդ պատճառով կաշառակերությունը կշարունակվի»[29]:

Կվյատկովսկին ճիշտ էր գնահատել Թուրքիայի ներքին վիճակը, որովհետեւ ինչքան շատ էր երկարում Աբդուլ Համիդի իշխանությունը, այնքան ավելի էր աճում համընդհանուր դժգոհությունը: Դրան ավելանում էին թուրքական տիրապետությունից ազատվելու ձգտող ազգային շարժումները: 1787-ի անգլո-թուրքական գաղտնի համաձայնագրով ասիական Թուրքիան դրվել էր անգլիական խնամակալության տակ: Դրա հիման վրա անգլիացիք ռազմական հյուպատոսներ ուղարկեցին Անատոլիա՝ վերահսկելու ծրագրված բարեփոխումների իրականացումը[30]:

Հայերը կարծում էին, թե հյուպատոսների ներկայությունն ապահովում է անգլիացիների պաշտպանությունը: Նրանք ակտիվ գործունեություն ծավալեցին, հիմնեցին գաղտնի կազմակերպություններ եւ դրսեւորում էին ինքնավարության ձգտումներ: Նրանք չէին կարող պատկերացնել, որ անգլիացիներն իրենց չեն պաշտպանի աբդուլհամիդյան հետապնդումներից: Պետք է ենթադրել, որ Անգլիան ղեկավարում էր հայկական գաղտնի կազմակերպությունների գործունեությունը սուլթանին մշտապես սպառնալիքի տակ պահելու համար: Այդպես էին վարվում, հավանաբար, նաեւ ամերիկացի միսիոներները: Լորդ Սոլսբերին ասել է.

«Անգլիական զինվորական հյուպատոսներ թուրքական Հայաստան ուղարկելը մեր կողմից սխալ քայլ էր: Հայերը մտածեցին, թե Մեծ Բրիտանիան այդպիսով խոստացել է հայերին սատար կանգնել: Այդ պատճառ հանդիսացավ, որ հայերն իրենց ազատագրական շարժումն ավելի ակտիվացնեն... Նրանք չկարողացան հասկանալ, որ Բրիտանիայի օգնությունը համարյա թե միշտ անուղղակի եւ միջնորդական է լինում: Մեր բարոյական, բայց ոչ հասունացած առաջարկների արդյունքը մի քանի հարյուր հազար հայ կանանց եւ երեխաների ջարդն էր»[31]:

1879 թ. մինչեւ 1881 թ. Թուրքիայի արեւելքում՝ Թուրքահայաստանում, թալանի, հարձակումների եւ կողոպուտի միջոցով օսմանյան իշխանության մարմինները եւ քրդական հրոսակախմբերը հայերից ավար ստացան 750.548 պիաստր՝ պատկառելի մի գումար այն ժամանակվա համար[32]:

Փաստաթղթերից երեւում է նաեւ, որ «հայկական երեք դաշնակիցների»՝ Անգ-

լիայի, Ռուսաստանի եւ Ֆրանսիայի կողմից առաջարկված բարեփոխումներն առավելապես խանգարում եւ ձախողում էին Գերմանիան եւ Ավստրո-Հունգարիան:

1883 թ. մայիսին Անգլիայի դեսպանը Թուրքիայում՝ լորդ Դուֆֆերինը, գտնվում էր Վիեննայում: Ավստրո-Հունգարիայի արտգործնախարար Կալնոկիին մի այցելության ժամանակ արծարծվեց նաեւ հայկական բարեփոխումների հարցը: Դուֆֆերինն ասաց, որ, չնայած հայ ժողովուրդը երբեք չի մտադրվել Թուրքիայից անջատվել, սուլթանը հայերին ռուսների գիրկն է մղում՝ նրանց համար ոչինչ չանելով եւ դժվարացնելով նրանց կյանքը. ցավալի իրադրություն Եվրոպայի եւ Անգլիայի համար: Այդ պատճառով անհրաժեշտ է, ասում է Դուֆֆերինը, համատեղ գործողությամբ սուլթանին դրդել հայերի համար բարենորոգումներ անցկացնել: Կալնոկին պատասխանեց, որ Անգլիան այդ առումով «չի կարող հույս ունենալ» Ավստրիայի վրա: Արտգործնախարարը բառացի ասում է.

«Հայաստանը չափազանց հեռու է գտնվում, որպեսզի մենք այնտեղ որեւէ առանձին հետաքրքրություն ունենանք: Մյուս կողմից, Բալկանյան թերակղզում մեզ հետաքրքրող այնքան հարցեր կան, որոնց զարգացումն ի շահ խաղաղության եւ Թուրքիայի ամրապնդման, մեծ չափով պահանջում է մեր ուշադրությունը»[33]:

Ավստրիայի դիրքորոշումը Հայկական հարցի վերաբերյալ հայտնի էր սուլթանին: Թուրքիայում Ավստրիայի դեսպանն այնքան մտերիմ էր սուլթանին, որ վերջինս խնդրեց դեսպանին՝ ետ պահել անգլիացի իր գործընկերոջը «հայկական հարցերում մտադրվող ճնշումից»[34]:

Բրիտանիայի արտաքին գործերի քարտուղար լորդ Գրենվիլը քննադատում էր գերմանացիներին, ասելով.

«Ֆուրստ Բիսմարկը կարող է ասել, որ Գերմանիան ուղղակի հետաքրքրություն չունի արեւելքի հարցերի նկատմամբ: Բայց փաստ է, որ Գերմանիան այսօր ամենամեծ ազդեցությունն ունի Բոսֆորում: Եթե նա սուլթանի վրա մի փոքր ճնշում գործադրի, ապա նա թույլ կտա «բարձրագույն դիտորդ» ուղարկելու (Հայաստան)»[35]:

Սրան հետեւում է Բիսմարկի պատասխանը.

«Ես չեմ կարողանում ըմբռնել, թե ինչ հետաքրքրություն պետք է ունենա Անգլիան, սուլթանին անհանգստացնելով: Այսպես կոչված «հայկական բարեփոխությունները» միայն իդեալական եւ տեսական ջանքեր էին, կոնգրեսի բանակցություններին ճոխ բնույթ տալու զարդարանքներից էին: Դրանց գործնական իմաստը, ինչպիսի ընթացք էլ այն ունենա, արժեքը շատ կասկածելի է եւ հայերի համար երկայր»[36]:

1890 թվականից սկսած հայերի կյանքն այնքան է վատանում, որ եվրոպացիները պարտավորված էին նոր միջամտության: 1890 թ. օգոստոսի 1-ին Գերմանիայի հյուպատոսը Կոնստանդնուպոլսից հաղորդում է.

«Էրզրումում Անգլիայի հյուպատոսի գեկույցում նկարագրվում է հատուկ կազմակերպված ընդհանուր հետապնդում մի ամբողջ ազգի (հայերի) նկատմամբ»[37]:

Հայերի հետապնդումներն ուժգնացան, երբ 1893-ի ապրիլին հայերը տարածեցին Մերսովանի ամերիկյան քոլեջում պատրաստված թռուցիկները: Ամենուրեք ձերբակալություններ էին տեղի ունենում: Դրան հաջորդեցին խռովությունները Յասգաթում[38]: Այս բոլոր խնդիրները դիվանագիտական ներկայացուցիչներին Կ. Պոլսում մտածել էին տալիս, որ 1894-ին համընդհանուր հեղափոխություն պիտի պայթի[39]: Քչերից մեկը, որոնք չէին հավատում հեղափոխությանը, մայոր Գոլցն էր: Նա 1889-ի Կ. Պոլիս եկած գերմանական ռազմական միսիայի պետն էր: Նրա իրավասության տակ էին ռազմական կրթության հարցերը: «Սուլթանն, անշուշտ, կհաղթահարի այս ճգնաժամը՝ փորձված բյուզանդական եղանակով իրար դեմ հրահրելով իր հպատակներին»,- գրում էր Գոլցը իր օրագրում: Այպես էլ եղավ: Աբդուլ Համիդը մահմեդականների դժգոհություններն ուղղեց հայերի դեմ:

Շեյխ Ֆահզ էլ Ղասեյնը «Թուրքական տիրապետությունն ու Հայաստանի ցավի ճիչը» գրքում գրում է.

«Սուլթանի ընտրած գործիքը քրդերն էին՝ հովիվների լեռնական մի ցեղ Թուրքիայի արևելյան գավառներից: Նախկին սուլթանները փորձել էին նրանց որոշ կարգ ու կանոն սովորեցնել, իսկ Աբդուլ Համիդը զինեց ժամանակակից հրացաններով եւ, որպես համիդյան ժանդարմերիա, ուղղեց հայերի դեմ: Սպանությունն ու-կողոպուտն այն ծառայություններն էին, որոնք պահանջում էին քրդերից, եւ դա միաժամանակ այն վարձատրությունն էր, որը նրանք ստացան դրա համար: Այստեղ, ինչպես եւ Մակեդոնիայում, այս քաղաքականության արդյունքն անարխիան էր ու արյունահեղությունը, եւ դա Աբդուլ Համիդի սրտով էր: Հայերը դիմեցին պատասխան միջոցների: Լեռների որոշ բնակիչներն ըմբոստացան: Այդ ժամանակ քրդերին անմիջապես ուժեղացրին օսմանյան կանոնավոր զորամասերով եւ բորբոքեցին Փոքր Ասիայի թուրք մահմեդականների մոլեռանդությունը»[40]:

Հայերի հալածանքը 1894 թ. հասավ իր գագաթնակետին:

1894 թ. օգոստոսի կեսերին քրդական հրոսակախմբերը հարձակվեցին հայկական Բիթլիս բնակավայրի վրա: Հայերը ետ մղեցին հրոսակախմբերին: Ի պատասխան՝ Բիթլիս գավառի գլխավոր նահանգապետը կառավարական զորքեր ուղարկեց, որոնք քրդական հրոսակախմբերի հետ հարձակվեցին հայկական գյուղերի վրա:

Օգոստոսի 18-ից մինչեւ սեպտեմբերի 10-ը հրոսակախմբերն ամայացրին հայկական գյուղերը, կոտորեցին մեծ թվով մարդկանց, իսկ բանտերը լցվեցին «ապստամբ հայերով»: Ավստրիացի դեսպան Կալիչեն 1894 թ. նոյեմբերի 29-ին Կոնստանդնուպոլսից գրում է.

«Խոստովանում եմ, որ ես հայերի հանդեպ որպես ազգի քիչ համակրանք ունեմ, եւ որ ինձ երբեք կոչված չեմ համարել դառնալու նրանց փաստաբանը տարածքային անկախության հաշվին: Սակայն զուտ մարդկային տեսանկյունից պատմվող ոճրագործությունները սարսափելի եմ համարում, եւ հազիվ թե հնարավոր է, որ քաղաքակրթված Եվրոպան կարողանա հանդուրժել նմանօրինակ հանցագործություններ իր սահմանների մոտ»[41]:

Չնայած ավստրիացի դեսպանի «մարդկային տեսանկյան», որը դեմ էր նմանօրինակ «հանցագործությանը», նրան դուր չէր գալիս անգլիացի դեսպան Ֆիլիպ Կարիի կտրուկ գործողությունը սուլթանի դեմ: Կալիչեն եւ նրա գերմանացի գործընկեր դեսպանն այն կարծիքին էին, որ անգլիացի դեսպանը պետք է սահմանափակվեր հայերի վիճակի բարելավման վերաբերյալ «լավ խորհուրդներ» տալով: Անգլիացիներից, սկսած Կիպրոսի պայմանագրից, *«կարելի է ոչ այլ ինչ, քան խորհուրդներ ակնկալել»*[42]:

Փաստաթղթերն ապացուցում են, որ սուլթանը շատ գոհ էր մնում ավստրոհունգարացի եւ գերմանացի դեսպաններից: Իր երախտագիտությունը նա արտահայտում էր այն բառերով, որ բոլոր տերությունները բացի Ավստրո-Հունգարիայից եւ Գերմանիայից, զրպարտչական մեղադրանքներ են տարածում *«իր եւ իր կառավարության դեմ եւ ուզում են հայերի համար հատուկ կարգավիճակ ձեռք բերել»*[43]:

Այս գազանությունների մասին հաղորդում էին արտասահմանյան հյուպատոսությունները Թուրքիայում: Եվրոպայում ամենուրեք վրդովմունք էր տիրում: Եվրոպական կառավարությունները բողոքներ ներկայացրին Բ. Դռանը: Այս մասին գրում էին եւ թերթերը, բայց գործը վրդովմունքից եւ բողոքներից այն կողմ չանցավ: Եվրոպական մեծ տերություններն ավելին չարեցին: Ֆրիտյոֆ Նանսենը գրում է.

«Հայաստանում կատարվող գազանությունների դեմ միջոցներ ձեռք առնելու՝ եվրոպական հասարակության պահանջները փաստորեն քաղաքական գործիչների ձեռքին Թուրքիայից իրենց կառավարությունների համար առանձին-առանձին նորանոր առավելություններ պոկելու միջոց էին ծառայում: Նվազ լուրջ է թվում արյունաքամ ժողովրդին օգնելու ցանկությունը, մի ժողովուրդ, որի տառապանքներն անընդհատ սրտաշարժ հայտարարություններ անելու առիթ էին տալիս: Տխուր ճշմարտությունն այն է, որ նրանց համար շատ ավելի լավ կլիներ, եթե եվրոպական ժողովուրդներն ու կառավարությունները եւ դիվանագետները երբեք իրենց գործով չզբաղվեին: Եվրոպական տերությունները՝ արտահայտելով հայերի հանդեպ իրենց համակրանքը, բողոքներով ու նոտաներով հայերի նկատմամբ ավելի լավ վերաբերմունք պահանջելով, սակայն առանց գեթ մեկ անգամ լրջորեն միջամտելու, հասան միայն մի բանի, այն է, թուրքերին կատաղեցրին եւ միաժամանակ ապացուցեցին սեփական մտադրությունների անբավարար լրջությունը: Թուրքերը կարողացան առանց խոչընդոտի արյունոտ վրեժ առնել իրենց հայ հպատակներից, որոնց պատճառով ենթարկվել էին անցանկալի քննադատության եւ ստիպված էին եղել տալու այնքան նվաստացուցիչ խոստումներ: Սա է այն ամենը, ինչ հայ ժողովրդի համար արել են Եվրոպայի քաղաքական գործիչներն ու դիվանագետները»[44]:

Հայերի միակ փրկությունն ինքնապաշտպանությունն էր: Պոմյանկովսկին

գրում է:

«Հայերը՝ առավել ուժեղ, դիմացկուն, խելացի, իրենց ազգային ոգուց ու կրոնից մոլեռանդորեն կառչած մի ազգ են: Նրանք եռանդուն պաշտպանվում էին ու միշտ արյունոտ վրեժ առնում: Այն տեղերում, որտեղ մեծամասնություն էին կազմում, նրանք հաճախ իրենք էին հարձակվում իրենց մահմեդական հարեւանների, ինչպես նաեւ կառավարական մարմինների եւ անգամ զորամասերի վրա»[45]:

Հայերին պաշտպանելու համար Ռուսաստանը սպառնաց մտնել Հայաստան: Իրավիճակը սրվեց, բայց շնորհիվ այն անհապաղ ռազմական միջոցների, որոնք մայոր Գոլցի համառ խորհրդի եւ անդադար պահանջի արդյունքն էին, Ռուսաստանը հրաժարվեց Հայաստան մտնելուց: Գոլցը կարգադրել էր աշխարհազորային դիվիզիաներ ուղարկել եվրոպական գավառներն ու Հայաստան: Բացի այդ, նա կարգադրել էր ռազմական դրություն մտցնել Էրզրումում[46]:

Երկու բնակավայրերում հաջողությամբ հայերը ետ մղեցին թուրքական գրոհը: Այդ բնակավայրերից մեկը Զեյթունն էր, որտեղ հայերը հաջողությամբ պաշտպանվում էին թուրքական գերակշիռ ուժերից: Թուրքերն, ի վերջո, արտասահմանյան ներկայացուցչությունների միջամտության հետեւանքով դադարեցրին քաղաքի պաշարումը եւ հաշտություն կնքեցին հայերի հետ: Մյուս բնակավայրը Վանն էր: Երբ թուրքերը Վանի պաշտպաններին անարգել երբ երաշխավորեցին դեպի Պարսկաստան, խաբված հայերը նահանջեցին: Բայց պարսկական սահմանի մոտ թուրքերը հարձակվեցին նրանց վրա եւ կոտորեցին:

1895-ի մայիսին ռուսները, անգլիացիները եւ ֆրանսիացիները Կ. Պոլսում իրենց դեսպանների միջոցով մշակել էին բարեփոխումների մի ծրագիր, որը զուտ ձեւական բնույթ էր կրում: Գերմանական դեսպան բարոն Մարշալը, որին անվանում էին Թուրքիայի իսկական մեծ վեզիր[47], սուլթանին հավաստիացրեց գերմանական կառավարության ափսոսանքը եւ այն կարծիքը հայտնեց, որ Հայաստանում բարեփոխումներն ամենեւին էլ անհրաժեշտ չեն: Կայսրը միակ խնդիրը տեսնում էր անգլիացիների՝ *«հայերի օգտին Վեստմինստրի եւ Գլադստոնի վարած անիծյալ կամպանիայի մեջ»*[48]:

Գերմանիան ուզում էր երկարացնել «Հիվանդ մարդու» կյանքը, որովհետեւ նրա քաղաքականության նպատակն էր Առաջավոր Ասիան բացել գերմանական տնտեսության առաջ: Գերմանական կայսրը, հակառակ մյուս տերությունների, քաղաքական օգնություն էր ցուցաբերում սուլթանին, որի համար էլ ստացավ «Բաղդադի» երկաթուղու շինարարության արտոնությունը[49]:

Կ. Պոլսի հայոց պատրիարք Ներսես III ավստրոհունգարական հյուպատոս Կալիչեին մի այցելության ժամանակ հիշեցրեց Բեռլինի դաշնագրի 61-րդ կետի մասին, ասելով, որ այդ դաշնագիրը ստորագրողները պետք է հարգեն 61-րդ կետի կատարումը: Կալիչեն պատասխանում է. *«Կուզեի պատրիարքին խորհուրդ տալ՝ շատ հույս չդնել եվրոպական երկրների միջամտությանը»*[50]:

Իսկ Գերմանիայի հյուպատոս Ֆուրստ Ռադոլինն անընդհատ սուլթանին խորհուրդ էր տալիս.

«Ես իրրեւ դաշնակից պետության ներկայացուցիչ, կարող եմ համոզված ասել, որ Թուրքիայում կամ նրա որեւէ մի անկյունում բարեփոխումների ոչ մի կարիք չկա»[51]:

Գերմանիայի հյուպատոսն իր հերթին Լոնդոնից հաղորդում է.

«Ոչ մի պատճառ չեմ տեսնում, որ մենք խառնվենք Հայկական հարցի մեջ: Չխառնվելը մեզ համար ավելի նպաստավոր է»[52]:

1895-ի սեպտեմբերի 24-ին մեծ տերությունների դեսպաններին հղած ուղերձում հայոց պատրիարք Մատթեոսն առաջարկում է բարեփոխումների նախագծերի իրականացումը հայկական գավառներում դնել եվրոպացիների հսկողության տակ: Նա գրում էր, որ իրավիճակը բախտորոշ է հայ քրիստոնյա ժողովրդի համար, եւ որ միայն եվրոպական երկրների բարի կամքը կարող է վերջ դնել այդ սարսափելի իրադարձություններին[53]:

Եվրոպական մեծ տերությունների անգործությունը ստիպեց Հնչակյան հայ ազատագրական կազմակերպությանը Կոնստանդնուպոլսում ցույց կազմակերպել՝ դրանից անմիջապես հետո իշխանության մարմիններին խնդրագիր ներկայացնելու համար: Չնայած ցույցի օրը՝ 1895 թ. սեպտեմբերի 30-ը, ծանուցված էր իշխանությանը, հեծելազորային ոստիկանական մի միավորում փորձում է ցրել ցուցարարներին: Բանը հասավ կրակոցների, եւ երբ ոստիկաններից էլ զոհեր եղան, ցույցը վերածվեց հայկական ջարդի:

Հազարավոր հայեր սպանվում էին փողոցներում, նրանց տները թալանվում եւ հրդեհվում էին: Ոճրագործություններն այնքան սարսափելի էին, որ Կալիչեն Վիեննա ուղարկած իր զեկուցման մեջ գրում է, որ եվրոպական թերթերում նկարագրությունները սաստիկ նվազեցված են այն բանի համեմատ, ինչ իրականում տեղի է ունեցել Կոնստանդնուպոլսում:

Մեծ տերությունների դեսպանները բողոքեցին Բարձր Դռանը. *«Դուռը պետք է վերջապես հասկանա,- գրում է Կալիչեն,- որ որքան էլ տարամետ լինեն քաղաքական շահերը, մարդկայնության եւ քրիստոնեության պաշտպանության հարցերում դաշինքի տերությունները նույն կարծիքին են»*[54]:

Դեսպանորդների գործողությունները սակայն մոլորեցրին սուլթանին. մի կողմից նրան գանգատախեղդ էին անում հայերի հանդեպ կատարած ոճրագործությունների պատճառով, մյուս կողմից հավաստիացնում էին մասնավոր ընդունելությունների ժամանակ, որ հայերի առիթով կարիք չկա վախենալու ճնշող միջոցներից:

Պարզվում է, որ փաստորեն բոլոր եվրոպական մեծ տերությունները օգտագործում էին հայկական խնդիրը սուլթանին իրենց կողմը գրավելու համար:

Օժանդակությունը, որը սուլթանն առավելապես ստանում էր Գերմանիայից, նպաստեց այն բանին, որ նա շարունակի հայերի հանդեպ տարվող իր քաղաքակա-

նությունը. *«Սուլթանը Գերմանիայի պաշտպանական վահանի տակ, որին նա այնքան պարտական է, զգում է իրեն ավելի ազատ եւ հաստատ, քան երբեւէ»*,- գրում է Կալիչեն Վիեննա[55]:

Անգլիայի արտաքին գործերի նախարար Վիսկոնթին քննադատում էր հայերի հանդեպ գերմանացիների քաղաքականությունը, ասելով՝ *«Գերմանիան նպաստում է Թուրքիայում իր տնտեսական շահերին: Նա արդեն տիրացել է Փոքր Ասիայի հարընտություններին: Այս ամենը նա ծեռք է բերում քաղաքականության մեջ բարոյականությունը հաշվի չառնելու մտածելակերպով»*[56]:

Կալիչեի հետ ունեցած մի զրույցի ժամանակ անգլիացի դեսպան Կարիերը գանգատվում է սուլթանի վարած հակահայ քաղաքականությունից եւ սպառնում է, որ Անգլիան ստիպված կլինի Թուրքիայի դեմ առանձին գործողությունների դիմելու: *«Անգլիական առանձին գործողությունը սակայն կարող է համաշխարհային հրդեհի սկիզբ հանդիսանալ»*, հավաստիացրեց նրան Կալիչեն[57]:

Հայերն ապաստան էին որոնում եկեղեցիներում եւ արտասահմանյան հյուպատոսարաններում: Միայն Ուրֆայի եկեղեցում ապաստանած 1200 հայեր ողջ-ողջ այրվեցին 1895-ի դեկտեմբերի 25-ին: Հազարավորներ փախան դեպի Պարսկաստան եւ Կովկաս[58]: Մեծ դուքս ֆոն Շտեռլիցերն այդ օրերին Կ. Պոլսում էր եւ այդ գազանությունների ականատեսը եղավ: Երբ սուլթանի մոտ նրա պատվին ճաշկերույթ տրվեց, նա իր կողքին նստած Մուշիր Դերվիշին՝ Ռումելիայի գլխավոր հրամանատարին հարցրեց այդ կոտորածի մասին: Դերվիշ փաշան պատասխանեց. *«Մի հավատացեք, Ձերդ բարձրություն»*: Մեծ դուքսն առարկեց, թե բազմաթիվ հայեր են սպանվել: Սակայն նրա հարեւանը կրկնեց. *«Մի՝ հավատացեք, Ձերդ բարձրություն»:* Երբ Մեծ դուքսը վճռականորեն առարկեց նրան, ասելով. *«Ներեցեք, ես ինքս եմ տեսել դիակները»*, Դերվիշ փաշայի պատասխանն էր կրկին. *«Մի՝ հավատացեք, Ձերդ բարձրություն»*:

Երզնկայի գերագույն ռազմական հրամանատարությունը կարգադրել էր. *«Մահմեդի բոլոր զավակները պետք է այժմ կատարեն իրենց պարտքը, սպանեն բոլոր հայերին, կողոպտեն եւ այրեն նրանց տները: Չպետք է խնայել ոչ մի հայի: Դա սուլթանի հրամանն է: Ով չհետեւի հրամանին, պետք է հայ դիտվի եւ սպանվի: Այդ պատճառով թող յուրաքանչյուր մահմեդական հնազանդ լինի կառավարությանը եւ անհապաղ սպանի այն քրիստոնյաներին, որոնք մինչեւ հիմա նրա հետ որպես բարեկամներ են ապրել»*[59]:

Այժմ Գերմանիան եւս բողոք ներկայացրեց մյուս եվրոպական տերությունների հետ միասին Բ. Դռանը: Սուլթանը ստիպված էր հոկտեմբերի 17-ին ընդունել տերությունների բարեփոխումների մասին առաջարկությունները[60]: Այժմ հայ փախստականները կարող էին թողնել եկեղեցիներն ու ապաստարանները եւ վերադառնալ իրենց հայրենի օջախները[61]: Երբ սուլթանին տվեցին Վիկտորիա թագուհու բողոք-նամակը հայերի հալածանքների մասին, նա ասաց, որ հայերը խռովարարներ են եւ պետք է

պատժվեն: Նա նաեւ պնդում էր, թե հայերը մահմեդականներին ստիպել են զանգվածային կարգով քրիստոնեության անցնել[62]:

Հայերի նկատմամբ կատարվող ոճրագործություններն ավելի մեծ չափերի հասան, քան սպասվում էր. կոտորած եւ կողոպուտ տեղի էին ունեցել վեց գավառներում եւ դրանց կենտրոններ Տրապիզոնում, Սիվասում, Մամուրեթազիզում, Դիարբեքիրում, Բիթլիսում եւ Էրզրումում:

Կողոպտվեց եւ ավերվեց 2.000 բնակավայր,100.000 մարդ կոտորվեց, 80.000 ընտանիք փախավ սարերն ու անտառները, 20.000 ընտանիք ստիպված եղավ ընդունելու իսլամը: 30.000 ընտանիք փախավ մեծ քաղաքներ:

«Սուլթանի շնորհիվ հիմա ամեն ինչ կարգին է, եւ մահմեդականների մեծամասնությունն ապահովված է»: Այդպիսի տեղեկություն է տրվում սուլթանին 31.1.1896 թ. գաղտնի զեկուցումով[63]:

Այս փաստաթուղթն ապացուցում է, թե որքան հնարամիտ էր սուլթան Աբդուլ Համիդի եւ նրա խորհրդատուների՝ հայերի հանդեպ վարած քաղաքականությունը: Մեկ հարվածով թուրքերը հասան բազմաթիվ նպատակների. կոտորածի եւ փախուստի միջոցով հայերը խիստ նվազեցին, իսկ նրանց ունեցվածքը կողոպուտի ենթարկվեց:

Այդպիսով ապահովվում է մուսուլմանների մեծամասնությունը հայկական 6 գավառներից մի քանիսում:

Լքված հայկական հողերը տրվում են քրդերին եւ թուրք եկվորներին:

Եվրոպական ճնշման տակ սուլթանը, վերջապես, համաձայնվում է կոտորածին վերջ տալ: Բարենորոգումների մի առաջարկ է տրվում սուլթանին, որը նա ընդունում է: Հայերին տրված հույսը շատ արագ խափանվեց: Բարենորոգումները համարյա թե ոչինչ չբերեցին, բացի այն, որ նրանց ստիպում էին մահմեդականություն ընդունել: Ջոջացողներին սպանում էին[64]:

Հայերի հալածանքները պարբերական բնույթ էին կրում: Երբ ոճրագործությունները գագաթնակետին էին հասնում, օտար երկրների հյուպատոսները բողոք էին հղում սուլթանին: Հազիվ էր իրավիճակը հանդարտվում, երբ ոճրագործները նորից էին ակտիվանում: Դրա պատճառը հյուպատոսների՝ իրար դեմ պայքարն էր ու սուլթանին դուր գալու, շողոքորթելու մրցակցությունը: 1896-ին հալածանքները հայերի դեմ ավելի սաստկացան:

Եվրոպացիների ուշադրությունն իրենց ծանր վիճակի վրա հրավիրելու համար հայ ուսանողները 1896-ի օգոստոսի 24-ին գրավեցին օսմանյան բանկը Կ. Պոլսում: Սակայն հայերի այս գործողությունն անհաջողության մատնվեց: Դրա նախօրեին թուրք խուժանին էին բաժանվել երկաթյա մահակներ: Ցուցում էին տվել. *«Ազդանշանը լսելուն պես յուրաքանչյուր հայի, անկախ տարիքից ու սեռից, 48 ժամվա ընթացքում կարելի է սպանել»*[65]:

Երբ եվրոպացիների միջամտության շնորհիվ ուսանողները կարողացան հեռա-

նալ բանկից, Աբդուլ Համիդը հայ ժողովրդի դեմ ռեպրեսիաների վերաբերյալ իր եւ արտասահմանյան ներկայացուցչությունների նախնական խոստումներին հակառակ, հրահրեց ամբոխին: Թուրքիայում ամենուրեք սկսեցին հայերի հետապնդումները: Օսմանյան բանկը գրված հայ ուսանողներից մեկը՝ Պաստրմաջյանը, հետագայում պատմում է Թուրքահայաստանի համար ընտրված գլխավոր վերահսկիչներից մեկին՝ հոլանդացի Վեստենենկին.

«Այդ կոտորածները տեղի ունեցան մեծ տերությունների դեսպանների աչքի առաջ, թեեւ մեզ խոստացել էին, որ հայ ժողովրդի մի մազն էլ չի ծռվի»[66]:

Բարոն Գիզլը՝ Ավստրո-Հունգարիայի զինվորական կցորդը Կ. Պոլսում, փորձեց մի հայի օգնել ազատվելու մի թուրք սպայի ձեռքից: Սա պատասխանեց. *«Տեր, մի խառնվիր, այսպիսի հրաման է տրվել»*[67]: Հայ ժողովրդին ջարդերից պաշտպանելու նպատակով Կ. Պոլսի հայ պատրիարքը 1896 թ. օգոստոսի 28-ին Մեծ վեզիրին ուղղված բաց նամակով արտահայտեց իր ափսոսանքը օսմանյան բանկի գրավման առիթով եւ հայ ժողովրդի անունից դատապարտեց այդ գործողությունը, գրելով, որ հայերը պահանջում են պատժել այդ մարդկանց, որոնք կարծում են, թե գործում են հայ ազգի համար: Նամակում պահանջվում էր բացահայտել այդ մարդկանց ինքնությունը, եւ որ հայերը զերծ լինեն մեղադրանքից[68]:

Պատրիարքը Կրոնական խորհրդի անդամների հետ միասին հեռագիր հղեց սուլթանին, որում ասվում էր, որ օտարները դարեր ի վեր փորձել են ազնիվ եւ համբերատար հայության անունից ոճիրներ գործել: Հեռագրում խնդրվում էր ներում շնորհել անկարգությունների ժամանակ ձերբակալված հայերին: Պատրիարքությունը երաշխավորում էր իր ժողովրդի ազնվությունը[69]:

Եվրոպական տերությունները համատեղ նավատորմային ցույցի համար ռազմական նավեր ուղարկեցին Կ. Պոլիս եւ վերջնագիր ներկայացրին: Գերմանական դեսպանը ջանաց մեղմացնել բողոքի նոտան: Թեեւ սուլթանի առաջ խստագույնս դատապարտեց թուրքերի գործելակերպը, սակայն ապստամբության ճնշումը նա համարեց սուլթանի՝ որպես տիրակալի, իրավունքն ու պարտքը: Եթե հայերը հանդգնություն են ունեցել ըմբոստանալու սուլթանի դեմ, ապա խիստ պատիժը միանգամայն տեղին է: Երբ հետապնդումները չդադարեցին, ներկայացվեց մի երկրորդ նոտա՝ սուլթանին գահընկեց անելու սպառնալիքով: Այս սպառնալիքն անմիջապես ազդեցություն գործեց, եւ սպանդը դադարեց: Համեստ հաշվարկներով այդ 48 ժամվա ընթացքում սպանվել է 12000 հայ: 1896-ի հոկտեմբերի 10-ին սուլթանի արքունիքում Ավստրո-Հունգարիայի դեսպանի մտերիմը՝ Ֆ. Բեյը, հավաստիացրեց նրան, որ եթե Եվրոպան վճռականորեն դեմ դուրս չգա սուլթանին, ապա վերջինս նոր կոտորածների հրաման կտա[70]: Հաջորդ օրը Ֆ. Բեյը հաղորդեց, որ բոլոր մահմեդականներին հայերի դեմ զինելու վճիռ է կայացվել: *«Այս վճիռը,* - գրում էր Ֆ. Բեյը Ավստրո-Հունգարիայի դեսպանին, - *այլ բան չի նշանակում, քան մահմեդականների խաչակրաց արշավանք քրիստոնյաների դեմ»*[71]:

Սուլթանը համոզված էր, որ հայերը գավառներում մզկիթներ ու դպրոցներ էին ավերել: Ապացուցելու համար նա ստուգող հանձնաժողով ուղարկեց Փոքր Ասիա: Հանձնաժողովը տհաճ դրության մեջ ընկավ, որովհետեւ չկարողացավ գտնել նման եւ ոչ մի դեպք: Կեղծ հաշվետվություն չէր կարող կազմել արտասահմանյան դեսպանությունների ներկայացուցիչների ներկայության պատճառով[72]: 1897-ի հունվարի 9-ին Բ. Դուռը նոտայով հաղորդեց եվրոպական տերություններին, որ հայերին ներում է հայտարարված[73]:

Երկու տարի անց՝ 1898-ին, Վիլհելմ կայսրը Կ. Պոլսում այցելեց սուլթանին, եւ նրան հանդիսավոր կերպով ընդունեցին որպես թուրքերի ու իսլամի իսկական բարեկամի: 1898-ի նոյեմբերի 8-ին Վիլհելմը Դամասկոսում արտասանեց իր հռչակավոր ճառը. *«Թող Նորին մեծություն սուլթանը եւ թող 300 միլիոն մահմեդականները, որ ապրում են ցրված ամբողջ աշխարհում եւ հանձին նրա՝ հարգում են իրենց խալիֆին, վստահ լինեն, որ գերմանացի կայսրը բոլոր ժամանակներում նրանց բարեկամը կլինի»*[74]: Վիլհելմի այս ճառը վրդովեց քրիստոնյաներին: Այդ առիթով կայսեր ուղեկցողներից մեկը գրեց.

«...Գազանությունները հայերի նկատմամբ, ճիշտ է, դեռ թարմ են հիշողության մեջ, բայց ինչո՞վ օգնեց հակադրման ողջ քաղաքականությունը բացի այն բանից, որ գրգռեց մահմեդականների մոլեռանդությունը: Ինչի՞ հասավ Գլադստոնը սուլթանի հասցեին իր վիրավորանքներով: Մեր կայսրը ընտրել է քրիստոնեական ուղին, նա չարին բարությամբ է հատուցում»[75]:

Իսկ պետական քարտուղար Ֆոն Շյոնն այսպես պարզաբանեց Գերմանիայի հայկական քաղաքականությունը.

«Մենք միշտ դժկամությամբ ենք պաշտպանել տերությունների բարեփոխումների գաղափարները»[76]:

Ուշագրավ են նաեւ եվրոպական դիվանագետների հետագա դատողությունները հայկական հարցի վերաբերյալ.

Անգլիա

«Ավստրիան եւ Ռուսաստանը, որոնք վախենում էին իրարից եւ երկուսն էլ մտածում էին իրենց հեղինակության ու ազդեցության մասին, գործին (քրիստոնեական փոքրամասնությունների կոտորածներ) ազատ ընթացք էին տվել: Այդ երկրներից ոչ մեկը չհամարձակվեց խախտել հավասարակշռությունը, իսկ այդ հավասարակշռությունն Աբդուլ Համիդն էր... Եթե Ավստրիան ու Ռուսաստանը չէին ղեկավարվում մարդկայնության նկատառումներով, ապա Գերմանիան բացահայտորեն չարաշահում էր դրանք եւ բարեկամացավ Աբդուլ Համիդի հետ՝ Փոքր Ասիայում իր նյութական շահերը պաշտպանելու համար»[77]:

Գերմանիա

«...Նա (ցարական կառավարությունը) խորապես չէր վստահում անգլիական ծրագրերին: Գերմանական կառավարությունը կիսում էր այդ անվստահությունը: Թվում էր, թե լորդ Սոլսբերին սպասում էր Թուրքիայի կազմալուծմանը մոտ ապագայում եւ 1895-ի ամռանը բավական անսքող կերպով գերմանական քաղաքական գործիչներին առաջարկել էր Թուրքիայի բաժանումը»[78]:

Դեռեւս 1878-ին Բեռլինի կոնգրեսում Անգլիան Թուրքիայի իսկական, բայց բնավ էլ ոչ անշահախնդիր պաշտպանն էր, քանի որ իր բարի ծառայությունների համար ստացել էր Կիպրոսը, եւ Անգլիան էր, որ այն ժամանակ անգամ երաշխավորել էր Թուրքիայի ասիական տիրույթների պաշտպանությունը[79]: Նրանք էլ հանդիսացան հայերի հետապնդումների շարունակության հիմնական պատճառները:

Երբ 1900 թ. սեպտեմբերին 300 հայ ձերբակալվել եւ մի հայկական գյուղ՝ Սպաղանք անունով, ոչնչացվել էր իր բոլոր բնակիչների հետ, Թուրքիայում Ավստրո-Հունգարիայի դեսպան Կալիչեն անհրաժեշտ համարեց այդ մասին հաղորդել Վիեննա: Հայերի ձերբակալությունների պահը համընկավ սուլթանի՝ Եգիպտոսում գտնվող փեսայի՝ Մահմուդ Դամադ փաշայի նամակի հրապարակման հետ, որով վերջինս հայ հեղափոխականներին կոչ էր անում միավորվելու երիտթուրքերի հետ[80]: Այս հանգամանքը դրդեց Կ. Պոլսում հայ պատրիարք Օրմանյանին ներկայանալ դեսպան Կալիչեին եւ խնդրել նրան որպես դոյեն (դիվանագիտական կորպուսի ավագ) նախաձեռնությունն իր ձեռքը վերցնել եւ օգնել հայերին: Կալիչեն խոստացավ անձամբ բարեխոսել հայերի համար, սակայն հույս չուներ, որ եվրոպական տերությունները կդիմեին համատեղ գործողության, որովհետեւ Հայկական հարցի վերաբերյալ նրանց միջեւ չկար միասնություն[81]:

Հայերի ճակատագրի վերաբերյալ Կալիչեի մեկնաբանությունը հետեւյալն էր.

«Հայ ժողովրդի վրա մեծ դժբախտություն է թափվել: Սկսած այն բանից, որ հնարավոր չէ ոչ մահացածներին հարություն տալ, ոչ էլ համապատասխան հատուցում ձեռք բերել, ամենաշատը կարելի է նպաստել թշվառության մեղմացմանը»[82]:

Ըստ Կալիչեի 1990 թ. հոկտեմբերի 10-ի մի գրության, հայկական հարցերի համար *«իրականում երբեք եվրոպական հայեցակարգ չի եղել: Կոնֆերանսները, որոնք տեղի են ունեցել Կոնստանդնուպոլսում, կյանքի են կոչվել միայն նախորդող արյունալի իրադարձությունների եւ հենց Կոնստանդնուպոլսում տիրող սպառնալից անկարգության հետեւանքով»*[83]:

Իսկ Յոհաննես Լեփսիուսը, որը ջարդերից անմիջապես հետո հայկական վայրերն էր այցելել եւ հետազոտել էր կատարվածը, գրել է.

«Արդեն մի քանի տարի էր, ինչ հայկական ջարդերը նախապես պլանավորվում էին եւ մանրազնին կազմակերպվում: Անցյալ տարվա վերջին ամիսներին դրանք իրագործվեցին»[84]:

Հայերի հալածանքները շարունակվում էին անընդհատ:

«Հայերն անվերջորեն հետապնդվում են: Միշտ նոր դեպքեր են իրականացվում, - գրված էր 1900 թ. սեպտեմբերի 26-ի մի ավստրոհունգարական զեկուցագրում: - *Պատժում եւ բանտարկում են կասկածելի հայերին: 1896 թվի խռովություններից հետո այն մինչեւ այժմ չի դադարել: Ամենօրյա թերթերում այսպիսի լուրեր են տպագրվում, որոնք սակայն ոչ մի արձագանք չեն գտնում»*[85]:

Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը ստիպված եղան փակելու, որովհետեւ ոստիկանությունը ուժ գործադրելով ցրում էր նիստերը[86]:

Թուրքիայում հայերի եւ մյուս փոքրամասնությունների նկատմամբ քաղաքականությունը, ի վերջո, հանգեցրեց սուլթանի դեմ ճնշվածների համատեղ գործողության: 1905 թ. հուլիսի 1-ին, երբ սուլթանը կառք էր նստում, մահափորձ կատարվեց: Ռումբի պայթյունից 24 հոգի սպանվեցին, 58-ը վիրավորվեցին, իսկ սուլթանը ողջ եւ առողջ մնաց[87]: Ենթադրվում էր, որ մահափորձի հեղինակները բուլղարացի կամ հայ հեղափոխականներ էին, գուցե եւ երիտթուրքերը[88]: Փաստն այն է, որ հաջորդ օրը Բեռլինի պայմանագիրը ստորագրած պետություններին ուղարկվեց մի հրովարտակ Federation Revolutionnaire Armenienne (Հայկական Հեղափոխական Դաշնակցություն) անունից: Հրովարտակում ասվում էր.

«Չափազանց երկար ժամանակ անպատիժ մնացած բռնակալների հանցագործությունները դեռեւս հատուցում են պահանջում: Մենք բռնության ենք դիմում, մի բան, որը սկզբունքորեն մերժում ենք, որովհետեւ մեզ դրան է պարտադրում սարսափելի իրականությունը: Հայ հեղափոխականները, որոնք կանգնած են իրենց ժողովրդի հուսահատության առաջ, միջոցներ ընտրելու հնարավորություն գրեթե չունեն... Սպանությունների սարսափելի ժամանակից հետո, 300 հազար անզեն մարդիկ սպանվել են Աբդուլ Համիդի հրամանով, «նորմալ» վիճակ չի հաստատվում հայկական գավառներում, իսկ մեր ժողովրդի արտաքսումը մեթոդապես շարունակվում է... Հենց երեկ երկրորդ անգամ հարձակում են գործել Սամսունի մարզի վրա, քառասուն գյուղ է հրկիզվել եւ ութ հազար տղամարդ անխնա կոտորվել: Եվրոպան լռում է այս ներքին ողբերգության հարցում... Մեր շատ համեստ պահանջներն են՝ եվրոպական մշտական վերահսկողություն... արքունիքից անկախ գեներալ-նահանգապետի նշանակում... համայնքներում պահակախմբերի ստեղծում: Տրիբունալների ռեֆորմ՝ 1895 թ. մայիսի հուշագրի համաձայն:

Բոլոր ազգերի հավասար իրավունքներ դատարանի առաջ: Համաներում բոլոր քաղաքական հանցանքների համար: Արտագաղթածների հայրենադարձություն եւ հատուցում...

Հավատի ազատություն, մամուլի ազատություն, ժողովների ազատություն: Մենք վճռել ենք զենքը վայր չդնել այնքան ժամանակ, մինչեւ մեր այս պահանջները չբավարարվեն... Մեր ձգտումը մեկուսացած շարժում չէ, այն միայն մեկն է մի ժողովրդի փորձերից, որը գիտակցում է իր իրավունքները, որոնք չափազանց երկար ժամանակ

ոտնակոխ են արվել, մի ժողովուրդ, որը մարդկային կյանքով է ուզում ապրել»[89]:

Մի քանի ձերբակալություններից ու հարցաքննություններից հետո պարզվեց, որ մահափորձը պլանավորվել ու իրագործվել էր Հայկական Հեղափոխական կոմիտեի կովկասյան հայ անդամների կողմից[90]:

Իրենց անգործության հետեւանքով առաջացած խղճի խայթը մեղմելու համար եվրոպական տերություններն ընդունեցին 1900 թ. փարիզյան խաղաղության կոնգրեսի եւ 1902 թ. փարիզյան միջազգային սոցիալիստական կոնգրեսի բանաձեւերը, որոնք արտահայտում էին քաղաքակիրթ աշխարհի վրդովմունքը հայերի նկատմամբ ստանձնած պարտավորությունները չկատարելու պատճառով: Սակայն դրանով էլ ամեն ինչ վերջացավ[91]: Եվ հայերը զգացին, որ իրենք քրիստոնյա պաշտպանների կողմից սուլթանին են մատնված, որովհետեւ միայն խոստումներով նրանց օգնելն անհնար էր: Այսպիսով, նրանք իրենց պայքարի տեր դարձան, զինված կամավոր ջոկատներ ստեղծեցին եւ պաշտպանվում էին՝ ինչպես կարող էին[92]: Հայկական վիլայեթները վերահսկելու համար սուլթանը վերաբնակեցմամբ մեծացրեց մահմեդական բնակիչների թիվը: 1878-1904 թթ. Թուրքահայաստան տեղափոխվեցին ավելի քան 850 հազար մահմեդական[93]: Մինչեւ 19-րդ դարի վերջը Թուրքիայում հետապնդումների ժամանակ սպանվել է 300 հազար հայ, 80 հազար հայ փախել է Պարսկաստան ու Կովկաս:

1900 թվականին Կ. Պոլսում զինվորական կցորդ բարոն Գիզըլը մեկնեց Թուրքահայաստան: Երգրումում նա կոտորածի մասին հարցուփորձ արեց հայոց եպիսկոպոս Զավենին, որը պատասխանեց.

«Հայ ազգը արյան գետերով է անցել եւ իր ունեցածից միայն այնքանն է փրկել, որ շուրջ 30 տարի հետո կարողանա վերստեղծել իր ցեղն ու կրոնը: Սակայն երբեք հնարավոր չի լինի փոխարինել սարսափելի կորուստները»[94]:

Հղումներ

1. André Mandelstam, ,,Das armenische Problem im Lichte der Völker- und Menschenrechte,,, Berlin, 1931, S. 8.
2. Նույն տեղում, S. 22.
3. Նույն տեղում:
4. Նույն տեղում, S. 16.
5. W. Meliksetian, ,,Sejtuni herosamart,,, Yerewan, 1960, S. 28.
6. Otto Bauer, ,,Die Nationalitätenfrage und die Sozialdemokratie,,, Wien, 1924, S. 171.
7. Նույն տեղում, S. 174.
8. Petter Lanne, ,,Armenien: Der erste Völkermord des 20. Jahrhunderts,,, München, S. 94f.
9. Josef Pomiankowski, ,, Der Zussammenbruch des Ottomanischen Reiches,,, Leipzig, 1928. S. 156f.
10. Fridtjof Nansen, ,,Betrogenes Volk,,, Leipzig, 1928, S. 289f.
11. Anahit Barikian, ,,Die Entwicklung der armenischen Frage im 19. Jahrhundert,,, Dissertation, Wien 1948, S. 109.
12. Նույն տեղում:
13. Նույն տեղում, S. 121.

14. Նույն տեղում, S. 117.
15. Edmund Tylor, ,,Der Untergang der Dynastien,,, Wien, 1963, S. 131.
16. A. Barikian, ,,Die Entwicklung...,,, S. 126.
17. Hans. L. Wegener, ,,Der britische Geheimdienst im Orient,,, Berlin, 1924, S. 132f.
18. A. Barikian, ,,Die Entwicklung...,,, S. 138.
19. Yves Ternon, ,,Tabu Armenien,,, Frankfurt, 1981, S. 43.
20. Georg Schöllgen, ,,Imperialismus und Gleichgewicht Deutschland, England und die orientalische Frage 1871-1914,,, München, 1984, S. 41.
21. Johannes Lepsius, ,,Armenien und Europa,,. Berlin, 1896, S. 741.
22. Artem Ohandjanian, ,,Österreich-Armenien 1872-1936,,, Wien, 1995, B. 1, S. 170f.
23. Նույն տեղում, B. 1, S. 216f.
24. A. Barikian, ,,Die Entwicklung...,,, S. 155.
25. G. Schöllgen, ,,Imperialismus...,,, S. 18.
26. P. Lanne, ,,Armenien...,,, S. 89.
27. Y. Ternon, ,,Tabu Armenien,,, S. 89.
28. A. Ohandjanian, ,,Österreich-Armenien...,,, B. 4, S. 3326.
29. Wien, HHStA BA Konstantinopel 412. Trapezunt, 12. Dezember 1879, Nr. 343.
30. Harold Nicolson, ,,Die Verschwörung der Diplomaten,,, Frankfurt, 1930, S. 46.
31. Նույն տեղում:
32. A. Ohandjanian, ,,Österreich-Armenien...,,, B. 1, S. 377.
33. Նույն տեղում, B. 1, S. 437.
34. Նույն տեղում, B. 1, S. 522.
35. J. Lepsius, ,,Die Große Politik der Europäischen Kabinette 1871-1914,,, Berlin, 1922/27, B. 3, S. 98.
36. Նույն տեղում, B. 1, S. 200.
37. Նույն տեղում, B. 1, S. 190.
38. H. Nicolson, ,,Die Verschwörung...,,, S. 4.
39. Von der Golz, ,,Denkwürdigkeiten,,, Berlin, 1929, S. 157.
40. Scheik Faiz El-Ghassein, ,,Die Türkenherrschaft und Armeniens Schmerzensschrei,,, Zürich, 1918, S. 15.
41. A. Ohandjanian, ,,Österreich-Armenien...,,, B. 1, S. 690f.
42. Նույն տեղում, B. 1, S. 631.
43. Նույն տեղում, B. 1, S. 958.
44. F. Nansen, ,,Betrogenes Volk,,, S. 290.
45. J. Pomiankowski, ,, Der Zussammenbruch...,,, S. 157.
46. Von der Goltz, ,,Denkwürdigkeiten,,, S. 158.
47. Wladimir Giesl, ,,Zwei Jahrzehnte im Nahen Orient,,, Berlin, 1927, S. 58.
48. G. Schöllgen, ,,Imperialismus...,,, S. 72.
49. W. Giesl, ,,Zwei Jahrzehnte...,,, S. 58.
50. A. Ohandjanian, ,,Österreich-Armenien...,,, B. 2, S. 941.
51. J. Lepsius, ,,Die Große Politik...,,, B. 9, S. 225.
52. Նույն տեղում, B. 10, S. 62.
53. Wien HHStA BA Konstantinopel 412. Konstantinopel, 24. September 1895, K3 A .
54. A. Ohandjanian, ,,Österreich-Armenien...,,, B. 2, S. 126.
55. Նույն տեղում, B. 4, S. 2710.
56. Hermann Lutz, ,,Lord Grey und der Weltkrieg,,, Berlin, 1927, S. 23.
57. A. Ohandjanian, ,,Österreich-Armenien...,,, B. 2, S. 1465.
58. W. Giesl, ,,Zwei Jahrzehnte...,,, S. 116.
59. F. Nansen, ,,Betrogenes Volk,,, S. 296f.
60. G. Schöllgen, ,,Imperialismus...,,, S. 302.
61. Wien HHStA BA Konstantinopel 412. Konstantinopel, 12. Dezember 1895.
62. Wien HHStA BA Konstantinopel 412. Konstantinopel, 20. Jänner 1896.
63. A. Ohandjanian, ,,Österreich-Armenien...,,, B. 2, S. 1637f.
64. Նույն տեղում, B. 2, S. 1531.

65. W. Giesl, ,,Zwei Jahrzehnte...,,, S. 117.
66. Westenenk, ,,Die Tagebücher von Westenenk,,, München, ,,Institut für die Armenische Fragen,,, 1986, S. 9.
67. W. Giesl, ,,Zwei Jahrzehnte...,,, S. 118
68. Wien HHStA BA Konstantinopel 412. Konstantinopel, 28. August 1896.
69. Wien HHStA BA Konstantinopel 412. Konstantinopel, 12. Dezember 1895.
70. Wien HHStA BA Konstantinopel 412. Konstantinopel, 20. Jänner 1896.
71. Նույն տեղում:
72. Wien HHStA BA Konstantinopel 412. Konstantinopel, 5. Dezember 1896.
73. Wien HHStA BA Konstantinopel 412. Konstantinopel, 9. Jänner 1897, Nr. 22196.
74. W. Giesl, ,,Zwei Jahrzehnte...,,, S. 11.
75. F. Nansen, ,,Betrogenes Volk,,, S. 302.
76. H. Lutz, ,,Lord Grey...,,, S. 35.
77. Նույն տեղում, S. 280.
78. Նույն տեղում, S. 28.
79. Նույն տեղում, S. 42.
80. Wien HHStA PA XII 174. Konstantinopel, 26. September 1900, Nr. 41 B.
81. Wien HHStA PA XII 174. Jeniköj, 10. Oktober 1900, Nr. 43 B.
82. A. Ohandjanian, ,,Österreich-Armenien...,,, B. 2, S. 1461f.
83. Նույն տեղում, B. 4, S. 2731f.
84. Mandelstam, ,,Die Tagebücher...,,, S. 25.
85. A. Ohandjanian, ,,Österreich-Armenien...,,, B. 4, S. 2717.
86. Նույն տեղում, B. 4, S. 2726.
87. Wien HHStA PA XII 187. Jeniköj, 26. Juli 1905, Nr. 37 B.
88. Նույն տեղում:
89. Wien HHStA PA XII 187. Beilage zu Bericht: 26. Juli 1905, Nr. 37 B.
90. Wien HHStA PA XII 188. Jeniköj, 13. September 1905, Nr. 45 E.
91. F. Nansen, ,,Betrogenes Volk,,, S. 303.
92. Նույն տեղում, S. 301.
93. P. Lanne, ,,Armenien...,,, S. 103.
94. W. Giesl, ,, Zwei Jahrzehnte...,,, S. 125f.

2. ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԸ

Իրադրությունը Թուրքահայաստանում 20-րդ դարի սկզբին անմխիթար էր: Զինվորները, քրդերը եւ համիդյան հեծելազորը (որի հրամանատարը Ռաուֆ բեյն էր[1]) կողոպտում էին հայ գյուղացիներին: Հարկահանները սոսկալի պարագաներում հարկեր էին բռնագանձում, թեեւ գիտեին, որ պարտապանները հաճախ ի վիճակի չէին վճարելու: Բանկը գյուղացիներին վարկեր էր տրամադրում, թեեւ գիտեր, որ նրանք չեն կարողանալու վերադարձնել: Դա բանկերի համար հետագայում նրանցից գրեթե ամեն ինչ խլելու պատրվակ էր: Հայերի թշվառությունն օրեցօր անտանելի էր դառնում: Իրենց հայրենակիցներին օգնելու համար հայ հեղափոխականները Կովկասից անլեգալ կերպով գալիս էին Թուրքիա եւ կռվում քրդերի ու հաճախ նաեւ՝ համիդյան հեծելազորի դեմ: 1904-ի կեսերին Սալորիի ու Սամսունի շրջաններում այրվեց 40 հայկական գյուղ եւ սպանվեց 3500 հայ: Մի քանի գյուղ հրդեհվեց եւ մոտ հարյուր մարդ սպանվեց Մուշի շրջանում: Վանում ջարդ կազմակերպելու համար զինվորներ սպանեցին չորս եւ վիրավորեցին վեց հայի: Վալիի վճռական միջամտության շնորհիվ այդ մտադրությունը չիրականացվեց[2]: Այս իրադրությունն ստիպեց Անատոլիա գալ նոր հայ հեղափոխականների: Զենք ու ռումբեր էին գնում: Տներում խուզարկությունների ժամանակ ռումբեր հայտնաբերելուց հետո իշխանություններն ավելի խստացրին հսկողությունը, այնպես որ հայերին հաճախ թույլ չէր տրվում հեռանալ իրենց բնակավայրերից[3]:

Եվրոպացիների, հատկապես Ռուսաստանի ու Ավստրո-Հունգարիայի համար, չափազանց կարեւոր էր Մակեդոնիայի խնդիրը: Այնտեղ կռվում եւ իրար էին սպանում հույները, բուլղարացիները, սերբերն ու թուրքերը: Թեեւ Աբդուլ Համիդը համաձայնել էր Ռուսաստանի ու Ավստրիայի կողմից կազմած բարեփոխումների համատեղ ծրագրին, այնուամենայնիվ այն չէր կարող իրագործվել անկարողության, անտնտեսվարության եւ կաշառակերության պատճառով: Դրա հետեւանքով Թուրքիայի ներքին վիճակն օրեցօր վատթարանում էր:

Ամենամոտ ապագայում սպասվում էր Թուրքիայի բաժանումը մեծ տերությունների շահերի ոլորտների: Մինչդեռ Թուրքիայի պահպանումը Գերմանիայի եւ Ավստրո-Հունգարիայի կարեւորագույն նպատակներից էր, որովհետեւ ուժեղ Թուրքիան ճնշում էր ռուսների կողմից հրահրված բալկանյան երկրներին, եւ դրանով թեթեւանում էր Ավստրիայի՝ այս կողմից վտանգի տակ գտնվող թեւը: Բացի դրանից, Գերմանիայի համար հետզհետե ավելի կարեւոր էր դառնում Թուրքիայի տնտեսական շա-

հագործումը: Որպեսզի հնարավոր լիներ կասեցնել Թուրքիայի բաժանումը, վերջինս պետք է լիբերալացվեր: Դրա համար էր երիտթուրքերի շարժումը:

Արդեն 1876-ի մայիսին երիտթուրքերը պետական հեղաշրջում էին կատարել, գահազրկել սուլթան Աբդուլ Ազիզին եւ նրա տեղը գահին էին բարձրացրել իշխան Մուրադին: Քանի որ նա ծանր հիվանդ էր, շուտով նրան փոխարինեց նրա կրտսեր եղբայր իշխան Աբդուլ Համիդը[4]:

Դրանից քիչ հետո խռովություններ սկսվեցին Բոսնիայում ու Հերցեգովինայում, որոնք էլ պատճառ դարձան ռուս-թուրքական պատերազմի բորբոքման համար: Երբ Թուրքիան պարտություն կրեց, եւ ռուսները կանգնած էին Կ. Պոլսի դարպասների մոտ, Աբդուլ Համիդն օգտվեց առիթից եւ տապալեց երիտթուրքական կաբինետը, իսկ Միդհաթ փաշային՝ Մեծ վեզիրին, ձերբակալել տվեց: Եվ ահա երեսուն տարի անց երիտթուրքերը ձեռնարկեցին մի նոր պետական հեղաշրջում[5]:

Երիտթուրքերի «Միություն եւ առաջադիմություն» կուսակցության մասին պատմաբան Էդմունդ Թեյլորը գրում է.

«Նրա անդամներից շատերը մասոնական օթյակների մեջ էին մտնում, որոնք կապված էին «Մեծ Արեւելք» ռազմատենչ Մեծ օթյակի հետ Ֆրանսիայում եւ Իտալիայում: Մասոնականության այս ճեւն, անկասկած, մեծ դեր է խաղացել նրանց աշխարհայացքի ձեւավորման գործում: Համենայնդեպս կարելի է ենթադրել, որ դավադրության մեջ խառն էր Սալոնիկում իտալական հյուպատոսի մատը, որը հովանավորում էր «Macedonia Risorta» մասոնական օթյակը (որի անդամներն էին հեղափոխական մի քանի ղեկավարներ):

Իր մասոնական ծագմանը համապատասխան կոմիտեն եղբայրաբար իր կազմի մեջ էր ընդունում յուրաքանչյուր ազգի եւ հավատի մարդկանց: Նրա ղեկավարների թվում կային հույներ, հայեր, հրեաներ, թուրքեր եւ այլն, եւ այն գաղտնի կապ էր պահպանում մի քանի ըմբոստացած փոքրամասնությունների հետ Մակեդոնիայում: Կոմիտեն հանդես էր գալիս օսմանիզմի տեսակետի, բազմազգ պետության օգտին, որտեղ յուրաքանչյուր ազգային փոքրամասնություն պիտի ունենար քաղաքացիական ու քաղաքական հավասար իրավունքներ՝ սահմանադրական տիրակալի իշխանության ներքո: Թեեւ կոմիտեի անդամներն արտասահմանում հայտնի էին որպես երիտթուրքեր, իրենք իրենց չէին դիտում որպես թուրք ազգայնականներ»[6]:

Երիտթուրքերը փորձում էին կապեր հաստատել երկրի ազգային փոքրամասնությունների հետ՝ Աբդուլ Համիդի բռնակալության դեմ միասին պայքարելու համար: Նրանք կապ հաստատեցին նաեւ հայկական կազմակերպությունների հետ: 1906 թ. հուլիսին Փարիզում կայացավ երիտթուրքերի հանդիպումը հայկական Հնչակյան կուսակցության ղեկավարների հետ: Բայց քանի որ Հայկական հարցի եւ բարեփոխումների վերաբերյալ կողմերը համաձայնության չեկան, հնչակյանները հրաժարվեցին երիտթուրքերի հետ համագործակցելուց[7]: Սակայն մեկ տարի անց երիտթուրքերը կարողացան իրենց կողմը գրավել մեկ այլ հայկական կուսակցության՝ դաշնակցության ղեկավարներին[8]:

1907 թ. դաշնակցականները փորձեցին «Սահմանադրության ընդունում» կարգախոսով միավորել Թուրքիայի բոլոր ազգություններին: Դաշնակցականների հրավերով Փարիզում հավաքվեցին Թուրքիայի բոլոր քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչները՝ երիտթուրքերը, հայերը, հույները, բուլղարացիներն ու հրեաները: Դաշնակցականներին հաջողվեց իրար հետ հաշտեցնել թշնամացած ղեկավարներ Ահմեդ Ռիզային եւ իշխան Սաբահեդդինին[9]:

Նիկոլայ 2-րդ ցարի եւ Էդվարդ թագավորի՝ Ռեւելում հանդիպումը եւ Աբդուլ Համիդի՝ «Բաժանիր, որ տիրես» կարգախոսից ելնող դիվանագիտության վերջնական տապալումը արագացրին երիտթուրքական հեղափոխությունը Թուրքիայում: 1908-ի հուլիսի 3-ին հեղափոխությունը բռնկվեց Ռեսենից: Ապստամբել էին երկու հարյուր հիսուն երիտասարդ սպաներ: Հուլիսի 18-ին ապստամբների առաջնորդ փոխմայոր Նիազին Ստրավորայից գլխավոր տեսուչ Հիլմի փաշային, Սալոնիկ, ուղարկեց հետեւյալ հեռագիրը.

«Քանի որ ես մինչեւ հիմա պատասխան չեմ ստացել սուլթանին եւ պրեմիեր մինիստրին ուղղած իմ առաջարկություններին, դիմում եմ Ձերդ Գերազանցությանը սուլթանի եւ Բ. Դռան առաջ հետեւյալ հայտարարության համար իմ միջնորդը լինելու խնդրանքով. ես անցել եմ Վերին Ալբանիայի մի մասով, հետո Օհրիդա եւ Կաստորիա շրջաններով եւ, շփվելով բնակչության հետ, անկախ կրոնից ու ազգությունից, ստացել եմ այն տպավորությունը, որ իշխանությունները ճնշում են ժողովրդին եւ անարդար կերպով ոտնահարում են նրանց իրավունքները, այնպես որ կյանքի, պատվի եւ սեփականության ապահովությունը երաշխավորված չէ: Բնակչությունը միանում է սահմանադրության վերականգնման իմ ձգտումներին: Երկու հարյուր հիսուն համախոհների ուղեկցությամբ, որոնք ինձ նման իրենց կյանքը նվիրել են բարի գործի, ես այսօր Էպիրուս եմ մեկնում՝ այնտեղից մեր գաղափարները տարածելու համար: Խնդրում եմ, որ սուլթանն այնտեղ ուղարկի իր վերջին վճիռը: Եթե նա շարունակի լռել, ապա մենք եւ մեր երիտթուրքական ընկերները պատրաստ ենք մեր արյունը թափել՝ մինչեւ վերջին կաթիլը արդար գործը հաղթանակին հասցնելու համար»[10]:

Հուլիսի 24-ին Ազգային Հեղափոխական կոմիտեն հրապարակում է եւ պատերին փակցնում մի հայտարարություն.

«31 տարի շարունակ Կ. Պոլսում օրենքները ոտնահարվում են մի քանի պատվազուրկ անհատների կողմից, որոնք սողոսկել են ազգի եւ տիրակալի միջեւ, բոլոր պետական պաշտոնները իջեցված են առուծախի ապրանքի աստիճանին, ազգը արյունաքամ է եղել ու կործանվել: Մինչդեռ այս ստոր արարածները միլիոններ են գրպանում եւ պալատներ կառուցում, բանակը քրքրված համազգեստներ է կրում: Այս հանցավոր գործունեությանը պետք է վերջ դրվի, կաշառված վարչակազմը պետք է հե-

ռացվի եւ փոխարինվի ժողովրդական ներկայացուցիչներով: Կեցցե՞ն հայրենիքը, ազգը, ազատությունը»[11]:

Նույն օրվա գիշերվա 11.30-ին Սալոնիկում հավաքված սպաները, որոնք կենդանաբանական այգում լուրերի էին սպասում, հեռագիր ստացան ազգային կոմիտեից.

«Մենք՝ այստեղ հավաքված 100000 անձինքս, բոլոր դասերը ներկայացնող բնակիչներս, այսօր վիլայեթի բոլոր կասաներում հրետանու 21 համազարկով ազատություն հռչակեցինք. մեր նպատակն է՝ սահմանադրություն կամ մահ»[12]:

Հեռագրի ընթերցումից հետո ներկաները երգեցին «Մարսելյեզը»: Առավոտյան ժամը 2-ին Կ. Պոլսից հեռագիր տրվեց, որ սուլթանը վերականգնում է սահմանադրությունը: Ժողովուրդը գնաց գլխավոր հսկիչի տան մոտ, երգեց «Մարսելյեզը» եւ կեցցեներ հնչեցրեց սուլթանի պատվին[13]: Քսանչորս ժամվա ընթացքում ամեն ինչ վերջացավ: Նոր ազատամիտ սահմանադրությունը սահմանում էր բոլոր ազգությունների ու դավանանքների իրավահավասարություն: Ողջ կայսրությունը ցնծում էր: Բանտերը բացվեցին, մարդիկ այցելում էին 1896 թ. հայկական ջարդերի զանգվածային գերեզմանները: Մահմեդական ղեկավարները փառաբանում էին այդ զոհերին որպես ազատության մարտիրոսների: Ազատագրվելով ճնշող լծից՝ ողջ ժողովուրդը թեթեւացած շունչ քաշեց[14]:

Թուրք մասոնների իրականացրած հեղափոխությունը ոգեւորություն առաջացրեց եվրոպական օթյակներում: Հունգարական օթյակները շնորհավորեցին իրենց եղբայրներին Սալոնիկում: Միլանի «Corriere della Sera» լրագիրը հարցազրույց հրապարակեց երիտթուրքերի «Միություն եւ առաջադիմություն» կոմիտեի ղեկավարներից մեկի հետ.

«Մեր կազմակերպությունն օգտագործել է մասոնության ձեւերն ու ծեսը: Արտասահմանյան մեր համախոհները առանձին բաժին են կազմել եւ աշխատում են որպես երկրի ներսում գործող կոմիտեի արտաքսված անդամներ»[15]:

Երիտթուրքական շարժման մասին մի զեկույցի տակ կայզեր Վիլհելմը գրեց.

«Թուրքիան՝ թուրքերին», դա միշտ իմ քաղաքականության հիմնական գաղափարն է եղել: Եվ այժմ վերջապես իրականանում է թուրքական պառլամենտ հրավիրելու միջոցով, որի պատգամավորները, հուսանք, իրենց ձեռքը կվերցնեն կարգուկանոնը Թուրքիայում եւ իրենք բարեփոխություններ կկատարեն, այնպես որ եվրոպական մեծ տերությունների միջամտելու ցանկություններին մեկընդմիշտ վերջ կտրվի: Դա լավ է թուրքական քրիստոնյաների, ինչպես նաեւ մահմեդականների համար եւ դա էլ հենց այն է, ինչին ես եմ միշտ ձգտել: Ես շատ գոհ եմ այս լուծումից»[16]:

1908 թ. հուլիսի 24-ին Մահմուդ Շեֆքեթ փաշան՝ Մակեդոնիայի գեներալ-նահանգապետը, հետեւյալ հեռագիրը հղեց Գոլցին.

«Խոնարհաբար պատիվ ունեմ հաղորդելու Ձերդ Գերազանցությանը, որ Ձեր հնազանդ աշակերտները ստիպեցին հին թուրքական կառավարությանը հրաժարվել

օրհասական բռնապետությունից եւ ընդունել սահմանադրությունը»[17]:

Սակայն Գոլցը գրեց իր օրագրում. *«Իրականում մի բռնապետությունը փոխարինեց մյուսին»*[18]:

Նա իր բարոյական պարտքն էր համարում խորհրդով ու գործով սատար կանգնել իր աշակերտներին այն *«դժվար խնդիրը կատարելու համար, որն իրենք դրել էին իրենց առաջ»*[19]:

Երիտթուրքերը, Թուրքիայի ազգային բոլոր փոքրամասնությունների համագործակցությամբ հասնելով նպատակին, ցույց տվեցին իրենց բուն էությունը հենց առաջին ընտրությունների ժամանակ: Նրանք ընտրական իրավունքը խեղաթյուրեցին հոգուտ մահմեդականների: Վոդենա քաղաքում գիշերը քվեարկությունից հետո բացեցին քվեատուփը, վերացրեցին հույների ու բուլղարացիների քվեաթերթիկները եւ փոխարենը դրեցին կեղծած թերթիկներ: Այս առիթով բուլղարական սահմանադրական ակումբը բոլոր հյուպատոսություններին ուղարկեց հուշագիր[20]:

«Երկրի բոլոր ազգությունների մինչեւ հիմա եղած համերաշխությունն ու եղբայրությունը այն խորհրդավոր կախարդական միջոցն էր, որի շնորհիվ երիտթուրքերին հաջողվեց, հռչակելով սահմանադրությունը, մի հարվածով վերջ տալ մակեդոնացիների տարիներ տեւող մարդասպանական կռիվներին իրար մեջ: Այդ համերաշխությունն ու եղբայրությունն այլեւս չկան: Ներքին կազմակերպության իր ակնկալիքներում չարաչար խաբված բուլղարացիների կուսակցությունը, որը չստացավ իրեն խոստացված մանդատներից եւ ոչ մեկը, իհարկե, իր հետեւությունները կանի երիտթուրքերի ուխտադրժությունից»[21]:

Այն, որ երիտթուրքերն իրենց քաղաքականությունը կառուցել էին ահաբեկության վրա, ընդգծում է Ավստրո-Հունգարիայի հյուպատոս Պառայի 1908-ի նոյեմբերի 13-ի զեկույցը Սալոնիկից.

«Կոմիտեն մինչեւ հիմա հաջողության է հասել միայն բոլոր հասարակական դասակարգերին ահաբեկելով: Այդ ահաբեկումը նկատվում էր բարձրագույն վարչական եւ զինվորական պաշտոններն զբաղեցնելիս եւ անգամ պառլամենտի ընտրությունների ժամանակ»[22]:

Այս ամենի հետեւանքն այն եղավ, որ բուլղարական պարտիզանները, որոնք սահմանադրության հռչակումից հետո դադարեցրել էին իրենց գործունեությունը, կրկին ակտիվացան: Իրենց գործունեությունը վերսկսեցին նաեւ հույները: Հունական պարտիզանական խմբերն անլեգալ կերպով անցան սահմանն ու մտան Թուրքիա[23]: Դեռ տարին չանցած՝ 1909-ի ապրիլին, Աբդուլ Համիդը, իսլամական հոգեւորականության ու անգլիացիների օգնությամբ, փորձեց նորից գրավել իշխանությունը[24]:

Ապրիլի 4-ին Վիեննայի «Arbeiter Zeitung» լրագիրը գրում է.

«Իսլամական շարժումը գնալով ընդլայնվում է: Շարժման ծավալը, նշանակությունն ու հետեւանքները առայժմ հնարավոր չէ կանխագուշակել: Այսօր կայացավ

մահմեդական հոգեւորականության եւ սոֆթաների հսկայական ցույց: Մահմեդական միության պաշտոնաթերթ «Վոկանը» այսօր հաղորդում է հրապարակել այն մասին, որ կեսօրվա աղոթքից հետո Սոֆիայի մզկիթում ընթերցվելու է Մեւլուդը (Մարգարեի ծնունդը), որին կհաջորդի մահմեդական միության շենքի բացումը: Կեսօրին Սոֆիայի մզկիթն ու շրջակայքը, ինչպես, օրինակ, Ջիարշավի հրապարակը, լեփ-լեցուն էր: Եկել էին մուսուլմանները, սոֆթաները, հատկապես տարեց սպաները: Մզկիթում արտասանած ճառերը ավարտվում էին Շարիաթի կրոնական օրենքը, իսլամական ոգին ու բարքերը պաշտպանելու պահանջներով: Կարգ ու կանոնը վարպետորեն պահպանվում էր: Մինչեւ հիմա որեւէ միջադեպի մասին հաղորդում չի եղել: Կառավարությունը ոստիկանական եւ զինվորական նախազգուշական միջոցներ էր ձեռք առել: Այսօր լույս տեսավ «էլ Իսլամ» կոմիտեի օրգան «էլ Իսլամ» թերթի առաջին համարը, այս կոմիտեն, հավանաբար, մահմեդական միության մասնաճյուղն է: Թերթը գրում է, որ կոմիտեն նպատակ է հետապնդում դիմադրելու իսլամի դեմ գործող ընդդիմությանը, ինչպես եւ գիտության մարդկանց կասկածանքներին: Թերթը գրում է, որ իսլամը չի ուզում բացարձակ միապետություն, այն պահանջում է խորհրդակցական ռեժիմ եւ թույլ չի տալիս բռնապետական ռեժիմ, եւ որ քրիստոնյաների բողոքների պատճառն այն է, որ նրանք իսլամին չեն հետեւում: Կոմիտեն նստում է Կ. Պոլսում: Մասնաճյուղեր ստեղծվում են ամենուրեք»[25]:

Երբ Կ. Պոլսում սպանվեց «Սերբեստի» ընդդիմության թերթի գլխավոր խմբագիրը, երիտթուրքերի բոլոր թշնամիներն օգտվեցին այդ իրադրությունից:

Ապրիլի 9-ին «Arbeiter Zeitung» թերթը գրում է.

«Լիբերալ միությունը եւ նրա կողմնակիցները ինչպես եւ, ընդհանրապես, երիտթուրքական կոմիտեի բոլոր թշնամիները, օգտվեցին «Սերբեստիի» գլխավոր խմբագրի սպանությունից՝ երիտթուրքական կոմիտեի դեմ կամպանիա բացելու համար: Այդ բողոքներն ուղղվում են նաեւ սահմանադրության եւ այն արտոնությունների դեմ, որոնք քրիստոնյաները ստացան սահմանադրության միջոցով»[26]:

Ապրիլի 11-ին նույն թերթը գրում է.

«Մեր տեսակետից իսլամական շարժման գնահատականը տալ հնարավոր չէ: Բայց ուշագրավ է այն հանգամանքը, որ «Ittihadi Islam»-ը (Իսլամի միությունը) նշում է, որ բոլոր ազգությունների միավորումը Թուրքիայում անհնար է, որ հնարավոր է միայն մահմեդական ժողովուրդների միավորումը: «էլ Իսլամը» գրում է, որ հնարավոր չէ զինվորական ծառայությունը տարածել ոչ մահմեդականների վրա, ծայն է բարձրացնում զինվորական ծառայության օգտին մինչեւ հիմա դրանից մասամբ ազատված ալբանացիների ու քրդերի վերաբերյալ»[27]:

Իրադարձությունները զարգանում էին կայծակի արագությամբ: Ապրիլի 13-ին գրավում են պառլամենտը: Մահմեդական հոգեւորականությունն ու սոֆթաները ցույցեր էին կազմակերպում եւ շարժման մեջ պահում ամբոխը: Ապրիլի 14-ին երիտթուր-

քերը փախչում եւ թաքնվում են:

Ապրիլի 14-ին «Arbeiter Zeitung»-ը գրում է.

«Անհանգստացնող են կրոնական ուժեղացած տրամադրությունները, մահմեդական հոգեւորականության եւ սոֆթաների հիշատակած ցույցը եւ, վերջապես, ամբոխի մասնակցությունը շարժմանը: Շատ մեծ թվով երիտթուրքեր փախել են կամ անհետ կորած են, հավանաբար, թաքնվում են: Ինչպես երեւում է՝ հին թուրքական պահպանողականներն ու հոգեւորական տարրերը լիակատար առավելության են հասել եւ լրիվ վերացրել երիտթուրքական կոմիտեի տիրապետությունը: «Վոկանը» հրատարակել է տարբեր նամակներ ու հոդվածներ երիտթուրքական կոմիտեի դեմ, նաեւ հաղորդումներ զինվորականների ցույցերի մասին, ինչպես եւ Շարիաթի օրենքի ու սահմանադրության պահպանման կոչեր»[28]:

Երիտթուրքական ղեկավարներն ապաստան էին գտել հայերի տներում: Յոհ. Լեփսիուսը «Հայ ժողովրդի մահվան երթը» գրքում գրում է.

«Երբ 1909 թ. տապալվեց երիտթուրքական կառավարությունը, եւ Աբդուլ Համիդը նորից իր ձեռքը վերցրեց իշխանությունը, երիտթուրքական ղեկավարների կյանքը կոպեկ էլ չարժեր: Այն ժամանակ, ներկայումս իշխանության գլուխ կանգնած մարդիկ թաքնվել էին իրենց հայ բարեկամների տներում: Հալիլ բեյը՝ արտաքին գործերի նախարարը, որն այսօր Թալեաթ բեյի եւ Էնվեր փաշայի կողքին մեծագույն ազդեցություն է վայելում, այն ժամանակ փախավ իր բարեկամ Զոհրապի բնակարանը, որը, սեփական կյանքը վտանգելով, նրան 14 օր շարունակ իր մոտ էր թաքցնում՝ մինչեւ ռեակցիայի տապալումը եւ սուլթան Աբդուլ Համիդի գահազրկումը»[29]:

Մահմուդ Շեւքեթ փաշան ու Թալեաթ բեյը եւս թաքնվել էին իրենց հայ բարեկամների մոտ, մյուս երիտթուրքերը փախել էին «Ազատամարտ» թերթի խմբագրություն: Գավառներում էլ երիտթուրքերը հայերի մոտ էին պաշտպանվում իրենց հետադիմական թշնամիներից: Էրզրումում դաշնակցականները երիտթուրքական ղեկավարներին տանում էին հյուպատոսարանները, հաճախ իրենց տները, եւ երբ նրանց մի մասին բռնեցին եւ տեղափոխում էին Բեյրութ, դաշնակցականներն ուղեկցում էին քաղաքական բարեկամներին նրանց հարձակումից պաշտպանելու համար[30]: Ապրիլի կեսերին «Իթթիհադ Մուհամեդի» մահմեդական կուսակցության իշխանության գլուխ գալն սկսեց հետեւանքներ ունենալ գավառներում: Ամբոխը, սոֆթաների բոցաշունչ ճառերից ոգեւորված, արյան բաղնիք սարքեց բնակչության մեջ: Հայ ժողովրդի ուրախությունը թվացյալ ազատության ու հավասարության համար երկար չտեւեց: Եվրոպական թերթերի հաղորդումները պարզաբանում են իրավիճակը: Ապրիլի 17-ին «Arbeiter Zeitung»-ը գրում է հայերի կոտորածների մասին Ադանայում.

«Ադանայից հաղորդում են, որ քաղաքը երեկ չէ մյուս օրվանից բոցերի մեջ է: Փողոցներում տեղի է ունենում սոսկալի կոտորած»: Եվ. *«Երեկվանից Ադանայում շարունակվում է հայերի ջարդը: Զորքը ի վիճակի չէ վերջ դնելու կոտորածին: Զինվորները*

կողոպուտ են սկսում»[31]:

Ապրիլի 18-ին Բ. Դռան առաջ բողոքի ցույց էր կազմակերպել հայ ականավոր գործիչների 40 հոգանոց պատգամավորությունը Պերայի եպիսկոպոսի գլխավորությամբ. բողոքում էին Ադանայում ու Թարսոսում հայկական ջարդերի դեմ[32]: Սակայն կոտորածն ու թալանը շարունակվում էին: Թուրք հանցագործների 400 հոգանոց մի խումբ փախավ Բայասի միջնաբերդից: Նրանք հարձակվեցին Անտիոքի վրա՝ կողոպտելով ու սպանելով հայերին[33]:

Ապրիլի 23-ին «Arbeiter Zeitung»-ը գրում է.

«Հյուպատոսական հեռագրի հիման վրա Ադանայի վիլայեթում հայերի կոտորածի զոհերի թիվը ենթադրվում է մոտ 15 հազար մարդ: Զոհերի թվում կան շատ կանայք եւ երեխաներ: Ամբողջ գյուղեր են ոչնչացվել: Եվրոպայի առաջ արդարանալու համար վիլայեթի իշխանությունները հայ եպիսկոպոսից եւ ականավոր գործիչներից պահանջում են հայտարարել, թե իրադրությունը հրահրված է եղել հայ հեղափոխական շարժման կողմից, եւ սպառնում են ոչնչացնել բոլոր կենդանի մնացածներին, եթե այդ հայտարարությունը չարվի»[34]:

Ապրիլի 23-ին երիտթուրքական զորամասերը Էնվեր փաշայի գլխավորությամբ, որի շտաբում էր Մուստաֆա Քեմալը, մարտերով Սալոնիկից Կ. Պոլիս հասան: Ապրիլի 24-ին Կ. Պոլիսը պաշարված էր, իսկ ապրիլի 27-ին իշխանությունը կրկին երիտթուրքերի ձեռքին էր: Սուլթան Աբդուլ Համիդը գահազրկվեց, եւ նրա եղբայրը հռչակվեց սուլթան Մեհմեդ 5-րդ: Իշխանությունը նորից իրենց ձեռքն առած երիտթուրքերը փորձեցին դադարեցնել հայերի սպանդը: Զորքեր ուղարկվեցին Ադանա, հայտարարվեց պատերազմի ժամանակվա օրենք: Անգամ Սոֆիայի կոմիսարը մեկ տարվա բանտարկության դատապարտվեց, որովհետեւ ծեծել էր տվել նախնական կալանքի տակ գտնվող չորս հայերի[35]: Մայիսի 9-ին «Norddeutsche Allgemeine Zeitung» թերթը իր շաբաթվա տեսությունում գրում է.

«Կարելի է հույս դնել, որ օսմանյան կառավարությունը սեփական ուժերով կվերականգնի խաղաղությունը, կարգ ու կանոնը Փոքր Ասիայում: Համենայնդեպս, օտար պետությունների միջամտության համար առիթ չկա»[36]:

Այնինչ սպանված հայերի թիվը երեսուն հազարի էր հասնում:

Աբդուլ Համիդին իր կանանց եւ երեխաների հետ տարան Սալոնիկ, որտեղ նա խիստ հսկողության տակ պահվում էր Ալլաթինի վիլայում: Երիտթուրքերի համար մեծագույն հետաքրքրություն էր ներկայացնում Աբդուլ Համիդի միլիոնների ավանդը Բեռլինի ռայխսբանկում: Նրանք բոլոր միջոցներով փորձում էին այդ փողին տիրանալ: Գերմանացիների օգնությամբ դա նրանց հաջողվեց: 1909-ի հուլիսի 14-ին Աբդուլ Համիդի կարողությունը հանձնվեց «Օտտոման» բանկի Սալոնիկի մասնաճյուղին[37]: Եվ երբ երիտթուրքական կառավարությունը հետագայում Բաղդադի երկաթուղու համար անգլիացիներից փոխառություն խնդրեց ու չստացավ *(«որովհետեւ Բաղ-*

դադի երկաթուղին դիտվում էր որպես մի ձեռնարկություն, որը առկա կոնցեսիայ պայմաններում ամենեւին էլ Օսմանյան կայսրության շահերից ելնելով չի մշակվել, իսկ վերահսկողության ներկայիս պայմանների դեպքում, անկասկած, սպառնալիք է ներկայացնում Միջագետքում բրիտանական առեւտրի համար...»), կառավարությունը դիմեց Գերմանիային եւ անմիջապես ստացավ փոխառությունը: Այժմ գերմանացիները կրկին Թուրքիայի իսկական բարեկամներն էին[38]:

Քանի որ երիտթուրքական հեղափոխությունը ոչ թե դեմոկրատական, այլ ազգայնական շարժում էր, Մեծ Բրիտանիան, Ռուսաստանն ու Ֆրանսիան, որոնց տիրույթներում բազմաթիվ մահմեդական հպատակներ էին ապրում, չէին կարող ընդունել այն:

Մյուս կողմից՝ Գերմանիայի համար *«թուրքական նացիոնալիզմը վտանգ չէր ներկայացնում: Ի հակադրություն եվրոպական տերությունների մեծ մասի, Գերմանիան իր քաղաքականությունը Մերձավոր Արեւելքում հիմնել էր Թուրքիայի ուժեղացման վրա... Եթե թուրքական ծրագիրը դժգոհություն էր պատճառում Անտանտի տերություններին, ապա այն օգտակար էր Գերմանիային համաշխարհային քաղաքականության մեծ խաղում: Այդ պատճառով Գերմանիան կարող էր իրեն թույլ տալ պաշտպանելու երիտթուրքական կառավարությանը: Ինչպես Աբդուլ Համիդի օրերին, Գերմանիան թվում էր օսմանների միակ բարեկամը»*[39]:

Երիտթուրքական ղեկավարները նորից իշխանության գլուխ էին կանգնել, սակայն ազատության ու հավասարության հռչակման գործում ավելի զգույշ էին դարձել: Իշխանության արագ փոփոխությունը նրանց նախազգուշացրել էր, որ կրոնական մոլեռանդ զանգվածի մեջ ավելի ուժ կա, քան կարելի է պատկերացնել: Երիտթուրքերի նոր կարգախոսն էր պանթուրքիզմը: 1911 թ. հոկտեմբերին երիտթուրքական կոնգրեսին ներկայացված զեկուցումից երեւում է, թե ինչ պետք է պատահեր Թուրքիայի ազգային փոքրամասնությունների հետ, այն է՝ նրանք պետք է օսմանացվեին:

«Սակայն պարզ է, որ այդ արդյունքին երբեք հնարավոր չէր լինի հասնել միայն համոզելով, այլ պետք էր դիմել զենքի օգնությանը: Մյուս ազգություններին պետք է արգելվեր կազմակերպություններ ստեղծելը, որովհետեւ ապակենտրոնացումն ու ինքնավարությունը կնշանակեին պետական դավաճանություն թուրքական կայսրությանը: Ազգային փոքրամասնությունը մի աննշան չափ է իրենից ներկայացնում: Նրանք կարող էին պահել իրենց կրոնը, բայց ոչ իրենց լեզուն»[40]:

Եվ այսպես երիտթուրքերը թուրքական պետության երկու հիմնասյուներին՝ բռնապետությանն ու իսլամին, ավելացրին պանթուրքիզմը: Նրանք վերացրել էին սուլթանի արիստոկրատիային, բայց մի օլիգարխիա էին ստեղծել, որում իշխում էր «Միություն եւ առաջադիմություն» կուսակցությունը: Գործնականում ճնշվում էին ընդդիմախոսությունն ու քննադատությունը: Փոքրամասնությունների հետ միշտ այնպես էին վարվում, ինչպես Աբդուլ Համիդի ժամանակներում:

Թ. է. Լորենսը «Իմաստության յոթ սյուները» գրքում գրում է, որ երիտթուրքերի կոմիտեն՝ մեծ մասամբ մակերեսային ու կիսակրթված մարդիկ, բաղկացած էր հույներից, ալբանացիներից, չերքեզներից, հայերից եւ հրեաներից, ումից ասես, միայն թե ոչ սելջուկներից ու օսմաններից: Ոգեւորված իրենց առաջին հաջողություններով՝ երիտթուրքերը շեղվեցին իրենց դավանած սկզբունքների տրամաբանությունից եւ, որպես բողոք պանիսլամական ձգտումների դեմ, քարոզում էին բոլոր օսմանների եղբայրացում: Ճնշված ժողովուրդները շատ ավելի, քան իրենք՝ թուրքերը, ուզում էին հավատալ, որ իրենց էլ են թույլ տվել մասնակցելու նոր Արեւելքի շինարարությանը: Հերբերտ Սպենսերի եւ Ալեքսանդր Համիլտոնի ուսմունքներով տոգորված՝ նրանք շտապ ընդարձակ բարեփոխումների ծրագիր կազմեցին եւ թուրքերին ողջունեցին որպես իրենց համախոհների: Սարսափած հենց իրենց կողմից սանձազերծված ուժերից՝ սրանք հանգցրին կրակը նույնպիսի արագությամբ, ինչպես բորբոքել էին: Նրանց նշանաբանը դարձավ Թուրքիան՝ թուրքերին (Yeni Turan) կարգախոսը[41]:

Այս նացիոնալիստական եւ կենտրոնամետ միտումը վերաբերում էր ոչ միայն Թուրքիայի քրիստոնեական փոքրամասնություններին, այլեւ մահմեդական ազգություններին, որպիսիք էին արաբները, սիրիացիները, քրդերը եւ մահմեդական շիաները: Բոլոր ոչ թուրքական ժողովրդական տարրերը ճնշվում էին: Այդ պատճառով Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցությունը երիտթուրքերին մեղադրեց սահմանադրական ծրագրին դավաճանելու մեջ եւ խզեց իր կապերը նրանց հետ: Երբ դաշնակցականները դադարեցրին համագործակցությունը երիտթուրքական «Միություն եւ առաջադիմություն» կուսակցության հետ, Վանի երեսփոխան ու դաշնակցականների երկարամյա քարտուղար Վռամյանը ասաց. *«Այսօր մենք զգացումով գործելով՝ հայ ազգին չարիք հասցրինք»*[42]:

Այն, ինչ պատահեց դրանից հետո, վատթարացրեց իրադրությունը Թուրքիայում: Երիտթուրքական կառավարությունը ճգնաժամի մեջ ընկավ, որովհետեւ չհաջողվեց ջախջախել ալբանական ապստամբությունը: Իտալիան առավելության էր հասել Թուրքիայի դեմ պատերազմում, եւ հաշտության բանակցություններից ոչ մի լավ բան չէր սպասվում: Մակեդոնիայում կռվում էին հրոսակախմբեր, իսկ հույներն արդեն սպասում էին Թուրքիայի բաժանմանը: Սկզբում ենթադրվում էր, թե երկիրը երիտթուրքերի իշխանության պայմաններում նորից կհզորանա, բայց շուտով լուր տարածվեց, որ երիտթուրքերը միայն հարստանալ են ուզում[43]: Թուրքերի ընդհանուր թուլությունն ու անտնտեսվարությունը Մակեդոնիայում հասցրին այն բանին, որ բալկանյան պետությունները 1912-ի վերջին պատերազմ հայտարարեցին Թուրքիային: Թուրքերը կրկին ծանր պարտություն կրեցին եւ կորցրին իրենց ողջ եվրոպական մասը: Գոլցը եվրոպական Թուրքիայի կորուստը բարիք էր համարում Թուրքիայի համար: Նա փորձեց բացատրել թուրքերին, որ նրանք իրենց ամբողջ ուշադրությունն ու *«ուժը պետք է նվիրեին անատոլիական գավառների նյութական*

եւ ինտելեկտուալ զարգացմանը»[44]:

Այժմ թուրքական կառավարությունն իր ողջ ուշադրությունը կենտրոնացրեց կայսրության կենտրոնական մասի, գերազանցապես՝ Հայաստանի վրա: Ազատության եւ հավասարության ձգտող հայերին հարկավոր էր ահաբեկել, եւ դրա համար խրախուսվում էին քրդերի հարձակումները նրանց վրա: Դրան ավելացավ այն, որ Մակեդոնիայից ու Թրակիայից արտագաղթած հազարավոր թուրքերի ուղարկեցին Անատոլիա: Քրիստոնյաների հանդեպ ատելությամբ լցված մահմեդականների այդ մեծ զանգվածին, որը ստիպված էր եղել լքել իր ողջ ունեցվածքը, կառավարությունն ու իշխանությունները հրահրում էին հայերի դեմ: Այս քաղաքականության հետեւանքները եղան թուրքերի եւ քրդերի բախումները հայերի հետ: Թեեւ հայերի իրավիճակը սրվում էր եւ նրանց անվստահությունը երիտթուրքերի հանդեպ մեծանում էր իրադարձությունից իրադարձություն, հայերը դեռեւս լոյալ էին մնացել: Տրապիզոնի ավստրո-հունգարական հյուպատոսը գրում է 1912-ի սեպտեմբերի 9-ի զեկուցագրում.

«Հայերը մինչեւ հիմա պաշտպանում էին երիտթուրքերին, որոնց պարտական են Աբդուլ Համիդի սարսափելի բռնապետությունից եւ այդ բռնակալի անդադար հետապնդումներից ու չարչարանքներից ազատվելու համար, ակնկալելով, որ պիտի վարձատրվեն իրենց չարչարանքների դիմաց: Սակայն կոտորածներն Ադանայում եւ քրդերի ավելի հաճախ դարձած հարձակումները նրանց ցույց են տալիս, որ սահմանադրական կառավարության պայմաններում էլ պիտի զգաստ լինեն: Նրանցից իրոք որ չի կարելի պահանջել, որ իրենց սրտերում թուրքերի նկատմամբ սեր տածեն»[45]:

1912 թ. սեպտեմբերի 10-ին Զմյուռնիայում կայացած ժողովում հայերը հետեւյալ բանաձեւն ընդունեցին.

«1. Զմյուռնիայի բնակչության հայկական հատվածի անունից դիմել Կ. Պոլսի կառավարությանը, դժգոհություն արտահայտելով իշխանությունների գործելակերպից եւ կարգ ու կանոնը վերականգնելու նպատակով անհապաղ միջոցներ ձեռք առնելու պահանջով:

2. Խոր վրդովմունք արտահայտել այն պատճառով, որ չնայած սկսած 1909 թ. տարբեր նախարարությունների կողմից արված պարտավորեցնող հայտարարությունների, երբեք միջոցներ չեն տրամադրվել տարիներ շարունակ գոյություն ունեցող դժվարին պայմանները վերացնելու համար:

Ժողովը նաեւ որոշում է տեղեկացնել կայսրության սահմաններում ապրող մյուս ազգություններին այն մասին, որ անարդարացի վերաբերմունքը հայերի նման մի ժողովրդի նկատմամբ, որը կարգ ու կանոնի եւ խաղաղ առաջընթացի կրողն է հանդիսանում, կարող է վտանգի տակ դնել հասարակական անդորրը եւ հասցնել բողոքի այնպիսի արտահայտությունների, որի հետեւանքով կարող է տուժել թերեւս ամբողջ երկիրը:

Որոշումները հեռագրով հաղորդել են Մեծ վեզիրին, այստեղ նոր նշանակված գեներալ-նահանգապետ Ռեշիդ բեյին»[46]:

Այն, որ իրադրությունը Թուրքահայաստանում ծգնաժամային էր, երեւում է 1912 թ. սեպտեմբերի 17-ին Տրապիզոնից տրված հետեւյալ զեկուցագրից.

«Մի շատ լավատեղյակ վստահելի անձնավորությունից Վանի վիլայեթում իրադրության մասին հետեւյալն իմացա. առաջվա պես դաշնակցությունը՝ երիտթուրքերի դաշնակից եղած կոմիտեն, աշխույժ գործունեություն է ծավալել հայերին կազմակերպելու եւ գաղտնի գործող պարտիզանական խմբերի միջոցով նրանց պաշտպանելու ուղղությամբ: Ներկայումս հայերը այդ քաղաքում բավարար չափով զինված են ժամանակակից հրազենով եւ ռումբերով ու լուրջ վտանգի դեպքում կունենան փորձառու ղեկավարներ: Պարտիզանական խմբերը պարբերաբար այցելում են հայկական գյուղերը, ռազմատուգանք են վերցնում իրենց նպատակների համար, պատժիչ միջոցներ են ձեռք առնում անհավատարիմ հայրենակիցների նկատմամբ եւ հայերին պաշտպանում են քրդերից: Ասում են, թե այնտեղ վերջնական նպատակը իշխանության հասնելն է, այսինքն տիրող դաս դառնալը: Այնտեղ նրանք միայն քրդերի հետ գործ ունեն, որովհետեւ թուրքերը տեղի բնակչության միայն մի փոքր մասն են կազմում»[47]:

Պարտիզանական խմբերի այս կռիվները անհրաժեշտ էին դարձել, որովհետեւ քրդերը, սկսած 1896 թ., զավթում էին հայ գյուղացիների հողերը, մասամբ՝ անգամ նրանց համաձայնությամբ: Դրա համար առիթ էին հանդիսացել 1896 թ. հայերի հետապնդումները, որոնց ժամանակ յուրաքանչյուր մահմեդականի թույլ էր տրված հայերի հետ այնպես վարվել, ինչպես կուզենային: Կողոպուտից եւ հարձակումներից խուսափելու համար հայերը քրդական բեյերին եւ սպաներին հոժարակամ իրենց տերեր ճանաչեցին եւ դրանով պաշտպաններ ձեռք բերեցին: Այդ պատճառով էր, որ 1896 թ. հետո քրդերը ժամանակի ընթացքում կարողացան տիրանալ հայերի հողերի մեծ մասին: 20-րդ դարի սկզբից հայկական հեղափոխական կոմիտեները համագործակցելով, կազմելով հայդուկային խմբեր՝ իրենց ամենաառաջնահերթ խնդիրն էին դիտում պայքարը քրդերի դեմ: Մինչեւ 1907-1908 թթ. հեղափոխական խմբերին հաջողվել էր քրդերից ետ խլել Վանի շրջակայքում հայերի գրեթե բոլոր հողերը[48]:

Հղումներ

1. Wien, HHStA PA XI, 272 Konstantinopel, 3. Oktober 1915, Nr. 365.
2. Wien, HHStA BA Konstantinopel, 414, Trapezunt, 20. Oktober 1904, Nr. 39.
3. Wien, HHStA PA XXXVIII 373 Adrianopel, 11. Oktober 1905, Nr. 86/9.
4. Joachim Barckhausen, Männer und Mächte am Bosporus, Berlin, 1938, S. 92.
5. Նույն տեղում, S. 282.
6. Edmund Tylor, ,,Der Untergang,,, S. 3139.
7. S. Sabah-Gulian, Pataskhanatuner (Die Verantwortlichen), Beirut, 1974, S. 213.
8. Նույն տեղում,, S. 214.
9. Johannes Lepsius, ,,Der Todesgang des armenischen Volkes,,, Potsdam, 1930, S. 174.
10. Wien, HHStA PA XXXVIII 409 Saloniki, 18. Juli 1908, Nr. 11.

11. Wien, HHStA PA XXXVIII 409 Saloniki, 24. Juli 1908, Nr. 15.
12. Նույն տեղում:
13. Նույն տեղում:
14. Nansen, ,,Betrogenes Volk,,, S. 303.
15. Wien, HHStA P. L. 192, 6. Oktober 1908, ad 5.
16. Lutz, ,,Lord Gray,,, S. 287.
17. Von der Goltz, "Denkwürdigketten", Berlin 1929, S. 312.
18. Նույն տեղում, S. 314.
19. Նույն տեղում, S. 312.
20. Wien, HHStA PA XXXVIII 410 Saloniki, 10. November 1908, Nr. 278.
21. Նույն տեղում:
22. Wien, HHStA PA XXXVIII 411 Saloniki, 13. November 1908, Nr. 279.
23. Wien, HHStA PA XXXVIII 410 Saloniki, 22. November 1908, Nr. 293.
24. Lutz, ,,Lord Gray,,, S. 287.
25. Arbeiter Zeitung, Wien, 4. April 1909.
26. Նույն տեղում, Wien, 9. April 1908.
27. Նույն տեղում, Wien, 11. April 1909.
28. Նույն տեղում:
29. Lepsius, ,,Der Todesgang,,, S. 192.
30. Նույն տեղում:
31. Arbeiter Zeitung, Wien, 17. April 1909.
32. Նույն տեղում, Wien, 22. April 1909.
33. Նույն տեղում:
34. Նույն տեղում, Wien, 23. April 1909.
35. Նույն տեղում, Wien, 7. Mai 1909.
36. Նույն տեղում, Wien, 9. Mai 1909.
37. Wien, HHStA PA XXXVIII 411 Saloniki, 14. Juli 1909, Nr. 120.
38. Lutz, ,,Lord Gray,,, S. 288.
39. Նույն տեղում, S. 43.
40. El-Ghaussien, ,,Die Türkenherrschaft,,, S. 17.
41. T. E. Lawrence, ,,Die sieben Säulen der Weisheit,,, München, 1936, S. 40.
42. Gabriel Lazian, ,,Heghapokhakan Demker,,, S. 104.
43. Wien, HHStA PA XXXVIII 357 Trapezunt, 9. September 1912, Z. 31/P.
44. Von der Goltz, ,,Denkwürdigketten,,, S. 131.
45. Wien, HHStA PA XXXVIII 357 Trapezunt, 9. September 1912, Z. 31/P.
46. Wien, HHStA PA XXXVIII 356 Trapezunt, 10. September 1912, Nr. 66.
47. Wien, HHStA PA XXXVIII 357 Trapezunt, 17. September 1912, Z. 34/P.
48. Daschnakzutiun Verlag, ,,Aram,,, Beirut, 1969, S. 325f.

3. ՀԱՅԿԱԿԱՆ ՌԵՖՈՐՄՆԵՐԸ

Թուրքահայաստանից անընդհատ հասնող անհանգստացնող լուրերը ստիպեցին Ռուսաստանին 1912 թ. նոյեմբերի 26-ին նոտա հղելու Բ. Դռանը՝ հայերի համար ռեֆորմների պահանջով.

«1894-1896 թթ. հիշարժան դեպքերից հետո էլ, երբ Փոքր Ասիան ու Կ. Պոլիսը հեղեղված էին հայերի բարբարոսական ջարդերի արյունով, իրավիճակը բոլորովին չի լավացել: Ռուսաստանի, Ֆրանսիայի եւ Անգլիայի ճնշման տակ 1895-ի հոկտեմբերի 20-ին Աբդուլ Համիդի կողմից արծակած բարեփոխությունների մասին դեկրետը չի իրագործվել: Ագրարային հարցը օրեցօր ավելի է սրվում, հողերի մեծ մասը զավթված է կամ զավթվում է քրդերի կողմից, եւ այս անօրինական գործողություններին դիմադրելու փոխարեն իշխանությունները հովանավորում ու հեշտացնում են այդ հափշտակումները: Մեր բոլոր հյուպատոսարանների զեկուցագրերը համընկնում են քրդերի կողմից կատարվող հարձակումների, անդադար շորթումների, հայերի սպանությունների եւ հայ կանանց բռնի հավատափոխման հարցում: Չարագործներին գրեթե ոչ մի անգամ դատական կարգով չեն հետապնդել: Բ. Դռանը եւ ներքին գործերի նախարարին հանձնած Կ. Պոլսի հայ պատրիարքի հուշագիրը տալիս է այն տանջանքների ու հալածանքների ճշմարիտ պատկերը, որոնց ենթարկվում են սուլթանի հայ հպատակները... Դեսպանն այն կարծիքին է, որ Հայկական հարցը չափազանց կարեւոր է Ռուսաստանի համար, եւ ցանկանում է, որ կառավարությունը անհրաժեշտ քայլեր ձեռնարկի այն կարգավորելու նպատակով...»[1]:

Սա առիթ հանդիսացավ մեծ տերությունների համար Լոնդոնում դեսպանների հավաքին քննարկելու հայկական ռեֆորմների խնդիրը Թուրքիայում: Այդ կոնգրեսին մասնակցելու նպատակով Լոնդոն մեկնեցին բազմաթիվ հայ եկեղեցական բարձրաստիճան պաշտոնյաներ եւ ականավոր գործիչներ: Աշխարհի բոլոր ծայրերից հայերը հեռագիր հղեցին Եվրոպայի պետությունների ղեկավարներին՝ Հայաստանում ռեֆորմներ անցկացնելու հարցում Բ. Դռան առաջ միջամտելու խնդրանքով[2]:

Արդեն 1912 թ. սկզբին Թուրքիայում հայերի ճնշման պատճառով Ամենայն հայոց կաթողիկոս Գեւորգ 5-րդը էջմիածնում հանձնարարել էր մի ճանաչված հայի՝ Պողոս Նուբար փաշային, հայկական ռեֆորմների հարցը հարուցել եվրոպացիների առաջ: Այդ զրույցներում Նուբար փաշան բազմիցս հայտարարել էր, որ *«թուրքահայերը բոլորովին էլ չեն ցանկանում առաջադրել անկախության կամ պետական իրավունքի փոփոխության հարցը: Նրանց միակ ձգտումը Բեռլինի պայմանագրով նախատեսված, Ռուսաստանի, Անգլիայի ու Ֆրանսիայի կողմից մշակված ռեֆորմներն են, որոնք մինչեւ հիմա լոկ բառեր են մնացել»*[3]:

Այն, որ հայերին սպառնացող վտանգը հորինված չէր, այլ փաստ, պարզ է դառնում Ավստրո-Հունգարիայի ներկայացուցչի 1912 թ. դեկտեմբերի 7-ի հաղորդումից.

«Ինչպես իմացա Էրզրումում բնակվող մի ավստրիական հպատակից, մոտ 20 օր առաջ մահմեդականների տրամադրվածությունը քրիստոնյաների նկատմամբ շատ լարված է եղել: Սակայն կառավարությունը խափանել է դեպքերի զարգացումը: Բայց ասում են, թե անգամ 10 օր առաջ թուրքերը ցանկություն են ունեցել հրդեհելու քրիստոնյաների բնակարանները, այդ նպատակով արդեն մեծ քանակով նավթ է բաժանված եղել: Սակայն վալին խաղաղություն էր ուզում: Ասում են, որ բնակչությունը դեռեւս սաստիկ վախենում է կոտորածից, թեեւ այս պահին ոչ մի կասկածելի բան չի երեւում ու չի լսվում: Ասում են, թե բոլորը զինված են»[4]:

Այս գործողությունները ստիպեցին երիտթուրքերին այնուամենայնիվ զբաղվելու հայկական ռեֆորմներով:

1912 թ. դեկտեմբերի 31-ին Ավստրո-Հունգարիայի դեսպան Պալավիչինին հաղորդում է.

«Մի քանի օր է, ինչ այստեղ կրկին շատ են խոսում հայկական գավառներում անցկացվելիք ռեֆորմների մասին: Անհետաքրքրական չէ այն, որ այս անգամ կառավարությունն ինքն է այս գործը նախաձեռնել՝ թերթերում հրատարակելով Անատոլիայի արեւելյան գավառներում ձեռնարկվելիք ռեֆորմների վերաբերյալ կոմյունիկե: Բացի դրանից, Մեծ վեզիրը իր մոտ է հրավիրել մի քանի հայ ականավոր գործիչների՝ նախկին պատրիարք Օրմանյանի գլխավորությամբ, նրանց հետ այդ հարցը քննարկելու: Կարճ ժամանակ անց հայ նախկին երեսփոխան Դալվարյանը մամուլում ռեֆորմների մի նախագիծ է հրապարակել, որը որոշ չափով ձեւափոխում ու ընդարձակում է կառավարության առաջարկած միջոցառումները: Արտգործնախարարների հետ վերջերս ունեցած զրույցի ժամանակ նախարարն ինձ ասաց, որ Բ. Դուռը հայկական ռեֆորմների հարցը մանրակրկիտ ուսումնասիրության է հանձնարարել, եւ շուտով օրենքի համապատասխան նախագիծ կներկայացվի պառլամենտին: Կասկածից վեր է, որ թուրքական կառավարությունը միայն պայմանների ճնշման տակ է զբաղվում հայկական ռեֆորմներով, քանի որ վախենում է, որ տերությունները վաղ թե ուշ կմիջամտեն այս հարցում, եւ այդ պատճառով ուզում է կանխել դրսից հնարավոր նախաձեռնությունները»[5]:

Սակայն, երբ Ռուսաստանն ամենաեռանդուն մասնակցություն ցուցաբերեց հայկական ռեֆորմների ծրագրին, անմիջապես զգացվեց ռուսների հանդեպ եվրոպական տերությունների անվստահությունը: Ռուսների գործողությունների հետեւում նրանք տեսնում էին Թուրքահայաստանը բռնակցելու գաղտնի փորձեր: 1913 թ. հունվարի 11-ին Պետերբուրգից ուղարկված հեռագրում Ավստրո-Հունգարիայի դեսպան

Թուռնը հաղորդում է Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սազոնովի հետ ունեցած զրույցի մասին.

«Այսօրվա զրույցի ընթացքում Պ. Սազոնովը նշեց, որ բավական աննպաստ լուրեր է ստացել Հայաստանից, որտեղ ըստ տեղի ռուսական հյուպատոսների հաղորդումների, իշխանությունները զենք են բաժանում բնակչությանը: Ռուսաստանը, որը նրա ասելով, իրավունք չունի դավաճանելու Արեւելքում քրիստոնյաների պաշտպան լինելու իր առաքելությանը, ոչ մի դեպքում չի հանդուրժի հայկական կոտորածների կրկնությունը: Այդ պատճառով նախարարը թուրքական դեսպանի ուշադրությունը հրավիրել է այն լուրջ հետեւանքների վրա, որոնք անխուսափելիորեն կստեղծվեն հայերի դեմ ոտնձգություններից: Այն ակնհայտ հետաքրքրությունը, որը կա այստեղ վերջին ժամանակներս Հայաստանի նկատմամբ, ըստ իս, հատկանշական է: Մի կողմից, միջամտության նման թուրքիայի վրա ճնշում գործադրելու ակնհայտ դիտավորություն կա, որպեսզի նա ավելի զիջող դառնա հաշտության պայմանագրի կնքման ժամանակ, մյուս կողմից դրանից կարելի է հետեւություն անել, որ Ռուսաստանը նաեւ այլ, այսօր գուցե դեռ հստակ չսահմանված պլաններ ունի»[6]:

Ռուսաստանին սկսեց չվստահել եւ իտալական կառավարությունը, երբ նրան հայտնի դարձավ, որ նա զբաղվում է Հայկական հարցով եւ անգամ գործակալներ է ուղարկել Հայաստան՝ տեղում ճիշտ կողմնորոշվելու համար: Ենթադրվում էր, որ ռուսներն այնտեղ խռովություններ էին ուզում հրահրել՝ ցարական կայսրությանը միջամտելու պատրվակ ստեղծելու համար: Մարքիզ դի Սան Ջուլիանոն այն կարծիքին էր, որ եռյակ միությունը այս հարցում պետք է միասնական լինի, ծգտի խափանելու այն քաղաքականությունը, որն սպառնում է ստատուս քվոյին Ասիայում, եւ համենայնդեպս, պետք է փորձի համաձայնության գալ այդ նպատակին հասնելու տակտիկայի ընտրության հարցում[7]:

Սակայն Ավստրո-Հունգարիայի հյուպատոսը Տրապիզոնում թուրք եւ հայ ազգաբնակչության միջեւ հարաբերությունները տանելի էր համարում, թեեւ իշխանությունները պաշտոնական այց էին կատարել հայ եպիսկոպոսին բալկանյան պատերազմում «հայերի քաջ վարքի» համար շնորհակալություն հայտնելու նպատակով: Տեղական թերթերը եւս գովասանքով էին գրում հայերի մասին[8]: Այնինչ հայերն ուրիշ ոչինչ չէին ուզում, բացի իրենց խոստացված բարեփոխումներից: Նրանք ապահովություն եւ խաղաղություն էին ուզում: Հունվարի 30-ին Ավստրո-Հունգարիայի հյուպատոսը գրում է Էրզրումից.

«Անատոլիայում ռեֆորմների հարցը, անշուշտ, բույն է դրել բոլորի գլուխներում: Ես հարցրեցի մի քանի շատ թե քիչ հեղափոխական ոգի ունեցող անձանց, թե մարդիկ ի՞նչ են ուզում: Բոլորի ասածն այն է, որ իրենց կյանքի եւ ունեցվածքի ապահովության երաշխիք են պահանջում, որը մինչեւ այսօր չի եղել: Այս կապակցությամբ նախ եւ առաջ պահանջում են ամբողջ հայկական մարզը եվրոպական հսկողության

տակ դնել: Բայց այդ հսկողությունը պետք է իրականացնեն եվրոպական բոլոր պետությունները համատեղ եւ չթողնեն միայն Ռուսաստանին: Միմիայն այն դեպքում, եթե միավորված եվրոպական պետությունները հրաժարվեն այդ մարզը վերահսկելուց, հայերը լրիվ կախված կլինեն իրենց հարեւան ռուսական պետությունից: Բայց ամենուրեք վճռականորեն բարեփոխություն են պահանջում»[9]:

Հայերի վիճակը նկատելիորեն ծանրանում էր: Քրդերն ու իշխանության մարմինները բռնության էին դիմում: Տեղի ունեցան ոտնձգություններ: Իսկ թուրքական կառավարությունը պնդում էր, թե խռովությունները Ռուսաստանի կողմից էին հրահրված[10]: Ավստրո-Հունգարիայի դեսպանը Լոնդոնում նույնպես Հայկական հարցի հետեւում որոշակի շրջանների դավադրություն էր տեսնում: Նա հաղորդում է 1913 թ. մայիսի 9-ին.

«Հայկական կոմիտեն 1913 թ. ապրիլի 25-ին Լոնդոնում կոնֆերանս է անցկացրել, որին մասնակցել են British Armenian Commitee-ի՝ Մանչեստրի հայկական կոմիտեի, ֆրանսիական, գերմանական ու շվեյցարական կոմիտեների պատվիրակներն ու հայկական ազգային պատվիրակությունների ներկայացուցիչները: Այս կոնֆերանսում նշվում է, որ ներկայիս իրադրությունը Հայաստանում անհրաժեշտ է դարձնում Հայկական հարցի քննարկման նպատակով եվրոպական պետությունների միջամտությունը, եւ որ մի եվրոպական գեներալ-նահանգապետ Հայաստանում պետք է միջազգային վերահսկողություն իրականացնի: British Armenian Commitee-ի ցուցակներից երեւում է, որ այստեղ նույն անուններն են, ինչ եւ Լոնդոնի բալկանյան կոմիտեում: Պետք է ենթադրել, որ այդ անձանց գործունեությունը, որին վերջ է դրվել բալկանյան երկրներում վերջին իրադարձությունների պատճառով, այժմ շարունակություն է գտել Հայկական հարցի ոլորտում»[11]:

1913-ի մայիսի 12-ին Կ. Պոլսի հայոց պատրիարք Արխարունին հուշագիր ներկայացրեց Մեծ վեզիր Շեֆքեթ փաշային, որում նկարագրված էր հայերի ծանր վիճակը: Անմիջապես դրանից հետո Պալավիչինին, Ավստրո-Հունգարիայի դեսպանը Կ. Պոլսում, այցելեց Մեծ վեզիրին.

«Մահմուդ Շեֆքեթ փաշան ասաց ինձ, որ թուրքական կառավարությունը գիտակցում է, որ իրադրությունը Հայաստանում լավ չէ եւ որ մի բան պետք է արվի: Առայժմ նա մտադիր է վեց հազար ժանդարմ ուղարկել համապատասխան վիլայեթները, որպեսզի իշխանությունները միջոց ունենան պաշտպանելու բնակիչների կյանքն ու ունեցվածքը: Հենց որ խաղաղությունը վերականգնվի, կառավարությունը մտադիր է ձեռնարկելու արմատական բարեփոխություններ Անատոլիայում»[12]:

Իսկ մայիսի 15-ին Պալավիչինին զեկուցում է.

«Այս գրության մեջ հայ լուսավորչական պատրիարքը տալիս է հայերով բնակեցված գավառներում վտանգավոր իրադրության նկարագիրը եւ Բ. Դռան հատուկ ուշադրությունն է հրավիրում մահմեդականների ու իշխանությունների գրգռված տրա-

մաղրությանը հայ բնակչության նկատմամբ, որին մահմեդականները պատասխանատու են դարձնում ներկա պատերազմում թուրքական զորքի անհաջողությունների համար: Այդ պատճառով որպես օրհասական տրամադրությունների հետեւանք, պետք է վախենալ Հայաստանում քրիստոնյաների ջարդերից: Հուշագիրն ավարտվում է սպասելի դեպքերը կանխելու նպատակով ժամանակին ազդու միջոցներ ձեռնարկելու՝ Մեծ վեզիրին ուղղված թախանձագին կոչով»[13]:

Երբ 1913 թ. մայիսին քրդերը Վանի վիլայեթում ըմբոստացան կառավարության դեմ, ենթադրվում էր, որ հայերը կմիանան նրանց: Երբ նման բան տեղի չունեցավ, քրդերը հարձակվեցին նաեւ հայերի վրա: Քրդերին ճնշելու համար թուրքական կառավարությունը երեք հազար մարդ ուղարկեց[14]: Կառավարական զորամասերը չկարողացան նրանց սանձահարել: Ապստամբած քրդերին հաղթեցին երկու հայկական կազմակերպություններ՝ դաշնակցականներն ու հնչակյանները: Վանը մաքրվեց քրդերից, սակայն սրանք հետագայում էլ շարունակում էին իշխել Բիթլիսի ու Դիարբեքիրի շրջաններում[15]:

Անգլիայի պառլամենտի համայնքների պալատում հայերի համար ռեֆորմներ պահանջեց նաեւ սըր Ի. Գրեյը.

«Ասիական Թուրքիայում բարեփոխումների հարցը վերաբերում է բոլոր եվրոպական պետություններին, որոնք այնտեղ իրենց հետաքրքրություններն ունեն: Բոլոր տերությունները, մյուսներից ոչ պակաս չափով նաեւ թուրքերը, գիտեն, որ խռովություններն ու ջարդերը ասիական Թուրքիայի գավառներում անխուսափելիորեն նոր հարցեր կբարձրացնեն, որոնք պիտի մտահոգեն ոչ միայն թուրքական կայսրությանը, այլեւ բոլոր շահագրգիռ տերություններին»[16]:

Հունիսին Ռուսաստանն առաջարկեց դեսպաններին կոնֆերանս անցկացնել Կ. Պոլսում: Ռուսաստանի ծրագրերը կանխելու նպատակով Գերմանիան, որպես Բեռլինի պայմանագիրը ստորագրած պետություն, պահանջեց հայկական բարեփոխումների հարցին մասնակցելու իրավունք: *«Հազիվ պրծանք անիծյալ մակեդոնյան բարեփոխություններից, հիմա էլ՝ հայերը»*[17], գրեց Ֆոն Յագովի՝ 1913 թ. հուլիսի 9-ին իրեն ուղղված զեկուցագրի վրա Վիլհելմ կայսրը: Ռեֆորմներին մասնակցելու իրավունք պահանջեց նաեւ Ավստրո-Հունգարիան: Ավստրո-հունգարական արտաքին գործերի նախարար Բերխթոլդ Այոդյանիին Բեռլին ուղարկած հեռագրում գրում է.

«Գերմանական կառավարությունը մի կողմից ղեկավարվում է Գերմանիայի կարեւոր տնտեսական շահերով Փոքր Ասիայում, մյուս կողմից Ռուսաստանի հավանական հեռահար ծրագրերը կանխելու մտադրությամբ: Խնդրում եմ Ձերդ Գերազանցությանը հայտնել Ֆոն Յագովին, որ Ավստրո-Հունգարիան եւս մեծապես շահագրգռված է Ասիայում օսմանյան տիրապետությունը պահպանելու մեջ: Այնպես որ ես սիրով պատրաստ եմ կոմս Աենսդորֆի միջոցով պաշտպանելու ծրագրված նախաձեռնությունը»[18]:

Եվրոպական որոշ տերություններ ամեն գնով ձգտում էին փրկելու «Բոսֆորի հիվանդ» մարդուն: Անգլիական կառավարությունն իր հերթին հաղորդում էր.

«Ասիական գավառների բաժանումը ըստ շահերի ոլորտների մեզ օգուտ բերել չի կարող, հակառակը, այն լրջորեն կդիպչի քաղաքական հավասարակշռությանը Միջերկրական ծովում, ինչպես եւ դիրքերին Եգիպտոսում, Պարսից ծոցում, էլ չասենք Հնդկաստանի մասին, գուցե եւ եվրոպական պատերազմի հասցնի»[19]:

Սա արդեն նշանակում է երկու պետությունների՝ Անգլիայի եւ Գերմանիայի համագործակցությունը Փոքր Ասիայի հարցում: *«Գերմանիան եւ Անգլիան, ցանկանան, թե ոչ, Թուրքիան պահպանելու անհրաժեշտությունը միավորում է նրանց»*[20], ասաց Կ. Պոլսում Անգլիայի դեսպանը Վանգենհայմին՝ Գերմանիայի դեսպանին: Վախը, թե Ռուսաստանն ինքնուրույն, գուցե եւ Ֆրանսիայի ու Անգլիայի հետ միասին, կտնօրինի հայկական բարեփոխումները, այս հարցին միջազգային բնույթ տալու խնդրում Գերմանիայի ու Ավստրո-Հունգարիայի հետ համագործակցելու ցանկություն էր առաջացրել[21]: Ավստրո-Հունգարիայի արտաքին գործերի նախարարությունը լիազորեց Պալավիչինիին մասնակցելու Հայաստանում ծեռնարկելիք ռեֆորմների մասին խորհրդակցությանը այն պայմանով, որ ռեֆորմներն անփոփոխ թողնեն Թուրքիայի ամբողջականությունը եւ համատեղելի լինեն սուլթանի հեղինակության հետ[22]:

Բոլոր մասնակից եվրոպական պետությունների ցանկությունը մեկն էր՝ Ռուսաստանին հեռու պահել Թուրքիայի ասիական մասից: Հունիսի 10-ին Պալավիչինին գրում է.

«Այն քայլը, որը ռուսական կառավարությունը վերջերս ծեռնարկել է մյուս կաբինետների նկատմամբ եւ որի նպատակը հայերի համար ռեֆորմների հարցում համաձայնության գալն է, իմ համեստ կարծիքով Ռուսաստանի կողմից արդեն վաղուց ծրագրված մի մեծ ակցիայի նախաբանն է: Նա, ըստ երեւույթին, նույն եղանակով է գործելու, որն իրեն փայլուն կերպով արդեն արդարացրեց եվրոպական Թուրքիայում: Ռեֆորմների մասին սուտը այս գործում նույն դերը պիտի խաղա, ինչ որ ժամանակին Մակեդոնիայում: Այդ ռեֆորմների նախագծերը կմշակվեն, բայց միաժամանակ կարվի ամեն ինչ՝ իսկական ռեֆորմների իրագործումը ծախողելու համար: Շուտով այստեղ կլսենք ռումբերով մահափորձերի մասին, հետագայում՝ ջարդերի մասին Հայաստանում, եւ Ռուսաստանը ստիպված կլինի դիմելու զինվորական միջամտության: Դա կարող է հասցնել թուրքական բանակի լիակատար ջախջախմանը, եւ այդ դեպքում ոչինչ չի խանգարի Ռուսաստանին իրականացնելու իր պլանները եւ իր սահմանները մոտեցնելու Կ. Պոլսին, մինչդեռ մյուս տերությունները, բացառությամբ Անգլիայի, ասիական Թուրքիայի կազմալուծման հետեւանքով, լավագույն դեպքում, գաղութներ ծեռք կբերեն, որոնք այսպես ասած՝ օդում կախված կլինեն եւ հենց Եվրոպայում պաշտպանվելու կարիք կունենան»[23]:

Թեեւ հայերի ծանր վիճակը հայտնի էր բոլոր տերություններին, նրանք ամենից

առաջ մտածում էին սեփական օգուտի մասին: Նրանց վտանգ կսպառնան, եթե Թուրքահայաստանին ինքնավարություն շնորհելու հետեւանքով այդ մարզն ընկներ ռուսական ազդեցության տակ կամ գուցե անգամ բռնակցվեր Ռուսաստանին:

Երբ Ավստրո-Հունգարիայի դեսպան կոմս Թուռնը Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սազոնովի հետ խոսում էր Թուրքիայի բաժանման հետ կապված վտանգների մասին, վերջինս հավաստիացրեց կոմսին, որ Ռուսաստանը եւս ուզում է պահպանել Թուրքիայի ամբողջականությունը, եւ որ ռուսական կառավարությունը անկեղծորեն ու առանց ետին մտքի ձգտում է պահպանել Թուրքիան: Այնուամենայնիվ, նա այն համոզմունքին էր, որ արդյունավետ ռեֆորմներ Հայաստանում, որոնք անհրաժեշտ են հենց Թուրքիայի շահերից ելնելով, հնարավոր չի լինի իրականացնել առանց որեւէ եվրոպական վերահսկողության[24]: Սազոնովն ավելացրեց, որ ռուսական մարզում մեկուկես միլիոն հայեր են ապրում եւ որ այդ պատճառով Ռուսաստանի համար շատ կարեւոր է, որպեսզի իր սահմաններից այն կողմ խաղաղություն տիրի[25]: Ռեֆորմների մասին խորհրդակցությունն արագացնելու համար Կ. Պոլսում Ռուսաստանի դեսպան Գիրսը հանձնարարեց իր առաջին թարգմանիչ Մանդելշտամին նախագիծ մշակել հայկական ռեֆորմների վերաբերյալ, ըստ որի հայկական վեց վիլայեթները՝ Էրզրումը, Դիարբեքիրը, Խարբերդը, Վանը, Բիթլիսն ու Սվազը, պետք է ինքնավար լինեն ու քրիստոնյա գեներալ-նահանգապետի վերահսկողության տակ գտնվեին[26]: Պալավիչինիի հետ զրույցի ժամանակ Մեծ վեզիր Շեֆքեթ փաշան նշեց, որ տեղյակ է հայերի համար մշակվող ռեֆորմների ծրագրին: Նա ինքն էր դրա սկիզբը դրել՝ այնտեղ ուղարկելով հինգ հազար ժանդարմ եւ ստեղծելով երեսուներկու դատարան: Մեծ վեզիրն ասաց, որ ռեֆորմների սեփական պլանների միջոցով ուզում էր կասեցնել ռուսների գործունեությունը: Նա բացահայտորեն ասաց, որ Ռուսաստանը բնավ էլ մտահոգված չէ հայերի ճակատագրով ու ռեֆորմներ անցկացնելով, այլ միայն միջամտության եւ քաղաքական նենգավորությունների առիթ է որոնում հյուսիսային Անատոլիայի վիլայեթներում: Մեծ վեզիրի կարծիքով, որը կիսում էր եւ Պալավիչինին, նպատակ է դրվել կրկնելու Մակեդոնիայում խաղացած խաղը[27]: Պալավիչինին նկատել էր, որ Ռուսաստանի դեսպանը վերջերս շատ հաճախ էր հանդիպում հայ պատրիարքի հետ[28]:

Ինչպես Պալավիչինին, այնպես էլ Անգլիայի դեսպանը, այն կարծիքին էին, որ հայ ժողովրդի վիճակը, համիդյան ժամանակների հետ համեմատած, այնքան էլ վատ չէ: Անգլիայի դեսպանը անգամ կարծում էր, թե դեպքերը Հայաստանում սաստիկ չափազանցված են, քանի որ Փարիզում կամ եվրոպական այլ մեծ քաղաքներում շատ ավելի կարճ ժամանակում նույնքան սպանություններ են տեղի ունենում[29]: Գերմանացիներն ուզում էին, որ անգլիացիներն ավելի ակտիվ լինեն: Պալավիչինիի հետ զրույցի ժամանակ Գերմանիայի դեսպան Վանգենհայմն ասել էր, որ իր կառավարությունն այն կարծիքին է, որ լավ կլիներ, եթե Անգլիան ռեֆորմների հարցում առաջ ընկներ:

Քանի որ եթե անգլիական կառավարությունը լրջորեն ցանկանում է թուրքական կայսրության պահպանումն ու ամրապնդումը, ապա նա հաճույքով կաշխատի բարեփոխությունների վրա: Անգլիական իշխանությունների լուրջ եւ ջանադիր աշխատանքի շնորհիվ կհավասարակշռվի Ռուսաստանի ազդեցությունը, որը միայն շահադիտական նպատակներով է ուզում ռեֆորմներ անցկացնել եւ որի քայքայիչ միտումները Թուրքիայի նկատմամբ ոչ մեկի համար գաղտնիք չեն: Սակայն եթե Թուրքիայի հզորացումն Անգլիայի անկեղծ ցանկությունը չէ, եւ եթե Անգլիան պատրաստ չէ դրան նպաստելու խնդրում, ապա, անշուշտ, բոլոր ջանքերն ապարդյուն են, եւ Օսմանյան կայսրության բաժանումը միայն ժամանակի հարց է: Այդ դեպքում Գերմանիան եւս հոգ կտանի բաժանման ժամանակ հնարավորին չափ շատ ստանալու[30]:

Պալավիչինին այն կարծիքին էր, որ Ռուսաստանի առաջարկած հայկական վիլայեթների ինքնավարության դեպքում ժամանակի ընթացքում հայ բնակչությունը ռուսական ագիտացիայի միջոցով կարող է հրահրվել գեներալ-նահանգապետի դեմ, եւ ռուսները հնարավորություն կստանային բռնակցելու այդ վիլայեթները: Նրանք այնտեղ ուզում էին պարզապես նույն վիճակը ստեղծել, ինչ որ Մակեդոնիայում: Հունիսի 23-ին Պալավիչինին Վիեննա հղած նամակում գրում է.

«Այն, որ Ռուսաստանի մտադրությունը երբեք չի եղել ռեֆորմների միջոցով հայերին խաղաղացնելն ու Թուրքիայի հզորությունը մեծացնելը, երեւում է հայկական ռեֆորմների հարցի հետագա զարգացումից: Երբ լորդ Սոլսբերին, հայերի ջարդերի պատճառով Լոնդոնում տիրող բուռն վրդովմունքը հաշվի առնելով, պահանջեց անցած տարի որոշված ռեֆորմների պլանի իրականացումը եւ անգամ սպառնաց նավատորմի ցույց կազմակերպել, Ռուսաստանն էր, որ Ֆրանսիայի օժանդակությամբ խափանեց անգլիացիների բոլոր քայլերը եւ ձախողեց ռեֆորմների իրագործումը: Իմ կարծիքով, Ռուսաստանի քաղաքականությունը միշտ ուղղված է եղել կայսրության ընդարձակմանը Սեւ ծովի երկայնքով: Ռուսական քաղաքականության վերջին նպատակը միշտ Կ. Պոլիսն է եղել: Այդ պատճառով Ռուսաստանի կողմից հայկական ռեֆորմների հարցը հարուցելու մեջ ես տեսնում եմ միմիայն նրա էքսպանսիայի հին քաղաքականության վերսկսումը, եւ չեմ կարող հավատալ, որ Ռուսաստանն անկեղծորեն կհամագործակցի Ասիայում թուրքերի իշխանությունը հզորացնելու գործում»[31]:

Հետաքրքիր է, որ Պալավիչինին հայերին Թուրքիայում երկու կարգի էր բաժանել. կաթոլիկ հայերի, ի դեմս որոնց նա Թուրքիայի հավատարիմ հպատակների էր տեսնում, եւ լուսավորչական հայերի, որոնց որպես հավանական հեղափոխականների ու խռովարարների էր դիտում: Թալեաթ բեյի հետ զրույցի ժամանակ Պալավիչինին ասել է.

«Ըստ իս թուրքական կառավարությունը պետք է ջանա իր կողմը գրավել հայ միաբանության կղերականությանը, քանի որ սա, հայ կաթոլիկ բնակչության հետ միավորված լինելով, միշտ հավատարիմ է մնացել կառավարությանը, մինչդեռ, ինչ-

պես հայտնի է, լուսավորչական հայերը միշտ դեպի դուրս են ձգտել»[32]:

1913-ի հուլիսի 1-ին Ռուսաստանի դեսպանը ներկայացրեց Մանդելշտամի բարեփոխումների նախագիծը դեսպանների հավաքին: Այդ նախագծի աղբյուրներն են եղել.

1. 1895-ի (նոր տոմարով) մայիսին կազմված Անգլիայի, Ֆրանսիայի եւ Ռուսաստանի դեսպանների հուշագիրը:

2. Պետք է վարչության վերանորոգումների նախագիծն իրագործվի հայկական գավառներում: Նույն ժամանակ վերոհիշյալ դեսպանների կողմից մշակված:

3. 1895 թ. հոկտեմբերի 20-ի կայսերական հրամանագիրը:

4. Եվրոպական գավառների համար եվրոպական հանձնախմբի 1889 թ. վիլայեթների մասին օրենքի նախագիծը:

5. Լիբանանի կառավարման վերաբերյալ բանաձեւերն ու ռեգլամենտները:

Ըստ այդ նախագծի՝ հայկական 6 վիլայեթները պետք է մի արտոնյալ գավառ կազմեին քրիստոնյա նահանգապետի գլխավորությամբ, որը պետք է ընտրվեր հինգ տարով՝ մեծ տերությունների ու սուլթանի համաձայնությամբ:

Գեներալ-նահանգապետը պիտի իրավունք ունենար ընտրելու վարչական մարմիններն ու իր տրամադրության տակ ունենար ժանդարմերիա, ոստիկանություն եւ ստանձներ զինված ուժերի հրամանատարությունը:

Ահա ինչպես է մեկնաբանում նախագիծը Պալավիչինին.

«Այս նախագծի իրականացմանը առաջին քայլը կլինի ասիական Թուրքիայի բաժանումը»[33]:

Ռեֆորմներն արագացնելու նպատակով Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սազոնովը եվրոպական դեսպաններին հանձնեց հուշագիր, որում շեշտվում էր ռեֆորմներ անցկացնելու շտապ անհրաժեշտությունը[34]: Բայց միջնորդ պետությունները արեցին հակառակը: Բանակցությունների ընթացքը դանդաղեցնելու նպատակով դեսպանները ռուսական նախագիծը հանձնեցին դեսպանատների պաշտոնյաներից կազմված մի հանձնախմբի քննությանը: Պալավիչինին այս հանձնախմբի կազմում նշանակեց ավստրո-հունգարական դեսպանության խորհրդական պարոն Պանֆիլիին եւ պատվիրեց նրան հնարավորին չափ ձգձգել աշխատանքները, սակայն այնպես, որ ռուսները չնկատեն Ավստրո-Հունգարիայի տակտիկան[35]:

1913 թ. հուլիսի 11-ին նա հաղորդում է Վիեննա.

«Մինչեւ հիմա հաջողվել է ձգձգել ռեֆորմների նախագծի քննությունը, առանց ռուսների կասկածը հարուցելու»[36]:

Ռուսական նախագծի հիմնական սկզբունքները՝ սեփական խորհրդարաններ ունեցող հայկական վեց վիլայեթներից ինքնավար գավառի ստեղծումը՝ բոլոր հնարավոր իրավունքներով օժտված գեներալ-նահանգապետի գլխավորությամբ, տերությունների դեսպանությունների ներկայացուցիչները մերժեցին: Նրանք վախենում էին,

որ կխախտվի սուլթանի սուվերենությունը, այդ պատճառով *«մենք պետք է ռուսների բարենորոգման առաջարկն անընդունելի համարենք եւ նրա իրագործմանը դեմ լինենք»*[37]:

Ռուսական կողմը չէր ժխտում, որ իրենց առաջարկությունն ուղղված էր Թուրքիայի ասիական մասը ռուսների ազդեցության գոտի դարձնելուն, եւ դա հենց գալիս էր հաստատելու Պալավիչինիի ենթադրությունը, որ եթե գործը հասներ հայկական գավառների ինքնուրույնությանը, ապա Թուրքիայի ասիական մասի բաժանումը պետք է վճռված համարել[38]:

Ռուսների առաջարկություններին զուգահեռ հայ արքեպիսկոպոս Հմայակը եւ «Սաբահ» թերթի խմբագիր ու հայկական խառն խորհրդի անդամ Քելեբյանը հայ պատրիարքի անունից երկու հուշագրեր հանձնեցին Պալավիչինիին: Մեկը վերաբերում էր Թուրքիայից հայերի արտագաղթին, որը 1913 թ. աննախադեպ չափերի էր հասել: Նրանք պնդում էին, որ դրա պատճառը թուրքական կառավարության կողմից իրականացվող հայերի հալածանքներն էին: Երկրորդ հուշագիրը, որի հեղինակը հայ լուսավորչական պատրիարքությունն էր, արտահայտում էր հայերի գլխավոր պահանջները.

1. Արեւելյան Անատոլիայի հայերով բնակեցված վիլայեթներից մի միասնական գավառի ստեղծում:

2. Տերությունների համաձայնությամբ օտար գեներալ-նահանգապետի նշանակում:

3. Գավառների խորհրդարաններում եւ հասարակական պաշտոններում հայերի եւ մահմեդականների հավասար ներկայացուցչություն:

4. Հայոց լեզուն ընդունելու որպես դպրոցի լեզու եւ այդ լեզվով օրենքներ հրապարակելու թույլտվություն:

5. Արդարադատության ռեֆորմ:

6. Զավթված հողերի վերադարձ:

7. Եվրոպական վերահսկողություն[39]:

Պալավիչինին կրկին հաղորդում է.

«Հուշագրերը քննելիս անմիջապես նկատում ես բոլոր կետերում դրանց լիակատար նմանությունը ռուսական ռեֆորմների նախագծին: Նմանությունն այնքան մեծ է, որ ակամա միտք է ծագում, որ ռուսական դեսպանությունն ու հայկական պատրիարքարանը համագործակցել են կամ որ հայոց պատրիարքարանը առնվազն տեղյակ է եղել պարոն Մանդելշտամի խզբզոցին, կամ էլ սրան այնտեղից են հրահրել»[40]:

Քելեբյանին Պալավիչինին ասել է.

«Հայերն, ըստ իս, պետք է բավարարվեն Բ. Դռան ազդարարած ռեֆորմներով այնպիսի բաներ պահանջելու փոխարեն, որոնք թուրքական կառավարությունը տալ չի կարող»[41]:

Երբ հայերին հանդիմանեցին, թե ռեֆորմների իրենց ծրագիրը մշակելիս մասամբ ռուսների ազդեցության տակ են գտնվել, նրանք ասացին, որ ռեֆորմների պլանը, անկախ արտաքին ազդեցություններից, մշակել են հայկական պատրիարքությունը եւ առաջատար հայ քաղաքագետները՝ հայերի կաթողիկոսի ներկայացուցիչ Պողոս Նուբար փաշան, թուրքական պառլամենտի երեսփոխան, փաստաբան Գրիգոր Զոհրապը, նախկին հայ պատրիարք Եղիշե արքեպիսկոպոս Դուրյանը, դաշնակցության ղեկավարներից Ակնունին եւ Եգիպտոսում հայ բարեգործական միության գլխավոր քարտուղար, փաստաբան Վահան Մալեզյանը: Եթե ռեֆորմների ծրագիրը ճիշտ չիրականացվի, ասում էին հայերը, ապա նրանք առավել եւս ստիպված կլինեն դիմելու ռուսների օգնությանը: Նրանք ասում էին, որ *«քանի դեռ գործը չի հասել գոյության հարցին, հայերը գերադասում են, որ իրենց ազգը զարգանա թուրքական կայսրության ներսում եւ մեծ տերությունների երաշխիքներով, քան Ռուսաստանից կախվածության պայմաններում, որովհետեւ ուղղափառությունը հայ ազգի համար կլանման ավելի մեծ վտանգ է ներկայացնում, քան իսլամը»*[42]:

Սակայն, երբ հայ եպիսկոպոսների 1878 թ. փետրվարի 1-ի խնդրագիրը համեմատում ես հայերի ռեֆորմների ծրագրի հետ, ապա երկու առաջարկությունների նմանությունն ակնհայտ է դառնում: Դա ապացույցն է այն բանի, որ հայերն արդեն 1878 թ. ինքնավարության ցանկություն են ունեցել: Դեսպանների հավաքի ժամանակ Ավստրո-Հունգարիան առաջարկում է հայկական գավառների համար մի երկրորդ նահանգապետ էլ նշանակել: Հայերն այս առաջարկությունն արգելք էին համարում ռեֆորմների իրագործման համար: Այդ հանգամանքը հայկական շրջաններում որոշակի դժգոհություն է առաջացնում Ավստրո-Հունգարիայի նկատմամբ[43]:

1913-ի օգոստոսին հայ դաշնակցական կուսակցության ղեկավար Ակնունին մեկնում է Զմյուռնիա: Այս առիթից օգտվում է Զմյուռնիայում Ավստրո-Հունգարիայի հյուպատոս դոկտոր Շտումֆոլը՝ Ակնունու հետ հայկական ռեֆորմների մասին խոսելու համար: Դոկտոր Շտումֆոլը հաղորդում է.

«Անդրադառնալով երիտթուրքական կուսակցությանը՝ Ակնունին արհամարհական ձեւով քննադատեց երիտթուրքական կուսակցության մինչեւ հիմա ունեցած վերաբերմունքը հայերի նկատմամբ: Նրա կարծիքով, եթե 1908 թ. հետո հայկական շրջաններում իշխող թուրքոֆիլ տրամադրությունը այժմ տեղի է տվել ռուսոֆիլ հոսանքներին, ապա դրա մեղքն առաջին հերթին պետք է գտնել երիտթուրքական կառավարության սխալների մեջ»:

Ռեֆորմների պլանների մասին Ակնունին ասել է, որ դրանց իրականացման եղանակը կախված է հայկական պահանջի նվազագույնից: Նա այն կարծիքին էր, որ ռեֆորմների իրականացումն անպայման եվրոպական վերահսկողություն է պահանջում:

«Եթե ռեֆորմների ծրագիրը գոհացուցիչ լուծում ստանա, ապա այլեւս չի լինի

հայկական սահմանամերձ շրջանները Ռուսաստանին միացնելու վտանգը»:

Նա նշել է նաեւ հայ Սխիթարյանների նշանակությունը Ավստրո-Հունգարիայի եւ հայ ազգի փոխհարաբերությունների զարգացման համար[44]:

Հայերին ռեֆորմների՝ ռուսների աջակցություններից ետ պահելու համար Գերմանիան օգտվեց հայտնի հայասեր, գերմանացի դոկտոր Լեփսիուսի ծառայությունից: Լեփսիուսի՝ հայ ղեկավարների վրա ունեցած ազդեցության միջոցով գերմանացիները փորձեցին փոփոխել հայերի ռեֆորմների պլանները: Նրա ջանքերի շնորհիվ հայկական գործողությունների կոմիտեն պիտի *«մի կողմ դներ ռեֆորմների ռուսական առաջարկությունները եւ ընդուներ թուրքական կառավարության առաջարկությունները հետեւյալ լրացումներով.*

1. Հայաբնակ շրջաններում մուջահիրները կարող են բնակեցվել միայն գեներալ-տեսուչների թույլտվությամբ:

2. Զինվորական ծառայությունը համապատասխան վիլայեթում սկզբունքորեն պետք է ռեգիոնալ բնույթ ունենա, սակայն ներքին խռովությունների դեպքում զորամասերը հայկական վիլայեթներից կարող են գործի դրվել նաեւ Հայաստանից դուրս:

3. Տերություններին պետք է թույլատրվի որոշակի մասնակցություն ունենալ գեներալ-տեսուչների ընտրության հարցում:

4. Սանջակների, վիլայեթների եւ կազակների վարչական խորհուրդներում մահմեդականները պետք է ներկայացված լինեն ոչ թե համամասնական սկզբունքով, այլ հավասար չափով»[45]:

Լեփսիուսի օգնությամբ հայկական գործողությունների կոմիտեն ուզում էր բանակցությունների մեջ մտնել թուրքական կառավարության հետ: Այսինքն, հայերը ցանկանում էին շրջանցել ռեֆորմների ռուսական ծրագիրը[46]:

Ռուսների հակամիջոցները կանխելու նպատակով Պալավիչինին առաջարկեց, որ Եռյակ համաձայնության տերությունների կաբինետները համապատասխան նախապատրաստական աշխատանքից հետո գաղտնի կապ հաստատեն թուրքերի հետ՝ դրդելով ռուսական կառավարությանը չհակառակվելու հայերի այժմյան ցանկություններին[47]: Ռուսաստանի ու Թուրքիայի ռեֆորմների առաջարկությունները քննող դեսպանների հանձնախումբը 1913-ի օգոստոսի սկզբին ավարտում է իր աշխատանքը:

Եվրոպական պետություններն ընդհանուր առմամբ այն տեսակետին էին, որ հայկական վեց վիլայեթների միացման վերաբերյալ ռուսական առաջարկությունը թուրքերը չեն ընդունի: Այդ դեպքում հնարավոր կլիներ միջնորդ պետությունների օգնությամբ անցկացնել թուրքերի առաջարկությունները, սակայն հետեւյալ լրացումներով.

1. Ռեֆորմների իրականացման եվրոպական վերահսկողություն (ձեւը կարելի է քննարկել Բ. Դռան հետ):

2. Ուժի մեջ թողնել վիլայեթների մասին հին օրենքի գլխավոր որոշումները:

3. Թույլ տալ հայոց լեզուն օգտագործելու դպրոցում եւ այդ լեզվով հրատարակել օրենքները:

4. Ազատություն բոլոր ազգերի համար դպրոցի հարցում:

5. Համիդյան հեծելագնդերի կազմալուծում:

6. Փոքրամասնությունների կրոնի մուավիններ նշանակել վալիների, մութեսարիֆների եւ մյուդիրների մոտ[48]:

Այս լրացումները որոշվել էին արդեն Եռյակի համաձայնության պատվիրակների կողմից[49]: Բանակցությունների հետեւանքն այն եղավ, որ ռուսները ներկայացրին ռեֆորմների մի նոր, ավելի թույլ առաջարկություն: Պալավիչինիի հետ զրուցելիս նրա ռուս գործընկեր Գիրսը ասաց, որ հիմնական շեշտը պետք է դրվի հետեւյալ չորս կետերի վրա.

1. Գեներալ-նահանգապետի նշանակման համար՝ կարող են լինել երկու հոգի, սակայն նախապես պետք է լինի տերությունների համաձայնությունը:

2. Գեներալ-նահանգապետը պետք է պաշտոնյաներին նշանակելու եւ հանելու իրավունք ունենա:

3. Տերություններին պետք է հնարավորություն տրվի վերահսկելու գեներալ-նահանգապետի գործունեությունը:

4. Գավառական բարձր խորհուրդները պետք է բաղկացած լինեն հավասար քանակով մահմեդականներից ու քրիստոնյաներից[50]:

Թուրքերը հայկական վիլայեթների նոր բաժանմանը նույնքան քիչ էին համաձայն, ինչպես եւ գեներալ-տեսուչների նշանակմանը եվրոպական տերությունների կողմից:

Պալավիչինին Վիեննա է հաղորդում.

«Սայիդ Հալիմ փաշան ավելացրել է, որ Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածի համաձայն կարելի է խոսել հայկական ռեֆորմների իրականացման ժամանակ տերությունների որոշ վերահսկողության մասին, սակայն Թուրքիան ամբողջ ուժով կդիմադրի իր ներքին գործերին միջամտելուն[51]»:

Կ. Պոլսի հայ պատրիարքը պարբերաբար հաղորդումներ էր ուղարկում Թուրքահայաստանում տեղի ունեցող խռովությունների մասին եվրոպական երկրների ներկայացուցչություններին: Սակայն սրանք տեսնում էին ռուսների սադրիչ գործունեությունը[52] եւ, թեեւ նրանց հայտնի էր հայ ժողովրդի նկատմամբ կիրառվող քաղաքականությունը, իրենց ենթադրությունը հիմնավորում էին ռեֆորմների ռուսական նախագծի մերժումով: Տեսուչների ընտրության ժամանակ ռուսների ազդեցությունը կանխելու նպատակով թուրքերն առաջարկում են Անգլիային երկու տեսուչ ուղարկել Թուրքահայաստան: Բայց անգլիացիները հրաժարվում են ասելով՝ ռուսները չեն հանդուրժի, որ այդ կարեւոր առաքելությունը վստահվի անգլիական պաշտոնյաներին: Այնինչ անգլիացիները համարում էին, որ կոչված են այդ բանի համար, որովհետեւ

կարծում էին, որ Կիպրոսի մասին պայմանագիրը նրանց որոշակի իրավունքներ ու պարտականություններ է ընձեռում, որոնց պատճառով անգլիացի տեսուչների ուղարկումը Հայաստան ինքնըստինքյան հասկանալի պիտի լիներ[53]:

Որքան ավելի էին ձգձգվում բանակցությունները, այնքան ավելի էր մեծանում հայերի դժգոհությունը: Ճիշտ է, նրանց խոստանում էին, որ դեսպաններն ամեն ինչ կանեն հայերի արդարացի ցանկություններին ընդառաջելու համար[54], բայց նրանք վախենում էին, որ թուրքերն, ինչպես եւ նախկինում, դատարկ խոստումներ կտան եւ բռնությունների կդիմեն: Ռեֆորմների փոխարեն արդեն հաճախ կոտորածներ էին տեղի ունեցել: Եվ հայերը սկսեցին պաշտպանական միջոցներ ձեռք առնել: Ավստրո-Հունգարիայի հյուպատոս Դանդինին հաղորդում է Հալեպից.

«Հայերը շատ լավ զինված են, մեծ քանակով պայթուցիկ նյութ ունեն: Նրանք վճռել են մինչեւ վերջ պաշտպանվել»[55]:

Բանակցությունների ձգձգման կարեւորագույն պատճառներից մեկն այն էր, որ Գերմանիայի դեսպան Վանգենհայմը ռեֆորմներին դեմ էր քվեարկել: Ռուսական դեսպանության խորհրդական Գուլկեւիչը, որը մշակել էր ռեֆորմների երկրորդ ծրագիրը, ռեֆորմների հարցում գերմանական քաղաքականության մասին հետեւյալն է գրում Սազոնովին.

«Գերմանական կառավարությունը կրկնակի նպատակ է հետապնդում. նախ նա ուզում է ապացուցել Բ. Դռանը, որ անվտանգ է դարձրել ռուսների՝ չափազանց հեռուն գնացող ռեֆորմները, բացի դրանից, նա ուզում է իր համակրանքը հավաստել հայերին, որովհետեւ նրանց կարիքն ուներ Կիլիկիայում, որը Գերմանիան դասում էր իր հետաքրքրությունների ոլորտը: Այդ պատճառով Գերմանիան երբեք անկեղծ չէր գործում, եւ նրա օգնությունը զուտ հայերի համար նախանշված ցուցադրական բնույթ ուներ: Իրականում գերմանացիները թուրքերի հավատարիմ խորհրդատուներն էին»[56]:

Գերմանիան դեռեւս 1909-1913 թթ. փորձել էր Գոլցի զինվորական միսիայի միջոցով վերակառուցել թուրքական բանակը: Այժմ նա ուզում էր շարունակել այդ գործը Լիման Ֆոն Զանդերսի միջոցով: 1913 թ. նոյեմբերի սկզբին Վանգենհայմը գաղտնի ասաց Պալավիչինիին, որ գեներալ-լեյտենանտ Լիման Ֆոն Զանդերսն արդեն մեկ կամ երկու շաբաթից Թուրքիա կժամանի, սկզբում միայն մի քանի սպաների ուղեկցությամբ: Կարիքի դեպքում նրանց թիվը հետզհետե կարող էր ավելանալ: Այս, ինչպես եւ բոլոր այլ հարցերում, թուրքերը գեներալին ամենալայն լիազորություններն էին ընձեռել[57]:

Երբ գերմանացիները զինվորական հանձնախումբ էին ուզում ուղարկել Թուրքիա, նրանց, ի միջի այլոց, հարկավոր էր նաեւ Ռուսաստանի համաձայնությունը: Այսպիսով՝ մի իրադրություն էր ստեղծվել, երբ Վանգենհայմին հարկավոր էր ռուսներին իր կողմը տրամադրել[58]:

Այդ նպատակով Վանգենհայմը Գիրսին առաջարկեց հայկական ռեֆորմների հարցը համատեղ քննարկել Մեծ վեզիրի հետ[59]: Երբ Վանգենհայմը Գիրսի հետ միասին Մեծ վեզիրին ներկայացրեց ռեֆորմների ծրագիրը, թուրքերը հանկարծ պատրաստակամություն ցուցաբերեցին ռուսների հետ բանակցելու: Թվում էր, թե ռեֆորմների հարցը վերջնական լուծում է ստանալու: Համաձայնության եկան նաեւ այն հարցում, որ ռեֆորմները վերահսկելու եւ իրականացնելու պիտի նշանակվեն արտասահմանյան տեսուչներ[60]: Սակայն, ասում էին, թե իբր Հայաստանում ժողովուրդը պատերազմական պատրաստություններ է տեսնում: Կ. Պոլսում Ավստրո-Հունգարիայի զինվորական կցորդ Պոմյանկովսկին 1914-ի հունվարի 18-ին հաղորդում է.

«Արդեն որոշ ժամանակ է, ինչ Հալեպ քաղաքում համառորեն լուրեր են պտտվում, որ հայերը գարնանը Ռուսաստանի հովանավորությամբ զենքի են դիմելու: Պնդում են, թե հայ հեղափոխական շարժումը հարյուր հազարից ավել մարդ է ոտքի հանելու: Ասում են, թե հայերը մեծ քանակությամբ զենք ունեն, եւ որ նրանց պաշարները օրեցօր համալրվում են Կովկասից: Այս լուրերն առաջացել են այն պատճառով, որ հայերը թուրքական կառավարությունից այլեւս ռեֆորմների հույս չունեն, իսկ Ռուսաստանը հրահրում է այդ շարժումը»[61]:

Հայերի՝ ռեֆորմների հասնելու ձգտումը գրգռում էր թուրքերին: Թուրքերը չէին սպասարկում հայերի խանութները մի քանի բնակավայրերում: Անգամ խոսում էին պաշտոնական բոյկոտի մասին, բայց իշխանությունները մերժեցին այդ առաջարկը[62]:

Ռուսաստանի բանակցությունները Թուրքիայի հետ ավարտվեցին Վանգենհայմի ջանքերի շնորհիվ: 1914 թ. փետրվարի 8-ին Գուլկեւիչի եւ Սայիդ Հալիմի ստորագրած թուրք-ռուսական համաձայնությունը սահմանեց հայկական ռեֆորմների բովանդակությունը: Ըստ այդ համաձայնագրի, հայկական յոթ վիլայեթները՝ Էրզրումը, Տրապիզոնը, Սվազը, Վանը, Բիթլիսը, Խարբերդն ու Դիարբեքիրը, բաժանվում էին երկու հատվածի, որոնցից յուրաքանչյուրին անհրաժեշտ է եվրոպացիների եւ Բ. Դռան կողմից ընտրված օտար գեներալ-տեսուչներ: Սրանք պետք է *«վերահսկեին վարչությունը, արդարադատությունը, ոստիկանությունը, ժանդարմերիային, ինչպես նաեւ առանձին վալիների գործավարությանը: Նրանք են նշանակում ստորին պաշտոնյաներին եւ առաջարկում Բ. Դռանը նշանակել բարձր պաշտոնյաներին: Նրանք կարող են նմանապես պաշտոնազրկել բոլոր պաշտոնյաներին, իսկ վալիներին պաշտոնազրկելու առաջարկությունը նրանք պետք է ներկայացնեն Բ. Դռանը: Ապահովվում է ազգաբնակչության առանձին շերտերի համամասնական ներկայացուցչությունը վիլայեթների գլխավոր խորհուրդներում, այնպես որ Վանի, Բիթլիսի եւ Էրզրումի վիլայեթների գլխավոր խորհուրդները կիսով բաղկացած լինեն քրիստոնյա ներկայացուցիչներից: Օրենքներն ու հրամանագրերը պետք է գրվեն երկու լեզվով՝ թուրքերեն եւ հայերեն, դատավճիռները՝ թուրքերեն, հայերեն թարգմանությամբ, երկու լեզվի օգտագործումը դպրոցում եւ իշխանության մարմիններում երաշխավորվում է»*[63]:

Փետրվարի 9-ին Պալավիչինին զեկուցում է.

«Ռուսաստանի գործերի հավատարմատարը հաղորդել է ինձ, որ հայկական ռեֆորմների հարցում ռուսական դեսպանության ու Մեծ վեզիրի միջեւ լիակատար համաձայնություն է ստեղծվել: Նա ինձ մի նոտա է հանձնել, ըստ որի Բ. Դուռը պետք է դիմի այստեղի դեսպանություններին՝ երկու տեսուչներ նշանակելու համար: Այդ տեսուչները պետք է լինեն Հոլանդիայից, Բելգիայից, Նորվեգիայից կամ Դանիայից»[64]:

Ուշադրության է արժանի նաեւ Տրապիզոնում Ավստրո-Հունգարիայի հյուպատոս Մորիսի հաղորդումը Հայաստանի ապագայի հարցում ռուսների դերի վերաբերյալ հայերի տեսակետի մասին.

«Ասում են, թե Ռուսաստանը հայերին խոստացել է Հայաստանին Ֆինլանդիայի նման ինքնավարություն տալ: Ռեֆորմների իրականացման դեպքում Ռուսաստանն այնտեղ կսկսի հայերին հրահրել Թուրքիայի դեմ, այդ նպատակով շատ փող կծախսի, հեղափոխականներին գաղտնի զենք կմատակարարի եւ կմիջամտի, հենց որ հայերն ապստամբեն: Ասում են, որ հայերի գործունեությունը ռեֆորմների հարցում ղեկավարվում է էջմիածնից, որտեղ Ամենայն Հայոց կաթողիկոսը ռուսների հետ միաբանությամբ է գործում»[65]:

Ռեֆորմների այն պլանի մասին, որը բավական տարբերվում է առաջին առաջարկությունից, Պալավիչինին հետեւյալն է գրում Վիեննա.

«Ճիշտ գնահատելու համար, թե որքանով են ընդունվել ռուսների պահանջները, հարկավոր է անդրադառնալ այս տարվա ամռանը պարոն Մանդելշտամի մշակած նախագծին եւ համեմատել այն Բ. Դռան՝ տերություններին ուղղված համաձայնեցված նոտայի նախագծի բովանդակության հետ: Ռուսական նախագիծը նախատեսում էր վեց վիլայեթներից ստեղծել մի գավառ՝ գեներալ-նահանգապետով, որին տերությունների համաձայնությամբ սուլթանը պիտի նշանակեր:

Հիմնական տարբերությունը վերաբերում է վեց գավառների վարչական բաժանմանը: Ռուսական նախագիծը պահանջում էր վիլայեթների բաժանումը եւ սանջակների ու կազակների նոր սահմանագծումը ազգագրական հիմքի վրա: Դրանով ապահովված կլիներ գեներալ-նահանգապետի լիիշխանությունը, քանի որ մութասերիֆները նրան ենթարկվելիս կլինեին: Սակայն վիլայեթների բաժանումը եւ սանջակների ու կազակների վարչական սահմանները անփոփոխ են մնում:

Մեծ է նաեւ այն տարբերությունը, որը կա գեներալ-նահանգապետի համար նախատեսված եւ գեներալ-տեսուչներին ընձեռված լիազորությունների միջեւ:

Ենթադրվում է, որ գեներալ- նահանգապետը պետք է լինի ամբողջ գավառի գործադիր իշխանության ղեկավարը: Նրան պետք է ենթարկվեին ոստիկանությունն ու ժանդարմերիան, եւ նրա պահանջով իր տրամադրության տակ պետք է դրվեին զորամասերը՝ կարգ ու կանոն ապահովելու համար:

Մինչդեռ գեներալ-տեսուչներին հանձնվում է միայն արդարադատության, ոստի-

կանության ու ժանդարմերիայի վերահսկողությունը: Յուրաքանչյուր վիլայեթում գործադիր իշխանության ղեկավարը մնում է վալին, որը գեներալ-տեսուչների ռեֆորմների բոլոր ձգտումներին, անշուշտ, կհակադրի ծգձգման փորձված թուրքական տակտիկան: Այնուամենայնիվ, գեներալ-տեսուչներն իրավունք ունեն պաշտոնազրկելու յուրաքանչյուր պաշտոնյայի, բայց նրանք կատարված պաշտոնազրկման մասին պետք է զեկուցեն իրավասու նախարարությանը, որն անկասկած, իրեն կվերապահի վերջնական վճռի իրավունքը: Գեներալ-տեսուչներն իրավունք ունեն նշանակելու միայն ստորադաս պաշտոնյաների, բարձրաստիճաններին նրանք միայն առաջարկում են նշանակել:

Մանդելշտամի նախագիծը պահանջում էր գավառի խորհրդարանում, որը պետք է փոխարիներ վեց վիլայեթների բարձր խորհուրդներին, հավասար քանակի քրիստոնյա եւ մահմեդական երեսփոխաններ: Դրա փոխարեն բարձր խորհուրդների համար ընդունվում է համամասնության սկզբունքը այժմյան ընտրական համակարգի հետ միասին, եւ, անկասկած, հոգ կտարվի, որպեսզի առաջիկա տարվա ընթացքում անցկացվելիք մարդահամարի արդյունքն այնպիսին լինի, որ յուրաքանչյուր վիլայեթում մահմեդականները մեծամասնություն կազմեն:

Ռուսներն առանձին որոշումներ էին առաջարկել գավառի խորհրդարանի գումարման եւ ցրման նստաշրջանի տեւողության, ինչպես նաեւ իրավասության մասին: Հատուկ պահանջվում էր, որ խորհրդարանի կողմից ընդունված բոլոր օրենքները, որոնց հաստատումը երկու ամսվա ընթացքում ցարը չի մերժել, համարվեն հաստատված: Ներկայիս տարբերակը Բարձր խորհուրդների գումարման եւ ցրման մասին որոշումներ չի պարունակում, իսկ նրանց իրավասությունը սահմանվում է վիլայեթների մասին օրենքով: Մանդելշտամի նախագիծը նախատեսում էր համայնքների վերախմբավորում ազգագրական սկզբունքներով: Մյուդիրը պետք է լիներ համայնքի անդամների մեծամասնության ներկայացուցիչը: Հակառակ դրան՝ պահանջվում է հին բաժանումը:

Ռուսական նախագիծը մանրամասն առաջարկությունն էր պարունակում դատավարության կազմակերպության վերաբերյալ: Մինչդեռ համաձայնեցված նախագծում այդ մասին ոչինչ չի ասվում:

Ոստիկանության եւ ժանդարմերիայի վերաբերյալ ռուսները առաջարկել էին, որ սրանք բաղկացած լինեն կիսով քրիստոնյաներից, կիսով էլ՝ մահմեդականներից : Այդ պահանջն ընդունվեց երկու սահմանափակումներով, այն է՝ անհրաժեշտ համարվեց գեներալ-տեսուչների համաձայնությունը, իսկ հավասարությունը պետք է իրականացվեր ազատվող տեղերի զբաղեցման ընթացքում, այսինքն՝ միայն հեռավոր ապագայում: Բացի դրանից, ռուսները պահանջում էին, որ ոստիկանության եւ ժանդարմերիայի կազմակերպումն ու ղեկավարությունը վստահվեն թուրքական ծառայության մեջ գտնվող եվրոպացի սպաներին, մինչդեռ նոտայի նախագծում այդ մասին բոլորովին չի խոսվում:

Ռուսների առաջարկությամբ զինվորական ծառայությունը պետք է խաղաղ պայմաններում իրականացվեր միայն գավառներում: Ներկայիս տարբերակում գրված է. «Խաղաղության եւ հանգստի ժամանակ»: Այդ վերջին բառը դուռ է բաց անում կամայականության առաջ: Բացի դրանից, նավատորմի՝ Եմենում, Սիրիայում ու Նեղդում գտնվող զորամասերի համար երիտասարդները պետք է զորակոչվեն եւ վեց վիլայեթներից, ինչպես եւ կայսրության մյուս շրջաններից:

Ռուսները պահանջել էին ցրել համիդյան հեծելագնդերը: Այժմ նախատեսվում է նրանց պահեստի հեծելազոր դարձնել, ընդ որում՝ նրանք զենք պետք է ստանային միայն զորահավաքի եւ զորախաղերի դեպքում:

Մանդելշտամի նախագիծը նախատեսում էր, որ բոլոր պաշտոնյաների եւ բոլոր դատավորների կեսը քրիստոնյաներ լինեն. ներկայիս համաձայնագիրն այդ մասին որեւէ որոշում չի պարունակում:

Ռուսների մյուս շատ կարեւոր դրույթն այն էր, որ ընտրելու եւ ընտրվելու իրավունքը միայն տեղաբնակ բնակչությունը պետք է ստանա: Դրանից եւս հրաժարվեցին:

Մանդելշտամի նախագծի կետերը՝ օրենքների եւ հրամանագրերի հրապարակման եւ դատարանի լեզվի մասին, ընդունվեցին, նմանապես ընդունվեցին դպրոցի ազատության մասին կետերը: Հիմնական տարբերություն կա զավթած հողերը վերադարձնելու հարցում: Ռուսական նախագիծը պահանջում էր, որ մի հատուկ հանձնախումբ քննի բողոքները, մինչդեռ հիմա միայն հետեւյալ որոշումը գրանցվեց. «Որպեսզի գյուղատնտեսության բախումներն ընդհանուր Տեսուչների քննության տակ լինեն»:

Նոտայի նախագծում պահպանված չէր 1863 թ. սահմանադրությամբ եւ սուլթանի հանձնաժողովների կողմից հայերին ընձեռած իրավունքների եւ արտոնությունների անխոցելիության ծեւական ճանաչման պահանջը, որը կար Մանդելշտամի նախագծում:

Ժամանակին ռուսները պահանջում էին, որ վեց վիլայեթներում մուհաջիրներ (մահմեդական վտարանդիներ) չլինեին: Դեսպանությունների պատվիրակների հանձնախմբի նիստերին պարոն Մանդելշտամը հենց այս պահանջն է ներկայացրել որպես ռեֆորմների իրականացման անհրաժեշտ պայման: Նա մատնանշել է այն վտանգը, որին ենթարկված կլինի ռեֆորմների ողջ գործը, եթե մուջահիրներին բնակեցնելով՝ մահմեդականների ու քրիստոնյաների թվի հարաբերակցությունը փոխվի ի վնաս վերջինների: Այս պայմանը, որը ռուսները միշտ հիմնական են համարել, նույնպես դուրս է մնացել: Համենայնդեպս, նոտայի նախագծում այդպիսի կետ չկա:

Ռուսական նախագծով Բ. Դռան եւ տերությունների պատվիրակներից բաղկացած մի հանձնախումբ պիտի հայկական վիլայեթների համար օրգանական ստատուս

մշակեր: Դրա փոխարեն որոշում ընդունվեց, որ Բ. Դուռը գեներալ-տեսուչների համար մանրամասն հրահանգներ հրատարակի: Ռուսական նախագծի ամենակարեւոր դրույթը՝ տերությունների կողմից ռեֆորմների վերահսկողության պահանջը, Բ. Դուռը չընդունեց, դրանով ռեֆորմների գործը նույն բախտին արժանացավ, ինչ եւ ռեֆորմների նախկին բոլոր փորձերը Թուրքիայում»[66]:

Վերջին նախադասության մեջ արտահայտած է այն կանխագուշակումը, որ ռեֆորմների նոր պլանին վիճակված է նախկին ռեֆորմների ճակատագիրը: Սրանք թեեւ որոշվեցին, սակայն երբեք իրականություն չդարձան:

Բայց հայերը ուրախ էին, որ բարենորոգումների հարցը վճռվել էր: Նրանք այսուհետեւ դրանց իրականացմանն էին սպասում[67]:

Երբ Թուրքիան ընդունեց ռեֆորմների նախագիծը, սկսեցին գեներալ-նահանգապետի պաշտոնի համար թեկնածուներ փնտրել: Ռուսաստանը չորս թեկնածու առաջադրեց, որոնցից երկուսը պետք է ընտրվեին.

1. բելգիացի բրիգադի գեներալ դը Գիզը,
2. բելգիացի ավագ լեյտենանտ Անրին՝ Կոնգոյի փոխնահանգապետը,
3. հոլանդական ռազմական նախարարության գլխավոր քարտուղար Դոռմանը,
4. Նիդեռլանդական Հնդկաստանում նահանգապետ Վեստենենկը[68]:

Երբ Ռուսաստանի դեսպանը Վիեննայում հարցում արեց թեկնածուների ընտրության մասին, հետեւյալ պատասխանն ստացավ. *«Ինչպես հայտնի է, Հայկական հարցում մենք այն տեսակետին ենք, որ հավանություն ենք տալիս Բեռլինի եւ Սանկտ Պետերբուրգի միջեւ կայացած համաձայնությանը: Այդ պատճառով մենք այս դեպքում եւս սկզբում կապ կհաստատենք գերմանական կաբինետի հետ»*[69]:

Ապրիլի սկզբին Ռուսաստանը եւս մի թեկնածու առաջադրեց գեներալ-նահանգապետի պաշտոնի համար, այն է՝ նորվեգացի մայոր Հոֆին[70]: Գերմանիան այդ առաջարկության հետ միանգամայն համաձայն էր[71]: Ապրիլի 7-ին մեծ տերությունների ներկայացուցիչները թուրքերին հանձնեցին իրենց կողմից առաջադրված տեսուչների թեկնածուների ցուցակը[72]: Ապրիլի 15-ին Մեծ վեզիրը տեղեկացրեց մեծ տերությունների ներկայացուցիչներին, որ առաջադրված թեկնածուներից ընտրվել են հոլանդացի Վեստենենկը եւ նորվեգացի Հոֆը[73]: Տեսուչներ ընտրված Վեստենենկին ու Հոֆին Թուրքիան առաջարկեց Կ. Պոլիս գալ[74]: Ժամանելով Կ. Պոլիս՝ Վեստենենկը 1914 թ. մայիսի 6-ին այցելեց Ռուսաստանի դեսպան Գիրսին: Սա ասաց, որ չի ուզում, որ գեներալ-տեսուչները ներգրավվեն քաղաքականության մեջ: Քանի դեռ Թուրքիան խաղաղության կողմնակից է, ռուսները Հայաստանը չեն զբաղեցնի: Ռուսաստանը խաղաղություն է ցանկանում իր սահմաններում եւ սահմանամերձ վիլայեթներում[75]:

Գեներալ-տեսուչների պայմանագրերի ստորագրման ժամանակ հենց թուրքերը ցույց տվեցին, թե ինչպես էին պատկերացնում տեսուչների դերը[76]: Պայմանագրերում ոչ մի խոսք չկար տեսուչների իրավասության մասին, բացի դրանից, թուրքերը չէին



Հայկական ռեֆորմների գոտեմարտի դաշտը

ուզում գեներալ-տեսուչներին ենթարկել Թուրքիայի կողմից Հայաստանում արդեն նշանակված քաղաքացիական տեսուչներին[77]: Այդ, իհարկե, շեշտակի կնվազեցներ գեներալ-տեսուչների ազդեցությունը: Սակայն պարոնայք Վեստենենկը եւ Հոֆը պնդում էին, որ անհրաժեշտ է իրականացնել ռեֆորմների որոշված պլանները, եւ նրանց տեսակետը հաղթանակեց: Պայմանագրերը ստորագրվեցին մայիսի 24-ին[78]: Գեներալ-տեսուչները մայիսի 25-ին վերադարձան Եվրոպա՝ իրենց տեղափոխությունը նախապատրաստելու համար: Երբ Վեստենենկը հուլիսի 2-ին ընտանիքով տեղափոխվեց Կ. Պոլիս, նա իր գործընկեր Հոֆին լրիվ փոխված գտավ: *«Ինձ համար պարզ դարձավ,- գրեց Վեստենենկն իր օրագրում,- որ Հոֆն ամբողջովին միաբան էր թուրքերի հետ: Թուրքերը նրա քթից բռնած՝ իրենց ուզածին պես ման էին ածում»*[79]: Երկու տեսուչների միջեւ հայկական հատվածների բաժանման ժամանակ Վանգենհայմը Թալեաթ փաշայի հետ համաձայնության եկավ, որ հյուսիսային հատվածը՝ Էրզրումը, Տրապիզոնն ու Սվազը, ենթարկվեն նորվեգացի Հոֆին: Դրանով Վանգենհայմն ուզում էր հյուսիսային հատվածը գերմանական ազդեցության տակ դնել: Հոֆն առավել եւս ապշած էր, երբ այդ հատվածը բաժին ընկավ Վեստենենկին[80]:

Հայկական երկու հատվածները հետեւյալ կերպով ենթարկվեցին երկու գեներալ-տեսուչներին.

1. Էրզրումը, Տրապիզոնն ու Սվազը՝ պարոն Վեստենենկին,
2. Վանը, Խարբերդը, Բիթլիսը, Դիարբեքիրը՝ պարոն Հոֆին[81]:

Օգոստոսի սկզբին պայթեց առաջին համաշխարհային պատերազմը: Դա հույս տվեց թուրքերին իրենց հայեցողությամբ լուծելու հայ ժողովրդի հարցերը՝ պատերազմի մեջ մտնելով Եռյակ միության կողմից:

Սեպտեմբերի 8-ին Թալեաթն ընդունեց Վեստենենկին եւ հաղորդեց նրան, որ իրադարձություններն աշխարհում ստիպում են թուրքական կառավարությանը կիսով կրճատել գեներալ-տեսուչների ռոճիկները: Վեստենենկը մտածելու ժամանակ խնդրեց: Անմիջապես դրանից հետո նա Թալեաթի առաջարկության մասին խոսեց Հոլանդիայի դեսպանի հետ: Վերջինս խորհուրդ տվեց առաջարկությունը չընդունել[82]: Սեպտեմբերի 9-ին Վեստենենկն այցելեց Ռուսաստանի դեսպանին եւ նրան հաղորդեց Թալեաթի առաջարկը: Գիրսը խորհուրդ տվեց ընդունել: Նա ասաց, որ եթե Վեստենենկը հրաժարվի նոր պարտավորություններից, ապա դա հավասար կլինի պայմանագրի խզմանը: Դա թուրքերին հնարավորություն կտար հրաժարվել Վեստենենկի պայմանագրից, եւ ռեֆորմների հարցը կտապալվեր ամբողջությամբ: Այդ դեպքում ստիպված կլինեին ամեն ինչ նորից սկսել: Վեստենենկն ընդունեց Գիրսի փաստարկները[83]: Սեպտեմբերի 10-ին Վեստենենկը Թալեաթին տեղեկացրեց, որ ընդունում է նրա առաջարկը: Միաժամանակ թույլտվություն խնդրեց ընտանիքով Հոլանդիա մեկնելու, քանի որ Թալեաթն աշխարհում տիրող ճգնաժամային իրավիճակի պատճառով հետաձգում էր գեներալ-տեսուչների պաշտոնավարությունը: Թուրքական կառա-

վարությունը պետք է տեղեկացներ նրան, հենց որ պաշտոնավարությունը ցանկալի լիներ: Ստանալով Թալեաթի համաձայնությունը, Վեստենենկը սեպտեմբերի 14-ին ընտանյոք հանդերձ Հոլանդիա մեկնեց[84]:

Երբ Թուրքիան, դաշնակցելով Եռյակ միությանը, պատերազմի մեջ մտավ եւ հրաժարվեց կապիտուլյացիայից, ռեֆորմներն իրականացնելու մասին այլեւս խոսք էլ չէր կարող լինել:

Հղումներ

1. Djemal Pascha, Erinnerungen, München, 1992, S. 337f.
2. Wien, HHStA PA XII, 462 Djulfa, 25. Dezember 1912, W. 49.
3. Djemal Puscha, Erinnerungen, S. 339.
4. Wien, HHStA PA XXXVIII 357 Trapezunt, 7. Dezember 1912, Z. 61.
5. Wien, HHStA PA XII 462, Konstantinopel, 31. Dezember 1912, Nr. 98f.
6. Wien, HHStA PA XII 462 Petersburg, 11. Jänner 1913, Nr. 10.
7. Wien, HHStA PA XII 462 Wien, 21. Jänner 1913, p. d. Nr. 395.
8. Wien, HHStA PA XXXVIII 361 Trapezunt, 12. Jänner 1913, Z. 5.
9. Wien, HHStA PA XII 462 Trapezunt, 30. Jänner 1913, Z. 9.
10. Wien, HHStA PA XII Konstantinopel, 15. April 1913, Nr. 22/D.
11. Wien, HHStA PA XII 462 London, 9. Mai 1913, Nr. 46/1.
12. Wien, HHStA PA XII 462 Konstantinopel, 13. Mai 1913, Nr. 26/G.
13. Wien, HHStA PA XII 462 Konstantinopel, 15. Mai 1913, Nr. 27.
14. Wien, HHStA PA XXXVIII 361 Trapezunt, 25. Mai 1913, Z 61/P.
15. Նույն տեղում:
16. Wien, HHStA PA XII 462 London, 30. Mai 1913, Nr. 53/D.
17. Schollgen, "Imperialismus", München 1984, S. 360.
18. Wien, HHStA PA XII 463 Wien, 5. Juni 1913, Nr. 386.
19. Schollgen, "Imperialismus", München 1984, S. 360.
20. Նույն տեղում, S. 362.
21. Wien, HHStA PA XII 463 Rom, 6. Juni 1913, Nr. 338.
22. Wien, HHStA PA XII 463 Wien, 10. Juni 1913, Nr. 276.
23. Wien, HHStA PA XII 463 Jeniköj, 10. Juni 1913, Nr. 33/C.
24. Wien, HHStA PA XII 463 Petesburg, 15. Juni 1913, Nr. 211.
25. Նույն տեղում:
26. Wien, HHStA PA XII 463 Jeniköj, 23. Juni 1913, Nr. 311.
27. Wien, HHStA PA XII 463 Jeniköj, 10. Juni 1913, Nr. 33/D.
28. Նույն տեղում:
29. Նույն տեղում:
30. Wien, HHStA PA XII 463 Jeniköj, 19. Juni 1913, Nr. 34/D
31. Wien, HHStA PA XII 463 Jeniköj, 28. Juni 1913, Nr. 35/A.I.
32. Wien, HHStA PA XII 463 Jeniköj, 28. Juni 1913, Nr. 35/B.
33. Wien, HHStA PA XII 463 Jeniköj, 1. Juli 1913, Nr. 36/A
34. Wien, HHStA PA XII 463 Petersburg, 9. Juli 1913, Nr. 244.
35. Wien, HHStA PA XII 463 Jeniköj, 11. Juli 1913, Nr. 38/.
36. Wien, HHStA PA XII 463 Jeniköj, 11. Juli 1913, Nr. 38/C.
37. Wien, HHStA PA XII 463 Jeniköj, 11. Juli 1913, Nr. 38/B.
38. Wien, HHStA PA XII 463 Jeniköj, 11. Juli 1913, Nr. 38/B.
39. Wien, HHStA PA XII 462 Jeniköj, 22. Juli 1913, Nr. 41/E.
40. Wien, HHStA PA XII 462 Jeniköj, 22. Juli 1913, Nr. 41/E
41. Wien, HHStA PA XII 462 Smyrna, 14. August 1913, Nr. 45/P.
42. Wien, HHStA PA XII 462 Smyrna, 14. August 1913, Nr. 45/P.

43. Wien, HHStA PA XII 462 Smyrna, 14. August 1913, Nr. 45/P.
44. Wien, HHStA PA XII 462 Smyrna, 16. August 1913, Nr. 46/P.
45. Wien, HHStA BA Petersburg 33, Jeniköj, 12. August 1913, Nr. 46/E.
46. Wien, HHStA PA XII 463 Jeniköj, 12. August 1913, Nr. 46/E.
47. Wien, HHStA PA XII 463 Jeniköj, 21. August 1913, Nr. 48/C.
48. Wien, HHStA PA XII 463 Jeniköj, 22. Juli 1913, Nr. 41/F.
49. Wien, HHStA PA XII 463 Jeniköj, 22. Juli 1913, Nr. 41/F.
50. Wien, HHStA PA XII 463 Jeniköj, 2. September 1913, Nr. 50/E.
51. Wien, HHStA PA XII 463 Jeniköj, 2. September 1913, Nr. 50/E.
52. Wien, HHStA PA XII 463 Jeniköj, 2. September 1913, Nr. 50/E.
53. Wien, HHStA PA XII 463 Paris, 6. Dezember 1913, Nr. 105/G.
54. Wien, HHStA PA XXXVIII 358, Allepo, 15. Dezember 1913, Nr. 38res.
55. Wien, HHStA PA XXXVIII 358, Allepo, 15. Dezember 1913, Nr. 38res.
56. Mandelstam, Das armenische Problem, Berlin 1931, S. 30.
57. Wien, HHStA PA XII 464 Pera, 3. November 1913, Nr. 579.
58. Wien, HHStA PA XII 463 Konstantinopel, 29. Dezember 1913, Nr. 82/F.
59. Wien, HHStA PA XII 464 Pera, 3. November 1913, Nr. 579.
60. Wien, HHStA PA XII 463 Konstantinopel, 29. Dezember 1913, Nr. 82/F.
61. Wien, KAPras 47-1/33 Aleppo, 25. Februar 1914.
62. Wien, HHStA PA XXXVIII 365, Trapezunt, 29. Jänner 1914 Z8/P.
63. Kurt Ziemke, Die neue Türkei, Berlin 1930, S. 270.
64. Wien, HHStA PA XII 463 Konstantinopel, 9. Februar 1914, Nr. 10/P-E.
65. Wien, HHStA PA 463 Trapezunt, 30. Janner 1914, Z9-P.
66. Wien, HHStA PA XII 463 Konstantinopel, 2. März 1914, Nr. 15/P-H.
67. Wien, HHStA PA XII 463 Petersburg, 23. März 1914, Nr. 85.
68. Wien, HHStA PA XII 463 Berlin, 20. März 1914, Nr. 1216.
69. Wien, HHStA PA XII 463 Berlin, 20. März 1914, Nr. 1216
70. Wien, HHStA PA XII 463 Berlin, 4. April 1914, Nr. 117.
71. Wien, HHStA PA XII 463 Berlin, 4. April 1914, Nr. 117.
72. Wien, HHStA PA XII 463 Pera, 7. April 1914, Nr. 140.
73. Wien, HHStA PA XII 463 Pera, 15. April 1914, Nr. 149.
74. Wien, HHStA PA XII 463 Konstantinopel, 22. April 1914, Nr. 28/P-G.
75. Tagebücher von Westenenk, Institut für Armenische Fragen, München, 1986, S. 16.
76. Wien, HHStA PA XII 463 Konstantinopel, 16. Mai 1914, Nr. 35/P-G.
77. Wien, HHStA PA XII 463 Konstantinopel, 25. Mai 1914, Nr. 38/P-G.
78. Նույն տեղում:
79. Die Tagebücher von Westenenk, S. 42.
80. Նույն տեղում, S. 32f.
80. Wien, HHStA PA XII 463 Konstantinopel, 3. April 1914, Nr. 42/P-E.
82. Die Tagebücher von Westenenk, S. 69ff.
83. Նույն տեղում:
84. Նույն տեղում, S. 73.

4. ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԸ

Իտալիայի՝ Գերմանիային միանալը խախտեց հավասարակշռությունը Եվրոպայում: Այն երեք պատերազմները, որոնց մասին սըր Էդվարդ Գրեյն ասել է, թե «դրանք պատերազմներ էին, որոնք հայտարարվել էին Եվրոպային»՝ 1864-ի գերմանա-դանիական պատերազմը, 1866-ի գերմանա-ավստրիականը եւ 1870-ի գերմանա-ֆրանսիականը, հնարավոր դարձրին Գերմանիայի վերելքը դեպի մեծ տերություն[1]: Դրան ավելացավ այն, որ արեւելյան հարցը, որը սկսած 18-րդ դարից լուծում չէր գտել, լուրջ տարաձայնություններ էր առաջացրել եվրոպական հարաբերություններում: Ազգությունների պրոբլեմը եւ ռասայական մտածելակերպը մինչեւ Փոքր Ասիա էր հասել: Ռուս-թուրքական պատերազմը, որը ճնշված սլավոնական ժողովուրդների ազատագրման համար մղվող պատերազմ էր, ավարտվեց Բեռլինի կոնգրեսով: Բիսմարկն օգտվել էր այն անկստահությունից, որ սերմանել էր Ռուսաստանի եւ Անգլիայի միջեւ, այդ երկու տերությունների արանքը խցկվելու համար[2]: Մյուս կողմից Բիսմարկն օգտվեց առիթից Սադովայի փոխարեն իբրեւ հատուցում Ավստրիայի համար ճանապարհ բացելու դեպի Արեւելք, այդ նպատակով նա Աստրո-Հունգարիայի ենթակայության տակ դրեց Բոսնիան եւ Հերցեգովինան: Դրա հետեւանքով Ավստրո-Հունգարիան անխուսափելիորեն պիտի բախվեր Ռուսաստանի շահերի հետ Բալկանյան թերակղզում: 1908 թ. երիտթուրքական հեղափոխության եւ Ավստրո-Հունգարիայի կողմից Բոսնիայի եւ Հերցեգովինայի բռնակցման պատճառով իրադրությունը նկատելիորեն սրվեց: Ռուսաստանը բողոքեց, բայց ստիպված եղավ գիջել 1909 թ. վերջնագրից հետո[3]: Դրանով Գերմանիան հասավ այն բանին, որ Բոսնիան եւ Հերցեգովինան վերջնականապես տրվեցին Ավստրո-Հունգարիային: Հետեւանքը եղավ սլավոնականության համընդհանուր շարժումը գերմանացիների՝ դեպի Արեւելք շարժման դեմ:

Միաժամանակ գերմանացիների առաջին փորձերը Հեռավոր Արեւելքում եւ Խաղաղ օվկիանոսում, երբ Գերմանիան 19-րդ դարի վերջում ձեռք բերեց Սամոա կղզիներից մի քանիսը եւ ուզում էր հաստատվել Ֆիլիպիններում, հասցրին ընդհարումների ԱՄՆ-ի, Ռուսաստանի եւ Անգլիայի հետ: Գերմանացիների էքսպանսիոնիստական արեւելյան քաղաքականությունը եւս շատ էր անհանգստացնում ռուսներին ու անգլիացիներին: Վիլհելմ 2-րդը 1898 թ. Դամասկոս կատարած ուղեւորության ժամանակ իրեն հայտարարել էր 300 միլիոն մահմեդականների հովանավոր: Ռուսաստանն ու Անգլիան, որոնք բազմաթիվ մահմեդական հպատակներ ունեին, դրանում մարտահրավեր տեսան: Երբ 1899 թ. Գերմանիան Թուրքիայից ստացավ Բաղդադի երկաթու-

դու շինարարության կոնցեսիան, Ռուսաստանի եւ Ֆրանսիայի անվստահությունն ավելի մեծացավ: Իրադրությունն ավելի վատթարացավ, երբ գերմանացիները տիրացան առեւտրական կենտրոնների Հնդկաստանի ծովային ճանապարհին՝ Եմենում, Ադենում եւ Պարսկաստանի հարավային ծովափին: Գերմանիան սկսեց նավթահորեր հորատելու եւ ոռոգման աշխատանքներ անցկացնելու թույլտվություններ ստանալ Միջագետքում. դա ներխուժում էր նշանակում անգլիացիների շահերի ոլորտը: Երբ գերմանացիները գեներալ Գոլցի միջոցով ձեռնարկեցին թուրքական բանակի վերակառուցումը, իրադրությունն ավելի վտանգավոր դարձավ[4]:

Հզոր Թուրքիան կարող էր թուլացնել անգլիական գաղութներ Եգիպտոսի ու Հնդկաստանի անվտանգությունը եւ, բացի դրանից, կուժեղացներ այդ երկրներում ազգային շարժումները: Վտանգի տակ կդրվեր Եգիպտոսից Հնդկաստան կապը, որն ուզում էր ստեղծել Անգլիան՝ բռնակցելով Արաբիան եւ Պարսից ծոցը: Հզոր Թուրքիայի դեպքում Ռուսաստանը չէր կարողանա իրագործել բալկանյան երկրներ ու Դարդանելի նեղուց դուրս գալու եւ Թուրքահայաստանը գրավելու իր հին մտադրությունը:

Գերմանիայի կողմից Բաղդադի երկաթուղու շինարարության պատճառով տուժում էր եւ Ֆրանսիան, որն անգլիացիներից Սիրիայում ազատ գործելու իրավունք էր ստացել: Բացի դրանից, ֆրանսիացիները շատ միջոցներ էին ներդրել Թուրքիայում:

Առաջին համաշխարհային պատերազմից առաջ Գերմանիայի թուրքական քաղաքականության մասին Կ. Պոլսում Ավստրո-Հունգարիայի զինվորական կցորդ Յոզեֆ Պոմյանկովսկին իր հուշերում հետեւյալն է գրում.

«Գերմանական քաղաքականության վերջին նպատակները Թուրքիայում եւ Մերձավոր Արեւելքում մինչեւ պատերազմը ինձ համար որոշ չափով հանելուկ էին: Ինչ տեսնում եւ լսում էի, նշան էր այն բանի, որ գերմանացիները, թեեւ, անշուշտ, զգուշանում էին այդ խոստովանելուց, ձգտում էին դանդաղորեն գրավել ամբողջ թուրքական տարածքը պրոտեկտորատի կամ քաղաքական պայմանագրի միջոցով եւ, բացի դրանից, ունեին ինչ-որ այլ, մինչեւ Ասիայի խորքը, գուցե եւ մինչեւ Հնդկաստան հասնելու մտադրություններ»[5]:

Դրան ավելացավ նավատորմի ընդարձակումը: Գերմանական նավատորմի կցորդ Քյոպերը 1907-ի մարտի 14-ին հաղորդում էր Լոնդոնից.

«Գերմանիայի անընդհատ աճող ծովային հզորությունը մեծագույն խոչընդոտ է Անգլիայի քաղաքական գործողությունների համար: Սա է երկու ազգերի իրար հանդեպ անբարյացակամ վերաբերմունքի բուն պատճառը: Մյուս բոլոր հաճախ նշվող պատճառները՝ մրցակցությունն առեւտրում, արդյունաբերությունում եւ նավագնացությունում, դիրքորոշումն անգլո-բուրական պատերազմում, երկրորդական բնույթ ունեն»[6]:

Ֆրանսիան, Ռուսաստանն ու Անգլիան համախմբվեցին Գերմանիայի իշխանության ընդարձակման վտանգին դիմադրելու նպատակով: Գերմանիան ավելի էր սպառազինվում՝ ռազմական առավելության վրա հենվել կարողանալու նպատակով: Եռյակ համաձայնության երկրները ստիպված էին նույնն անել: Սպառազինման մրցավազքը չէր կարող անվերջ շարունակվել եւ չէր կարող այլ կերպ, քան պատերազմով ավարտվել: Այսուհետեւ դեպքեր էին տեղի ունենում, որոնք ամեն պահի կարող էին համաշխարհային պատերազմի բորբոքման առիթ հանդիսանալ: 1911 թ. Իտալիայի եւ Թուրքիայի միջեւ պատերազմ բռնկվեց Տրիպոլիի պատճառով, որտեղ թուրքերը պարտություն կրեցին: Թուրքերի պարտությունից քաջալերված՝ ճնշված բալկանյան պետությունները ոտքի ելան Թուրքիայի դեմ: 1913 թ. արյունահեղ պատերազմում նրանք թուրքերին գրեթե դուրս շպրտեցին Եվրոպայից: Անմիջապես դրանից հետո հաղթողները պատերազմեցին իրար դեմ՝ Հունաստանը, Սերբիան ու Ռումինիան՝ Բուլղարիայի դեմ: Լարվածությունը Ռուսաստանի եւ Ավստրո-Հունգարիայի միջեւ կտրուկ աճեց, երբ Ավստրո-Հունգարիան մտավ պատերազմի մեջ եւ կասեցրեց Սերբիայի հաղթանակը: Ամենուրեք սպառազինվում էին: Ծաղկում էր ռազմական արդյունաբերությունը, քանի որ արդեն կային վաճառահանման շուկաներ:

Այժմ արդյունաբերողներն ու գեներալներն աշխատում էին ձեռք-ձեռքի տված: 1913 թ. ռայխստագի սոցիալ-դեմոկրատական երեսփոխան Կարլ Լիբկնեխտը *«ներկայացրեց շատ հիմնավորված փաստաթուղթ՝ աշխարհի ամենամեծ ռազմական ձեռնարկության մասին, որը կաշառել էր ռազմական նախարարության պաշտոնյաներին, խիստ գաղտնի պետական փաստաթղթերի մասին, որոնք խորհրդավոր ճանապարհով հայտնվել էին Կրուպի փոխտնօրեններից մեկի չիրկիզվող պահարանում, Լայպցիգի մի խոշոր պատկերազարդ թերթի մասին, որը, միանալով գլխավոր շտաբի անդամների եւ զինամթերք արդյունաբերողների հետ, հատուկ հավելված էր սկսել հրատարակել, որում պետք է ռեկլամվեր նոր ռազմական ծրագրի նախագիծը, մի ռազմական ձեռնարկության տնօրենի մասին, որը պանգերմանական «Die Post» թերթին նյութեր էր տվել Ֆրանսիայի դեմ ամենակատաղի հարձակումների համար, եւ ապա գերմանական մամուլում հրապարակած այդ մարտակոչով հասարակական կարծիքը Ֆրանսիայում սաստիկ բորբոքելուց հետո այդ նույն սադրիչ հոդվածը զարմանալի մաքիավելիզմով օգտագործել էր ֆրանսիական մամուլում»[7]:*

Համաշխարհային պատերազմն անխուսափելի էր թվում: 1913 թ. փետրվարի 19-ին Վիլհելմ 2-րդը Բեռլինում Ավստրիայի դեսպանին ասել է, որ ինքը *«առաջվա պես այն կարծիքին է, որ վաղ թե ուշ եվրոպական պատերազմ է բռնկվելու, որի ժամանակ, ի վերջո, պայքար է սկսվելու գերմանների եւ սլավոնների միջեւ: Դրան նախապատրաստվելը պարտքն է բոլոր այն երկրների, որոնք գերմանական հոգեւոր մշակույթի դրոշակակիրներն են: Սակայն հարձակվող կողմը պետք է սլավոնները լինեն: Նա, ով կանխատեսում է այդ պայքարը, պետք է գիտակցի, որ դրա համար անհրաժեշտ է միավորել բոլոր ուժերը, օգտագործել բոլոր հնարավորությունները, սակայն դրա հա-*

մար ամենից առաջ անհրաժեշտ է, որպեսզի ժողովուրդները լիովին հասկանան համաշխարհային պատմության ընթացքը»[8]:

Այս լարված մթնոլորտում կատարվեց Սարաեւոյի արյունոտ չարագործությունը: 1914 թ. հունիսի 26-ին սերբ ազգայնականները սպանեցին Ավստրո-Հունգարիայի գահաժառանգ Ֆրանց Ֆերդինանդին: Պատմաբան Ֆրից Ֆիշերը գրում է այդ իրադարձության մասին.

«Մի կողմից անկեղծ սուգ էր տիրում, իսկ մյուս կողմից սուր հայացքի համար ակնհայտ էր, որ բավական լայն շրջաններ Ավստրո-Հունգարիայում բացահայտորեն թեթեւացած ողջունեցին իմպերիալիզմի եւ ֆեդերալիզմի ներկայացուցչի մահը, որը, ինչպիսին էլ լիներ, սլավոնական ժողովուրդների օգտին պիտի ծառայեր: Գերմանացիներն ու հունգարացիներն այն կարծիքին էին, որ Ֆրանց Ֆերդինանդը սպառնում էր իրենց իշխող դիրքին: Կայսր Ֆրանց Յոզեֆը գահաժառանգին չէր ներել նրա մորգանատիկ ամուսնությունը: Կար եւս մի երրորդ խումբ, որը ողջունում էր գահաժառանգի մահը: Սա ուզում էր օգտվել առիթից եւ պատերազմի միջոցով գերմանացիների օգնությամբ մեկընդմիշտ հաշիվ տեսնել Սերբիայի հետ: Սրա գլխավոր ներկայացուցիչը ավստրո-հունգարական գլխավոր շտաբի պետ բարոն Կոնրադ Ֆոն Հյոցենդորֆն էր»[9]:

Ֆրանց Ֆերդինանդի սպանությունը, ինչպես գրում էր գեներալ Շտյուռքը՝ Ավստրո-Հունգարիայի պատվիրակը գերմանական մեծ շտաբի կայանում, նախանշեց Ավստրո-Հունգարիայի անդամահատման սկիզբը:

«Բոլորս պարզ տեսնում էինք, որ այստեղ դիվային դիտավորությամբ հարված էր հասցվել միաժամանակ միապետությանը եւ դինաստիային, երկուսի դեպքում էլ հարվածը տեղ էր հասել: Սակայն այդ սպանության խորին իմաստը, այն փաստը, որ այն միայն սկիզբ էր, մեր դեմ սկսվող ավերիչ ծրագրի առաջին համարը, մենք հետո հասկացանք[10]:

Նրանք շատ ճիշտ հասկացան, որ Ավստրո-Հունգարիային ոչնչացնելու համար սկզբում հարկավոր էր ճանապարհից հեռացնել կայսերական տան այն անդամին, որը, կրկնակի իմաստով սարսափ պատճառելով, կանգնած էր նրանց ճանապարհին որպես գահի ամենաառաջին թեկնածու եւ որպես կրքոտ հայրենասեր, կայսրության փրկության համար հեռատես ծրագրեր ունեցող, բարձ ուժի տեր մարդ, այդ ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ եռանդով լեցուն»[11]:

Սադրիչների դերն ընդգծում էր «Reichpost» թերթի 1915 թ. մայիսի 28-ի համարի հոդվածներից մեկը.

«Դեռեւս համաշխարհային պատերազմից առաջ «Revue International de Societes»-ը իր 1914 թ. հուլիսի 20-ի համարում հիշեցնում էր, որ 1912 թ. սեպտեմբերի 15-ին հրապարակել էր շվեյցարացի մի մասնի հայտարարությունն այն մասին, որ վճռված է սպանել արքիդուքս Ֆրանց Ֆերդինանդին»:

Ինքը՝ Ֆրանց Ֆերդինանդը, գիտեր այդ մասին: Իր սպանությունից մի տարի առաջ նա պատմել էր Ավստրո-Հունգարիայի արտաքին գործերի ապագա նախարար Չեռնիին, որ մասոնները որոշում են ընդունել իր մահվան մասին[12]: Ավստրիական գահաժառանգի սպանությունը 1914-ի հունիսի 28-ին շատերի համար պատերազմ սանձազերծելու հարմար ու ցանկալի առիթ էր: 1914-ի հուլիսի 20-ին սերբական դեսպանորդ Յովանովիչը Վիեննայից Բելգրադ է գրում.

«Գահաժառանգի եւ նրա կնոջ աճյունների տեղափոխման պատճառով ես երեկ իջեցնել տվեցի իմ բնակարանի առջեւ դրոշը: Դռնապանը, վարձակալները, տան կառավարիչն ու ինքը՝ տանտերը, բողոքեցին եւ պահանջեցին հեռացնել դրոշը: Բացատրություններիցս օգուտ չկար, կանչեցին ոստիկանին, որը խժդժությունները կանխելու նպատակով խնդրեց դրոշը հանել: Բայց դրոշը մնաց, եւ այդ պատճառով այս գիշեր աղմկոտ ցույցեր տեղի ունեցան: Ոստիկանությունը վճռական միջոցներ ձեռք առավ, եւ ցուցարարները ոչ մի վնաս չպատճառեցին: Այսօրվա թերթերը, հատկապես կղերական-ժողովրդականները, «Սերբական դեսպանորդի սադրանքները» վերնագրով հոդվածներ հրապարակեցին, որոնցում ամբողջ պատմությունը ճշմարտությանը հակառակ նկարագրություն է ստացել: Ցուցարարներին սադրել էին կաթոլիկական «Reichpost» թերթի գլխավոր խմբագիր, դոկտոր Ֆունդերը եւ Հեռմենգիլդ Վագներն ու Լեոպոլդ Մանդլը, որոնք ավստրիական եւ գերմանական մամուլում հայտնի են որպես ամենամեծ սադրիչները Սերբիայի եւ սերբերի դեմ»[13]:

Երբ Ավստրո-Հունգարիայում սկսեցին բարձրաձայն արտահայտել Սերբիայի վրա հարձակում կատարելու ցանկությունը, հուլիսի 4-ին արտաքին գործերի նախարարությունը Վիեննայում ստացավ Գերմանիայի՝ Ավստրո-Հունգարիային անվերապահորեն օգնելու ոչ պաշտոնական համաձայնությունը, ինչ էլ որ Դանուբյան կայսրությունը Սերբիայի դեմ ձեռնարկելիս լիներ: Որքան շուտ Ավստրո-Հունգարիան հասցներ հարվածը, այնքան ավելի լավ[14]: Ինչպես Գերմանիայում, այնպես էլ Ավստրո-Հունգարիայում, այն կարծիքին էին, որ Ռուսաստանը ռազմական տեսակետից դեռ բավականաչափ պատրաստ չէր պատերազմի մեջ մտնելու համար: Այս փաստարկը շեշտում էին հատկապես գերմանական արդյունաբերողները, որոնք զբաղվում էին ռազմական մատակարարումներով: Բեռլինում Բելգիայի դեսպան Բեյեն հաղորդում է. *«Կրուպը վստահեցնում է, որ ռուսական հրետանին շատ հեռու է կազմ ու պատրաստ լինելուց, մինչդեռ գերմանականը երբեք ավելի լավ վիճակում չի եղել»[15]:*

Հուլիսի 8-ին Վիեննայում Գերմանիայի դեսպան Չիրշկին կայսեր հանձնարարությամբ այցելեց Բեռխթոլդին՝ մեկ անգամ եւս վճռական ասելու, որ Բեռլինում սպասում են Ավստրո-Հունգարիայի գործողություններին Սերբիայի դեմ, եւ որ Գերմանիայում չեն հասկանա, եթե առիթը հարվածի համար չօգտագործվի[16]: Հակառակորդի ռազմական թուլության սխալ գնահատականը եւ դրանից բխող պատերազմի ցան-

կությունը հաստատում է նաեւ գեներալ Շտյուռքը.

«Ով ինձ նման առիթ է ունեցել մեր գործողություններից քիչ առաջ իրար հետեւից զրուցելու Կոնրադի եւ ապա Մոլթքեի հետ, նրա ուշադրությունից չէր կարող վրիպել, թե որքան տարբեր էին նրանց կարծիքները ռուսների դեմ պատերազմում մեր հեռանկարների մասին: «Եվ տես, որ գերմանացիները մեզ չափից երկար ժամանակով դժվար կացության մեջ չթողնեն»,- սրանք էին Կոնրադի հրաժեշտի խոսքերը, երբ ինձ Գերմանիա էր ուղարկում: Դրանցում կար ամեն ինչ՝ բացի հուզմունքից եւ հաղթանակի հույսից: «Չէ՞ որ դուք լավ բանակ ունեք, դուք կջարդեք ռուսներին», -հակառակ դրան ասում էր Մոլթքեն, երբ մենք կայզեր շքախմբով Բեռլինից Արեւմտյան ճակատ էինք գնում: Մեր բանակի մասին ամենալավ կարծիքի դեպքում անգամ Մոլթքեն նման հույսեր չէր տածի, եթե ճիշտ գնահատեր ռուսներին: Ու նաեւ այն դեպքում, եթե ճիշտ գնահատեր մեր պաշտպանունակությունը»[17]:

Գերմանացիները Ավստրո-Հունգարիայից պահանջում էին անընդունելի սուր ձեւակերպված վերջնագիր Սերբիային: Վերջնագրի առանձին կետերը Գերմանիայի դեսպանը մանրամասնորեն քննարկեց Բեռխթոլդի հետ, հուլիսի 12-ին գերմանական կառավարությունը տեղյակ էր վերջնագրի տեքստին եւ հանձնման ժամկետին[18]:

Հուլիսի 23-ին ավստրիական կառավարությունը վերջնագիր ներկայացրեց Սերբիային: *«Դա դիվանագիտական քայլ է, որը ոչ նոր գործողություններ է թույլ տալիս, ոչ էլ անգամ մտքերի նոր փոխանակություն»*, հայտարարեց կոմս Տիսցան՝ հունգարական պրեմիեր-մինիստրը, մամուլի ներկայացուցիչներին[19]:

«Nepszava» թերթը՝ հունգարական սոցիալ-դեմոկրատիայի կենտրոնական օրգանը, գրում է.

«Այս վերջնագիրը ներայացվել է ոչ թե այն բանի համար, որպեսզի Սերբիան պայմաններն ընդունի, այլ որպեսզի մերժի դրանք եւ դրանով իսկ բաղձալի առիթ տա ոչնչացման համար»[20]:

Մինչդեռ սադրիչներն այլ հարցով էին մտահոգված. ի՞նչ անել, եթե Սերբիան ընդունի վերջնագիրը: Գերմանիայի դեսպանը Վիեննայում զեկուցում է Բեռլին.

«Կոմս Բեռխթոլդը մտահոգված է գլխավորապես այն պատճառով, որ եթե սերբերը իսկապես ընդունեն նրա բոլոր պահանջները, ապա դա բնավ էլ նրա ուզած լուծումը չի լինի: Նա արդեն մտածում է, թե ի՞նչ այլ պահանջներ դնի, որպեսզի բոլորովին անհնար համարի դրանց ընդունումը»[21]:

Վերջնագրի ժամկետը երկարացնելու մասին Ռուսաստանի ե Անգլիայի խնդրանքը Ավստրո-Հունգարիան եւ Գերմանիան մերժեցին:

Երբ Սերբիան չընդունեց վերջնագրի միայն մի կետը, համարվեց, որ ժամանակը եկել է, եւ պատերազմի մեքենան ընթացքի մեջ դրվեց: Այժմ հարկավոր էր, որ կայսր Ֆրանց Յոզեֆը պատերազմ հայտարարեր Սերբիային: Հուլիսի 27-ին Բեռխթոլդը ստացավ Ֆրանց Յոզեֆի ստորագրությամբ Ավստրիայի պատերազմի հայտարարությունը Սերբիային: Բեռխթոլդը կեղծ հեռագիր էր ուղարկել տվել Բադ Իշլ, որում հաղորդվում էր ավստրիական սահմանապահ գումարտակի վրա սերբերի հարձակման մասին[22]:

Ասում են, թե միապետը հարցրել է. *«Ի՞նչ: Արդեն այդքան արյո՞ւն է հոսել, այդ դեպքում պատերազմն, անշուշտ, անխուսափելի է դարձել»*[23]:

Հուլիսի 28-ին Ավստրո-Հունգարիան Սերբիային պատերազմ հայտարարեց: Հուլիսի 31-ին Ռուսաստանը լրիվ զորահավաք հայտարարեց: Գերմանիան օգոստոսի 1-ին պատերազմ հայտարարեց Ռուսաստանին, իսկ օգոստոսի 3-ին՝ Ֆրանսիային: Օգոստոսի 4-ին գերմանացիները ներխուժեցին Բելգիա: Նույն օրը Անգլիան պատերազմ հայտարարեց Գերմանիային: Եվ այսպես սկսվեց առաջին համաշխարհային պատերազմի մեծ սպանդը:

Առաջին աշխարհամարտի պատճառների մասին շատ է գրվել: Կարեւոր է թվում Կ. Պոլսում Ավստրո-Հունգարիայի դեսպան մարկգրաֆ Պալավիչինիի կարծիքը, որն Ավստրո-Հունգարիայի արտաքին քաղաքականության լավագույն գիտակներից էր: Կ. Պոլսում Ավստրո-Հունգարիայի զինվորական կցորդ Պոմյանկովսկին գրում է իր հուշերում.

*«Հետաքրքրական էր պրն դեսպանի կարծիքն այն ճակատագրական իրադրության ծագման մասին, ինչը միապետությանն, ի վերջո, Սերբիայի հետ զինված ընդհարման հասցրեց: Ըստ Պալավիչինիի՝ Բոսնիայի եւ Հերցեգովինայի կոմս էհռենթալի կողմից իրագործած բռնակցումը ավստրո-հունգարական քաղաքականության հիմնական սխալն էր եւ բոլոր չարիքների սկիզբը: Դեսպանի կարծիքով բոլորովին ահ

տերազմը մեզ համար շատ ավելի ծանր կլիներ, մեզնից շատ ավելի զոհեր կպահանջվեին, եւ գուցե նրա ելքն ավելի կասկածելի լիներ»[25]:

Փաստն այն է, որ Սարաեւոյի մահափորձից կարճ ժամանակ անց Գերմանիան օգտվեց ավստրո-սերբական տեղային կոնֆլիկտից, նպատակ ունենալով պատերազմի միջոցով կանխել արտաքին վտանգը[26]:

Երբ Վիեննայի պատերին փակցրին պատերազմական դրության մասին հաղորդումը, քաղաքը եռում էր հիստերիկ հայրենասիրությամբ:

Մի ամերիկացի դիտորդ նշում է, որ *«... ամբողջ քաղաքն ուրախությունից ասես խելագարված լիներ: Բոլորովին անծանոթ մարդիկ գրկախառնվում էին: Ցրվել էր նվաստացումների, արհամարհանքի մղձավանջը, որը տարիներ շարունակ կուլ էին տալիս դեղի նման»*[27]:

Բեռլինում պատերազմի լուրն ընդունվեց մի բերկրանքով, որն այստեղ ավելի մեծ էր, քան այլուր: *«Գերմանիայում համընդհանուր կարծիքն այն է, որ սպառազինման տարիներն այժմ պտուղ պիտի տան»*,- գրում էր Միացյալ Նահանգների դեսպան Ջեյմս Ու. Ջերարդը[28]:

Հղումներ

1. Jacques Bainville, "Frankerichs Kriegsziel", Hamburg, 1940.
2. Նույն տեղում, S. 157.
3. Նույն տեղում, S. 163.
4. Fritz Fischer "Griff nach der Weltmacht", Düsseldorf 1961. S. 28f.
5. Pomiankowski, "Der Zusammenbruch", S. 51.
6. Lutz, "Lord Gray", S. 133.
7. Tylor "Der Untergang", S. 178.
8. Fischer "Griff", S. 41.
9. Նույն տեղում, S. 60.
10. Joseph Graf Stürghk, "Im Deutschen Großen Hauptquartier", Leipzig, 1921, S. 153.
11. Joseph Graf Stürghk, "Politische und militärische Erinnerungen", Leipzig, 1922, S. 70.
12. Ottokar Graf Czernin, "Im Weltkieg", Berlin, 1919, S. 58.
13. Wien, HHStA PA 1969, Wien, 10. Juli 1914, Nr. 11.
14. Fritz Fischer, "Griff", S. 62.
15. Նույն տեղում, S. 70.
16. Նույն տեղում, S. 67.
17. Strüghk, "Im Deutschen", S. 159
18. Fritz Fischer, Egmont Zechlin, "Ester Weltreg: Ursachen, Entstehung und Krigsziele", Göttingen o. S., S. 34.
19. Paul Frölich, "10 Jahre Krieg und Bürgerkrieg", Berlin, 1924, Band I, S. 49.
20. Նույն տեղում:
23. Emil Seeliger, "Hotel Sacher", Berlin, 1939, S. 191.
24. Joseph Pominkowski, "Der Zussammenbruch", S. 43.
25. Paul Rohrbach, "Der Krieg und die deutsche Politik", Dresden, 1914, S. III.
26. Fischer, Zechlin, "Erster Weltkrieg", S. 199.
27. Taylor, "Der Untergang", S. 252-256.
28. Նույն տեղում:

5. ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԸ ԵՎ ՀԱՅԵՐԸ

Թուրքիան արդեն 1914 թ. կազմալուծման գործընթաց էր ապրում: Չնայած դրան, պատերազմի սկզբին նրա չեզոքությունն ապահովելու համար, դաշնակիցները նրան մի առաջարկություն արեցին, որը *«բրիտանացիների աչքում ամենանպաստավորն էր»*[1], գրում է Ուինստոն Չերչիլը: Ֆրանսիան, Ռուսաստանն ու Անգլիան Թուրքիային երաշխավորում էին նրա բոլոր տարածքների լիակատար անձեռնմխելիությունը[2]: Սակայն օսմանյան պլանների ամենաէական կետը ռուսական վտանգից ազատվելն էր, այն էլ՝ Գերմանիայի օգնությամբ: Այդ գաղափարի շարժիչ ուժը Էնվեր փաշան էր, Գերմանիայում ուսում ստացած մի ենթասպա, *«որի սիրտն ամբողջովին Թուրքիային էր պատկանում»*[3]:

Նախքան Ավստրո-Հունգարիայի՝ Սերբիային պատերազմ հայտարարելը, Կ. Պոլսում արդեն գաղտնի բանակցություններ էին ընթանում Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի եւ Թուրքիայի միջեւ: Հարկավոր էր ապահովել Թուրքիայի դիրքը պատերազմի սկզբում: Պատերազմի դեպքում Կովկասում խռովություններ հրահրելու պլաններ էին մշակվում: Պալավիչինին 1914 թ. հուլիսի 20-ին հաղորդում է.

«Ես այսօր զրույց ունեցա Էնվերի հետ: Նա ասաց, որ Թուրքիան 20 օրում կարող է 200 հազարանոց լավ զինված զորք տրամադրել, իսկ էլի մի ամսում՝ եւս 100 հազար հոգի: Նա հասկացրեց, որ Թուրքիան, եթե Ռուսաստանը ներքաշվի պատերազմի մեջ, ի վիճակի կլինի լուրջ ապստամբության հրահրելու Ռուսաստանի եւ Ադրբեջանի մահմեդական ազգաբնակչությանը»[4]:

Երբ 1914 թ. հուլիսի 27-ին Թուրքիան Գերմանիային առաջարկեց պաշտպանողական ու հարձակողական գաղտնի դաշինք՝ գերմանացիներն առաջարկությունն անմիջապես ընդունեցին, եւ օգոստոսի 2-ին դաշնագիրը ստորագրվեց[5]: Թուրքիան սկսեց պատերազմական նախապատրաստությունները:

Երբ պատերազմը բռնկվեց, գեներալ-գնդապետ Մոլթքեն եւ գեներալ Կոնրադը պահանջեցին, որ Թուրքիան որեւէ բան ձեռնարկի Կովկասյան ռազմաճակատում ռուսների ուժերը կաշկանդելու համար[6]: Կ. Պոլսում Գերմանիայի դեսպան Վանգենհայմը եւ Պալավիչինին աշխատում էին ստացած հրահանգների հիման վրա: Գերմանացիների եւ ավստրիացիների բանակցությունները Բ. Դռան հետ Ռուսաստանի դեմ համատեղ գործողությունների մասին, պտուղ տվեցին: Երիտթուրքական կառավարությունը էմիսարներ ուղարկեց երկրի սահմանները, որոնք Անտանտի դեմ սրբազան պատերազմ էին պրոպագանդում եւ հրահրում մահմեդական բնակչությանը[7]:

Քրիստոնյաներին, գերազանցապես հայերին եւ հույներին, նկատելիորեն ան-

հանգստացրեց սրբազան պատերազմի հռչակումը, որը 1914 թ. օգոստոսի 15-ին Վիլհելմ 2-րդ կայսրը պահանջել էր Էնվեր փաշայից[8]:

Նրանք այս գործողությունների հետեւում տեսնում էին գերմանացիների եւ Ավստրո-Հունգարիայի շահերը: Դա քրիստոնեական բնակչության մեջ Գերմանիայի եւ Ավստրո-Հունգարիայի նկատմամբ աննպաստ ու չարակամ տրամադրություններ առաջացրեց[9]: Սրբազան պատերազմն անհանգստացրեց նաեւ ԱՄՆ-ի եւ Անգլիայի դեսպաններին: Վանգենհայմի հետ զրույցի ժամանակ 1914-ի օգոստոսի կեսերին ամերիկյան դեսպանը նշում է Թուրքիայում քրիստոնյաների ջարդի վտանգը: *«Քանի դեռ Անգլիան չի գրոհում Դարդանելը կամ որեւէ թուրքական նավահանգստային քաղաք, անհանգստանալ պետք չէ»*,- պատասխանել էր Վանգենհայմը:-*«Սակայն հակառակ դեպքում ոչինչ հնարավոր չէ երաշխավորել»*[10]: Վանգենհայմի պատասխանը նման է սպառնալիքի. քրիստոնյաների ջարդեր՝ թուրքական նավահանգիստների գրոհի դեպքում: Հետագայում Վանգենհայմի սպառնալիքն իրականացավ:

Հայերի համար սրբազան պատերազմը ռազմարշավ էր նշանակում Թուրքիայի քրիստոնյաների, հատկապես իրենց դեմ: Հայերի հալածանքը, եթե չլիներ եվրոպական որեւէ մեծ տերության օգնությունը, ավերիչ հետեւանքներ կարող էր ունենալ: Օգնել կարող էին միայն Գերմանիան եւ Ավստրո-Հունգարիան: Բայց հենց նրանք էլ Թուրքիայի դաշնակիցներն էին, եւ հենց Գերմանիան էր պահանջել Թուրքիայից՝ սրբազան պատերազմ հայտարարել: Գերմանիան նպատակ էր դրել հեղափոխականացնելու իսլամական աշխարհը: Դրանով պետք է սասանվեր Բրիտանական կայսրությունը Հնդկաստանում եւ Եգիպտոսում, ինչպես եւ Ռուսական կայսրությունը՝ Կովկասում եւ Միջին Ասիայում: Պանիսլամացման այդ գաղափարը 1898 թ. առաջադրել էր գերմանացի գիտնական ու դիվանագետ Մաքս ֆոն Օպենհայմը: Այս տեսությամբ զինված՝ Վիլհելմ 2-րդը 1898 թ. Բաղդադում իրեն հայտարարել էր մահմեդականների հովանավոր: Օպենհայմը 1914 թ. սեպտեմբերին մի ընդարձակ հուշագրով սրբազան պատերազմի ու պանիսլամիզմի քարոզչությունը համարեց իսլամական աշխարհը հեղափոխականացնելու ամենաազդեցիկ զենքը[11]: Իսկ Կովկասում խռովություններ հրահրելու համար թուրքերին, ի միջի այլոց, հարկավոր էին հայերը: Երբ դաշնակցությունն ամռանը Էրզրումում ժողով հրավիրեց Եվրոպայի իրավիճակը քննելու համար, երիտթուրքերը որպես դիտորդ Էրզրում ուղարկեցին կոմիտեի երկու անդամների՝ Օմեր Նաջիին եւ դոկտոր Բեհաեդին Շեքիրին: Թուրքերը ջանում էին համոզել դաշնակցության ղեկավարներին Թուրքիայի պատերազմի մեջ մտնելու դեպքում ապստամբության հրահրելու Կովկասի հայերին: Պետք է ասել, որ միակ հայկական կազմակերպությունը Թուրքիայում, որն ի վիճակի էր ղեկավարել հայ ժողովրդին, Հայ Հեղափոխական Դաշնակցությունն էր: Նրանց ղեկավարներից շատերը երիտթուրքական «Միություն եւ առաջադիմություն» կուսակցության անդամներ էին, մի քանիսը երիտթուրքական ղեկավարների մտերիմ բարեկամներ էին: Դաշնակցականները մերժեցին երիտթուրքերի առաջարկությունը: Նրանք չէին ուզում վտանգի ենթարկել իրենց հայրենակիցներին Կովկասում[12]:

Էրզրումի կոնգրեսում միաձայն որոշում ընդունվեց, որ պատերազմի դեպքում թուրքահայերը որպես հավատարիմ հպատակներ, կպաշտպանեն Թուրքիայի սուվերենությունը ցանկացած թշնամուց[13]:

Երիտթուրքերին մերժելուց հետո հայերը վախենում էին, հատկապես երբ գավառներում տեղական իշխանությունների հարձակումներ տեղի ունեցան, որ թուրքական կառավարությունը նրանց չի վստահի եւ գուցե պատժի դրա համար[14]:

Հայերին հանգստացնելու նպատակով պրոֆեսոր Ակնունին, որը դաշնակցության ղեկավարներից էր եւ Թալեաթ բեյի անձնական բարեկամը, այցելում է վերջինիս եւ նրա հետ քննարկում հայերի վիճակը գավառներում: Թալեաթը հանգստացնում է նրան եւ Էրզրում մի հեռագիր է ուղարկում՝ կարգադրելով, որ հայերի եւ, մասնավորապես, դաշնակիցների հետ լավ վարվեն[15]:

Դրանից հետո դաշնակցության կուսակցության օրգան «Ազատամարտ» թերթում սեպտեմբերի 29-ին հրապարակվում է մի հանգստացուցիչ հոդված, որում ասվում էր, թե կառավարությունը հիմք չունի հայերին չվստահելու, այլ հակառակը՝ պետք է ճանաչի նրանց հավատարմությունը, քանի որ հայերը պատրաստ են կատարելու իրենց՝ օսմանյան հպատակների պարտքը հայրենիքի պաշտպանության համար:

Տեղական իշխանությունների հարձակումների մասին թերթը գրում է, որ դրանք կենտրոնից չեն բխում եւ ենթադրում է, թե պատճառը լրագրողների զրպարտիչ հաղորդագրություններն են[16]:

Երբ ռուս-թուրքական պատերազմից խուսափել այլեւս հնարավոր չէր, դաշնակցության բյուրոն ստիպված էր հայ ժողովրդին պարզաբանել գալիք իրադարձությունները: Հոկտեմբերի 10-ին կենտրոնական օրգանում հրապարակվեց մի հայտարարություն հետեւյալ բովանդակությամբ.

«Ութերորդ համագումարը ժամանակին սկսեց եւ վերջացրեց իր աշխատանքը: Որոշումների կատարումը դրված է տեղական կազմակերպությունների վրա, որոնց ուշադրությունը հրավիրվում է իրադրության լրջության վրա, ինչը պատերազմի հետեւանք է: Այժմ ավելի, քան երբեք, անհրաժեշտ է լարել բոլոր ուժերը՝ ժողովրդին դժբախտությունից պահպանելու համար: Պետք է խուսափել միջադեպերից եւ քաղաքական թյուրիմացություններից բնակչության տարբեր շերտերում»[17]:

Թեեւ թուրքերը գերմանացիների հետ 1914 թ. օգոստոսի 2-ին ստորագրած համաձայնագրում պարտավորվել էին ակտիվանալ, հենց որ Գերմանիան եւ Ռուսաստանը պատերազմական դրության մեջ գտնվեն, սակայն նրանք վարանում էին: Պատճառն այն էր, որ թուրքական շատ նախարարներ, ամենից առաջ Մեծ վեզիր Սաիդ Հալիմ փաշան, դեմ էին Թուրքիայի պատերազմի մեջ մտնելուն[18]:

Սեպտեմբերի կեսերին Ավստրո-Հունգարիան եւ Գերմանիան շտապեցնում էին

Թուրքիային Ռուսաստանի դեմ պատերազմական գործողություններ սկսելու: Նրանք դրա համար ամենահարմար միջոց էին համարում նավատորմի օգտագործումը Սեւ ծովում[19]: Քանի որ թուրքական կառավարությունը շարունակում էր վարանել, Վանգենհայմը սպառնում էր, որ «Գյոբեն» եւ «Բրեսլաու» գերմանական նավերը, որոնք իբր թե գնել էր Թուրքիան, գերմանական դրոշի տակ կուղարկվեն Սեւ ծով[20]: Գերմանիան դրամով էլ էր ուզում գրավել թուրքական կաբինետին: 1914 թ. հոկտեմբերի 10-ին Պալավիչինին զեկուցում է.

«Գերմանական կողմից իմացա, որ այսօր երեկոյան Էնվեր փաշայի, Թալեաթ բեյի ու Ջեմալ բեյի միջեւ գաղտնի քննարկում է տեղի ունենալու, որի ժամանակ Ջեմալին, որի դիրքորոշումը մինչեւ հիմա լրիվ պարզ չէ, ստիպելու են հստակորեն արտահայտվել՝ արդյո՞ք միանալու է այն կուսակցությանը, որը գլխավորում է Էնվեր փաշան: Ինչպես նաեւ իմացա, որ դրամի հարցն այստեղ մեծ դեր է խաղում: Էնվեր փաշային գերմանական կառավարությունը խոստանում է թշնամուն գրոհելու դեպքում 100 մլն ֆրանկի փոխառություն եւ բացի դրանից այն 300 հազար թուրքական ֆունտի գումարի իրացումը, որը գտնվում է այստեղի գերմանական բանկերից մեկում»[21]:

Հոկտեմբերի 13-ին Պալավիչինին արդեն հաղորդում էր, որ *«քննարկումը Էնվեր փաշայի, Թալեաթի, Հալիլ բեյի եւ Ջեմալ փաշայի միջեւ, որի ընթացքում վերջինիս կարողացան լրիվ գրավել իրենց կողմը, կայացավ կիրակի օրը իմ գերմանացի կոլեգաների հետ միասին: Այդ ժամանակ ստորագրվեց մի բանաձեւ, ըստ որի Թուրքիան անմիջապես հարված կհասցնի, հենց որ գերմանացիների խոստացած 100 մլն ֆրանկը եւ 2 մլն ֆունտը տեղ հասնեն»*[22]:

Երբ Թուրքիան զորահավաք է հայտարարում, իշխանություններն օգտվում են իրադրությունից, որպեսզի բռնագրավումների պատրվակով կողոպտեն հայ ժողովրդին: «Ազատամարտի» հոկտեմբերի 20-ի համարում կարդում ենք.

«Իմացել ենք, որ իրավիճակը երկրի ներսում օրեցօր վատթարանում է: Համընդհանուր զորահավաքի հետեւանքով պաշարողական դրություն է հայտարարվել: Դրանից հետո իրավիճակը փոխվել է: Հայերը հնազանդվել են զորահավաքի հրամանին: Մենք արել ենք, ինչ որ կարող էինք, եւ խորհուրդ ենք տվել, որ յուրաքանչյուր հայ կատարի օսմանյան հպատակի իր պարտքը: Այնուամենայնիվ, ինչպես եւ թուրքերի մեջ, մեր ժողովրդի մեջ էլ եղան մարդիկ, որոնք չհնազանդվեցին զորահավաքի հրամանին: Կառավարությունը նրանց դեմ խիստ միջոցներ է ձեռք առել: Նրանց, ովքեր չեն ներկայանում, պատժում են՝ այրելով նրանց տները: Դասալիքներին գնդակահարում են: Ցավոք, այդ գնդակահարություններից տուժում են նաեւ բոլորովին անմեղ մարդիկ: Վանի վիլայեթում նման հինգ դեպք է եղել: Նման դեպքեր եղել են նաեւ Կիլիկիայում»[23]:

Հայերի հալածանքներն արդեն սկսվել էին: Ի հայտ էին գալիս նրբազան պատերազմի հետեւանքները: Թուրքական կառավարությանը կատարված փաստի առաջ

կանգնեցնելու նպատակով, գերմանացիները որոշեցին Էնվեր փաշայի եւ Թալեաթ բեյի օգնությամբ նախաձեռնությունն իրենց ձեռքը վերցնել: Հոկտեմբերի 29-ին գերմանական «Գյոբեն» եւ «Բրեսլաու» հածանավերը, որոնք ձեւականորեն թուրքերի սեփականությունն էին դարձել, առանց պատերազմի հայտարարության գնդակոծում են ռուսական Թեոդոսիա եւ Նովոռոսիյսկ նավահանգիստները[24]:

«Գյոդենի» եւ «Բրեսլաուի»՝ ձեւականորեն թուրքերի սեփականություն դառնալը, Կ. Պոլսում հոլանդական հյուպատոսի վկայության համաձայն, Վանգենհայմի եւ Լիման Ֆոն Զանդերսի հնարքն էր գերմանական նավերը Սեւ ծով բերելու նպատակով[25]: Երբ այդ գրոհի մասին լուրը թուրքական պառլամենտ է հասնում, բոլոր երեսփոխանները սասիկ զարմանում են: Սաիդ Հալիմ փաշան՝ Մեծ վեզիրը, ուզում է հրաժարական տալ, բայց մյուս նախարարները նրան այդ քայլից ետ են պահում[26]: Ռուսական նավահանգիստների թուրքական գրոհից հետո 1914 թ. նոյեմբերի 5-ին դաշնակիցները Թուրքիային պատերազմ են հայտարարում:

Նոյեմբերի 5-ին Պալավիչինին հաղորդում է.

«Այսօր պարզ երեւում է, որ ծովակալ Սուխոնը գործել է մանրամասն մշակված պլանով: Այս առումով պաշտոնական կոմյունիկեները ճշմարտությունը չեն ասում: Ռուսների գրոհի մասին, ընդհանրապես, խոսք էլ լինել չէր կարող: Երբ ես անցյալ կիրակի Ենիքյոյում այցելեցի իշխան Հալիմ փաշային, նա ինձ կտրուկ ասաց, որ անհանդուրժելի է, երբ որեւէ գերմանացի ծովակալ այս ձեւով վճռում է Թուրքիայի ճակատագիրը»:

Ապա Պալավիչինին անցնում է գերմանացիների քաղաքականությանը եւ ասում է, որ նպատակահարմար կլիներ, եթե գերմանացիները զգուշությամբ գործեին, *«որպեսզի չստեղծվի այն տպավորությունը, թե Գերմանիան ուզում է Թուրքիային ամբողջությամբ զրկել ինքնուրույնությունից: Այդ դեպքում հեշտությամբ հնարավոր կլինի պատկերացնել, թե Թուրքիայում մի գեղեցիկ օր, այս կամ այն եղանակով կանհետանան Էնվեր փաշան կամ Թալեաթ բեյը»*:

Պալավիչինին քննադատում էր նաեւ սրբազան պատերազմը.

«Այն կետը, որը եւս վտանգավոր եմ համարում, Էնվեր փաշայի՝ իսլամական բնակչության կրոնական մոլեռանդ զգացմունքները որպես գործիք օգտագործելու ակնբախ մտադրությունն է: Լսել եմ, թե շեյխ Ուլ Իսլամը ֆետվա է արձակել, որը հրապարակվել է Մեքքայում, ըստ որի բոլոր լավ մահմեդականները պարտավոր են ռուսներին, անգլիացիներին ու ֆրանսիացիներին, որպես իսլամի թշնամիների, սպանելու: Իմ այստեղի երկարամյա փորձից ելնելով, ենթադրում եմ, որ նման ֆետվան, ի տարբերություն որեւէ փոքր մարզի կամ քաղաքի քրիստոնյա ազգաբնակչության դեմ տեղական սադրանքների, մեծ ազդեցություն ունենալ չի կարող: Սակայն, եթե այդ սադրանքները մեծ մասշտաբով հետեւանքներ ունենան, ապա դրանք վերին աստիճանի վտանգավոր կլինեն, որովհետեւ այդ հետեւանքների մեղքը կրնկնի որպես

սաղրիչ հանդես եկող Գերմանիայի վրա: Համոզված եմ, որ հնարավոր ջարդերն ամենավատ տպավորությունը կստեղծեն չեզոք երկրներում, հատկապես Ամերիկայում ու Իտալիայում»[27]:

Համիդյան ժամանակների հայկական ջարդերից եւ երիտթուրքական հայկական քաղաքականությունից հետո Պալավիչինին լավ էր պատկերացնում, թե սրբազան պատերազմն ինչ հետեւանքներ կունենար հայերի համար

Հղումներ

1. Winston S. Churchill, "Die Weltkrise 1911-1914", Zürich 1947, Band I. S. 405.
2. Նույն տեղում:
3. Նույն տեղում, S. 407.
4. Wien HHStA PA I. 552 Jeniköj 20. Juli 1914, Nr. 338.
5. Churchill, "Die Weltkrise", S. 409.
6. Felix Guse, "Die Kaukasus-Front im Weltkrieg bis zum Frieden von Brest-Litowsk", Leipzig 1940, S. 34.
7. Wien, HHStA PA I. 941 Wien, 18 August 1914, Nr. 219.
8. Wolfdieter Bihl, "Die Kaukasuspolitik der Mittelmächte", Wien, 1975, Band I, S. 41.
9. Wien, HHStA PA Trapezunt, 21 September 1914, Z 62/P.
10. Wien, HHStA PA III 171 Jeniköj, 26. August 1914, Telegr. Nr 494.
11. Fischer, "Griff", S. 143.
12. Lepsius, "Der Todesgang", S. 177.
13. Նույն տեղում, S. 178.
14. Նույն տեղում, S. 183.
15. Նույն տեղում:
16. Նույն տեղում, S. 183. f.
17. Նույն տեղում:
18. Izzet Pascha, "Denkwürdigkeiten des Marschal Izzet Pascha", Leipzig 1927, S. 266.
19. Wien, HHStA PA I 1941 Konstantinopel, 18. September 1914, Nr. 605.
20. Wien, HHStA PA I 1941 Konstantinopel, 18. September. 1914, Nr. 605.
21. Wien, HHStA PA I 1941, 10. Oktober 1914, Nr. 688.
22. Wien, HHStA PA I 1941 Pera, 13 Oktober 1914, Nr. 700.
23. Lepsius, "Der Todesgang", S. 184.
24. Wien, HHStA PA I 942, Sofia, 29. Oktober 1914, Nr. 1014.
25. Westenenk, "Die Tagebücher von Westenenk", Institut für armenische Fragen, München 1986, S. 67.
26. Wien, HHStA PA I 943 Jeniköj, 5. November 1914, Nr. 64/P. A-D.
27. Wien, HHStA PA I 943 Jeniköj, 5. November 1914, Nr. 64/P. A-D.

6. ԵՂԵՌՆԸ

Թուրքիայի մուտքը պատերազմ հայ ժողովրդի համար կրկնակի զգույշ լինելու նշան պետք է ծառայեր: Հայոց պատրիարք Զավենը Թուրքիայի բոլոր հայկական թեմերին շրջաբերական է հղում, որում շեշտվում էր, որ հայ ազգը, որի դարավոր հավատարմությունը հայտնի է, ներկա պահին, երբ հայրենիքը պատերազմի մեջ է գտնվում մի քանի տերությունների հետ, պետք է կատարի իր պարտքը եւ համաձայն լինի ամեն զոհաբերության՝ ի փառս օսմանյան գահի, որի հետ նա ամուր կապված է, եւ ի պաշտպանություն հայրենիքի[1]:

Հայկական թերթերն առանց բացառության գրում էին իրենց հայրենիքի հանդեպ հայերի հավատարմության մասին.

«Մենք ընդդիմանում ենք երկրի օկուպացմանը: Հայ ժողովուրդը չպետք է որեւէ օտար կառավարության առուծախի կամ սպեկուլյացիայի առարկա դառնա: Հայ զինվորը վճռականորեն կկռվի բոլոր այն սահմանների համար, որոնք կխախտվեն թշնամու կողմից»[2]:

Հայերի առաջնորդների շրջաբերականները ժողովրդին հանգստացնելու՝ իրենց նպատակին չհասան: Հայերը տագնապած էին եւ թերահավատ, որովհետեւ կառավարությունը մահմեդականներին զենք էր բաժանել[3]: Երբ պատերազմը բռնկվեց, հայերը Կովկասում կամավորական ջոկատներ կազմեցին եւ, հենց որ Ռուսաստանն ու Թուրքիան պատերազմական գործողություններ սկսեցին իրար դեմ, այդ ջոկատները միացան ռուսական կովկասյան բանակի ստորաբաժանումներին: Նրանք բաղկացած էին մոտավորապես վեց հազար հոգուց: Առաջին խումբը ղեկավարում էր փորձառու սպա Անդրանիկ Օզանյանը: Երկրորդ խումբը ղեկավարում էր Դրաստամատ Կանայանը, որին Դրո էին կոչում՝ նախկին թուրքական երեսփոխան Արմեն Կարոյի հետ միասին: Երրորդ խմբի հրամանատարն էր՝ Համազասպ Սրվանցյանը, իսկ չորրորդինը՝ Արշակ Կաֆավյանը, որին Քեռի էին կոչում[4]:

Եթե հիշենք, որ ռուսական բանակ էր հավաքագրվել 250.000 հայ[5], ապա հայ կամավորական գումարտակները, դրա հետ համեմատած՝ էական նշանակություն չունեին: Սակայն թուրք տիրակալների եւ նրանց դաշնակիցների մեջ սրանք միայն ավելի մեծ թշնամանք առաջացրին: Երբ հետագայում Դաշնակցության ղեկավարներին այլեւս թույլ չտրվեց մեկնել Կ. Պոլսից, հայերին պարզ դարձավ, որ երիտթուրքերը նրանց դեմ գաղտնի պլաններ են մշակում[6]:

Դեկտեմբերի 26-ին կուսակցության կենտրոնական օրգանը գրում է այն մասին, որ կովկասյան հայերի դիրքորոշումը, ինչպես երեւում է, հիասթափեցրել է կառավա-

ությանը: Այդ է վկայում նրա վերաբերմունքը հայերի եւ, մասնավորապես, դաշնակցականների հանդեպ: Շատ դժվար է համոզել թուրք բարեկամներին, որ դաշնակցականները Թուրքիայի պահպանման կողմնակիցներ են եւ դեմ են Հայաստանի միացմանը Ռուսաստանին: Վանից նոյեմբերի 16/29-ին գրված նամակում նկարագրված է այնտեղի շատ ծանր իրադրությունը. գյուղերը դատարկվում են, դասալիքների պատժման պատրվակով ժանդարմները բազմաթիվ տներ են այրել եւ բռնագրավել ժողովրդի ունեցվածքը: Մինչդեռ մահմեդականների նկատմամբ, որոնց մեջ դասալիքներն ավելի շատ են, ոչ մի նման բան չի կիրառվում: Հակառակը, բոլոր ավազակներին վերջերս ներում են շնորհել եւ զինել: Որոշ տեղերում բանտերից արձակել ու զինել են հայտնի հանցագործներին. *«Մեր ընկերների օգնության քայլերը կառավարության մոտ մնում են միշտ անարդյունք»*[7]:

Կովկասում ռազմական գործողությունների սաստկացումը էլ ավելի բարդացրեց հայերի վիճակը: Գերմանական բանակի հրամանատարությունը ստիպեց թուրքական կառավարությանը ռազմարշավ ձեռնարկել կովկասյան ճակատում: Նա հույս ուներ դրանով թեթեւացնել ռուսական ճակատը Եվրոպայում: Բայց 1914 թ. ձմռանը Էնվեր փաշայի ղեկավարած ռազմարշավն ավարտվեց թուրքերի պարտությամբ եւ մեծ կորուստներով: Այդ չմտածված ռազմարշավն ու նրա ծանր հետեւանքները Պալավիչինիին առիթ տվեցին քննադատելու գերմանական ռազմավարությունը, քաղաքականությունը եւ որոշ անձնական ամբիցիաներ: Պալավիչինին գրում է.

«Բեռլինում, սակայն, իմ կարծիքով, առանց բավականաչափ մտածելու վճռել էին Թուրքիային ստիպել հարված հասցնելու, եւ այդպես ծովակալ Սուխոնը պատերազմական վիճակ ստեղծելու հրաման ստացավ: Հետեւանքը եղավ Սեւաստոպոլի եւ մի քանի այլ ռուսական նավահանգիստների հայտնի գնդակոծությունը, ինչը եւ ստեղծեց պատերազմական վիճակը: Կովկասյան ռազմարշավը եւս ձեռնարկվեց Գերմանիայի ցանկությամբ: Ուզում էին ռուսական զորամասերին այդ շրջաններում կապել: Մի կողմից՝ Գերմանիայի հատուկ ղեկավարությամբ մի գործողություն սկսվեց, որը, սակայն, բավականաչափ նախապատրաստված չէր, ուստի եւ անհաջողության մատնվեց: Իսկ քաղաքական տեսակետից գերմանացիները չափազանց քիչ են մտածել եւ երբեմն զուտ անձնական ամբիցիաների պատճառով Թուրքիայի առաջ որոշ խնդիրներ են դրել, որոնք ռազմական եւ ֆինանսական տեսակետից գուցե եւ նրա ուժերից վեր են»[8]:

Պարտությամբ ավարտվեց ոչ միայն Էնվեր փաշայի ռազմարշավը. Թուրքիայի կովկասյան բանակը ծանր կորուստներ կրեց, այն տվեց ութսունից հարյուր հազար զոհ: Թուրքական գլխավոր հրամանատարությունը խնամքով քողարկում էր կովկասյան ձախողումը[9]: Պոմյանկովսկին գրում է. *«Պարտության մասին որեւէ լուրի հրապարակումը մամուլում, անգամ խոսելն այդ մասին, արգելված էր»*[10]:

Այդ պարտությունը ծանր հարված էր Թուրքիայի համար: Այն նաեւ շատ բացասական ազդեցություն ունեցավ թուրք-հայկական հարաբերությունների վրա, քանի որ հակառակ կողմում հայեր էլ էին կռվում: Իրավիճակը վտանգավոր դարձավ հայերի համար:

1915-ի հունվարի 18-ին Կ. Պոլսից ուղարկած ավստրո-հունգարական մի լրտեսագիր հաստատում է հայերի մտահոգությունը.

«Հայկական տարբեր վիլայեթներից պատրիարքարանը լուրեր է ստացել, որ թուրք եւ հայ տարրերի միջեւ հին հակամարտությունը դրսեւորվում է վերջիններիս դեմ ուղղված ամենատարբեր չարագործություններով: Մեծ ջարդեր դեռ ոչ մի տեղ չեն եղել, բայց տարբեր բնակավայրերում, ըստ երեւույթին, սպանել են ունեւոր հայերի եւ կողոպտել նրանց տները: Այս դեպքում ամենից շատ անհանգստացնում է այն, որ իշխանությունները ձեռքերը ծալած են նայել այդ ոճրագործություններին: Հայերը հուսով էին, թե Էնվերի հայտնվելը Կովկասում պիտի վերջ տար այդ անկարգություններին, բայց հուսախաբվեցին, թեեւ Էնվերը վերջին մարդն է, որը կարող էր հավանություն տալ հայերի վրա հարձակումներին եւ չհասկանալ այն վտանգը, որով հղի են այդ դեպքերը: Թուրքիայի համար այսօր ավելի քան երբեւէ կարեւոր է հայերի լոյալ վերաբերմունքը: Նա սրանց ծանր փորձության է ենթարկում, չպաշտպանելով հայերին նրանց կյանքի եւ սեփականության վրա հարձակումներից, մանավանդ, որ Թուրքիայի եւ Ռուսաստանի միջեւ պայքարում հայերն ազնվաբար առաջինի կողմն են կանգնել: Նաեւ անհրաժեշտ է հաշվի առնել, որ թուրքական Կովկասյան բանակում համեմատաբար շատ հայեր կան»[11]:

Երբ Թուրքիան համաշխարհային պատերազմի մեջ մտավ, դաշնակիցները որոշեցին նավատորմով գրոհել Դարդանելը: Կ. Պոլսի գրավումը թուրքերին կարող էր ծնկի բերել եւ համախմբել դաշնակիցներին՝ Ֆրանսիային, Անգլիային ու Ռուսաստանին: Դրանով դաշնակիցների դիրքերը աշխարհամարտում ավելի նպաստավոր կլինեին:

1915-ի փետրվարի 11-ին սկսվեց Դարդանելի ռմբակոծությունը: Մարտի սկզբին ավերված էին Դարդանելի արտաքին ամրությունները: Մարտի 18-ին դաշնակիցները իրենց ամբողջ նավատորմով ձեռնարկեցին վերջին գրոհ: Այդ ժամանակ ականազերծիչ նավերի սխալների հետեւանքով երեք նավ ականների դիպան եւ սուզվեցին, ինչը պատճառ դարձավ գրոհը դադարեցնելուն: Այդ ապշեցրեց պաշտպանվողներին, մանավանդ որ նրանք արդեն քիչ ռազմամթերք ունեին եւ նախապատրաստվել էին նահանջելու պաշտպանական դիրքերից[12]: Դարդանելի գրոհի ավարտի մասին շատ ենթադրություններ են արվել: Գրավել Կ. Պոլիսը եւ հետո այն Ռուսաստանին թողնել՝ դա կլիներ Անգլիայի դարավոր քաղաքականությանը հակասող մի բան: Չէ՞ որ Անգլիան միշտ էլ ձգտել էր Ռուսաստանին հեռու պահել Միջերկրական ծովից: Հենց այս պատճառով Անգլիան 1878 թ. Աբդուլ Համիդի հետ կնքած գաղտնի պայմանագրով, Ռուսաստանին զսպելու համար վերցրեց Կիպրոսը, եթե նա առաջխաղացման փորձ

ձեռնարկի: Արդեն Դարդանելի գրոհի ժամանակ անգլիացիները գրաված Լեմնոս կղզում գտնվող Մուդրոս հրաշալի նավահանգստի շնորհիվ հսկողության տակ էին պահում նեղուցը: Փաստն այն է, որ եթե Կ. Պոլիսը զավթված լիներ, ապա 1915 թ. կեսերին համաշխարհային պատերազմը Թուրքիայի համար ավարտված կլիներ, եւ Կենտրոնական Եվրոպայի երկրները ստիպված կլինեին պատերազմը միայնակ շարունակել: Մինչդեռ այսպես Դարդանելի կռիվը Կենտրոնական Եվրոպայի երկրների օգտին վերջացավ: Դա մեծացրեց Թուրքիայի ինքնավստահությունը, եւ նա հաջողությամբ ետ մղեց Գալիպոլիին տիրանալու անգլիացիների փորձը: Թուրքիան պատերազմի ավարտի վերաբերյալ այլեւս կասկած չուներ: Նա համոզված էր, որ Կենտրոնական Եվրոպայի երկրների կողքին հաղթող պիտի լինի: Այդ ենթադրությունը թուրքերին մղեց հայերի հալածանքները սաստկացնելուն: Թուրքական կառավարությունն արդեն սկսել էր սիստեմատիկորեն իրագործել հայերին բնաջնջելու իր մտադրությունը: Սկզբում սկսեցին ոչնչացնել թուրքական բանակի հայ զինվորներին: Միաժամանակ գավառներում սկսեցին հայերին կոտորել: Ահա թե ինչպես են այդ դեպքերը նկարագրված 1915-ի հունվարի ավստրո-հունգարական մի լրտեսագրում.

«Հայ զինվորներին հաճախ ուղարկում են ռազմաճակատի առաջավոր գիծը, որպեսզի սպանվեն: Քրդերը նորից սկսել են կոտորել գյուղերի հայ բնակիչներին, սակայն դրանք ծեռնարկվում են առանձին գործողությունների միջոցով, որպեսզի կասկած չառաջանա, թե համընդհանուր հայկական կոտորած է տեղի ունենում»[13]:

Տագնապալի լուրեր հասան արտասահմանյան հյուպատոսներին, բայց թուրքական պաշտոնյաները դրանք ներկայացնում էին որպես հայերի սադրիչ գործունեություն: Պալավիչինին 1915 թ. հունվարի 28-ին զեկուցում է.

«Գաղտնի աղբյուրներից իմացել եմ, որ կառավարությունը կասկած է տածում հայերի նկատմամբ, եւ որ Թալեաթ բեյը վերջերս հայ պատրիարքի ուշադրությունը հրավիրել է հայերի հնարավոր հակակառավարական քարոզչության հետեւանքների վրա»[14]:

Փետրվարին Էնվեր փաշան Կովկասյան ճակատից Կ. Պոլիս վերադարձավ: Ճանապարհին Կոնյայում եպիսկոպոսը նրան հայ ժողովրդի անունից հանձնեց ողջույնի շնորհակալական ուղերձ: Էնվերը 1915 թ. փետրվարի 26-ին պատասխանեց.

«Ցավում եմ, տեր հայր, որ Կոնյայում կարճ դադարիս ժամանակ չկարողացա խոսել Ձեզ հետ: Այժմ ստացա այն գրությունը, որը բարի եք եղել ուղղելու ինձ, եւ որում գովասանքներ եք թափում իմ վրա: Շնորհակալությունս եմ հայտնում Ձեզ դրա համար եւ օգտվում եմ առիթից ասելու, որ օսմանյան բանակի հայ զինվորները բարեխղճորեն են կատարում իրենց պարտքը ռազմաբեմում, ու ես այդ կարող եմ վկայել սեփական փորձից ելնելով: Խնդրում եմ իմ գոհունակությունն ու շնորհակալությունը հաղորդել հայ ժողովրդին, որը հայտնի է իր լիակատար նվիրվածությամբ օսմանյան կայսրական կառավարության նկատմամբ»[15]:

Հակառակ Էնվեր փաշայի հավաստիացումներին՝ հայերի վիճակը գավառներում շատ վատ էր: Եթե հետեւենք Դաշնակցության կենտրոնական օրգան «Ազատամարտի» հոդվածներին, ապա ընդհանուր պատկերացում կկազմենք, թե ի՞նչ է կատարվում հայերի հետ Թուրքիայի ներսում:Փետրվարի 2-ի համարում կարդում ենք.

«Այստեղ հաղորդվում է, որ Կ. Պոլսում կառավարության անվստահությունը դաշնակցականների հանդեպ այնքան մեծ է, որ նրա հետ գրեթե անհնար է խոսել իրավիճակի մասին»[16]:

Փետրվարի 27-ի թերթը գրում է, որ գյուղերում մնացած բոլոր երիտասարդ կանանց ու աղջիկներին առեւանգել են եւ ստիպել իսլամ ընդունել: Կառավարության նպատակը, ինչպես երեւում է, հայերին իրենց կենտրոններից հեռացնելն է: Նորից նշվում է, որ թեեւ դաշնակցականները կատարում են իրենց քաղաքացիական պարտքը, այնուամենայնիվ կառավարությունը նրանց չի վստահում[17]: Մարտի 11-ին «Ազատամարտը» հաղորդում է, որ Զեյթունում, ըստ պաշտոնական աղբյուրների, ընդհարում է տեղի ունեցել: Բայբուրթի ողջ բնակչությունը համընդհանուր կոտորածի մղձավանջի պայմաններում է ապրում: Կառավարությունը կարգադրել է զինաթափել բոլոր հայ զինվորներին, իսկ ամենաչնչին առիթով՝ նրանց կոտորել[18]:

Մարտի 20-ին հաղորդվում է Էրզրումի ու Բիթլիսի վիլայեթներում աճող անհանգստության մասին: Համընդհանուր կոտորածի վտանգ է սպառնում: Թուրքերն ասում են, որ հայերն են մեղավոր պատերազմական անհաջողություններում եւ պետք է ոչնչացվեն: Ժամանակն է ուշադրություն դարձնելու Հայաստանում տիրող իրավիճակին, այլապես Հայաստանի տեղում շուտով միայն մի կույտ ավերակներ կմնան[19]:

1915 թ. մարտի 31-ին կառավարությունն արգելեց «Ազատամարտը»[20]: Այս թերթի արգելքը խզեց երկրի ներսում ապրող հայերի կապը հայրենակիցների եւ իրենց առաջնորդների հետ: Բայց դա դեռ բոլորը չէր: Խիստ գրաքննության էին ենթարկվում նաեւ արտասահմանյան թղթակիցների հաղորդումները: Ձերբակալվեց վիեննական «Neue Freie Presse» թերթի ներկայացուցիչը, որն, իբր թե շրջանցելով գրաքննությունը, նամակներ ու սխալ լուրեր էր ուղարկել արտասահման[21]: Թուրքիայի ներքին դրության մասին լուրերը կարող էին արտասահման ուղարկվել միայն տեղեկատվության պետական միջոցներով: Հայերի հալածանքների մասին ոչինչ չէր գրվում, ընդհակառակը, նրանց ոճրագործ էին անվանում: Օրինակ, 1915 թ. հունվարի 28-ին վիեննական «Arbeiter Zeitung»-ը գրում է, թե հայերը խոշտանգել ու հետո սպանել էին թուրք ժանդարմներին[22]:

1915 թ. սկզբին Պերայում հայտնաբերեցին դաշնակիցների նավատորմին ուղղված մի գաղտնի հեռագիր, որը գրել էին իտալացի եւ ֆրանսիացի հոգեւորականները: Այդ հեռագրում Դարդանելի գրավման ժամանակ դաշնակիցներին օգնություն էին խոստանում Կ. Պոլսի քրիստոնյաների կողմից: Ձերբակալվեց քառասուն կաթոլիկ հոգեւորական, ինչպես նաեւ ազգությամբ իտալացի ու ֆրանսիացի քսան միանձնու-

հի: Այդ դեպքերն առիթ տվեցին թուրքական բանակում քրիստոնյա զինվորներին զինաթափելու, նրանց զենքն ու զինամթերքը մահմեդականներին բաժանելու եւ հայ ու հույն զինվորներին միայն ճանապարհաշինության ու ամրոցաշինության մեջ աշխատացնելու համար[23]: Մինչդեռ հայերի հալածանքներն արդեն պաշտոնական բնույթ էին ստացել: Չնայած թուրքերի խստագույն գրաքննությանը, արտասահմանում արդեն շատերը գիտեին հայկական ջարդերի մասին:

Հայերին չորս ամիս կոտորելուց հետո թուրքական կառավարությունը հանդգնեց վերացնել նաեւ նրանց առաջնորդներին: Թուրքերն ինքնավստահ էին, որովհետեւ հայերի առաջնորդները Կ. Պոլսում ապացուցեցին սեփական ժողովրդին փրկելու իրենց անկարողությունը: Թուրքիայի դաշնակիցները անուշադրության էին մատնել հայկական կոտորածը, իսկ դաշնակիցների ներխուժումը Դարդանել պարտությամբ էր ավարտվել: Ապրիլի 12-ի եւ 25-ի արանքում երիտթուրքական կառավարությունը Կ. Պոլսում ձերբակալեց վեց հարյուր հայ ականավոր գործիչների եւ մտավորականների: Նրանց մի մասին կախեցին, շատերին քշեցին երկրի խորքը: Դաշնակցության առաջնորդները, որոնք Թալեաթ բեյի մերձավոր բարեկամներն էին, աքսորի վայրից վերջինիս հեռագիր ուղարկեցին, որի բովանդակությունը հետեւյալն էր.

Դաշնակցականների կազմակերպությունը, որն իր ջանքերը միավորել էր կառավարության ջանքերի հետ ի բարօրություն կայսրության, այժմ գտնվում է այնքան տարօրինակ եւ անընմբռնելի դրության մեջ, որ այդ փաստն արդեն պիտի բավական լիներ ամոթալի վիճակին վերջ տալու համար: Կառավարությունը պիտի հաշվի առնի, որ հայ ժողովրդի ներկայացուցիչների նկատմամբ այդպիսի վերաբերմունքը չի կարող չփչացնել երկու ազգերի միջեւ եղած հարաբերությունները եւ չօտարացնել նրանց իրարից: Դաշնակցության առաջնորդները գրում էին, որ երազել անգամ չէին կարող այն մասին, որ իրենց համատեղ աշխատանքից հետո մի օր ստիպված կլինեին կառավարության հետ բանակցել հեռագրի միջոցով[24]:

Սակայն վճիռն արդեն կայացվել էր: Կ. Պոլսից արձակված հրամանով Ահմեդ բեյը Սատանայի կիրճում սպանեց հայ երեսփոխաններ Զոհրապին, Վարդգեսին եւ Տաղավարյանին[25]: Պոմյանկովսկին իր հուշերում գրում է.

«Դարդանելում անգլիական նավատորմի նկատմամբ տարած հաղթանակից հետո խիստ գաղտնի հրաման տրվեց Փոքր Ասիայում մշտապես բնակվող հայերին հյուսիսային Արաբիա կամ Միջագետք՝ Եփրատի անապատը տեղափոխելու եւ այնտեղ բնակեցնելու մասին: Այդ բարբարոսական հրամանի կատարումը իրականում հավասար էր Փոքր Ասիայում հայ ժողովրդի բնաջնջմանը: Ապրիլին սկսեցին կոտորել զինվորական ծառայության համար պիտանի հայերին՝ ազգաբնակչության մյուս մասին անպաշտպան դարձնելու նպատակով: Ապա մինչեւ 1914 թ. աշունն ընկած ժամանակաշրջանում, առանց սեռն ու տարիքը հաշվի առնելու, վռնդեցին իրենց բնակավայրերից եւ ժանդարմների հսկողությամբ քշեցին դեպի հարավ: Ճանապարհին տղամարդկանց խմբերով սպանում էին, իսկ գեղեցիկ կանանց տանում թուրքական հարեմները: Մնացածը մեռան քաղցի, զրկանքների եւ ուժասպառության հետեւանքով, եւ միայն մի խղճուկ մասը հասավ Եփրատի ափերը, որտեղ, ամեն միջոցից զուրկ եւ առանց որեւէ օգնության, կարճ ժամանակ անց մահացավ»[26]:

Թուրքական կառավարության պաշտոնական հաղորդագրություններում խոսվում էր հայկական ավազակախմբերի մասին, որոնք խռովություններ էին առաջացնում երկրի ներսում ու սահմանների վրա: Այդ դեպքերի պատճառով էր, որ նրանցից մի քանիսին ձերբակալել, կախել կամ տեղահանել էին, պնդում էր կառավարությունը: Այդպիսի բացատրություններ էին տրվում նաեւ արտասահմանյան ներկայացուցչություններին: Պալավիչինին ապրիլի 29-ին հաղորդում է.

«Արդեն մի քանի շաբաթ է, ինչ Փոքր Ասիայի հայկական կենտրոններից՝ Վանից, Էրզրումից, Երզնկայից խռովությունների մասին լուրեր են գալիս: Այդ շարժումն սկզբում կապում էին հայերին զինվորական ծառայության կոչելու հետ, իբր, մի կողմից, հայկական ավազակախմբերը վայրագությունների էին դիմել թուրք ազգաբնակչության դեմ, իսկ մյուս կողմից՝ քրդերը բռնություններ էին գործադրել հայերի դեմ: Թվում է, թե այս հայկական շարժման մեջ մեծ դեր է խաղացել օտար դրամը: Կառավարությունը, որը ներկայումս ուզում էր խուսափել լուրջ խռովություններից, սահմանափակվեց առանձին սադրիչների ձերբակալությամբ եւ ձգտում էր, չդիմելով վճռական միջոցառումների, շարժումը պահել տեղական միջադեպերի սահմաններում»[27]:

Այն, որ Պալավիչինին ճիշտ չէր հայկական ապստամբությունները օտար դրամի հետ կապելու հարցում, ապացուցում է 1915-ի մայիսի 2-ի մի լրտեսագիր: Ըստ այդ լրտեսագրի՝ քրդերը հայերի մեծ կոտորած էին արել Բիթլիսում, Վանում, Դիարբեքիրում ու Էրզրումում[28]:

Կոտորածի լուրերն արդեն շրջում էին Կ. Պոլսում: Դա ստիպեց Կ. Պոլսի հայ պատրիարքին գնալ ներքին գործերի նախարար Թալեաթի մոտ: Սակայն նրան նախարարությունում չընդունեցին[29]:

Հայկական ապստամբությունների մասին լավագույն մեկնաբանությունը տվել է Կ. Պոլսում Ավստրո-Հունգարիայի զինվորական կցորդ Պոմյանկովսկին՝ իր «Օսմանյան կայսրության անկումը» գրքում:

«Ապստամբությունները Զեյթուն եւ Վան քաղաքներում այնտեղի հայերի հուսահատ գործողություններ էին, որոնք տեսան, որ սկսվել է համընդհանուր սպանդ ու մոտ ապագայում իրենց հերթն էլ է գալու»[30]:

Համընդհանուր սպանդը նշանակում էր, որ 30.000 հայեր սպանվել են, 500.000-600.000-ը բռնի կերպով որպես «կասկածելի անձինք» քաշվել Մոսուլ եւ Դիարբեքիր, որոնցից 400.000-ը մեռան ճանապարհին[31]:

Ըստ Լեփսիուսի, Վանի ապստամբությունը հետեւյալ կերպ էր ընթացել. փետրվարի կեսերին Ջեւդեթ բեյը՝ Վանի վալին, էնվեր փաշայի փեսան, վերադարձել էր

Սալմաստի եւ Ուրմիայի շրջաններից, որտեղ մասնակցել էր թուրքական ու քրդական զորամասերի հյուսիսպարսկական ռազմարշավին: Թուրք ազնվականների ժողովում նա ասաց. *«Մենք մաքրել ենք մեր հաշիվները Ազարբայջանի հայերի ու սիրիացիների հետ, նույնը պետք է անենք Վանի հայերի հետ»:*

Իր գավառի կայմակամներին նա հանձնարարեց ամենաչնչին առիթով իսկ միջոցներ ձեռք առնել հայերի դեմ: Վանի հայերի հետ (20.000 հոգի) սկզբում սիրալիր էին վարվում: Այդ միջոցին Զեւդեթ բեյը էրզրումից օգնական ուժեր բերեց: Երբ Շատախում, գերազանցապես հայկական գյուղերում, ապրիլի 14-ին ընդհարումներ սկսվեցին ժանդարմների հետ, նա խնդրեց հայերի երեք առաջնորդներին՝ Վռամյանին, Իշխանին ու Արամին Վանի ոստիկանության մյուդիրի հետ գնալ Շատախ՝ ընդհարումը դադարեցնելու համար: Իշխանը գնաց ու իր հետ վերցրեց երեք ուրիշ հայերի: Ոստիկանության մյուդիրը չերքեզ զափթիեների հետ ուղեկցում էր նրանց: Ճանապարհի կեսին գիշերեցին Հիռչում: Երբ հայերը քնեցին, ոստիկանության մյուդիրը չերքեզների միջոցով նրանց սպանել տվեց: Հաջորդ օրը առավոտյան, նախքան Վանում կիմանային այդ նենգադավ սպանության մասին, վալի Զեւդեթ բեյը մնացած երկու հայ առաջնորդներին՝ Վռամյանին ու Արամին իր մոտ հրավիրեց: Արամը պատահաբար բացակա էր:

Վռամյանը նամակով նախազգուշացրեց Արամին եւ խորհուրդ տվեց սպասել[32]:

Վռամյանը, ոչինչ չկասկածելով, գնում է վալիի մոտ, որտեղ էլ նրան ձերբակալում են: Վալին նրան շղթայակապ Բիթլիսով Դիարբեքիր է ուղարկում: Ճանապարհին Վռամյանին սպանում են:

Դեռ նույն առավոտյան Զեւդեթ բեյը հարձակում է նախապատրաստում հայկական թաղամասերի վրա: Միաժամանակ սկսում են կոտորածները Արճեշում եւ Հայոց ձորի գյուղերում: Կանանց ու երեխաներին կոտորածի վտանգից փրկելու համար քաղաքի հայերը խրամատավորվում են իրենց թաղամասերում (Ռուսաստանի հետ նրանք կապ չունեին): Չորս շաբաթ շարունակ պաշտպանվում էին թուրքական զորամասերից, որոնք նրանց պաշարել ու գնդակոծում էին: Նրանց պաշարներն սպառվել էին: Մայիսի 15-ին տեղի ունեցավ վերջին ռմբակոծությունը: Հաջորդ գիշեր Զեւդեթ բեյը պաշարող զորամասերի հետ, ի զարմանս հայերի, հեռացավ քաղաքից: Նրանք դեռ չգիտեին, որ ռուսական բանակը առաջանում էր ամբողջ կովկասյան ճակատում[33]:

Թուրքերը խոսում էին թուրքական բանակի դեմ հայերի ու ռուսների համատեղ պայքարի մասին, ինչպես եւ հայերի գազանությունների մասին թուրք ժողովրդի նկատմամբ:

Վիեննա ուղարկած մի լրտեսագրում կարդում ենք.

«Էրզրումից մի երեսփոխան, որը երիտթուրքական կոմիտեի ազդեցիկ անդամներից է, ասաց ինձ, որ կառավարությունը մեծագույն ջանքեր է թափում, որպեսզի Վանի շրջանում հայերի կողմից կատարված գազանությունները թուրքական հասարակությանը հայտնի չդառնան: Հետեւանքը թուրքական վրեժխնդրության սարսափելի պոռթկումը կլինի: Ասում են, թե հայերը Վանում թուրքերին, անգամ կանանց ու երեխաներին, այնպես էին կոտորում, որ ռուս սպաները փորձել են վերջ տալ այդ արյան բաղնիսին՝ ծանր պատիժներ սահմանելով»[34]:

Վանի կռիվների մասին ավստրիական թերթերը հաղորդում էին այնպես, ինչպես թուրքական մամուլը, ասել է թե հայերը ռուսների հետ միասին պատերազմ էին վարում Թուրքիայի դեմ: Նրանք հաղորդում էին նաեւ 150.000 մահմեդականների ջարդերի մասին, որ, իբր, իրագործել էին հայերն ու ռուսները[35]: Կասկածից դուրս է, որ տարբեր վայրերում հայերը վրեժ են լուծել: Սակայն 150.000 մահմեդականների կոտորած չի կարող տեղի ունեցած լինել, որովհետեւ ամերիկացի միսիոներներ դոկտոր Աշերը եւ Վանի գերմանական որբանոցի տնօրեն Շայոռին այլ բան են վկայում:

«Մեր հողամասում կան հազար թուրք կանայք ու երեխաներ, որոնց մեզ մոտ են բերել հայ զինվորները, որովհետեւ սա նրանց համար լավագույն ապաստանն է: Գերմանական միսիայի հողամաս են բերել վեց հարյուր թուրք կանանց ու երեխաների: Հայերն, ընդհանրապես, թուրք գերիների նկատմամբ հիացմունքի արժանի ինքնազսպում են դրսեւորում, եթե հիշենք, թե ինչպես են նրանց վերաբերվել թուրքերը»[36]:

150.000 սպանված թուրքերի վերաբերյալ Լեփսիուսը հետեւյալ բացատրությունն է տալիս.

«Վանի վիլայեթում կան հարյուր ութսուն հազար մահմեդականներ, որոնցից 30.000-ը թուրք են եւ 150.000-ը՝ քուրդ: 30.000 թուրք ռուսական բանակի առաջխաղացման ժամանակ փախել էր Բիթլիսի վիլայեթ... Վանի վիլայեթի 150.000 քրդեր, որոնք հիմնականում ապրում են հարավային ու հարավ-արեւելյան շրջաններում, մինչեւ Զավի վերին հովիտը՝ Տիգրիսի հոսանքն ի վար, մաս-մաս մնացել էին ռուսական ճակատի հետեւում, իսկ մեծ մասամբ, ընդհանրապես, ռազմական գործողությունների շրջանում չեն եղել... Այդ 150.000 մահմեդականներին, ընդհանրապես, չի սպառնացել սպանության վտանգ, ուր մնաց, թե հայերի կողմից կոտորված լինեին... այսպես է լուծվում այդ կարծեցյալ թուրքերի կոտորածի հանելուկը...»[37]:

Այդ կարծեցյալ 150.000 թուրք մեռյալների մասին Շեյխ էլ-Գասեյնը գրում է.

«Ես զբաղվել եմ այդ գործով, հարցրել եմ Դիարբեքիր այցելած Վանի բնակիչներին ու պաշտոնյաներին. արդյոք, Վանում կամ վիլայեթի այլ շրջաններում հայերը մահմեդականներ չե՞ն սպանել: Բոլորը ժխտեցին եւ ասացին, որ կառավարությունը ռուսների մոտենալուց առաջ, նախքան գոնե մի մարդ կսպանվեր, քաղաքն ազատել է տվել մահմեդական ազգաբնակչությունից»[38]:

Ավստրո-Հունգարիայի հյուպատոս Մորիցը եւս նշում է 1912 թ. սեպտեմբերի 17-ին, որ Վանի վիլայեթում թուրքերը *«բնակչության միայն չնչին մասն էին կազմում»*[39]:

Երբ ռուսական բանակի գեներալ Նիկոլաեւն իր զորքով մտավ Վան, Արամը՝ հայերի առաջնորդը, ողջունեց նրան, ասելով.

«Երբ մենք մի ամիս առաջ զենք վերցրեցինք, չէինք ենթադրում, որ ռուսները կգան: Մեր դրությունն այն ժամանակ անհույս էր: Մեզ միայն մի ընտրություն էր մնում. կամ հանձնվել եւ թողնել, որ մեզ ոչխարների պես մորթեին, կամ մարտում կռվի երաժշտության տակ մեռնել: Մենք նախընտրեցինք վերջինը: Անսպասելիորեն դուք վերացրիք մեր շրջափակումը, եւ այժմ մերոնց քաջ պաշտպանության կողքին ձեզ ենք պարտական մեր փրկության համար»[40]:

Հայերը պաշտպանվել էին Վանում եւ ոչ թե կռվել ռուսների կողմից, հակառակ դեպքում Նոգալեսը, որը Վանում կռվել էր հայերի դեմ, այսպես չէր քննադատի նրանց.

«Եթե Վանում շրջափակված 3.000-4.000 հայերը, զինվորական նվագախմբեր ստեղծելու, ժամանակավոր կառավարություն կազմելու եւ մեդալներ ու զինվորական շքանշաններ պատրաստելու փոխարեն զանգվածային գրոհ ձեռնարկած լինեին, ո՞վ գիտի, թե մեր վիճակն ի՞նչ կլիներ»[41]:

Երբ հայերի կոտորածը շարունակվեց, ամերիկյան դեսպան Մորգենթաուն խոսում է իր գործընկեր Պալավիչինիի հետ եւ փորձում է համոզել նրան բարեխոսելու հայերի համար Բ. Դռան առաջ: Մորգենթաուն այն կարծիքին էր, որ շատ վատ տպավորություն կստեղծվի, եթե Թուրքիայում, որն այժմ ընդհանուր պատերազմ է մղում Ավստրո-Հունգարիայի եւ Գերմանիայի հետ, խռովություններ, գուցե եւ հայկական կոտորածներ տեղի ունենան:

«Պարոն Մորգենթաուն նաեւ որոշակիորեն ներշնչում էր ինձ՝ Մեծ վեզիրի մոտ բարեխոսել այն բանի համար, որ չափազանց կտրուկ միջոցներ ձեռք առնելով՝ սադրանքների ու լուրջ հետեւանքների տեղիք չտրվի: Ես բնավ մտադիր չեմ այդ անելու,- գրում է Պալավիչինին,- *որովհետեւ անկախ այն բանից, որ նման խորհուրդներին հազիվ թե ականջ դնեն, իմ կարծիքով, Թուրքիան դրանք կընկալի որպես միջամտություն իր ներքին գործերին. այդպիսի միջամտությունը հենց դաշնակիցների կողմից նրա համար հատկապես տհաճ կլինի»*[42]:

Պալավիչինին չէր ուզում միջամտել Թուրքիայի ներքին գործերին, չէր ուզում խորհուրդ տալ կամ տհաճ տպավորություն թողնել: Մինչդեռ թուրքերի դաշնակիցների համար տհաճ էին գազանությունների ու կոտորածների լուրերը, որոնք Հայաստանից արտասահման էին ներթափանցում:

Թուրքական կառավարությունն անընդհատ խոսում էր միայն «զգուշությամբ տարվող» հետաքննությունների մասին: Թուրքերը պնդում էին, որ հայերի մոտ զենք ու զինամթերք էին գտել եւ ծերբակալություններ էին կատարել, սակայն նրանք վստահ էին, որ տիրապետում են իրավիճակին[43]:

Թուրքերը մի պատճառ էլ էին նշում հայերի հալածանքների համար: Նրանք պնդում էին, որ զայրացած են, քանի որ բազմաթիվ օսմանյան հայեր ծառայում են ռուսական կովկասյան բանակում: Իբր վրեժխնդրությունից էր, որ իրենք հեռացնում

էին հայերին իրենց բնակավայրերից[44]:

Թուրքական կառավարությունը դրանով էր բացատրում իր ռասայական խտրականության քաղաքականությունը: Սակայն մարդկանց զանգվածային բնաջնջումը ստիպեց դաշնակիցներին մամուլում հանդես գալ հայերի հալածանքների քաղաքականության դեմ: 1915 թ. մայիսի 24-ին դաշնակիցների մամուլի գործակալությունները հրապարակեցին հետեւյալ համատեղ հայտարարությունը.

«Մոտավորապես մի ամիս է, ինչ Հայաստանում թուրք եւ քուրդ բնակչությունը օսմանյան իշխանությունների թույլտվությամբ եւ հաճախ էլ՝ նրանց օժանդակությամբ, հայերի կոտորածներ է անում: Այդ կոտորածները ապրիլի կեսերից սկսած՝ տեղի են ունեցել Էրզրումում, Դերջանում, Էգինում, Բիթլիսում, Մուշում, Զեյթունում, Սասունում եւ ամբողջ Կիլիկիայում: Վանի շրջակայքի մոտ հարյուր գյուղերի բոլոր բնակիչները սպանվել են, իսկ Վանի հայկական թաղամասը պաշարվել է քրդերի կողմից: Այդ նույն ժամանակ օսմանյան կառավարությունն անխնա կերպով գործում էր Կ. Պոլսի անպաշտպան հայ բնակչության դեմ»:

Մարդկության եւ քաղաքակրթության դեմ Թուրքիայի գործած այս նոր ոճրագործության պատճառով դաշնակից կառավարությունները հրապարակայնորեն տեղեկացրին Բ. Դռանը, որ իրենք թուրքական կառավարության բոլոր անդամներին, ինչպես եւ բոլոր այն պաշտոնյաներին, որոնք մասնակցել են այդ կոտորածներին, առանձնապես պատասխանատու կհամարեն[45]:

1915 թ. մայիսի 27-ին թուրքական կառավարությունը հրապարակեց հայերի տեղահանման մասին օրենքը.

«Հաշվի առնելով, որ հայերը հակաօրինական գործողություններ են կատարում եւ օգտվում են ամեն առիթից կառավարությանն անհանգստացնելու համար, որ նրանց մոտ գտել են արգելված զենքեր, ռումբեր ու պայթուցիկ նյութեր, որոնք նրանք պատրաստել էին ներքին ապստամբության նպատակով, որ նրանք Վանում մահմեդականներին սպանել եւ ռուսական զորքերին օգնություն են ցուցաբերել այն ժամանակ, երբ կառավարությունը պատերազմի մեջ է գտնվում Անգլիայի, Ֆրանսիայի ու Ռուսաստանի դեմ, վերջապես վախենալով, որ հայերն, ըստ իրենց սովորության, կարող են ապստամբությունների, խռովությունների եւ ըմբոստությունների դիմել, կառավարությունը վճռել է, որ բոլոր հայերը պետք է հավաքվեն եւ տարվեն Մոսուլի ու Սիրիայի վիլայեթները, ընդ որում, նրանց անձը, սեփականությունն ու պատիվը պետք է պաշտպանվեն: Տրվել են անհրաժեշտ հրամաններ, որպեսզի հոգ տարվի նրանց տեղափոխման համար, եւ որպեսզի նրանք մինչեւ պատերազմի ավարտը այդ շրջաններում մնան»[46]:

Չորս օր անց՝ մայիսի 31-ին, Վանգենհայմը հեռագրեց Բեռլին.

«Հայկական լրտեսական գործունեությունը ճնշելու եւ հայերի նոր զանգվածային ըմբոստացումները կանխելու համար էնվեր փաշան, օգտվելով ռազմական (ար-

տակարգ) դրությունից, մտադիր է փակել մեծ թվով հայկական դպրոցներ, ճնշել հայերի փոստային թղթակցությունը եւ ապստամբած հայկական կենտրոններից Միջագետք տեղափոխել բոլոր ոչ լրիվ հուսալի ընտանիքներին: Նա թախանձագին խնդրում է, որ մենք իրեն դրանում չխանգարենք: Այդ թուրքական միջոցառումները, իհարկե, կրկին մեծ վրդովմունք կառաջացնեն մեր նկատմամբ թշնամաբար տրամադրված աշխարհում եւ նաեւ կօգտագործվեն մեր դեմ: Այդ միջոցառումները, անշուշտ, մեծ դժվարություններ են ներկայացնում հայ բնակչության համար: Սակայն ես այն կարծիքին եմ, որ մենք նրանց պետք է մի ձեւով մեղմացնենք, բայց չպետք է սկզբունքորեն խանգարենք: Ռուսաստանի կողմից հրահրած հայկական քայքայիչ գործունեությունն այնպիսի չափեր է ընդունել, որ սպառնում է Թուրքիայի գոյատեւմանը: Ըստ այդմ խնդրում եմ բացատրել դոկտոր Լեփսիուսին եւ գերմանական հայկական կոմիտեին, որ նշված միջոցառումներն անխուսափելի են Թուրքիայի քաղաքական ու ռազմական դրության պատճառով: Էրզրումի, Ադանայի, Հալեպի, Մոսուլի եւ Բաղդադի հյուպատոսարաններին ես արդեն գաղտնի տեղեկացրել եմ»[47]:

Այն, որ այդ միջոցառումները վեր էին ածվել հայերի բնաջնջման, Վանգենհայմն արդեն վաղուց գիտեր գերմանական հյուպատոսների զեկուցագրերից: 1915 թ. հունիսի 17-ին նա հաղորդեց Բեռլին.

«Ակնհայտ է, որ հայերի արտաքսումը միայն ռազմական նկատառումներով չի բացատրվում: Ներքին գործերի նախարար Թալեաթ բեյը վերջերս առանց վերապահումների հայտարարել է ներկայումս կայսերական դեսպանությունում աշխատող դոկտոր Մոռքմանին, որ Բ. Դուռը ուզում է օգտվել համաշխարհային պատերազմից իր ներքին թշնամիների (տեղացի քրիստոնյաների) հետ հաշիվները հիմնովին մաքրելու համար՝ առանց արտասահմանի խանգարիչ դիվանագիտական միջամտության»[48]:

Իր դաշնակիցների բարոյական օժանդակությամբ թուրքական կառավարությունը հերքեց իր դեմ ուղղված մեղադրանքները եւ 1915 թ. հունիսի 4-ին արեց հետեւյալ հայտարարությունը.

«Միանգամայն սխալ է, թե իբր Թուրքիայում տեղի են ունեցել հայերի սպանության դեպքեր եւ անգամ զանգվածային սպանություններ: Էրզրումի, Դերջանի, Էգինի, Սասունի, Բիթլիսի, Մուշի եւ Կիլիկիայի հայերը, ընդհանրապես, որեւէ գործողություններ չէին կատարել, որոնք կարող էին խանգարել հասարակական կարգ ու կանոնին կամ էլ անհրաժեշտ դարձնել կառավարության կողմից միջոցներ ձեռնարկելը»[49]:

Բայց արդեն հուլիսի 7-ին օրենք ընդունվեց, որով բանակի հրամանատարներին կամ նրանց ներկայացուցիչներին իրավունք էր տրվում անհրաժեշտության դեպքում ամբողջությամբ տեղահանել քաղաքների կամ գյուղերի ազգաբնակչությանը[50]:

«Այդ միջոցը արտակարգ խստությամբ կիրառվեց հատկապես հայերի դեմ, անգամ այն տպավորությունն է ստեղծվել, թե այս օրենքը միայն հրապարակվել է, որ-

պեսզի նրա հովանու տակ հնարավոր լինի իրականացնել հայերի լիակատար բնաջնջումը: Այս եղանակով անմարդաբնակ են դարձել ամբողջ շրջաններ, շատ բնակավայրերում անթաղ ընկած են սպանված հայեր[51]*»,-* ասված է 1915 թ. հոկտեմբերի 8-ին Կ. Պոլսից ուղարկված մի զեկուցագրում:

Տեղի ունեցող գազանությունները ստիպեցին Պալավիչինիին եւս քննադատելու թուրք իշխանավորներին.

«Կասկած չի կարող լինել, որ կառավարության գործելակերպը հայերի նկատմամբ սխալ է: Վերջիններս, ի դեպ, վաղուց ի վեր թուրքերի հանդեպ թշնամաբար են տրամադրված: Սակայն նրանք ռուսների բարեկամներն էլ չեն եղել, որովհետեւ իրենց շատ ազատախոհ ձգտումների շնորհիվ Ռուսաստանի նկատմամբ առանձնակի համակրանք չեն տածում: Այնուամենայնիվ, ոչ ճկուն թուրքական քաղաքականությունը ստիպեց հայերին երկու չարիքներից ընտրելու փոքրագույնը եւ նետեց նրանց ուղիղ ռուսների գիրկը: Համոզված եմ, որ այստեղի հայ լուսավորչական պատրիարքը միշտ կապ է ունեցել Ռուսաստանի հետ, իր ամբողջ հոգեւորականության հետ միասին ավելի, քան երբեւէ, համակրում է Ռուսաստանին: Համենայնդեպս, թվում է, թե այստեղի կառավարության գործելակերպի պատճառով Հայկական հարցը մի փուլ է թեւակոխել, որը բավական վտանգավոր կարող է դառնալ թուրքերի համար, հատկապես, եթե ռուսների առաջխաղացումը Հայաստանում շարունակվի, այդ դեպքում հայերն, անշուշտ, անվերապահորեն կմիանան նրանց: Ըստ իս, բացառված չէ, որ, եթե ինչ-ինչ պատճառներով իրադրությունը դրա համար նպաստավոր լինի, անգամ մայրաքաղաքում հանկարծ կպայթի հայերի ապստամբությունը»[52]:

Այս նոր մտածելակերպը դաշնակիցների աչքում արդարացնում էր հայերի բռնագաղթը: Նրանք կարծում էին, որ հայոց անհանգիստ լինելը կարող է մի ամբողջ ապստամբության վերածվել, ապստամբություն, որը կիրագործվի անգլիական եւ ռուսական դրամով[53]:

Երբ թուրքերը տեղահանեցին նաեւ Մխիթարյան հոգեւորականներին, Ավստրո-Հունգարիայի հյուպատոս Կվյատկովսկին հարցրեց Պալավիչինիին, թե ինչպե՞ս վարվի: Պալավիչինին պատասխանեց, որ նա «այդ հարցում մինչեւ հատուկ կարգադրություն պետք է միանգամայն պասիվ» դիրք ունենա: *«Իմ պատասխանը,-* գրում է Պալավիչինին,- *պատճառաբանված է այսօրվա քաղաքական դրությամբ..., որն ինձ համար շատ է դժվարացնում դիտողություններով դիմելը Բ. Դռանը ի օգուտ կաթոլիկ հայերի»*[54]:

Հայերի կոտորածները այնպիսի չափերի հասան, որ նույնիսկ Թուրքիայի դաշնակիցները այլեւս չէին կարող անտեսել: Պալավիչինին որոշեց «բարեկամաբար» տեղեկացնել Թալեաթին, որ Թուրքիան դրանով ինքն իրեն է վնասում՝ արդարացնելով թշնամիների մեղադրանքները»[55]:

Երկու հեռագրերում նկարագրված են Տրապիզոնի դեպքերը.

«Այնտեղի հայերը պետք է Մոսուլ տարվեն: Ի դեմս այդ օրհասական եւ տեղացի հայերի մեղքի հետ անհամեմատելի միջոցառումների, պարտքս եմ համարում մատնանշել վտարանդիների մեծագույն մասի, այդ թվում բազմաթիվ կանանց ու երեխաների մահվան ակնհայտ նպատակը հետապնդող գործելակերպի ծանր քաղաքական եւ նաեւ մեզ դիպչող տնտեսական հետեւանքները: Գուցե, այնուամենայնիվ, հնարավոր է վերջին պահին մեղմացման հասնել եւ սահմանափակել խիստ միջոցները, տարածելով դրանք միայն տղամարդկանց վրա, գուցե հնարավոր կլիներ հայերին տեղափոխել վիլայեթի խորքերը: Արտաքսումը Մոսուլ մեծ հեռավորության եւ օթեւանի ու սննդամթերքի բացակայության պատճառով նմանվում է մահվան դատապարտման (գործընկերներս կիսում են իմ կարծիքը)»[56]:

Երկրորդ հեռագրում գրված է.

«Հայ կաթոլիկ փոխերեցը լաց լինելով կրկին խնդրեց ինձ միջամտել հայերի համար: Այսօրվա հրամանագրի համաձայն բոլոր հայերը, բացառությամբ հիվանդների, պարտավոր են հինգ օրվա ընթացքում հեռանալ վիլայեթից եւ տեղափոխվում են երկրի խորքում գտնվող՝ իշխանությունների կողմից որոշված վայրեր: Սրտաճմլիկ տեսարան է»[57]:

Իսկ 1915 թ. հուլիսի 20-ին Ավստրո-Հունգարիայի հյուպատոսը Տրապիզոնից գրում է. *«Պետք է պատմության էջերը ետ շրջենք, որպեսզի կարողանանք մի ամբողջ ժողովրդի ոչնչացման նման մի դեպքի եւս հանդիպել»*[58]:

Երբ հայերը, բռնագաղթից խուսափելու համար, ուզում էին ընդունել իսլամական հավատը, իշխանությունները նրանց մերժում էին: Բռնագաղթի ժամանակ հայերին ոչնչացնելու թուրքերի մեթոդներից էր կանանց ու երեխաներին նավով ծով դուրս բերելն ու այնտեղ խորտակելը[59]:

Արդեն բռնագաղթի սկզբում հնչող՝ *«Շատ բան հետներդ մի վերցրեք»*, կամ էլ երեխաներին ակնարկող՝ *«Փոքր առնետներն էլ են վտանգավոր»* եւ նման արտահայտությունները ստիպում էին Ավստրո-Հունգարիայի ներկայացուցիչներին Թուրքիայում սպասելու *«վատ բաների»*[60]:

Օգոստոսի սկզբին ռուսական բանակը ստիպված էր ռազմավարական պատճառներով թողնել Վանը: Օգոստոսի 11-ին թուրքերը նորից քաղաք մտան:

Կ. Պոլսից մի զեկուցագրում ասված է.

«Վանի գրավումն ավելի շուտ հայերի արածն էր, քան ռուսների: Այդ պատճառով թուրքերի կողմից Վանի վերագրավումով մի սարսափելի դատաստան է սկսվել ամբողջ շրջանի հայերի նկատմամբ»[61]:

Այդ «սարսափելի դատաստանները» ստիպեցին Պալավիչինին «բարեկամաբար» Մեծ վեզիրի մոտ միջնորդել հայերի համար: Նա պատասխանեց, որ շուտով կմեղմացնի հայերի դեմ ձեռնարկվող միջոցները: Սա մի խոստում էր, որ չկատարվեց: Ընդհակառակը, Պալավիչինին իր գործընկերներից անընդհատ լսում էր հայերի

նկատմամբ ամենախիստ վերաբերմունքի եւ թուրքերի «դաժան գործելակերպի» մասին: Նա զեկուցեց Վիեննա.

«Թուրքերի կողմից հայերի նկատմամբ կատարած դաժանությունները հնարավոր չէ անվերջ թաքցնել: Դրանք, ի վնաս թուրքերի գործին, հայտնի են դառնում երկրից դուրս: Այսպես, ռումինական մամուլն արդեն արծարծել է այդ թեման, մատուցել այն հայերի համար նպաստավոր ոգով: Ցավոք, այստեղի իշխանավորներին հնարավոր չէ համոզել, որ նրանց գործելակերպը հայերի նկատմամբ ճիշտ չէ, վտանգ կա, որ դրա վերաբերյալ համառ միջամտությունը գործը միայն կվատթարացնի: Ինչպես երեւում է, այստեղ նպատակ է դրվել մեկ անգամ կասկածելի դարձած հայկական տարրը մեկընդմիշտ վնասազերծելու»[62]:

«Մեկընդմիշտ վնասազերծել» նշանակում էր բնաջնջել 2 միլիոնից ավել հայերին, նպատակ ունենալով նաեւ նրանց ունեցվածքի հաշվին հարստանալ: 1915 թ. օգոստոսի 31-ին Բրուսայից հյուպատոսը զեկուցում է.

«Հայերին ժամանակին կարգադրվել է, որ ներկայանալով դեֆթերհանե (գրանցման սենյակ), հայտարարել, որ ուզում են վաճառել իրենց տունը կամ հողամասը եւ իրենց առաջարկված գումարը համապատասխանում է վաճառված իրի արժեքին»[63]:

Սակայն Դանդինին՝ Ավստրո-Հունգարիայի հյուպատոսը Հալեպում, այլ կերպ էր մտածում, քան նրա գործընկերները: Բռնագաղթի մեղքը նա հայերին էր վերագրում եւ համարում էր, որ կառավարությունն իր նկատմամբ հայերի թշնամական դիրքը փոխելու ապարդյուն ջանքերից հետո, ստիպված էր հղել հայերին տեղահանելու արեւելյան վիլայեթներից: Նա գրում է.

«Լուրեր են շրջում արյունոտ կոտորածների մասին, բայց դրանք հավատ չեն ներշնչում: Հակառակ դրան, մեծ հավանականությամբ կարելի է ենթադրել, որ երկրի ներսում տեղի են ունեցել վտանգավոր հայկական տարրերի մեծ թվով զանգվածային մահապատիժներ»[64]:

Դանդինին առաջին հերթին մեղադրում էր Անտանտին, որը, նրա կարծիքով, զուտ շահադիտական պատճառներով ձգտում էր *«մինչեւ այսօր շարունակվող քայքայիչ գործունեությամբ քրիստոնյաներին այս շրջաններում անհեռանկարային ոտնձգությունների սադրել կառավարության դեմ»*[65]:

Երբ Թուրքիայի դաշնակիցները բողոքներից բացի ոչինչ չձեռնարկեցին հայերի հալածանքների դեմ, լուր տարածվեց, թե նրանք, իսկ ամենից առաջ՝ Գերմանիան, հավանություն էին տվել այդ միջոցառումներին: Այդ լուրին հակազդելու նպատակով եւ ամենից առաջ հայերի գործով հատուկ Կ. Պոլիս եկած դոկտոր Լեփսիուսին հավաստիացնելու, որ Գերմանիան ջանացել է օգնելու հայերին, Վանգենհայմը մի խիստ հեռագիր հղեց թուրքական կառավարությանը, որում, ի միջի այլոց, ասվում էր, որ Գերմանիային տարբեր կողմերից մեղադրում են, որ նա, որպես Թուրքիայի դաշնակից, *«հանգիստ դիտում է, թե ինչպես են իրականացվում աննախադեպ դաժանութ-*

յուններ եւ թե ինչպես է բնաջնջվում մի ամբողջ ցեղ եւ նույնիսկ այդ անելու խորհուրդ է տալիս»[66]:

Այս մասին Պալավիչինին հաղորդում է.

«Գերմանական դեսպանի երեկվա քայլն ակներեւորեն պետք է միջոց ընձեռի հետագայում, երբ խոսք բացվի հայկական հարցի ու Թուրքիայի գործելակերպի մասին, վկայակոչելու այն հանգամանքը, որ նա զգուշացրել է թուրքական կառավարությանը հայերի նկատմամբ նրա քաղաքականության հետեւանքների մասին»[67]:

Այն, որ այս միջնորդություններն ու դեմարշները խաբեություն էին, ամենից լավ երեւում է 1916 թ. հունվարի 14-ի գաղտնի զեկուցագրից.

«Իշխան Հոհենլոհեն նույնպես ստիպված էր լրջորեն խոսելու թուրքական կառավարության հետ հայերի հալածանքների առիթով, բայց նա այդ արեց այնպիսի ձեւով, որ թուրքերը հազիվ թե զգային, որ նրանց վարվելակերպից դժգոհ են»[68]:

Տեղահանվողներին ճանապարհին կողոպտել տալու համար կառավարությունը բանկերին կարգադրել էր նրանցից ոչ զարդեր, ոչ էլ՝ փող չընդունել[69]: Հետեւանքներն ակնհայտ էին: Բրուսայից Ավստրո-Հունգարիայի գրասենյակի խորհրդատու Թրանոն հաղորդում է, որ քրդերը հեռացել էին Բրուսայից, որպեսզի ճանապարհին հարձակվեին տեղահանվողների վրա եւ կողոպտեին նրանց[70]: Այն, որ կողոպուտը կապված էր գազանությունների ու սպանությունների հետ, ապացուցում են այն բազմաթիվ դիակները, որոնք ընկած էին քարավանների ուղիներին:

Ռաֆայել դե Նոգալեսը «Չորս տարի մահիկի ներքո» գրքում գրում է.

«Փողոցի կողքի բլրին իրար վրա ընկած էին հազարավոր դիակներ, արնաշաղախ, յուրաքանչյուր զոհն այնտեղ, ուր ընկել էր իր դահիճների գնդակներից ու դաշույնների հարվածներից: Այս ու այնտեղ ջրածգվում էին մեռնողների ծայրանդամները, մինչդեռ ագռավները մեռածների աչքերն էին հանում, իսկ շները՝ մարմիններից աղիքները»[71]:

Թուրքական կառավարությունը կրկին հերքում էր հայերի հալածանքները եւ 1915 թ. օգոստոսի 27-ին անում է հետեւյալ հայտարարությունը. *«Ամբողջ հայ ազգաբնակչությունը՝ տղամարդիկ, կանայք եւ երեխաները, լիակատար անվտանգության պայմաններում վայելում են իշխանությունների պաշտպանությունը: Եղել են մի քանի մեղավորներ, որոնք դատապարտվել են օրինական կարգով ստեղծված դատարանների կողմից»*[72]:

Հայերը տեղահանվում էին առանց բացառության, լինեին լուսավորչական, կաթոլիկ, թե բողոքական: Նոգալեսն իր գրքում գրում է, թե երիտթուրքերը թուրքական հոգեւորականությանը համոզել էին միանալ պատերազմին, որովհետեւ նրանց խոստացել էին սրբազան պատերազմի պայմաններում ոչնչացնել հայերին եւ Թուրքիայի մյուս քրիստոնյա հպատակներին[73]:

Բռնագաղթին դիմադրեցին նաեւ Սվեդիայի եւ Անտիոքի բնակիչները: Դանդինին

1915-ի օգոստոսի 27-ին հաղորդում է.

«Անտիոքի մոտ Սվեդիայից, Ուրֆայից ու նաեւ Զեյթունի շրջակայքից հաղորդում են հայերի եւ զինված իշխանությունների միջեւ արյունոտ ընդհարումների մասին: Թուրքական կառավարության՝ զենքը հանձնելու պահանջին, հայերը պատասխանեցին կրակոցներով, եւ մինչեւ հիմա էլ շարունակվում են մարտերը»[74]:

Կենտրոնական Եվրոպայի երկրներին ուղղված մեղսակցության մեղադրանքները ստիպեցին նրանց հանդիմանել Բ. Դռանը: Այդ պատճառով Թալեաթ բեյը հարկադրված էր կարգադրելու բոլոր մութասերիֆներին՝ թեթեւացնել հայերի վիճակը: Սակայն Պալավիչինիի եւ Վանգենհայմի նման Թուրքիայի գիտակների համար *«բացառված չէր, որ այդ կարգադրությունը գուցե նպատակ ուներ թոզ փչելու գերմանական դեսպանի եւ իմ աչքերին»* (Պալավիչինի):

«Բացի դրանից մնում է սպասել, թե արդյո՞ք այդ կարգադրությունը, եթե այն իսկապես արվել է, նաեւ պիտի կատարվի, քանի որ բազմաթիվ լուրերից բխում է, որ հայերի լքված ունեցվածքը չնչին գներով ձեռք բերելու շնորհիվ զգալի չափով հարստանում են կոմիտեի շատ անդամներ ու հրեաներ, եւ որ հայերի զանգվածային տեղահանումից նյութական օգուտ ունեն նաեւ իրենք՝ իշխանությունները»[75]:

Պալավիչինիի ենթադրությունը կարճ ժամանակ անց հաստատվեց: Սեպտեմբերի 8-ին նա հաղորդում է.

«Չնայած Թալեաթ բեյի հավաստիացմանը, թե ինքը խստագույն կարգադրություններ է արել դադարեցնելու հայերի հալածանքները, եւ թեեւ նա իշխան Հոհենլոհեին հանձնել է այդպիսի կարգադրության գերմաներեն տեքստը, թվում է, թե հայերի վիճակում բարելավում դեռեւս տեղի չի ունեցել... Բանն այն է, որ, ինչպես իմացա ներքին գործերի նախարարության ոստիկանական բաժնից, թեեւ գավառներում կարգադրություն է ստացվել կաթոլիկներին թույլ տալու վերադառնալ իրենց բնակավայրերը, սակայն վերջերս եղել է նաեւ ռազմական նախարարության մի կարգադրություն, ըստ որի հայերին, անկախ դավանանքից, այնպես պետք է բաժանել, որպեսզի ոչ մի տեղ բնակչության հինգ տոկոսից ավելին չկազմեն»[76]:

Առանձին գավառների վալիներն ու մութասերիֆները եռանդով իրագործում էին կառավարության ծրագրերը:

«Գոհունակությամբ կարող եմ հաղորդել, որ կառավարության մտադրությանը համաձայն, ինչպես այստեղ, այնպես էլ Մարաշ սանջակում հաջողվել է լրիվ փոխել տոկոսային հարաբերությունը: Իմ վիլայեթը մաքրված է քրիստոնյա տարրերից: Այն ժամանակ, երբ դեռ երկու տարի առաջ վաճառականների ու արհեստավորների ութսուն տոկոսից ավելին քրիստոնյաներ էին, այժմ հիննսունհինգ տոկոսը կազմում են մահմեդականները եւ միայն հինգ տոկոսը՝ քրիստոնյաները»[77]:

Բռնագաղթի անմարդկային պայմանների մասին էին հաղորդում Ավստրո-Հունգարիայի հյուպատոսները Թուրքիայի բոլոր գավառներից: Հյուպատոս Կվյատկովս-

կին Տրապիզոնից գրում է.

«Ի վիճակի չեմ նկարագրելու հայ բնակչության հուսահատ վիճակը: Սիրտդ ճմլվում է, երբ հայացք ես գցում հայերով բնակեցված թաղամասերին: Տղամարդիկ, կանայք եւ երեխաները ողբում են, փողոցներում թափված են կահավորանքի կտորներ եւ այլ կենցաղային իրեր, որոնց շրջապատել են թուրքեր ու թրքուհիներ՝ այդ իրերը գրեթե ձրի յուրացնելու մտադրությամբ: Կառավարության գործելակերպից վրդովված է ոչ միայն քրիստոնյա, այլեւ մահմեդական բնակչության մեծ մասը, զգալի է նրանց մեծ դժգոհությունը»[78]:

Դժգոհ էին նաեւ որոշ վալիներ, որոնք ճիշտ չէին համարում ոտնձգությունները հայերի դեմ եւ չէին ցանկանում կատարել բռնագաղթի հրամանները: Հալեպի վիլայեթում Զելալ բեյ վալիին տեղափոխեցին Կոնյա, որովհետեւ նա չէր ուզում հայերին տեղահանել Հալեպից[79]: Պաշտոնից հեռացվեցին նաեւ Դիարբեքիրի վալին եւ Լիջեհի կայմակամը, հետո սրանց գաղտնի սպանեցին[80]: Հայերի ծայրահեղ հալածանքների դեմ էին ոչ միայն որոշ վալիներ ու թուրքական ազգաբնակչության մի մասը, այլեւ կոմիտեի որոշ անդամներ, ինչպես Ահմեդ Ռիզա բեյը եւ անգամ շեյխ Ուլ Իսլամը: Իսմաիլ Հաքքին՝ երիտթուրք եւ թուրքական լիբերալ ընդդիմության առաջնորդը, գրում է «Bejan-ul-Hakk» թերթում.

«Յուրաքանչյուր բիրտ ճնշում, բնակչության որ հատվածի դեմ էլ ուղղված լինի, աններելի է: Հալածանքները, որոնք ուղղված են խաղաղ բնակչության դեմ, բարբարոսական են ու անխիղճ: Նման բաները լռելյայն ընդունելը նշանակում է դրանցում մեղսակից դառնալ: Օսմանյան կայսրությունում ապրող հույների ու հատկապես հայերի նկատմամբ ամենասարսափելի ոճրագործություններ են կատարվում: Մարդկային լեզուն ու գրիչն ի վիճակի չեն արտահայտելու փաստերի անգամ հարյուրերորդ մասը: Կեղծ հայրենասերներն ու կարճատես քաղաքագետները ջանում են քողարկել Թուրքիայում իշխող հարաբերությունները: Այնինչ, մենք, որպես իսկական օսմանցիներ, այսօր գոռում ենք մարդկությանն ու քաղաքակիրթ Եվրոպային, որ հայերի ու հույների հալածանքները շատ ավելի սոսկալի չափեր են ընդունել, քան երեւում է մամուլի հաղորդումներից: Հայերին ու հույներին անողոքաբար հալածում են: Նրանց կյանքը, ունեցվածքը եւ պատիվը մշտապես վտանգի տակ են: Օրեցօր հեռավոր շրջաններում հարյուրավոր հայեր են սպանվում: Մենք ամբողջ սրտով կարեկցում ենք մեր հայրենակիցների դժբախտությանը»[81]:

Թուրքական ընդդիմության մեկ այլ առաջնորդ՝ Շերիֆ փաշան, «Journal de Genive»-ի խմբագրականում գրում է (1915-ի սեպտեմբերի 18-ի համարում).

«Եթե կա մի ցեղ, որն իր հավատարմությամբ, ծառայություններով, իր պետական գործիչներով ու պաշտոնյաներով նվիրված է եղել երկրին, խելքով, որը նա դրսեւորել է բոլոր բնագավառներում՝ արդյունաբերության, տնտեսության մեջ եւ արվեստներում եւ մոտ է կանգնած մեզ՝ թուրքերիս, ապա դա հայերն են: Նրանք են Թուրքիա

ներմուծել արտադրությունն ու դրամատիկական արվեստը: Նրանց բանաստեղծները, նրանց գրողները, նրանց ֆինանսիստներն անթիվ են: Նրանց մեծ ոգիներից շատերը, ինչպես հին ժամանակներում պատմիչ Մովսես Խորենացին եւ բանաստեղծ Արիստակես Լաստիվերցին, որին համեմատել են Երեմիայի հետ, կամ մեր օրերում Ռաֆֆին, Սունդուկյանը, Շիրվանզադեն, Ահարոնյանը, Չոբանյանը, Նորայրը եւ տասնյակ ուրիշներ պատիվ կբերեին յուրաքանչյուր արեւմտյան երկրի: Մի՞թե հայ չէր Օտյանը՝ օսմանյան սահմանադրության հեղինակ Միդհաթ փաշայի աշխատակիցը: Եփրեմ խանը՝ Արեւելքի Գարիբալդին, դարձավ պարսկական սահմանադրության հերոսը, որը նախապատրաստել էր մի այլ հայ՝ Մելքոն Խանը: Եվ արդարությունը պահանջում է խոստովանել, որ ինչպես Պարսկաստանում, այնպես էլ Թուրքիայում, հայերն էական մասնակցություն են ունեցել բռնակալական ռեժիմի տապալման եւ սահմանադրության ընդունման գործում: Չկա ոչ մի լուսավորյալ թուրք, որը չստորագրի պառլամենտի հայտնի անդամ Լինչի տասներեք տարի առաջ տված գնահատականը. «Հայերը նոր քաղաքակրթության միջնորդ լինելու առանձնակի ընդունակությամբ են օժտված: Նրանք ծանոթացել են մեր բարձրագույն իդեալներին եւ այնպիսի անխոնջությամբ ու կատարելությամբ են յուրացնում եվրոպական մշակույթի բոլոր նոր նվաճումները, որ դրանում նրանց չի կարողացել հավասարվել եւ ոչ մի ուրիշ ազգ»: Եթե հիմա պատկերացնես, որ մի այդպիսի բարձրատաղանդ ժողովուրդ, որը կարող էր դառնալ օսմանյան կայսրության նորոգման պրոցեսում ամենաբարերար ֆերմենտը, կանգնած է պատմությունից վերանալու, ոչ միայն ճնշվելու, այլեւ ոչնչացվելու կետում, ապա անգամ ամենաանզգա մարդու սրտից արյուն կկաթի: Ես իմ կողմից կուզենայի սրանով այդ զոհաբերված եւ մեռնող ազգի անունից իմ վրդովմունքն արտահայտել նրա դահիճների հանդեպ եւ իմ անսահման կարեկցանքը՝ նրանց զոհերին... Որքան հաճախ եմ զգուշացրել նրան «Միություն եւ առաջադիմություն» կոմիտեից, որի սեւ հոգին ճանաչում եմ: Առնվազն Ադանայի ջարդերը, որոնք կազմակերպված էին կոմիտեի հրամանով, պետք է դաշնակցականներին իրավականության հողին վերադարձնեին: Համերաշխվելով «Միություն եւ առաջադիմություն» կոմիտեի քաղաքականության հետ՝ նրանք փրկելու փոխարեն դավաճանեցին իրենց ազգի գործին»[82]:

Հայ առաջնորդներին նույն ձեւով քննադատում է Թ. Ի. Լորենսը.

«Հայերը լավ զինված էին եւ կազմակերպված, բայց առաջնորդները նրանց բախտի քմահաճույքին թողեցին: Նրանց առանձին-առանձին զինաթափեցին ու ոչնչացրեցին: Տղամարդկանց սպանեցին, կանանց եւ երեխաներին ձմռան կեսին մերկ ու սոված անապատ քշեցին՝ որպես ցանկացած անցորդի ավար, մինչեւ նրանց կփրկեր մահը: Երիտթուրքերը հայերին ոչնչացնում էին ոչ թե այն պատճառով, որ նրանք քրիստոնյա էին, այլ որովհետեւ հայ էին»[83]:

Դաշնակցության առաջնորդներից մեկը՝ Կ. Սասունին, կատարվածի մեղքը վերագրում էր նաեւ սեփական կուսակցությանը, գրելով, որ երիտթուրքական կառավա-

ության համար հայկական կազմակերպություններից նշանակություն ուներ միայն Դաշնակցությունը, քանի որ միակ կուսակցությունն էր, որ կարող էր զինել ժողովրդին եւ ոտքի հանել նրան կառավարության դեմ: Այնինչ դաշնակցականները նրա բարեկամներն էին[84]:

Եվ դաշնակցականները խորհուրդ էին տվել հայ ժողովրդին, անգամ մահվան գնով, առիթ չտալ թուրքական կառավարությանը կպչելու ժողովրդին[85]:

Այնինչ պասիվ պաշտպանությունն ինքնախաբեություն էր[86]: Վանգենհայմը նույնպես Դաշնակցությանը համարում էր կառավարությանը հակամետ կուսակցություն, որը կարող էր զսպել հայ ժողովրդի զանգվածներին[87]:

Հղումներ

1. Lepsius, "Der Todesgang", S. 160.
2. Նույն տեղում:
3. Wien, HHStA PA I 942 Trapezunt, 8. November 1914, Z 80/P.
4. Lanne, "Armenien", S. 111.
5. John Kirakossian, "Der Erste Weltkrieg und die Armenier in der Türkei", Yerewan, 1967, S. 226.
6. Lepsius, "Der Todesgang", S. 189.
7. Նույն տեղում, S. 185.
8. Wien, HHStA PA I 943 Konstantinopel, 11. Februar 1915, Nr. 1.
9. Pomiankowski, "Der Zusammenbruch", S. 103.
10. Նույն տեղում:
11. Wien HHStA PA XL 272 Konstantinopel, 18. Jänner 1915, Nr. 38.
12. Luis Broad, "W. Churehill", Zürich, 1944, S. 162.
13. Wien, HHStA PA XL 272 Konstantinopel, 26. Jänner 1915, Nr. 50.
14. Wien, HHStA PA I 943 Konstantinopel, 28. Jänner 1915, Nr./9P-A. K.
15. Lepsius, "Der Todesgang", S. 162.
16. Նույն տեղում, S. 185f.
17. Նույն տեղում, S. 186.
18. Նույն տեղում, S. 186f.
19. Նույն տեղում, S. 187.
20. Նույն տեղում, S. 188.
21. Wien, HHStA PA XII 209 Pera, 13. März 1915, Nr. 257.
22. Arbeiter Zeitung, Wien, 28. Jänner 1915.
23. Wien, HHStA PA XL 272 Konstantinopel, 19. November 1915, Nr. 216.
24. Lepsius, "Der Todesgang", S. 196f.
25. Rafael de Nogales, "Vier Jahre unter dem Halbmond", Berlin 1925, S. 55.
26. Pomiankowski, "Der Zusammenbruch", S. 160.
27. Wien, HHStA PA XII 209 Konstantinopel, 29. April 1915, Nr. 32/P-D.
28. Wien, HHStA PA XII 272 Konstantinopel, 2. Mai 1915, Nr. 169.
29. Նույն տեղում:
30. Pomiankowski, "Der Zusammenbruch", S. 160.
31. Wien, KA AOK NA 1916, Fasz. 5670 Konstantinopel, 19. März 1916, Knr 6498.
32. G. Lazian, "Heghapokhakan Demker¦ (Revolutionäre Persönlichkeiten), S. 105.
33. Lepsius, "Deutschland und Armenien 1914-1918", Potsdam 1919, S. XV.
34. Wien, HHStA PA XII 272 Konstantinopel, 15. August 1915, Nr. 293.
35. Reichspost, Wien, 29. Juni 1915.
36. Lepsius, "Der Todesgang", S. 96.

37. Lepsius, "Deutschland und Armenien 1914-1918", S. LXXIV.
38. El-Ghassein, "Die Türkenherrschaft", S. 95.
39. Wien, HHSTA PA XXXVIII 375, Trapezunt, 17. September 1912, Z31/P.
40. Lepsius, "Der Todesgang", S. 97f.
41. de Nogales, "Vier Jahre", S. 57.
42. Wien, HHStA PA XII 209 Konstantinopel, 29. April 1915, Nr. 32/P. D.
43. Wien, HHStA PA I 944, Trapezunt, 5. Mai 1915, Z23/P.
44. Wien, HHStA PA XL 272 Konstantinopel, 1. Juli 1915, Nr. 249.
45. Lanne, Armenien, S. 147.
46. El-Ghassein, "Die Türkenherrschaft", Zürich, 1918, S. 56.
47. Lepsius, "Deutschland und Armenien", S. 79.
48. Նույն տեղում, S. 84.
49. Lepsius, "Der Todesgang", S. 163.
50. Wien, KA AOK NA 1915 Fasz. 5633, Konstantinopel, 8. Oktober 1915, Nr. 619.
51. Նույն տեղում:
52. Wien, HHStA PA XII 209 Konstantinopel, 24. Juni 1915, Nr. 49/P. E.
53. Wien, HHStA PA XL 272 Konstantinopel, 19. August 1915, Nr. 300.
54 Wien, HHStA PA XL 209 Konstantinopel, 24. Juni 1915, Nr. 49/P. F.
55. Wien, HHStA PA XL 209 Konstantinopel, 27. Juni 1915, Nr. 50/P. C.
56. Wien, HHStA PA XL 209 Konstantinopel, 27. Juni 1915, Nr. 50/P. E.
57. Նույն տեղում:
58. Wien, HHStA PA XXXVIII 368 Trapezunt, 20. Juli 1915, Nr. 42/P.
59. Wien, HHStA PA XXXVIII 368 Trapezunt, 31. Juli 1915, Nr. 46/P.
60. Wien, HHStA PA XXXVIII 368 Trapezunt, 4. September 1915, ZI 54/P.
61. Wien, HHStA PA XII 209 Konstantinopel, 24. August 1915 a.a. Nr. 229.
62. Wien, HHStA PA XII 209 Konstantinopel, 8. Juli 1915, Nr. 54/P. E.
63. Wien, HHStA PA XII 209 Jenikoj, 31. August 1915, Nr. 71/P. B.
64. Wien, HHStA PA XXXVIII 366 Aleppo, 8. August 1915, Nr. 10/P.
65. Wien, HHStA PA XXXVIII 366 Aleppo, 8. August 1915, Nr. 10/P.
66. Wien, HHStA PA XL 209 Jeniköj, 13. August 1915, Nr. 66/P. B.
67. Wien, HHSTA PA XL 209 Jeniköj, 13. August 1915, Nr. 66/P. B.
68. Wien, HHSTA PA XL 274 Konstantinopel, 14. Jänner 1916, Nr. 23.
69. Wien, HHSTA PA XII 209 Brusa, 27. August 1915, Nr. 70/P. B.
70. Wien, HHSTA PA XII 209 Brusa, 27. August 1915, Nr. 70/P. B.
71. de Nogales, "Vier Jahre", S. 89.
72. Lanne, "Armenien", S. 163.
73. de Nogales, "Vier Jahre", S. 20.
74. Wien, HHStA PA XXXVIII 366 Aleppo, 27. August 1915, Z 12/P.
75. Wien, HHStA PA XII 209 Jeniköj, 3. September 1915, Nr. 72/P. H.
76. Wien, HHStA PA XII 209 Jeniköj, 8. September 1915, Nr. 73/P-A-B.
77. Wien, HHStA PA XL 275 Konst., 27. Februar 1917, Nr. 47.
78. Wien, HHStA PA XII 209 Jeniköj, 24. August 1915, Nr. 69/P. D.
79. Lanne, "Armenien", S. 125.
80. El-Ghassien, "Die Türkenherrschaft", S. 92.
81. Lepsius, "Der Todesgang", S. 239.
82. Նույն տեղում, S. 273ff.
83. Lawrence, "Die sieben Säulen", S. 31.f.
84. K. Sassuni, "Aprilian Yeghern Knnakan Aknozow" (Die Untersuchung des armenischen Massakers), Beirut, 1965, S. 26.
85. Նույն տեղում, S. 42.
86. Նույն տեղում, S. 42f.
87. Lepsius, "Deutschland und Armenien", S. 48.

Nr. 79/P. — A. *Konstantinopel, 30. September 1915.*

Verschickung der Armenier in das Innere Kleinasiens.

KAIS. KÖN. U. STAATS-ARCHIV WIEN

GRAF TRAUTTMANSDORFF AN BARON BURIAN.

Alle Nachrichten, welche von armenischer Seite stammen und aus dem Inneren Kleinasiens bis hierher dringen, melden von den unerhörten Greueltaten, die gelegentlich der Verschickung der Armenier vorgekommen sind. Man könnte annehmen, daß diese Nachrichten mit Rücksicht auf ihre Quellen übertrieben wären, sie finden jedoch leider durch Berichte der Agenten und Filialen der hiesigen Banken, durch zurückgekehrte deutsche Offiziere etc. ihre Bestätigung. Augenzeugen erzählen von schrecklichen Szenen, welche sich bei der Evakuierung der von Armeniern bewohnten Dörfern abgespielt haben. Im gleichen Sinne haben auch unsere Konsulaträmter in Damaskus und in Trapezunt berichtet. Die Männer werden größtenteils erschlagen, Frauen und Kinder um ein Spottgeld an Türken verkauft. Diejenigen, welche die Wanderung in das Innere antreten, erreichen nur zu einem geringen Perzentsatze ihr Ziel, weil sie unterwegs durch Entbehrungen, Krankheit oder Erschöpfung zugrunde gehen. Es ist heute nicht mehr zu leugnen, daß die Türken die zweifellos sogar zahlreich vorgekommenen Fälle von Hochverrat und Aufruhr zum Anlaß genommen haben, die Exterminierung der armenischen Rasse durchzuführen, was ihnen zu einem großen Teile gelungen zu sein scheint. Talaat Bey sagte mir neulich selbst mit einer gewissen Genugtuung, daß es z. B. in Erzerum kaum mehr einen Armenier geben dürfte. Alle Nachrichten stimmen darin überein, daß die jüngsten Maßnahmen der Regierung gegen die Armenier unvergleichlich mehr Menschenleben gekostet haben, als die Massakers Abdul Hamids.

Bei dem jetzt herrschenden ganz maßlos übertriebenen Chauvinismus der Türken ist der Haß gegen alles Fremde und gegen den Christen in stetem Steigen begriffen. Es darf daher nicht wundernehmen, daß sich auch der in der Türkei so zahlreichen Griechen eine ziemliche Unruhe bemächtigt hat. Die seit längerer Zeit bestehende Unsicherheit in den Beziehungen mit Griechenland kann diese Beunruhigung nur erhöhen.

Die vorige Woche in Griechenland erfolgte Mobilisierung ist hier trotzdem verhältnismäßig ruhig aufgenommen worden und ich sollte glauben und hoffen, daß türkischerseits alles getan werden wird, um nicht durch unüberlegte Maßnahmen — wie schon so oft — der griechischen Regierung Anlaß zu Beschwerden zu geben und dadurch die Beziehungen zwischen den beiden Ländern zu verschlechtern.

Sollte es jedoch in der weiteren Entwicklung der Dinge zum Kriegszustande zwischen der Türkei und Griechenland kommen, so müßte ich befürchten, daß die Türkei, welche heute in dem Wahne lebt, die Exterminierung der armenischen Rasse ungestraft ausführen zu können, die Gelegenheit benützen würde, um auch gegen die Griechen mit Gewaltmaßnahmen und Massenausweisungen vorzugehen. Es würde dann bei der praktischen Undurchführbarkeit solcher Maßnahmen die Griechen das gleiche Schicksal erwarten, wie es in den letzten Monaten die Armenier betroffen hat.

Wenn — nach türkischer Auffassung — die Armenier die Schuld dafür trifft, daß der Türke in der Türkei keinen wirtschaftlichen Aufschwung nehmen kann, so müßte diese Theorie in gleicher Weise auf den Griechen anwendbar sein. Denn neben dem Armenier ist es der Grieche, der den Handel und das Wirtschaftsleben in der Türkei in der Hand hat.

Ebenso wie aber die Schuld für die Verfolgung der Armenier dem Einflusse der Zentralmächte und in erster Linie Deutschlands in die Schuhe geschoben wird, würden die Ententemächte — sollte es zu Verfolgungen der Griechen im großen Stile kommen — auch dafür sorgen, daß diese jeder Zivilisation Hohn sprechende Gewaltherrschaft der Türken gleichfalls und vielleicht noch in erhöhtem Maße auf Rechnung der teutonischen Barbaren geschrieben werden würde.

7. ԵՂԵՌՆԻ ԹՎԵՐԸ

Հայության մի մասին փրկելու համար ամերիկյան դեսպանը Թալեաթին առաջարկեց թույլ տալ նրանց արտագաղթել Ամերիկա: Թրաութմանսդորֆը 1915 թ. հոկտեմբերի 13-ին զեկուցում է Վիեննա.

«Սկզբում Թալեաթ փաշան ընդունեց այդ առաջարկը: Թալեաթը, որը ոչինչ ավելի չէր տենչում, քան որքան հնարավոր է կրճատել հայերի թիվը թուրքական կայսրությունում, սկզբում հայտարարեց, որ համաձայն է ամերիկյան գաղափարին: Այդուհանդերձ, թուրքերն այժմ սկսեցին հարուցել ամենատարբեր դժվարություններ: Պարոն Մորգենթաուի կարծիքով, թուրքական պետական գործիչները վախենում են, որ զանգվածային արտագաղթի միջոցով լայն հասարակությանը կհասցնեն հայերի դեմ ձեռնարկած միջոցառումների մասին անհաճո մանրամասներ, եւ որ աշխարհն ավելի, քան այժմ, կգբաղվի Փոքր Ասիայի խորքում տեղի ունեցող դեպքերով: Թուրքական կողմից նաեւ պահանջվում է, որ յուրաքանչյուր հայ իր մեկնումից առաջ ստորագրությամբ պարտավորվի այլեւս երբեք ոտք չդնել թուրքական տարածք: Բացի դրանից, հայերը, ըստ զուտ թուրքական պարտադրանքի, ստիպված էին հեռանալ երկրից առանց որեւէ միջոցի[1]:

Հայերի տեղահանումը շարունակելու համար թուրքական կառավարությունն օգտագործեց մի ուրիշ պատրվակ. կառավարական հրամանագրով որոշում ընդունվեց պատժելու դասալիքների ընտանիքներին[2]: Թեեւ այդ հրամանագիրը հավասարապես վերաբերում էր ողջ կայսրության բնակիչներին, սակայն խստագույն պատիժներ էին ստանում միայն քրիստոնյաները: Նադամլենցկին 1915 թ. հոկտեմբերի 22-ին Ադրիանապոլսից հաղորդում է.

«Գործնականում այնպես է արվում, որ ոստիկանական ատյանների ներկայացուցիչները գնում են այն հույների եւ հայերի տները, որոնց բնակիչները խուսափել են զինվորական ծառայությունից, եւ հայտնում են վերջիններիս, որ նրանք 14 օրվա ընթացքում պետք է տեղափոխվեն երկրի խորքը: Քրիստոնյաների զինվորական ծառայությունից խուսափելու պատճառը պետք է փնտրել նրանց հանդեպ բիրտ վերաբերմունքի եւ այն հանգամանքի մեջ, որ նրանց օգտագործում են ոչ թե որպես զինվորների, այլ որպես ճանապարհաշինարարների»[3]:

Վատիկանի նվիրակ Հ. Հոֆերը, էրզրումում ականատես էր հայերի հալածանքներին: Վերադառնալով Վիեննա՝ նա 1915 թ. հոկտեմբերի 26-ին մի հուշագիր է կազմում բռնագաղթի ենթարկվածների ճակատագրի մասին.

«Կաթոլիկական հաստատությունների դեմ ուղղված մասոնական հալածանքների կողքին պետք է հիշատակվեն թուրքական կառավարության շատ ավելի ծանրակշիռ հալածանքները ողջ հայ ազգի դեմ: Տեղահանում (բռնագաղթ) բառը նշանակում է.

1. Լիակատար բաժանում ամուսիններին՝ իրենց կանանցից ու մայրերին՝ իրենց երեխաներից:

2. Թուրք սուրհանդակների սպառնալիքները եւ շողոքորթությունները՝ սրան կամ նրան հավատափոխության դրդելու նպատակով: Հավատափոխներին, որոնք շատ են, անմիջապես տանում են զուտ մահմեդական բնակավայրեր, որտեղից այլեւս վերադարձ չկա:

3. Կանանց առեւանգում, եթե նրանք իրենց մարմնական հատկանիշներով հարմար են հարեմներին վաճառելու կամ ազնվականների ու պահակների ցածր ցանկությունները բավարարելու համար:

4. Փոքր աղջիկներին տարբեր բնակավայրերից դարձնում են թուրքական տների համար փոքրիկ աղախիններ, իսկ այդ տների պարտականությունն է նրանց տալ համապատասխան մահմեդական կրթություն: Նրանցից ոմանք նույնիսկ Կ. Պոլիս են եկել: Այլ վայրերում բոլոր քրիստոնյա տղաներին թլպատում եւ թուրքական տներ են տանում: Այսպես, սեպտեմբերի 1-ին՝ սուլթանի ծննդյան օրը, հանդիսավոր կերպով թլպատեցին 100 քրիստոնյա տղաների Անկարայից, այդ թվում շատ կաթոլիկների:

5. Կան գավառներ, որոնցում ներկայումս իրենց թուրքական հայրենիքի համար մարտնչող զինվորների կանանց ու աղջիկներին հավաքում են բացառապես թուրքական գյուղերում բաշխելու համար (ականատեսն է զեկուցողը), որը պատահել է Իզմիրում:

Ընտրությունն այս ձեւով կատարելուց հետո մնացածներին ստիպում են լքել իրենց ամբողջ ունեցվածքը, տները, դրամը եւ գնալու երկրի խորքերը: Մեծ մասամբ բիրտ ժանդարմների ուղեկցությամբ նրանք առանց հանգստի շրջում են գյուղից գյուղ, հարթավայրից հարթավայր, դեպի անհայտ նպատակ: Բաժանման տառապանքից ու ցավից հոգեպես ցնցված, նրանց օրգանիզմն այլեւս ի վիճակի չէ դիմանալու վատ եղանակին ու զրկանքներին, այնպես որ շատերը մեռնում են ճանապարհին: Մյուսներին սպանում են առանց այլեւայլության: Այսպիսով հաստատվում է Վանում եւ Բիթլիսում հայերի համընդհանուր կոտորածի լուրը, նաեւ Մարդինի կոտորածինը, որտեղ սպանել են կաթոլիկ եպիսկոպոսին իր յոթ հարյուր հավատարիմների հետ միասին: Վերոհիշյալ վկան հաղորդում է Անգորայից, որ տասը տարեկանից բարձր արական սեռի հայ ողջ բնակչությունը բնաջնջվել է կոտորածի միջոցով: Նման շատ օրինակներ կարելի է բերել:

Այն դաժանության վրա, որին ենթարկվում են տեղահանվածները, լույս է սփռում զեկուցողի կողմից ներկայացված երկու թուրք վկաների պատմածը: Անգորայի ճանապարհին մի լքված եկեղեցում սվիններով հսկողության տակ էին գտնվում հարյուր

հիսունից երկու հարյուր տեղահանված հայեր, այդ թվում մի կաթոլիկ քահանա եւ երկու քույրեր: Ստիպված լինելով իրենց բնական կարիքը նույն տեղում հոգալու, նրանք պառկած են իրար վրա՝ ապականված սրահում, մերկ գետնին: Երկու վկաներն այս ամբոխում նկատել էին խոլերայից մահացած կանանց երկու դիակ, որոնց պահակները թույլ չեն տվել թաղել: Պետք է նշել, որ թուրքերն իրենք կոտորածների կամ զրկանքների պատճառով զոհված հայերի թիվը համարում են հինգ հարյուր հազար, իսկ տեղահանվածներինը՝ ինը հարյուր հազար[4]:

Տեղահանվածների վիճակի մասին գնդապետ Կրեսը գրում է.

«Այն օրերին տեսածս շատ տխուր բաներից ամենասարսափելին, թերեւս, այցելությունն էր թուրքական իշխանությունների կողմից բացված որբանոց, ուր տեղավորված էին մոտ հինգ հարյուր ծնողազուրկ հայ երեխաներ: Մի հին եկեղեցում երեխաները պառկած էին բարակ ծղոտե խսիրների վրա, առանց վերմակների, հագած միայն Արեւելքում ընդունված խալաթանման գիշերանոցներ: Պատուհաններն ու դռները ջարդած էին, տանիքից կաթում էր, ննջարանի մեջտեղում անձրեւներից մի մեծ ջրափոս էր առաջացել: Երեխաները ցրտից դողում էին: Նրանք օրական երեսուն գրամ հաց եւ մի թաս ջրիկ ապուր էին ստանում: Ամենահուզիչն այն էր, որ նրանք բոլորը լուռ էին ու անտարբեր: Չէր լսվում ոչ գանգատ, ոչ տրտունջ, միայն հիվանդների տնքոց: Խոշոր մանկական աչքերը հետեւում էին մեզ՝ լի ահով ու սարսափով»[5]:

Զոհված հայերի թիվը, ըստ թուրքերի, հինգ հարյուր հազար էր[6]: Հոկտեմբերի 23-ին այդ թիվն է հաղորդում նաեւ նվիրակ Սպանելլին՝ Բուրյանին[7]: Եթե հաշվի առնենք, որ տեղահանվածների առնվազն երեք քառորդը մահացել է աքսորի ճանապարհին, ապա մինչեւ 1915 թ. հոկտեմբերի 24-ը պետք է զոհված լինեն մեկ միլիոնից ավելի հայեր: Այդ եզրակացությանն ենք հանդիպում նաեւ 1915 թ. դեկտեմբերի 2-ի մի լրտեսագրում. *«Այլ հաշվարկների հետ համընկնելով՝ իմ տեղեկատուն հավաստիացնում է, որ բնաջնջվել է մոտ մեկ միլիոն հայ»*[8]:

Զինադադարից հետո իշխանության եկած «Ազատության եւ միասնության» կառավարությունը խոսում էր ութ հարյուր հազար զոհված հայերի մասին[9]: Այդ ժամանակ արդեն վերջացել էր եւ այսպես կոչված հայերի ապստամբությունը Սուեդիայում: 1915 թ. հոկտեմբերի 25-ին Դանդինին հաղորդում է, որ ապստամբ հայերը փախել են անգլիական նավերով եւ որպես կամավոր մեկնել Դարդանել: Մինչդեռ Ուրֆայում կառավարական զորքերը ճնշել են հայերի ապստամբությունը եւ գերի են վերցրել մոտ երեսուն հազար մարդ, այդ թվում՝ կանանց ու երեխաների[10]:

Սուեդիայի ապստամբությունը, ինչպես եւ Վանինը, զուտ ինքնապաշտպանական բնույթ էր կրում: Սուեդիայից փրկություն գտած չորս հազար հիսունութ հայերից հայ բողոքական քահանա Տիգրան Անդրեասյանը գրում է.

«Իմ հայրենիք (Անտիոք) հասնելուց 18 օր անց Անտիոքում ստացվեց թուրքական կառավարության հրամանն այն մասին, որ Մուսա լեռան շուրջը գտնվող վեց գյուղերը յոթ օրվա ընթացքում պատրաստվեն տեղահանման: Հազիվ թե կարողանք պատկերացնել այն զարմանքն ու վրդովմունքը, որ առաջացրեց այդ հրամանը: Ամբողջ գիշերը չենք քնել ու մտածում էինք, թե ի՞նչ անենք: Թվում էր, թե անհույս է թուրքական կառավարությանը հակառակվելը: Սակայն մեր ընտանիքները հեռավոր անապատ ուղարկելը, որտեղ ապրում են մոլեռանդ արաբական ցեղերը, այնքան սարսափելի էր թվում, որ կանայք, ինչպես եւ տղամարդիկ, հակված էին հրամանին հակառակվելու՝ գերադասելով իրենց վրա դարձնել կառավարության ցասումը: Մենք գիտեինք, որ անհնար էր լինելու պաշտպանել մեր լեռան շուրջն ընկած գյուղերը: Կառավարության հրամանն արձակվել էր հուլիսի 30-ին: 7 օրվա ժամկետն այժմ գրեթե անցել էր, եւ մենք պարզեցինք, որ թուրքերը մեր փախուստը հայտնաբերել էին: Ապա, օգոստոսի 5-ին, սկսեցին գրոհը»[11]:

Մուսա լեռան վրա պաշտպանվողներին հաջողվեց երեսունվեց օր շարունակ դիմադրել թուրքերի գրոհներին, հետո նրանց հայտնաբերեցին ֆրանսիական ռազմանավերը եւ փրկեցին[12]:

Կարծիք կար, թե հայերին տեղահանում են միայն սահմանամերձ շրջաններից: Այնինչ պարզվեց, որ նրանց անապատներ են տեղահանել բոլոր մարզերից: 1915 թ. նոյեմբերի 2-ին Պալավիչինին զեկուցում է.

«Մինչեւ հիմա թվում էր, թե այն հայերին, որոնք ապրում են բուն հայկական շրջաններից դուրս, տեղահանումը չի սպառնում: Սակայն արդեն մի շաբաթ է, ինչ լուրեր են հասնում նաեւ Ադրիանապոլսից, որ այնտեղի հայերը եւս վտարվում են»[13]:

«Հենց միայն Դամասկոսով անցել են հիսուն հազար բռնագաղթվածներ», Դամասկոսում Ավստրո-Հունգարիայի հյուպատոսի կարծիքով այսքան շատ էին այն հայերը, որոնք պետք է բնակեցվեին Հորդանանից ու Մեռյալ ծովից դեպի արեւելք: Սակայն նա չէր կարծում, որ սրանք կարող էին կենդանի մնալ: *«Սովն ու համաճարակներն արդեն մոլեգնում են նրանց շրջանում»*[14]: *Բռնագաղթածների երեխաների համար մեծ օգնություն էր,*- գրում է նա,- *եթե սրանց մասամբ բռնությամբ, մասամբ էլ հոժարակամ անջատում էին իրենց հարազատներից եւ հանձնում թուրք ընտանիքների*[15]: Բռնագաղթը շարունակվում էր: Դրա իրականացման եղանակը զարհուրելի էր: Ավստրո-Հունգարիայի հյուպատոսը 1915-ի նոյեմբերի 2-ին հաղորդում է Ադրիանապոլիսից.

«Անկարելի է նկարագրել արտաքսումների ժամանակ տեղի ունեցող տեսարանները. հիվանդներին, ծերերին ու երեխաներին դուրս էին քաշում անկողնուց եւ ուժով տանում: Անօգնական, անմեղ մարդկանց նկատմամբ ոչինչ հաշվի չէր առնվում, խիղճ չկար, իշխում էր միայն բիրտ ուժն ու բարբարոսական անարդարությունը»[16]:

Նադամլենցկին զեկուցում է, որ տեղական իշխանություններն իրենց մեղավոր չեն համարում այդ չարագործությունների համար, քանի որ գործում են Կ. Պոլսից ստացած հրամանով: Վերջում Նադամլենցկին գանգատվում է, որ ճնշող զգացում ես

ապրում, երբ լինելով քաղաքակիրթ պետության ներկայացուցիչ, ստիպված ես նայելու այդ միջնադարյան գործելակերպին՝ առանց օգնել կարողանալու եւ օգնելու իրավունքի[17]:

Երբ Պալավիչինին արձակուրդ է գնում Վիեննա, Բուրիանը պատվիրում է նրան Կ. Պոլսում Մեծ վեզիրի հետ լրջորեն խոսել հայերի տեղահանման մասին[18]: 1915 թ. նոյեմբերի 7-ին Պալավիչինին հաղորդում է, որ խոսել է Հալիլ բեյի հետ, եւ որ վերջինս ամբողջովին կիսում է իր կարծիքը, որ Թուրքիայի քաղաքականությունը հայերի հարցում վատ քաղաքականություն է, եւ որ այստեղ մեծ սխալ է թույլ տրվել: Պալավիչինին գրում է.

«Արտահայտվելով Թալեաթ բեյի համապատասխան տեսակետի մասին եւս, նա ամբողջովին անկեղծ էր եւ խոստովանեց, որ նրա գործընկեր նախարարը ձգտում էր Հայկական հարցն իր ձեւով լուծել դեռեւս պատերազմի ժամանակ եւ տերություններին կանգնեցնել կատարված փաստի առաջ»[19]:

Ահա թե ինչպես է նկարագրված Հայկական հարցի՝ Թալեաթ բեյի լուծման եղանակը՝ Ադրիանապոլսից 1915 թ. նոյեմբերի 2-ի մի զեկուցագրում.

«Յուրաքանչյուր օր նոր մանրամասներ են բերվում այն մասին, թե ինչպիսի բարբարոսական ու գազանային ձեւով է կատարվել հայ ընտանիքների արտաքսումը, եւ ինչ աստիճանի է հասել թուրքական մարմինների դրսեւորած ցինիզմը: Ես կարող եմ հավաստիացնել Ձերդ Գերազանցությանը, որ միայն ամենադաժան ու ամենացինիկ երեւակայությունն է ի վիճակի պատկերացնելու այդ իրադարձությունների սարսափները: Վերջին օրերի իրադարձությունների ամբողջ բնակչության վրա թողած տպավորությունը (մահմեդականները բացառություն չեն կազմում) պարզապես ցնցող էր»[20]:

Այդ բարբարոսական եւ գազանային գործելակերպը ստիպում է Ադրիանապոլսում Ավստրո-Հունգարիայի հյուպատոս Նադամլենցկուն իր բուլղարացի գործընկերոջ հետ միասին կազմելու մի Proces Verbal Թուրքիայի ներքին պայմանների մասին: Նադամլենցկին գրում է Պալավիչինին.

«Երկու համանման օրինակ փոխանցում եմ կայսերական գերմանական դիվանագիտության ներկայացուցչությանը, իսկ իմ բուլղարացի գործընկերը կներկայացնի մեկն իր կառավարությանը, մեկն էլ՝ Նորին մեծություն բուլղարական ցարի կաբինետի գրասենյակ»[21]:

Նադամլենցկին իր Proces Verbal-ում գրում է.

«Դեպքերը, որոնք որոշ ժամանակ է, ինչ տեղի են ունենում Ադրիանապոլսում, շատ ուժեղ տպավորություն են գործել ներկայումս Թուրքիայի հետ դաշնակցած տերությունների ներկայացուցիչների վրա: Ոտնահարվել են քաղաքակրթության բոլոր սկզբունքները եւ այն մարդկային զգացմունքները, որոնք յուրաքանչյուր քրիստոնյա տածում է իր նմանների նկատմամբ: Այն ամենը, ինչ այստեղ տեղի է ունենում, անշուշտ, լոկ իրականացումն է ահավոր ծրագրի՝ ոչնչացնել քրիստոնյա տարրը Թուրքիայում, այնքան ծանրակշիռ է, որ ստորագրյալներս պարտավորված ենք համարում այդ մասին տեղեկացնելու վերոհիշյալ տերություններին՝ հետագա տհաճ անակնկալներից խուսափելու համար: Չնայած այն փաստին, որ հայերի մի մասը Թուրքիայում արհամարհանքի արժանի եւ շատ դատապարտելի ձեւով է գործել ու հակասում է Օսմանյան կայսրության շահերին, այնուամենայնիվ, պետք է ազնվորեն խոստովանել, որ այն եղանակը, որով տեղի է ունենում հայերի վտարումը, հակասում է մարդասիրական բոլոր սկզբունքներին: Այս գործելակերպը, որը ստորագրյալներս տեսել ենք այստեղ, ցույց է տալիս, որ գործ ունենք ոչ միայն մի ամբողջ ցեղի ոչնչացման, այլեւ, եւ ավելի շուտ, նրա բնաջնջման հետ»:

Նադամլենցկին ապա տարբեր օրինակներ է բերում եւ ասում.

«Բաներ են կատարվում, որոնց ըմբռնելու ի վիճակի կլինի միայն բոլորովին աղճատված բանականությունը եւ բարբարոսական ու գազանային հոգին»[22]:

Մինչդեռ Պալավիչինին Բուրյանին բողոքում է հյուպատոս Նադամլենցկուց: Նա համարում է, որ քաղաքական իրավիճակը թույլ չի տալիս, որ հյուպատոսը պաշտոնապես ստորագրի այնպիսի փաստաթուղթ, որը կարող է հայտնի դառնալ հասարակայնությանը[23]:

Թվում էր, թե Պալավիչինիի լուրջ զրույցները թուրք իշխանավորների հետ հոգուտ հայերի հաջողությամբ էին պսակվել: 1915 թ. նոյեմբերի 10-ին նա հեռագրում է Վիեննա, որ հայերի հալածանքները դադարել են[24]: Բայց դեռ չորս շաբաթ էլ չանցած, Վիեննայում լրտեսագիր են ստանում, որում ասվում էր, որ հալածանքները շարունակվում են նախկին դաժանությամբ[25]: Նաեւ հաղորդվում էր, որ նոր հավաքատեղին Հալեպն է, որտեղ, սակայն քչերն են հասնում, որովհետեւ տեղահանվողներին ոչ հաց են տալիս, ոչ էլ՝ ջուր: Կրած տառապանքներից ուժասպառ մարդիկ մահանում էին անապատում շրջելիս: Այն, որ դա դիտավորություն էր, երեւում է, ի միջի այլոց, այն փաստից, որ Հալեպում բնակվող մի շվեյցարացու ձերբակալել եւ զինվորական դատի էին տվել, որովհետեւ նա հայերին անապատ քշելուց առաջ հիսուն հատ հաց էր բաժանել:

«Նրա պատիժը շատ ծանր կլիներ, եթե նրան չփրկեր ազդեցիկ անձանց բարեխոսությունը»[26]:

Կոտորածի մասին զեկուցել է.

«Իմ գերմանացի տեղեկատուն ճանապարհի որոշ հատվածներում կանանց եւ երեխաների անթիվ մերկացրած դիակների է հանդիպել: Մի անգամ 2.000 հայերի մի տեղ են հավաքել եւ սպանել, ինչպես գազանների: Երբ նա սարսափահար երեսը շրջել է այս սրտաճմլիկ տեսարանից, թուրքերը նրան ասել են. «Ի՞նչ ես ուզում, չէ՞ որ կայզերդ այդ է ուզում»[27]:

Երբ թուրքական կառավարությունը որոշեց հայկական ջարդերի մեղքը գցել իր

վրայից, նա ստիպում է հայերին մի հանրագրով դիմել իրեն, որում նրանք պետք է խոստովանեին, որ դավաճանաբար են գործել Թուրքիայի հանդեպ[28]:

«Ուզում եմ մի կողմ թողնել այն հարցը, թե արդյո՞ք ամբողջ հանրագիրը կառավարության կողմից պատվիրած կամ գոնե ներշնչված չի եղել»[29],- գրում է Պալավիչինին: Թեեւ թուրքական կառավարությունը մեղավորների էր փնտրում, հայերի հալածանքները շարունակվում էին: Նադամլենցկին հաղորդում է.

«Այստեղ տեղի ունեցած տեսարանները նոյեմբեր ամսվա այն սարսափելի գիշերվա ճիշտ ընդօրինակումն էին: Հրամանները, որոնք այս կապակցությամբ ստացվել են Կ. Պոլսից, թվում է, թե ավելի դրակոնյան են: Ոչ մի բացառություն չի արվում: Կովկասյան անհաջողությունների կարեկցության արժանի զոհերին աքսորից, այսինքն անխուսափելի մահից կարող է փրկել միայն իսլամն ընդունելը: Իրենց կյանքը փրկելու համար քառասուն ընտանիք արդեն մահմեդական կրոնին անցնելու խնդրագիր է ներկայացրել: Դա մի անսահման տխուր տեսարան էր, երբ երեկ վախից կիսախելագար մարդկանց մի խումբ հայտնվեց Կոնակում իրենց հայրերի հավատն ուրանալու համար»[30]:

Նադամլենցկին հաղորդում է, որ ընդամենը հարյուր վաթսուն մարդ հարկադրաբար իսլամ է ընդունել:

«Այրիներին եւ աղջիկներին անմիջապես ասացին, որ իրենց կամուսնացնեն թուրքերի հետ, իսկ երիտասարդ տղամարդկանց ստիպեցին ամուսնանալ թրքուհիների հետ: Այսպիսով, հայ համայնքն այստեղ բնաջնջվեց»[31]:

Բռնագաղթը պաշտոնապես կարգադրված էր կառավարության կողմից, իսկ կայմակամներն անձամբ էին կազմակերպում տեղահանվողների կողոպուտը: Այդ է ապացուցում Նամիկ բեյի զեկուցագիրը, որն ուղարկվել էր Սիվաս՝ բռնագաղթի մասին տեղեկություններ հաղորդելու համար: Այդ զեկուցագրում ասված է, որ յոթ հարյուր հազար հայեր քշվել են Դեր Զոր՝ Միջագետքի անապատ, եւ որ Ազիզիեի կայմակամն անձամբ մի հրոսակախումբ է ղեկավարել ճանապարհին նրանց թալանելու համար[32]:

Հայերի հալածանքներն արդարացնելու նպատակով թուրքական կառավարությունը մի հուշագիր է տարածում, որում նա փորձում է հայերին ներկայացնել որպես Թուրքիայի ընբոստ հպատակների եւ Անտանտի օգտին գործող լրտեսների: Ըստ այդ հուշագրի՝ հայերն արդեն տարիներ առաջ սկսել էին համագործակցել ռուսների եւ անգլիացիների հետ[33]: Պալավիչինին համարում էր, որ հուշագիրը «ճարպկորեն է սարքված»: Նա ընդունում է այն պնդումը, թե իբր հայերը միշտ գործել են Թուրքիայի դեմ: Նա նույնիսկ հավանություն է տալիս հայերի տեղահանմանը որոշ շրջաններից: Միայն թե *«տղամարդկանց կոտորելը, իսկ կանանց ու երեխաներին հեռավոր շրջաններ արտաքսելը, ուր նրանք թերի կոմունիկացիաների եւ բավարար սննդի անհնարինության պատճառով կարող էին հասնել միայն սարսափելի նվազած թվով, ոչ միայն չի կարելի արդարացնել, այլեւ ընդմիշտ անարգանքի բիծ կմնա թուրքական*

կառավարության համար»[34]:

Պալավիչինիի հետ համաձայն էր նաեւ Հալիլ բեյը: Պալավիչինին հաղորդում է.

«Ավելի անկեղծ արտահայտվեց մի քանի օր առաջ ինձ հետ զրուցելիս Մեծ վեզիրը, որը հենց սկզբից դեմ է եղել Թալեաթ բեյի ու Էնվեր փաշայի տված հրամանին»[35]:

Թալեաթի եւ Էնվերի տված հրամանը, որը «ընդմիշտ անարգանքի բիծ» պիտի մնար թուրքական կառավարության համար, հայ ժողովրդի նկատմամբ ցեղասպանության հրաման էր, որին զոհ դարձան 1,5 միլիոն հայեր:

Հղումներ

1. Wien, HHStA PA XII 463 Konstantinopel, 13. Oktober 1915, Nr. 87/P.A-B.
2. Wien, HHStA PA XII 463 Adrianopel, 22. Oktober 1915, Z 92/P.
3. Նույն տեղում:
4. Wien, HHStA PA XII 464 Wien, 26. Oktober 1915. Ref. II.
5. Kressenstein, "Mit den Türken", S. 135.
6. Wien, HHStA PA XII 464 Wien, 26. Oktober 1915, Ref. II.
7. Wien, HHStA PA XII 464 Wien, 26. Oktober 1915, P. d. Nr. 4946.
8. Wien, HHStA PA XL 272 Konstantinopel, 2. Dezember 1915, Nr. 444.
9. Institut für Aussenpolitik, "Das Armenierproblem in neun Fragen und neun Antworten", Ankara, 1982, S. 35.
10. Wien, HHStA PA XII 463 Aleppo, 25. Oktober 1915, Z 15/P.
11. Andreassian, "Suedije - ein Episode der Armenierverfolgungen 1915, Potsdam 1919, S. 55ff.
12. Նույն տեղում:
13. Wien, HHStA PA XII 463 Konstantinopel, 2. November 1915, Nr. 92/P-C.
14. Wien, HHStA PA 463 Damaskus, 7. November 1915, Nr. 76/P.
15. Նույն տեղում:
16. Wien, HHStA PA XII Adrianopel, 29. Oktober 1915, Nr. 95/P.
17. Wien, HHStA PA XII 463 Damaskus, 22. Oktober 1915, Z 65/P.
18. Wien, HHStA PA XII 463 Konstantinopel, 2. November 1915, Nr. 93/P.B.
19. Նույն տեղում:
20. Wien, HHStA PA XII 463 Adrianopel, 2. November 1915, Z 97/P.
21. Wien, HHStA PA XII 463 Adrianopel, 6. November 1915, Z 98/P.
22. Նույն տեղում:
23. Wien, HHStA PA XII 463 Konstantinopel, 10. November 1915, Nr. 94/P. B.
24. Wien, HHStA PA XII 463 Pera, 10. November 1915, Nr. 845.
25. Wien, HHStA PA XII 472 Konstantinopel, 2. Dezember 1915, Nr. 444.
26. Նույն տեղում:
27. Նույն տեղում:
28. Wien HHStA PA XII 463 Konstantinopel,7. Dezember 1915, Nr. 101/A. B.
29. Նույն տեղում:
30. Wien, HHStA PA XII 463 Adrianopel, 3. März 1916, Z 19/P.
31. Wien, HHStA PA XII 463 Adrianopel, 8. März 1916, Z 21/P.
32. Wien HHStA PA XL 275 Konstantinopel, 4. Februar 1917, Nr./21/P.B.
33. Wien HHStA PA XII 463 Konstantinopel, 10. März 1916, Nr./21/P.B.
34. Նույն տեղում:
35. Նույն տեղում:

8. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ

Երիտթուրքերի քաղաքագետները, ինչպես նաեւ Մեծ վեզիր Հալիլ բեյը, բազմիցս նշել են, որ կոտորածների շարժիչ ուժը Էնվերն ու Թալեաթն էին, Կենտրոնական Եվրոպայի տերություններից ամբողջապես կախված երկու հոգի[1]:

Երբ 1915 թ. սկզբին Լեփսիուսը Կ. Պոլսում էր, որտեղ փորձում էր համոզել թուրքական պետական գործիչներին՝ մեղմացնելու իրենց քաղաքականությունը հայերի նկատմամբ, Էնվերն ասում է նրան, որ *«իր վրա է վերցնում պատասխանատությունն այն բանի համար, ինչ տեղի է ունեցել երկրի ներսում»*[2]:

«Գլխավոր շարժիչն, անշուշտ, Թալեաթն էր,- գրում է պատմաբան Վոլֆդիտեր Բիլը,- *նա էր վալիներին ցուցումներ ուղարկում, սակայն բռնագաղթի մասին որոշումը, այնուհանդերձ, ընդունել է ամբողջ կաբինետը»*[3]:

Այն, որ հայերի հալածանքների հրամանները տվել է թուրքական կառավարությունը, ապացուցում են, ի միջի այլոց, նաեւ հետեւյալ փաստաթղթերը: Պալավիչինին՝ 1915 թ. հունիսի 24-ին.

«Կասկած չի կարող լինել, որ կառավարության գործելակերպը հայերի հանդեպ սխալ էր»[4]:

Պալավիչինին՝ 1915-ի օգոստոսի 13-ին.

«... Ես Մեծ վեզիրի ուշադրությունը հրավիրեցի այն բանի վրա, որ կգա այն ժամանակը, երբ Թուրքիան թուրքական կայսրությանն, այնուամենայնիվ, օգտակար ժողովրդի բնաջնջման այս քաղաքականության համար պատասխանատվության կենթարկվի...»[5]:

Պալավիչինին՝ 1915-ի սեպտեմբերի 3-ին.

«... Սակայն վերջերս ստացվեց նաեւ ռազմական նախարարության հրամանագիրը, ըստ որի հայերին, որ դավանանքի էլ լինեն, պետք է այնպես տեղաբաշխել, որ ոչ մի տեղ ազգաբնակչության հինգ տոկոսից ավելին չկազմեն»[6]:

Բանակի գլխավոր հրամանատարություն, կապի բաժին՝ Կ. Պոլիս, 1915 թ. սեպտեմբերի 12-ին.

«Ինչպես երեւում է, թուրքական կառավարությունը մտադրվել է ոչնչացնել ամբողջ հայկական ազգը»[7]:

Թրաուբմանսդորֆը Կ. Պոլսից 1915 թ. սեպտեմբերի 30-ին.

«Բոլոր լուրերը համընկնում են այն կետում, որ կառավարության վերջին միջոցառումներն անհամեմատ ավելի շատ մարդկային կյանք են տարել, քան Աբդուլ Համիդի ջարդերը»[8]:

«Թալեաթ բեյն ինքն ասաց ինձ վերջերս որոշակի գոհունակությամբ, որ էրզրումում հազիվ թե մի հայ գտնվի»[9]:

Բանակի գլխավոր հրամանատարություն, կապի բաժին՝ Կ. Պոլիս, 1915 թ. հոկտեմբերի 8-ին.

«Այո, թվում է, թե այդ օրենքը (հայերի բռնագաղթը) ստեղծվել է ընդհանրապես միայն հայերի օրինական բնաջնջումը օրենքի հովանու տակ անցկացնելու համար»[10]:

Նադամլենցկին՝ Ադրիանապոլսից 1915-ի հոկտեմբերի 29-ին.

«Տեղական իշխանությունները հայտարարում են, որ այդ դեպքերի համար պատասխանատվություն չեն կրում, որովհետեւ գործում են Կ. Պոլսից եկած հրամանով»[11]:

Նադամլենցկին՝ Ադրիանապոլսից 1916-ի մարտի 3-ին.

«Հրամանները, որոնք այս կապակցությամբ եկել են Կ. Պոլսից, թվում է, թե ավելի վճռական բնույթ են կրում»[12]:

Պալավիչինին՝ Կ. Պոլսից 1916 թ. մարտի 10-ին.

«Հալիլ բեյը ստիպված էր ինձ խոստովանելու, որ այն եղանակը, որով գործել է կառավարությունը, սխալ էր»[13]:

Պալավիչինին՝ Կ. Պոլսից 1916-ի ապրիլի 8-ին.

«Ցավոք, երիտթուրքական իշխանավորները, որոնք այս միության հովանու տակ ուժեղ էին զգում իրենց ծրագիրն իրագործելու համար, օգտվեցին իրադրությունից՝ ոչ թուրքական ազգությունների դեմ ամենախիստ եղանակով գործելու առումով: Թալեաթն ու Էնվերը եւ նրանց կողմնակիցները հայ ազգի դեմ կարող էին գործել միայն պատերազմի ժամանակ»[14]:

Պալավիչինին՝ Կ. Պոլսից 1917 թ. հունվարի 20-ին.

«Եթե կառավարությունը ցանկանար մի նոր հակահայկական հալածանքով ոչնչացնել այդ ազգի մնացորդը Թուրքիայում եւ դրանով արմատապես վերացնել ողջ Հայկական հարցը, ապա դա լրիվ կհամապատասխաներ թուրք ազգության ցանկությանը»[15]:

Թրաուբմանսդորֆը Կ. Պոլսից՝ 1917 թ. հունվարի 30-ին.

«Մեծ վեզիրն ասաց ինձ... որ ինքն այն կարծիքին է, որ Թուրքիան մի անգամ... ստիպված կլինի ամբողջ աշխարհի առաջ պատասխանելու հայերի նկատմամբ իր վարվելակերպի պատճառով թշնամիների անընդհատ կշտամբանքներին: Նա ասաց, որ պետք է անընդհատ շեշտել, որ այն միջոցառումների պատճառը, որոնց դիմելու համար Թուրքիան ոչ միայն իրավունք ուներ, այլեւ հանգամանքների բերումով ստիպված էր, ռուսների, ինչպես նաեւ անգլիացիների եւ ֆրանսիացիների մեքենայություններն էին, այնպես որ ամբողջ պատահածի մեղքը սրանց վրա է ընկնում... Ես չփորձեցի ետ պահել Մեծ վեզիրին իր մտադրությունից, քանի որ, որքան էլ ճիշտ լի-

Evidenzbureau des k.u.k. Generalstabes.

AUSZÜGE aus BERICHTEN k.u.k. VERTRETUNGEN

Laufende Zahl	k.u.k. Vertretung in	Datum	Inhaltsangabe
1	Konstantinopel	12/9.	Die Lage der Armenier in der Türkei ist verzweifelt. Die türkische Regierung scheint es auf die Vernichtung der ganzen armenischen Rasse abgesehen zu haben. Während und nach dem Friedensschluss werden Russland, Frankreich und England die gegen die Armenier begangenen Greuel der türkischen Regierung gewiss vorhalten. Der Vorwurf wird aber zum grossen Teil auch Deutschland treffen, dem die Gegner Einverständnis mit allen Handlungen der türkischen Regierung beimessen werden. 25/9 Nowakoch K. u. k. Armeeoberkommando Nachrichtenabteilung K. Nr. 15366 28. Sept. 1915 Gehen! 26/9 Glatz

նի նրա տեսանկյունը, չպետք է սպասել, որ Թուրքիան կարողանա մեղքից ազատվել փորձելով բարդել այն ուրիշների վրա: Թուրքիային նաեւ չի հաջողվի անտեսել տալ, որ հայ ազգաբնակչության դեմ ձեռք առած միջոցառումների իրականացման եղանակը չլսված բիրտության ու ասիական վայրենության օրինակ է ներկայացնում»[16]:

Պալավիչինին՝ Կ. Պոլսից 1917-ի մարտի 24-ին.

«Նախարարը (Զավիդ բեյ), ինձ հետ զրուցելիս, հայերի հալածանքն անվանեց... նախկին կաբինետի մեծագույն վրիպումը: Նա ասաց, որ քաղաքական տեսանկյունից մեծ սխալ էր ամբողջ ազգեր հալածելն ու բնաջնջել ցանկանալը»[17]:

Անգամ Ջեմալ փաշան՝ թուրքերի կարեւորագույն քաղաքագետներից մեկը եւ 4-րդ բանակի հրամանատարը Սիրիայում, դատապարտում է բռնագաղթի իրականացման եղանակը[18]:

Հղումներ

1. Wien, HHStA PA XL 272 Konstantinopel, 3. März 1915, Nr. 93.
2. Lepsius, "Der Todesgang", S. XIII.
3. Bihl, "Der Kaukasus Politik", S. 172.
4. Wien, HHStA PA XII 209 Konstantinopel, 24. Juni 1915, Nr. 49/P. R.
5. Wien, HHStA PA XII 209, Jeniköj, 8 September 1915, Nr. 73/P.A-B.
6. Wien, HHStA PA XII 209 Konstantinopel, 13. August 1915, Nr. 66/P.B.
7. Wien, KA AOK NA 1915, Fasz 5632, Konstantinopel, 12. September 1915, KNA 15366.
8. Wien, HHStA PA XII 209 Konstantinopel, 30. September 1915, Nr. 79/P. A.
9. Wien, HHStA PA XII 209 Konstantinopel, 30. September 1915, Nr. 79/P. A.
10. Wien, KA AOK NA 1915, Fasz 5632, Konstantinopel, 8. Oktober 1915, Nr. 619.
11. Wien, HHStA PA XII 463 Adrianopel, 29. Oktober 1915, Z 595/P.
12. Wien, HHStA PA XII 463 Adrianopel, 3. März 1916, Z 19/P.
13. Wien, HHStA PA XII 463 Konstantinopel, 10. März 1916, Nr. 21/P.B.
14. Wien, HHStA PA XII 463 Konstantinopel, 8. April 1916, Nr. 28/P.A.G.
15. Wien, HHStA PA XII 463 Konstantinopel, 20. Jänner 1916, Nr. 6/P. B.
16. Wien, HHStA PA XII 221 Konstantinopel, 20. Jänner 1916, Nr. 6/P.A.
17. Wien, HHStA PA XII 221 Konstantinopel, 24. März 1917, Nr. 25/P.B.
18. Jemal Pascha, "Erinnerungen", München, 1922, S. 358.

9. ՎԵՐՋԻՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պալավիչինիի հետ զրույցներից մեկում Թալեաթը խոստանում է դադարեցնել հայերի բռնի իսլամացումը եւ նորից Ադրիանապոլիս վերադարձնել Ռոդոսթո աքսորված հայ ընտանիքներին[1]: Այդ զրույցների արդյունքը հետեւյալն էր.

«Երեկ կայմակամն իր մոտ կանչեց մահմեդական դարձած հայերին եւ հաղորդեց նրանց, որ նրանք Կ. Պոլսից եկած հրամանով նորից հայեր են եւ կարող են կրել իրենց նախկին անուններն ու պահել իրենց նախկին կրոնը: Արտաքսվելու վախից 40 ընտանիքներ ներքին գործերի նախարարին մի կոլեկտիվ հեռագիր ուղարկեցին, որում մահմեդական մնալու թույլտվություն էին խնդրում»[2]:

Սակայն այն ընտանիքները, որոնք պետք է վերադառնային Ադրիանապոլիս, տեղ չհասան: Պալավիչինին գրում է, որ *«... Թալեաթ բեյը ճշմարտությունը չէր ասում, երբ ասում էր ինձ, թե Ադրիանապոլսից արտաքսված ընտանիքները Ռոդոսթո են տարվել: Իրականում նրանց քշել են Փոքր Ասիա»*[3]:

Հայերին ավելի լավ հսկելու համար թուրքական կառավարությունը կրճատում է նրանց իրավունքները՝ մտցնելով նոր կանոնադրություն: Այդ կանոնադրության կարեւորագույն կետերն էին թուրքահայ եկեղեցու անջատումը Էջմիածնի կաթողիկոսությունից եւ նրա տեղափոխումը Երուսաղեմ: Երկրորդ կարեւոր հրամանագիրը վերաբերում էր հայոց Ազգային ժողովի վերացմանը: Այդ ամենը նշանակում էր, որ պատրիարքին հնարավոր էր պաշտոնից զրկել ֆերմանով (սուլթանի հրամանագրով), որ բոլոր դպրոցները դրվում էին կրթության նախարարության անմիջական վերահսկողության տակ, եպիսկոպոսներն ու քահանաները կարող էին պաշտոնից հեռացվել կառավարության կողմից: Էջմիածնի կաթողիկոսից բացի, հայ եկեղեցին ուներ եւս երկու բարձրագույն հոգեւորականներ՝ Աղթամարի եւ Սիսի եպիսկոպոսները: Այս երկու տիտղոսները վերացվեցին: 1916 թ. օգոստոսի 10-ին նոր օրենքը հռչակելուց հետո հայկական պատրիարքությունը Կ. Պոլսում անմիջապես ոստիկանության կողմից փակվեց[4]:

Թուրքական կառավարությունը հայերին վերաբերող ռեֆորմները հիմնավորեց այն բանով, որ նախկին կանոնադրության մեջ, որով նախատեսվում էր Ազգային ժողովում անդամություն, պետք է փնտրել հայ հեղափոխական կազմակերպության հաջող գործունեության մեջ, որովհետեւ հոգեւոր կազմակերպությունները ենթարկվում էին քաղաքական կուսակցություններին, այնպես որ ժամանակի ընթացքում յուրաքանչյուր հոգեւորական դարձել էր կոմիտեների գործակալ: Բացի դրանից, հայ հոգեւորականները երիտասարդությանը քաղաքական սկզբունքներ էին սրսկում, այն-

պես որ սա, օգնություն ակնկալելով անգլիացիներից եւ վերջին ժամանակներում նաեւ ռուսներից, դարձել էր մեքենայությունների եւ շահերի կույր գործիք[5]: Իսկ այդպես թուրքերն ի վիճակի էին հսկողության տակ պահել ողջ մնացած հայերին:

Գերմանիայի դեսպան Վանգենհայմը 1915 թ. հոկտեմբերի 23-ին մահացել էր Կ. Պոլսում, նրա փոխարեն նոյեմբերի 15-ին Կ. Պոլիս է ուղարկվում կոմս Մետեռնիխը: Հենց սկզբից Մետեռնիխի նկատմամբ բացասական դիրք են գրավում եւ թուրքերը, եւ գերմանացիները Թուրքիայում: Կոմս Մետեռնիխն առաջին իսկ այցելության ժամանակ հանդիմանել էր թուրքական կառավարությանը Հայկական հարցի առնչությամբ[6]:

1916 թ. հոկտեմբերի 3-ին Գերմանիա արձակուրդ գնացած Մետեռնիխն այլեւս չի վերադառնում, նրա տեղը զբաղեցնում է Քյուլմանը: Մետեռնիխի մեկնման մասին Պոմյանկովսկին գրում է իր գրքում.

«Թուրքիայի հանդեպ Մետեռնիխը հենց սկզբից քիչ համակրանք ցուցաբերեց եւ ավելի շատ քննադատական դիրք ընդունեց: Նրա համար խիստ տհաճ էր լռությամբ հանդուրժել հայերի բնաջնջման թուրքական ծրագիրը: Սակայն նրա նորանոր միջամտությունները հայկական ջարդերի զոհերի օգտին հաջողություն չունեցան եւ այնպես պղտորեցին նրա հարաբերությունները թուրքական կառավարության հետ, որ արդեն 1916-ի ամռանը նրա համագործակցությունը Բ. Դռան հետ անհնարին դարձավ: Գերմանական շրջանները Կ. Պոլսում եւս գոհ չէին Մետեռնիխից եւ ձգտում էին գաղտնի զեկույցներով խարխլել նրա դիրքը Բեռլինում, ինչը կարճ ժամանակում լիապես հաջողվեց: 1916 թ. սեպտեմբերին Էնվերը պաշտոնապես պահանջեց ետ կանչել կոմս Մետեռնիխին, ինչը եւ բավարարվեց: Հոկտեմբերի 3-ին Մետեռնիխը մեկնեց: Նրան փոխարինեց պարոն ֆոն Քյուլմանը[7]:

Երբ Էնվերը Բեռլինում Մետեռնիխի մասին բողոքել է Ցիմերմանին, սա հարցրել է, թե Էնվերն ի՞նչ ունի Մետեռնիխի դեմ: Էնվերը պատասխանել է, թե «Մետեռնիխը հուսահատության է հասցնում թուրքական կառավարությանը հայերի մասին իր պատկերացումներով. նա լիովին նվիրվել է հայկական գործին»[8]:

Նոր դեսպան Քյուլմանը չէր ուզում կրկնել Մետեռնիխի սխալը: Նա ասաց Պալավիչինին, որ *«ինքը, համենայնդեպս, կխուսափի Կ. Պոլսում իր գործունեությունը եւ իր զրույցները թուրքական նախարարների հետ սկսել հայերին պաշտպանելով»[9]:*

Զմյուռնիայի հայկական գերեզմաններից մեկում 1916 թ. վերջին զենք ու պայթուցիկ նյութ գտնվեց: Այդ պատճառով թուրքական իշխանությունները քաղաքից տեղահանեցին մեծ թվով հայերի: Բայց քանի որ այդ ռումբերը Աբդուլ Համիդի ժամանակից էին, իսկ տեղահանված հայերի մեծ մասը հարուստներ էին, *«պետք է ենթադրել,- կարդում ենք 1916-ի նոյեմբերի 21-ին Կ. Պոլսից ուղարկված մի զեկուցագրում,- որ առաջին հերթին շանտաժի հետ գործ ունեին»*[10]:

Մարշալ Լիման ֆոն Զանդերսի պատահական ներկայության շնորհիվ էր, որ

«հայերի հալածանքները դադարեցվեցին եւ տեղահանվածները Զմյուռնիա վերադարձվեցին»[11]: *«Այս դեպքը հստակորեն ապացուցում է, թե ինչպիսի հալածանքների եւ վտանգների է շարունակ ենթարկվում հայ բնակչությունը Թուրքիայում»*,- գրում է Զմյուռնիայից Ավստրո-Հունգարիայի հյուպատոս Ռադիմսկին[12]:

Հայերի բռնագաղթը շահավետ եղավ որոշ երկրների համար: Սիրիայի կառավարությունը տեղահանված հայերին հիմնականում բնակեցնում էր խոշոր քաղաքներում՝ նպատակ ունենալով բարձրացնել սիրիական բնակչության մշակութային մակարդակը: Դամասկոսից Ավստրո-Հունգարիայի հյուպատոսը զեկուցում է.

«Հայերին Սիրիայում բնակեցնելով՝ այնտեղ առաջացան նոր, նախկինում այստեղ անծանոթ արտադրության ճյուղեր, մասամբ էլ բարելավվեցին եղածները»[13]:

1916 թ. դեկտեմբերի 12-ին Կենտրոնական Եվրոպայի պետությունները դաշնակիցներին խաղաղության պայմանագրի առաջարկ արեցին, սակայն դեկտեմբերի 30-ին մերժում ստացան: Անտանտի պատասխան նոտայում նշվում էր հայերի հարցը եւս: Դա այնքան զայրացրեց թուրքական կառավարությանը, որ հայերը սկսեցին վախենալ նոր հալածանքներից[14]:

Երիտթուրքերի այս նոր բռնկված ատելությունը կարող էր նոր հալածանքների նշան լինել:

Պալավիչինին հաղորդում է.

«Նման գաղտնի հրամանները վերջին տարիներին միշտ հայկական ջարդերի կամ բռնագաղթի են նախորդել, որովհետեւ դրանով ուզում էին կանխել այն բանը, որ տեղահանվածների ունեցվածքը զերծ մնար բռնի լուծարքից՝ հայերի հաշվին թուրքերի հարստացման լավագույն միջոցից»[15]:

Հայերի հաշվին թուրքերի հարստացման մասին գրում է նաեւ Պոմյանկովսկին 1917 թ. մարտի 18-ին՝ Կ. Պոլսից. *«Երիտթուրքական շրջաններին պատերազմի ժամանակ համակել էր հարստանալու իսկական մոլուցքը: Ինչպես արդեն բազմիցս առիթ եմ ունեցել հաղորդելու, հարստանալու այդ ոչինչ հաշվի չառնող մոլուցքը միանգամայն անելանելի իրավիճակ է ստեղծել պարենավորման եւ դրամական հարաբերությունների բնագավառներում: Հարստանալն ուղղակի հռչակվեց մահմեդականների հայրենասիրական պարտք, լռելյայն պայմանով, որ դա լինի քրիստոնյա գործարար մարդկանց հաշվին»*[16]:

Թուրքիայում հարստացել էին նաեւ բազմաթիվ գերմանացի զինվորականներ: Հալեպից Ավստրո-Հունգարիայի հյուպատոս Դանդինին գրում է, որ գերմանացի զինվորականները ոսկու, ժամացույցների, արժեթղթերի, թանկարժեք քարերի եւ այլ ապրանքների «աշխույժ առեւտուր» են անում: Թեեւ բարձրաստիճան զինվորականները, ինչպես թիկունքի ավագ տեսուչ գեներալ Գրոսմանը, գեներալ Ֆալկենհայնը, գեներալ Լիման Ֆոն Զանդերսը, ամենախիստ միջոցներն էին ձեռնարկում, սակայն հաջողությունը կարճատեւ էր լինում[17]:

1916 թ. վիկոնտ Բրայսը Անգլիայում «The Treatment of the Armenians in the Ottoman Empire 1915-16» վերնագրով մի գիրք հրատարակեց, որում նկարագրում էր հայերի հալածանքները: Սամսունում Ավստրո-Հունգարիայի հյուպատոս Կվյատկովսկին այսպես է մեկնաբանում այդ գիրքը.

«Որքանով կարողացել եմ մինչեւ այժմ ծանոթանալ այդ գրքին, նրա բովանդակությունը, ըստ իմ տպավորության եւ տեղեկությունների, մեծ մասամբ հիմնված է ճշմարտության վրա: Արդեն Տրապիզոնից առիթ էի ունեցել պարզաբանելու կայզերական Գերմանիայի հյուպատոսներ կոմս Ֆոն Շուլենբուրգի (Էրզրում) եւ դոկտոր Բերգֆելդի (Տրապիզոն) կողմից հայերի նկատմամբ թուրքերի գործած դաժանությունների մեղմացումը, որը, ակնհայտորեն, կատարվում էր պատվերով: Հետին թվով իմացել եմ, որ Էրզրումում գերմանական կառավարիչ պարոն Շյոբների՝ հայերի օգտին հանդես գալը չի ստացել գերմանական իշխանությունների, դեսպանության ու զինվորական միսիայի հավանությունը եւ որ կոմս Ֆոն Շուլենբուրգին հանձնարարվել է, ինչպես նաեւ գեներալ Բոռնսարթին, այլ դիրք ընդունել: Միայն անձնական տպավորությունները, այդ թվում Կարա-Հիսարի ակրոպոլիսից, որտեղ կոմս Ֆոն Շուլենբուրգը դեռեւս անցած տարվա մայիսին կանանց ու երեխաների կիսանեխած դիակներ էր տեսել, ստիպեցին նրան փոխելու իր տեսակետն ու զեկուցագրերը: Գերմանա-վրացական միսիային կցված շտաբի բժիշկ դոկտոր Հ. Շտոֆելսը հաղորդել է ինձ հենց վերջերս, որ ինքը 1915-ի աշնանը Մուշի եւ Զյունակերտի արանքում, մեծ թվով հայկական բնակավայրերում կանանց ու երեխաների ածխացած, նեխած դիակներ է տեսել»[18]:

Մինչդեռ պատերազմը Թուրքահայաստանում շարունակվում էր: 1916 թ. փետրվարի 15-ին ռուսական զորքերը գրավում են Էրզրումը: Փետրվարի 20-ին նրանք գրավեցին Մուշը, իսկ ապրիլի 18-ին՝ Տրապիզոնը: Հուլիսի 16-ին անձնատուր է լինում Բայբուրդը, իսկ հուլիսի 20-ին՝ Երզնկան: Այդ ճակատում ռուսների հետ միասին կռվում էին հայկական կամավորական վեց գումարտակներ: Երբ հայերը ռուսական զորքերի հետ մտան հայկական վիլայեթները, այնտեղ այլեւս հայեր չկային: Մինչեւ 1916 թ. օգոստոսի վերջը ռուսական բանակը գրավել էր գրեթե ողջ Հայկական բարձրավանդակը Թուրքիայում: Այդ ժամանակվանից Կովկասյան ռազմաճակատը կայուն էր մինչեւ փետրվարյան հեղափոխությունը Ռուսաստանում (1917):

Բայց փոփոխություններ էին տեղի ունենում նաեւ Անտանտի ճամբարում: 1915 թ. մարտին Անգլիան, Ֆրանսիան եւ Ռուսաստանը գաղտնի պայմանագիր կնքեցին, ըստ որի հաղթանակի դեպքում Թուրքիան պետք է հետեւյալ կերպ բաժանվեր. Ռուսաստանը պիտի ստանար Կ. Պոլիսը, նեղուցները եւ Թուրքահայաստանը, Ֆրանսիան՝ ամբողջ սիրիական ծովափը, դրանից բացի երկրի մինչեւ Տիգրիս ձգվող հատվածը, Անգլիան՝ Միջագետքը Բաղդադից մինչեւ Պարսից ծոց:

1915 թ. մայիսի 23-ին Իտալիան պատերազմ հայտարարեց Ավստրո-Հունգա-

րիային, իսկ օգոստոսի 26-ին՝ Գերմանիային: 1915 թ. ապրիլի 26-ին Իտալիան ու Անտանտը Լոնդոնում գաղտնի պայմանագիր էին ստորագրել: Իտալիային պատերազմ մտնելու համար խոստացել էին հետեւյալ տարածքները՝ ալպիական սահմանը մինչեւ Բռեներ լեռնանցքը, Իստրան, Դալմաթիայի մեծ մասը, Լիբիան, Իրիտրեան եւ Փոքր Ասիայի մասերը:

1915 թ. սեպտեմբերի 6-ին Բուլղարիան պայմանագիր կնքեց Գերմանիայի հետ եւ հոկտեմբերի 14-ին մտավ պատերազմի մեջ, դրա համար ստանալով սերբական Մակեդոնիան: 1916 թ. օգոստոսի 27-ին Ռումինիան Անտանտի կողմում մտավ պատերազմի մեջ: Նրան խոստացան Բանատը, Տրանսիլվանիան եւ Բուկովինան: 1917 թ. հունիսի 27-ին Անտանտի կողմից պատերազմի մեջ մտավ եւ Հունաստանը:

Հղումներ

1. Wien, HHStA PA XII 463 Konstantinopel, 17 März 1916, Nr. 22/P.D.
2. Նույն տեղում:
3. Նույն տեղում:
4. Wien, KA AOK Präs 1916, Konstantinopel, 15. August 1916, 47-1/39.
5. Wien, HHStA PA XII 210, Jeniköj, 19. August 1916, Nr. 63/P.C.
6. Wien, HHStA PA XII 210, Konstantinopel, 7. Oktober 1916, Nr. 76/P.C.
7. Pomiankowski, "Der Zusammenbruch", S. 176.
8. Wien, HHStA PA XIII 172 Berlin, 18. August 1916, Nr./102/P.B.
9. Wien, HHStA PA XII 463 Konstantinopel, 21 November 1916, Nr. 89/P.A-D.
10. Նույն տեղում:
11. Նույն տեղում:
12. Նույն տեղում:
13. Wien, HHStA PA XII 463 Damaskus, 28. November 1916, Nr. 32/P.
14. Wien, HHStA PA XII 463 Konstantinopel, 20. Jänner 1917, Nr. 6/P.B.
15. Նույն տեղում:
16. Wien, KA Präs 47-1/26 1917, Konstantinopel, 18. März 1917, AOK NA. NR 3979.
17. Wien, HHStA PA XXXVIII 371 Aleppo, 22. Mai 1918, Z 9/P.
18. Wien, HHStA PA XII 463 Samsus, 26. Mai 1917, Z 21/P. (siehe Faksimile S. 215f).

10. ՌՈՒՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես հայտնի է, 1917 թ. փետրվարին (նոր տոմարով՝ մարտին) Ռուսաստանում տեղի ունեցավ հեղափոխություն: Մարտի 17-ին ցար Նիկոլայը հրաժարվեց գահից: Մարտի 15-ին լոնդոնյան թերթերը ողջունեցին հեղափոխությունը, անվանելով այն «Անտանտի հաղթանակ եւ դեպի խաղաղությունը հակված ռուսական բյուրոկրատիայի պարտություն»[1]: Ապրիլի 6-ին Անտանտը մի այլ հաղթանակ էլ տոնեց՝ գերմանական խմբավորման երկրների դեմ ԱՄՆ-ի պատերազմի մեջ մտնելը:

Ռուսական հեղափոխության առաջացման մասին Ավստրո-Հունգարիայի բանակի գլխավոր հրամանատարության կապի բաժանմունքը ապրիլի 9-ին հաղորդում է.

«Անգլիան հասկացավ, որ ցարն ու նրա շրջապատը ուզում էին վերացնել աճող քաղաքական դժգոհությունները՝ արագորեն կնքելով հաշտության պայմանագիր: Դա ստիպեց Անգլիայի դիվանագետներին Դումայի առաջադիմական բլոկի օգնությամբ ձգտելու պառլամենտական կառավարության կազմավորման, որպեսզի պատերազմի ու խաղաղության հարցի որոշումը չթողնվի միայն ցարի վրա: Դումայի առաջադիմական բլոկը կապվեց սոցիալիստական ոգով կազմակերպված ու ղեկավարված բանվորության հետ, որը ներգրավվեց ռազմական արդյունաբերության կոմիտեում եւ այսպիսով ոստիկանության հետապնդումից պաշտպանված՝ զգուշությամբ կազմակերպվելու եւ ագիտացիայի հնարավորություն ստացավ: Դրա համար Դումայի առաջադիմական բլոկն իր տրամադրության տակ ուներ բոլոր պարագաներում գործողության պատրաստ եւ իր նշանաբանին հետեւող ժողովրդական զանգվածը: Դա նախապատրաստություն էր մի հեղափոխության, որը պետք է քշեր-տաներ Շտյուրմերի եւ Գալիցինի կառավարությունը, սակայն ո՛չ ցարին ու միապետությանը: Հեղափոխության ընթացքը լրիվ անակնկալի բերեց անգլիացիներին, որովհետեւ այդպիսի ռադիկալ հեղաշրջում Ռուսաստանում անհնար էին համարում: Հեղափոխական խռովություններն առաջացան հացի համար ապստամբությունից, որին ուղեկցում էր խաղաղության համընդհանուր կոչը»[2]:

Դումայում երկու կուսակցություններ էին ստեղծվել՝ անգլոֆիլ լիբերալ, որը ցանկանում էր պատերազմի շարունակությունը, եւ սոցիալիստական, որը խաղաղության կողմն էր: Անգլիացիների վախը, որ նոր ռուսական կառավարությունը կհետեւի խաղաղության գաղափարին, ուժեղացավ, երբ ռուս հեղափոխականները գերմանացիների օգնությամբ աքսորում ապրող իրենց բարեկամներին կապարադրոշմված վագոնով եւ շատ դրամով Ռուսաստան ուղարկեցին: Ավստրո-Հունգարիայի արտաքին գործերի նախարար Չեռնինը հեռագրում է Բեռլինից.

«Պարոն Ֆոն Շտումսի գալուց հետո իրադրությունը այնքանով է փոխվել, որ գեներալ Կրամոնը Նորին մեծությանը պարզ հասկացրել է, որ գերմանական բանակի գլխավոր հրամանատարությունը այսուհետեւ վճռել է Ռուսաստանի հետ հաշտության բանակցություններ վարել Status quo ante bellum-ի հիման վրա: Ներքին իրադրությունն Ավստրիայում ծայրահեղ լուրջ է: Մորավիայում արդեն կրակոցներ են եղել: Մենք մոտակա ժամանակներս նման դեպքերի ենք սպասում կայսրության տարբեր գավառներում: Չերդ պայծառափայլությանը հայտնի Մորավիայի վերոհիշյալ դեպքը, երբ կրակել են սովահար բանվորների վրա, ապացույց է այն բանի, որ մեր խոսքերին գործեր են հետեւելու»[3]:

Փետրվարյան հեղափոխությունից հետո, երբ Կովկասի բոլոր մարզերից գործադիր կոմիտեներ են ուղարկում Թիֆլիս, այնտեղ ստեղծվում է մի կովկասյան կառավարություն, որը ենթարկվում էր Պետերբուրգին: Երբ տրամադրությունը Ռուսաստանում ավելի շատ սկսեց դեպի խաղաղությունը հակվել, ռուսները անգլիական դեսպանից լսեցին հետեւյալ արտահայտությունը.

«Խաղաղություն ունենալ չեք կարող, քանի որ եթե հաշտություն կնքեք Քառյակ միության հետ, ապա ձեր վրա կհարձակվեն անգլիացիները, ճապոնացիներն ու չինացիները: Իսկ ձեզ համար, այնուամենայնիվ, ավելի լավ է մնալ ընթացիկ պատերազմում, ուր, թերեւս, ինչ-որ բան կարողանաք ստանալ մեզնից, քան թե նոր պատերազմ սկսել մեկ այլ ճակատում, ինչը այժմյան պայմաններում, անշուշտ, հատկապես դժվար կլիներ»[4]:

Պաշտոնական Ռուսաստանից հասնող լուրերը նույնպես պարզ էին դարձնում, որ խաղաղության մասին խոսք լինել չէր կարող: Անգլիական վարչական չինովնիկները վերահսկում էին ողջ ռուսական վարչական ապարատը[5]: Զեկուցագրերից մեկում կարդում ենք. *«Լենինը, որն այժմ գործում է Կրոնշտադտում, նավատորմի անդամների մեջ, թվում է, թե այլեւս վստահ չէ, որ անվտանգության մեջ է: Տեղեկատուն ինքն է խոսել նրա հետ, ընդ որում, Լենինն ասել է.*

«Ես գիտեմ, որ այս կուրացած մարդիկ չգիտեն կամ չեն ուզում իմանալ, որ պատերազմը Ռուսաստանի համար վերջնականորեն տանուլ է տրված»[6]:

Հոկտեմբերյան հեղաշրջումից քիչ առաջ Ավստրո-Հունգարիայի բանակի գլխավոր հրամանատարության զեկուցագրերից մեկում ասված էր.

«Լենինը շատ կարճ ժամանակից ամբողջ իշխանությունն իր ձեռքում կունենա: Կարճ ժամանակից պետք է սպասել ձախ կողմնորոշում ունեցող նոր կառավարության, որը գերազանցապես բաղկացած կլինի մաքսիմալիստներից, ապա սոցիալ-հեղափոխականներից»[7]:

Մեկ ամիս չանցած հաղորդվում է.

«Հենց նոր պաշտոնական հեռագիր ստացվեց, որ Պետերբուրգում բոլոր նախարարները ձերբակալվել են բանվորական եւ զինվորական խորհուրդների կողմից: Կենսկին փախել է, նրա ձերբակալման հրամանը հրապարակված է»[8]:

1917 թ. հոկտեմբերյան հեղափոխությունից հետո հին կովկասյան կառավարությունը պաշտոնաթող եղավ, եւ նոյեմբերի 24-ին ստեղծվեց մի նոր կառավարություն, բաղկացած երեք վրացիներից, երեք հայերից, երկու ռուսներից ու չորս մահմեդականներից: Այս կառավարությունը ենթարկվում էր Պետերբուրգի կենտրոնական կառավարությանը: Վրաստանում ամենաուժեղը ոչ մաքսիմալիստական, այլ չափավոր ուղղությանը հարող (մենշեւիկներ) սոցիալ-դեմոկրատական կուսակցությունն էր: Հայերի մոտ ամենաուժեղը Դաշնակցությունն էր, որը վճռական դեր էր խաղում: Մահմեդականները երկու կուսակցություն ունեին՝ Մուսավաթ՝ կովկասյան ֆեդերատիվ կուսակցություն, եւ Յոթնումութ՝ սոցիալ-դեմոկրատական:

1917 թ. դեկտեմբերի սկզբին խորհրդային կառավարությունը կարգադրեց ռազմաճակատի առաջնորդներին կապվել հակառակորդի հետ զինադադարի նպատակով:

Դաշնակիցները սպասում էին դրան, դա երեւում է Չեռնինի հետեւյալ խիստ գաղտնի գրությունից.

«Այն, որ Լենինն ու նրա մարդիկ հետագայում կփորձեն հեղափոխականացնել մեր երկիրը, ինքնին հասկանալի է: Այնուամենայնիվ, այդ վտանգն ավելի փոքր է, քան «միջին ուժերի» երկրների լիակատար ուժասպառությունը, որին շուտով կհասնենք, եթե տնտեսապես չյուրացնենք Ռուսաստանը: Այդ պատճառով մենք ընտրություն չունենք եւ պիտի ամեն ինչ փորձենք, անենք ամեն հնարավորը՝ Ռուսաստանի հետ հաշտության հասնելու համար»[9]:

Բրեստ-Լիտովսկում սկսվեցին հաշտության բանակցությունները, բայց 1918 թ. փետրվարի 10-ին ընդհատվեցին, որովհետեւ գերմանական բանակի հրամանատարությունը, հակառակ Գերմանիայի եւ Ավստրո-Հունգարիայի քաղաքական ներկայացուցչությունների ցանկության, անեքսիաների էր ձգտում, որոնք խորհրդային պատվիրակությունն ընդունել չէր կարող: Բրեստի բանակցությունների մասին զեկուցագրերից մեկում կարդում ենք.

«Ինչպես դոկտոր Քյուլմանը, այնպես էլ կոմս Չեռնինը, Ռուսաստանի հետ բանակցությունների ժամանակ ուղղակի անեքսիաներ չեն պահանջել: Նրանց մտադրությունն է, ռուսական կառավարության կողմից իրենց տրված Ռուսաստանի ժողովուրդների ինքնորոշման իրավունքի կարգախոսի օգնությամբ, հասնել վերջիններիս կցմանը երկու կայսրություններին: Ավստրո-Հունգարիայի եւ Գերմանիայի ներկայացուցիչները ամբողջ ժամանակ լրիվ համամիտ էին, որ պետք է փորձեն վերոհիշյալ հիմքի վրա Ռուսաստանից հնարավորին չափ շատ բան պոկել, սակայն այնպես, որ հաշտությունն այս թաքնված տարածքային հավակնությունների պատճառով ոչ մի դեպքում չձախողվի: Սա բառացի համապատասխանում է Բալհաուզ հրապարակի եւ Վիլհելմշտրասեի միջեւ որոշված պայմաններին»[10]:

Խորհրդային պատվիրակությունն ընդունել էր այս առաջարկությունը, միայն թե նա ուզում էր, որ գերմանական խմբավորման երկրների կողմից օկուպացված Լեհաստանում, Կուռլանդիայում, Լիֆլանդիայում, Էստոնիայում եւ Լիտվայում հանրաքվեներ անցկացվեին միայն այն ժամանակ, երբ գերմանացի օկուպանտ զինվորներն այդ մարզերից դուրս եկած կլինեին, որպեսզի զենքի օգնությամբ ճնշումը բացառվի[11]: Բայց հենց դա էլ չէր ուզում գերմանական բանակի հրամանատարությունը: Նա չէր ուզում հեռանալ օկուպացված մարզերից:

Չեռնինը գրում է.

«Հունվարի 13-ին գեներալ Հոֆմանը՝ գերմանական բանակի հրամանատարության ներկայացուցիչը, բանակցությունների դահլիճում մի ծայրահեղ սուր ճառ ասաց, որում ի լուր աշխարհի գոռաց հաղթական գերմանական բանակի հզորության մասին եւ հայտարարեց, որ գբաղեցրած մարզերի ազատումն ընդմիշտ բացառված է: Իրադրությունը դրանով, իհարկե, կրկին սրվեց: Քյուլմանը կիսում է իմ տեսակետը, որ հազիվ թե հնարավոր լինի հաշտության գալ, եթե գերմանական բանակի գլխավոր հրամանատարությունը շարունակ խանգարի մեր քաղաքականությանը»[12]:

Չեռնինի եւ Քյուլմանի մտավախությունն արդարացավ: 1918-ի փետրվարի 10-ին Տրոցկին Բրեստ-Լիտովսկում հայտարարեց.

«Ժողովրդական կոմիսարների խորհրդի անունից սրանով տեղեկացնում ենք մեզ հետ պատերազմող, դաշնակից եւ չեզոք երկրների կառավարություններին ու ժողովուրդներին, որ Ռուսաստանը, հրաժարվելով անեքսիոնիստական պայմանագիր ստորագրելուց, իր կողմից ավարտված է համարում պատերազմական դրությունը Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Թուրքիայի եւ Բուլղարիայի հետ: Միաժամանակ ռուսական զորամասերին բոլոր գծերում լիակատար զորացրման հրաման է տրվում»[13]:

Սա խառնաշփոթություն առաջացրեց: Չկային հաշտության բանակցություններ, բայց չկար եւ պատերազմ: Պատերազմից հոգնած ռուս զինվորները գոհունակությամբ ընդունեցին զորացրման հրամանը: Դա ռազմաճակատներում քաոս ստեղծեց: Զինվորների մեծամասնությունը վաճառում էր ռազմապիտույքը՝ տուն գնալու ծախսը հոգալու համար: Արդեն 1918 թ. կեսերից ռուսները սկսել էին իրենց զորամասերը դուրս բերել թուրքական տարածքներից: Ռուսական բանակում ծառայող հայերը, իհարկե, դառնացած էին: Նրանք անկախ Հայաստան ունենալու հույսեր էին տածել: Մյուս կողմից ռուսական բանակի նահանջը սպառնում էր, որ այս շրջաններում դեռեւս ապրող հայերը թուրքերի կողմից կոտորածի կենթարկվեն[14]: Հայազգի զինվորները կազմեցին կամավորական գումարտակներ եւ գբաղեցրին ռուսների կողմից ազատված շրջանները: Թուրքական զորքի ներխուժումը կասեցնելու համար դաշնակցական եւ բոլշեւիկ հայերը միասին էին աշխատում: Ռուբեն Տեր-Մինասյանը՝ Դաշնակցության առաջնորդներից մեկը, խոսեց Անդրկովկասում Լենինի լիազորված ներ-

կայացուցիչ Շահումյանի հետ Կովկասյան ռազմաճակատի պահպանման մասին: Շահումյանը խոստացավ ամեն ինչ անել Կովկասյան ճակատը կրկին ռուսական զորամասերով լցնելու համար: Հայերը հավաքեցին իրենց երիտասարդներին եւ ստեղծեցին առաջին հայկական բրիգադը գեներալ-մայոր Անդրանիկի գլխավորությամբ: 20.000 մարդ. այդ թվում՝ 300 ռուս սպա, ստիպված էին պաշտպանել 375 կիլոմետրանոց ճակատը[15]:

Հղումներ

1. Wien, HHStA PA-I-832, Haag, 16. März 1917, Nr. 2551.
2. Wien, HHStA PA-I-833, k. u. k. Armeeoberkomm. Nachricht. Abt., 9. April 1917, Nr. 107.
3. Wien, HHStA PA-I-957, Wien, 28. April 1917, Nr. 286.
4. Wien, HHStA PA-I-833, Haag, 20. Mai 1917, Nr. 20028.
5. Wien, HHStA PA-I-833, Stockholm, 22. Mai 1917, Nr. 159.
6. Նույն տեղում:
7. Wien, HHStA PA-I-833, Baden, 10. Oktober, 1917, Nr. 23503.
8. Wien, HHStA PA-I-835, Stockholm, 8. November 1917, Nr. 11349.
9. Wien, HHStA PA-I-1052, Wien, 10. Dezember 1917, Streng Geheim.
10. Wien, HHStA PA-I-1053, Wien, 2. Februar 1918, Z. 23.
11. Նույն տեղում:
12. Wien, HHStA PA-I-1053, Brest-Litowsk, 13. Jänner 1918, Nr. 96.
13. Wien, HHStA PA-I-1053, Wien, 10. Februar 1918, Nr. 23.
14. Wien, HHStA PA-I-1946, Samsun, 16. Jänner 1918, Z. 6/P.
15. Richard J. Howanissian, "Armenia on the Road to Independence", Berkley/Los Angeles, 1967, S. 114.



Կովկասյան ռազմաճակատը 1914-1917 թթ.

11. ԹՈՒՐՔԵՐԻ ԱՌԱՋԽԱՂԱՑՈՒՄԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

1917 թ. նոյեմբերի 30-ին թուրքական բանակի հրամանատարը Կովկասյան ռազմաճակատում՝ Վեհիբ փաշան, անդրկովկասյան կառավարությանը զինադադար էր առաջարկել: Այն ստորագրվում է դեկտեմբերի 17-ին՝ Երզնկայում: Այդ պայմանագրով երկու կողմերի բանակները պետք է մնային զինադադարի պահին իրենց գտնվելիք դիրքերում: Ռուսական բանակն այդ ժամանակ կանգնած էր Երզնկայում[1]: 1918 թ. հունվարի կեսերին Վեհիբ փաշան անդրկովկասյան կառավարությանն առաջարկեց մասնակցել Բրեստ-Լիտովսկի բանակցություններին: Իր գրությունը նա հասցեագրել էր անկախ կովկասյան կառավարությանը[2]: Սակայն անդրկովկասյան կոմիսարիատը մերժեց այդ առաջարկը, որովհետեւ իրավասու չէր: Միաժամանակ անդրկովկասյան կոմիսարիատը խորհրդարան ընտրելու համար Թիֆլիսում հիմնադիր ժողովի հրավիրեց բոլոր երեսփոխաններին: 1918 թ. փետրվարի 19-ին նշանակվեցին նոր կաբինետի ընտրությունները[3]:

Մինչդեռ իրադրությունը Կովկասյան ճակատում ճգնաժամային էր դարձել, քանի որ հունիսի կեսերից քրդերն անընդհատ հարձակվում էին Երզնկայի 60 կիլոմետրանոց ճակատի վրա: Այս ճակատում, որը դեկտեմբերի 17-ի զինադադարի պայմանագրով ռուս զինվորներն ազատել էին, գտնվում էին 4000 հայ զինվորներ: Քրդերն անընդհատ հարձակվում էին կապող ճանապարհների վրա: Երզնկայի հրամանատար գնդապետ Մորելը հրամայեց հետապնդել քրդական ավազակախմբերին: Այդ առիթով հաճախակի խախտվում էր սահմանագիծը: Եվ Վեհիբ փաշան 1918 թ. փետրվարի 1-ին գրեց Կովկասյան ճակատի գլխավոր հրամանատարին, թե ռուսների նահանջից հետո հայկական հայդուկները կոտորում են թուրք ժողովրդին: Վեհիբ փաշան պատրաստ էր անհրաժեշտության դեպքում օգնության հասնել: Վեհիբ փաշային ուղղված պատասխան նամակում գրված էր, որ քրդական ավազակախմբերի հարձակումների պատճառով ստիպված են եղել նրանց հետապնդելու եւ գործողությունների դիմելու, որոնք երբեմն հասցրել են մահմեդականների դեմ ուղղված անթույլատրելի արարքների[4]: Փետրվարի 4-ին Հալիլ բեյը խոսեց Պալավիչինիի հետ հայկական գավառներում թուրք ազգաբնակչության նկատմամբ հայկական պարտիզանների կազմակերպած ջարդերի մասին[5]:

Հալիլ բեյի ակնարկները նորություն չէին Պալավիչինիի համար: Փետրվարի 9-ին նա հեռագրեց Վիեննա, որ հայերի կողմից իբր թե արված գազանությունները համապատասխանում են *«լրիվ ավանդական վերսիային, որը Բ. Դուռը հնագույն ժամա-*

նակներից տարածել է քրիստոնյաների յուրաքանչյուր կոտորածի ժամանակ: Չկա ոչ մի պակաս բան, առանձին դեպքերը, երբ ռաջաների չափազանց բնական հուսահատությունը բռնության պատճառ է դարձել, անչափ ուռճացնում են, շարժումը գնալով ավելի վտանգավոր է դառնում, մինչեւ որ թուրքերը ստիպված են լինում դրան վերջ տալ, իհարկե, շատ մտածված եւ չափավոր եղանակով»[6]:

Անմիջապես դրանից հետո Պալավիչինին հեռագրեց Վիեննա.

«Ավստրո-Հունգարիայի հյուպատոսությունը Սամսունում հաղորդում է. լավատեղյակ աղբյուրից իմացա, որ Էնվեր փաշան Վեհիբ փաշային հանձնարարել է մտնել այն շրջանները, որոնք մինչեւ հիմա զբաղեցրել էին ռուսները»[7]:

Այժմ Վեհիբ փաշան հարմար պահի էր սպասում:

Փետրվարի 10-ին հավաքվեց անդրկովկասյան պառլամենտը եւ ընտրեց իր առաջին կաբինետը՝ Գեգեչկորիի գլխավորությամբ: Այդ պառլամենտն իրենից ներկայացնում էր իբրեւ տեղական ինքնավարության մարմին, սակայն եւ Ռուսաստանից ոչ անկախ: Նրա խնդիրն էր տեւական հաշտություն կնքել Թուրքիայի հետ: Սակայն նա չէր ուզում մենակ կրել կարեւոր բանակցությունների ողջ պատասխանատվությունը: Երբ Ռուսաստանում ընդհանուր խառնաշփոթ վիճակի պատճառով Անդրկովկասը լրիվ կտրվեց Ռուսաստանի քաղաքական ու վարչական կենտրոններից, անդրկովկասյան պառլամենտը հրավիրեց նոր առաջացած հարավռուսական պետություններին, հատկապես Ուկրաինային, համատեղ բանակցություններ սկսելու Թուրքիայի հետ: Սակայն անդրկովկասցիները համաձայնություն չստացան: Հենց այդ ժամանակ Վեհիբ փաշան կրկին առաջարկեց հաշտության բանակցություններ վարել: Դրա օգտին միաձայն քվեարկելուց հետո պառլամենտում ընդունվեցին հետեւյալ ցուցումները.

1. Կնքել տեւական, հավերժական հաշտություն,
2. Պահպանել 1914 թ. սահմանները,
3. Թուրքահայաստանից Անդրկովկաս փախած 200.000-ից ավելի հայերին վերադարձնել իրենց հայրենիքը եւ վերականգնել վերջինիս գոյությունը[8]:

Անդրկովկասյան կառավարությունը թուրքական կառավարությանն առաջարկեց հաշտության բանակցությունները վարել Տրապիզոնում՝ որպես չեզոք քաղաքում: Բանակցությունները պետք է տեղի ունենային մարտի 2-ին: Բայց Բրեստի բանակցություններն ազդեցին Կովկասյան ռազմաճակատի իրադարձությունների վրա: Բանն այն է, որ երբ ռուսներն ընդհատեցին բանակցությունները Բրեստ-Լիտովսկում, գերմանական բանակը, օգտվելով զորամասերի լուծարքից, ներխուժեց Ռուսաստանի խորքը եւ զավթեց կարեւոր ռազմավարական շրջաններ ու մեծ քանակի զինամթերք: Ռուսական կառավարությունը ստիպված էր ընդունել Քառյակ միության պայմանները[9]: Փետրվարի 19-ին Տրոցկին հեռագրեց Բեռլին.

«Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդն իր բողոքն է արտահայտում այն բանի դեմ, որ գերմանական կառավարությունը կարգադրել է իր զորքերին հարձակման անցնել Ռուսական Խորհրդային Հանրապետության դեմ, որը պատերազմական վիճակն ավարտված է համարել եւ բոլոր ճակատներում զորացրում է սկսել: Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը ստիպված է ստորագրել հաշտության պայմանագիրն. այն պայմաններով, որոնք առաջարկվել էին Քառյակ միության պատվիրակությունների կողմից Բրեստ-Լիտովսկում»[10]:

Գերմանական պատասխանը ռուսական կառավարությանը փետրվարի 19-ին հետեւյալն էր. *«Գերմանիան պատրաստ է վերսկսել բանակցությունները եւ հաշտության պայմանագիր կնքել Ռուսաստանի հետ»:* 6-րդ կետում ասվում է.

«Ռուսաստանը կանի իր ուժերի չափով ամեն ինչ, որպեսզի ապահովի արեւելյան անատոլիական գավառները Թուրքիային վերադարձնելը եւ ընդունում է թուրքական կապիտուլյացիաների վերացումը»:

6-րդ ա) կետում ասվում է.

«Անհապաղ պետք է իրականացվի ռուսական բանակի լիակատար զորացրումը, ներառյալ այժմյան կառավարության կողմից նոր ստեղծած զորաբաժանումները»:

10-րդ կետում ասվում է.

«Ներկա պայմանները պետք է ընդունվեն 48 ժամվա ընթացքում: Ռուսական լիազորված անձինք պետք է անհապաղ Բրեստ-Լիտովսկ մեկնեն եւ այնտեղ երեք օրվա ընթացքում հաշտության պայմանագիրը ստորագրեն, որը հետագա երկու շաբաթվա ընթացքում պետք է վավերացվի»:

Բեռլին, 21 փետրվարի 1918 թ.

Արտաքին գործերի նախարարության պետական քարտուղար Ֆոն Քյուլման[11]:

Բրեստի պայմանագրում Կարսի, Արդահանի եւ Բաթումի մասին ասվում է.

«Ռուսական զորքերը պետք է անհապաղ դուրս բերվեն նաեւ Արդահանի, Կարսի եւ Բաթումի մարզերից: Ռուսաստանը չի միջամտի այդ մարզերի պետական-իրավական եւ միջազգային-իրավական նոր կազմակերպման գործին, այլ այդ մարզերի բնակչությանը հնարավորություն կտա դրացի պետությունների, այսինքն՝ Թուրքիայի համաձայնությամբ հաստատելու նոր կարգ»[12]:

Սա թուրքերի համար հավասարազոր էր այդ երեք մարզերի ետ ստանալուն: Սուլթանի ուրախությունը մեծ էր: Մի ընդունելության ժամանակ նա ասաց, որ Բրեստի պայմանագրով ապահովվում է կովկասյան երեք շրջանների պատկանելությունը Թուրքիային եւ որ Թուրքիան դրա համար պարտական է նախ եւ առաջ Գերմանիային[13]: Մինչդեռ կառավարությունը Թիֆլիսում ապշած էր, երբ Լեւոն Կարախանից՝ Բրեստում խորհրդային պատվիրակության հայ քարտուղարից, իմացավ Կարսի, Արդահանի եւ Բաթումի վերաբերյալ որոշումների մասին[14]: Բանն այն է, որ առանց այդ շրջանների Անդրկովկասի կենսունակությունը լուրջ վտանգի տակ էր: Ռուսաստանը շատ մանր պետությունների մասնատելու ձգտում կար: Ռուսաստանի մասնատումն

Կ. Պոլսում Ավստրո-Հունգարիայի դեսպան մարկգրաֆ Յոհան ֆոն Պալավիչինի

Կ. Պոլսում Ավստրո-Հունգարիայի ռազմական ներկայացուցիչ Յոզեֆ Պոմյանկովսկի

Էնվեր փաշա

Ջեմալ փաշա



Թալեաթ փաշան Լյուքսեմբուրգում թուրքական պատվիրակության հետ (1917 թ.)

Բրեստկ-Լիտովսկյան բանակցություններում,
(ձախից աջ) Հոֆման, կոմս Քցերնին, Թալեաթ փաշա, ֆոն Բյուլման

Կոմս Կարլ
Թրաուբմանդորֆ

Հանս Ֆրայեր
ֆոն Վանգենհայմ

օգտակար էր եւ Ավստրո-Հունգարիային: Դրանով նա ազատվում էր իր ամենամեծ թշնամուց եւ հույս ուներ խուսափել իր սեփական կայսրության մասնատումից: Հակառակ դեպքում մայրցամաքի միակ մեծ տերությունը Գերմանիան կլիներ: Եթե Անտանտն ուզում էր պահպանել իր ազդեցությունը, ապա Գերմանիան եւս պետք է բաժանվեր, սակայն դա այդ ժամանակ բոլորին ուտոպիա էր թվում[15]:

Տրոցկու բանակցություններն ընդհատելուց երկու օր հետո գեներալ Ֆոն Լուդենդորֆը հայտնեց օսմանյան շտաբի պետ գեներալ Ջեքթին, որ Գերմանիայի համար ցանկալի կլիներ հզոր թուրքական հարձակում Կովկասյան ճակատում[16]: Փետրվարի 12-ին Վեհիբ փաշան նոտա հղեց Կովկասյան ճակատի գլխավոր հրամանատարին, որում բողոքում էր, թե գնդապետ Մորելն այլեւս չի կարողանում վերահսկել ճակատը, քանի որ սվազցի հայ Մուրադը իր հայդուկներով դաժանորեն հալածում է թուրք ազգաբնակչությանը: Այդ պատճառով ինքը՝ Վեհիբ փաշան, այլեւս ի վիճակի չէ զսպել իր զորամասերին եւ հարկադրված է մարդասիրական պատճառներով որոշ տեղերում խախտել սահմանագիծը, միաժամանակ հավատարիմ մնալով ռուսների հետ կնքած զինադադարի պայմանագրին[17]:

1918 թ. փետրվարի 14-ին սկսում է թուրքական հարձակումը Կովկասյան ճակատում: Հայ կամավորական ջոկատները փորձում են կասեցնել թուրքական բանակի առաջխաղացումը, սակայն նրանք շատ թույլ էին եւ ստիպված էին նահանջել: Փետրվարի կեսերին անձնատուր է լինում Երզնկան: Երզնկայից նահանջելու ժամանակ գլխավոր հրամանատարը, որը վրացի գեներալ Օդիշելիձեն էր, այնտեղ է թողնում ամբողջ ռազմապաշարն ու զինամթերքը եւ կարգադրում դրանք թուրքերին հանձնել: Նա իր հրամանը պատճառաբանում էր այն բանով, որ հաշտություն կնքելուց հետո պաշարները պիտի ետ վերադարձվեն[18]:

Թուրքական հարձակումից անմիջապես հետո Թիֆլիսի միասնական պառլամենտը՝ սեյմը, հայտարարում է, որ պատրաստ է հաշտության բանակցությունների[19]: Արդեն 1918 թ. հունվարի սկզբին գերմանական կողմը մտադրվել էր Կովկասում ստեղծել ֆեդերատիվ հանրապետություն, բաղկացած վրացիներից, հայերից, թաթարներից ու չերքեզներից: Այդ նպատակով Բաքու էին գնացել թուրքական գլխավոր շտաբի երկու սպաներ[20]: Մարտի 1-ին գեներալ Ջեքթը հաղորդեց գերմանական մեծ շտաբի կայանին, որ թուրքական կառավարությունը խնդրում է, որ Բեռլինը ստիպի Ռուսաստանին ճանաչել անդրկովկասյան պետությունների անկախությունը: Բացի դրանից, պետք է ճանաչվեր նաեւ Կազանի, Օրենբուրգի, Տաշքենդի եւ Բուխարայի մահմեդականների ինքնորոշման իրավունքը[21]:

Այս խճճված պայմաններում հաշտության բանակցությունների համար Անդրկովկասի պատվիրակությունը մեկնեց Տրապիզոն եւ մարտի 2-ին տեղ հասավ: Այստեղ արդեն նրան էր սպասում առաջին տհաճ անակնկալը. Ռեուֆ բեյը՝ թուրքական պատվիրակության ղեկավարը, հաղորդում է նրան, որ Տրապիզոնը գրավել էին թուրքական զորամասերը, այնպես որ, ըստ պատերազմական իրավունքի՝ այն Թուրքիային է պատկանում[22]: Ի միջի այլոց, Տրապիզոնը ետ էր վերցված նաեւ հույն մետրոպոլիտի օգնությամբ: Նա զինել էր հույներին, էմիսարներ էր ուղարկել թուրքերի մոտ եւ առաջարկել էր սրանց կրկին զբաղեցնել Տրապիզոնը: Հույների այդ դիրքը շատ բարենպաստ տպավորություն էր գործել թուրքերի վրա, այնպես որ հույն բնակչության վրա հարձակում չեղավ[23]: Թեեւ Տրապիզոնում հաշտության բանակցություններ էին տեղի ունենում, թուրքական բանակը շարունակեց իր առաջխաղացումը եւ հասավ մինչեւ Սարիղամիշ: Դրանով թուրքերը խախտեցին զինադադարի պայմանագիրը:

Տրապիզոնի բանակցություններում, որոնք տեւեցին մինչեւ ապրիլի 14-ը, թուրքերը պնդում էին, որ բանակցությունները պետք է վարել միայն Բրեստի պայմանագրի հիման վրա: Մարտի 10-ին Ռեուֆ բեյը անակնկալի բերեց անդրկովկասյան պատվիրակությանը Վեհիբ փաշայի հեռագրով, որում պահանջվում էր երեք օրվա ընթացքում ազատել Արդահանի, Կարսի եւ Բաթումի շրջանները, այսինքն՝ Բրեստ-Լիտովսկի պայմանագրով որոշված սահմանը: Անդրկովկասյան պատվիրակությունն իր անդամներից երեքին Թիֆլիս ուղարկեց ցուցումներ ստանալու[24]: Դրանից անմիջապես երկու օր անց թուրքերը գրավեցին Էրզրումը: Այստեղ էլ կովկասյան բանակի պաշարների հետ պատահեց նույնը, ինչ եւ Երզնկայում. գեներալ Օդիշելիձեի հրամանով դրանք հանձնվեցին թուրքերին: Օդիշելիձեի աշխատակիցները հետագայում պնդում էին, թե գեներալը զինվորական գույքի եւ պարենի հսկայական քանակը դիտմամբ՝ Վեհիբ փաշայի հետ կնքած գաղտնի պայմանագրի հիման վրա էր թողել թուրքերին[25]: Երկու ամսվա ընթացքում բոլոր թուրքական շրջանները ետ գրավվեցին: Թուրքերի մուտքը ռուսների կողմից լքված շրջաններ այլ պատճառ ուներ: Թուրքերը հարավում մեծ շրջաններ էին հանձնել անգլիացիներին: Նրանք օգտվեցին այժմ Ռուսաստանի խառն իրադրությունից՝ յուրացնելով հայկական շրջանները Կովկասում: Դրանով խափանվում էր նաեւ հետագայում ազատ հայկական պետության ստեղծումը[26]: Միաժամանակ թուրքական զորամասերը կովկասյան մահմեդականների ու քրդերի օգնությամբ շարունակում էին իրենց առաջխաղացումը Կովկասում: Դեպի Կարս ու Արդահան նրանց առաջխաղացման ժամանակ հայերը խուճապահար փախչում էին դեպի հյուսիս[27]: Մարտի 16-ին անձնատուր եղավ Արդահանը: Այնտեղ մնացած հայերին թուրքերը կոտորեցին[28]: Թուրքերն արդեն Բաթումի մոտ էին: Այս ամենը ստիպեց անդրկովկասյան պատվիրակությանը պահանջել Ռեուֆ բեյից բանակցությունների մեջ ներգրավել նաեւ Քառյակ միության, հատկապես Գերմանիայի, ներկայացուցիչներին: Ռեուֆ բեյը գրավոր պատասխանում հայտարարեց, որ Անդրկովկասն իրեն պետք է Ռուսաստանից անկախ հռչակի: Անդրկովկասյան պատվիրակությունը հրաժարվեց: Երբ վերջնագրի եռօրյա ժամկետն անցավ, նախքան Թիֆլիսից պատասխան կգար, անդրկովկասյան պատվիրակությունը ստորագրեց հաշտության պայմանագիրը:

Այդ ժամանակ Անդրկովկասյան կոմիսարիատը նիստ էր անցկացնում Թիֆլիսում՝ քննարկելու համար թուրքական վերջնագիրը, որովհետեւ Բաքումի ու Կարսի հանձնումը դիտվում էր որպես անուղղելի հարված անդրկովկասյան պետությունների տնտեսական եւ ռազմական շահերին: Դրան ավելանում էր այն հանգամանքը, որ Թուրքիան, պարբերաբար խախտելով հաշտության պայմանագրերը, ապացուցում էր, որ չի պահպանի նաեւ ապագայի պայմանագրերը, եթե դրանք չստորագրեն եւ նրանց պահպանումը չերաշխավորեն Քառյակ միության մյուս երկրները եւս, հատկապես Գերմանիան: Գեգեչկորին՝ վրաց պատգամավորը, ասում է, թե Անդրկովկասին թուրքերի գրոհից կարող է փրկել միայն երեք կողմի համերաշխությունը: Մի այլ վրացի պատգամավոր՝ Ծերեթելին, ասում է. *«Մենք, անշուշտ, կկարողանայինք հաղթել թուրքերին, եթե մեզ չխաբեին մեր թիկունքում»*:

Հայերի անունից խոսում է Հարությունյանը: Նա ասաց, որ եթե Կարսի, Արդահանի ու Բաքումի շրջանները հանձնվեն թուրքերին, սրանք դրանով էլ չեն բավարարվի: Իր ելույթը նա վերջացրեց՝ ասելով. *«Եթե պարտվելու էլ լինենք եւ եթե ստիպված էլ լինենք մեռնելու, մենք՝ հայերս, կանենք այդ՝ զենքը ձեռքներիս»*:

Թաթար պատգամավոր Ռուստամբեկովն ասում է, որ թաթարների կրոնական ու էթնիկական ընդհանրությունը թուրքերի հետ թույլ չի տալիս իրենց թուրքերի դեմ կռվել, բայց իրենք կանեն իրենց ուժերի չափով ամեն ինչ անդրկովկասյան ժողովուրդների հետ համագործակցելու համար եւ որ իրենք հարեւանի հետ պատերազմը դադարեցնելու կողմնակից են[29]: Այդ նիստում վճռվում է այլեւս չընդունել Տրապիզոնում կնքած հաշտության պայմանագիրը եւ ընդհատել բանակցությունները: Վճռվում է պայքարել Թուրքիայի դեմ[30]: Ապրիլի 1-ին թուրքերը գրավեցին Բաքումը, ընդ որում, վրացիները քաղաքը լրջորեն պաշտպանելու փորձ չարեցին: Թուրքերը գերի են վերցնում 3000 վրացի զինվորների եւ 600 սպաների[31]:

1918 թ. ապրիլի 16-ին Պալավիչինին զեկուցում է Վիեննա, որ Նիսմի բեյն ասել է, թե անդրկովկասյան պատվիրակությունն ընդունել է այդ շրջաններն ազատելու վերաբերյալ թուրքական վերջնագիրը, մինչդեռ անդրկովկասյան կառավարությունը դրա դեմ է արտահայտվել եւ պահանջել է, որ թուրք զինվորները հեռանան այդտեղից: Պալավիչինին գրում է. *«Իմ կարծիքով, դա շատ դժվար կլինի, որովհետեւ Թուրքիան Բաքումը գրավել է վրացիների ու հայերի հետ լուրջ մարտերից հետո եւ ոչ մի գնով գրավված շրջանները չի ազատի: Մյուս կողմից անդրկովկասյան կառավարությունը շատ դժվար կկարողանա հրաժարվել Բաքումից»*[32]:

Թուրքերի գործողությունները զգալիորեն թեթեւանում է վրացիների ու հայերի թիկունքում գործող թաթարների օգնության շնորհիվ: Թաթարներն օգտագործում էին հետեւյալ տակտիկան հայկական զորամասերի հզորացումը կասեցնելու համար. զինված թաթարները, թուրքական էմիսարների ղեկավարությամբ, կտրեցին կապը Թիֆլիսի եւ Բաքվի միջեւ Շամխոր-Ելիզավետպոլ շրջաններում՝ Հայաստանի արեւելքում: Հայ զինվորները ստիպված էին նահանջել[33]:

Բրեստի պայմանագրով նախատեսված էր, որ Կարսի, Արդահանի եւ Բաքումի ազգաբնակչությունը պիտի կարողանար վճռել իր պատկանելության հարցը ինքնորոշման սկզբունքների հիման վրա: Թուրքիան խախտել էր պայմանագրի այս կետը եւ կազմակերպել էր հայերի կոտորած: Հազարավոր կանայք ու երեխաներ սպանվեցին, թալանվեց եւ այրվեց նրանց ունեցվածքը: Զոհված հայերի թիվը կազմեց 8500 հոգի[34]: Ռուսական կառավարությունը բողոքեց թուրքերի հարձակման եւ գործելակերպի դեմ: Քառյակ միությանն ուղղած հեռագրում նա գրում է.

«Հայ ժողովրդի ոչնչացումը հիմա էլ է իրականացվում, բնակչությունը թուրքական ռազմաճակատում Ռուսաստանի կողմն էր, Ռուսաստանը զիջեց Արդահանը, Կարսն ու Բաքումը, քանի որ Գերմանիան Թուրքիայի դաշնակիցն էր: Այն գազանությունների պատասխանատվությունը, որոնց ենթարկվում է հայ բնակչությունը թուրքական զորամասերի կողմից զբաղեցրած շրջաններում, ընկնում է գերմանական կառավարության վրա, որի օգնությամբ Թուրքիան իրեն է վերապահել այդ շրջանները»[35]:

Գերմանացիները վաղուց ծրագրել էին թուրքական զորքի ներխուժումը Կովկաս: Արդեն սկզբից մտադրություն կար Թուրքիային սահմանակից շրջաններում ապրստամբությունների միջոցով կյանքի կոչելու պետությունների մի ինքնուրույն միություն: Պալավիչինին հոկտեմբերի 15-ին զեկուցել է.

«Այդ նոր պետության նշանակությունը պետք է կայանա Թուրքիայի եւ Ռուսաստանի միջեւ որպես բուֆերային պետություն ծառայելու եւ միաժամանակ Ռուսաստանի եւ Պարսկաստանի միջեւ կապը կտրելու մեջ...»[36]:

Քառյակ միության ձգտումներն այս ուղղությամբ ձախողվեցին: Երբ Բրեստ-Լիտովսկի պայմանագրի կնքումից հետո ռուսական բանակը դուրս եկավ օկուպացված թուրքական շրջաններից, հնարավոր դարձավ կապ ստեղծել եւ վրացիների ու թաթարների միջեւ: Այժմ գերմանացիները հնարավորություն ստացան իրականացնելու իրենց՝ դեռեւս պատերազմից առաջ որդեգրած քաղաքականությունը: Կովկասը հարուստ էր հումքով, եւ դա պատերազմը շարունակելու դեպքում հսկայական նշանակություն ուներ գերմանական խմբավորման երկրների համար:

«Թուրքական տարածքային նվաճումների հիմնական նպատակը պետք է փնտրել Արեւելքում, - գրել էր Լուդենդորֆը մարտի 15-ին գեներալ Զեքթին,- *այնտեղ ճարպիկ թուրքական դիվանագիտության համար հողային նվաճման հնարավորության կողքին կա նաեւ մինչեւ Կենտրոնական Ասիայի խորքերը ազդեցության ոլորտի ստեղծման հնարավորություն»*[37]:

Ավստրո-Հունգարիայի կովկասյան քաղաքականությունը նույն ուղղությամբ էր ընթանում: Այստեղ ձգտում էին հարթել Թուրքիայի եւ Բուլղարիայի միջեւ սահմանամերձ շրջանների վերաբերյալ վեճերը, այդ նպատակով Թուրքիային մատուցելով կովկասյան տարածքները, իսկ Բուլղարիային տալով Թրակիան եւ Դոբրուջայի կոն-

դոմինիումը[38]: Ընդհանրապես, Գերմանիան եւ Ավստրո-Հունգարիան ուզում էին *«մինչեւ Թուրքիայի եւ Բուլղարիայի միջեւ սահմանագծի ճշտումը, նախ ձգձգել կովկասյան գործը»*, 1918 թ. ապրիլի 22-ին գրում է Հոհենլոհեն Բուրյանին[39]:

Պոմյանկովսկու զեկուցագրերից մեկում կարդում ենք.

«Ամենախելացի եւ միաժամանակ միակ հնարավոր բանը թուրքական ակնկալություններին չհակադրվելն է եւ սրանց ժամանակավոր ոչ պաշտոնական եւ առանց որեւէ պայմանի այդ սահմանների ճանաչումը: Թուրքիան մեզ համար եղել է եւ մնում է հավատարիմ ու արժեքավոր դաշնակից եւ հենց այդ պատճառով արժանի է, որպեսզի իր ազգային ակնկալությունները բարյացակամորեն հաշվի առնվեն: Նա Կենտրոնական Եվրոպայի տերությունների համար... հիմա էլ շատ ավելի կարեւոր է, քան Հայաստանն ու Վրաստանը»[40]:

Առաջին քայլը Կարսի, Արդահանի ու Բաթումի գրավումն էր թուրքական զինվորականների կողմից: Թուրքերի կողմից օկուպացված հայկական շրջաններում հայերի հետ այնքան անմարդկային էին վարվում, որ Գերմանիան ու Ավստրո-Հունգարիան բազմիցս խնդրում են Մեծ վեզիրին՝ մեղմացնել վերաբերմունքը[41]:

Մեծ վեզիրը Պալավիչինիին հավաստիացրել էր, որ *«ներկայումս հայերի նկատմամբ բռնի միջոցներ չեն ձեռք առնվում, ի դեպ, Կարսի, Արդահանի շրջաններում, որտեղ թուրքական զորամասերն անցել են սահմանը, հայեր չկան»*:

Մեծ վեզիրը պնդում էր, թե համոզված է, որ թուրքերը շահագրգռված չեն բռնությունների դիմելու հայ բնակչության հանդեպ, քանի որ դա վատ տպավորություն կթողնի ամբողջ Եվրոպայում[42]:

Անդրկովկասում թուրքերի հետագա առաջխաղացման մասին հարցին Թալեաթ փաշան պատասխանել է, թե կովկասյան կառավարությունը, բողոքելով Կարսի, Արդահանի եւ Բաթումի գրավման դեմ, գործողությունների է դրդել Բ. Դռանը: Այդ պատճառով էլ շարունակել է իր առաջխաղացումը Թիֆլիսի ուղղությամբ: Եվ ահա Բ. Դուռը խնդրում է Կենտրոնական Եվրոպայի տերություններին *«թուրքական զորամասերի մտածված պլանավորված առաջխաղացումը դեպի Թիֆլիս համարել դաշնակիցների ընդհանուր շահերից բխող գործողություն: Այդ դեպքում Ռուսաստանը չի համարձակվի պատերազմ հայտարարել Թուրքիային»*:

Պալավիչինին շարունակում է.

«Ես պատասխանեցի Մեծ վեզիրին, որ այդ գործն ինձ շատ լուրջ է թվում, եւ որ իմ կարծիքով, թուրքական կողմից պարզապես սխալ էր նախքան այնտեղի կառավարության հետ համաձայնության գալն այնտեղ ներխուժել՝ հաշվի չառնելով Բրեստի որոշումները:

Թալեաթ փաշան պատասխանեց, թե Թուրքիան ստիպված է եղել այդ անելու, որովհետեւ Անդրկովկասի մահմեդական բնակչությունը խնդրել էր Թուրքիայի օգնությունը հայկական պարտիզանական խմբերի դեմ: Այսինքն, միշտ գերմանական բա-

ղադրատոմսով»[43]:

Պալավիչինին այստեղ ուղղակի շեշտում է, որ Թուրքիան իր կովկասյան քաղաքականությունը կազմակերպում էր գերմանական բաղադրատոմսով: Բայց քանի որ թուրքերը շարունակում էին գրոհել Կովկասում, Գերմանիայի արտաքին գործերի նախարարությունն սկսեց անհանգստանալ: Թուրքերն օգտվեցին իրադրությունից, սեփական կովկասյան քաղաքականություն ծավալելու համար: Արտաքին գործերի նախարարության կարծիքն էր.

«Մեր շահերի դեմ կլինի, եթե Կենտրոնական Ասիայի եւ Պարսկաստանի մատույցները հայտնվեն բացառապես թուրքերի ձեռքին, եւ մենք այնտեղ կախված լինենք օսմանցիների բարի կամքից: Մենք պատերազմի ընթացքում միլիոններ ենք ծախսել մեր հանդեպ բարեկամաբար տրամադրված կովկասյան պետություն ստեղծելու եւ դրանով մեզ համար դեպի Կենտրոնական Ասիա կամուրջ կառուցելու համար: Այդ բոլորը գրեթե իզուր կլինի, եթե թուրքերը գրավեն Բաթումն ու Անդրկովկասը»[44]:

Թուրքերի առաջխաղացումը Անդրկովկասում կապված էր հայերի նկատմամբ կիրառվող գազանությունների հետ, եւ երբ լուրերն այդ մասին սկսեցին շատանալ, Բուրյանը հանձնարարեց Բեռլինում Ավստրո-Հունգարիայի դեսպանին՝ խոսել Գերմանիայի պետական քարտուղարի օգնականի հետ հայանպաստ հրամանագրի վերաբերյալ: Պետական քարտուղարի օգնականը հայտարարեց, որ չի հավատում, թե կոտորածներ են տեղի ունենում[45]:

Ապրիլի 22-ին Ազգային խորհրդի երեք հայ երեսփոխաններ՝ Նազարյանցը Պետերբուրգից, Մելիք-Կարագյոզյանը եւ Ջամալյանը (վերջինս՝ Թիֆլիսից) ժամանեցին Բեռլին: Այստեղ արտաքին գործերի նախարարությունում վախենում էին, որ նրանց հայտնվելը բարդություններ կառաջացնի Թուրքիայի հետ: Սակայն, երբ գերմանացիներին, «համապատասխան կերպով տեղեկացված» հայամետ շրջանների միջոցով, հաջողվեց համոզել հայերին «որոշ չափով փոխըմբռնման գալ Թուրքիայի հետ», նրանց վախը վերացավ: Երեսփոխանները երեք հուշագիր ներկայացրին, որոնք պարունակում էին հետեւյալ պահանջները.

1. Անմիջապես դադարեցնել թուրքերի առաջխաղացումը, որն ուղեկցվում է ծանր անկարգություններով.

2. Ինքնորոշման իրավունք Կարսի, Արդահանի եւ Բաթումի ազգաբնակչության համար, ընդ որում, քվեարկությանը մասնակցելու թույլտվություն պետք է ստանան նաեւ թուրքական զորքից փախած հայերը.

3. Դադարեցնել թուրքերի ամեն մի միջամտություն Կովկասի ներքին գործերին.

4. Կարգավորված պայմանների ստեղծում Թուրքահայաստանում, Կովկաս փախածների վերադարձ, կյանքի եւ պատվի, սեփականության ապահովության երաշխիքներ[46]:

Հայերը նշում էին, թե չեն վստահում թուրքերի խոստումներին եւ խնդրում էին գերմանական հանձնաժողով կազմել, որը տեղում պետք է վերահսկեր եւ ստուգեր հրահանգների կատարումը[47]: Գերմանացիները պատասխանեցին, թե հայերն իրենք էին «սարսափելի չարագործություններ» գործել թուրքական զորամասերի մոտենալու պահին, «մինչդեռ թուրքերը խստագույն կարգապահություն էին ցուցաբերել»: Նրանք այն կարծիքին էին, թե թշնամական մամուլում նկարագրված թուրքական գազանությունները «չարակամորեն հորինված» են, եւ որ թուրքերը չեն ցանկացել խախտել Բրեստի սահմանագիծը: Եթե հայերն ուզում են խոսել Կարսի, Արդահանի ու Բաթումի շրջանների մասին, ապա թող դա անեն շուտով կայանալիք Բաթումի խորհրդակցությունում: Գերմանացիներն առաջարկեցին դադարեցնել հայկական քարոզչությունը չեզոք երկրներում, որպեսզի դրանք բացասական ազդեցություն չունենան Բաթումի բանակցությունների վրա[48]:

Երբ հայկական պատվիրակությունը Բեռլինում եղավ Ավստրո-Հունգարիայի հյուպատոսի մոտ եւ խնդրեց, որ իրեն ընդունի արտաքին գործերի նախարարը, նրան այդպիսի ընդունելություն Վիեննայում չխոստացան, եւ պատվիրակությունը որոշեց այնտեղ չմեկնել[49]: Թուրքերի առաջխաղացումը դեպի Թիֆլիս ստիպեց վրացիներին վերանայել իրենց քաղաքականությունը Թուրքիայի նկատմամբ: Վրացական կաբինետը պառակտված էր: Մի մասը, ժորդանիայի եւ Գեգեչկորիի ղեկավարությամբ, ուզում էր շարունակել պատերազմը Թուրքիայի դեմ: Մյուսը, Չխենկելիի եւ Ռամիշվիլու ղեկավարությամբ, ուզում էր Թուրքիայի հետ հաշտության բանակցություններ սկսել եւ Անդրկովկասը Ռուսաստանից անկախ հայտարարել[50], մի միտք, որը եռանդագին պաշտպանում էին գերմանացիները: Գերմանացիների օգնությամբ հաղթեց Չխենկելին, որը եւ ընտրվեց անդրկովկասյան կառավարության պրեզիդենտ[51]:

Հղումներ

1. Wien, HHStA PA X 157 Berlin, Juni 1918, fo 42-65.
2. Wien, HHStA PA I 946 Konst., 7. Juli 1918, Nr. 143990/1.
3. Wien, HHStA PA X 157 Berlin, Juni 1918, S. 19f.
4. Howanissian, "Armenia on the Road of Independence", S. 121f.
5. Wien, HHStA PA I 946 Pera, 4. Februar 1918, Nr. 64.
6. Wien, HHStA PA I 946 Konstantinopel, 9. Februar 1918, Nr. 13/P. B.
7. Wien, HHStA PA I 946 Pera, 9. Februar 1918, Nr. 72.
8. Wien, HHStA PA X 157 Berlin, Juni 1918, fo. 42-65.
9. Wien, HHStA PA I 1052 Baden, 1. März 1918, Nr. 113.
10. Wien, HHStA PA I 1053 Baden, 19. Februar 1918, Nr. 1054.
11. Wien, HHStA PA I 1053 Berlin, 22. Februar 1918, Nr. 117.
12. Wien, HHStA PA X 157 Die russische Revolution, 15. Juni 1918, Nr. 3.
13. Wien, HHStA PA I 1052 Pera, 6. März 1918, Nr. 143.
14. Howanissian, "Armenia on the Road...", S. 123.
15. Wien, HHStA PA I 836 Genf, 4. März 1918, Z 26/P.
16. Howanissian, "Armenia on the Road...", S. 123.
17. Նույն տեղում:

18. Նույն տեղում, S. 124.
19. Նույն տեղում:
20. Wien, HHStA PA I 947 Wien, 24. Jänner 1918, Pr. D. Nr. 501.
21. Howanissian, "Armenia on the Road...", S. 103.
22. Wien, HHStA PA X 157 Berlin, Juni 1918, fo. 42-65.
23. Wien, HHStA PA XL 275 Konstantinopel, 17. Februar 1918, Nr. 32.
24. Howanissian, "Armenia on the Road...", S. 141.
25. Նույն տեղում, S. 135.
26. Wien, HHStA PA I 1946 Konstantinopel, 9. Februar 1918, Nr. 13/P.B.
27. Wien, HHStA PA X 156 Beilage zu Konstantinopel, 29. Juni 1918, N57/P. C.
28. Hanns Marquart, ,,Die Entstehung und Wiederherstellung der armenischen Nation,,, Berlin, S. 52.
29. Howanissian, "Armenia on the Road...", S. 154.
30. Նույն տեղում, S. 155.
31. Նույն տեղում, S. 157.
32. Wien, HHStA PA X 155 Pera, 16. April 1918, Nr. 251.
33. Wien, HHStA PA X 157 Die russische Revolution, 15. Juni 1918, Nr. 3.
34. Նույն տեղում:
35. Wien, HHStA PA XII 463 Evidenzbüro, Chiffregruppe 11, 12. April 1918
36. Wien, HHStA PA I 947 Konstantinopel, 15. Oktober 1915, Nr. 87/P.
37. Winfried Baumgart, "Deutsche Ostpolitik 1918", S. 177.
38. Bihl, "Beziehungen Österreich-Ungarns zum Osmanischen Reich", Österr. Osthefte, Nr. 24 1982, S. 49.
39. Wien, HHStA PA X 155 Berlin, 22. April, Nr. 255.
40. Wien KA AOK NA 1918 Fasz. 5798 Konstantinopel, 20. August 1918, Nr. 21084.
41. Wien, HHStA PA X 155 Pera, 8. April 1918, Nr. 224.
42. Wien, HHStA PA X 155 Pera, 11. April 1918, Nr. 234.
43. Wien, HHStA PA X 155 Pera, 19. April 1918, Nr. 255
44. W. Baumgart, "Deutsche Ostpolitik 1918", München 1966, S. 177.
45. Wien, HHStA PA XII 463 Berlin, 22. April 1918, Nr. 46/P-B.
46. Wien, HHStA PA XII 463 Berlin, 10. Mai 1918, Nr. 53/P. A-C.
47. Նույն տեղում:
48. Նույն տեղում:
49. Նույն տեղում:
50. Ալեքսանդր Խատիսյան, *Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը*, Բեյրութ 1968, էջ 54:
51. Fischer, Griff, Düsseldorf 1961, S. 741.



Կովկասյան ռազմաճակատը 1918 թ.

12. ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Երբ Գերմանիայի վրացի բարեկամները գերիշխեցին անդրկովկասյան կառավարությունում եւ անսահմանափակ իշխանություն ստացան, նրանք 1918-ի ապրիլի 22-ին Թիֆլիսում հռչակեցին դեմոկրատական ֆեդերատիվ Անդրկովկասյան հանրապետություն՝ բաղկացած Վրաստանից, Ադրբեջանից եւ Հայաստանից[1]: Չխենկելին երեք հայերի վերցրեց իր կաբինետը՝ Քաջազնունուն որպես խնամատարության նախարար, Խատիսյանին որպես ֆինանսների նախարար եւ Սահակյանին որպես պարենավորման նախարար[2]: Անդրկովկասի անկախության հայտարարության մասին Սեյմում Դաշնակցության պատվիրակության ղեկավարը՝ Քաջազնունին, գրում է, որ վրացական ներկայացուցիչների մեծամասնությունը Ռուսաստանից անջատվելու կողմն էր: Բոլոր ադրբեջանցիներն էին դրա կողմը: Նրանք ոչ մի դեպքում չէին ուզում պատերազմել Թուրքիայի դեմ:

«Մուսուլմանական դեմոկրատիայի կրոնական զգացումը թույլ չի տալիս մեզ մասնակցություն ունենալ Թուրքիայի դեմ մղվող պատերազմի մեջ»[3], - ասել էր Սեյմում մուսավաթական մի բանախոս: Դաշնակցականները Սեյմում չէին ուզում անջատվել Ռուսաստանից: Նրանք գիտեին՝ այդ դեպքում ամեն ինչ կկորցնեին, որովհետեւ թուրքերից լավ բան չէին կարող սպասել: Նրանք վճռել էին զենքի ուժով թուրքերին կանգնեցնել, անշուշտ, հույս ունենալով, որ կհաղթեն:

Երբ Վրաստանն ու Ադրբեջանը որոշեցին անջատվել Ռուսաստանից, հայերը դժկամությամբ միացան այս որոշմանը: Քաջազնունին գրում է.

«Հեշտ սրտով չէր, որ մենք արինք այդ, բայց չանել չէինք կարող: Եթե հակառակ արտահայտվեինք, Անդրկովկասյան Դաշնակցական Հանրապետությունը իսկույն պիտի քանդվեր, վրացիներն ու ադրբեջանցիներն իսկույն պիտի հաշտվեին թուրքերի հետ ու թողնեին մեզ մենակ երես առ երես Վեհիբ փաշայի բանակի դեմ: Մենակ, որովհետեւ Ռուսաստանը այն ժամանակ չէր կարող հասնել օգնության, եթե նույնիսկ կամենար: Ոչ միայն մենակ, այլ նաեւ թիկունքից մեծապես վտանգված, որովհետեւ պարզ էր, որ թուրքերի հետ միասին մեզ պիտի հարվածեին նաեւ ադրբեջանցիները (ո՞վ գիտե, գուցե եւ վրացիները՝ Ախալքալաքը, Լոռին ու Փամբակը ամբողջովին գրավելու համար):

Մենք ավելի շատ կարիք ունեինք Անդրկովկասյան Դաշնակցության ու չէինք ուզում, որ նա քանդվի, իսկ եթե քանդվելու է, որքան հնարավոր է՝ ուշ քանդվի: Սիա թե ինչու հարկադրված էինք հետեւելու մեր դաշնակիցների քայլերին»[4]:

Երբ Թիֆլիսի դաշնակցականները վրացիների ու թաթարների հետ միասին

քվեարկեցին հօգուտ Անդրկովկասի անկախության, նրանք սուր քննադատության ենթարկվեցին Բաքվի դաշնակցականների կողմից: Իրենց «Արեւ» կուսակցական թերթում վերջիններս խստագույնս բողոքում էին բոլոր նրանց դեմ, ովքեր անտեսում էին հայ ժողովրդի ցանկությունները եւ Անդրկովկասն ուզում էին անջատել դեմոկրատական Ռուսաստանից: Նրանք գրում էին, որ Թուրքիայի հետ կնքած պայմանագիրը կոչնչացնի Հայաստանն ու նրա ժողովրդին[5]:

Ապրիլի 26-ին Գերմանիայի պետական քարտուղարի օգնական Բուշեն, հետադարձ հայացք նետելով Վիլհելմ 2-րդի կովկասյան քաղաքականությանը, գրում է, որ *«բոլոր միջոցներով Ռուսաստանի, Թուրքիայի եւ Պարսկաստանի արանքում հաջողվել է ստեղծել դեպի Գերմանիան կողմնորոշվող մի պետություն»*[6]:

Ռուսներն Անդրկովկասի անկախությունը համարեցին ֆարս եւ ինքնագլխություն: Լենինը խորհրդային գործադիր կոմիտեի առաջ ասաց, որ անդրկովկասցիներն իրավունք ունեն անկախություն պահանջելու, բայց պարտավոր են հաղորդել, թե ո՞ր տարածքներն են անկախ հռչակվելու[7]:

Իսկ Ստալինը՝ ազգությունների կոմիսարը գրեց.

«Թիֆլիսի մենշեւիկների անկախությունը շուտով ի հայտ կգա որպես լիակատար կախվածություն թուրքերից ու գերմանացիներից»[8]:

Ապրիլի 22-ին զինադադարի նոր պայմանագիր ստորագրվեց անկախ անդրկովկասյան կառավարության, այսինքն Չխենկելիի (մինչեւ ապրիլի 26-ը, երբ Գեգեչկորիի կաբինետը կորցրեց մեծամասնությունը, փաստորեն չկար անդրկովկասյան կառավարություն, Չխենկելին ինքնուրույն էր վարում հաշտության բանակցությունները Վեհիբ փաշայի հետ) եւ Վեհիբ փաշայի կողմից: Չխենկելին արդեն Տրապիզոնի բանակցությունների ժամանակ մշտական կապի մեջ էր Վեհիբ փաշայի հետ, ինչից դժգոհ էին հայերը: Վեհիբ փաշան նոր պայմանագրում գրում է, թե Թուրքիան կառաջանա մինչեւ Բրեստ-Լիտովսկի սահմանագիծը, իսկ եթե այդ սահմանագիծն արդեն անցել է, ապա ետ կքաշվի: Եվ ահա Չխենկելին կամայականորեն կարգադրեց Կարսի հայ հրամանատար Նազարբեկյանին Կարսն առանց պայքարի հանձնել թուրքերին[9]: Թուրքերի համար ճանապարհը դեպի Արեւելք բաց էր:

Այս դավաճանական արարքն առաջացրեց անդրկովկասյան կառավարության բոլոր հայ անդամների բողոքը: Նրանք հրաժարական տվեցին: Այդ ժամանակ Ժորդանիան, Գեգեչկորին, Ծերեթելին եւ Ռամիշվիլին այցելեցին հայկական պատվիրակությանը եւ երկարատեւ վիճաբանություններից հետո առաջարկեցին Քաջազնունուն պրեզիդենտ ընտրել: Բայց հայերը հրաժարվեցին: Վրացիներն առաջարկեցին այդ ժամանակ ընտրել կամ Քաջազնունուն, կամ Չխենկելիին: Երկար կշռադատելուց հետո հայերն ընտրեցին Չխենկելիին: Քաջազնունու փաստարկը հետեւյալն էր. եթե պրեզիդենտի պաշտոնը հայ զբաղեցներ, ապա մահմեդականները դա որպես մարտահրավեր կդիտեին: *«Մեր այսօրվա իրադրությունում մենք ի վիճակի չենք այդպիսի քայլ անելու»*, ասաց Քաջազնունին[10]: Երբ Կարսը հանձնվեց թուրքերին, Ավստրիայի կայսր Կարլը հեռագրով սրտանց շնորհավորեց սուլթանին *«քաջ օսմանյան զորքի կողմից բերդի գրավման առթիվ»*[11]: Հայկական բանակի գեներալ Կորգանովը, որը եւ Կ. Պոլսում հայկական պատվիրակության ռազմական խորհրդականն էր, այն կարծիքին էր, որ անդրկովկասյան կառավարությունն ինքն էր մեղավոր իր պարտության համար, որի պատճառով ստիպված էր հաշտության բանակցություններ վարելու Թուրքիայի հետ: Պոմյանկովսկու հետ զրուցելիս Կորգանովն ասել է, որ գեներալ Գաբաեւի գլխավորությամբ 7.000 վրացի զինվորներից եւ գեներալ Նազարբեկովի գլխավորությամբ 12.000 հայ զինվորներից բաղկացած բանակի անհաջողության պատճառը անկարգապահությունն էր: Դրան ավելացել էր եւ այն, որ քրիստոնեական զինված ուժերի թիկունքում գործում էին Արեւելյան Կովկասի թաթարների ավազակախմբերը, եւ վրացի ու հայ շատ զինվորներ լքել էին իրենց ջոկատները՝ հայերի գյուղերը պաշտպանելու համար[12]:

Մայիսի 5-ին Անդրկովկասի պատվիրակությունը, որի կազմում էին Չխենկելին, Նիկլաձեն, Քաջազնունին, Հաջինսկին եւ Ռասուլ Զադեն, մեկնեց՝ Բաթում հաշտության բանակցությունների: Թուրքերը պատվիրակություն ուղարկեցին արդարադատության նախարար Խալիլ բեյի եւ նավատորմի նախարար Ջեմալ բեյի գլխավորությամբ: Գերմանական կողմից այս պատվիրակությանն ուղեկցում էր գեներալ ֆոն Լոսովը, որը մեկնումից քիչ առաջ փոխարինել էր դեսպանության խորհրդական կոմս Վալդբուրգին: Այս փոխարինման փաստարկն այն էր, որ գեներալ Լոսովը *«իր երկարամյա անձնական կապերի շնորհիվ թուրքերի հետ ավելի շուտ ի վիճակի կլինի խանգարել նրանց բանակցությունների ժամանակ չափազանցրած պահանջներ դնելուն»*[13]:

Լոսովին նաեւ հանձնարարված էր խոչընդոտել թուրքերի կողմից Բաքու-Բաթում երկաթուղու եւ նավթամուղի գրավումը, ինչպես եւ ստիպել թուրքերին սահմանափակվելու Բրեստի պայմանագրի որոշումներով[14]: Մայիսի 11-ին տեղի ունեցան Բաթումի բանակցությունները: Այժմ Խալիլ բեյը պահանջում էր ոչ միայն ճանաչել Բրեստի պայմանագիրը, այլեւ, քանի որ «արյուն է հոսել», հանձնել Ախալքալաքը, Ախալցխան, Ղարաքիլիսան, Երեւանի շրջանի մի մասը, Ալեքսանդրապոլը եւ Էջմիածինը, որտեղով անցնում էր Կարս-Ջուլֆա երկաթուղին[15]: Բաթումի բանակցություններին զուգընթաց թուրքական զորամասերը շարունակում էին իրենց առաջխաղացումը դեպի Էջմիածին ու Ալեքսանդրապոլ: Երբ հայկական պատվիրակությունը Բաթումում հաշտության բանակցություններ էր վարում Վեհիբ փաշայի հետ, վերջինս ասաց Խատիսյանին.

«Դուք կըտեսնէք, որ ճակատագիրը կը քաշէ Թուրքիան արեւմուտքէն արեւելք, մենք հեռացանք Պալքաններէն, կը հեռանանք նաեւ Ափրիկէէն, բայց մենք պէտք է տարածուինք դէպի արեւելք. հոն է մեր արիւնը, մեր կրօնքը ու լեզուն: Եւ ասիկա տա-

ղերային ձգողութիւն ունի. մեր եղբայրները Պաքու, Տաղստան, Թուրքիստան եւ Ատրպէջան են: Մենք պէտք է ճամբայ ունենանք դէպի հոն: Եւ դուք՝ հայերդ կանգնած էք մեր այդ ճամբուն վրայ: Պահանջելով Վանը՝ դուք կը փակէք մեր ճամբան դէպի Պարսկաստան: Պահանջելով Նախիջեւանն ու Զանգեզուրը՝ դուք արգելք կը դառնաք մեզի իջնելու Քուրի հովիտը եւ երթալու Պաքու: Կարսն ու Ախալքալաքը կը փակեն ճամբան դէպի Ղազախ ու Գանձակ: Դուք պէտք է մէկ կողմ քաշուիք եւ մեզի ճամբայ տաք: Ահա թէ ուր է մեր հիմնական վէճը»[16]: Վեհիբ փաշան հայերին առաջարկեց 10 հազար հոգով թուրքերի հետ միասին մասնակցելու Բաղդադի գրավմանը: Հայերը հրաժարվեցին այն պատճառաբանությամբ, որ հայ զինվորները գերհոգնած են[17]:

Բանակցությունները փակուղի մտան: Անդրկովկասի պատվիրակները հավատարիմ էին մնում Բրեստի պայմանագրին: Այնինչ թուրքերն ավելին էին ուզում:

Բաքումի բանակցություններին զուգահեռ տեղի են ունենում գաղտնի հավաքներ: Մի կողմից թաթար պատվիրակների եւ թուրքերի միջեւ, որոնց ժամանակ թաթարները տեղեկանում էին անդրկովկասցիների ներքին բանակցությունների մասին, մյուս կողմից վրացի պատվիրակների եւ Լոսովի միջեւ, որոնց նպատակը անդրկովկասյան միասնության քայքայումն էր, որի արդյունքը պիտի լիներ անկախ Վրաստանը գերմանական պրոտեկտորատի ներքո[18]: Մայիսի 15-ին կովկասյան բանակի գլխավոր հրամանատար Նազարբեկյանը ստացավ թուրքերի ուլտիմատիվ պահանջը՝ երեք ժամվա ընթացքում ազատել Ալեքսանդրապոլ քաղաքը եւ մինչեւ Ջուլֆա երկաթուղին: Նազարբեկովը պատասխանեց, որ սկզբում պետք է խորհրդակցի Թիֆլիսի հետ: Սակայն թուրքերը սկսեցին գնդակոծել քաղաքը եւ գրավեցին այն: Թուրքերը շարունակում էին իրենց արշավը եւ գրավեցին Ղարաքիլիսան (այժմ՝ Վանաձոր), Ջալալօղլին (Ստեփանավան), Վորոնցովը, Իգդիրն ու Սուրմալուի ամբողջ շրջանը: Միաժամանակ թաթարների զինված ավազակախմբերը՝ թուրք էմիսարների գլխավորությամբ, ներխուժեցին Բորչալուի եւ Ախալցխայի շրջանները: Բոլոր զբաղեցրած վայրերում թուրքերը գերի էին վերցնում ու քշում տանում 18-ից 50 տարեկան տղամարդկանց[19]: Հայերին մնաց իրենց նախկին Մեծ Հայաստանի միայն մի փոքր, մոտավորապես 12 հազար քառակուսի կիլոմետր մակերես ունեցող հատված:

Թուրքերի գրոհից տեղահանված մոտ 800 հազար հայերը, որոնցից մի մասը Վրաստան էր փախել, իսկ մի մասն էլ՝ սարեր եւ անտառներ, չէին կարող բնակվել այդ փոքր տարածքում, որտեղ ապրում էին 350 հազար տեղացիներ: Սակայն թուրքերը դրանով չբավարարվեցին: Բաքումի բանակցություններում մի նոր վերջնագիր ներկայացվեց, որով երեք օրվա ընթացքում պահանջում էին Նախիջեւանը, Շարուր-Դարալագյազ շրջանի մի մասը եւ Երեւանի շրջանից մի մաս[20]: Հայերին լիակատար ոչնչացման վտանգ էր սպառնում: Թուրքերը դեռեւս Տրապիզոնի բանակցությունների ժամանակ հայերին հասկացրել էին, որ մեծագույն հաճույքով վերջ կտային Թուրքիայում մնացած հայ բնակչությանը[21]: Քանի որ թուրքական զորամասերը շարունա-

կում էին առաջանալ Հայաստանում, չնայած ընթացող հաշտության բանակցություններին, երկրի լիակատար զավթումը հավասար կլիներ հայ ժողովրդի ոչնչացմանը: Բնաջնջումից խուսափելու համար ամբողջ ժողովուրդը, այդ թվում կանայք, ծերուներ եւ երեխաներ, մայիսի 24-ին ոտքի ելան եւ Սարդարապատի մարտով ետ մղեցին թուրքերի գերակշռող ուժերը: Այդ հաղթանակը փրկեց հայերին անխուսափելի ոչնչացումից[22]:

Երբ ավարտվեցին գերմանա-վրացական բանակցությունները, ֆոն Լոսովը 1918 թ. մայիսի 25-ին անակնկալի բերեց անդրկովկասյան պատվիրակներին մի կոմյունիկեով, որում հայտարարում էր, որ ստիպված էր լքել բանակցությունները, որովհետեւ իրեն տեղեկացրել են, որ անդրկովկասյան միությունը ամենամոտ ապագայում լուծարքի է ենթարկվելու[23]: Արդեն գիշերը Խալիլ բեյը 72 ժամանոց վերջնագիր ներկայացրեց իր պահանջներին՝ վերոհիշյալ շրջանների սնեքսիային հասնելու նպատակով: Հաջորդ օրը՝ մայիսի 26-ին Վրաստանը Թիֆլիսում հռչակեց անդրկովկասյան կառավարության լուծարքը եւ անկախ վրացական պետության ստեղծումը[24]:

Հղումներ

1. Fischer, "Griff", Düsseldorf 1961, S. 741.
2. Խատիսյան, «Հայաստանի...», էջ 54:
3. Հ. Քաջազնունի, «Դաշնակցությունն անելիք չունի այլեւս», էջ 27:
4. Նույն տեղում:
5. Baku, Das Blatt "Die Sonne", Baku, 9. Juli 1918.
6. Fischer, "Griff", Düsseldorf 1961, S. 743.
7. Howhanissian, "Armenia on the Road...", S. 171f.
8. Lanne, "Armenien", S. 185.
9. Խատիսյան, «Հայաստանի...», էջ 585
10. Նույն տեղում, էջ 58:
11. Wien, KA präs 1918. Reichenau, 27. April 1918, Nr. 2909.
12. Wien KA AOK NA 18 Fasz. 5397 Konstantinopel, 28. Juni 1918, Nr. 16166.
13. Wien, HHStA PA X 155 Konstantinopel, 2. Mai 1918, Nr. 29485.
14. Նույն տեղում:
15. Wien, KA präs 1918 Konstantinopel, Ende Juni, Pras 18-2/7-3, Nr. 143990.
16. Խատիսյան, «Հայաստանի...», էջ 66
17. Նույն տեղում, էջ 87
18. Wien, HHStA PA X 157 Konstantinopel, 22. Juli 1918, Nr. 54/P. B.
19. Wien, HHStA PA X 157 Die Russische Revolution, 15. Juni 1918.
20. Նույն տեղում:
21. Նույն տեղում:
22. Հ. Քաջազնունի, «Դաշնակցությունն...», էջ 30:
23. Howhanissian, "Armenia on the Road...", S. 183f.
24. Wien, KA AOK NA 1918 Fasz. 394 Konstantinopel, 5. August 1918, Nr. 143990-2h.



Տարածքային փոփոխությունները Անդրկովկասում

13. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Մայիսի 27-ին Թիֆլիսի քաղաքապետարանի բաց պատուհանից կոմս Շուլենբերգը Վրաստանը հռչակեց Գերմանիայի պրոտեկտորատի ներքո գտնվող անկախ հանրապետություն[1]: Մայիսի 28-ին Լոսովը վրացական պատվիրակության հետ պայմանագիր ստորագրեց գերմանական պրոտեկտորատի ներքո գտնվող անկախ վրացական պետության ճանաչման մասին[2]: Հայաստանը՝ նորից մենակ մնացած, ստիպված էր կարեւոր վճիռ կայացնել: Դա կատարվեց մայիսի 28-ի ուշ երեկոյան: Երկարատեւ խորհրդակցություններից հետո Ազգային խորհուրդը վճիռ էր կայացրել հօգուտ անկախ Հայաստանի[3]: Մայիսի 29-ին հայկական պատվիրակությունը, այժմ արդեն Հայկական Հանրապետության անունից, մեկնեց Բաքում, թուրքերի հետ հաշտության բանակցություններ վարելու: Բանակցությունների ավարտից հետո հունիսի 12-ի թուրքական կոմյունիկեում ասված էր.

«Համաձայնության հիման վրա Հարավային Կովկասում ստեղծվել են երեք կառավարություններ, այն է՝ Ադրբեջանի, Վրաստանի եւ Հայաստանի»[4]:

Հարավային Կովկասում գտնվող թաթարների մարզը Ելիզավետպոլի եւ Բաքվի շուրջը՝ թուրքերը կոչեցին Ադրբեջան՝ սրա կցումը պարսկական Ազերբայջանին նախապատրաստելու նպատակով[5]: Երբ հայկական պատվիրակությունը հետագայում Կ. Պոլսում էր, Թալեաթը Խատիսյանին պատմել է, որ հայկական պետության ստեղծման շուրջ թուրք պետական գործիչների վիճաբանության ժամանակ էնվեր փաշան այն կարծիքն է արտահայտել, թե հայերը միշտ Թուրքիայի թշնամին են եղել եւ մնալու են: Նրանք հանգիստ չեն թողնի նաեւ անատոլիական սահմանները: Այդ պատճառով ավելի լավ կլիներ, եթե նրանք Կովկասում նույնքան հիմնովին ոչնչացվեին, ինչպես եւ Թուրքիայում: Բացի դրանից, փոքր Հայաստանը Կովկասում միշտ ձգտելու է իր սահմաններն ընդարձակելու: Այդ պատճառով Հայաստանը Թուրքիայի համար միշտ վտանգ է ներկայացնելու: Թալեաթը պատմել է, թե ինքը պատասխանել է, որ այդ առաջարկությունը իրագործելի չէ,.չէ՞ որ Կովկասում ապրում են շուրջ երկու միլիոն հայեր, նրանց բոլորին ոչնչացնել հնարավոր չէ: Այդ պատճառով ավելի ճիշտ կլինի նրանց գոհացնել, որովհետեւ անգամ եթե կենդանի մնային ընդամենը 100 հազար հայեր, նրանք Թուրքիային երբեք հանգիստ չէին տա: Բացի այդ, ստեղծելով փոքր Հայաստան, թուրքերը լուծած կլինեն եւ Հայկական հարցը: Դա կօգնի նաեւ Անտանտի հետ բանակցություններում: Թալեաթի փաստարկները համոզիչ էին, եւ այդպես թուրքերը ստեղծեցին Հայկական Հանրապետությունը[6]: Հունիսի 4-ին հայ պատվիրակները Բաքումում ենթարկվելով գեներալ Լոսովի խորհրդին՝ ընդունելու բոլոր

թուրքական պայմանները, որպեսզի թուրքերը չշարունակեն իրենց գրոհը, ստորագրեցին զինադադար Թուրքիայի հետ[7]: Սրա պայմանները ծանր էին հայերի համար: Բայց նրանք ի վիճակի չէին շարունակելու պատերազմը Թուրքիայի դեմ: Չկար զինամթերք, նպարեղեն, մինչդեռ մեծ թվով հայ փախստականներ հիվանդ էին եւ քաղցած[8]: Հաշտության պայմանագրից մի հատված ուղարկվեց Վիեննա.

Հատված Բաթումի հաշտության պայմանագրից՝ ԹՈՒՐՔԻԱ-ՀԱՅԱՍՏԱՆ

Հոդված 1. Կայսերական օսմանյան կառավարության եւ Հայաստանի Հանրապետության միջեւ պետք է պահպանվեն հարատեւ խաղաղություն եւ մշտական բարեկամություն:

.....

Հոդված 3. Հայաստանի եւ Ազերբայջանի միջեւ նրանց ընդհանուր սահմանի որոշման նպատակով կնքված համաձայնագիրը պետք է հաղորդվի կայսերական օսմանյան կառավարությանը:

Հոդված 4. Օսմանյան կառավարությունը պարտավորվում է զինված մարդկանցով օգնություն ցույց տալ Հայաստանի Հանրապետության կառավարությանը այն դեպքում, եթե վերջինս այն պահանջի այդ երկրում մշտապես կարգ ու կանոն եւ անվտանգություն հաստատելու համար:

Հոդված 5. Հայաստանի Հանրապետության կառավարությունը պարտավորվում է վճռականորեն դեմ դուրս գալ իր տարածքի սահմանների ներսում պարտիզանական խմբերի ստեղծմանը եւ զինմանը, նմանապես եւ զինաթափել ու ցրել այնտեղ ապաստանող բոլոր հայդուկներին:

.....

Հոդված 11. Հայաստանի Հանրապետության կառավարությունը պարտավորվում է բոլոր միջոցները ձեռք առնել հայկական զինված ուժերը Բաքու քաղաքից անմիջապես դուրս բերելու նպատակով եւ միաժամանակ ապահովել, որպեսզի այդ դուրս բերումը որեւէ ընդհարման առիթ չտա:

Լրացուցիչ պայմանագիր

Կայսերական օսմանյան կառավարությունը եւ Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ որպես համաշխարհային պատերազմի արդյունք հանդիսացող, անմիջապես իրենց վերաբերող ռազմական հարցերը լուծելու ցանկությամբ տոգորված, վճռել են կնքել

մինչեւ պատերազմի վերջը գործող ժամանակավոր լրացուցիչ պայմանագիր.

Հոդված 1.Հայաստանի Հանրապետությունը պետք է անմիջապես սկսի իր զորքերի ցրումը: Դրանց կազմը, ինչպես նաեւ այն ռազմական մարզերը, ուր դրանք պետք է ուղարկվեն, պիտի որոշվեն կայսերական օսմանյան կառավարության հետ համաձայնեցված համաշխարհային պատերազմի ամբողջ ընթացքում:

Հոդված 2. Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է իր տարածքից անմիջապես հեռացնել Օսմանյան կայսրության կամ նրա դաշնակիցների հետ պատերազմական դրության մեջ գտնվող պետությունների սպաներին եւ քաղաքացիական ծառայողներին: Ինքը եւս իրավունք չունի պատերազմի ամբողջ ընթացքում այդպիսի սպաների ծառայության ընդունել:

Հոդված 3. Հայաստանի Հանրապետությունը համաձայնում է, որ օսմանյան բանակը բոլոր տեսակի տարանցիկ փոխադրությունները (զորքի, զինվորների, պահեստայինների, ապրանքի եւ ռազմական տեխնիկայի եւն) իրագործի հանրապետության երկաթուղիներով, իհարկե, այն պայմանով, որ այդ փոխադրությունները չձեռնարկվեն Հայաստանի դեմ:

Այս հոդվածի ենթապարբերություններից մեկով նախատեսվում է նաեւ թուրքական երկաթուղային զորախմբերի տեղակայումը երկաթգծի հատուկ կետերում՝ հայկական կառավարության համաձայնությամբ:

Պարբերություն 7. Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է ցրել այն բոլոր ռազմական ուժերը, որոնք որեւէ ձեւով կուզենան խոչընդոտել այդ փոխադրությունների իրագործմանը: Եթե նա այդ չկարողանա անել, ապա օսմանյան զորքերը հանրապետության համաձայնությամբ միջոցներ ձեռք կառնեն խոչընդոտները վերացնելու նպատակով[9]:

Թուրքերի անընդհատ առաջխաղացումը Անդրկովկասում Բեռլինին ստիպեց դիմել խիստ միջոցների: Քյուլմանը մայիսի 28-ին Բուրյանին հղած հեռագրում գրում է.

«Կայզերական կառավարությունը շեշտակի խորհուրդ է տվել թուրքական կառավարությանը՝ չհեռանալ Բրեստի պայմանագրի հիմքերից եւ առաջարկել նրան Բաթում քաղաքը չպահել, այլ թողնել վրացիներին: Կայզերական կառավարությունը աչքի առաջ ունի փոխանակել Բաթումի շրջանը Ճորոխ գետից դեպի Անդրկովկասի այլ եւ թաթարներով բնակեցված մարզերի հետ եւ առաջարկել է թուրքական կառավարությանը բարեկամաբար փոխըմբռնման գալ Անդրկովկասյան կառավարության հետ: Կայզերական կառավարության այս խորհրդին հետեւելու փոխարեն թուրքերը



Սահմանները Բաքուի պայմանագրից հետո

չափն անց են կացրել: Նրանք թուրքական դրոշն են բարձրացրել Ելիզավետպոլում եւ մյուս թաթարական շրջաններում եւ պլանավորել են ամբողջ Ելիզավետպոլ նահանգի ու Բաքվի անեքսիան եւ առաջ են ընթանում դեպի Բաքու՝ բոլշեւիկներին քշելու եւ այնտեղ ամրապնդվելու համար: Թուրքական զորամասերն Ախալքալաքից դեպի հարավ գտնվող ռազմաճակատում առաջ են ընթանում դեպի Թիֆլիս եւ Երեւան: Քուրդ եւ թաթար կամավորականներն ուղեկցում են նրանց եւ կողոպտում ու սպանում են հայկական բնակավայրերում, որոնցից դուրս են տարվում բոլոր տղամարդիկ: Հայ բնակչությունը փախչում է դեպի արեւելք, որտեղ շատ շուտով կբախվի թաթարների հետ: Իրադրությունը չափազանց ճգնաժամային է: Թուրքական զորամասերի հետագա առաջխաղացումը Կովկասում համընդհանուր պայքար կսանձազերծի եւ, թերեւս, վտանգի տակ կդնի Բրեստի հաշտությունը: Այս իրավիճակի հետեւանքն այն է, որ Կովկասի քրիստոնյաները, հատկապես հայերը, մատնված լինելով ոչ կանոնավոր զորքի եւ թաթարական բնակչության կատաղությանը, թալանվում են, վռնդվում իրենց բնակավայրերից եւ, եթե կարողանում են փրկել իրենց կյանքը, բռնաբարվում են ամեն եղանակով: Այնինչ դաշնակից տերությունները չեն կարող պատասխանատու լինել ոչ իրենց սեփական ժողովուրդների, ոչ էլ աշխարհի առաջ այն բանի համար, եթե թույլ տան, որ Բրեստի պայմանագրի իրենց օգնությամբ ընդունված որոշումները օգտագործվեն որպես Կովկասում քրիստոնյաներին հալածելու իրավունք: Դրանից բացի, Կովկասում թուրքերի գործելակերպի պատճառով Միջագետքի եւ Պաղեստինի պաշտպանության եւ կորցրած մարզերի ետ գրավման համար տարվող գործողություններում, այսինքն՝ Թուրքիայի կարեւորագույն զինվորական դեսպանին Պերայում տրվել են հետեւյալ հրահանգները:

1. *Կայզերական կառավարությունն իրենց գործողությունների ազատություն է վերապահում Կովկասում կատարվող բոլոր իրադարձությունների վերաբերյալ: Նա հատկապես սեփական դիրքորոշման իրավունք է իրեն վերապահում Արդահանի, Կարսի եւ Բաթումի շրջաններում ու դրանցից դուրս ծեռք առած միջոցների նկատմամբ, որոնք անհամատեղելի են Բրեստ-Լիտովսկի պայմանագրի հետ:*
2. *Նշված երեք շրջաններից դուրս թուրքական զորամասերի հետագա առաջխաղացմանը Կովկասում եւ թուրքական քարոզչությանը կայզերական կառավարությունը չի կարող ոչ հավանություն տալ եւ ոչ էլ օժանդակել:*
3. *Կայզերական կառավարությունը ճանաչում է վրացական կառավարությանը de facto եւ այն պայմանով, որ եթե Ռուսական Խորհրդային հանրապետությունը տա իր համաձայնությունը, հայտարարում է, որ պատրաստ է սկզբունքորեն ճանաչելու Վրաստանի անկախությունը: Նա հրավիրում է կայսերական օսմանյան կառավարությանը նույն կերպ վարվել եւ հարգել Վրաստանի սահմանները:*

4. Կայզերական կառավարությունը խնդրում է կայզերական օսմանյան կառավարությանը Թուրքիայի կողմից գրաված մարզերում հայերի նկատմամբ ապահովել պատշաճ վերաբերմունք:

5. Կայզերական կառավարությունը կարծում է, որ կայսերական օսմանյան կառավարության ուշադրությունը պետք է հրավիրի այն բանի վրա, որ Թուրքիան, գոյություն ունեցող քաղաքական պայմանագրերից ելնելով, չպետք է Գերմանիայից պահանջի պաշտպանել եւ աջակցել այնպիսի ռազմական կամ դիվանագիտական գործողությունների, որոնց ինքը ձեռնարկում է առանց մեր համաձայնության կամ նույնիսկ հակառակ մեր խորհրդին:

Գերմանական բանակի գլխավոր հրամանատարության կողմից ձեռնարկվել են համապատասխան քայլեր թուրքական բանակի հրամանատարության նկատմամբ: Սակայն պետական քարտուղար ֆոն Քյուլմանը շատ երախտապարտ կլիներ նորին գերազանցություն պարոն կոմս ֆոն Բուրյանին, եթե նա հնարավորին չափ շուտ հրահանգ տար մարկգրաֆ Պալավիչինիին անելու նման հայտարարություն, ինչպիսին արեց կոմս Բեռնստորֆը»[10]:

«Նման հայտարարությունը» Պալավիչինին հանձնեց Թալեաթին, սակայն գերմանական կողմը ոչինչ չձեռնարկեց: Մայիսի 30-ին Պալավիչինին հեռագրեց Վիեննա.

«Գերմանական դեսպանն ինձ երեկ ասաց, որ ինքը, ճիշտ է, ստացել է տվյալ հրահանգը, բայց խոստովանեց, որ չնայած դրա ոգով նորից խոսել է տեղի պետական գործիչների հետ, սակայն մինչեւ երեկ այստեղ այդ մասին կետ առ կետ հաղորդում չի արել: Նա ասաց, որ այսօր առավոտյան Մեծ վեզիրի հետ իմ զրույցից առաջ կայցելի նրան: Այստեղից պիտի եզրակացնել, որ այսօր կիրականացնի իրեն տրված հրահանգը: Իրոք, գերմանացի կոլեգաս այսօր առավոտյան խոսել է Մեծ վեզիրի հետ նախքան իմ այցելությունը: Երբ ես ասացի, որ ինձ հանձնարարված է պաշտպանել գերմանական հրահանգները, Թալեաթ փաշան, ինչպես եւ արտաքին գործերի նախարարը, պնդեցին, թե գերմանական դեսպանը մինչեւ հիմա այդպիսի պաշտոնական դեմարշ չի արել: Մեծ վեզիրն ավելացրեց, որ կոմս Բեռնստորֆն իր կողմից կտրուկ հայտարարել է, որ համաձայն է անդրկովկասյան կառավարությանը ներկայացրած վերջնագրի հետ, եւ որ գերմանական բանակի գլխավոր հրամանատարությունը հայտարարել է, թե համաձայն է ճշտորեն որոշված «սահմանի վերանայման» հետ, ըստ որի մարզի մի հատված մինչեւ Ջուլֆա Թուրքիային է տրվում: Նրանք ասացին, որ թուրքական բանակի առաջխաղացումը եւս տեղի է ունեցել (գերմանական) բանակի գլխավոր հրամանատարության համաձայնությամբ եւ նույնիսկ նրա հրահանգով:

Ինչպես երեւում է վերը շարադրվածից, պետք է ենթադրել, որ գերմանական բանակի գլխավոր հրամանատարության եւ արտաքին գործերի նախարարության միջեւ տարակարծություն գոյություն ունի եւ որ այս երկու բարձրագույն պետական մար-

միններից յուրաքանչյուրը Կովկասի վերաբերյալ սեփական քաղաքականություն է հետապնդում: Դրանով կարելի է բացատրել եւ գերմանական դեսպանի դիրքը, որը ստիպված է խուսանավել երկուսի միջեւ»[11]:

Անմիջապես հաջորդ օրը Պալավիչինին զեկուցեց Վիեննա.

«Բրեստ-Լիտովսկում թույլ տված բազմաթիվ քաղաքական մեծագույն սխալներից մեկը, իմ կարծիքով, Բաթումի, Կարսի եւ Արդահանի շրջանները Թուրքիային զիջելն է: Բանն այն է, որ չի կարող անբնական չթվալ, որ այն շրջանները, որոնց տարիներ շարունակ կառավարել է քրիստոնեական մի տերություն, անգամ եթե դա Ռուսաստանն էր, այժմ կրկին վստահվում են ավելի ահեղ քաղաքակրթություն կրող երկրին: Այն, որ Գերմանիան, չնայած որ պաշտպանում է այդպիսի լուծումը, գուցե կարելի է բացատրել հետին մտքով, այսինքն՝ թուրքերը ի վիճակի չեն լինի տակտիկապես իշխելու իրենց զիջած տարածքում: Ինչպես երեւում է, Գերմանիայի համար առաջին հերթին կարեւոր է իր համար փրկել Վրաստանը»[12]:

Երբ 1918 թ. հունիսի 4-ին Բաթումում թուրքական կառավարությունը, առանց դաշնակիցների մասնակցության, պաշտոնական հաշտություն կնքեց անդրկովկասյան պետությունների հետ, գերմանացիներն ու Ավստրո-Հունգարիան պահանջեցին Թուրքիայից անդրկովկասցիների հետ հաշտության հարցերի վերջնական կարգավորման համար կոնֆերանս հրավիրել Կ. Պոլսում: Ոչ միայն այն պատճառով, որ հայկական տարածքը թուրքական բանակի ներխուժման հետեւանքով գնալով փոքրացել էր, այլ որովհետեւ մտադրություն կար նոր առաջացած հանրապետությունների սահմանների կարգավորմամբ Ազերբայջանի հանրապետության կազմի մեջ մտցնել հայկական Ղարաբաղ մարզը, որն ուներ 300 հազար բնակիչ, այդ թվում 40-50 հազար մահմեդական: Այդ թույլ չտալու նպատակով հայկական «Ղարաբաղ» միությունը (նախագահ՝ պատմաբան Լեո) Թիֆլիսում հուշագիր կազմեց Ղարաբաղի մասին, որում շարադրված էր երկրամասի պատմությունը, աշխարհագրությունն ու ազգագրական բնութագիրը եւ սրա պատկանելությունը մայր երկրին՝ Հայաստանին: Այդ հուշագիրը ուղարկվեց Ավստրո-Հունգարիայի եւ Գերմանիայի ներկայացուցչություններին[13]: Երբ ադրբեջանցիները թուրք սպաների օգնությամբ ներխուժեցին Ղարաբաղ, հայ գեներալ Անդրանիկը, առանց Հայաստանի Հանրապետության կառավարության համաձայնության, կամավորների հետ շտապեց այնտեղ՝ զավթիչներին ետ մղելու համար[14]:

Հուլիսի 10-ին Էնվեր փաշան հեռագիր հղեց գերմանական բանակի գլխավոր հրամանատարությանը, որում պարզաբանում էր Թուրքիայի քաղաքականությունը Կովկասում: Նա գրում էր, որ Ռուսաստանը հաղթության բանակցություններից հետո ետ է քաշվել Կովկասից եւ ոչնչով չի հակառակվում կովկասյան պետությունների հանդեպ Թուրքիայի թշնամական վերաբերմունքին: Այժմ, երբ կովկասյան պետությունները անջատվել են Ռուսաստանից, Բրեստի պայմանագիրը կորցրել է իր ուժը նրանց համար, եւ նրանք պատերազմում են Թուրքիայի դեմ: Կրած պարտություններ-

րի պատճառով նրանք ստիպված են հաշտություն կնքել Թուրքիայի հետ եւ ընդունել այն պայմանները, որոնք դրվել են «գերմանական բանակի գլխավոր հրամանատարության եւ գերմանական կառավարության հետ համաձայնեցված վերջնագրում»: Էնվերը գրում էր, որ Կովկասյան կառավարությունների առարկությունները Բաթումի բանակցությունների վերաբերյալ անհիմն են: Թուրքիան հավատարիմ կմնա Բաթումի պայմանագրի սկզբունքներին, *«ինչպես որ դրանք գրված են գերմանական կառավարության եւ բանակի գլխավոր հրամանատարության հետ լրիվ համաձայնեցված վերջնագրում եւ որոնց առաջին դրույթը վերաբերում է սահմանների կարգավորմանը»*[15]: Թե ինչպիսի քաղաքականություն էին վարում գերմանացիները Կովկասում, երեւում է նաեւ 1918 թ. հունիսի գեներալ Զանդերսի՝ Կ. Պոլսում գերմանական դեսպան Բեռնստորֆին ուղարկած գրությունից. *«Թուրքերը զոհաբերում են ամբողջ Արաբիան, Սիրիան եւ Պաղեստինը Կովկասում այս անսահման ծեռնարկմանը»:*

Բեռնստորֆը հանգստացրեց գեներալին, ասելով, որ թուրքական խենթության հետեւում թաքնված են գերմանական մեթոդները: *«Միայն Անդրկովկասի նավթը կկարողանա ծածկել մեր նավթի կարիքը, այն պայմանով, եթե լուծված լինի տեղափոխման հարցը»*, - գրում է գեներալ Լուդենդորֆը[16]:

Մայիսի 13-ին գնդապետ Կրես Կրեսենշտայնին տեղափոխեցին Թիֆլիս, որպեսզի այնտեղից տեղեկություններ ուղարկի Կովկասի իրադրության մասին: Միաժամանակ Անդրկովկաս ուղարկվեցին գերմանական երկու գումարտակներ: Գերմանական զորամասերը զբաղեցրին Փոթի-Թիֆլիս երկաթուղին եւ մասամբ հանեցին ռելսերը Քութայիսի-Բաթում հատվածում՝ թուրքերի առաջխաղացմանը խանգարելու նպատակով[17]: Քյուլմանը գերմանական զորամասերը Կովկաս ուղարկելուն դեմ էր. *«Ես կոնֆլիկտներ եմ կանխատեսում գերմանական եւ թուրքական զորքերի միջեւ»*[18]: Իսկապես, գերմանա-վրացական եւ թուրք-թաթարական զորքերի միջեւ բախում տեղի ունեցավ, որի ժամանակ մոտավորապես տասը գերմանացիներ սպանվեցին, իսկ մի քանիսը վիրավորվեցին[19]: Երբ թուրքերը չուզեցին ազատ արձակել գերված գերմանացի զինվորներին, Կրեսը սպառնաց Էնվերին այդ մասին հայտնել կայզերին[20]: Էնվերը սպառնաց, թե հրաժարական կտա: Գերմանա-թուրքական ճգնաժամը գագաթնակետին հասավ: Վերջապես գեներալ Զեքթը այն հարթեց[21]:

Հայ պատվիրակներ Ահարոնյանն ու Խատիսյանը, Կ. Պոլիս ժամանելով, այցելեցին Գերմանիայի եւ Ավստրո-Հունգարիայի դեսպանությունները եւ նրանց մի գրություն հանձնեցին, որը Դեմոկրատական Հայկական Հանրապետության հռչակագիրն էր պարունակում: Պատվիրակները խնդրեցին հասցնել այն Ավստրո-Հունգարիայի եւ Գերմանիայի կառավարություններին[22]: Հայ պատվիրակները պատմեցին բարոն Սիլասիին, որ թաթարների ու թուրքական զորամասերի կողմից իրագործվող սարսափելի հալածանքներն ու կոտորածներն ստիպել են Կարսի հայ բնակչությանը ազատել քաղաքը, եւ որ թուրքերի կողմից գրավված բոլոր հայկական մարզերում այլեւս հայեր չեն ապրում: Նրանք նաեւ հաղորդեցին, որ ողջ հույսը դնում են Ավստրիայի եւ Գերմանիայի վրա, նրանց օգնությամբ կենսունակ պետություն ստեղծելու հարցում[23].

Հուլիսի 19-ին Բեռլին ժամանեց մի հայկական պատվիրակություն, որը բաղկացած էր դոկտոր Հ. Օհանջանյանից եւ Ա. Զարուբովից: Նրանք Ավստրիայի դեսպանին հուշագիր հանձնեցին, որում նկարագրում էին հայ ժողովրդի վիճակը եւ Ավստրո-Հունգարիայի կառավարությունից օգնություն էին խնդրում: Նրանք խնդրում էին Հայաստանն ազատել թուրքական զորքերից մինչեւ Բրեստի պայմանագրով որոշված սահմանները, որպեսզի հայ փախստականները կարողանային վերադառնալ իրենց հայրենիքը: Նրանք խնդրում էին նաեւ վերահսկողություն ռազմական էքսպեդիցիայի ձեւով, հետագա հալածանքներից պաշտպանելու համար[24]: Ավստրո-Հունգարիայի հյուպատոսը հարցնում արեց Վիեննա, թե ինչպե՞ս վարվի: Բուրյանը պատասխանեց.

«Ինչպես իմացա բարոն Ֆրանկենշտայնի զեկույցներից, գեներալ բարոն Կրեսը մոտ տասն օր առաջ Բեռլին է հեռագրել թուրքերից փախած սովահար հայերին օգնելու հայ եպիսկոպոս Մեսրոպի թախանձագին խնդրանքի մասին: Քանի որ եպիսկոպոսը դիմել էր նաեւ բարոն Ֆրանկենշտայնին, վերջինս եպիսկոպոսի եւ մի ավստրո-հունգարական զինվորական բժշկի ուղեկցությամբ մեկնեց գործողության վայրը: Նա այդ մասին հետեւյալն է հեռագրել ամսի 24-ին. նախորդ օրը նա այցելել է Բակուրիանիի անտառներում ապաստան գտած մոտ 40.000 հայերին, որոնք թուրքական առաջխաղացման պատճառով մայիսին փախել են երկու օրվա ճանապարհի հեռավորության վրա գտնվող Ախալքալաքից: Մի մասը դեռ մի քիչ պաշար ու անասուն ունի, մնացածը մեծ կարիքի մեջ են, մասամբ հիվանդ ընկած են այս ու այնտեղ, անծրեւից անպաշտպան, անընդհատ շատանում են բծավոր տիֆն ու այլ հիվանդությունները: Եթե այդ փախստականները ինչ-որ ժամանակ եւս մնան իրենց ներկա վիճակում, ապա նրանց շրջանում գործող բժիշկների արդարացի կարծիքով սովի պատճառով առաջ կգա բարձր մահացություն: Համաճարակի վտանգի պատճառով վրացական կառավարությունը թույլ չի տալիս նրանց տեղաբաշխել Վրաստանում: Նրանց հայրենի գյուղերում այս տարվա հատկապես լավ բերքը պետք է հավաքվի տասը, ամենաուշը՝ քսան օրից: Եթե այս փախստականները մինչեւ այդ չկարողանան իրենց բնակավայրերը վերադառնալ թուրքերի բռնությունից իրենց կյանքի երաշխիքով, ապա բերքի զգալի մասը, թերեւս, կործանվի, քանի որ թուրքերն ի վիճակի չեն այն հավաքելու, եւ այդ դեպքում կմնա այն երկընտրանքը, որ կամ Կենտրոնական Եվրոպայի պետությունները ապահովեն գալիք ամիսներին այս մարդկանց հացահատիկով, կամ էլ սովին մատնեն նրանց: Մոտ 30.000 հայ փախստականների մի կերպ տեղավորել են Թիֆլիսում: Նրանք, ինչպես դրանում անձամբ համոզվել է բարոն Ֆրանկենշտայնը, հացի պակասի պատճառով գտնվում են սովամահ լինելու եզրին եւ կարոտով սպասում են հայրենիք վերադառնալու հնարավորությանը: Երեւանի շրջակայքը փախած 50.000 հայերը գտնվում են, ինչպես հավաստիացնում է Մեսրոպ եպիսկոպոսը, պար-

զապես հուսահատ վիճակում: Խնդրում եմ Ձերդ պայծառափայլությանը տեղեկացնել վերը շարադրվածի մասին արտաքին գործերի նախարարությանը եւ ավելացնել, որ եթե Բեռլինում նույնպես պատրաստ լինեն այդպիսի քայլի, ես կհանձնարարեմ բարոն Սիլասիին Բ. Դռան ուշադրությունը հրավիրելու հայերի հուսահատ վիճակի վրա, որի հետեւանքը Թուրքիայի համար կլինեն նոր ծանր մեղադրանքները, եւ պահանջը՝ շտապ ելք գտնել իրադրությունից, ինչպես նաեւ հատկապես գործել այն ուղղությամբ, որ վերոհիշյալ հայերին Բակուրիանիի շրջակայքում հնարավորին չափով շուտ հնարավորություն տրվի իրենց գյուղերը վերադառնալու: Խնդրում եմ հեռագրով պատասխանել: Բուրյան»[25]:

Երբ թուրքական գազանություններն Անդրկովկասում աշխարհով մեկ տարածվեցին, թուրքերը քարոզչական կամպանիա սկսեցին դրա դեմ: Այդ նպատակով նրանք, ի միջի այլոց, հրավիրեցին Ավստրո-Հունգարիայի զինվորական շտաբի թղթակից դոկտոր Շտեֆան Շտայներին ուղեւորություն կատարելու Թուրքահայաստան եւ թուրքերի կողմից գրավված Կովկասի շրջանները: Այս ուղեւորությունը տեւեց 1918 թ. ապրիլի 12-ից մինչեւ հուլիսի 13-ը: Վերադառնալով՝ դոկտոր Շտայները գրեց զեկուցագրում.

«Այս ուղեւորության նպատակն էր տեղեկացնելու Եվրոպայի հասարակայնությանը, որ վերագրավված մարզերում Ռուսաստանի կողմից վարձված եւ մահմեդական տարրերի դեմ սադրանքի ենթարկված ավազակախմբերը բարբարոսաբար են վարվել մահմեդականների հետ եւ որ այդ պատճառով Թուրքիան իրավունք ուներ դիմելու ծայրահեղ միջոցների»:

Շտայները հաղորդում է, որ իրեն ուղեկցող երկու թուրք սպաներն իրեն այնպես էին պահպանում, որ ոչ ոքի հետ խոսել չի կարողացել:

«Քաղաքացիական ու զինվորական իշխանություններն ամեն օր մշակում էին, ձգտում մեզ համոզել, որ հայերը տիեզերքի ամենամեծ հանցագործներն են, իսկ թուրքերը՝ հայկական բարբարոսության անմեղ զոհերը: Այն, որ թուրքերը 1915 թ. ամբողջ ժողովրդին Թուրքահայաստանում բնաջնջել են, ճիշտ է, խոստովանում էին, բայց այդ դիտում էին որպես չնչին երկրորդական մի բան»:

Իսկ հայ առաջնորդների քաղաքականության մասին Շտայները գրում է.

«Հայաստանի ճակատագիրը մի հրեշավոր ողբերգություն է, որի պատճառն անբարենպաստ պայմաններն են ու նրա առաջնորդների քաղաքական հիմարությունը: Իրոք որ անգլիական եւ ամերիկյան քարոզչության գործը այս ծրագիր չունեցող ֆանտաստների նկատմամբ ոչ մի դժվարություն չի ներկայացրել»:

Գերմանացիների մասին նա գրում է.

«Գերմանացիներին Հայաստանում ամենուրեք ատում են, որովհետեւ նրանց մեղադրում են այն բանում, որ 1915 թ. հայերի կոտորածները կարող էին հեշտությամբ կասեցնել եւ չնայած դրան, ձեռքերը ծալած նայել են: Միակ տերությունը, որն այսպի-

սով իրերի այսօրվա վիճակով կկարողանար ստանձնել պրոտեկտորատը, մնում է Ավստրիան»[26]:

Հղումներ

1. Wien, HHStA PA I 947 Konstantinopel, 7. Juli 1917, AOK op. Nr. 143990/1.
2. Hovannisian, "Armenia on the Road...", S. 189.
3. Քաջազունի, «Դաշնակցությունը...», էջ 31:
4. Wien, KA, Präs. 1918, Lage Ende Juni 1918, Nr. 143990.
5. Նույն տեղում:
6. Խատիսյան, «Հայաստանի...», էջ 88:
7. Wien, HHStA PA X 156 Konstantinopel, 29. Juni 1918 Nr. 57/P. C.
8. Wien, HHStA PA X 157 Berlin, 17. August 1918, Nr. 503/P.
9. Wien, HHStA PA I 946 Baden, 8. Juli 1918, Nr. 143990/1.
10. Wien, HHStA PA X 155, 28. Mai 1918, Telegramm Nr. 2676.
11. Wien, HHStA PA X 155 Pera, 30. Mai 1918, Nr. 340.
12. Wien, HHStA PA X 156 Konstantinopel, 1. Juni 1918, Nr. 49/P. A. C.
13. Wien, HHStA PA X 157 Tiflis, 18. Juli 1918, Nr. 8/P. A.
14. Wien, HHStA PA X 157 3. September 18, Beilage zu Bericht, Nr. 12/P. A.
15. Wien, HHStA PA X 156 Oberste Kriegsleitung, 10 Juli 1918, Nr. 33704.
16. Essad Bey, "Flüssiges Gold", S. 354.
17. Wien, KA Präs. 1918, Juni 1918, k. u. k. AOK, Nr. 143990.
18. Baumgart, "Deutsche Ostpolitik 1918", S. 192.
19. Wien, HHStA PA X 156 Konstantinopel, 29. Juni 1918, Nr. 57/P. C.
20. Wien, HHStA PA X 156 Tiflis, 25. Juni 1918, Nr. 4/P. C.
21. Baumgart, "Deutsche Ostpolitik 1918", S. 192.
22. Wien, HHStA PA X 157 Pera, 21. Juni 1918, Nr. 384.
23. Wien, HHStA PA X 156 Pera, 25. Juni 1918, Nr. 386.
24. Wien, HHStA PA X 157 Berlin, 22 Juli 1918, Nr. 82/P. F.
25. Wien, HHStA PA X 157 Wien, 26. Juli 1918, Nr. 446.
26. Wien, HHStA PA X 156 Konstantinopel, 27 Juli 1918, Beilage zu Nr. 65/P. B.

14. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Մարտերը Կովկասում հուլիսի վերջին աստիճանաբար դադարեցին: Նուրի փաշայի (Էնվերի եղբոր) գլխավորած 3-րդ բանակը, ուժեղացված կազակների 5-րդ դիվիզիայով, առաջ էր ընթանում դեպի Բաքու եւ, բոլշեւիկների դեմ հաջողությամբ տարած կռիվներից հետո, դիրք գրավեց Քյուրդամիրի (Ելիզավետպոլից 150 կմ դեպի արեւելք) ու Սալյանի (Բաքվից դեպի հարավ) մոտ եւ դադարեցրեց մարտերը[1]: Նախիջեւանում 11-րդ կովկասյան դիվիզիան կարողացավ ճեղքել հայերի պաշտպանությունը եւ հուլիսի 20-ին գրավեց քաղաքը[2]: Մինչդեռ Հայկական Հանրապետության համար երկրի մահմեդական բնակիչների դեմ մարտերի եւ փախստականների պարենավորման կողքին կարեւորագույն խնդիրը պետության de facto ճանաչումն էր եւ միաժամանակ օտար զորամասերի միջոցով օգնություն ստանալը: Անկախության հռչակումն ու երկիրը զորք մտցնելու օտար երկրին ուղղված խնդրանքն ինքնին հակասում էին միմյանց: Հայկական պատվիրակությունները, ինչպես Կ. Պոլսում, այնպես էլ Բեռլինում, խնդրում էին Հայաստան ուղարկել «մի քանի ավստրո-հունգարական զորամասեր»: Գերմանացիներն այն կարծիքին էին, որ ավստրո-հունգարական զորքերը պետք է զբաղեցնեին Հայաստանն այնպես, ինչպես գերմանացիները Վրաստանն էին զբաղեցրել: Կամ պետք էր շատ զորք ուղարկել Անդրկովկաս, կամ էլ պետք չէր որեւէ կերպ միջամտել այնտեղի իրադարձություններին[3]: Հայերի խնդրանքի կապակցությամբ Կ. Պոլսում Ավստրո-Հունգարիայի գործերի հավատարմատարն այն կարծիքին էր, որ Հայաստանի գրավումը ավստրո-հունգարական զորքերով կայսրության համար միայն դժվարություններ կբերի՝ կոնֆլիկտներ Թուրքիայի, ապագայում Ռուսաստանի եւ անգամ գերմանացիների հետ: Զեկուցագրում ասվում է.

«Հիրավի, սա կովկասյան Մակեդոնիան է, կարծում եմ, հազիվ թե հարմար լինի կայսրության առաջին գաղութը դառնալու համար: Իմ առաջարկությունը, մի խոսքով, այն է՝ թուրքերին թողնել իրենց «սահմանների կարգավորման շրջանները» առանց դրանց պատկանելությունը թուրքերին պայմանագրով ապահովելու, եւ սահմանափակվել հնարավորին չափով շատ տնտեսական առավելություններ ստանալով եւ տեղացի քրիստոնյաներին պաշտպանելով»[4]:

Հայկական խնդրագրերը՝ ուղղված Ավստրո-Հունգարիայի կառավարությանը, կրկնվեցին Կ. Պոլսում: Հուլիսի 30-ին պատվիրակները մի խնդրագիր հանձնեցին Ավստրո-Հունգարիայի դեսպան Սիլասիին, որով մեկ անգամ էլ խնդրում էին ճանաչել de facto Հայաստանը: Նրանք նորից խնդրում էին ավստրո-հունգարական զորքեր եւ դիվանագիտական-զինվորական ներկայացուցիչներ ու տնտեսագետներ ուղարկել

Հայաստան: Նրանք բողոքում էին, որ բանակցությունները Կ. Պոլսում անընդհատ հետաձգվում են, եւ որ այդ պատճառով հայ պատվիրակներն ամենուր ստիպված են հոգ տանել իրենց շահերի համար, քանի որ թուրքերը Հայաստանում շարունակում էին իրենց գազանությունները: Ինչ վերաբերում է հայ փախստականներին, Նազիմ բեյը նրանց անվտանգ վերադարձի երաշխիքներ չէր տվել[5]:

Սիլասին զեկուցում է.

«Զրուցակիցներիս դատողություններից ստացա այն տպավորությունը, որ մի խառը տնտեսական հանձնաժողովն իր ներկայությամբ իսկապես որոշակի խոչընդոտներ կարող է ներկայացնել թուրքերի բարբարոսությանը: Լսել եմ, որ թուրքերը Երեւան են ուղարկում մի դիվանագիտական եւ մի զինվորական ներկայացուցչի»[6]:

Ավստրո-Հունգարիայի կառավարությունը եւս Երեւան ուղարկեց մի ներկայացուցչի՝ դեսպանատան խորհրդական ֆոն Ֆրանկենշտայնին: Գերմանական կողմից Երեւան ուղարկվեց գեներալ Կրեսը: Օգոստոսի 3-ին Ֆրանկենշտայնը ներկա եղավ հայկական պառլամենտի առաջին նիստին: Վարչապետ էր ընտրվել **Հովհաննես Քաջազնունին**, *նրա նախարար-գործընկերներն էին.*

Ալեքսանդր Խատիսյանը *՝ արտաքին գործերի նախարար,*

Արամ Մանուկյանը *՝ ներքին գործերի նախարար,*

Խաչատուր Կարճիկյանը *՝ ֆինանսների նախարար,*

գեներալ Հովհաննես Հախվերդյանը *՝ զինվորական նախարար:*

Պառլամենտի այդ անդրանիկ նիստում Քաջազնունին ներկայացնում է իր ծրագիրը: Նա ասում է, որ իր կազմած կառավարությունն իր գործունեությունը սկսել է արտակարգ դժվար պայմաններում: Կառավարությունը հենակետեր չունի անցյալից, չի փոխարինել որեւէ նախկին կառավարության, որպեսզի կարողանա շարունակել արդեն ընթացքի մեջ գտնվող պետական աշխատանքը, նա չի ժառանգել կենտրոնական կառավարության պահանջներին բավարարելու ունակ ապարատ: Նա պետք է ամեն ինչ հենց սկզբից սկսի, քաոսից ստեղծի կենսունակ եւ աշխատունակ կազմակերպություն: Երկրի վիճակն աղետային է:

Պատերազմը, հեղափոխությունը, ռուսական զորքի նահանջը Հայաստանի սահմաններից, ցարական կայսրության փլուզումը, Հայաստանի ռազմական անհաջողությունները, ամբողջ մարզերի կորուստը, Անդրկովկասի բաժանվելը առանձին պետությունների՝ այս բոլոր խորը ցնցումները չէին կարող չունենալ սարսափելի հետեւանքներ՝ տնտեսական եւ ֆինանսական կյանքի լիակատար քայքայում, արտադրության եւ ապրանքափոխանակության դադար, ծայրահեղ թանկացում եւ նպարեղենի ու ամենաանհրաժեշտ առարկաների խիստ պակաս, ներման լիակատար դադար, երկաթուղային հաղորդակցության կասեցում, հարյուր-հազարավոր անօթեւան եւ ընչազուրկ փախստականներ, սահմանների անապահովություն եւ, որպես այդ ամենի անխուսափելի հետեւանք, անարխիա: Այդ պատճառով կառավարությունը չի կարող

կազմել ընդարձակ ծրագիր, այլ պետք է սահմանափակվի միայն ամենահրատապ հարցերով:

Քաջազնունին հայտարարեց, որ կառավարությունն իր խնդիրը տեսնում է նրանում, որ կասեցնի քայքայման պրոցեսը, երկիրը դուրս բերի անարխիայի վիճակից եւ անհրաժեշտ պայմաններ ստեղծի պետական կազմակերպության համար:

Կառավարությունն առաջ էր քաշում հետեւյալ հարցերը.

Ա. Ներքին քաղաքականության մեջ.

1. Հասնել տարրական իրավակարգի եւ կյանքի անվտանգության:

2. Բացել ճանապարհներ՝ անարգել երթեւեկության համար:

3. Վերականգնել փոստային եւ հեռագրական կապը երկրի ներսում եւ հարեւան երկրների հետ:

4. Վճռականորեն վերացնել նպարեղենի պակասը:

5. Կարգավորել փախստականների եւ վտարանդիների վիճակը, օգնել նրանց կամ հայրենիք վերադառնալուն, կամ նոր բնակավայրերում հաստատվելուն:

6. Արագացնել Հայաստանի սահմանադրական ժողովի հրավիրումը:

Բ. Ֆինանսների բնագավառում

Հիմք ստեղծել ֆինանսական համակարգի համար, միջոցներ ձեռք առնել երկիրը դրամանիշներով ապահովելու համար, վերականգնելու արդյունաբերական կյանքը եւ փոխանակությունը, մշակելու գործուն հարկային համակարգ:

Գ. Իրավունքի եւ արդարադատության բնագավառում

Դատը համապատասխանեցնել երկրի քաղաքացիական իրավագիտակցությանը եւ սովորույթի իրավունքին, քրեական դատավարությունների մեջ ներգրավել հասարակության ներկայացուցիչներին:

Դ. Ռազմական գործերում

Երկրի ռազմական ուժերի վերակառուցում: Որպես նպատակ է դիտվում ոչ մեծ, բայց ոգով եւ կարգապահությամբ ուժեղ բանակ ունենալը:

Ե. Արտաքին քաղաքականության մեջ

1. Պահպանել օսմանյան կայսրության հետ կնքած հաշտությունը եւ զարգացնել նրա հետ բարեկամական հարաբերություններ: Խստագույնս կատարել օսմանյան կայսրության հանդեպ ստանձնած պարտավորությունները եւ ձգտել այն բանին, որ նույնը Հայաստանի հանդեպ անի օսմանյան կառավարությունը: Բայց առանձնապես պիտի լուծվի երկրից թուրքական զորքի դուրս բերելու եւ փախստականներին վերադարձնելու հարցը:

2. Հայաստանի սահմանային հարցերը Ադրբեջանի եւ Վրաստանի հետ լուծել այդ երկրների հետ փոխադարձ համաձայնությամբ ազգագրական սկզբունքով, որը միակն է, որ համապատասխանում է դեմոկրատական պետության ոգուն եւ նպատակին:

3. Ադրբեջանի եւ Վրաստանի հետ համաձայնությամբ լուծարքի ենթարկել Անդրկովկասյան հանրապետությունից մնացած հիմնարկություններն ու գույքը[7]:

Հայերի հուսահատ վիճակն ամենից ավելի լավ նկարագրում է Ֆրանկենշտայնի՝ օգոստոսի 4-ի զեկուցագիրը, ուղղված Պալավիչինիին.

«Հենց նոր վերադարձա Երեւանից, որտեղ տեսածս եւ մանրամասն քննարկումները կառավարության եւ կաթողիկոսի հետ հաստատեցին մեր կարծիքը, որ Հայաստանը կարող է փրկվել կործանումից միայն Կենտրոնական Եվրոպայի պետությունների շուտափույթ օգնության դեպքում: Այժմյան փոքրիկ Հայաստանը չի կարող կերակրել անգամ բնիկ բնակչությանը, ուր մնաց որ երեքից մինչեւ հինգ հարյուր հազար փախստականներին, որոնք հիմա գտնվում են Հայաստանում եւ անհնար են դարձնում կարգ ու կանոնի հաստատումը: Փախստականների ծանր վիճակը շարունակ հասցնում է կառավարության կամքին հակառակ նոր ավազակախմբերի ստեղծման եւ դրանով նոր բարդությունների՝ թուրքերի հետ: Սրանք հերմետիկ կերպով փակում են սահմանները Հայաստանի շուրջը եւ խոչընդոտում ամեն առեւտուր եւ հաղորդակցություն, ստիպում են գաղթել թուրք եւ պարսիկ ազգաբնակչությանը, ինչը սպասելի է դարձնում հարձակումը Երեւանի վրա: Այստեղ թուրքերը չեն կատարել Բաթումի հաշտության պայմանները ու զբաղեցրած են պահում Բաթումի սահմանից դուրս գտնվող շրջանները: Հայաստանը կենսունակ է միայն Բրեստի սահմանների դեպքում, առանց թուրքերի սահմանափոխությունների: Գրեթե բոլոր արտադրունակ մարզերն այժմ զբաղեցված են եւ պլանաչափորեն թալանվում են թուրքերի կողմից: Չնայած ապրիլյան պայմանագրին, նրանք հատկապես արտահանում են բամբակի մեծ պաշարներ: Բերքի մի մասը թուրքերը հավաքել են, մեծ մասը կործանվում է: Երկաթուղին մինչեւ Նախիջեւան պետք է անպայման հայկական դառնա: Այստեղ, ինչպես եւ Վրաստանում, թուրքերին պետք է զորքերը տեղափոխելու իրավունք հատկացվի: Երկաթուղին տանելի վիճակում է գտնվում: Հայաստանը, ինչպես եւ Վրաստանը, անշուշտ, կիերքի, թե երկու պետությունների միջեւ բարդություններ կառաջանան, եթե թուրքերը վերադառնան Բաթումի սահմաններին: Էնվերի հակառակ պնդումները միայն պատրվակ են ժամանակ շահելու, ինչպես եւ ապօրինի կերպով գրավված երկրի լիակատար ավերումն ու թալանը ավարտելու համար: Վերջերս թուրքերը ցանկանում են Ադրբեջանից ներխուժել զուտ հայկական Ղարաբաղ գավառը եւ զինաթափել: Եթե մենք չխանգարենք, ապա մարտական լեռնցիների նոր կռիվները մահմեդականների դեմ անխուսափելի կդառնան: Խնդրում եմ անմիջապես հա-

ղորդել, արդյոք ճի՞շտ է հայկական կառավարությանը հասած լուրը, թե Հայաստանը պիտի դառնա Ավստրո-Հունգարիայի համար հետաքրքրություն ներկայացնող մարզ՝ ավստրո-հունգարական պաշտպանական զորքով: Հայաստանը երախտագիտությամբ կընդուներ այդ լուծումը: Ընդունելությունը Երեւանում ջերմ էր եւ սրտանց: Հաջորդ փոստով կստանաք զեկուցագիրը եւ կաթողիկոսի նամակը կայզեր Վիլհելմին եւ կայսր Կարլին, որոնցում նա պաշտպանություն է խնդրում կայսրներից՝ որպես քրիստոնյա տիրակալներից»[8]:

Հենց այդ ավստրո-հունգարական պաշտպանական զորքը Հայաստանի համար պրոբլեմ եղավ Վիլհելմշտրասեի եւ Բալհաուս հրապարակի համար, ընդ որում, Գերմանիան համաձայնեց ավստրո-հունգարական զորք ուղարկելուն, որպեսզի իր սեփական զորքի ուղարկումը Կովկաս չդիտվեր որպես զավթողական քաղաքականություն: Գեներալ-գնդապետ Արցին խնդրեցին Հայաստան ուղարկել նաեւ ավստրո-հունգարական զորքը, դրանով ամբողջ գործողությունը Կովկասում կարգ ու կանոն հաստատելու նպատակով անցկացվող ակցիայի բնույթ պետք է ստանար[9]: Կովկասում վերահսկողության միջոցով հնարավոր կլիներ շահագործել հույժ անհրաժեշտ պատերազմական հումքը, սակայն միայն գերմանական զորքով դա անել չէր լինի[10]: Բաքվում խիստ կարեւոր հումք կար՝ նավթ: Բաքվի գրավումը Գերմանիայի կարեւորագույն պատերազմական նպատակներից մեկն էր, սակայն հնարավոր գերմանա-ռուսական պատերազմից խուսափելու համար գերմանացիները թուրքերի առաջխաղացմանը դեմ էին: Բայց արդեն 1918 թ. սկզբին Բաքու էին ուղարկել թուրքական գլխավոր շտաբի երկու սպաներ ռազմաճակատը լքող ռուս զինվորներից զենքի գնումով մահմեդական բնակչությանը հայերի դեմ զինելու համար[11]: Ռուսական կայսրությունից Անդրկովկասի անջատվելուց հետո Բաքուն Անդրկովկասում բոլշեւիկների գլխավոր կենտրոնն էր: 1917 թ. վերջին Ստեփան Շահումյանը նշանակվել էր Կովկասի գործերի արտակարգ կոմիսար: Նրան հանձնարարվել էր նախապատրաստել խորհրդային կառավարության կազմավորումը Կովկասում:

Թուրքական զորքը հայկական ճակատից տեղափոխել կարողանալու համար թուրքական կովկասյան բանակի գլխավոր հրամանատար Խալիլ փաշան Գերմանիայից երաշխիք պահանջեց, որ հայերը չեն գրոհի թուլացած թուրքական զորքի վրա: Գեներալ Կրեսը հավաստիացրեց, որ տեղեկացրել է հայկական կառավարությանը, որ գերմանացիները կհարձակվեն հայերի վրա, եթե հայերը նախահարձակ լինեն: Բացի դրանից, Կրեսն այն կարծիքին էր, որ Հայաստանին իր զորքն ավելի անհրաժեշտ է ներքին իրավիճակը կայունացնելու համար[12]:

Իրադրությունը Կովկասյան ճակատում անմիջապես փոխվեց, երբ օգոստոսի սկզբին Նուրի փաշան, գերմանացիների մտադրություններին հակառակ, հրաման տվեց արշավ սկսելու դեպի Բաքու: Նա իր հրամանը հիմնավորում էր նրանով, որ *«Ելիզավետպոլի մոտ շատ վատ կլիմայական պայմանների պատճառով անհրաժեշտ է*

զորքը տեղափոխել դեպի արեւելք»[13]:

Բաքվի վրա օգոստոսի 2-ին ձեռնարկած հարձակմանը չորս հազար հայերն ու բոլշեւիկները պատասխանեցին ջախջախիչ հարվածով, այնպես որ թուրքական բանակը Բաքվից 15 կմ հեռավորության վրա ստիպված էր նահանջելու: Այդ պարտությամբ Բաքվի խնդիրը Գերմանիայի համար ժամանակավորապես լուծված էր[14]: Այդ մարտերում թուրքերը գերի վերցրին չորս անգլիացիների, այդ թվում՝ մի սպայի: Սրանք ասացին, որ մարտերին մասնակցում էին 300 անգլիացիներ եւ որ հինգ հազար անգլիացիներ Կասպից ծովով Պարսկաստանից Բաքու էին տեղափոխվում[15]: Երբ հայտնի դարձավ, որ Բաքու են ժամանելու անգլիական զորամասեր, Բաքվի պրոբլեմը նորից հրատապ դարձավ: Գերմանացիներն ինտենսիվացրին բանակցությունները ռուսների հետ գերմանական զորքի կողմից Բաքուն գրավելու վերաբերյալ:

Այժմ թուրքական կառավարության համար հասունացել էր Կարսում, Արդահանում ու Բաթումում հանրաքվե անցկացնելու ժամանակը, քանի որ հայ ազգաբնակչությունը Կարսում եւ Արդահանում խիստ կրճատված էր, եւ հայերի փոխարեն այնտեղ թուրքեր էին բնակվում: Մեքենայություններով կազմակերպված հանրաքվեի ժամանակ 87.048 արական սեռի բնակիչներից 85.124 հոգի քվեարկեցին Թուրքիայի օգտին: Այդ արդյունքի հիման վրա սուլթանը կայսերական հրովարտակով հռչակեց այդ երեք շրջանների ետգրավումը[16]:

1918 թ. օգոստոսի 12-ին Կարսի հայկական Ազգային խորհուրդը գերմանական կառավարությանը հանձնեց Թուրքիայի կողմից Կարսում անցկացրած հանրաքվեի մասին հուշագիր: Նրանում ասվում էր, որ հայ ազգաբնակչությունը բռնի կերպով վռնդվել էր իր հայրենիքից, որպեսզի Կարսի սանջակում այլեւս մեծամասնություն չկազմեր: Հայկական Ազգային խորհուրդը դիմում էր Բրեստի պայմանագիրը ստորագրած պետությունների խղճին եւ խնդրում հեռացնել թուրքական օկուպացիոն զորքն ու այն մահմեդական զանգվածներին, որոնք եկել են հարեւան մարզերից թուրքական կողմնորոշում ունեցող ձայների մեծամասնությունն ապահովելու համար, եւ պայմաններ ստեղծել քրիստոնյա բնակչությանը հայրենիք վերադարձնելու համար, որպեսզի նա ինքը նշանակի իր կառավարությունը[17]:

Այնինչ Թուրքիայի դաշնակիցները դեռեւս չէին վճռել զորքը Հայաստան ուղարկելու հարցը: Օգոստոսի 12-ին Թրաուբմանսդորֆը Վիեննայից հրահանգ ստացավ, որ եթե պիտի որոշվեր ավստրո-հունգարական զորքը Հայաստան ուղարկելը, ապա պետք էր հաշվի առնել հետեւյալ պայմանները.

1. Միապետության համապատասխան մասնակցությունը տնտեսական շահույթներին:

2. Գերմանական եւ ավստրո-հունգարական զորամասերի համատեղ գործողությունն ինչպես Վրաստանում, այնպես էլ Հայաստանում[18]:

Չնայած դրան՝ վիճակն անորոշ էր մնում: Մի կողմից համոզմունք կար, որ զորքի

ներկայությունը Երեւանում դրական հետեւանքներ կունենար հայերի համար, մյուս կողմից դա կարող էր վիրավորել թուրքերի հպարտությունը: Բացի դրանից, լրացուցիչ բարդություններ կառաջանային, եթե Հայաստանում, չնայած զորքի ներկայությանը, գազանություններ տեղի ունենային: Որոշեցին սպասել մինչեւ Գլխավոր շտաբի խորհրդակցության վերջը[19]: Զորքեր ուղարկելու դեմ էր նաեւ ավստրո-հունգարական գլխավոր շտաբը: Փաստարկն այն էր, որ մեկ կամ երկու մարտկոցներով երկու գումարտակի ուղարկումն այդ հեռավոր շրջանը շատ նյութ ու դրամական ծախսեր կպահանջեր[20]:

Հայաստանի Հանրապետության պրոբլեմներից մեկը փախստականներն էին: Փորձ էր արվում Կարսի, Արդահանի եւ Բաթումի փախստականներին վերադարձնելու իրենց հայրենիքը: Երբ թուրքական հարձակումը Բաքվի վրա ձախողվեց, թուրքական կառավարությունը փոխեց իր քաղաքականությունը փախստականների նկատմամբ:

Օգոստոսի կեսերին էնվեր փաշան տեղեկացրեց դաշնակիցների զինվորական լիազորներին, որ հայ փախստականները կարող են վերադառնալ Բաթում, Ալեքսանդրապոլ եւ Ախալքալաքի մարզը[21]: 1918 թ. օգոստոսի 31-ին Երեւանում մի կոնֆերանս տեղի ունեցավ, որտեղ Հայաստանի, Ավստրո-Հունգարիայի, Գերմանիայի եւ Թուրքիայի ներկայացուցիչները բանակցում էին հայ փախստականների՝ Ալեքսանդրապոլ-Զուլֆա երկաթուղուց 20 կմ դեպի արեւելք ընկած շրջանները վերադարձի մասին, որ զբաղեցրել էին թուրքերը: Թուրքական բանակի հրամանատարությունը պնդում էր, թե փախստականների վերադարձը վտանգի կենթարկի թուրքական զորքին: Հայերը պատասխանեցին, որ դա հնարավոր չէ, քանի որ փախստականները մեծ մասամբ երեխաներ էին, կանայք եւ ծերունիներ, իսկ սակավաթիվ տղամարդկանց առանց այլեւայլի կարելի է զինաթափել: Հայերը նաեւ խոստացան, իբրեւ իրենց բարի կամքի ապացույց, մի հայկական գումարտակ ուղարկել Ղարաբաղ՝ վնասազերծելու գեներալ Անդրանիկին, որն իր կամավորների հետ ինքնուրույն կերպով կռվում էր թուրքերի դեմ: Վեհիբ փաշան՝ թուրքական պատվիրակը, խոստացավ Կ. Պոլսում միջնորդելու հայերի համար, որպեսզի փախստականների հարցը հնարավորին չափ շուտ լուծվի[22]:

Հայկական պետության ճանաչման եւ այնտեղ ավստրո-հունգարական զորքի ուղարկման հարցը տարբեր կարծիքների էր հանդիպում Ավստրո-Հունգարիայի դիվանագիտական շրջաններում:

Օգոստոսի 20-ին Սիլասին գրում է, որ Հայաստան պետք չէ զորք ուղարկել, որովհետեւ թուրքական կառավարությունն, անշուշտ, դեմ կլինի.

«Ճիշտ է, օսմանյան ներկայացուցչի դիրքը Երեւանում յուրահատուկ է: Թուրքիան Հայաստանին դիտում է mirabile dictu (զարմանալի է այդ ասելը)՝ որպես իր կողմից ստեղծած, եւ, հավանաբար, հարկավոր է սպասել, թե ինչպես է կայսրության ներ-

կայացուցիչը Երեւանում մտնելու քնքուշ մանկաբարձուհու իր դերի մեջ: Բայց ես չեմ կարծում, թե թուրքական իշխանավորներն իրենց սեփական ստեղծագործության նկատմամբ միայն մաքիավելիստական մտադրություններով են տոգորված: Ընդհակառակը, ես կարծում եմ, որ ոմանք, այդ թվում եւ Մեծ վեզիրը, շատ ցավում են հայերի դեմ կատարված գազանությունների համար: Եթե ոչ այլ, ապա աշխարհի հանրային կարծիքի պատճառով եւ նոր պետական կազմավորման մեջ ատելի հայերից մեկուսանալու եւ նրանց ճնշող տնտեսական ազդեցությունից պաշտպանվելու հնարավորություն են տեսնում: Այն, որ իմ այս մտքի ընթացքը կիսում են եւ մի քանի թուրքեր, երեւում է մի քանի օր առաջ արքայազն Սայիդ Հալիմի հետ ունեցածս զրույցից: Նա ինձ ասաց, որ թուրքական Հայաստանի տեղահանումը ռազմական տեսանկյունից լիովին հիմնավորված է եղել, միայն թե խայտառակություն է, որ դա առիթ է ծառայել գազանությունների համար: Արքայազնը նաեւ ասաց, որ չի հասկանում Հայաստանի սահմաններն այդքան նեղ գծելու կառավարության ցանկությունը: Ընդհակառակը, այն պետք է բավական մեծ լիներ թուրքական հայերին ձգելու համար, որպեսզի նրանք հնարավորին չափ մեծ թվով դեպի այնտեղ ձգտեն եւ ազատեն կայսրությունն իրենց ներկայությունից»[23]:

Հայկական անկախ պետության ճանաչումը Գերմանիայի համար բարդությունների հետ էր կապված, քանի որ դա կնշանակեր, թե Գերմանիան մտադիր է Հայաստանը պոկել Ռուսաստանից[24]: Ռուսները մերժում էին անկախ Հայաստանը, ասելով, թե վերջինս չափազանց փոքր է, միայնակ կենսունակ լինելու համար: Այդ ժամանակ Բեռնստորֆը առաջարկեց, որ եթե այդպես է, Հայաստանը պետք է մտցնել Վրաստանի կազմի մեջ: Այս առաջարկությունը Կ. Պոլսում արեց հայ պատվիրակներին Բեռնստորֆը[25]: Երբ Պալավիչինին Բեռնստորֆի առաջարկությունը Վիեննա ուղարկեց, այնտեղ համաձայն չէին: Բալհաուս հրապարակում այն կարծիքին էին, որ քանի դեռ Ռուսաստանը հավակնություններ ունի Հայաստանի հանդեպ, չի կարելի մտածել ոչ Հայաստանի անկախ հանրապետության ճանաչման, ոչ էլ այն Վրաստանի կազմի մեջ մտցնելու մասին[26]:

Թե որքան հակասական էր գերմանացիների հայկական քաղաքականությունը, երեւում է կայզերական կառավարության հետեւյալ դրույթից, որը ներկայացվել էր Թալեաթ փաշային կովկասյան հարցերի վերաբերյալ.

«Այս միջոցին Թուրքիան իր կազմի մեջ է առել Կարսի, Արդահանի, Բաթումի շրջանները, այն էլ հանրաքվեի հիման վրա, որի լրջությունը կասկածելի է: Դաշնակիցները, որպես Բրեստի պայմանագրի ստորագրմանը մասնակից երկրներ, ընդհանրապես, իրավունք ունեն ստուգելու եւ գուցե թե վիճարկելու հանրաքվեի վավերականությունը: Սակայն, թերեւս, ցանկալի է, ընդառաջելով թուրք դաշնակցին, հրաժարվել դրանից»:

Այնուհետեւ կարդում ենք.

«Թուրքիան Բաթումի հաշտության պայմանագրով հայերից խլեց Բրեստ-Լիտովսկի սահմաններից դուրս կարեւոր շրջաններ: Հողը, որ մնացել է հայերին, չափազանց փոքր է բնակչությանը կերակրելու համար: Հարյուր հազարավոր հայեր փախել են Վրաստան կամ սարերը: Ընդհանրապես, մենք որպես Բրեստի պայմանագրի ստորագրմանը մասնակից երկիր, պետք է պահանջեինք, որ Թուրքիան ետ քաշվեր մինչեւ Բրեստի սահմանները եւ հնարավորություն տար փախստական հայերին վերադառնալու իրենց բնակավայրերը: Թուրքերին խնայելով, խորհուրդ է տրվում հրաժարվել այդպիսի պահանջից եւ սահմանափակվել կշտամբանքներով թուրքերի գործելակերպի վերաբերյալ, սակայն առանց կշտամբանքից գործին անցնելու: Մենք լավ կլինի խուսափենք Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ միջնորդ լինելուց, որովհետեւ հակառակ դեպքում կարող է ստիպված լինենք հավանություն տալ Թուրքիայի հողային նվաճումներին, հայերի, այսինքն՝ ռուսների հաշվին եւ ճանաչելու Հայաստանը որպես ինքնուրույն, բանակցելու ունակ գործոն»[27]:

Հղումներ

1. Wien, HHStA PA I 946 Jenköj, Juli 1918, Nr. 143900/2.
2. Wien, HHStA PA X 946, August 1918, k. u. k. AOK Nr. 143990/3.
3. Wien, HHStA PA X 946 Jenköj, 27. Juli 1918, Nr. 65/P.A-G.
4. Նույն տեղում:
5. Wien, HHStA PA X 157 Pera, 31. Juli 1918, Nr. 453.
6. Նույն տեղում:
7. Wien, HHStA PA X 157 Eriwan, 3. September, Nr. 12/P-C.
8. Wien, HHStA PA X 157 Tiflis, 4. August 1918, Beilage zu Nr. 9/P.A-o.
9. Wien, HHStA PA X 157 Baden, 6. August 1918, Nr. 31742.
10. Wien, HHStA PA X 157 Baden, 9. August 1918, Nr. 31831.
11. Wien, HHStA PA I 947 Wien, 24. Jänner 1918, Nr. 501.
12. Wien, HHStA PA X 157 Tiflis, 9. August 1918, Nr. 16.
13. Wien, HHStA PA I 946, August 1918, k. u. k. AOK Nr. 143990/3.
14. Նույն տեղում:
15. Նույն տեղում:
16. Նույն տեղում , Nr. 143990/4.
17. Wien, HHStA PA X 157 Tiflis, 17 August 1918, Nr. 10/P.C.
18. Wien, HHStA PA X 157 Wien, 12. August 1918, Nr. 260.
19. Wien, HHStA PA X 157 Berlin, 10. August 1918, Nr. 491/P.
20. Wien, HHStA PA X 157 Berlin, 13. September 1918, Nr. 32734.
21. Wien, HHStA PA X 157 Pera, 15. August 1918, Nr. 478.
22. Wien, HHStA PA X 157 Tiflis, 3. September 1918, Nr. 21/P.A.
23. Wien, HHStA PA X 157 Jenköj, 20. August 1918, Nr. 72/P. C.
24. Wien, HHStA PA X 157 Berlin, 24. August 1918, Nr. 553.
25. Նույն տեղում:
26. Wien, HHStA PA X 157 Wien, 2. September 1918, Nr. 403.
27. Wien, HHStA PA X 157 Berlin, 2. September 1918, Nr. 101/P.A.B.

15. ԲԱՔՎԻ ԱՆԿՈՒՄԸ

Դաշնակիցների համար նպաստավոր քաղաքական իրադրությունը Բաքվում փոխվեց, երբ մենշեւիկները դաշնակցականների ձայնի շնորհիվ, բոլշեւիկներին հակառակ, կարողացան անցկացնել անգլիական զորամասեր Բաքու հրավիրելու առաջարկությունը: Երբ 1.500 հոգիանոց անգլիական զորքը հասավ Բաքու, բոլշեւիկները փախան քաղաքից: Բայց անգլիացիները նրանց բռնեցին ու գնդակահարեցին: Նրանց թվում էր եւ Կովկասի գործերի ժողովրդական կոմիսար Ստեփան Շահումյանը: Այժմ, երբ անգլիացիները Բաքվում էին, քաղաքի առումը գերմանացիների կողմից հնարավոր էր հիմնավորել: Պետական քարտուղար Հինցեն բանակցում էր այդ մասին Ռուսաստանի դեսպան Իոֆֆեի հետ Բեռլինում: Իոֆֆեն սկզբում համաձայնեց, երբ նրան հավաստիացրին, որ Բաքուն կգրավեն միայն գերմանական զորամասերը, իսկ թուրքական զորամասերը կկանգնեցվեն Բաքվից դեպի արեւմուտք եւ արեւելք: Իոֆֆեն ուզում էր խուսափել հայ բնակչության դեմ թուրքական զորամասերի նոր գազանություններից: Գեներալ Կրեսը հրաման ստացավ նախապատրաստվել Բաքվի գրոհին[1]:

Օգոստոսի 27-ին գերմանացիների եւ ռուսների միջեւ լրացուցիչ պայմանագիր ստորագրվեց, որով Բաքվի նավթի արտադրանքի մեկ քառորդը գերմանացիներին էր տրվում: Այս պայմանագիրը մի գաղտնի լրացում էլ ուներ, որով վճռվում էր անգլիացիներին վռնդել Բաքվից[2]: Սակայն գեներալ Կրեսը սեպտեմբերի 2-ին զեկուցեց, որ Բաքվի նախագծին թուրքական զորքի չմասնակցելը *«անհնար է իրերի դրության պատճառով»*[3]: Եվ ահա դեպքերին ազատ ընթացք տրվեց: Ավստրո-Հունգարիային խոստացան նավթի գերմանացիների բաժնի մեկ քառորդը: Այդ ժամանակ Աստրո-Հունգարիայում միտք ծագեց Ռուսաստանի հետ ինքնուրույն լրացուցիչ պայմանագիր կնքելու: Դա ավելի դյուրին դարձնելու համար ցանկալի էր մասնակցել Բաքվի գրավմանը՝ Հայաստանի փոխարեն զորքն այնտեղ ուղարկելով[4]: Գերմանացիների լրացուցիչ պայմանագիրը ռուսների հետ անակնկալի բերեց թուրքերին: Թալեաթը մեկնեց Բեռլին՝ կայզեր կառավարության հետ բանակցելու: Կ. Պոլսից մեկնելուց առաջ նա ընդունեց հայ պատվիրակներին եւ հայտարարեց նրանց, թե գերմանա-ռուսական պայմանագրով միայն Վրաստանն է ճանաչվել de facto, իսկ Հայաստանն ու Ադրբեջանը՝ ոչ: Այդ պատճառով նա նրանց առաջարկեց թուրքերի հետ համագործակցել: Թալեաթը խոստացավ նաեւ ընդլայնել տալ Հայաստանի սահմանները[5]:

Բեռլինի բանակցություններում ձգտում էին համաձայնություն ստեղծել հայերի եւ թուրքերի միջեւ, կովկասյան հարցը ավելի հեշտ լուծելու համար: Ենթադրվում էր,

որ Բաքուն կարելի կլինի վերցնել առանց կռվի, եթե հայերին գրավեն իրենց կողմը: Բանն այն է, որ անգլիացիները Բաքվում կառավարում էին հայերի օգնությամբ: Թալեաթն այն կարծիքին էր, որ եթե հաշտության բանակցությունների ժամանակ ուզում էին խուսափել բարդություններից Անտանտի հետ, ապա Հայկական հարցը պիտի լուծում գտներ մինչեւ պատերազմի ավարտը: Գերմանիայի պետական քարտուղարի օգնական Շտումը համաձայն էր այդ գաղափարի հետ, սակայն պետական քարտուղար Հինցեն չէր ցանկանում խախտել գերմանա-ռուսական լրացուցիչ պայմանագիրը[6]: Այս պայմանագրի նկատմամբ հայերի վերաբերմունքը դրական չէր: Նրանք դրանում տեսնում էին Հայաստանի լրիվ մեկուսացումն անդրկովկասյան քաղաքականության մեջ:

Սեպտեմբերի 12-ին հայ պատվիրակները Կ. Պոլսում Ավստրո-Հունգարիայի դեսպանին մի գրություն հանձնեցին, որով բողոքում էին լրացուցիչ պայմանագրի դեմ: Նրանք նշում էին, որ այդ պայմանագրով միայն Վրաստանն է անկախ ճանաչվում, եւ վտանգ կա, որ կովկասյան պետությունների միջեւ բարդություններ առաջանան[7]:

Հայերի բուն խնդիրն անկախ հայկական պետության ճանաչումն էր: Հայկական պատվիրակությունը խնդրեց Ավստրո-Հունգարիայի կառավարությանը միջնորդել մոսկովյան կառավարության առջեւ, որպեսզի Հայաստանը ճանաչվի անկախ պետություն[8]: Սակայն ռուսները հայտարարել էին, որ Ռուսաստանը կճանաչի Հայաստանին միայն այն ժամանակ, երբ Թուրքիան վերադառնա մինչեւ Բաթումի կոնֆերանսը գոյություն ունեցած սահմաններին[9]: Կաթողիկոսի նախկին լիազոր Պողոս Նուբար փաշան, որին կաթողիկոսը պատերազմից առաջ հանձնարարել էր Թուրքահայաստանում ռեֆորմների համար քարոզչությունը, Անտանտի օժանդակությամբ հայտարարեց, որ չի ճանաչում Հայաստանի անկախ հանրապետությունը: Թուրքական մամուլը Պողոս Նուբար փաշայի դեմ դուրս եկավ: Մամուլը պնդում էր, որ Անդրկովկասյան հանրապետության լուծարքից եւ անկախ հանրապետությունների հռչակումից հետո առաջացել է հայկական պետություն, որին Թուրքիան ճանաչել է եւ որի հետ բարեկամական հարաբերություններ է հաստատել: Մամուլի կարծիքով, Պողոս Նուբար փաշան այլեւս չէր կարող լինել կաթողիկոսի ներկայացուցիչը[10]:

Քանի որ հայ պատվիրակները Բեռլինում բազմիցս ցանկություն էին հայտնել, որ իրենց ընդունեին Վիեննայում, այժմ նրանց Վիեննա հրավիրեցին: Այստեղ հայկական կառավարության լիազոր, դոկտոր Օհանջանյանը սեպտեմբերի 7-ին Բուրյանին մի հուշագիր հանձնեց, որի մեջ նա նկարագրում էր հայ ժողովրդի ճակատագիրը պատերազմի տարիներին եւ նոր հայկական պետության դժվարությունները: Հուշագրում Օհանջանյանը ներկայացրել էր հայոց համառոտ պատմությունը, հայ վաճառականի գործիմացությունը եւ հայերին անվանել էր Առաջավոր Ասիայի քաղաքակիրթ ժողովուրդ: Օգտակար հանածոների եւ հումքի մասին խոսելուց հետո նա խնդրում էր Հայաստան ուղարկել երկուսից երեք հազար ավստրո-հունգարական զինվորների, այն

«ձեր հզոր պաշտպանության տակ վերցնելու եւ մեր երկրում ավստրո-հունգարական զորքի միջոցով ապահովությունը եւ կարգ ու կանոնը վերականգնելու ու վերահսկելու համար, մինչեւ մեր մարզը թուրքական զորքի կողմից ազատելն ու Բրեստի պայմանագրով որոշված սահմանների վերականգնելը»[11]:

Ավստրո-Հունգարիայի կառավարությանը, իբրեւ փոխադարձ ծառայություն, հայերը հետեւյալն էին առաջարկում.

1. Մենք Ավստրո-Հունգարիայի տրամադրության տակ ենք դնում մեր խումբը, ինչպես նաեւ մեր ողջ առեւտրական եւ քաղաքական ազդեցությունը: Արդեն հիմա մենք զգալի պաշարներ ունենք, այսպես, օրինակ, ավելի քան 400.000 փութ բամբակ (տարեկան արտադրանքը կազմում է մոտ երկու միլիոն փութ), մոտավորապես 80.000 փութ պղինձ (տարեկան արտադրանքը 200.000 փութ), ինչպես նաեւ բուրդ, մետաքս...

2. Մենք համաձայն ենք, որ Ավստրո-Հունգարիան Հայաստանում հայկական զինված ուժեր կազմակերպի եւ օգտագործի դրանք ըստ իր ցանկության ձեր տարածքի սահմաններին՝ երկու կողմերի օգտին:

Ներկայումս մենք 20.000 հոգանոց բանակ ունենք, բացի դրանից կան եւս 80.000 հայեր, որոնք ծառայել են ռուսական բանակում[12]:

Սեպտեմբերի 16-ին Բուրյանն ընդունեց հայկական պատվիրակությանը: Օհանջանյանը հետեւյալ կետերով շարադրեց Ավստրո-Հունգարիային ուղղված խնդրանքները.

1. Հայկական կառավարությունը խնդրում է Ավստրո-Հունգարիայի կառավարությանը միջնորդելու, որպեսզի Հայաստանը ստանա Բրեստ-Լիտովսկի հաշտության հետեւանքով իրեն հասանելիք սահմանները:

2. Հայաստանը խնդրում է ավստրո-հունգարական զորքի կոնտինգենտ ուղարկել Հայաստան, սրան զորավիգ լինելու այնպես, ինչպես Գերմանիան է անում Վրաստանի համար, այդ նպատակով խնդրվում է Երեւան ուղարկել նաեւ ավստրո-հունգարական դիվանագիտական ներկայացուցչի[13]:

Նախարարը վստահեցրեց հայ պատվիրակներին, որ միապետությունը համակրում է հայերին եւ ջանում է հասկանալ նրանց ձգտումները: Բայց հայերը պետք է փորձեն համաձայնության գալ թուրքերի հետ: Հայաստանի տարածքային ցանկություններին ընդառաջ գնալ չէին կարող, որովհետեւ Բեռլինում արդեն դրա մասին բանակցություններ են ընթանում: Բացի դրանից, Ավստրո-Հունգարիայի կառավարությունը չի ճանաչել Բաթումի պայմանագիրը: Հայ պատվիրակները նշեցին Հայաստանի ճգնաժամային իրադրությունը եւ արտահայտեցին այն կարծիքը, որ ավստրո-հունգարական զորքը Հայաստանում հոգ կտանի կարգ ու կանոնի համար, քանի որ թաթարական ավազակախմբերը համագործակցում են թուրքերի հետ, իսկ հայերը խուսափում են այդ ավազակախմբերի դեմ կռվելուց, որովհետեւ դա կնշանակի թուր-

քերի հետ պատերազմի մեջ մտնել, այնինչ հայերն այդ մտադրությունը չունեն: Նրանք նշեցին նաեւ այն տնտեսական օգուտը, որը միապետությունը կունենար Հայաստանից հումք ստանալով[14]:

Հայերի ջանքերը Վիեննայում ապարդյուն անցան: Ավստրիան սպասում էր Բեռլինի եւ Կ. Պոլսի բանակցությունների ավարտին: Այդ ընթացքում թուրքերն ու գերմանացիները վճռել էին նախապատրաստել ներխուժումը Բաքու: Սեպտեմբերի 14-ին Բաքուն գրավեցին: Դեռ գրոհը չսկսած՝ քաղաքից փախան անգլիացիները, նրանց հետեւեցին դաշնակցականները, սրանց հետ Բաքվից հեռացավ նաեւ քաղաքի հայ բնակչության գրեթե կեսը: Հետեւանքն այն էր, որ այստեղ մնացած հայերից 30.000-ին կոտորեցին[15]: Սեպտեմբերի 20-ին Ռուսաստանը բողոքեց Բաքվի գրավման դեմ: Ռուսները խստորեն դատապարտում էին թուրքերի կողմից Անդրկովկասի գրավումը, որին հետեւել էին ջարդերն ու թալանը, զինուկակ հայ տղամարդկանց քշել էին, տարել: Ռուսաստանի նոտայում ասված էր. *«Օսմանյան կառավարությունը դրանով ցույց տվեց, որ Բրեստ-Լիտովսկի հաշտությունը Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ այլեւս գոյություն չունի»*[16]: Բաքվի ջարդերի մասին Օհանջանյանը հետեւյալն է գրում Ավստրո-Հունգարիայի դեսպանին.

«Հենց նոր հայրենիքիցս մանրամասն տեղեկություններ ստացա սոսկալի գազանությունների մասին, որոնք Բաքվի գրավման ժամանակ տեղի հայ բնակչության նկատմամբ կատարել են թուրք զինվորականները եւ թաթար բնակիչները: Կոտորվել են հազարավոր խաղաղ հայեր, այդ թվում անվանի մտավորականներ, կանայք, երեխաներ ու ծերունիներ, հայերի բնակարանները կողոպտել են, բանտերը լցված են հայերով, որոնք այնտեղ հիմա էլ ենթարկվում են սարսափելի տանջանքների: Իսկ թաթարները պնդում են, որ իրենց թույլ է տրվել երեք օրվա ընթացքում սպանել ու թալանել: Եվ արել են դա հիմնավորապես ու անխնա: Թուրք Հալիլ փաշային կցված մի գերմանացի սպա մեր դիվանագիտական ներկայացուցչին Թիֆլիսում կատարված գազանությունների առթիվ արտահայտել է իր վրդովմունքը՝ ասելով.

Բաքվում թույլ տված բարբարոսությունն աննկարագրելի է: Որպես քրիստոնյա եւ եվրոպացի, ուժերիցս վեր է այդպիսի գազանություններ տեսնելը, արդեն այսօր երեկոյան Հալիլ փաշային ներկայացնելու եմ իմ հրաժարականը»[17]:

Հղումներ

1. Baumgart, "Deutsche Ostpolitik 1918", S. 201.
2. Նույն տեղում, S. 202f.
3. Նույն տեղում:
4. Wien, HHStA PA X 157 Wien, 4. September 1918, Nr. 4188.
5. Wien, HHStA PA X 157 Pera, 5. September 1918, Nr. 521.
6. Wien, HHStA PA X 157 Berlin, 9. September 1918, Nr. 591.
7. Wien, HHStA PA X 157 Konstantinopel, 14. September 1918, Nr. 79/P.E.
8. Wien, HHStA PA X 157 Pera, 3. September 1918, Nr. 106.
9. Wien, HHStA PA X 157 Baden, 6. September 1918, Nr. 3258.

10. Wien, KA AOK NA 18 Fasz 5800, Konstantinopel, 5. Oktober 1918, Nr. 26391.
11. Wien, HHStA PA X 157 Wien, 7. September 1918, Nr. 9164.
12. Wien, HHStA PA X 157 Jeniköj, 15. September 1918, Nr. 20, Beilage.
13. Wien, HHStA PA X 157 Wien, 16. September 1918, Nr. 4490.
14. Նույն տեղում:
15. Lanne, Armenien, S. 179.
16. Wien, HHStA PA X 157, Izwestia, 21. September 1918, Beilage zu: 24. September 1918, Nr. 68.
17. Wien, HHStA PA X 157 Berlin, 30. Oktober 1918, Nr. 118, Beilage zu: 7. November 1918, Nr. 126/P.B.

16. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԴԻՄՈՒՄԸ ԿԱՅՍՐ ԿԱՐԼԻՆ

Դեսպանատան խորհրդական բարոն ֆոն Ֆրանկենշտայնը օգոստոսի 3-ին Երեւանում ստացավ Ամենայն հայոց կաթողիկոս Գեւորգ Ե-ից անձնական դիմում՝ ուղղված կայսր Կարլին, որը Բուրյանի միջնորդագրով սեպտեմբերի 17-ին հանձնվեց կայսրին: Կաթողիկոսը գրում էր, որ պատերազմը հատկապես ծանր հետեւանքներ ունի հայ ժողովրդի համար: Թուրքական Հայաստանի բոլոր մարզերում վերացել է հայ ազգաբնակչությունը: Նրա մեծագույն հատվածը կոտորվել է Թուրքահայաստանում կամ զոհվել ամենատարբեր զրկանքների պատճառով: Կենդանի մնացածներն ապաստան են փնտրում նորաստեղծ անկախ Հայաստանում եւ հարեւան մարզերում: Թուրքերը տիրացել են արտագաղթած հայերի ունեցվածքին, ներառյալ բերքը: Նոր հայկական պետության տարածքում գտնվող փախստականների թիվը հասել է մոտ կես միլիոնի: Մոտ 300.000 փախստական էլ ապաստան է գտել Վրաստանում, Ադրբեջանում եւ Հյուսիսային Կովկասում: Օթեւան չունենալով, մատնված անտանելի շոգին, եղանակի բոլոր փոփոխություններին ու զրկանքներին, նրանք անթիվ զոհեր են տալիս: Կաթողիկոսը հիշեցնում է, որ հուլիսի 31-ին էջմիածնում ընդունել է կայսեր կառավարության ներկայացուցիչ բարոն ֆոն Ֆրանկենշտայնին, որն արտահայտել է իր կարեկցանքը վերը նկարագրված իրադարձությունների առթիվ, եւ համոզվածություն է հայտնել, որ վերջինս մանրամասն հաշվետվություն կտա հայ ժողովրդի կացության մասին: Կաթողիկոսը կայսեր ուշադրությունը հրավիրում էր այն բանի վրա, որ եթե անհրաժեշտ օգնությունն ամենամոտ ժամանակում ցույց չտրվի, ապա աղետը կանխել չի լինի: Բազմապատիկ փոքրացած նորաստեղծ Հայաստանն ի վիճակի չէ օթեւան եւ սնունդ տալու բազմաթիվ փախստականներին: Կաթողիկոսը խնդրում էր կայսր Կարլին ազդել Ավստրո-Հունգարիայի դաշնակից Թուրքիայի վրա, որպեսզի վերջ տրվի հայ ժողովրդի անչափ տառապանքին: Դրա միակ միջոցը կլինի այնպիսի պայմանների ստեղծումը, որոնք թույլ կտան փախստականներին հայրենիք վերադառնալ եւ նորից իրենց ունեցվածքի տերը դառնալ: Մինչ այդ վտանգն այնքան մեծ է, որ միայն հացահատիկ բերելով կարելի է ժողովրդին փրկել սովից[1]:

Բուրյանի միջնորդագրի տեքստը կայսրին հետեւյալն էր.

«Քանի որ Ձերդ մեծությանը հայտնի պատճառներով Հայաստանին հացով օգնելու մասին խոսք լինել չի կարող, իսկ մյուս կողմից, ծայրահեղ կարիքի մեջ գտնվող քրիստոնյա ժողովրդի օգնության կանչն անտեսելն անհամատեղելի է թագավորական տան ավանդույթների հետ, ես կարգադրել եմ թուրքական կառավարությունից վերստին պահանջելու, որ հայ փախստականներին հնարավորություն տրվի վերադառնալ իրենց հայրենի տները: Նաեւ հրահանգել եմ դեսպան արքայազն Հոհենլոհեին խնդրել գերմանական կառավարությունից նման եղանակով ազդել Թալեաթ փաշայի վրա եւ Կ. Պոլսի գերմանական գործերի հավատարմատարի միջոցով օժանդակություն ցույց տալ Պոլսում Ձերդ Մեծության դեսպանի կողմից ձեռնարկվելիք նմանատիպ դեմարշին»[2]:

Սակայն դաշնակիցների դիվանագիտական միջնորդությունները հայերի օգտին մինչեւ վերջ էլ արդյունք չունեցան: Մինչդեռ դեմարշներից եւ պահանջներից այն կողմ ոչինչ չէր ձեռնարկվում:

Հղումներ

1. Wien, HHStA PA X 157 Wien, 19. September 1918, S, 132f.
2. Նույն տեղում, S. 130.

17. ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՐՑԸ

Հայ ժողովրդի ճակատագիրը պատերազմի սկզից կապված էր բռնի տեղահանումների հետ: Երբ ռուսները զբաղեցրին Թուրքահայաստանը, հայրենիքից վտարված հայերի թիվն անցել էր 500.000-ից: Սրանք քարշ էին տալիս իրենց գոյությունը Երեւանում, Թիֆլիսում: Ռուսական կառավարությունը օգնում էր նրանց սննդամթերքով եւ բաճարաններով, գյուղատնտեսական գործիքներով, անասունով, ցորենով: Նրանցից շատերը դրա շնորհիվ կարողացան վերադառնալ իրենց հայրենիքը եւ վերսկսել խաղաղ կյանքը: Այնտեղ, որտեղ բնակություն էին հաստատել փախստականները, օգնության խորհուրդը քառասուն մթերային պահեստներ է բաց անում՝ նրանց նպարեղենով ապահովելու համար: Երբ ռուսները հեռացան Թուրքահայաստանից եւ թուրքերին հասան նաեւ նախկինում Ռուսահայաստանին պատկանող Կարսի ու Արդահանի մարզերը եւ Ալեքսանդրապոլի, Երեւանի, էջմիածնի օկրուգների մեծ մասը, ինչպես նաեւ Սուրմալուի եւ Ախալքալաքի օկրուգները, հայերը, տուն ու տեղը թողնելով, խուճապահար փախան դեպի արեւելք եւ հյուսիս: Ճանապարհին նրանց վրա հաճախ հարձակվում էին թաթարական ավազակախմբերը: Երկրում իշխող անարխիայի եւ քայքայված տնտեսության պայմաններում տեղի ազգաբնակչությունը հաճախ թշնամանքով էր ընդունում նրանց: Փախստականների թիվը հասել էր 850.000-ի: Ալեքսանդրոպոլի անկումից հետո 400.000 փախստականներ շարժվեցին դեպի Ղարաքիլիսա ու Լոռի: Նրանք հուսահատ վիճակում էին: Շաբաթներով ստիպված էին երեխաներին եփած բանջարեղենով կերակրել: Փախստականների օգնության գլխավոր խորհուրդն ընտրեց արտակարգ հանձնաժողով Մեսրոպ եպիսկոպոսի ղեկավարությամբ: Հանձնաժողովը, դեղամիջոցների ու նպարեղենի բեռներով, մեկնեց Ղարաքիլիսա: Այստեղ տեղի ունեցած ճակատամարտից հետո նա ստիպված էր փախստականների մեծ մասի հետ մեկնել Դիլիջան, իսկ հետո՝ Երեւան: Լոռվա գյուղերում ու ձորերում մնացած փախստականներին գերմանացիների օգնությամբ փոքր խմբերով տարան Թիֆլիս: Փախստականների օգնության գլխավոր խորհուրդը 500.000 ռուբլի եւ օգնություն ու դեղամիջոցներ ուղարկեց Թիֆլիսից Երեւան՝ այն շրջանները, որտեղ փախստականներ կային: Ջանքեր էին թափում փախստականներին տեղափոխելու այն շրջանները, որտեղ նրանց կյանքին վտանգ չէր սպառնում: Այսպես, 32.000 փախստականներ գնացին Թիֆլիս, 50.000-ը՝ Հյուսիսային Կովկաս: Հունիսի սկզբին Բակուրիանիում, Ծալկայում եւ Մանգլիսում կային մոտ 80.000 փախստականներ. 500.000-ը հավաքվել էին Երեւանի օկրուգում, 7.000-ը՝ Ելիզավետպոլի շրջանում, 15.000-ը՝ Լոռիում, 80.000-ը՝ Ախալքալաքում եւ 200.000-ը՝ Հյուսիսային Կովկասում[1]:

Հայաստանի Հանրապետությունը մենակ ի վիճակի չէր կերակրելու այդքան փախստականների: Հայաստանը օգնություն խնդրեց նախ եւ առաջ Գերմանիայից եւ Ավստրո-Հունգարիայից: Սեպտեմբերի 15-ին ավստրո-հունգարական զինվորական լիազորների բանակի գլխավոր հրամանատարությունը պատվիրեց Պոմյանկովսկուն հայ փախստականների եւ նրանց վերադարձի մասին խոսել Էնվեր փաշայի հետ: Էնվերը խոստացավ հոգ տանել 800.000 փախստականների համար: Նրանց պետք է տեղավորեին *«մոտավորապես 100 գյուղ ունեցող չեզոք շրջանում»*: Այնինչ նրանց հայրենիքը զբաղեցրել էին վրացի մահմեդականները: Թուրքերն ուզում էին վրացական կառավարության միջոցով վրացիներին վերադարձնել իրենց գյուղերը: Այդ դեպքում հնարավոր կդառնար եւ հայերի վերադարձը: Սակայն 3-րդ բանակի հրամանատար Էսադ փաշան հրամայեց իրենց հայրենիքը վերադառնալ ցանկացող հայերին սկզբում գրավոր դիմում ներկայացնել բանակի գլխավոր հրամանատարին: Այդ հրամանը նշանակում էր վերադարձի ձգձգում, այսինքն՝ վերադարձի դադար: Պոմյանկովսկին բողոքեց Էնվեր փաշային, եւ սա խոստացավ հրամայել Էսադին արագացնելու փախստականների վերադարձը[2]: Մինչդեռ պատերազմն ավարտին էր մոտենում: Հետզհետե ավելի պարզ էր դառնում, որ Քառյակ միությունը պարտություն է կրելու: Դա էապես ազդեց թուրքերի հայկական քաղաքականության վրա: Թուրքերը սկսեցին հայերին ընդառաջել: Նրանք ազատեցին Լոռին ու Փամբակը, ինչպես նաեւ Ղազախի շրջանը մինչեւ Ուզունդարա, Սեւանա լճի ավազանն ու Նոր Բայազետի շրջանը, Շարուրի շրջանի հյուսիսարեւմտյան մասը մինչեւ Արփա գետը[3]: Պոլսում հայ պատվիրակության ղեկավար Խատիսյանը հաղորդեց Ավստրո-Հունգարիայի ներկայացուցչին, որ թուրքերն ու հայերը բնակիչներ են փոխանակել, եւ այսպիսով 100.000 թուրքեր Հայաստանից Կարս են տեղափոխվել: Դրա շնորհիվ հեշտացել էր հայ փախստականների տեղավորումն ու պարենավորումը[4]: Թուրքիայի տարածքային զիջումների շնորհիվ Հայաստանի մակերեսը կազմեց 21.000 կմ^2, նախկին 9.000-ի դիմաց[5]:

Սեպտեմբերի վերջին փլուզվեց բուլղարական ռազմաճակատը: Պարզ էր, որ Թուրքիան այլեւս ի վիճակի չէր պատերազմելու, նա միայն 60.000 հրացան ուներ: Իսկ երկրի ներքին իրադրությունը Անտանտի հետ շփումներ ստեղծելու ուղղությամբ նոր քայլեր թելադրեց[6]: Հոկտեմբերի 2-ին Պալավիչինին գրեց վիեննա, որ Թուրքիան Իսպանիայի հյուպատոսի միջոցով նոտա է ուղարկել Վիլսոնին, որում ընդունում է ամերիկյան պրեզիդենտի առաջարկած տասնչորս կետերը որպես հաշտության բանակցությունների հիմք[7]: Վիլսոնն իր տասնչորս կետանոց ծրագիրը առաջարկել էր 1918 թ. հունվարի 8-ին: Այդ կետերն էին՝ գաղտնի դիվանագիտության վերացում, ծովերի ազատություն, համաշխարհային տնտեսության ազատություն, սպառազինությունների սահմանափակում, գաղութային պահանջների կարգավորում, գերմանական խմբավորման երկրների ելքը Ռուսաստանից, Բելգիայի վերականգնում, Էլզաս-Լոթարինգիայի վերադարձը Ֆրանսիային, Իտալիայի սահմանների որոշումը բնական

սկզբունքներով, ազատ ինքնավար զարգացում Ավստրո-Հունգարիայի ժողովուրդների համար, Ռումինիայի, Սերբիայի, Չեռնոգորիայի ազատում, Թուրքիայի անկախությունը, նեղուցների բացում, Օսմանյան կայսրության ոչ թուրք ժողովուրդների ինքնավարություն, դեպի ծով ելք ունեցող անկախ պետության ստեղծում, ժողովուրդների միության հիմնում:

Երբ գերմանական խմբավորման երկրները զինադադարի իրենց առաջարկությունները ուղարկեցին պրեզիդենտ Վիլսոնին, թուրքական հյուպատոսը Կոպենհագենում այցելեց Ավստրո-Հունգարիայի հյուպատոսին՝ նրա հետ զրույց ունենալու նպատակով: Թուրքական հյուպատոսը այն կարծիքին էր, թե *«խաղաղությունը, անշուշտ, անհրաժեշտ է բուլղարական ճակատի քայքայման եւ Գերմանիայի արեւմտյան ճակատի լուրջ իրադրության հետեւանքով: Բայց մեզ՝ խառը ազգաբնակչություն ունեցող երկրների՝ Ավստրո-Հունգարիայի եւ Թուրքիայի քաղաքացիներիս համար դեմարշը վիլսոնյան ծրագրի հատուկ վկայակոչմամբ կնշանակեր վերին աստիճանի անորոշ ապագա»:*

Նա խոսեց նաեւ ժողովուրդների ինքնորոշման իրավունքի իրականացման մասին եւ հարցրել է՝ արդյո՞ք, Վիլսոնն իր սկզբունքները նույն անաչառությամբ կանցկացնի ե՛ւ բարեկամի, ե՛ւ թշնամու հետ:

«... Եվ ինչ վերաբերում է Անգլիային, ապա կսկսի՞, արդյոք, միության պրեզիդենտը Իռլանդիայից, ընձեռելով նրան ինքնորոշման իրավունք: Կազատագրի՞, արդյոք, Եգիպտոսն ու Հնդկաստանն անգլիական լծից: Չեմ կարծում: Ես կարող եմ Ձեզ հավաստիացնել, որ, որպես թուրք, բավական շատ եմ տեսել եվրոպական ու ամերիկյան դիվանագիտության անարդարություններն ու երկիմաստությունները, որպեսզի իրավամբ թերահավատությամբ լցվեմ: Մեզ կթուլացնեն եւ կամորձատեն, իսկ իրենց համար հարյուր պատրվակ ու արդարացում կգտնեն»[8]:

Հոկտեմբերի 8-ին Թալեաթի կաբինետը հրաժարական տվեց, իսկ հոկտեմբերի 13-ին Իզզեթ փաշան կազմեց նոր կառավարություն, որը պիտի բանակցեր անտանտի հետ: Թուրքիան հաշտության բանակցությունների ժամանակ բազմիցս օգնություն խնդրեց Ամերիկայից, բայց Անգլիան պնդում էր իր ծանր պայմանները՝ ամբողջ եվրոպական Թուրքիան պետք է տրվեր Բուլղարիային, Կ. Պոլիսը պետք է միջազգայնացվեր եւ Հունաստանի պաշտպանության տակ դրվեր, Թուրքիայից դեպի հարավ պետք է ստեղծվեին անկախ պետություններ, իսկ հայկական տարածքը արեւելյան Անատոլիայում պետք է տրվեր Հայաստանին[9]:

Նոր թուրքական կառավարությունը փորձեց սկզբում իր կողմը գրավել հայկական պատվիրակությանը, որն արդեն չորս ամիս էր, ինչ ապարդյուն Կ. Պոլսում էր գտնվում: Իզզեթ փաշան ինքն ընդունեց Ահարոնյանին եւ խոսքով զիջումներ արեց: Իզզեթն առաջարկեց անմիջապես Անդրկովկասից դուրս բերել թուրքական զինվորներին եւ ազատել քշված հայերին: Նա անգամ առաջարկեց գտնել բռնությամբ իսլամացած կանանց ու երեխաներին եւ օգնել նրանց հայրենիք վերադառնալու[10]: Կարսի եւ Արդահանի գավառներից բացի Հայաստանին էին ուզում վերադարձնել նույնիսկ Ալաշկերտի դաշտի մի մասը[11]:

Հոկտեմբերի 30-ին Մուդրոսում թուրքերը զինադադար ստորագրեցին Անտանտի հետ: Զինադադարի 11-րդ հոդվածը պարտավորեցնում էր Թուրքիայի զորքերը դուրս բերել ռուսական Անդրկովկասից: 34-րդ հոդվածով Անտանտին իրավունք էր վերապահվում լրիվ կամ մասամբ գրավել հայկական վեց վիլայեթները՝ այնտեղ անկարգություններ ծագելու դեպքում[12]: Այս հոդվածն աննպաստ վիճակ ստեղծեց վեց վիլայեթների համար: Թուրքերին չստիպեցին անմիջապես զորքերը դուրս բերել այդ վիլայեթներից՝ զբաղեցնելով նրանց Անտանտի զորքերով:

Իրերի այս դրության պատճառով հայ պատվիրակությանը Կ. Պոլսում ոչինչ չէր մնում անելու: Թեեւ թուրքական պետական գործիչները բազմիցս հայերի հետ փոխըմբռնման հասնելու փորձեր էին անում, պատվիրակները հոկտեմբերի 1-ին մեկնեցին Կ. Պոլսից առանց որեւէ պայմանավորվածության:

Երբ Թալեաթի կառավարությունը հրաժարական տվեց, թուրքական նախարարները թաքնվեցին թուրք ժողովրդի զանգվածների ատելությունից ու զայրույթից: Թուրքական զանգվածները նրանց էին համարում պատերազմի աղետի եւ հայկական կոտորածների մեղավոր:

1918 թ. նոյեմբերի 2-ին Թալեաթին, Էնվերին ու Ջեմալին հաջողվեց Գերմանիայի օգնությամբ փախչել Թուրքիայից[13]: Թալեաթը մեկնեց Բեռլին, Էնվերն ու Ջեմալը գնացին Կովկաս[14]:

Նոյեմբերի 3-ին Ավստրո-Հունգարիան Անտանտի հետ զինադադար ստորագրեց: 1918 թ. նոյեմբերի 9-ին Վիլհելմ 2-րդը եւ գահաժառանգը հրաժարվեցին գահից: Նոյեմբերի 10-ին Վիլհելմը հեռացավ Հոլանդիա, իսկ նոյեմբերի 11-ին Կարլ I-ը հրաժարվեց որեւէ մասնակցություն ունենալ ավստրիական կառավարության գործերին:

Եվ այսպես ավարտվեց այն պատերազմը, որի ընթացքում Հայաստանի գլխին այնպիսի պատիժ եկավ, որի նմանը դժվար էր գտնել պատմության մեջ[15]: Պատերազմի հետեւանքներից էր եւ թուրքերի դաժան պայքարը հայերի դեմ: Երկուստեք հսկայական ատելություն էր կուտակվել: Ավստրո-Հունգարիայի հյուպատոս Կվյատկովսկին գրում է Սամսունից.

«Հայերն ու հույները արտասահմանում, իրենց հովանավորների հետ միասին, չեն թողնի, որ մոռացության մատնվի հայկական ու հունական հարցը, եւ պատերազմից հետո էլ տհաճություններ կպատճառեն Թուրքիային: Բացի դրանից, պատմական փորձը ցույց է տալիս, որ ժողովրդական հարցերը բռնությամբ հնարավոր չէ երկար ժամանակ խեղդել եւ որ ազատագրման գործընթացն անգամ եթե ուշ, ապա միեւնույն է, կայանում է:

Exoriare aliquis, nostris ex ossibus ultor (Մի հոգի կներկայանա, մեր ոսկորների մի

վրիժառու)»[16]:

Հղումներ

1. Wien, HHStA PA X 157 Tiflis, 13. Juil 1918. Nr. 7/P. B.
2. Wien, HHStA PA X 157 Baden, 24. September, Nr. 33035.
3. Wien, HHStA PA X 157 Jeniköj, 28 September 1918, Nr. 83/P. A. D.
4. Նույն տեղում:
5. Նույն տեղում:
6. Wien, HHStA PA I 965 Pera, 18 Oktober 1918, Nr. 637.
7. Wien, HHStA PA I 965 Pera, 2. Oktober 1918, Nr. 577.
8. Wien, HHStA PA I 965 Kopenhagen 1918, Nr. 54/P. B.
9. Wien, HHStA PA I 965 Bern, 9. Oktober 1918, Nr. 676.
10. Lanne, "Armenien", S. 191.
11. Նույն տեղում, S. 192 .
12. Zimke, "Die neue Türkei", S. 274.
13. Pomiankowski, "Der Zusammenbruch", S. 410.
14. Նույն տեղում:
15. Wien, HHStA PA XII 463 Samsun, 13. März 1918, Zl 17.
16. Նույն տեղում:

18. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԸ ԱՎՍՏՐԻԱՅՈՒՄ

Առաջին աշխարհամարտի սկզբից արդեն ցայտունորեն դրսեւորվեց Ավստրո-Հունգարիայի մեծ կախվածությունը Գերմանիայից: Գեներալ Յուզեֆ Շտյուրքը՝ Ավստրո-Հունգարիայի պատվիրակը Գերմանիայի գլխավոր հրամանատարության կայանում, գրում է «Քաղաքական եւ ռազմական հիշողություններ իմ կյանքից» գրքում.

«Անշուշտ, արեւի պես պարզ է, որ ամեն տեսակի օգնություն մեր անդադար խնդրանքների եւ այն փաստի շնորհիվ, որ առանց գերմանացիների օժանդակության մենք չէինք կարողանա գլուխ հանել մեր խնդիրներից, մենք որոշ կախվածության մեջ ընկանք գերմանական բանակի հրամանատարությունից, եւ որ երկու դաշնակիցներիս սկզբնական հավասարակշռությունը սաստիկ խախտվեց ի վնաս մեզ»[1]:

Այդ կախվածությունը, իհարկե, արտահայտվում էր նաեւ պատերազմական հաղորդագրություններում: Ավստրո-Հունգարիայի բանակային մամուլի կազմակերպության կանոնադրության 3-րդ կետում գրված էր. «Մեր եւ գերմանական մամուլի կազմակերպությունների միջեւ անհրաժեշտ է որոշ համագործակցություն»[2]: Թե ինչպես էր գերմանական մամուլը հաղորդում հայերի կոտորածների մասին Թուրքիայում, երեւում է գերմանական լրագրողներին տրված հետեւյալ երկու ցուցումներից.

1915 թ. հոկտեմբերի 7-ին.

«Հայերի դեմ ուղղված գազանությունների վերաբերյալ հետեւյալը պետք է ասել: Մեր բարեկամական հարաբերությունները Թուրքիայի հետ ոչ միայն չպետք է վտանգվեն այս ներքին թուրքական վարչական գործերի պատճառով, այլեւ ներկա դժվարին պահին չպետք է անգամ փորձառության ենթարկվեն: Այդ պատճառով մեր պարտքը ժամանակավորապես լռելն է: Հետագայում, եթե արտասահմանը ուղղակի հարձակում գործի մեր վրա գերմանացիների մեղսակցության պատճառով, ապա անհրաժեշտ կլինի այդ հարցին մեծագույն զգուշությամբ ու զսպվածությամբ մոտենալ եւ մշտապես շեշտել, որ հայերը խիստ գրգռել են թուրքերին»:

1915 թ. դեկտեմբերի 23-ին.

«Հայկական հարցի մասին լավագույնը լռելն է: Թուրքական իշխանավորների վարվելակերպն այդ հարցում առանձնապես գովելի չէ»[3]:

Դա նշանակում է, որ թուրքերի գազանությունների մասին ամեն ինչ կոծկել էին ուզում: Ամեն ինչ արվեց գերմանացի ժողովրդին մոլորեցնելու համար: Գերմանական մամուլը հեղեղված էր հայ ժողովրդի հասցեին զրպարտություններով ու կեղծ լուրերով: Հայերը ներկայացվում էին որպես խռովարարներ եւ վաշխառուներ, իսկ թուրքերը՝ որպես «հրաշալի օսմանյան դաշնակիցներ»: Եվ ինչպես բալկանյան պատերազ-

մի ժամանակ, թուրքերին չեղած «առաքինություններով» պարզապես երկինք էին բարձրացնում[4]:

Մարքվարտը գրում է իր «Հայ ազգի ծագումն ու վերականգնումը» գրքում.

«Բոլոր նպաստավոր լուրերը հայերի մասին, ինչպես նաեւ թուրքական ստերի յուրաքանչյուր ուղղում եւ հասարակական կարծիքի ամեն մի տեղեկություն իրական եղելությունների վերաբերյալ բրոշյուրների միջոցով ու օրաթերթերում, կառավարությունը մինչեւ 1918 թ. հոկտեմբերը խստորեն արգելում է[5]:

Երբ Յոհաննես Լեփսիուսը 1915 թ. սկզբին նյութերով բեռնված Թուրքիայից գերմանիա վերադարձավ, սկսեց գրոհել արտաքին գործերի նախարարությունը, ներկայացնելով Թուրքիայում ներքին իրադարձությունները մերկացնող իր մանրամասն հուշագրերը: Լեփսիուսը մեկնեց Շվեյցարիա, որտեղ մամուլում Գերմանիայի եւ Թուրքիայի դեմ ուղղված անստորագիր հոդվածներ գրեց: 1915 թ. հոկտեմբերի 5-ին նրան թույլատրեցին Բեռլինի ռայխստագի շենքում զեկուցում կարդալ հայերի հալածանքների մասին Թուրքիայում: Սակայն ներկա էին միայն հրավիրված ունկնդիրներ, մամուլի ներկայացուցիչներ եւ արտաքին գործերի նախարարության աշխատակիցներ: Այստեղ Լեփսիուսը Գերմանիայի կառավարությանը «Բ. Դռան ստրուկ» անվանեց:

Ավելին, կարճ ժամանակ անց նա մի պատմվածք գրեց Մուսա լեռան դեպքերի մասին եւ հրատարակեց այն 1916 թ. սկզբին իր «Der christliche Orient» («Քրիստոնեական Արեւելք») ամսագրում: Սակայն գրաքննությունից խուսափելու համար իր պատմությունը տեղափոխեց միջնադար, տալով նրան «Փրկարար խաչը: Մի խաչակրաց արշավանքի պատմություն» վերնագիրը: 1915 թ. Լեփսիուսը մի տեղեկագիր հրապարակեց Թուրքիայում հայերի հալածանքների մասին[6]: Այդ կապակցությամբ իր «Գերմանիան եւ Հայաստանը 1914-1915 թթ.» գրքում նա գրում է.

«Աղբյուրների հիման վրա ես 1915 թ. հրապարակել էի մի «Տեղեկագիր հայ ժողովրդի կացության մասին»: Գրավաճառության միջոցով տարածումը կամ գոնե մերկացնող փաստերի օգտագործումը մամուլում այն ժամանակ հնարավոր չէր: Գրաքննությունը գիրքը կբռնագրավեր: Մամուլին պաշտոնական հրահանգներով լռություն էին պարտադրել հայերի դեմ կատարվող գազանությունների վերաբերյալ: Այդ պատճառով ես կարող էի իմ տեղեկագիրը միայն գաղտնի առաքել: Գրաքննությունն այդ նկատեց միայն, երբ Գերմանիայում արդեն տարածվել էր քսան հազար օրինակ: Հետագա տպագրությունն ու տարածումը արգելվեց...»[7]:

Ռայխստագի անդամներին ուղարկված Լեփսիուսի տեղեկագիրը լռելյայն բռնագրավվեց եւ պահվեց Բեռլինի ոստիկանատանը... Լեփսիուսի գործունեությունը ստիպեց գերմանական լրագրային հրատարակչության նախագահ դոկտոր Ֆաբերին հարցնելու կառավարության պետական քարտուղարին, թե գերմանական թերթերն ինչպե՞ս պետք է լուսաբանեն Հայկական հարցը: 1915 թ. հոկտեմբերի 4-ին Ցիմերմանը պատասխանեց, որ կայզերական ներկայացուցչությունը Թուրքիայում առանց եկեղեցու ցուցումներին սպասելու, սեփական նախաձեռնությամբ ամեն հնարավոր բան ձեռնարկել է հայերի ճակատագիրը մեղմացնելու համար: Կայզերական կառավարությունը չէր ուզում հայերի պատճառով խզել իր կապերը Թուրքիայի հետ: Ցիմերմանն ասում էր, որ թեեւ քրիստոնեական տեսակետից հայերի ճնշումը չափազանց ցավալի է, բայց թուրքերն, այնուամենայնիվ, Գերմանիայի դաշնակիցն են: Նրա ասելով, թուրքերին գրգռել էին հայերի ապստամբությունը թուրքերի թիկունքում եւ ամենից առաջ, Վանում հայերի կողմից հարյուր հիսուն հազար մահմեդականներին կոտորելը[8]....

Հայերի նկատմամբ կատարվող գազանությունների մասին լուրերի հրապարակման արգելքը գործում էր եւ Ավստրո-Հունգարիայում: Պալավիչինից եւ հյուպատոսներից ստացվող զեկուցագրերը լռելյայն պահվում էին տարբեր թղթապանակներում: Հասարակայնությունը դրանց մասին տեղեկություն չէր ստանում: Երբ Նադամլենցկին իր բուլղարացի կոլեգայի հետ միասին հուշագիր կազմեց Թուրքիայում ներքին քաղաքական դեպքերի մասին, որտեղ դատապարտվում էին հայերի հալածանքները, Պալավիչինին բողոքեց Բուրյանին, ասելով.

«Իմ կարծիքով, անվտանգ չէ, երբ մեր հյուպատոսական ներկայացուցիչը պաշտոնապես իր ստորագրությունն է դնում մի փաստաթղթի վրա, որը, թերեւս, կարող է հասնել հասարակայնությանը եւ որում խիստ քննադատության է ենթարկվում թուրքական իշխանությունների գործելակերպն ու օտարների եւ քրիստոնյաների նկատմամբ թուրքական կառավարության վարած քաղաքականությունը»:

Վերջում Պալավիչինին նշում է, որ Նադամլենցկին ապագայում իր քաղաքական գործունեությունը *«պետք է սահմանափակի հաղորդագրության ընդունած ձեւով»*[9]:

Իհարկե, Ավստրո-Հունգարիայի դաշնակից Թուրքիայի ակնկալություններն այստեղ եւս մեծ դեր էին խաղում: Թուրքիային չէր կարելի վիրավորել: Այդ պատճառով էր, որ Ավստրո-Հունգարիայի դեսպանությունը ոչինչ չձեռնարկեց բանտից ազատելու համար Վիեննական «Neue Freie Presse» թերթի ներկայացուցչին Թուրքիայում: Սա փորձել էր Թուրքիայից նամակներ եւ լուրեր ուղարկել՝ շրջանցելով գրաքննությանը:[10]

Այն, որ Թուրքիան միջամտում էր ավստրո-հունգարական մամուլի գործունեությանը, երեւում է մի նամակից, որ թուրքական դեսպանությունը Վիեննայում գրել էր Ավստրո-Հունգարիայի ներքին գործերի նախարարության նախագահությանը: Նամակի համար առիթ էր ծառայել երեք գերմանացի ուսուցիչների տեղեկագիրը, որոնք աշխատել էին Հալեպում եւ 1917 թ. սկզբին Գերմանիա էին վերադարձել: Ուսուցիչները տեղեկագիր էին գրել Գերմանիայի արտաքին գործերի նախարարությանը, որի մեջ թուրքական կառավարությանը պատասխանատու էին համարում հայերի կոտորածների համար: Շվեյցարական մամուլը մանրամասն գրեց այդ մասին: Թուրքերը

ձգտում էին խափանել այդ լուրերի հրապարակումը ավստրո-հունգարական մամուլում: Դեսպանատան նամակում ասվում է.

«Իրավասու հիմնարկությունները Կ. Պոլսում կարծում են, թե կարելի է ենթադրել, որ այստեղի գրաքննչական մարմինը չի հանդուրժի շվեյցարական սադրիչ հոդվածի հնարավոր հրապարակումը վիեննական մամուլում»[11]:

Այնինչ, եթե համեմատելու լինենք Գերմանիայի եւ Ավստրո-Հունգարիայի մամուլի հաղորդագրությունները, առաջին համաշխարհային պատերազմից առաջ, ապա կտեսնենք, որ համիդյան ժամանակաշրջանում ավստրիական մամուլը գրեթե օբյեկտիվորեն հաղորդում էր հայերի հանդեպ թուրքերի կատարած բռնությունների մասին, մինչդեռ գերմանական մամուլը ոչ միայն այդ չէր անում, այլեւ ստեր էր տարածում, որոնք առիթ տվեցին գերմանացի ականավոր գիտնական Պաուլ Ռոհրբախին՝ Հայկական հարցի լավ գիտակին, ասելու հետեւյալը.

«Այն, որ մեր պաշտոնական մամուլը եւ արտաքին գործերի ասպարեզում սրա ասածը թութակի պես կրկնող մամուլը իրականում տեղի ունեցած հայկական սարսափների նկատմամբ այդքան վանող, սուտ, նողկալի եւ բիրտ դիրք է ընդունել եւ որ մեր կառավարությունը, իր ողջ սկզբունքային վճռականությամբ հանդերձ, եղանակ չգտավ կրոնի եւ մարդկության անունից որեւէ ձեւով հակազդելու ամենացածր ու հրեշավոր հանցանքներին, ցավալի է»[12]:

Ավստրո-Հունգարական միապետության կախվածությունը գերմանացիներից եւ դաշինքը թուրքերի հետ, անշուշտ, հիմք էին տալիս ավստրո-հունգարական գրաքննությանը լռության մատնելու հայերի հանդեպ կատարվող գազանությունները: Բայց հավանաբար դրա համար կար եւս մեկ պատճառ՝ պատերազմի սկզբում սերբերի նկատմամբ ավստրո-հունգարական զորքի կատարած գազանությունները: 1915 թ. հուլիսի 31-ին հյուպատոս Կվյատկովսկու Տրապիզոնից ուղարկած զեկուցագիրը մեզ հնարավորություն է տալիս տեսնելու այն պատճառները, թե ինչո՞ւ Գերմանիայի եւ Ավստրո-Հունգարիայի դեսպանները չէին կարող բավականաչափ եռանդուն կերպով բողոքել հայերի հալածանքների դեմ.

«Ակներեւաբար հայերի նկատմամբ վերաբերմունքը արդարացնելու նպատակով այստեղի վալին մի քանի հոգու հայտարարել է, թե գերմանացիները Բելգիայում հիսուն հազար մարդ են մահապատժի ենթարկել, դեֆթերդարը պնդում է, որ մեր ավստրիական զորքը նույն կերպ է վարվել Բոսնիայում»[13]:

Այդուհանդերձ, պետք է ասել, որ 1915 թ. Լոնդոնում լույս է տեսել Ռ. Ռայսի «Austro-Hungarian atrocities» գիրքը, որը բազմաթիվ լուսանկարներ էր պարունակում եւ ապացուցում էր ավստրո-հունգարական զորքի գազանությունները Սերբիայում:

Որ նման ոճրագործություններ իսկապես տեղի էին ունեցել, հաստատում է նույնիսկ ավստրո-հունգարական բանակի հրամանատարությունը 1915 թ. մարտի 6-ին երկրի արտաքին գործերի նախարարությանը ուղղված գրությունում.

«Առանց այլեւայլության խոստովանում է, որ նամանավանդ առաջին հարձակման ժամանակ Սերբիայում անցած տարվա օգոստոսին ինքնապաշտպանության իրավունքի հիման վրա մահապատժի են ենթարկվել կամ սպանվել մեծ քանակով քաղաքացիական անձինք՝ տղամարդիկ եւ կանայք»[14]:

Մագնուս Հիռշֆելդը գրում է իր «Համաշխարհային պատերազմի բարքերի պատմություն» գրքում.

«Այստեղ հարկավոր է հիշել համաշխարհային պատերազմի երկու ամենամեծ զանգվածային ոճրագործությունները՝ Գալիցիայում եւ Հայաստանում: Երկուսին էլ հավասար չափով հատուկ էր սադիստական երանգը, կան նաեւ այլ զգալի ընդհանրություններ: Երկու դեպքում էլ գործ ունենք սահմանամերձ ժողովուրդների հետ, որոնց հայրենասիրության մեջ կասկածում էին ճնշողները: Ճիշտ է, ավստրիական զինվորական իշխանությունների գործողություններն ընդգրկումով չեն կարող համեմատվել հայերի նկատմամբ թուրքական իշխանավորների հրեշային վարվելակերպի հետ, բայց դանուբյան միապետության արեւելքում սանձազերծված զինվորական հրեշը չտեսնված մարդկային զոհեր է պահանջել, որոնք ստվերի տակ են թողել գերմանական օկուպացիոն իշխանությունների բոլոր գազանությունները Բելգիայում»[15]:

Հայերի մասին լուրերն ավստրիական մամուլում ոչ միայն օբյեկտիվ չէին, այլ միակողմանի եւ թշնամական:

Առաջին տեղեկագրությունները Թուրքիայից հաղորդում էին հայերի «գազանությունների» մասին: 1915 թ. հունվարի 30-ին «Arbiter Zeitung» թերթը գրեց.

«Կ. Պոլիս: Բիթլիսի վիլայեթի պաշտոնաթերթը հաղորդում է, որ վեց հայեր, որոնք դաժանորեն սպանել էին երեք ժանդարմների, այդ թվում մի հայի, եւ հանել էին սպանվածների աչքերը, մահվան են դատապարտվել եւ Բիթլիսում մահապատժի ենթարկվել»[16]:

1915 թ. ապրիլի 17-ին «Arbiter Zeitung» եւ «Das neue Wiener Tagblatt» թերթերը հաղորդեցին.

«Լոնդոն, 16-ը ապրիլի 1915 թ.: Համայնքների պալատում Վիլյամսը (բանվորական կուսակցություն) հարցրեց՝ արդյո՞ք, կառավարությունը չի ուզում քայլեր ձեռնարկել պատերազմից հետո հայերի համար ռուսական կառավարության կողմից լեհերին խոստացած ինքնավարության նման ինքնավարություն ապահովելու նպատակով: Պառլամենտական պետական քարտուղարի օգնական Նեյլ Պրիմրոզը պատասխանեց, որ բրիտանական կառավարությունն իր տեսադաշտում կպահի հայ ժողովրդի շահերը ասիական Թուրքիայում, սակայն պատերազմի ներկա փուլում անհնար է որոշել, թե ինչպիսին պետք է լինեն միջոցառումները»[17]:

1915 թ. հունիսի 9-ին «Neue Freie Presse» թերթը գրեց.

«Կ. Պոլիս: Պաշտոնաթերթը մի որոշում է հրապարակել, ըստ որի բանակի, բանակային կորպուսների եւ դիվիզիաների հրամանատարները կամ նրանց տեղակալ-

ները լիազորվել են պատերազմի ժամանակ կառավարության հրամանների եւ երկրի պաշտպանությանը կամ կարգ ու կանոնի պահպանմանը վերաբերող միջոցառումների դեմ ըմբոստության կամ զինված դիմադրության դեպքում գործելու ամենախիստ եղանակով, զենք օգտագործելով, իսկ լրտեսության կասկածանքի դեպքում քաղաքների ու գյուղերի ազգաբնակչությանն ամբողջությամբ կամ առանձին-առանձին այլ վայր տեղափոխելու»[18]:

Երբ հայերը Վանում ապստամբեցին բռնագաղթի կոտորածների դեմ ու մինչ ռուսական բանակի ժամանումը շաբաթներ շարունակ դիմադրում էին իրենց ուժերին գերազանցող թուրքական բանակին, «Wiener Zeitung» եւ «Das neue Wiener Tagblatt» թերթերը թուրքական հայտարարություն հրապարակեցին, առաջինը «Թուրքիայի հաղորդագրություններ», իսկ երկրորդը «Ֆրանս-անգլիական կեղծ հաղորդագրությունը» վերնագրով.

«16-ը հունիսի 1915 թ. Այստեղի օսմանյան դեսպանությունը մեզ մի գրություն է ուղարկել, որի մեջ գրված է. «Ինչ վերաբերում է Կովկասում սկսված գործողություններին, ապա ռուսներն, անշուշտ, հասկացել են, որ ամիսներ տեւած ջանքերից հետո էլ ի վիճակի չեն հասնելու այն նպատակին, որը հետապնդում էին ռազմական գործողություններ սկսելու պահից, այն է, որ չեն կարող ներխուժել Փոքր Ասիայի խորքը: Հակառակը, նրանք նորից իրենց մարմնի վրա զգացին թուրք զինվորների քաջությունը, զինվորների, որոնք հաղթահարելով աշխարհագրական դժվարությունները եւ կլիմայի դաժանությունը, դիմադրելով՝ հաջողությամբ էին գործում Սարիղամիշի եւ Կարսի հարթավայրերում, որոնք ռուսական գործողության բազայի եւ զինամթերքի պահեստի մոտ են գտնվում: Այդ փաստը հաշվի առնելով, Ռուսաստանը հույսը կտրեց, որ կկարողանա պայքարել Թուրքիայի դեմ լոյալ, բացահայտ եւ ազնիվ միջոցներով եւ դիմեց այնպիսի օժանդակ միջոցների, որոնք մինչեւ հիմա անծանոթ էին իրենց հարգող ժողովուրդների ռազմական պատմությանը: Ռուսաստանն օգտվեց հայ բնակչության մի մասի անգիտությունից եւ միամտությունից՝ սովորեցնելով նրան ըմբոստանալու օսմանյան կառավարության դեմ, եւ Ռուսաստանը չամաչեց, ի դեպ, ժամանակավոր եւ այդ սադրիչ շարժման շնորհիվ Բաշ Կալեում եւ Վանի շրջակայքում ստեղծված իրավիճակն աշխարհին ներկայացնել որպես զենքի հաջողության արդյունք: Օսմանյան կառավարությունը, կատարելով սուվերեն պետության իր պարտքը, ճնշել է այդ տրամադրությունը: Ի պատասխան Եռյակ համաձայնության հրապարակած հաղորդագրության, որը օսմանյան կառավարությանը մեղադրում է մարդկության եւ քաղաքակրթության դեմ նոր հանցագործություններ կատարելու մեջ, հենց նոր հրապարակած հայտարարության մեջ օսմանյան կառավարությունը մանրամասն եւ ճշմարտացի շարադրել է բոլոր հանգամանքները, Անտանտի, հատկապես Ռուսաստանի եւ Անգլիայի կողմից կոչած հեղափոխական եւ սեպարատիստական շարժումները: Նա այդ հայտարարության մեջ անհերքելիորեն ներկայացրել

է, թե որքան արդարացված եւ միաժամանակ որքան չափավոր են եղել այն միջոցառումները, որոնք նա ստիպված է եղել ձեռնարկելու ապստամբների հանդեպ: Մեզ անծանոթ էին այն երկիմաստ եւ ամոթալի միջոցառումները, որոնց մտադիր են դիմելու Ռուսաստանն ու նրա չարաբարո դաշնակիցները, մահափորձ գործելու նպատակով թուրքական կառավարության հանդեպ, որին նրանք ի վիճակի չեն տապալելու զինվորական միջոցներով: Բայց մենք համոզված ենք, որ ժամանակակից բարբարոսները ամենաչնչին խղճի խայթ անգամ չեն զգացել այն դաժան ոճրագործությունների համար, որ գործի են դրել եւ իրականացրել մեծ չափով եւ որոնք, առանց Բ. Դռան զգոնության, չափավորության զգացումի եւ պատրաստակամության, կարող էին ունենալ ամենալուրջ եւ ամենահեռուն գնացող հետեւանքները: Թող հասարակությունը որոշի, թե ո՞ւմ կողմում են քաղաքակրթությունը, ճշմարտությունն ու արդարությունը»[19]:

1915 թ. հունիսի 18-ին «Arbeiter Zeitung» եւ «Neue Freie Presse» թերթերը՝ «Քսան հայերի կախեցին», իսկ «Reichspost» թերթը «Հայկական դավադրություն» խորագրի տակ գրեցին նաեւ հետեւյալը.

«Կ. Պոլիս, 17-ը հունիսի: Թուրքերը հրապարակում են այստեղի կայազորի հրամանատարության հետեւյալ հայտարարությունը: Երեկ առավոտյան կայսերական հրամանագրի հիման վրա զինվորական նախարարության առջեւ գտնվող հրապարակում մահապատժի են ենթարկվել քսան հայեր: Դրանց թվում էին մի ռուս հպատակ, մի բժիշկ, բժշկության մի ուսանող, մի ենթասպա, մի մայոր, երկու դպրոցական ուսուցիչ եւ տարբեր արհեստավորներ: Կ. Պոլսում զինվորական դատարանի առաջ դատավարության ընթացքում ապացուցվել է, որ այդ անձինք փորձ են ձեռնարկել կայսրության մի մասը դուրս բերելու թուրքական տիրապետության տակից անկախ Հայաստան ստեղծելու համար եւ այդ նպատակով թուրքական կառավարության դեմ մահափորձեր եւ ապստամբությունների սադրանք են նախապատրաստել արտասահմանում, տարբեր վայրերում գաղտնի կամ հրապարակային կոնգրեսներ են անցկացրել, ե՛ւ խոսքով, ե՛ւ գործով քարոզչություն արել: Ի կատար են ածվել հեռակա կարգով նույնպես մահվան դատապարտված «Հնչակ» միության կենտրոնական գրասենյակի նախագահ Սաբահգուլյանի եւ անդամ Տրդատի վերաբերյալ օրինական որոշումները»[20]:

Միակ թերթը, որն իրեն թույլ տվեց մեկնաբանություն անել, «Arbeiter Zeitung» լրագիրն էր, որը հաղորդագրության վերջում գրում է.

«Ինչպես տեսնում ենք, Կ. Պոլսում հավատարիմ են մնում հայերին կախելու ավանդույթին: Արդեն պաշտոնական հիմնավորումից երեւում է, թե որքան միտումնավոր է դատավճիռը»[21]:

Այդ մեկնաբանությունն ապացուցում է, որ որոշակի շրջաններում շատ լավ տեղյակ էին թուրքերի գազանություններին: 1915 թ. հունիսի 20-ին «Arbeiter Zeitung»-ը

«Կախաղան» վերնագրի տակ գրեց.

«Կ. Պոլիս, 18 հուլիսի 1915 թ.: Հինգ զինապարտ հայեր, որոնք մի քանի անգամ խուսափել էին զինակոչից եւ իրենց այդ պատճառով կատարված ծերբակալության ժամանակ ակտիվ դիմադրություն էին ցույց տվել եւ մի պաշտոնյայի վիրավորել, մահվան դատապարտվեցին եւ Թիմասում գնդակահարվեցին: Մեկ ուրիշ հայ մահապատժի ենթարկվեց էրզրումում, որովհետեւ Բալկանյան պատերազմի ժամանակ կռվել էր Թուրքիայի դեմ, իսկ ներկա պատերազմում թշնամուն տեղեկություններ էր տվել զորքի տեղաշարժի մասին»[22]:

1915 թ. հունիսի 29-ին «Das neue Wiener Tagblatt» եւ «Reichspost» թերթերը «Ռուս-հայկական գազանություններ Կովկասում» վերնագրի տակ գրել են.

«Վանի վիլայեթում, որը ներկայումս թուրք-հայկական պատերազմի թատերաբեմն է, ինչպես մեզ հաղորդում են, ընդհանուր թշնամին այս շրջանի հայ բնակչության մասնակցությամբ կռվում է սարսափելի դաժանությամբ: Թուրքական մամուլին կայսրության ներսում արգելված է լուրեր հրապարակել այդ գազանությունների մասին՝ կանխելու համար հայերի դեմ բուռն վրդովմունքը եւ հնարավոր անկանխատեսելի հետեւանքները: Կ. Պոլսի մի հավաստի աղբյուրից մեր ստացած հաղորդման բովանդակությունը հետեւյալն է. օսմանյան բանակը հաջողությամբ շարունակում է իր հարձակումը Կովկասում: Զորքը առաջադիմում է նաեւ Վանի շրջակայքում, որտեղ նա ռուսներին ստիպում է նահանջել, միաժամանակ ետ է մղում հայկական ավազակախմբերին, որոնք, ռուսների հետ միասին միաբանված, զենք են վերցրել թուրքերի դեմ: Հայերի օգնությամբ ռուսներն այս շրջանում չտեսնված գազանություններ են անում: Երիտասարդ ու ծեր կանանց բռնաբարում են եւ հետո սպանում: Վանի վիլայեթի Նուրդուզ գյուղում վերջերս ռուսներն ու հայերը հետապնդել են գաղթած բնակիչներին եւ, հասնելով նրանց, տղամարդկանց առանց բացառության սպանել են: Կանանց եւ երեխաներին, թվով մոտավորապես վեց հարյուր հոգու, գցել են երկաթե ցանկապատի հետեւը: Սպաները, իրենց հետ տանելով քսան երիտասարդ աղջիկների, թողել են, որ հայերը սվիններով սպանեն մնացած բոլոր կանանց ու երեխաներին: Վանի վիլայեթի 100.000 մահմեդական բնակիչներից միայն 30.000 են կարողացել պրծնել ռուսների եւ հայերի գազանություններից, մյուս բոլորը դաժան բռնաբարությունների զոհ են դարձել»[23]:

Մենք արդեն նշել ենք, որ այս թվերը հորինված են:

«Das neue Wiener Tagblatt»-ը այս հաղորդագրությանը ավելացրել է հետեւյալը.

«Ռուսները գումարտակներ են կազմել հայերից, որոնց իրենց կողմն են գրավել գարշելի նենգություններով: Օսմանյան զորքը մեծագույն եռանդով ջանում է ճնշել այդ մեքենայությունները: Հունիսի 22-ին հայկական ավազակախմբերը եւ ռուսական զորքը, որոնք գնում էին Ադիլջերեկի դեմ Ախլաթի ուղղությամբ, ջախջախվեցին այդ քաղաքից դեպի արեւելք, որտեղ ճակատամարտ էր բռնկվել: Նրանք տվել են երեք հարյուր սպանված, այդ թվում՝ երկու սպա: Թշնամական ջոկատների հրամանատարը, այլ սպաներ եւ շատ զորախմբեր գերի վերցվեցին»[24]:

Թուրքերի գազանությունների եւ հայ ժողովրդի բնաջնջման մասին մամուլում հանդես է եկել Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սազոնովը, նա դատապարտել է թուրքերի արարքները իրենց լոյալ հպատակների նկատմամբ:

1915 թ. օգոստոսի 2-ին «Neue Freie Presse»-ն «Սազոնովի զրպարտությունը» խորագրի տակ գրեց.

«Սազոնով. «Թուրքերը, կանխազգալով մոտեցող ամպրոպը, արտակարգ դաժանությամբ հարձակվել էին դեռեւս իրենց իշխանության տակ գտնվող քրիստոնյա ժողովրդի վրա: Հայերը ենթարկվում են չտեսնված հալածանքների, որոնք սակայն չեն կոտրել նրանց ոգին, քանի որ հայ կամավորականները քաջաբար կռվում են մեզ հետ միասին իրենց կեղեքողների դեմ: Դրա ապացույցն է Վան քաղաքը, որը գրեթե մի ամիս շարունակ, մինչեւ մեր զորքի կողմից քաղաքի գրավումը, դիմադրել է թուրքերի բուռն գրոհին»: Ավելի գարշելի բան լինել չի կարող, քան երբ ցարի նախարարը խոսում է գերմանացիների դաժանության, հայերի ճնշման եւ հույների սարսափելի տառապանքների մասին»[25]:

Թուրքիայի պատկերը գեղեցկացնելու նպատակով «Reichspost»-ը 1915 թ. օգոստոսի 11-ին «Թուրքիան եւ թուրքերը» վերնագրի տակ գրեց.

«Թուրքիայի եւ թուրքերի մասին եղել են եւ այսօր էլ մասամբ կան սխալ տեսակետներ: Սրանք առաջացել են մեզ մոտ այն հաղորդագրությունների պատճառով, որոնք կամ չար նպատակով են արվել, կամ էլ հաղորդագրությունների՝ մեծ մասամբ օտար լեզու չիմացող հեղինակների թարգմանիչների աղճատումների արդյունք են: Վերջիններս մեծ մասամբ լեւանտացիներ են, որոնք դաստիարակվել են թուրքերի հանդեպ բացարձակ ատելության ոգով: Թե ի՞նչ կարող են անել հաղորդագրությունները, ամենից լավ երեւում է հենց հիմա, երբ կարդում ենք, թե ինչ են գրում մեր մասին մեր թշնամիները: Ես բնավ մտադիր չեմ պնդելու, թե Թուրքիայում միայն օրինակելի պայմաններ են տիրում, համենայնդեպս, դրանք ավելի լավն են, քան մեզանում կարծում են: Կասկածից վեր է եւ այն, որ իրեն պատշաճ կերպով պահող մարդը, ինչ ազգության էլ լինի, Թուրքիայում շատ ավելի ազատ կարող է շարժվել, քան որեւէ այլ երկրում: Թուրքը հավատացյալ է, ազնիվ, ճշմարտասեր, անհանդուրժող, հյուրասեր, երախտագետ ու քաջ: Այդ հատկությունները նրան չափազանց ազնիվ երանգ են պարգեւում: Այդուհանդերձ, պետք է շեշտել, որ Թուրքիայում էլ թուրք չեն բոլոր նրանք, ովքեր ֆես են կրում: Ի դեմս Էնվեր փաշայի, Թուրքիան այդպիսի մի ուժ դարձավ: Աստված պահպանի եւ օգնի նրան, որպեսզի նրան հաջողվի իր երկիրն ու ժողովրդին երջանկացնել եւ նրանց հաղթանակով դուրս բերել այս պատերազմից, որի վերջում սկսում է մի նոր ապագա այս խիզախ, քաջ ժողովրդի համար»[26]:

1915 թ. օգոստոսի 14-ին «Das Neue Wiener Tagblatt»-ը եւ «Reichspost»-ը«Սե-

ղադրանք հայկական ապստամբության առաջնորդներին» հոդվածում գրեցին.

«Կ. Պոլիս, 11 օգոստոսի: Կ. Պոլսի զինվորական դատարանը հաղորդում է, որ Պողոս Նուբար փաշային 10 օրվա ժամկետ է տրվել, որի ընթացքում նա պետք է դատարան ներկայանա: Պողոս Նուբար փաշան, որը մինչեւ հիմա խուսափել է դատարանից, մեղադրվում է այն բանում, որ, օգտվելով ռազմական վիճակից, Եռյակ համաձայնության ծառայության մեջ է մտել կայսրության արեւելյան գավառներից անկախ Հայաստան ստեղծելու նպատակով: Նաեւ այն բանում, որ էջմիածնի հայ կաթողիկոսի թույլտվությամբ հայերի մեջ հանգանակություններ է կազմակերպել, որոնց արդյունքը օգտագործել է հայ կամավորականներ հավաքագրելու համար: Բացի դրանից, նրան մեղադրում են այն բանում, որ Ամերիկայում հրապարակվող թերթերում ամբողջ հայ ազգին ուղղված ապստամբության կոչեր է հրապարակել եւ որ օգտվելով Թուրքիայի՝ Բալկանյան պատերազմի հետեւանքով առաջացած թուլությունից, որպես ամբողջ հայ ազգի պատվիրակ, գլխավորել է հայկական կոմիտեն եւ Եռյակ համաձայնության տերությունների մայրաքաղաքներում օսմանյան կառավարության դեմ քայլեր է ձեռնարկել արտասահմանյան վերահսկողության ներքո անկախ Հայաստան ստեղծելու նպատակով: Զինվորական դատարանի հայտարարության մեջ նշվում է, որ մեղադրյալը, եթե իրեն տրված ժամանակի ընթացքում դատարան չներկայանա, ապա կդատապարտվի հեռակա կարգով եւ կզրկվի իր ունեցվածքից, իր քաղաքացիական իրավունքներից, իր զինվորական կոչումից, ինչպես նաեւ իր պարգեւներից:

Պողոս Նուբար փաշան՝ նախկինում Եգիպտոսի նախարար, հայ է եւ Եգիպտոսի արտաքին գործերի նախկին նախարարի որդին»[27]:

Պողոս Նուբար փաշան Եգիպտոսի հպատակ էր. Առաջին համաշխարհային պատերազմից առաջ էջմիածնի կաթողիկոսը նրան հանձնարարել էր որպես պատվիրակ գործելու եվրոպական մեծ տերությունների մոտ հայկական բարեփոխումների հարցով: Պատերազմից առաջ Թուրքիայի առաջնորդները նրան շատ բարձր էին գնահատում: Նրանք առաջարկել էին գլխավոր տեսչի պաշտոն Արեւելյան Անատոլիայում: Մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշան առաջարկել էր նրան նույնիսկ թուրքական նախարարի պաշտոն[28]:

Երբ ռուսական բանակը դուրս եկավ Վանից եւ թուրքերն այնտեղ մտան, թուրքական մամուլը գրեց թուրք ազգաբնակչության հանդեպ ռուսների եւ հայերի գործած գազանությունների մասին: «Neue Freie Presse» թերթը 1915-ի գոնստոսի 16-ին «Կովկասյան ճակատ» հոդվածում գրեց.

«Կ. Պոլիս, Գլխավոր հրամանատարության կայանը հաղորդում է: Վան քաղաքը ենթարկվել էր ռուսների եւ հայկական հրոսակախմբերի հարձակմանը: 20-ժամյա դիմադրությունից հետո ռուսական օգնական ուժերի ժամանման պատճառով թույլ կայազորն ազատել էր քաղաքը: Օգոստոսի 11-ին զորքը նորից գրավեց Վանը: Հրոսակախմբերը եւ ռուսական զորաբաժանումները ստիպված էին նահանջելու, նահանջելիս նրանք ամայացրին շրջակայքը»[29]:

1915-ի օգոստոսի 21-ին «Arbeiter Zeitung» թերթը գրեց «Երբ ռուսները նահանջում են» հոդվածում.

«Կ. Պոլիս, 19 օգոստոսի, 1915 թ.: Ինչպես հաղորդում են էրզրումի թերթերը, ռուսները եւ հայկական հրոսակախմբերը Վանն ազատելուց առաջ հրդեհել են մահմեդական թաղամասերը, իսկ հետո, փախուստի ժամանակ, հայկական թաղամասը, բռնաբարել են կանանց եւ աղջիկներին, արյան բաղնիս են սարքել ազգաբնակչության մեջ եւ սպանել այն անձանց, որոնք ապաստան էին գտել ամերիկյան ինստիտուտում՝ հրդեհելով տեղանքը:

Նահանջելիս ռուսներն առեւանգեցին ամերիկյան եւ իտալական հյուպատոսներին: Նրանք բռնել էին նաեւ գերմանական մանկատան ուսուցչուհուն՝ մանկատանը գտնվող մի քանի որբերի հետ եւ ուզում էին փախցնել նրանց նավակներով: Սակայն, երբ թուրքական զորքը տեղ հասավ, ռուսները փախուստի դիմեցին: Ուսուցչուհին կարողացավ վերադառնալ Վան»[30]:

Երբ Կ. Պոլսում ԱՄՆ-ի դեսպան Մորգենթաուն Թալեաթին առաջարկեց թույլ տալ հայերին Ամերիկա արտագաղթելու, «Neue Freie Presse»-ն 1915 թ. հոկտեմբերի 6-ին «Ամերիկյան օգնություն հայերին» հոդվածում գրեց.

«Բեռլին, հոկտեմբերի 4, Ամստերդամից «Berliner Tagblatt» թերթին հաղորդում են: Ըստ «Daily chronicle» թերթի, Կ. Պոլսում Ամերիկայի դեսպան Մորգենթաուն Բ. Դռանն առաջարկել է այն բոլոր հայերին, որոնք այժմ քշվել են իրենց բնակավայրերից, թույլ տալ տանելու Ամերիկա: Մորգենթաուն այդ նպատակով տրամադրել է հինգ միլիոն դոլար»[31]:

1915 թ. հոկտեմբերի 12-ին «Wiener Zeitung» թերթը գրեց.

«Կ. Պոլիս: Պաշտոնաթերթը հրապարակում է արտասահմանյան գործարար աշխարհի համար հետաքրքիր օրենք: Այս տարվա մայիսի 27-ի օրենքի համաձայն՝ իրենց բնակավայրերից կայսրության մեկ այլ մաս տեղափոխված անձանց կամ իրավական անձանց մասին եւ կամ այս անձանց պարտքերի կարգավորման մասին: Ինչպես եւ պետք էր ենթադրել, այս օրենքն առաջին հերթին վերաբերում է հայերի կողմից լքած շարժական եւ անշարժ գույքին»[32]:

Այստեղ կրկին բաց էր թողնվում այն հարցը, թե ինչո՞ւ էին հայերը ստիպված լքելու իրենց գույքը:

1915 թ. հոկտեմբերի 18-ին «Reichespost» թերթը գրեց ««Ռոյթեր» ստերի գրասենյակը».

«Կ. Պոլիս, 16 հոկտեմբերի: «Սուտ» վերնագրի տակ «Die Kölnische Zeitung» թերթը հաղորդում է Կ. Պոլսից, ըստ «Ռոյթեր» գրասենյակի հաղորդագրության, ասում են, թե ամերիկյան դեսպանը Կ. Պոլսում զեկուցել է իր կառավարությանը, որ բուլղարական ռազմարշավի սկզբից հայերի սպանությունները թափով վերսկսվել են:

Ինչպես կարողացանք պարզել այստեղի ամերիկյան դեսպանատանը, այս հաղորդագրությունը օդից է վերցված, քանի որ ամերիկյան դեսպանությունը երբեք նման բան չի հաղորդել»[33]:

1915 թ. հոկտեմբերի 23-ին վիեննական թերթերը գրեցին «Հայերի խռովություն» («Arbeiter Zeitung») եւ «Հայերի ապստամբություն Ուրֆայում» («Wiener Zeitung») վերնագրի տակ հետեւյալը.

«Կ. Պոլիս: 1915 թ. լույս սեպտեմբերի 16-ի գիշերն ապստամբեցին հայկական հրոսակախմբերը, որոնք ամրացել էին հաստատուն շենքերում Ուրֆայի իշխող կետերում: Սրանք կրակ բացեցին թուրքական ժանդարմերիայի պահակախմբի վրա: Երկու ժանդարմներ սպանվեցին, վեցը վիրավորվեցին: Օսմանյան զինված ուժերին ամենուր կրակոցներով էին դիմավորում: Հայերը գրավեցին արտասահմանյան հիմնարկները, բռնությամբ կալանավորեցին նրանց տերերին եւ այնտեղ հրակնատներ սարքեցին: Քանի որ այս փաստերն ապացուցում են, որ հայերը վճռել են զինված դիմադրությամբ հակադրվելու հանրային իշխանությանը եւ քանի որ նրանք, մյուս կողմից, օգտվելով դրա անբավարար ուժից, ներխուժել են մահմեդական թաղամասերը եւ սկսել են կոտորել նրանց բնակիչներին, դեպի Ուրֆա ուղղվեցին ռազմաճակատի համար նախատեսված որոշ զինվորական ուժեր: Այդ հեղափոխական հրոսակախմբերի ապաստաններն ավերվեցին, եւ խռովությունը ճնշվեց: Այդ միջադեպի ժամանակ սպանված զինվորների եւ ժանդարմների թիվը կազմում է քսան հոգի, վիրավորներինը՝ հիսուն: Խռովարարների նպատակն էր՝ վնաս եւ կորուստներ պատճառել պատերազմող երկրներին, ավերել արտասահմանյան հիմնարկները եւ, բացի դրանից, ռազմական գործողությունների թատերաբեմից հեռացնել եւ կոտորել կայսրական զորքի մի մասը: Այս ծրագիրը չհաջողվեց կայսերական-օսմանյան իշխանությունների եռանդուն եւ արագ միջոցառումների շնորհիվ, եւ ապստամբությունը ճնշվեց՝ առանց վնաս պատճառելու պատերազմող պետություններից որեւէ մեկին»[34]:

Հաղորդագրություններում ոչ մի խոսք չկար այն մասին, որ ժողովուրդը Ուրֆայում միայն պաշտպանվում էր:

1915-ի նոյեմբերի 11-ին «Arbeiter Zeitung»-ը գրեց.

«Կ. Պոլիս: «Միլլի» հեռագրային գործակալությունը հաղորդում է. «Խռովությանը Ուրֆայում գոհացուցիչ կերպով վերջ է դրված, պարագլուխները պատժված են, անվտանգությունը քաղաքում վերականգնված է: Ամերիկացի Լեալենը՝ ղեկավարն այն ամերիկյան հիմնարկներից մեկի, որոնք հայ պարագլուխներին որպես խրամատ էին ծառայում (պատերի մեջ անցքեր էին բացել հանրային իշխանության վրա կրակելու համար), ինքնասպան է եղել՝ խմելով կարբոլյան թթու: Ինքնասպանությունից առաջ սեփական ձեռքով գրած նամակում, որն ի պահ են վերցրել տեղի իշխանությունները, Լեալենը հայտարարել է, որ իր կամքով է ինքնասպանություն գործում, եւ խոստովանել է իր մասնակցությունը հայերի խռովությանը»[35]:

1915 թ. նոյեմբերի 19-ին «Arbeiter Zeitung» թերթը կրկին հոդված հրապարակեց հայկական ջարդերի մասին, այս անգամ անգլիացիների տեսանկյունից: Հոդվածի վերնագիրն է «Հայերի կոտորածը».

«Լոնդոն (Համայնքների պալատ): Հայկական կոտորածների քննարկման ժամանակ լորդ Սեսիլն ասաց, որ համաշխարհային պատմության մեջ չկա ավելի սարսափելի ոճրագործություն: Կոտորածները տեղի են ունեցել առանց որեւէ պատճառի: Այն պնդումը, թե այլ գործակալներ են հայերին հրահրել ապստամբության, միանգամայն սխալ է: «Հայերի լավագույն պաշտպանությունը ռուսների հաղթանակը կլիներ,- ասաց Սեսիլը,- այս պատերազմում՝ հարկավոր է օգտագործել բոլոր լրացուցիչ ռեսուրսները եւ ստիպել թշնամուն ընդունելու հաշտության մեր պայմանները: Միայն Գերմանիան է ի վիճակի դադարեցնելու կոտորածները»: Այնուհանդերձ, հաստատված է մեղսակցությունը: Գերմանիայում միլիտարիզմի դավանանքը տրամաբանորեն հասցրել է կեղծ ոճրագործությունների, որովհետեւ պետությանն է տրված այն տեղը, որը մյուս ժողովուրդների մոտ զբաղեցնում է կրոնն ու բարոյախոսությունը: Կեղծ հավատ ընդունած ժողովրդի անկումը սահման չի ճանաչում: Անգլիան, ըստ Սեսիլի, նման ուսմունք երբեք չի ընդունել: Սեսիլը վերջացրեց, ասելով. «Մենք համաձայն ենք էդիթ Սավելի վերջին խոսքերի հետ՝ միայն ազգայնամոլությունը բավական չէ: Դա խոր ճշմարտություն է, արտասանված մեծ հայրենասերի կողմից: Եթե գերմանացիները չհրաժարվեն պետությունը քայքայելուց, ապա նույնիսկ ավելի խորն անկում կապրեն, քան հիմա են ապրում»[36]:

Արդյո՞ք այս հոդվածն ավելի շուտ գերմանական միլիտարիզմի դեմ չէր ուղղված: Չէ՞ որ Ավստրո-Հունգարիայի պաշտպանության նախարար Կոնրադը փոխըմբռնման պրոբլեմներ ուներ գերմանական զինվորական հրամանատարության հետ[37]:

1916 թ. մայիսի 16-ին «Reichspost» թերթում տպագրվեց «Հայերի հալածանքը» հոդվածը.

«Կ. Պոլիս, 14 մարտի 1916 թ.: Երեք հայեր Ադաբազարից եւ Բախչեջեկից, որոնց վերաբերյալ ապացուցվել է, որ հայկական հեղափոխական կոմիտեի անդամ են եղել եւ ռումբեր են թաքցրել, ինչպես նաեւ իսլամ ընդունած մի հայ Բրուսայից, որը մասնակցել է կառավարության դեմ շարժմանը եւ լրտեսություն արել Անգլիայի համար, մահվան են դատապարտվել: Դատավճիռը երեկ առավոտյան ի կատար է ածվել զինվորական նախարարության շենքի առաջ գտնվող հրապարակում»[38]:

1916 թ. ապրիլի 7-ին թերթերը գրեցին, թե հայկական ֆիդայական խմբերը գազանություններ են արել թուրքերի նկատմամբ: «Ռուսական գազանություններ Հայաստանում» հոդվածում «Arbeiter Zeitung»-ը գրել է.

«Կ. Պոլիս, 4-ը ապրիլի 1916 թ.: Ռուսական զորքը հատկապես հայկական պարտիզանական խմբերը, որոնք ռուսների առաջապահն են կազմում, չտեսնված դաժանություններ ու ոճրագործություններ են կատարում ազգաբնակչության հանդեպ, որը

մնացել է թշնամու կողմից գրաղեցրած գյուղերում, հատկապես ծերունիների ու վիրավորների հանդեպ: Աղջիկներին ու տղաներին քշում տանում էին հեռավոր վայրեր, որտեղ այդ դժբախտները հրեշավոր գործողությունների զոհ են դառնում: Էրզրումը գրավելուց հետո ռուս զինվորները, հատկապես կազակները, գիշերով բռնի տներն են ներխուժում, թալանում ու բռնաբարում բնակիչներին՝ սպառնալով նրանց սվիններով: Գիշերը ջարդում են մահմեդական ականավոր գործիչների բնակարանների դռները, տանում նրանց ունեցած-չունեցածը, իրենց էլ քշում Ռուսաստանի խորքը»[39]:

1916 թ. ապրիլի 15-ին «Reichspost» թերթը մի հոդված հրապարակեց Թուրքիայի մասին՝ «Այսօրվա Թուրքիան եւ նրա ապագան» վերնագրով: Դա բալկանյան գրող Լեոպոլդ Մանդլի զեկուցման տեքստն էր: Վիեննայում Սերբիայի հյուպատոս Յովանովիչը Մանդլին անվանել էր ավստրիական եւ գերմանական մամուլում սերբերի եւ Սերբիայի դեմ թշնամանքի ամենամեծ հրահրողներից մեկը[40]:

Այդ հոդվածում խոսվում է թուրքական կայսրությունում ապրող տարբեր ազգությունների մասին. Հայաստանին եւ հայերին նվիրված հատվածը հեղինակն ավարտում է հետեւյալ խոսքերով.

«Հայերի մեջ կա հարկահավաքների եւ հացահատիկի վաշխառուների մի զզվելի շերտ, որն արյունաքամ է անում առանց այն էլ մեծ տոկոսներ վճարող թուրք գյուղացուն: Իսկ արտասահմանում կան հեղափոխական ընկերություններ, որոնք մտադիր են անգլիական դրամով անհեռանկարային խռովություններ բարձրացնելու, ինչի համար Հայաստանում եւ Անատոլիայում բնակվող նրանց հայրենակիցները ստիպված կլինեն արյան գնով վճարելու: Այս արյունն առնելու պատճառով դժբախտ ժողովուրդը գնալով ավելի էր թուլացել»[41]:

Նաեւ Կարլ Կրաուսի «Die Faktel» ամսագրում 1916 թ. օգոստոսին տպվեց թուրքամետ հոդված: Սա արտատպություն էր գերմանական «Balkan-Heft» ամսագրի 1915 թ. սեպտեմբերյան համարից: Հեղինակը՝ Էլզե Մարքվարդսենը, գրում է.

«Բոլոր այն երկար տարիների ընթացքում, ինչ մոտեցել ու հարազատացել եմ մահմեդականներին, անհանդուրժողականության ոչ մի դեպքի չեմ հանդիպել: Ես միշտ պարզել եմ, որ անհանդուրժողականներն ու հաճախ վիրավորական արհամարհանք դրսեւորողները քրիստոնյաներ էին: Մահմեդականը չափազանց շատ է խղճում քրիստոնյային, որպեսզի մոլեռանդորեն նրա դեմ գնա, եւ այն, որ նա դա անում է, հենց իր՝ քրիստոնյայի մեղքն է: Որտեղ էլ բախումներ են եղել, որոնց պատճառը գոնե մի չնչին չափով հավատն է եղել, դրանց առաջացնողը քրիստոնյան է: Տարակարծության դեպքում քրիստոնյան միշտ անհրաժեշտ է համարում փաստարկել կամ հայհոյել: Մահմեդականը հանգիստ պատասխանում է նրան լուռ լսելուց հետո, երբեմն նրա գրգռումից մի քիչ խույս տալով. «Ի՞նչ ես ուզում, ես չեմ հարձակվում քո հավատի վրա, դու էլ իմին ծեռք մի տուր, յուրաքանչյուրը հավատում է այն բանին, որը նրան ճշմարիտ է թվում»: Նա միշտ նման բաներով կպատասխանի եւ եթե ուրիշ բան չի մնում, լուռ կհեռանա՝ գործողության վայրը անտրտունջ զիջելով մյուսին»[42]:

Դրանից հետո հայերի եւ Հայաստանի մասին ավստրիական թերթերում այլեւս ոչ մի էական բան չգրվեց, բացի մի քանի կարճ նոթերից, որոնք բոլորը, բացի Ռուսաստանի խորհուրդների հաշտության բանակցությունների մասին հաղորդագրությունից, հիմնված էին թուրքերի լրատվության վրա:

«Neue Freie Presse», 22 հոկտեմբերի 1917 թ.: «Խորհրդային միության հետ հաշտության պայմանները. Հրահանգներ Փարիզում Անտանտի կոնֆերանսի պատվիրակին, Պետերբուրգ, 22 հոկտեմբերի:

1. Գերմանական զորքի դուրս բերումը Ռուսաստանից:

2. Ինքնավարություն Թուրքահայաստանի համար»:[43]

«Arbeiter Zeitung», 9 ապրիլի 1918 թ.

«Կ. Պոլիս, 7 ապրիլի (պաշտոնական): Վանա լճի երկու կողմում եւ Կարսի ուղղությամբ հասել ենք նոր հաջողությունների: Ծովափին մեր զորամասերը Բաթումի մոտ կանգնած են հրոսակախմբերի դեմ առ դեմ»:[44]

«Arbeiter Zeitung», 17 ապրիլի 1918 թ.

«Կ. Պոլիս, 15 ապրիլի (պաշտոնական): Կովկասյան ռազմաճակատ. Բաթումի բերդն անձնատուր է եղել: Այն բանից հետո, ինչ համառորեն պաշտպանվող թշնամին քայլ առ քայլ ետ էր մղվում դեպի բերդի գոտին, ամսի 13-ի երեկոյան սկսեց Հարավարեւելյան ճակատի ամրությունների գրոհը: Կատաղի պայքարում մեր խիզախ. հարձակողական ավյունով տոգորված զորամասերին հաջողվեց ներխուժել այդ ճակատի՝ փշալարով պատած ամրությունները:

Քաղաքի եւ նավահանգստի առումն իրագործվեց առանց պայքարի»:[45]

«Arbeiter Zeitung», 29 ապրիլի 1918 թ.

«Կ. Պոլիս, 26 ապրիլի (պաշտոնական): Կովկասյան ռազմաճակատ. Կարսի համար մեր մղած մարտերի հետեւանքով բերդն անձնատուր եղավ: Վերցրել ենք տարբեր տրամաչափի 860 թնդանոթներ»:

27 ապրիլի (պաշտոնական).

«Կովկասյան ռազմաճակատ, Կարսում 860 թնդանոթներից բացի մեր ձեռքն ընկավ նաեւ շատ զինամթերք, ռազմական գույք եւ այլ պաշարներ»:[46]

«Arbeiter Zeitung», 18 օգոստոսի 1918 թ.

«Կ. Պոլիս, 16 օգոստոսի: «Միլլի» հեռագրական գործակալությունը հաղորդում է. Կարսի, Բաթումի եւ Արդահանի պատվիրակությունը, որը քիչ առաջ ժամանել է Կ. Պոլիս, երեկ ընդունվեց Մեծ վեզիրի կողմից, որին նա հաղորդեց հանրաքվեի արդյունքը, որի ժամանակ այդ մարզերի տասնինը տարեկանից բարձր ողջ ազգաբնակչությունը ներկայացնող 87048 ձայներից 85124-ը պահանջել են այդ երեք մարզերը վերադարձնել մայր երկրին: Խորհրդակցության ժամանակ պատվիրակները խնդրանք ներկայացրին Մեծ վեզիրին՝ արագացնելու իրենց մարզերի միացման ծեւականությունները»:[47]

Ավստրո-հունգարական մամուլում այսպիսի՝ մասամբ մեքենայությունների, մասամբ էլ գրաքննության արդյունք հանդիսացող հաղորդագրություններից հետո դժվար էր սպասել ավստրիացիների կողմից հայերի հանդեպ համակրանքի որեւէ արտահայտության: Բացի դրանից միապետության ժողովուրդն ինքն էլ շատ էր տառապում ավերիչ պատերազմի պայմաններում եւ դժվար թե կանգներ իրենից հազարավոր կիլոմետրեր հեռու ապրող եւ, ըստ մամուլի, իր դաշնակցի դեմ պայքարող ժողովրդի կողմը: Մամուլն էր ստեղծում հասարակական կարծիքը: Իսկ ավստրոհունգարական բանակի մամուլի կազմակերպությունն իր ղեկավար գեներալ ֆոն Հոենի միջոցով 1914 թ. դեկտեմբերի 9-ին հաղորդեց.

«Նախկինում պատերազմներում զինվորական թղթակցի պարտքն ու պատվախնդրությունը պահանջում էին հնարավորին չափ արագ լուրեր տալ իր թերթին կարեւոր իրադարձությունների մասին : Այժմ այդ խնդիրը լավագույնս կատարում են բանակի գլխավոր հրամանատարության հաղորդագրությունները, իսկ զինվորական թղթակցի համար իր անմիջական տպավորությունների նկարագրությունը բացում է ստեղծագործելու ընդարձակ ոլորտ»:

Կարլ Կրաուսն այսպես մեկնաբանեց այդ դրույթը.

«Սրանով, քանի որ գործնականությունը վերապահվում է պաշտոնական հաղորդագրություններին, պատերազմի գրչակներին ուրիշ բան չի մնում, քան գերմանական բարդեր լինելը»[48]*:*

Ինչպե՞ս արտահայտվեց Բիսմարկը՝ Ռայխստագում 1888 թ. փետրվարի 6-ին.

«Յուրաքանչյուր երկիր ժամանակի ընթացքում երբեւիցե պատասխանատու է լինում այն պատուհանի համար, որը բացում է նրա մամուլը»[49]*:*

Հղումներ

1. Stürghk, "Politische und Militärische Erinnerungen", S. 304.
2. Klaus Mayer, "Die Organisation des Kriegspressequartiers bei K. u K. AOK im Ersten Weltkrieg", 1914-1918, Diss, Wien, 1963. S. 23.
3. Heinrich Vierbücher, "Armenien 1915", S. 77.
4. H. Marquart, "Die Entstehung", S. 46.
5. Նույն տեղում, S. 47.
6. H. Goltz, Rede am Lepsius - Grab in Meran am 6. April 1986, Manuskript.
7. Lepsius, "Deutschland-Armenien 1914-1918", S. 5.
8. Ulrich Trumpener, "Germany and the Ottoman Empire", New Jersy, 1968, S. 221.
9. Wien, HHStA PA XII 463 Konstantinopel, 10. November 1915, Nr. 94/P.B.
10. Wien, HHStA PA XII 209 Pera, 13. März 1915, Nr. 247.
11. Wien, AVA Inneres Präs., Wien, 28. Februar 1917, Prot, Nr. 321oex1917/M.I.
12. Freiherr M. Kapri, "Zwei Vorträge", Wien, 1913, S. 47.
13. Wien, HHStA PA XXXVIII 368 Trapezunt, 31. Juli 1915, Nr. 46/P.
14. Wien, HHStA PA I 931, Austro-Hungarian atrocities, London, 1916, fo. 250.
15. Wien, HHStA PA I 931 Feldpostamt, Nr. 305, 6. März 1915, Nr. 6521.
16. Magnus Hirschfeld, ""Sittengeschichte des Weltkrieges", Wien 1930/31, S. 286.
17. Arbeiter Zeitung, Wien, 30. Jänner 1915.
18. Neue Freie Presse, Wien, 9. Juni 1915.

19. Wiener Zeitung, Wien, 16. Juni 1918.
20. Reichspost, Wien, 18. Juni 1915.
21. Arbeiter Zeitung, 18. Juni 1915.
22. Նույն տեղում, 20. Juni.
23. Neues Wiener Tagblatt, Wien, 29. Juni 1915.
24. Նույն տեղում:
25. Neue Freie Presse, 2. August 1915.
26. Reichspost, Wien, 11. August 1915.
27. Neues Wiener Tagblatt, 14. August 1915.
28. Lepsius, "Der Todesgang", S. 227.
29. Neue Freie Presse, 16. August 1915.
30. Arbeiter Zeitung, 21. August 1915.
31. Neue Freie Presse, 6. August 1915.
32. Wiener Zeitung, 12. Oktober 1915.
33. Reichspost, 18. Oktober 1915.
34. Wiener Zeitung, 28. Oktober 1915.
35. Arbeiter Zeitung, 11. November 1915.
36. Arbeiter Zeitung, 19. November 1915.
37. Stürghk, "Im Deutschen", S. 159.
38. Arbeiter Zeitung, 16. Marz 1916.
39. Նույն տեղում, 7. April 1916.
40. Wien, HHStA PA I 969 Wien, 20. Juli 1914, Nr. 11.
41. Reichspost, 15. April 1916.
42. Die Fackel, Wien, August 1916.
43. Neue Freie Presse, 22. Oktober 1917.
44. Arbeiter Zeitung, 9. April 1918.
45. Arbeiter Zeitung, 17. April 1918.
46. Arbeiter Zeitung, 29. April 1918.
47. Arbeiter Zeitung, 18. August 1918.
48. Die Fackel, Sez. 1918.
49. Նույն տեղում:

19. ԱՎՍՏՐՈ-ՀՈՒՆԳԱՐԻԱՅԻ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ

Թուրքիայում գերմանական ներկայացուցչությունների հաղորդումների համաձայն, հայերի հալածանքներն սկսվել էին արդեն 1914 թվականին: Դեկտեմբերի 5-ին 1914 թ. Էրզրումից գերմանական հյուպատոս Շվարցը հաղորդում է.

«Էրզրումի վիլայեթի հայ բնակչությունը, հատկապես գյուղացիությունը, անհանգստացած են որոշ դեպքերի պատճառով, որոնք ընկալում են որպես նոր կոտորածների նախանշան»[1]:

Ինչպես ցույց տվեց պատմությունը, հայերի վախն անհիմն չէր: Առաջին լուրերը՝ «Հայկական խռովություններ» վերնագրով Պալավիչինին հաղորդեց 1915 թ. ապրիլի 29-ին: Նա հաղորդում է.

«Այս հայկական շարժման մեջ թվում է, թե օտար դրամն է որոշակի դեր խաղացել: Խռովությունները Փոքր Ասիայի հայկական կենտրոններում թվում է, թե մեծ չափեր են ընդունել, եւ որոշ տեղերում գործն, անկասկած, կոտորածի է հասել»[2]:

Արտասահմանում հասարակությունն արդեն այդ մասին տեղյակ էր, որովհետեւ հայերի հալածանքները հնարավոր չէր երկար ժամանակ թաքցնել: Բուլղարական ու ռումինական մամուլն արդեն հաղորդում էր եւ դատապարտում դրանք: Մորգենթաուն հաճախ հանդիպում էր Պալավիչինիի հետ եւ փորձում համոզել նրան միջնորդելու հայերի օգտին թուրքական պետական գործիչների մոտ: Մորգենթաուն ասում էր, որ կոտորածը ոչ միայն ընդհանուր վատ տպավորություն կթողնի արտասահմանում, այլեւ նույնչափ վնասակար կլինի Թուրքիայի դաշնակիցների համար: Մորգենթաուի ճիգերի մասին Պալավիչինին գրում է.

«Ես ոչ մի դեպքում մտադրություն չունեմ այդ անելու: Բայց այն, որ նման խորհուրդները հազվադեպ են արծագանք գտնում, կարծում եմ, որ Թուրքիան դրանք կդիտի որպես միջամտություն իր ներքին գործերին, որը հենց դաշնակից պետությունների կողմից իրեն հատկապես տհաճ կլինի»[3]:

Սակայն, երբ ռուսական դեսպանությունը Վաշինգտոնում խնդրեց ամերիկյան կառավարությանը լրջորեն միջամտելու հայկական կոտորածների հարցում, եւ երբ Մորգենթաուն այդ արեց, Պալավիչինին ստիպված եղավ թուրքական պետական գործիչների ուշադրությունը հրավիրելու այն հանգամանքի վրա, որ քրիստոնյաների հալածանքները Թուրքիայում *«մեր հակառակորդներին մի նոր պատրվակ կտան ամբողջ ուժով գործելու Թուրքիայի դեմ»*[4]:

Մայիսի 1-ին Պալավիչինին խոսեց Թալեաթի հետ, նշելով, որ ռուսական կողմն օգտվում է հայկական խռովություններից Ամերիկայի հանրային կարծիքը Թուրքիայի

եւ նրա դաշնակիցների դեմ տրամադրելու համար: Պալավիչինին գրում է.

«Ես ասացի նրան, որ ինձ նպատակահարմար է թվում այս գործում զգուշություն ցուցաբերել հատկապես կանանց ու երեխաների հալածանքների հետեւանքով անտեղի չթեթեւացնելու Թուրքիայի հակառակորդների սադրիչ գործողությունները»[5]:

Թուրքիայի դաշնակիցները եղած լուրերը կեղծ ու չափազանցված էին համարում: Սակայն հետագայում պարզվեց, որ դրանք ենթադրություններ չէին, այլ փաստեր: Եթե թուրքական կառավարությունը եւ նրա դաշնակիցները խոսում էին հայերի ապստամբությունների մասին, Անտանտի կառավարությունները 1915 թ. մայիսի 24-ին մեղադրեցին թուրքական կառավարությանը նախապես որոշված հայկական ջարդեր կազմակերպելու մեջ.

Նման ոճրագործություններ տեղի են ունեցել ապրիլի կեսերից Էրզրումում, Թերջանում, Էգինում, Բիթլիսում, Մուշում, Սասունում, Զեյթունում եւ ամբողջ Կիլիկիայում: Վանի շրջանի շուրջ հարյուր գյուղերի բնակիչներին սպանել են: Իսկ քրդերը պաշարել են Վանի հայկական թաղամասը: Նույն ժամանակ օսմանյան կառավարությունն առանց որեւէ պատճառի հալածում է Կ. Պոլսի հայերին: Թուրքական այս նոր ոճրագործությունների կապակցությամբ դաշնակից երկրները հայտարարում են, որ նրանք ժամանակին այս կոտորածին մասնակից թուրքական կառավարության բոլոր անդամներին եւ պաշտոնյաներին զգուշացրել են նրանց մեկ-մեկ պատասխանատվության կանչելու մասին[6]:

Թուրքական իշխանությունների համար տարբերություն չկար՝ բռնագաթի ենթարկվածներն առաքելական եկեղեցո՞ւն էին պատկանում, թե՝ կաթոլիկ: Երբ Տրապիզոնից տեղահանեցին կաթոլիկ հայերին, Ավստրո-Հունգարիայի հյուպատոս Կվյատկովսկին հարցրեց Պալավիչինիին, թե ի՞նչ դիրք ընդունի այս հարցում: Պալավիչինին պատասխանեց. *«Առայժմ այս հարցում բոլորովին պասիվ եղիր»*[7]: Պալավիչինին իր դիրքորոշումը բացատրում էր նրանով, որ քաղաքական իրադարձությունն իրեն թույլ չէր տալիս գրգռելու թուրքերին՝ պաշտպանելով կաթոլիկ հայերին[8]: Ավստրո-հունգարական հյուպատոսներն ավելի հաճախ էին նկարագրում թուրքերի գազանությունները, այնպես որ Պալավիչինին որոշեց «բարեկամաբար» խոսել Թալեաթի հետ եւ բացատրել նրան, որ Թուրքիան այսպիսի գործելակերպով ինքն իրեն վնասում է[9]: Դրանից քիչ ժամանակ անց Պալավիչինին եղավ Մեծ վեզիրի մոտ: Այստեղ նրան ասվեց, թե հայերի նկատմամբ ավելորդ խստությունները եւ նրանց տեղահանումը կդադարեցվի: Այնինչ զեկուցումները վկայագրում են, որ դաժան հալածանքները շարունակվում էին:

Պալավիչինին հաղորդում է.

«Ասում են, թե մարդկանց ուղղակի Աբդուլ Համիդի ժամանակների պես տանջանքների են ենթարկում: Թուրքերի կողմից հայերի հանդեպ գործած դաժանությունները հնարավոր չէ երկար թաքցնել, դրանք հայտնի են դառնում նաեւ երկրից դուրս,

այն էլ՝ ի վնաս թուրքերի: Այստեղի իշխանություններին հնարավոր չէ համոզել, որ իրենք ճիշտ չեն վարվում հայերի հետ, եւ վտանգ կա համառ դիտողություններով գործը միայն փչացնելու: Բանն այն է, որ այստեղ նպատակադրվել են մեկընդմիշտ վնասազերծել մեկ անգամ կասկածի տակ ընկած հայկական տարրը»[10]:

Հայերին պաշտպանելու Պալավիչինիի ջանքերը վճռական չէին: Նա չէր ուզում խառնվել Թուրքիայի ներքին գործերին, իսկ եթե այդ անում էր, ապա միայն «բարեկամաբար», այն է՝ բանավոր: Վանգենհայմի եւ Պալավիչինիի այս վարանոտ քայլերն ավելի հաստատակամ էին դարձնում թուրքական կառավարությանը: Թեեւ նա անընդհատ խոստանում էր հայերին ավելի լավ վերաբերվել եւ դադարեցնել նրանց տեղահանումը, այդ ուղղությամբ ոչինչ չէր արվում: Ընդհակառակը, հալածանքները շարունակվում էին նոր թափով[11]: Նույնիսկ Պալավիչինիի միջնորդությունը կաթոլիկ հայերի համար ապարդյուն եղավ, թեեւ Թալեաթը նրան մի քանի անգամ հավաստիացրել էր, թե բողոքական եւ կաթոլիկ հայերը վախենալու ոչինչ չունեն[12]:

Մի միսիոների տեղեկագրում ասված է.

«Տասներկու առաքելական հայեր, որոնց քշել-բերել են օսմանյան կայսրության տարբեր մասերից, խմբով անցնում են Իզմիրի մոտով իրենց աքսորի ճանապարհը սկսելու համար եւ այնտեղի հայ հերձվածողական եկեղեցում ենթարկվում են տարբեր հարցաքննությունների ու տանջանքների: Այսպես օրինակ, ես տեսել եմ, թե ինչպես էին եկեղեցուց քարշ տալիս այդպիսի տանջանքների մի զոհի: Նա ուշագնաց էր. եւ երկու բազուկներն ու մի ոտքը տեղից խախտված էին: Իզմիրի մասին այս զեկուցագիրը ես 1915 թ. սեպտեմբերի 1-ին հանձնեցի ավստրո-հունգարական դեսպանին: Նորին գերազանցությունը գրեթե չէր ուզում հավատալ իմ տվյալներին եւ վկայակոչում էր Թալեաթ բեյի՝ օգոստոսի 30-ին իրեն տված խոստումը, ըստ որի հայերի հալածանքներն ընդհանուր առմամբ դադարեցված են, եւ հատկապես բոլոր հայ կաթոլիկներն արդեն վերադարձվել են իրենց լքված հայրենիքը եւ վերսկսել իրենց նախկին խաղաղ զբաղմունքը: Ես, իհարկե, պնդեցի, որ ուզում են Նորին Գերազանցությանն ապացուցել հակառակը, ինչն առիթ տվեց ավստրո-հունգարական կողմից նոր քայլեր ձեռնարկելու: 1915 թ. սեպտեմբերի 4-ին, լրիվ հույս դնելով դրանց նպաստավոր արդյունքի վրա, ես նորից մեկնեցի Իզմիր եւ իրավիճակն այնտեղ գտա ավելի վատ, քան երբեւէ: Ոչ միայն չէր վերադարձել աքսորված հայերից որեւէ մեկը, այլեւ այն սակավաթիվ կաթոլիկները, որոնց մինչեւ հիմա հանդուրժում էին երկրի ներսի անհյուրընկալ շրջանները»[13]:

Կվյատկովսկուն ուղղված խնդրանքում Մխիթարյանների վանահայր Ավգուստին Արմիկը նկարագրում է իրադարձությունն Էրզրումում: Այստեղ այլեւս հայեր չկային, իրենք էլ՝ Մխիթարյանները, վտանգի մեջ էին: Իրենց շատ էր օգնել հատկապես գերմանական հյուպատոս Շոյբները, որը բռնագաղթից փրկել էր տասը հայ միանձնուհիների, որոնք Մխիթարյանների հետ Կ. Պոլիս էին ուզում գնալ: Նրանք խնդրել են պահանել իրենց անվտանգությունը ճանապարհին[14]: Ավստրո-հունգարական հյուպատոսի եւ նրա գերմանական պաշտոնակցի ջանքերի շնորհիվ հաջողվեց Էրզրումից Կ. Պոլիս տեղափոխել վանականներին եւ տասը միանձնուհիներին[15]:

1915 թ. հոկտեմբերի 23-ին Հռոմի պապի նվիրակ Սկիպինելլին այցելեց Վիեննայում Բուրիանին եւ խնդրեց պապի անունից, որ Ավստրո-Հունգարիան միջնորդի Բ. Դռան մոտ հայերի օգտին: Բուրիանը պատասխանեց, որ ավստրո-հունգարական կառավարությունն արդեն ամիսներ առաջ այդ արել է, որ ինքը վերջերս Վիեննայում եղած Պալավիչինիին բանավոր հանձնարարություններ է տվել այդ հարցով անձամբ դիմել Բ. Դռան կառավարությանը: Այնուհետեւ Բուրյանն ասաց, որ մեծ հաջողություն չի սպասում այդ միջոցառումներից, քանի որ թուրքերն անընդհատ նշում են, որ հայերը քաղաքականապես հուսալի չեն եւ որ խաղաղ թուրքական բնակչության վրա հարձակումներ գործելով, իրենք են առիթ տվել այդ միջոցառումներին[16]:

Հայկական կոտորածների ականատեսներից էր հայր Նուրբերթ Հոֆերը Տիրոլից, որը երկար տարիներ ապրել էր Թուրքիայում:

Հոֆերը 1915 թ. հոկտեմբերին եկավ Վիեննա եւ փորձեց օգնություն կազմակերպել հայերի համար: Կառավարությանը գրած հուշագրում Հոֆերը պատմում էր թուրքերի գազանությունների մասին եւ շարադրում ականատեսների վկայությունները: Թուրքիայում հայր Հոֆերին հեռակա կարգով մահվան դատապարտեցին: Այդ պատճառով նա ստիպված եղավ պատերազմի տարիներին ծառայել իտալական ռազմաճակատում[17]:

Ինչպես երեւում է, Ավստրո-Հունգարիայի ներկայացուցիչներին Թուրքիայում թույլատրված չէր պաշտոնապես օգնել հայերին, այլապես հյուպատոս Նադամլենցկին չէր բողոքի.

«Ճնշող զգացում է, երբ լինելով քաղաքակիրթ պետության ներկայացուցիչ, ստիպված ես նայելու այդ միջնադարյան գործելակերպին՝ առանց օգնել կարողանալու եւ օգնության իրավունքի: Կարեկցության արժանի բնակչությունը, որը հարստություններ դիզող քչերի կողմից տնտեսական անխիղճ շահագործման հետեւանքով այսօր մուրացկան է դարձել եւ միայն մի ցանկություն ուներ, այն է՝ հաց վաստակելու համար իր աշխատանքով զբաղվելը, հասկանալի վախով հարցնում է՝ ի՞նչ են անում Թուրքիայի դաշնակիցները, ի՞նչ են անում Ավստրո-Հունգարիան եւ Գերմանիան: Ինչո՞ւ չեն միջամտում: Ինչո՞ւ մեզ չեն օգնում: Օրեցօր բարձրացող այս հարցերից մինչեւ այն գիտակցությունը, որ մենք համաձայն ենք ամենախավար միջնադարը հիշեցնող այս ոճրագործությունների հետ, միայն մի քայլ է: Ինչպե՞ս կարող է միապետությունը հանդուրժել, որ կույր կատաղությամբ ու մոլի խելահեղությամբ ղեկավարվող դաշնակիցներն ապականեն իր այն պատվավոր անունը, որը նա կարողացել է անբիծ պահել ամբողջ պատերազմի ընթացքում»[18]:

Ապա Նադամլենցկին փորձում է համոզել Պալավիչինիին՝ օգնել հայերին.

«Չերդ գերազանցություն, այստեղի պայմանները ծաղր են ամեն մի մշակույթի, ամեն մի պետական իմաստության նկատմամբ: Հազարավոր մարդիկ հանձնված են անպատասխանատու անձանց, ավազակախմբերի քմահաճույքին: Մի՞թե նրանք պետք է անպատիժ շարունակեն իրենց գործը: Մի՞թե մենք հնարավորություն ու ուժ չունենք վերջ տալու այդ գործելակերպին, որը սեւ ստվեր է գցում մեր հեղինակության վրա: Մի՞թե պիտի սարսռալով նայենք, թե ինչպես է Թուրքիան ավելի խորը փորում իր իսկ գերեզմանը: Այս բոլոր հարցերը ճնշում են ինձ: Հարցեր, որոնք հրատապ են ինչպես երբեք, քանի որ հենց մեր միապետության քաղաքականությունն է, որ օրինակ է հանդիսանում տարբեր ժողովուրդների համար եւ ճանաչում գտնում բոլոր շրջաններում»[19]:

1915 թ. հուլիսի կեսերին Հալեպ հասավ տեղահանված հայերի մի խումբ՝ կանայք եւ երեխաներ: Նրանց տեղավորեցին խղճուկ ճամբարներում: Երիտասարդ բժիշկ Ադոլֆ Պոխեն անմիջապես իր օգնությունն առաջարկեց եւ հայ ընտանիքներ պատսպարեց իր տանը: Հալեպի ավստրո-հունգարական հյուպատոսը խստորեն քննադատեց նրան: Հետագայում նրան ուղարկեցին Սիրիա՝ բժշկական հիմնարկություններում աշխատելու[20]:

1915 թ. նոյեմբերի 6-ին Նադամլենցկին մի գրություն ուղղեց Պալավիչինիին, որում հաղորդում էր, որ իր բուլղարացի պաշտոնակցի հետ միասին հուշագիր է կազմել Թուրքիայի ներքին քաղաքական իրադարձությունների մասին՝ «Proces Verbal» խորագրով: Այստեղ նկարագրված էին եւ փաստաթղթերով ապացուցված հայերի բռնագաղթը, կոտորածները եւ թուրքական գազանությունները: Պալավիչինին խստագույնս դատապարտեց Նադամլենցկու այս արարքը[21]: Երբ Պալավիչինին արձակուրդից հետո Կ. Պոլիս վերադարձավ, նա օգտվեց հենց առաջին առիթից արտաքին գործերի նախարար Հալիլ բեյի մոտ Բուրիանից ստացած հրահանգի համաձայն հայերի օգտին միջնորդելու համար: Հալիլ բեյի հետ ունեցած զրույցի ժամանակ Պալավիչինին դատապարտեց հայերի հալածանքները եւ ասաց, որ դրանից ամենից շատ ինքը՝ Թուրքիան է տուժելու, որովհետեւ հայկական տարրն է *«ամենաաշխատասերն օսմանյան կայսրությունում եւ բոլորից շատ նպաստում է վերելքին»*:

Հալիլ բեյը խոստացավ խոսել իր պաշտոնակից նախարարների հետ հայերի մասին եւ օգնել նրանց: Պալավիչինին գրում է.

«... Թեեւ արեւելքում ունեցած իմ երկարատեւ փորձի հիման վրա շատ բան չեմ սպասում թուրքերի խոստումներից, սակայն կարծում են, որ Հալիլ բեյն այս անգամ բավական անկեղծ էր: Նաեւ արտահայտելով Թալեաթ բեյի՝ այս հարցի շուրջ մտադրությունների մասին նա խոսեց բոլորովին անկեղծ եւ խոստովանեց, որ պաշտոնակից նախարարը ձգտում է իր ձեւով լուծելու Հայկական հարցը դեռեւս պատերազմի ընթացքում եւ պետություններին fait accompli -ի առաջ կանգնեցնելու: Ես նույնպես համոզված եմ, որ Հալիլը կրկին անգամ կխոսի Թալեաթի հետ, սակայն հարց է, թե ի՞նչ հաջողությամբ»[22]:

Թվում էր, թե հաջողության կհասնեն: Նոյեմբերի 10-ին Նադամլենցկին հեռագրեց Ադրիանապոլից. *«Հայերի արտագաղթը մի քանի օր է, ինչ դադարել է»*[23]: Բայց երեք օր անց նա հաղորդեց.

«Արտաքսված հայերի վերադարձի դեմ է խոսում պաշտոնական հայտարարությունը, որովհետեւ բոլոր նրանք, ովքեր աքսորյալի տուն են ուզում վարձել, պետք է ներկայանան պետական գանձարանին»[24]:

Պալավիչինիին Ադրիանապոլսում հաջողվեց ազատել երկու հայուհու, որոնց ուզում էին բռնի ամուսնացնել թուրքերի հետ: Պալավիչինին կարողացավ հասնել այն բանին, որ աղջիկներին հանգիստ թողնեն[25]: 1915 թ. դեկտեմբերի 25-ին Վիեննայի Մխիթարյան միաբանության վանահայրը մի նամակ գրեց Բուրիանին, որտեղ պնդում էր, թե 1875 թ. հրամանագրի համաձայն միաբանության անդամները համարվում են Ավստրո-Հունգարիայի հպատակներ.

«Մենք այն կարծիքին ենք, որ ոչ մի իրավունք չունենք Թուրքիայում հանդես գալու որպես «ոչ ավստրիական քաղաքացիներ», առանց միաբանության անդամներին շնորհված արտոնությունների չեմ մեղանչելու, եւ մենք, վերջապես, նաեւ համոզված ենք, որ արտաքին գործերի նախարարությունը մեր կողմից այդպիսի վարվելակերպը իրավամբ չէր ընդունի եւ չէր արտոնի: Այս պարագաներում եւ նշված պատճառներով մենք ստիպված ենք հնազանդաբար եւ թախանձագին խնդրելու արտաքին գործերի նախարարությանը՝ վերջ դնելու այս անորոշ վիճակին, որպեսզի միաբանության անդամները ընդմիշտ ազատված լինեն այս հոգսից եւ որպես ավստրիացիներ կարողանան իրենց ողջ եռանդով եւ լիակատար հաջողությամբ աշխատել Թուրքիայում ավստրիական շահերի օգտին»[26]:

Պալավիչինին մերժեց այս խնդրանքը: Նա այն կարծիքին էր, որ միաբանության անդամներն այդ արտոնությունների համաձայն թեեւ ավստրիական հպատակներ էին, սակայն ավստրիական քաղաքացիներ չէին եւ հետեւաբար, կարող էին դիմել միայն ավստրո-հունգարական նախարարների եւ դեսպանների պաշտպանությանը[27]:

Բայց Պալավիչինին շարունակում էր հետեւել հայերի հալածմանը: 1915 թ. նոյեմբերի 12-ին նա մի զեկուցագրում գրում է, որ Մեծ վեզիրի հետ զրուցելիս ասել է, թե *«այլեւս հազիվ թե կարելի լինի խոսել Թուրքիայում սահմանադրական ռեժիմի մասին, որովհետեւ սահմանադրական պետության մեջ օրենքները յուրաքանչյուրի համար են, մինչդեռ դրանք այստեղ չի հարգում ինքը՝ կառավարությունը: Ոչ մահմեդական տարրերը Թուրքիայում չեն վայելում օրենքների նույն պաշտպանությունը, ինչպես վայելում են մահմեդականները»*[28]:

Մեկը, որ միշտ պաշտպանում էր հայերին, գերմանացի քահանա դոկտոր Յոհաննես Լեփսիուսն էր: Հայերի հալածանքների ժամանակ Լեփսիուսին իր բարեկամների օգնությամբ հաջողվեց գալ Կ. Պոլիս, որտեղ նա հնարավորություն ունեցավ հանդիպելու Էնվեր փաշայի հետ: Էնվերի հետ զրույցը եւ այն, թե ինչպես էր նա պաշտպա-

նում հայերի հանդեպ տարվող քաղաքականությունը, ճնշող տպավորություն թողեցին Լեփսիուսի վրա: Նրան թույլ չտվեցին գնալու երկրի խորքը: Լեփսիուսը Կ. Պոլսի իր բարեկամների օգնությամբ փաստեր եւ փաստաթղթեր հավաքեց հայերի հալածանքների վերաբերյալ եւ վերադարձավ Գերմանիա՝ գաղտնի ներմուծելով եւ այն փաստաթղթերը, որոնք մասամբ կարել էր ճամպրուկի ներսում: Լեփսիուսը մի մանրամասն հուշագիր ներկայացրեց արտաքին գործերի նախարարությանը[29]:

1914 թ. նոյեմբերին Կ. Պոլսում գերմանական դեսպանության կապլան դոկտոր Շռաուբինգերը մի զեկուցում կարդաց, որի մեջ հանդես եկավ որպես հայերի օգնության կողմնակից, դրա միակ միջոցը համարելով դիվանագիտական հովանավորությունն ու դրամական օգնությունը: Նա ասում էր.

«Ցավոք, Եվրոպայում այստեղի քրիստոնյաներին քիչ են համակրում, եւ հատկապես նրանց անհնազանդության պատճառով թերահավատ են նրանց նկատմամբ: Սակայն, եթե իմանաս այդ երկրների պատմությունը, ապա որոշ բաներ կհասկանաս եւ հակված կլինես նրանց օգտին գործելու: Հնարավոր չէ հերքել, որ նրանք հարյուրամյակներ շարունակ ամենաանբարենպաստ պայմաններում համառորեն կառչած են իրենց հայրերի հավատքին եւ մայրենի լեզվին, ինչպես եւ այն, որ նրանք մշակույթի եւ առաջընթացի շատ ավելի հասկացողություն են ցուցաբերում, քան իրենց շրջապատը: Ավստրո-Հունգարիան բնական պատճառներով արդեն ավելի շատ է շահագրգռված պահպանելու կաթոլիկական միսիան, քան Գերմանիան, որտեղ մեծամասնությունը բողոքականներ են: Վերջինս շահագրգռված է նաեւ իսլամի վերակենդանացման գործում, որն իր սուրը, ի վերջո, ուղղելու է քրիստոնեության դեմ: Այս գործում Ավստրո-Հունգարիան քիչ է շահագրգռված, քան Գերմանիան, էլ չասենք, որ ավստրիական կայսերական տունն արեւելքում շատ բան է արել կաթոլիկական միսիայի համար: Այդ պատճառով Գերմանիայից չպետք է սպասել կաթոլիկական շահերի ազդու պաշտպանությունը»[30]:

1915 թ. հոկտեմբերի 15-ին Լեփսիուսի շնորհիվ ակտիվացած ավետարանական հաստատությունները թախանձագին դիմում ուղղեցին ռայխսկանցլերին[31]: Լեփսիուսի շնորհիվ ակտիվացել էին նաեւ Գերմանիայի կաթոլիկները: 1915 թ. նոյեմբերի 25-ին Վիեննայի կարդինալ Պիֆլը Գերմանիայի եւ Ավստրո-Հունգարիայի բարձրաստիճան կաթոլիկական հոգեւորականներին հրավիրեց՝ *«Սուրբ հողում եւ Փոքր Ասիայում կաթոլիկական միսիայի ներկա կացության մասին կարեւոր խորհրդակցության»*:

Խորհրդակցության սկզբում զեկուցումով հանդես եկավ Մյունստերի համալսարանի պրոֆեսոր դոկտոր Շմիդլինը:

Հասնելով հայերին՝ նա ասաց.

«Ինչ վերաբերում է քրիստոնյա արեւելցիներին, ապա պետք է դիվանագիտական միջամտության նպատակով սահմանափակվել նյութական օգնությամբ եւ բողոքներով՝ ուղղված մեր կառավարություններին, եթե մենք չենք ուզում մի կողմից գրգռել թուրքերի վրդովմունքը, իսկ մյուս կողմից մեզ մեղավոր համարելու համար արեւելցիների եւ ազգերի կողմից: Մեզ անմիջապես վրդովում է միսիաների վիճակը»:

Զեկուցումից հետո կարդինալ Պիֆլն ասաց, որ *«իրենք խուսափում են այն ամենից, ինչ կարող է վիրավորել թուրքական կառավարության քաղաքական նրբանկատությունը, եւ որ բոլոր վճիռները կայացվում են Սուրբ Աթոռի համաձայնության պայմանով»*[32]: Քրիստոնեական որոշ բարձրաստիճան անձանց «քրիստոնեական սիրո» կեղծությունը չի կարելի ավելի լավ փաստել:

Գերմանական կառավարությունը թույլատրեց երեսփոխան էռցբեռգերին մեկնել Թուրքիա՝ կաթոլիկների կացությանը տեղում ծանոթանալու համար: 1916 թ. փետրվարի 10-ին էռցբեռգերը, այլ հարցերի թվում, էնվերի եւ Թալեաթի հետ խոսեց եւ հայերի մասին: Այդ զրույցները հետեւյալ կերպ էին ընթանում:

«1. Էնվեր փաշայի հետ, որը խոստացավ, որ հայերի դեմ այլեւս միջոցներ ձեռք չեն առնվի, իսկ քշված հայերը կբնակեցվեն փակ բնակավայրերում: Երաշխավորվեց կրոնի ազատությունը:

2. Թալեաթի հետ, որը պատերազմի նպատակը համարեց Թուրքիայի լիակատար անկախությունը: Գերմանիան բոլոր հարցերի մասին պիտի պայմանավորվի Թուրքիայի հետ, նաեւ պայմանագրերի փոխանակման մասին, այդ դեպքում ամեն ինչ հնարավոր կլինի կարգավորել: Հայկական եկեղեցիները կբացվեն, Թալեաթն ասաց, որ քրիստոնյաների արտաքսումները կամ բռնությունները Սիրիայում բացառվում են: Հոգեւոր ճեմարաններն ու ուսումնական հաստատությունները կարող են նորից բացվել, միայն թե դրանից չպետք է տուժեն Թուրքիայի պետական շահերը, այս կապակցությամբ ես կարող էի տալ հանգստացնող խոստումներ: Այդ բոլոր հարցերը ես պետք է ներկայացնեմ նախարարներին հուշագրի ձեւով, որը կմշակվի իմ՝ Գերմանիա ժամանելուց հետո եւ կհանձնվի Կ. Պոլսում դեսպանության միջոցով»[33]:

Վերադառնալով Գերմանիա՝ էռցբեռգերը 1916 թ. փետրվարի 28-ին նամակով կարդինալ Պիֆլին հաղորդեց իր գործողությունների մասին.

«1. Գերմանացի կաթոլիկների ակցիան:

2. Հայերի հարցը:

3. Միություն Բուլղարիայի հետ:

Ես այսօր մեկնելու եմ Մյունխեն Հռոմի պապի նվիրական տեղակալ կարդինալ Ֆոյուվիռթի հետ նախապատրաստական քայլերը մանրամասնորեն քննարկելու համար: Մյունխենի բանակցությունների հիման վրա ես կկազմեմ հուշագրի նախագիծը, որը պետք է ներկայացվի թուրքական կառավարությանը, եւ այդ հուշագիրը կուղարկեմ Ձերդ գերազանցությանը՝ խնդրանքով, որպեսզի ավստրիական դիվանագետները եւս օժանդակություն ցույց տան այս ակցիային»[34]:

1916 թ. մարտի 3-ին էռցբեռգերը Գերմանիայի արտաքին գործերի նախարարությանն ուղղված նամակում խնդրեց էնվերին ու Թալեաթին հանձնել «Քրիստոնյա-

ների օգտին Թուրքիայում միջոցառումների մասին. կաթոլիկ հայերի կացությունը» վերնագրով իր հուշագիրը: Այդ հուշագրում էռցբեռգերը միջոցառումներ է առաջարկում կաթոլիկ հայերին փրկելու համար: Նա գրում է.

«Այս միջոցառումների իրականացմամբ կարելի է հասնել այն բանին, որ հանդարտվի նաեւ Կենտրոնական Եվրոպայի երկրների քրիստոնյաների շրջանում առկա վրդովմունքը»[35]:

1916 թ. մարտին Վիեննայի կարդինալ Պիֆլը եւ Պրագայի կարդինալ արքեպիսկոպոս Լեո Սկրբենսկին Ավստրո-Հունգարիայի կառավարությանը մի հուշագիր հանձնեցին, որով կոչ էին անում որպես դաշնակիցներ *«Թուրքիային պարտադրել դադարեցնելու հայերի զանգվածային սպանություններն ու բնաջնջումը»*[36]:

1916 թ. հունիսի 28-ին Բուրյանը մի գրություն հղեց Հունգարիայի վարչապետ Տիսային, որով տեղեկացնում էր նրան թուրքական դեսպանի բողոք-նամակի մասին: Դեսպանը բողոքել էր, որ կարդինալ Չերնոխը միջնորդել է հունգարական ժողովրդական կուսակցության առաջ, որպեսզի սա հարցապնդում անի հունգարական պառլամենտում Թուրքիայում հայերի կացության մասին[37]: Բացի դա, նա ծագումով հայ հունգարացի մի լրագրողի հանձնարարել էր մեկնելու Կ. Պոլիս՝ տեղում պատկերացում կազմելու հայերի հալածանքների մասին: 1916 թ. հուլիսի 6-ին կարդինալ Չերնոխը շտապեց հերքելու այդ պնդումները. նա գրեց կոմս Տիսային, որ պատերազմի սկզբից չի հանդիպել եւ չի գրել ոչ մի հայ հոգեւորականի:

Չերնոխը գրում է.

«Ոչ մի պահ ինձ չի զբաղեցրել հայերի հարցով հունգարական կառավարությանը հարցապնդում անելու միտքը: Ես ունակ չեմ նման անտակտության: Խնդրում եմ, բարի լինես արտաքին գործերի նախարարության միջոցով հանգստացնելու թուրքական դեսպանին՝ ասելով, որ ես անկեղծորեն ցանկանում եմ պահպանել հունգարա-թուրքական բարի հարաբերությունները եւ հուսով եմ, որ թուրքական կառավարությունը կրոնի պատճառով չի հալածում իր հպատակներից ոչ մեկին, այլ պաշտպանում է նրանց մոլեռանդությունից»[38]:

Երբ հայ ընտանիքներին սկսեցին ստիպել իսլամ ընդունել, Պալավիչինին Թալեաթի հետ զրույցի ժամանակ փորձեց միջամտել այս հարցում: Թալեաթը խոստացավ անմիջապես համապատասխան միջոցներ ձեռք առնել[39]:

Երկու օր անց Պալավիչինին մի հեռագիր ստացավ Ադրիանապոլից, որով հաղորդվում էր, որ գայմգամն իր մոտ է կանչել իսլամի անցած հայերին եւ հայտարարել, որ նրանք նորից քրիստոնյա են եւ պիտի օգտագործեն իրենց քրիստոնեական անունները: Չնայած դրան, ըստ այս հեռագրի, բռնագաղթի վախից շատերը իսլամ էին ընդունել[40]: 1916 թ. մարտի 19-ին Մխիթարյան քահանա Թերզյանը Կ. Պոլսից նամակ գրեց կարդինալ Պիֆլին, որով շնորհակալություն էր հայտնում այն երեք հազար կրոնի համար, որ ստացել էին կաթոլիկ հայերը , եւ միաժամանակ խնդրում էր ուղարկել

լրացուցիչ դրամական միջոցներ[41]: 1917 թ. հայր Թերզյանի անունով երկու հազար կրոն Կ. Պոլսից փոխանցեց նաեւ հունգարական եպիսկոպոսների կոնֆերանսը[42]: 1916 թ. մարտի 31-ին Կ. Պոլսում գերմանական դեսպանության կապլան Շտրաուբինգերը գրեց Ռայխստագի երեսփոխան էռցբեռգերին.

«Ես լրիվ հասկանում եմ, որ Գերմանիայի եւ Ավստրո-Հունգարիայի կաթոլիկական շրջանները կորցրել են համբերությունը ու ինձ, գուցե եւ Ձեզ, հեղեղում են կշտամբանքներով: Բայց այն, ինչին այստեղ հասնում ենք, իրոք շատ չէ, եւ այն, ինչին որ չենք հասնում, շատ ավելին է: Մինչեւ հիմա մեր ձեռքբերումներն են օգնությունը հայերին հալեպում՝ Քյոլնից ստացած գումարի միջոցով, նաեւ օգնությունը ծայրահեղ դժվար դրության մեջ գտնվող հայ պատրիարքությանը, որի համար օրերս շնորհակալական նամակ կստացվի: Առաջարկություն՝ մինչ այժմ մեր արածը միայն մի կաթիլ ջուր է ծովում: Անգամ ամենասարսափելի մեծ կարիքի մեղմացման համար մեզ հարկավոր է մի քանի հարյուր հազար մարկ: Եկեղեցական հանգանակություն պիտի արվի, ինչպես արվել է Լեհաստանի համար, մեզ արդեն պետք է կանխավճար տրվի (գուցե միսիայի դրամարկղից): Առանց փողի մենք ոչինչ չենք կարող անել: Փողը շուտ պիտի գա, շատ շուտ: Այլապես կկործանվի շատ բան, ինչ հիմա դեռ հնարավոր է փրկել: Կարիքի մեջ գտնվող հայերի համար մինչեւ այժմ հավաքվել է ընդամենը տասնհինգ հազար մարկ»[43]:

Զմյուռնիայում հայերին պաշտպանեց գեներալ Լիման Ֆոն Զանդերսը, երբ 1916 թ. նոյեմբերին հայկական գերեզմանատներից մեկում հին հրացաններ ու ռումբեր հայտնաբերվեցին: Ֆոն Զանդերսն արգելեց հայերի արտաքսումը Զմյուռնիայից: Սակայն հենց որ նա այնտեղից հեռացավ, հայերի հալածանքները շարունակվեցին[44]: Այդ պատճառ դարձավ, որ հայ համայնքի անդամները գաղտնի այցելեցին Ավստրո-Հունգարիայի հյուպատոս Ռադիմսկուն եւ խնդրեցին նրա միջամտությունը[45]: Մինչեւ հոկտեմբերյան հեղաշրջումը Ռուսաստանում Գերմանիան եւ Ավստրո-Հունգարիան հայ ժողովրդին օգնում էին միայն նյութապես եւ ժամանակ առ ժամանակ, այդ են վկայում փաստաթղթերը: Դիվանագետների միջնորդություններն արձագանք չէին գտնում ամենից առաջ այն պատճառով, որ բարեկամաբար էին արվում կամ այնպես, որ *«թուրքերը դժվար թե ունենային այն զգացումը, որ իրենց վարվելակերպից դժգոհ են»*[46]:

Մայիսի վերջին Հայաստանը, Վրաստանը եւ Անդրկովկասի արեւելյան հատվածը (թաթարները) իրենց անկախ հանրապետություններ հռչակեցին: Այս հանրապետությունների հետ հաշտություն կնքելու նպատակով նրանց պատվիրակներին հրավիրեցին Կ. Պոլիս: Հայաստանի պատվիրակներն էին հայկական Ազգային խորհրդի առաջին նախագահ Ահարոնյանը եւ արտաքին գործերի նախարար Խատիսյանը: Նրանք այցելեցին Գերմանիայի եւ Ավստրո-Հունգարիայի դեսպանությունները եւ հույս հայտնեցին, որ գերմանական խմբավորման երկրները կօգնեն Հայաստանին[47]: Երկու հայ պատվիրակներ՝ Օհանջանյանը եւ Ամելովը, մեկնեցին Բեռլին: Գերմանա-

կան եւ ավստրո-հունգարական կառավարություններին ուղղած հուշագրում նրանք գրում էին հայ ժողովրդի կացության, փախստականների ու նրանց թշվառության, համաճարակների ու սովի մասին: Վերջում նրանք օգնություն էին խնդրում[48]: Սովահար փախստականներին օգնելու թախանձագին կոչով հայ եպիսկոպոս Մեսրոպը դիմեց Կրեսին եւ բարոն Ֆրանկենշտայնին: Ֆրանկենշտայնը մի ավստրո-հունգարական զինվորական բժշկի հետ մեկնեց Հայաստան: Ուղեւորության արդյունքների մասին մենք արդեն խոսել ենք «Հայաստանի Հանրապետություն» գլխում:

Բուրյանին ներկայացրած հուշագրում Հայաստանի խնդրանքների 3-րդ կետը Ավստրո-Հունգարիային հետեւյալն էր.

«3. Հայաստանը խնդրում է ավստրո-հունգարական զորամիավորում ուղարկել Հայաստան, երկրին նեցուկ լինելու համար այնպես, ինչպես Գերմանիան այդ անում է Վրաստանի համար: Այդ նպատակով խնդրվում է Երեւան ուղարկել նաեւ Ավստրո-Հունգարիայի դիվանագիտական ներկայացուցչի»[49]:

Սիլասսին՝ Ավստրո-Հունգարիայի գործերի հավատարմատարը Կ. Պոլսում, այն կարծիքին էր, որ Ավստրո-Հունգարիայի զորքի ժամանումը Հայաստան կոնֆլիկտ կառաջացնի ավստրո-հունգարական կառավարության եւ Հայաստանի հարեւան պետությունների՝ Թուրքիայի եւ Ռուսաստանի միջեւ:

«Հիրավի, որպես միապետության առաջին գաղութ՝ այս «կովկասյան Մակեդոնիան», հազիվ թե հարմար է (կայսրության համար), - գրում էր Սիլասսին, - *ինչ էլ որ լինի, համենայնդեպս, ես դժբախտություն կհամարեի միապետության ամեն մի իրական միջամտություն խլուրդների այդ բնում՝ Կովկասում»*[50]: Գերմանիան, անշուշտ, հավանություն կտար այդ քայլին[51]: Բայց երբ Թուրքիան 1918 թ. ներխուժեց Հայաստան, Թուրքիայում Ավստրո-Հունգարիայի ռազմական ներկայացուցիչը զեկույց ներկայացրեց Վիեննա. *«Ամենախելոք եւ միակ հնարավոր բանն այն է, որ մենք թուրքերի ծգտումներին չխանգարենք: Թուրքիան մեր անկեղծ դաշնակիցն էր եւ հիմա էլ կա... Նա մեզ համար ավելի կարեւոր է, քան թե Հայաստանը»*[52]:

Ավստրո-հունգարիայի բանակի գլխավոր հրամանատարությունը 1918 թ. սեպտեմբերի 15-ին հանձնարարեց Պոմյանովսկուն հայ փախստականների վերաբերյալ խոսելու Էնվեր փաշայի հետ[53]:

Սեպտեմբերի 23-ին թուրքական կողմը հայտարարեց, որ հայերի մի որոշակի քանակ կարող է վերադառնալ Բաթումի մարզը եւ Ալեքսանդրապոլ-Զուլֆա-Թավրիզ երկաթուղուց հյուսիս ընկած շրջանը[54]: Պալավիչինին պահանջեց թուրքական կառավարությունից գոնե սննդամթերքով ապահովելու փախստականներին, որպեսզի չկործանվեն սովից ու ցրտից[55]: Հոկտեմբերի 3-ին Թալեաթի կառավարությունը հրաժարական տվեց: Նոր թուրքական կաբինետը հոկտեմբերի 14-ին զինադադարի առաջարկությամբ նոտա հղեց Վիլսոնին: Զինադադարը ստորագրվեց հոկտեմբերի 30-ին: Նոյեմբերի 3-ին զինադադարի պայմանագիրը ստորագրեց Ավստրո-Հունգարիան, իսկ նոյեմբերի 11-ին՝ Գերմանիան: Եվ այսպես, ավարտվեց այն պատերազմը, որը

տասը միլիոն մարդու կյանք խլեց: Մի պատերազմ, որում հայ ժողովուրդը մեկ ու կես միլիոն զոհեր տվեց: Նրանք չէին ընկել ռազմի դաշտում, այլ իրենց սեփական իշխանության մարդատյաց քաղաքականության պատճառով զոհ էին գնացել բռնագաղթին, կոտորածներին, սովին ու համաճարակներին: Ինչպես բազմաթիվ փաստաթղթերն են ապացուցում, Թուրքիայի դաշնակիցները վճռական քայլերի չդիմեցին, որպեսզի փրկեին հայերին բնաջնջումից: Նրանք պնդում էին, որ չեն ուզում միջամտել Թուրքիայի ներքին գործերին: Սակայն իրավացի է Կարլ Յասպերսը, երբ ասում է. *«Որեւէ պետության ներքին գործերին չմիջամտելու սկզբունքը պատրվակ է անարդարություն թույլ տալու համար»*[56]:

Նախ եւ առաջ տիրում էր այն կարծիքը, թե հայերը բարեկամաբար են տրամադրված Անտանտի նկատմամբ, այնպես որ վտանգ կար, որ նրանք կարող են հինգերորդ շարասյուն կազմել գերմանական խմբավորման երկրների դեմ: Այդ պատճառով Թուրքիայի դաշնակիցները հավանություն էին տվել հայերի տեղահանմանը սահմանամերձ շրջաններից:

Երբ կոտորածների մասին հայտնի դարձավ, նրանք, ովքեր պահանջել էին հայերին տեղահանել, պարտավոր էին իրենց զինվորների միջոցով վերահսկել բռնագաղթը: Դրա համար անհրաժեշտ կլինեին մի քանի գումարտակներ, որոնք կարելի էր կազմել գերմանացիներից ու ավստրոհունգարացիներից: Իհարկե, հնարավոր չէր լինի փրկել բոլոր տեղահանված հայերին, բայց 1,5 միլիոն սպանվածների մոտավորապես 2/3-ին, թերեւս, հնարավոր կլիներ փրկել: Այն, որ ցանկության դեպքում օգնությունը անհնար չէր, ապացուցում են երկու դեպք: 1914 թ. դեկտեմբերին Ջեմալ բեյը պաղեստինցի հրեաների արտաքսման հրաման էր տվել, սակայն Վանգենհայմի ճնշման տակ նույն թվականի դեկտեմբերի 18-ին այդ հրամանը չեղյալ համարվեց: Նույն ձեւով պաշտպանեցին նաեւ վրացիներին, երբ թուրքերը 1918 թ. դեպի Թիֆլիս էին գնում: Գերմանական գումարտակները կռվում էին վրացիների հետ միասին թուրքական բանակի դեմ: Գերմանացիների մեջ եղան սպանվածներ եւ վիրավորներ[57]:

Տեսնելով գերմանացիների դիմադրությունը ինչպես պատերազմի դաշտում, այնպես էլ քաղաքական մակարդակով, թուրքերը հրաժարվեցին Վրաստանը գրավելու մտքից եւ ետ քաշվեցին: Դա իսկական օգնություն էր ի տարբերություն այն զուտ ձեւական բողոքների, որոնցով պարծենում էին թուրքերի դաշնակիցները, պնդելով, թե արել են ամեն ինչ հայերի կոտորածները դադարեցնելու համար: Թուրքական պետական գործիչները հաճախ զարմանում էին, երբ նրանց դաշնակիցները սկզբում հավանություն էին տալիս հայերի դեմ ուղղված իրենց միջոցառումներին, իսկ հետո դատապարտում էին դրանք:

Հղումներ

1. J. Lepsius, "Deutschland und Armenien 1914-18", S. 25.
2. Wien, HHStA PA XII 209. Konstantinopel, 29. April 1915, Nr. 32/P. D.
3. Նույն տեղում:

4. Wien, HHStA PA XII 209, Pera, 1. Mai 1915, Nr. 247.
5. Wien, HHStA PA XII 209, Pera, 2. Mai 1915, Nr. 352.
6. R. Hovannisian, "Armenia on the ...", S. 52.
7. Wien, HHStA PA XII 209, Konstantinopel, 24. Juni 1915, Nr. 49/P. F.
8. Նույն տեղում:
9. Wien, HHStA PA XII 209, Konstantinopel, 27. Juni 1915, Nr. 50/P. C.
10. Wien, HHStA PA XII 209, Konstantinopel, 8. Juli 1915, Nr. 54/P. C.
11. Wien, HHStA PA XII 209, Jeniköj, 31. August 1915, Nr. 71/P. B.
12. Wien, HHStA PA XII 209, Jeniköj, 3. September 1915, Nr. 72/P. H.
13. Wien, Diözesan-Archiv, Maria Empfängnis Verein II/Orientverein, 10. Februar 1916.
14. Wien, HHStA PA XII 464 Trapezunt, 24. September 1915, Z 63/P.
15. Wien, HHStA PA XII 464, Konstantinopel, 8. Jänner 1916, Nr. 2/P. G.
16. Wien, HHStA PA XII 464 Wien, 24. Oktober 1915, Nr. 4946.
17. Hamdes Amsorya, Nr. 7, Wien, Juli 1920, S. 190.
18. Wien, HHStA PA XII 463 Adrianopel, 29. Oktober. Z 95.
19. Wien, HHStA PA XII 463 Adrianopel, 8. März 1915, Z 21/P.
20. Brief an den Verbasser vom 11. Juni 1984.
21. Wien, HHStA PA XII 463, Konstantinopel, 10. November 1915. Nr. 94/P. B.
22. Wien, HHStA PA XII 463, Konstantinopel, 7. November 1915. Nr. 93/P. D.
23. Wien, HHStA PA XII 463, Pera, 10. November 1915, Nr. 845.
24. Wien, HHStA PA XII 463, Pera, 10. November 1915, Nr. 853.
25. Wien, HHStA PA XII 463, Konstantinopel, 20. November 1915, Nr. 97/P. G.
26. Wien, HHStA PA XII 464 Wien, 24. November 1915, Nr. 5327.
27. Wien, HHStA PA XII 464, Konstantinopel, 7. Dezember 1915, Nr. 101/P. C.
28. Wien, HHStA PA I 944, Konstantinopel, 12. November 1915, Nr. 95/P. A. B.
29. Goltz, Referat, 6. April 1986.
30. Wien, Diözesan-Archiv, Maria Empfangnis Verein, Wien, 25. November 1915.
31. Goltz, Referat, 6. April 1986.
32. Wien, Diozesan-Archiv, Maria Empfangnis Verein, Wien, 25. November 1915.
33. Նույն տեղում, Konstantinopel, 10. Februar 1916.
34. Նույն տեղում, Berlin, 28. Februar 1916.
35. J. Lepsius, "Deutschland und Armenien", S. 241ff.
36. Wien, HHStA PA XII 464, Wien, Marz 1916.
37. Wien, HHStA PA XII 464, Wien, 28. Juni 1916.
38. Wien, HHStA PA XII 464, Bajcs, 17. Juli 1916, Z 4076.
39. Wien, HHStA PA XII 463, Konstantinopel, 17. März 1916, Nr. 22/P. D.
40. Նույն տեղում:
41. Wien, Diözesan Archiv, Nr. 18/P. F.
42. Budapest, Ungar-Archiv, D/A-6199/1917.
43. Wien, Diözesan Archiv, Nr. 26/P. C.
44. Wien, HHStA PA XII 463 Smirna, 12. November 1916, Nr. 82/P.
45. Wien, HHStA PA XII 463 Smirna, 3. Dezember 1916, Nr. 90/P.
46. Wien, HHStA PA XL 274, Konstantinopel, 14. Janner 1916, Nr. 23.
47. Wien, HHStA PA XX 157 Pera, 25. Juni 1918, Nr. 386.
48. Wien, HHStA PA XX 157 Berlin, 22. Juli 1918, Nr. 82/P. F.
49. Wien, HHStA PA X 157 Wien, 26. Juli 1918, Nr. 466.
50. Wien, HHStA PA X 157 Tiflis, 4. August 1918, Nr. 9/P. A. D.
51. Wien, HHStA PA X 157 Wien, 16. September 1918, Nr. 4490.
52. Wien KA AOK NA 1918, Fasz 5798, Konstantinopel, 20. August 1918, Nr. 21084
53. Wien, HHStA PA X 157 Berlin, 29. August 1918, Nr. 506.
54. Wien, HHStA PA X 157 Berlin, 2. September, Nr. 101/P. A.
55. Wien, HHStA PA X 157 Baden, 24. September 1918, Nr. 33035.
56. Karl Jaspers, "Verunft und Freiheit", Stutgardt 1960, S. 75.
57. Wien, HHStA PA X 156 Konstantinopel, 29. Juni 1918, Nr. 57/P. C.

ՄԵՂՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Թուրքիայում հայերի կոտորածների ժամանակ Անտանտը մեղադրում էր Գերմանիային եւ Ավստրո-Հունգարիային մեղսակցության մեջ, ասելով, որ նրանք ոչինչ չեն ձեռնարկել թուրքերին այդ ոճրագործությունից ետ պահելու համար: Անտանտն այն կարծիքին էր, որ թուրքական կառավարությունը գտնվում էր գերմանական խմբավորման երկրների վերահսկողության տակ, եւ որ այսպիսով Թուրքիայի բոլոր գործողությունները, այդ թվում եւ հայերի տեղահանումը եւ նրանց պլանավորված ոչնչացումը, կատարվել են այդ երկրների լուռ համաձայնությամբ: Փաստն այն է, որ Հայկական բարձրավանդակը Գերմանիայի եւ Ավստրո-Հունգարիայի արեւելյան քաղաքականության համար ամենակարեւոր ռազմավարական մարզերից էր:

«Հայաստանին տիրողը անմիջապես տիրում է ինչպես արեւելյան Փոքր Ասիային, այնպես էլ վերին Միջագետքին,- գրում է Ռոհրբախը,- *Հայաստանն իսկական տրանզիտային երկիր է: Երկու մեծ բնական ճանապարհներ կտրում-անցնում են Արեւելքից դեպի Արեւմուտք, այնպես որ, եթե Թուրքիան պետք է մնա, ապա Հայաստանն էլ պետք է թուրքական մնա, եւ քանի որ մենք պետք է պաշտպանենք Թուրքիային, քանի դեռ կա դրա հնարավորությունը, ապա չի կարելի համաձայնվել, որ Հայաստանն ընկնի Ռուսաստանի ձեռքը»*[1]:

Այս պատճառով մարշալ Գոլցը 1914 թ. փետրվարին գերմանա-ավստրիական ընկերության նիստերից մեկում առաջարկեց հայերին Թուրքահայաստանից տեղափոխել Միջագետք: «Թուրքիան միայն այդպես կարող է պաշտպանվել նոր բարդություններից»,- քարոզում էր Գոլցը[2]:

Աբդուլ Համիդի օրոք մի թուրքական նախարար ասել է. *«Հայկական հարցը վերացնելն ամենահեշտն է. վերացրեք հայերին»*[3]: Իր «թուրքիա» գրքում գերմանացի գիտնական էվալդ Բանզեն այս արտահայտությունը բնութագրել է որպես *«ոչ անարդարացի նախադասություն»*[4]:

Այժմ եկել էր Հայկական հարցը լուծելու ժամանակը: Երբ սկսվեցին հայերի հալածանքները, եւ չնայած թուրքերի բոլոր ջանքերին, դրանք հայտնի դարձան արտասահմանում: Մորգենթաուն ջանում էր համոզել Գերմանիայի եւ Ավստրո-Հունգարիայի դեսպաններին միջամտելու այդ հարցում: Գերմանական դեսպանին իր այցելության մասին նա գրում է.

«Հենց որ առաջին լուրերը Կոստանդնուպոլիս հասան, ինձ համար պարզ էր, որ հայերին օգնելու ամենաճիշտ ձեւը ոճրագործությունների դադարեցումն էր, որը հնարավոր կլիներ բոլոր երկրների ներկայացուցիչների վճռով թուրքական կառավարութ-

յանը կոչ անելու դեպքում: Մարտ ամսվա վերջին ես այցելեցի Վանգենհայմին: Սակայն ինձ պարզ դարձավ հայերի հանդեպ նրա ատելությունը: Նա սկսեց հայերին ամեն առիթով դատապարտել: Նա, Էնվերի ու Թալեաթի նման, Վանի դեպքերի մեջ ապստամբություն էր տեսնում: Նրա կարծիքով, հայերը միայն դավաճան մակաբույծներ էին: «Ես կօգնեմ սիոնիստներին, բայց ինչ էլ որ լինի, հայերին չեմ օգնի, - ասաց նա»[5]:

Բայց երբ Մորգենթաուն սկսեց նեղել իր գերմանական ու ավստրո-հունգարական պաշտոնակիցներին, սրանք իրենց թուրք բարեկամների հետ սկսեցին խոսել հայերի մասին, սակայն, ինչպես արդեն հիշատակել ենք, «բարեկամաբար»:

Թուրքիայի դաշնակիցների մեղսակցությունը բխում էր նաեւ այն հանգամանքից, որ սրանք, հատկապես Գերմանիան, լրիվ վերահսկում էին իրադարձությունները Թուրքիայում: Պոմյանկովսկին գրում է.

«Պատերազմի սկզբից սկսվեց Թուրքիայի իսկական հեղեղումը գերմանացիների կողմից: Քանի որ թուրքերը տրամադրության տակ չունեին իրենց բանակի համար անհրաժեշտ՝ տեխնիկապես պատրաստված անձնակազմ, նրանք ստիպված էին գլխավոր շտաբում, հրետանային, տեխնիկական զորամասերում, ռազմական արդյունաբերությունում ու նավատորմում բոլոր կարեւոր ֆունկցիաները փոխանցել գերմանացիներին եւ Գերմանիայից բերել ոչ միայն հրահանգիչներ, մասնագետներ եւ, ընդհանրապես, ծառայության տարբեր ճյուղերի ղեկավար մարմիններ, այլեւ ստորին անձնակազմ (ենթասպաներ, վարպետներ, հսկիչներ), գործարանների համար նույնիսկ բանվորների մի զգալի մասը: Դարդանելի ու Բոսֆորի պաշտպանության ապահովումը, ծանր հրետանու սպասարկումը, ամրությունների ուժեղացումը, կապի ծառայությունը, ծովային ականներ դնելը, այս ամենը ստանձնեցին եւ զբաղեցրին իրենց անձնակազմով գերմանացիները»[6]:

Վանգենհայմը պատմում է Կ. Պոլսում Հոլանդիայի հյուպատոսին, որ *«Դարդանելում յուրաքանչյուր թուրքական թնդանոթի հետեւում գերմանացի հրետանավոր է կանգնած», սրա վրա հոլանդացին նկատեց, որ արդեն պատերազմից առաջ Թուրքիայում շատ ավելի գերմանական սպաներ են եղել, քան պետք է լինեին զինվորական միսիայի մասին համաձայնագրով»[7]:*

Էնվերի ու Թալեաթի՝ Գերմանիայից ու Ավստրո-Հունգարիայից կախվածության մասին է խոսում ավստրո-հունգարական տեղեկություններից մեկի զեկուցագիրը.

«Անվերապահորեն հուսալի են միայն Էնվերն ու Թալեաթը: Էնվերը գիտի, որ իր ճակատագիրը կապված է այս պատերազմի եւ Գերմանիայի ու Ավստրո-Հունգարիայի դաշինքի հետ եւ որ ինքն այլեւս իրավունք չունի տատանվելու...»[8]:

Պոմյանկովսկին նույնպես այն կարծիքին էր, որ երիտթուրքերի առաջնորդները լրիվ գերմանական ազդեցության տակ են գտնվում.

«Կոմիտեի ամենաազդեցիկ անդամներն էին ու դրանով իսկ Թուրքիայում իսկա-

կան իշխանավորներ էին Էնվերը, Ջեմալը եւ Թալեաթը... Լինելով խելացի, սակայն հիմնովին ոչ մի ուսում չառած եւ իրենց կառավարման բնագավառում քիչ թե շատ դիլետանտ այս երեքը մասնագիտական գիտելիքների պակասը լրացնում էին իրենց մեծ եռանդով, բիրտ անողորմությամբ եւ նույնիսկ դաժանությամբ: Չունենալով եվրոպական բավարար գիտելիքներ եւ բավականաչափ ծանոթ չլինելով եվրոպական ուժերի հարաբերակցությանը՝ նրանք լիովին գտնվում էին Գերմանիայի ուժերի ծաղկման տպավորության տակ եւ կուրորեն հավատում էին նրա վերջնական հաղթանակին: Առանց բավարար քննության, նրանք հետեւում էին բեռլինյան կառավարության հաճախ եսասիրական խորհուրդներին ու ցանկություններին եւ դրանով իսկ Թուրքիային կործանման հասցրին»[9]:

Արդեն 1914 թ. նոյեմբերի 19-ին Պալավիչինին հաղորդել է Վիեննա.

«Թուրքիան այսօր Ավստրո-Հունգարիայի եւ Գերմանիայի ազդեցության տակ է: Այն հանգամանքը, որ Գերմանիայի ազդեցությունն ավելի մեծ է, բացատրվում է նրանով, որ նրա ձեռքում են թուրքական բանակն ու նավատորմը, եւ բացի այդ, գերմանական կառավարությունն իր տրամադրության տակ գտնվող շատ խոշոր կանխիկ միջոցների շնորհիվ ի վիճակի է իր ուզածն այստեղ իրականացնելու... Հիմա արդեն բազմաթիվ առիթներով երեւում է, որ գերմանացիները Թուրքիան դիտում են որպես բացառապես իրենց գործունեության ոլորտ եւ իրենց ամեն ինչում Թուրքիայի տերերի պես են պահում»[10]:

Գերմանիայի ու Ավստրո-Հունգարիայի մեղսակցությունը խոսակցության առարկա էր դարձել նաեւ Թուրքիայում, այնպես որ ավստրո-հունգարական պաշտոնյաները ստիպված էին զբաղվել այդ հարցով: 1915 թ. սեպտեմբերի 12-ին մի տեղեկատու գրում է.

«Հայերը Թուրքիայում հուսահատ վիճակում են գտնվում: Իրոք որ այժմ գործ ունենք այլեւս ոչ թե այն տարրերի արտաքսման հետ, որոնց ուզում են կապել Վանում հեղափոխական ապստամբությունների հետ, այլ ամբողջ մի ազգի ոչնչացման քայլի հետ... Հաշտությունը կնքելուց հետո... անշուշտ, քննարկման առարկա կդառնան կամայականության այն գործողությունները եւ գազանությունները, որոնց զոհ են գնացել հայերը: Ռուսները, անգլիացիներն ու ֆրանսիացիները չեն վարանի հարուստ նյութի հիման վրա խարազանելու հայկական հարցը, եւ նրանք բավականությամբ կնշավակեն այն ազգություններին, որին զոհ է գնացել այդ այնուամենայնիվ բարձր զարգացած ազգը: Պետք է վախենալ, որ այդ մեղադրանքը գլխավորապես կվերաբերի Գերմանիային, որովհետեւ այն գովքը, որ գերմանացիները շռայլել են Թուրքիայի հասցեին, կդիտվի որպես հավանություն, ընդհանրապես, Թուրքիայի գործելակեպ: Գերմանիայի վրա կբարդեն թուրքերի ծանր զանցառությունների մեղքի մեծ մասը, որովհետեւ հակառակորդները կհավատացնեն, որ Թուրքիան, որն ամեն ինչում հետեւել է գերմանացիների նախաձեռնությանը, հայերի հալածանքները եւս կատարել է

N° 70
P

Trapezunt, am 22. Oktober 1915.

Gegenstand: Armenier-Verfolgung.

Vertraulich.

An Seine Exzellenz

den Herrn k. und k. Minister des kaiserl.
und königl. Hauses und des Aeussern, Stephan Baron Burián
in
Wien.

Aus gewöhnlich verlässlicher deutscher Quelle erfahre ich, dass die erste Anregung zur Unschädlichmachung der Armenier - allerdings nicht in der tatsächlich durchgeführten Weise - von deutscher Seite erfolgt sei.

Gleichlautend berichte ich nach Konstantinopel.

Der k.und k. Konsul:

5338.

EINLANGT
18.JUN 1917

Zl. 21
pol.

Samsun, am 26. Mai 1917.

Viscount Bryce: The treatment of the Armenians in the Ottoman Empire 1915/16.

An Seine Exzellenz

dem Herrn k. und k. Minister des kaiserl.
und königl. Hauses und des Aeussern,
OTTOKAR, GRAFEN CZERNIN von CHUDENITZ,
in
Wien.

So weit ich bisher in dies Buch Einsicht nehmen konnte, beruht dessen Inhalt, meinen Wahrnehmungen und Erkundigungen nach, zum grossen Teil auf Wahrheit.

Schon von Trapezunt aus hatte ich Gelegenheit, die offenbar auftragsgemässe Abschwächung der türkischerseits an den Armeniern begangenen Grausamkeiten, durch die Kaiserlich Deutschen Konsuln Grafen von der Schulenburg (Erzerum) und Dr. Bergfeld (Trapezunt) zu beleuchten.

Nachträglich erfuhr ich noch, dass das Eintreten Herrn Scheubner's, Deutschen Amtsleiters in Erzerum, zugunsten der Armenier, nicht die Billigung der Deutschen Botschaft und der Militär-Mission fand, und Graf von der Schulenburg von dieser Stelle und auch von General Bronssart beauftragt wurde, eine andere Haltung einzunehmen.

Erst persönliche Wahrnehmungen, u.a. auf der Akropolis von Kara-Hissar, wo Graf Schulenburg noch im Mai v.J. halbverweste Frauen- und Kinderleichen vorfand, veranlassten ihn zur Aenderung seiner Anschauung und Berichterstattung. -

Der der Deutsch-Georgischen Mission zugeteilt ge-

./.

wesene Stabsarzt Dr. H. Stoffels teilte mir erst kürzlich mit, dass er im Herbste 1915, zwischen Musch und Saërt, in einer grösseren Anzahl früher armenischer Ortschaften in Kirchen und Häusern verkohlte und verweste Frauen- und Kinderleichen gesehen habe.

Gleichlautend berichte ich nach Konstantinopel.

Der k.u.k. Konsul:

Durch die k.u.k. Botschaft
in Konstantinopel.

Գերմանիայի գիտությամբ եւ լուռ համաձայնությամբ»[11]:

Այս զեկուցագրից հստակ երեւում է, թե որքան մեծ է Գերմանիայի պատասխանատվությունը:

Նույնիսկ Պալավիչինին հայերի հալածանքները բխեցնում է Գերմանիայի նախաձեռնությամբ Թուրքիայի կողմից հռչակած սրբազան պատերազմից.

«Սրբազան պատերազմի հռչակումը եւ հատկապես Գերմանիայի կողմից մեծապես չափազանցված կոկետությունը իսլամի հետ այն հետեւանքն ունեցավ, որ ղեկավար պետական գործիչները Թուրքիայում եւ հատկապես խելացի, բայց վերին աստիճանի անկիրթ մոլեռանդները՝ ինչպես Թալեաթը եւ նրա բոլոր կողմնակիցներն ավելի հաստատվեցին իրենց չափազանցված գաղափարում եւ որ նրանք մղվեցին դեպի օտարների հանդեպ թշնամական ազգային-մահմեդական քաղաքականությունը... Սանձարձակությունը հայկական տարրի դեմ առաջին քայլն էր այդ ուղղությամբ»[12]:

Ավստրո-Հունգարիայի բանակի գլխավոր հրամանատարության զեկուցումներից մեկում (1915-ի հոկտեմբերի 8-ին) ասվում է.

«Թուրքական շրջաններում նկատվում է այն մտայնությունը, որ թուրքական կառավարության գործողությունները հայերի դեմ կատարվում են Գերմանիայի համաձայնությամբ»[13]:

1916 թ. մարտի 19-ի զեկուցագրում կարդում ենք.

«Այդ դեպքերի (հայերի հալածանքներ Վանում. 30 հազար սպանվել են, 500-600 հազարը՝ բռնի վերաբնակեցվել, որոնցից շուրջ 400 հազարը կործանվել են) համար պատասխանատու են դարձնում Կենտրոնական Եվրոպայի երկրներին, քանի որ սրանք կարող էին կասեցնել այն»[14]:

Գերմանացիները հերքում են այն ամենը, ինչ կապված էր իրենց մեղսակցության հարցի հետ:

1915 թ. հոկտեմբերի 12-ին «Wochenbaltt der Frankfurter Zeitung» շաբաթաթերթը գրեց.

«Հայաստանից ամերիկյան կողմից լուրեր են գալիս, որ Թուրքիան այնտեղ մեղանչել է ապստամբ հայերի դեմ դաժանություններով: Այդ դեպքերի մասին խոսեց նաեւ լորդ Կրոմերը անգլիական պառլամենտի վերին պալատում: Ճիշտ է, նա ասաց, որ դժվար է հավատալ, թե զոհերի թիվը իսկապես, ինչպես պնդում են, 800 հազար է կազմում: Բայց այնուհետ ի հայտ եկավ իսկական անգլիական ստորությունը: Բանն այն է, որ լորդ կրոմերը ասաց, որ թեեւ չկան սպանություններում գերմանացիների մեղսակցության մասին հավաստի տեղեկություններ, այնուամենայնիվ Գերմանիան եւս պատասխանատու է, քանի որ նրա ազդեցությունը Կ. Պոլսում անվիճելի է»:

Այնուհետեւ ասվում է.

«Այս նորագույն անգլիական սադրանքից, որքանով որ այն մեզ է վերաբերում, մենք կարիք չունենք պաշտպանվելու. այնուամենայնիվ, մենք կցանկանայինք նշել,

որ հայերը, եթե թուրքերը նրանց հետ դաժան են վարվում, դա իրենք իրենց են վերագրում եւ որ, եթե եվրոպական կողմի դրդմամբ գործը սանձարձակությունների է հասել Հայաստանում, ապա մեղքը ոչ թե Գերմանիայինն է, այլ մեր թշնամիներինը, որոնք սադրանքներով ու դրամական միջոցներով Թուրքիայի հայերին ապստամբության են դրդել»:

Այնինչ փաստաթղթերը հաստատում են գերմանացիների մեղսակցությունը:

Տրապիզոն, 22 հոկտեմբերի 1915 թ.:

«Սովորաբար հուսալի գերմանական աղբյուրներից տեղեկացա, որ հայերի վնասազերծման նախաձեռնությունը, այնուհանդերձ, ըստ ոչ իրագործման եղանակի, եղել է գերմանական կողմից»[15]:

1915 թ. նոյեմբերի 10-ին Նադալմենցկին հաղորդում է Ադրիանապոլիս.

«Այն փաստը, որ այսօր վարչական ճյուղերի մեծ մասում գերմանացիներն են զբաղեցնում խորհրդակցական եւ ղեկավար դիրքերը եւ որ սրանք չկարողացան կանխել ոչ հույների եւ ոչ էլ հայերի հալածանքները, սկզբում թույլ տվեց, որ ծագեն գերմանացիների կողմից դրանց հանդուրժելու մասին լուրերը: Գերմանական առեւտրի ակնկալելի էքսպանսիան Թուրքիայում, ինչպես եզրակացնում են, բացատրում է ապագայում սրա համար ճանապարհները հարթելու նպատակով մրցակցության ընդունակ բոլոր տարրերի հեռացման անհրաժեշտությունը:

Այն հանգամանքը, որ գերմանական սպաները ներկա են եղել քրիստոնյաների արտաքսմանը Օցուն-Քեփրուից եւ դա կանխելու համար մատը մատին չեն խփել, սնունդ է տվել արդեն եղած տրամադրությանը: Ցավոք, մինչեւ այսօր չեմ կարողացել համոզել իմ տեղեկատուին տալ ինձ այս կամ այն անձանց անունները, որոնք ուղղակի հայտարարել են, որ Գերմանիան ցանկացել է հայերի հալածանքները: Նա միայն կարողացավ ինձ հավաստիացնել, որ դա մի ազդեցիկ անձնավորություն է, որը սերտագույն կապի մեջ է կոմիտեի հետ եւ գիտի բոլոր գաղտնիքները»[16]:

«Deutsch-Armenische Korrespondenz» ամսագրում 1918 թ. նոյեմբերի 28-ին հաղորդվում է, որ հայ ժողովրդի բռնագաղթի ծրագրին հավանություն է տվել ֆելդմարշալ Գոլցը[17]:

«Միություն եւ առաջադիմություն» կոմիտեն եւս գերմանացիներին էր անվանում այդ մտքի հեղինակներ. «Դժբախտաբար Գերմանիան է մեզ այդ հրահանգել!»[18]:

Ինքը՝ Թալեաթը հետեւյալ պատասխանն է տվել Լեփսիուսին. «Մենք ձեր պլանն ենք իրագործում»[19]: Մորգենթաուն իր հուշերում գրում է, որ գերմանական ծովակալ Ուգեդումն իրեն ասել է, որ հայերի տեղահանումը գերմանացիներն են առաջարկել [20]:

Գերմանացիները միայն «վնասազերծելու» հրահանգով չբավարարվեցին, այլեւ օգնեցին «հրահանգն» իրականացնելուն, թեպետ եւ ոչ առավելագույն ակտիվությամբ: Այդ է վկայում նաեւ Մարկվարտն իր «Հայ ազգի առաջացումն ու վերականգնումը» գրքում.

«Բարեբախտաբար թվում է, թե գոնե գերմանացի զինվորներն ու սպաները միայն բացառության կարգով են մասնակցել բռնագաղթերին ու կոտորածներին»[21]:

Ուշագրավ է նաեւ Կ. Պոլսում գերմանական դեսպանության աշխատակիցների հակակրանքը հայերի հանդեպ: Այսպես, Պոմյանկովսկին Վանգենհայմի մասին գրում է.

«Բարոն Վանգենհայմը Սարաեւոյի դեպքից շատ առաջ ինձ մի քանի անգամ բացատրել է, որ տերությունների ռեֆորմների ամբողջ արարողությունը Հայաստանում լրիվ սխալ եւ անօգուտ է համարում: Հայերը, նրա կարծիքով, խաղաղություն, ինչպես եւ իրենց կյանքի ու սեփականության ապահովություն ձեռք բերելու միայն մի միջոց ունեին, այն է՝ անցումը իսլամին»[22]:

Վանգենհայմը միակ բարձրաստիճան գերմանացին չէր Թուրքիայում, որը հայերի նկատմամբ թշնամաբար էր տրամադրված, շատ ավելի ծայրահեղ օրինակ էր նավատորմի կցորդ Հումանը: Սա էնվերի բարեկամն էր եւ քանի որ կայզեր անձնական դեսպանորդն էր, ամենաազդեցիկ անձնավորություններից էր Թուրքիայում:

Մորգենթաուին նա մի անգամ ասել է.

«Իմ կյանքի ամենաշատ ժամանակը Թուրքիայում եմ անցկացրել: Ես գիտեմ, որ այդ երկուսը՝ հայերն ու թուրքերը միասին այս երկրում չեն կարող ապրել: Այս ազգերից մեկը պիտի գնա: Ես չեմ մեղադրում թուրքերին, ինչ նրանք անում են հայերի հանդեպ: Ես կարծում եմ, որ նրանք իրավունք ունեն: Թույլ ազգը պետք է կոտրվի: Հայերը փափագում են Թուրքիան մասերի բաժանել: Նրանք դեմ են թուրքերին եւ գերմանացիներին: Այդ պատճառով էլ իրավունք չունեն այստեղ ապրելու: Ես նույնպես այն կարծիքին եմ, որ Վանգենհայմի բողոքը չափազանցություն էր: Համենայնդեպս ես այդ չէի անի... Բոլոր հայերը ձգտում են թուրքին տապալել: Միակ ելքը նրանց տեղահանելն է»[23]:

Ակնհայտ է, թե ինչպես էին որոշ գերմանական հյուպատոսներ հերքում հայերի ջարդերը: 1915-ի դեկտեմբերի 17-ին Տրապիզոնից ուղարկված մի զեկուցագրում կարդում ենք.

«Հատկանշական է այստեղի եւ Էրզրումի գերմանական հյուպատոսների դիրքորոշումը հայերի հալածանքների վերաբերյալ: Երկուսն էլ ակնհայտորեն ջանում են հերքել հատկապես բազմաթիվ սպանությունները, թեեւ կոմս Շուլենբուրգը, ինչպես ինձ պատմել է նրա ուղեկցողներից մեկը, արդեն Էրզրում գնալիս համոզվել է կատարված բռնություններում, եւ կան նաեւ դրա մասին սպաների, ժանդարմների եւ այլոց համընկնող վկայություններ»[24]:

Գերմանական ղեկավարությունը Թուրքիայում արգելում է անգամ ամեն մի օգնություն հայերի համար.

«Հետին թվով իմացել եմ, որ Էրզրումում գերմանական կառավարիչ պ. Շյոբերսի հայերի օգտին հանդես գալը չի տրացել գերմանական իշխանությունների, դեսպանության ու զինվորականների հավանությունը»[25]:

Երբ Վանգենհայմը հայերի հալածանքների պատճառով խիստ տոնով գրություն ուղարկեց թուրքական կառավարությանը, Պալավիչինին գրեց Վիեննա.

«Գերմանական դեսպանի երեկվա քայլն ակնհայտորեն պետք է հնարավորություն տա ժամանակին, եթե Հայկական հարցը եւ Թուրքիայի ոճրագործությունը խոսակցության առարկա դառնան, վկայակոչելու այն, որ նա զգուշացրել է թուրքական կառավարությանը հայերի դեմ նրա վարած քաղաքականության հետեւանքների մասին»[26]:

1915 թ. նոյեմբերի 15-ին կոմս Մետեռնիխը որպես գերմանական դեսպան եկավ Կ. Պոլիս: Թուրքական պետական գործիչներին իր առաջին այցելության ժամանակ Մետեռնիխը նրանց խիստ կշտամբեց հայերի հանդեպ վարած քաղաքականության պատճառով: Դրանով նա դժգոհություն առաջացրեց թուրքերի մեջ: Մի տեղեկատուի նամակում կարդում ենք.

«Ինչպես իմացա թուրքական շրջաններից, Բ. Դուռն առանձնապես բարեկամաբար չի տրամադրված գերմանական դեսպան կոմս Մետերնիխի հանդեպ: Ճիշտ է, իշխան Հոհենլոհեն եւս ստիպված էր լրջորեն խոսելու թուրքական կառավարության հետ հայերի հալածանքների վերաբերյալ: Սակայն նա այդ անում էր այնպիսի ձեւով, որ թուրքերը դժվար թե ունենային այն զգացումը, որ իրենց վարվելակերպից դժգոհ են: Այդ պատճառով շատ մեծ է ցանկությունը, որ իշխան Հոհենլոհեն վերջնականապես Կ. Պոլսում դեսպան նշանակվի»[27]:

Այս գրությունը վկայում է դաշնակիցների վարվելակերպի հակասականությունը: Այն, որ Մետերռնիխը դուր չէր գալիս թուրքերին եւ իր գերմանացի դաշնակիցներից ոմանց, ի վերջո հասցրեց 1916 թ. հոկտեմբերի 3-ին նրա ետկանչմանը: Նրա փոխարեն եկավ ֆոն Քյուլմանը: Սրան հանձնարարված էր օժանդակել ամերիկացիների ջանքերին հօգուտ հայերի: Սակայն Քյուլմանն ասաց Պալավիչինին, որ չի կրկնի Մետերռնիխի սխալը[28]: Ռայխստագը բրոշյուրների եւ այլ տեղեկագրերի շնորհիվ տեղյակ էր Թուրքիայում կատարվող իրադարձություններին, բայց ոչինչ չէր ձեռնարկում: Այստեղ հայերի հարցը առաջ քաշեցին միայն երեք անկախ երեսփոխաններ՝ Լիբկնեխտը, Լեդեբուռը եւ Հազեն[29]:

1916 թ. հունվարի 14-ին Կարլ Լիբկնեխտը հարցապնդում արեց Ռայխստագում հայերի ջարդերի մասին: Նա հարցրեց. *«Արդյո՞ք ռայխսկանցլերը տեղյակ է, որ Թուրքական կառավարությունը հայերի սարսափելի կոտորած է կազմակերպել եւ որ ողջ աշխարհը Գերմանիային է պատասխանատու համարում դրա համար, քանի որ Կ. Պոլսում գերմանական սպաներն են կարգադրում կառավարությանը»[30]:*

Դոկտոր ֆոն Շտումը պատասխանեց, որ ռայխսկանցլերին հայտնի է, որ հայերի խռովությունը դրդել է Բ. Դռանը հայ ազգաբնակչությանը տեղահանել թուրքական կայսրության որոշ շրջաններից, եւ որ թուրքական ու գերմանական կառավարությունների միջեւ մտքերի փոխանակություն է տեղի ունենում այդ հարցի շուրջը: Լիբկնեխտն առարկեց, որ ըստ դոկտոր Լեփսիուսի, թուրքիայում հայերին բնաջնջում է սպառնում: Լիբկնեխտին ընդհատեցին ռեպլիկներով եւ խոսքից զրկեցին[31]:

Արտաքին գործերի նախարարության պետական քարտուղար Յագովը պատասխանեց Ռայխստագի առաջ.

«Ինչքան էլ որ ցավելու լինենք զուտ մարդկայնության տեսակետից հայերի ճակատագրի համար, այնուամենայնիվ մեր որդիներն ու եղբայրները մեզ ավելի մոտ են կանգնած, քան հայերը: Նրանք սարսափելի մարտերում զոհաբերում են իրենց թանկագին արյունը, իսկ նրանց անվտանգությունը կախված է թուրքական օգնությունից: Թուրքերը մեզ արժեքավոր ծառայություն են մատուցում՝ պաշտպանելով մեր ռազմական դիրքի թեւերը: Պարոնայք, դուք կհամաձայնեք ինձ հետ, որ Հայկական հարցի պատճառով մենք չենք կարող հրաժարվել մեր դաշինքից»[32]:

Երբ տեղի ունեցան գազանությունները, Ռուսաստանը մեղադրեց գերմանական կառավարությանը.

«Թուրքական զորքի առաջխաղացմանը Կովկասյան ռազմաճակատում հաջորդում է հայ բնակչության զանգվածային ոչնչացումը: Խաղաղ բնակչությանը՝ կանանց ու երեխաներին, հազարներով սպանում են, նրանց ունեցած-չունեցածը կողոպտում ու այրում: Պատասխանատվությունն այդ գազանությունների համար ընկնում է գերմանական կառավարության վրա, որի օգնությամբ Թուրքիան իրեն է վերադարձրել այդ մարզերը»[33]:

Ռուսների մեղադրանքը հաստատում է Պալավիչինիի մի զեկույցը, որն ուղարկվել է Վիեննա.

«Թալեաթ փաշան եւ արտգործնախարարը հաստատում են... որ գերմանական պետության հրամանով եւ համաձայնությամբ է կատարվում Թուրքիայի ներխուժումը Կովկաս»[34]:

Այդ է վկայում, ի միջի այլոց, գերմանական կառավարության հանձնարարագիրը Թալեաթին.

«Մենք որպես Բրեստի պայմանագրի մասնակիցներ, ընդհանրապես պիտի պահանջեինք, որ Թուրքիան ետ քաշվեր մինչեւ Բրեստի սահմանը եւ հնարավորություն տար փախստական հայերին վերադառնալու իրենց բնակավայրերը: Թուրքիային խնայելով՝ խորհուրդ է տրվում հրաժարվել այդ պահանջից եւ սահմանափակվել դիտողություններով թուրքական գործելակերպի դեմ, սակայն առանց այդ դիտողություններին գործնական ընթացք տալու»[35]:

Ռուս-գերմանական մի գաղտնի համաձայնագրով գերմանացիները չպետք է թույլ տային, որ թուրքերը մենակ Բաքու մտնեն: Նրանք վախենում էին, որ թուրքերը հայերին պիտի հալածեն[36]:

Բայց երբ Բաքուն ընկավ, երեք օր թուրք զինվորներին իրավունք տրվեց անելու այն ամենը, ինչ ուզում են: Եվ նրանք կոտորեցին երեսուն հազար հայի:

1918 թ. ապրիլի 10-ին հայկական թղթակցական բյուրոն Հաագայում մի կոմյունիկե հրապարակեց, որում ասվում է.

«Հաստատ է, որ Թուրքիան առանց Ռուսաստանում Գերմանիայի հաջողությունների եւ առանց գերմանացի հրամանատարների ու նրանց զենքի երբեք չէր ներխուժի Կովկաս, անգամ չէր կարողանա կրկին գրավել Հայաստանը: Գերմանիան պարտավոր է կանխել Թուրքիայի հետագա արյունոտ առաջխաղացումը, որովհետեւ Գերմանիան է ստեղծել այս վիճակը Բրեստ-Լիտովսկի պայմանագրի 4-րդ կետի միջոցով»[37]:

Գերմանացի գնդապետ Քրես ֆոն Քրեսենշտայնը գրում է.

«Մենք՝ գերմանացի զինվորներս, հասարակական գործիչներս, որ դատապարտված էինք այս սարսափելի տեսարաններն ապրելու, մեզ լրիվ անհասկանալի էր այս ամենը, մենք շատ վրդովված էինք, որ մեր կառավարությունը եւ մամուլը, որոնք տարբեր տեղերից այս կոտորածի մասին ճշգրիտ տեղեկություններ էին ստացել, թուրքերից չհեռացան: Ընդհակառակը, նրանք իրենց լռությամբ մեզ՝ գերմանացիներիս ոճրագործներին բարոյապես մերձավոր դարձրին: Թե՝ մեր թշնամիները, թե՝ չեզոքները մեր լռությունը դատապարտում են, որովհետեւ գերմանական մամուլը այս դեպքերի առիթով ոչ մի փոքրիկ բողոք չհրապարակեց, որովհետեւ նա իրավունք չուներ հայերի հալածանքի դեմ բողոքելու»[38]:

Գնդապետ Քրեսը 1918 թվականի հուլիսին բողոքել էր Գերմանիայի վարչապետ Հերթլինգին, աշխատելով նրան իր «պարտականությունները» հիշեցնել. *«Ձերդ Բարձրություն, ես իրավունք չունեմ Ձեզ զգուշացնելու, Ձեր ուշադրությունը հրավիրելու Ձեր իսկ պարտականությունների վրա. Գերմանիան, քրիստոնյա երկիր լինելով, դեպի քրիստոնյա հայերը պետք է ուշադրություն դարձնի: Ես խնդրում եմ Ձեզ, Ձերդ Բարձրություն, հնարավորին չափ շտապ թուրքերին ուժեղ ճնշման տակ դնելով նրանց ստիպել իսկույն եւեթ զորամասերը Հայաստանից հեռացնելու»*[39]:

1918 թվականին Քրեսենշտայնը էջմիածնում այցելում է ամենայն հայոց կաթողիկոս Գեւորգ Ե-ին: Քրեսենշտայնը զեկուցում է. *«Պատկառանք ներշնչող ծերուկ հայոց կաթողիկոսը մեզ ընդունեց կրակոտ ճառով, ներքին զգացմունքներից դողդոջուն ձայնով: Եկեղեցու բարձրագույն իշխանը, ի պատասխան իմ ճառին, մեղադրեց մեզ՝ գերմանացիներիս: Նրա մեղադրանքը հայերի հալածանքի պատճառով էր, որին ենթարկվում էր իր անբախտ ժողովուրդը Թուրքիայում: Քրիստոնյա ազգ լինելով, ամենանվազագույնը պարտավոր էինք անել՝ մեր դաշնակից թուրքերին պիտի կանգնեցնեինք հայերի դեմ ոճրագործություններ կատարելուց»*[40]:

Գերմանացի լրագրող Հարի Շտուրմերը, որը երկու տարի Կ. Պոլսում էր աշխատում, գրում է.

«Մենք Թուրքիայում տիրապետում էինք զինվորական, ֆինանսական եւ քաղաքական ոլորտներում: Նրան կարող էինք ստիպել, որ՝ պահպանի ամենահասարակ մարդկային սկզբունքները, իհարկե, եթե մենք ցանկանայինք: Հաստատված դեպքերի մասին գերմանական կարմիր խաչի բժիշկներն ու քույրերը հաղորդել են, որ երբ տեղի թուրք պաշտոնակատարները, որոնց մեջ դեռ մի քիչ մարդասիրական զգացմունքներ կային, «Նուր էլ Օսմանիեի» կարգադրությունները դժկամությամբ էին կատարում, ապա գերմանացի սպաները նախաձեռնում էին հայերի ոչնչացման գործը»[41]:

Այս վավերագրերը փաստում են, որ հայերին հետապնդելու գաղափարը թուրքերին ներշնչել են «միջին ուժերը», առաջին հերթին Գերմանիան: Իսկ ոճրագործության որոշումները եղել են գերմանացիների օծմամբ:

Այն մասին, որ Գերմանիան կարող էր օգնել հայերին, կարդում ենք եւ Պոմյանկովսկու գրքում.

«Ամբողջականության համար հիշողություններումս չեմ կարող չհատկացնել գերմանացիներին այն տեղը, որը արդարացիորեն հասնում է նրանց իրենց ընդարձակ գործունեության, ինչպես նաեւ այն ազդեցության պատճառով, որը գերմանացի խորհրդատուները ունեցել են Թուրքիայում բոլոր ռազմական եւ քաղաքական գործողությունների վրա: Այն, որ այդ ազդեցությունը միշտ չէ, որ դրական է եղել, ես չեմ կարող ո՛չ լռության մատնել, եւ ո՛չ էլ արդարացնել»[42]:

Գերմանիայի դիրքն հայկական քաղաքականության հանդեպ բացատրվում է 1915 թ. հոկտեմբերի 7-ի հրահանգով, որտեղ գերմանական կառավարությունը մամուլի համար հայտարարում է.

«Հայերի դեմ ոճրագործությունների առթիվ տալիս ենք հետեւյալ հրահանգը. մեր բարեկամական հարաբերությունները Թուրքիայի հետ նրանց ներքին գործերի պատճառով ոչ միայն չպետք է խզվեն, այլեւ այս դժվարին ժամանակներում չպետք է նույնիսկ քննվեն: Հետո, եթե օտարներն այդ հարցում գերմանացիներին քննադատեն որպես «մեղավորների», այն ժամանակ պետք է շատ զգույշ եւ վերապահումով այդ հարցը ծեռնարկվի, միշտ կրկնելով, որ հայերը թուրքերին շատ խիստ գրգռել էին»[43]:

Հղումներ

1. P. Rohrbach, "Der Krieg", Dresden, 1914, S. 56.
2. J. Kirakosian, "Der Erste Weltkrieg...", S. 415.
3. Vierbücher, "Armenien 1915", S. 49.
4. Ewald Banse, "Die Türkei", Berlin, 1919, S. 197.
5. H. Morgenthau, "Ambassador Morgenthaus Story", S. 370.
6. Pomiankowski, "Der Zusammenbruch...", S. 53.
7. Westenenk, "Die Tagebücher von Westenenk", S. 67.
8. Wien, HHStA PA XL 272 Konstantinopel, 3. März 1915, Nr. 93.
9. Pomiankowski, "Der Zusammenbruch...", S. 31.
10. Wien, HHStA PA I 521 Konstantinopel, 19. November 1914, Nr. 68/P.B.
11. Wien, HHStA PA XL 272 Konstantinopel, 12. September 1915, Nr. 336.
12. Wien, HHStA PA I 944 Konstantinopel, 1. November 1915, Nr. 95/P. A. B.
13. Wien, KA AOK NA, 1915, Fasz. 5633 Konstantinopel, 8. Oktober 1915, Nr. 619.
14. Wien, KA AOK NA, 1916, Fasz. Konstantinopel, 13. März 1916, Nr. 6498.

15. HHStA PA XII 463. Trapenzunt, 22. Oktober 1915, Nr. 70/P.
16. Wien, HHStA PA XII 209 Adrianopel, 10. November 1915, Z 100/P.
17. Deutsch-Armenische Korrespondenz, Berlin, 25 November 1918, Nr. 2, S. 1/369.
18. Wien, HHStA PA XII 463 Adrianopel, 10. November 1915, Z 97/P.
19. J. Kirakosian, "Der Erste Weltkrieg...", S. 415.
20. H. Morgenthau, "Ammbassador...", S. 370.
21. J. Marquart, "Die Entstehung...", S. 59.
22. Pomiankowski, "Der Zusammenbruch...", S. 163.
23. H. Morgenthau, "Ambassador ...", S. 375f.
24. Wien, HHStA PA XII 463, Trapezunt, 17. Dezember 1915, Nr 24/P
25. Wien, HHStA PA XII 463, Samsun, 26. Mai 1917, Z 21/P.
26. Wien, HHStA PA XII 209 Jeniköj, 13. August 1915, Nr. 66/P. B.
27. Wien, HHStA PA XL 274, Konstantinopel, 14. Janner 1916, Nr. 23.
28. Wien, HHStA PA XII 463, Konstantinopel, 21. November 1916, Nr. 89/P. A. D.
29. J. Marquart,"Die Entstehung...", S. 53.
30. "Spartakus Briefe", Berlin 1958, S. 97.
31. "Pogrom", Göttingen 1980, Nr. 72/73.
32. P. Lanne, "Armenien...", S. 146.
33. Wien, HHStA PA XII 463, Konigswust, 12. April 1918, Beilage.
34. Wien, HHStA PA X 155, Pera, 30. Mai 1918, Nr. 340.
35. Wien, HHStA PA X 157, Berlin, 2. September 1918, Nr. 101/P. A.
36. Baumgart, "Die Ostpolitik...", S. 201.
37. Wien, HHStA PA XII 463, Haag, 15. August 1918, Nr. 18/P. F.
38. von Kreissenstein, "Mit den Türken zum Suezkanal", Berlin 1938, S. 138.
39. Wien, HHStA PA X 157. Tiflis, 11. Juli 1918, Beilage.
40. von Kreissenstein, "Mit den Türken...", S. 138.
41. Harry Stürmer, "Zwei Kriegsjahre in Konstantinopel", Lausanne 1917, S. 64.
42. Pomiankowski, "Der Zusammenbruch...", S. 14.
43. Vierbücher, "Armenien 1915", S. 78.

ԱՄՓՈՓՈՒՄ

1. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ՀԱՅԵՐԸ

Երբ Բալկանյան երկրները եվրոպացիների օգնությամբ ազատագրվեցին Թուրքիայի լծից, հայերը եվրոպացիներին առաջարկեցին իրենց ծառայությունները, որպեսզի իրենք եւս ազատագրվեն թուրքական լծից: Նրանք անդամագրվեցին եվրոպական տարբեր կազմակերպությունների ու սկսեցին շարժվել նրանց ծրագրերով: Բայց դա հայերին չօգնեց: Նրանք, օգտագործելով հայերին, մտան թուրքական հողատարածքներն ու կղզիները: Հանուն իրենց շահերի, նրանք հայերին մատնեցին թուրքերին, եւ հայերը վճարեցին արյան գնով:

Բեռլինի կոնգրեսի արդյունքում հայերի համար պարզ դարձավ, որ նրանց «հովանավորները» խաբել են իրենց: Չնայած դրան, հայերն իրենց թուլության պատճառով շարունակում էին ապավինել այդ երկրների օգնությանը, որպեսզի ընտրած ճանապարհը մինչեւ վերջ անցնեն: Այնինչ այդ ճանապարհը տարավ դեպի ազգային աղետ. հաճախ ենթարկվելով օտարների քարոզչությանը՝ հայերը դիմում էին ապստամբության, որի պատասխանը Աբդուլ Համիդի՝ հայոց ջարդերն էին: Հայերն օժանդակում էին երիտթուրքերին՝ Աբդուլ Համիդին գահընկեց անելու համար: Նրանք կարծում էին, որ եթե երիտթուրքերն իրենց գործընկերներն են ու քանի որ իրենք եւս կոմիտեի անդամ էին, եւ երիտթուրքերի առաջնորդների անձնական ընկերները, ապա ապագայում նրանք կօգնեն հայերին: Թուրքիայի Մեծ հայկական խորհրդի բազմաթիվ անդամներ միաժամանակ «Իթթիհատ վե թերաքքի» (երիտթուրքեր) կոմիտեի անդամներ էին, ու նրանցից ոմանք երդվել էին «Սուրբ գրքով եւ ատրճանակով»: Նրանք պարտավոր էին կատարելու կոմիտեի հրամանները եւ Հայկական հարցին մոտենալու համաձայն «Նուր էլ Օսմանիեի», «Իթթիհատի» գլխավոր շտաբի ցուցումների: Ժամանակի ընթացքում պարզվեց, որ չափն անցնող լոյալ վերաբերմունքը երիտթուրքերի նկատմամբ սխալ էր, քանի որ երիտթուրքական հեղափոխությունը ոչ թե դեմոկրատական, այլ նացիոնալիստական շարժում էր: Երբ երիտթուրքերը, հակառակ իրենց խոստումներին, որ տվել էին Աբդուլ Համիդի օրոք, սկսեցին փոքրամասնություններին ճնշել, հայ առաջնորդները հրաժարվեցին նրանց հետ համագործակցել: Դա մի սխալ որոշում էր: Միակ մարդը, որը նկատեց սխալը, Վանի դաշնակցականների քարտուղար Արամ Վռամյանն էր, որն ասաց. *«Այսօր մեր զգացմունքով աշխատելով՝ մենք մեծ չարիք գործեցինք հայ ժողովրդի հանդեպ»*:

Դուրս գալով երկիրն իշխող կուսակցությունից՝ հայերը նրանց մարտահրավեր նետեցին: Սակայն ճիշտ է այն ասացվածքը, թե դժբախտությունը մենակ չի գալիս:

Ընդունվեց եւս մի սխալ որոշում. երբ երիտթուրքերը դաշնակցականներին առաջարկեցին, որ նրանք իրենց հայրենակիցների միջոցով հուզումներ առաջացնեն Կովկասում, դաշնակցությունը կտրուկ մերժեց: Այնինչ պատմությունը ցույց տվեց, որ դա սխալ վճիռ էր: Հայերի խոստումը, մինչդեռ, պլատոնական բնույթ պիտի կրեր: Այդպես էր, օրինակ, վրացիների դեպքում, որոնք նույն հրահանգով Կովկաս գնացին, իհարկե չկարողանալով որեւէ բան իրականացնել այդ հրահանգից: Անգամ Խատիսյանը՝ դաշնակցականների առաջնորդներից մեկը եւ Հայաստանի ապագա վարչապետը, իր հուշերում այն հարցն է տալիս, թե արդյոք հայերի վիճակն ավելի լավ չէ՞ր լինի, եթե ընդունած լինեին երիտթուրքերի առաջարկությունը:

Պատերազմի սկզբում Թիֆլիսում հայկական կամավոր գումարտակների կազմավորումը Թուրքիայի եւ իր դաշնակիցների համար հայկական ապստամբության հնարավորության ազդանշանն էր: Դա եւս կարող է որպես պատճառաբանություն ծառայել հայերին կովկասյան սահմաններից տեղահանելու համար: Սակայն տեղահանումներն իրենց հերթին պատրվակ եղան հայ ժողովրդի հսկա հատվածի բնաջնջմանը: Հայերի առաջնորդները չարձագանքեցին, երբ երեւացին ապագա ջարդերի առաջին նախանշանները: Ժողովրդի համընդհանուր պայքար կազմակերպելու փոխարեն նրանք սպասեցին, մինչեւ բոլորին ձերբակալեցին, աքսորեցին եւ կոտորեցին: Այսպիսով հայ ժողովուրդը մնաց առանց առաջնորդների: Թ. Ի. Լորենսը հայերի ջարդերի մեղքը վերագրում է նրանց առաջնորդներին. *«Հայերը լավ զինված ու կազմակերպված էին, բայց առաջնորդները նրանց մատնեցին բախտի քմահաճույքին»*:

Դաշնակցական ղեկավարներից մեկը՝ Կ. Սասունին, գրում է իր գրքում, որ սեփական ղեկավարությունը, որը պետք է ժողովրդին ընդհանուր ապստամբության կոչեր, հապաղեց, չարեց դա: Իսկ Շերիֆ փաշան՝ թուրքական օպոզիցիայի ղեկավարներից մեկը, հայերի առաջնորդներին անվանեց երիտթուրքական կոմիտեի «կուսակցական նվիրյալներ եւ վահանակիրներ»:

Այն, որ հայերի առաջնորդները մտածված գործելակերպի դեպքում ի վիճակի կլինեին փրկելու իրենց գավառները բնաջնջումից, ապացուցում են Վանի, Ուրֆայի եւ մյուս իրադարձությունները: Այդ բնակավայրերում ժողովուրդը կազմակերպված պաշտպանվել է:

Բրեստ-Լիտովսկի համաձայնագրից հետո թուրքերը ներխուժեցին Անդրկովկաս: Միայն հայերը տուժեցին թուրքերի առաջխաղացումից: Վրացիներին պաշտպանեցին գերմանացիները, իսկ թաթարները Թուրքիայի գաղտնի դաշնակիցն էին: Թուրքերի ներխուժումն Անդրկովկաս հեշտացել էր, որովհետեւ անդրկովկասցիները իրենց Ռուսաստանից անկախ էին հայտարարել եւ այդպիսով կորցրել Ռուսաստանի հովանավորությունը: Այսօր դժվար է պնդել, որ եթե Հայաստանը հակառակ մյուս անդրկովկասյան երկրների իրեն Ռուսաստանից կախյալ հայտարարեր, ապա Թուրքիան չէ՞ր համարձակվի ներխուժել Հայաստան եւ դրանով Ռուսաստանին դրդել պատերազմա-

կան գործողությունների:

Սակայն փաստ է, որ Գերմանիան միշտ մտահոգված էր, որ Ռուսաստանին պատերազմական գործողությունների պատրվակ չտա: Անգամ էնվեր փաշան գրում է 1918-ի հուլիսի 10-ին ուղարկված մի հեռագրում. *«Այն բանից հետո, ինչ կովկասյան պետություններն անջատվեցին Ռուսաստանից, Բրեստի համաձայնագիրը նրանց համար այլեւս չէր գործում»*:

Իրադարձությունները Բաքվում նորից առիթ հանդիսացան, որ հայերը սխալ որոշում ընդունեն: Բաքվում դաշնակցականները մենշեւիկների հետ միասին գերազանցել էին բոլշեւիկների ձայներին ու անգլիացիներին Բաքու էին հրավիրել: Այդ քաղաքական սխալը բերեց Գերմանիայի ու Թուրքիայի համատեղ առաջխաղացմանը դեպի Բաքու: Անգլիացիներն իրենց դաշնակիցների հետ միասին փախան Պարսկաստան: Երբ թուրքերը գրավեցին Բաքուն, երեսուն հազար հայեր զոհվեցին: Այստեղ երեւաց, որ հայերը, քաղաքը համախմբված պաշտպանելու փոխարեն, մի բան, որ նրանց մինչ այդ հաջողվել էր, բաժանվեցին ըստ կուսակցությունների, եւ արդյունքը եղավ այն, որ սեփական ժողովուրդը տուժեց դրանից: Ֆրիտյոֆ Նանսենը դիպուկ է բնութագրում հայերի բնավորության այդ գիծը. *«Նրանք, անշուշտ, տոգորված էին ժողովրդի հոգեւոր միասնությամբ..., բայց երբեք չկարողացան բարձրանալ մինչեւ իրոք ընդգրկող հայրենասիրական զգացմունքը, որի առաջ նահանջում են բոլոր այլ նկատառումները, քանի որ դա ողջ քաղաքական միասնության ու ազատության նախապայմանն է»*:

2. ԵՎՐՈՊԱՑԻՆԵՐՆ ՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Օսմանյան կայսրության անկումն սկսվել էր 18-րդ դարի կեսից: 19-րդ դարի սկզբի եվրոպական տերությունները սկսեցին տարածքային պահանջներ ներկայացնել Օսմանյան կայսրությանը: Թուրքերին ավելի թուլացնելու համար եվրոպացիներն օգտվում էին քաղաքականության ամենապարզ եւ միաժամանակ ամենաազդու մեթոդներից: Նրանց գործակալների սադրիչ գործունեության միջոցով թուրքական կայսրության փոքրամասնություններին Թուրքիայի բռնակալական ռեժիմի դեմ ազատագրական պայքարի կոչ էր արվում:

Սակայն հազիվ էր այդ փոքրամասնություններից որեւէ մեկը ինքնավարություն ձեռք բերելու հնարավորություն ստանում, երբ ստիպված էր լինում հետագայում ենթարկվել եվրոպական մեծ տերություններից որեւէ մեկին: Այդպես, Ավստրո-Հունգարիան արդեն Բալկանյան թերակղզում էր, Ռուսաստանը՝ Արեւելյան Անատոլիայում, Անգլիան արդեն գրավել էր Եգիպտոսն ու Կիպրոսը, Ֆրանսիային պիտի հասնեին Սիրիան ու Միջագետքը, Իտալիան ստացավ որոշ թուրքական կալվածքներ Աֆրիկայում, իսկ Գերմանիան՝ հսկայական կոնցեսիաներ Թուրքիայից, այնպես որ ոմանք Թուրքիային անվանում էին գերմանացիների վասալ: Եվրոպական քրիստոնեական

տերությունների կողմից նեղը գցված՝ Թուրքիան ձգտում էր պահպանել այն, ինչ հնարավոր էր: Քրիստոնեական պետությունների՝ վերջ չունեցող ցանկությունների տակ ճկված Թուրքիան օգտվում էր նրանց մրցակցությունից՝ իրեն փրկելու համար: Երբ մեծ տերությունների սադրիչ գործունեությունը ծավալվեց նաեւ հայերի միջավայրում, եւ հայերը սկսեցին իրենց ռեֆորմների ցանկություններով պաշարել թուրքական կառավարությանը, եվրոպացիները երջանիկ էին: Նրանք երկակի խաղ էին խաղում եւ ձեռնտու զիջումներ կորզում Թուրքիայից:

Ամենատարբեր քաղաքագետները բազմիցս խոստովանել են, որ եվրոպական պետական գործիչները հայերի հետ դաժան խաղ են խաղացել: Նրանք օգտվում էին սրանց անգիտությունից ու ազատատենչությունից՝ իրենց սեփական երկրի համար քաղաքական առավելություններ ստանալու նպատակով: Այն, որ նրանց խաղը հայերի հետ հեշտ էր, բացատրվում էր օտարների նկատմամբ հայերին հատուկ լոյալությամբ:

Երբ պայթեց պատերազմը, միամիտ հայերի համար խաղն արդեն տանուլ էր տրված: Եվրոպացիներն այլեւս հնարավորություն չունեին օգնելու հայ ժողովրդին: Այսպիսով, հայերը զրկվել էին եվրոպական տերությունների հովանավորությունից, իսկ Թուրքիան օգտվեց ստեղծված իրավիճակից հայերին բարբարոսաբար վերացնելու համար:

Երբ հայերը 1914 թ. մերժեցին Կովկասում Ռուսաստանի դեմ խժդժություններ հրահրելու երիտթուրքերի առաջարկությունը, երիտթուրքերին պարզ էր, որ նրանց մնում է Հայկական հարցի լուծման միայն մի եղանակ, այն է՝ հայ ժողովրդի լիակատար ոչնչացումը: Անգամ նրանց դաշնակիցները՝ Գերմանիան ու Ավստրո-Հունգարիան, վճռական միջոցներ ձեռք չառան ջարդերը դադարեցնելու համար: Եվրոպական տերությունների թուլությունները հնարավորություն տվեցին Թուրքիային իր հայկական քաղաքականության մեջ դաժանությունների դիմելու, որոնք քրիստոնեական բոլոր ազգերի կողմից հետագայում հետին թվով դատապարտվեցին: Եվ այսպես, երիտթուրքական դիլետանտները (այսպես էին նրանց կոչում Պալավիչինին եւ Պոմյանկովսկին) համաշխարհային պատերազմի ժամանակ վախճանին հասցրին Աբդուլ Համիդի սկսած բնաջնջման քաղաքականությունը: Բրեստ-Լիտովսկի պայմանագրից հետո էլ դաշնակիցները չկասեցրին հայերի ջարդը Կովկասում:

Ըստ Պոմյանկովսկու՝ միայն ԱՄՆ-ն էր ի վիճակի խանգարելու հայերի բնաջնջմանը, այն էլ՝ արդեն 1915-ին պատերազմ մտնելու մասին հայտարարությամբ: Թուրքերը ճիշտ էին հաշվարկել:

Երբ պատերազմը վերջացավ, հայ ժողովուրդը Թուրքիայում բնաջնջված էր: Թուրքիայի նոր կառավարությունը դատապարտեց երիտթուրքական ղեկավարությանը նաեւ սրա դաժանությունների ու հայերի զանգվածային սպանությունների պատճառով: Սակայն դատապարտվածներն իրենց դաշնակիցների օգնությամբ փախան արտասահման:

Մուդրոսի պայմանագիրը՝ կնքված դաշնակիցների եւ Թուրքիայի միջեւ, կրկին ակնհայտ դարձրեց քրիստոնեական տերությունների երկակի բարոյականությունը: Հայերին վեց հայկական վիլայեթները տալու եւ այնտեղից թուրքական բանակն անմիջապես հանելու փոխարեն, ինչը որ անընդհատ խոստանում էին հայերին, նրանք այդ տարածքները թողեցին թուրքական տիրապետության տակ: Մտածեցին Մոսուլի նավթի մասին, իբրեւ բուֆերային գոտու՝ Խորհրդային Միության եւ Եվրոպայի միջեւ ու անտեսեցին հայերին եւ նրանց վիճակը: Ջարդերի 1,5 միլիոն զոհերին շատ շուտ մոռացան, քանի որ հաղթանակած տերություններն այժմ վիճում էին ազդեցության ոլորտների եւ նավթի համար:

Այն, ինչ հաջորդեց դրան՝ պայմանագրերը Սեւրից մինչեւ Լոզան, դրա լավագույն վկայությունն է: Այդ պատճառով զարմանալի չէ, երբ հայերը պնդում են, թե խաբվել են քրիստոնեական տերությունների կողմից: Վանում հայերի առաջնորդ Արամը գրում է իր հուշերում. *«Այդ եվրոպացիները մեզ մոտ եկան մարդասիրության ու օգնության նշանաբանով եւ հիմնեցին մի քանի որբանոցներ ու բուրժուական երջանկություն ստեղծեցին ոմանց համար եւ կարծում էին, թե դրանով բավականաչափ կերպով կատարել են իրենց մարդասիրական պարտավորությունները»*: Նանսենը այսպես մեկնաբանեց եվրոպացիների քրիստոնեական պարտավորությունները. *«Տխուր ճշմարտությունն այն է, որ նրանց վիճակը շատ ավելի լավ կլիներ, եթե եվրոպական ժողովուրդները եւ նրանց կառավարություններն ու դիվանագետները երբեք հանձն չառնեին նրանց գործը»*:

ՎԵՐՋԱԲԱՆ

Պնդում են, թե հայերի պլանավորված ջարդեր չեն եղել եւ թե այդ մասին փաստաթղթե՛ր չկան: Սակայն միայն ավստրիական պետության արխիվներում կան բազմաթիվ փաստաթղթեր, որոնց հեղինակներն են ավստրո-հունգարական հյուպատոսներ Պալավիչինին, Թրաուբմանսդորֆը, Նադամլենցկին, ավստրո-հունգարական զինվորական կցորդ Պոմյանկովսկին, գործակալները, լրագրողները, Պապի նվիրակը եւ շատ ուրիշներ: Նրանք բոլորը հաղորդումներ են արել Վիեննա՝ Թուրքիայում հայերի հալածանքների մասին:

Անհնար է, որ այս բոլոր դիվանագետները, ամենից առաջ Պալավիչինին, որը Ավստրո-Հունգարիայի արեւելյան քաղաքականության հեղինակներից մեկն էր եւ թուրքերի բարեկամը, սխալ տեղեկություններ տար Վիեննային: Միայն այս փաստաթղթերն արդեն ապացուցում են հայերի կոտորածի փաստը:

Համապատասխան փաստաթղթերով նույնչափ հարուստ են նաեւ գերմանական արխիվները: Այլ երկրների՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, Ամերիկայի ու Իտալիայի փաստաթղթերը կարելի է մի կողմ դնել, որովհետեւ սրանք Թուրքիայի ու նրա դաշնակիցների հակառակորդներն էին, եւ կասկած կարող է առաջանալ, թե քա-

ոոզչական նպատակներով սադրանքներ են հորինել Թուրքիայի դեմ: Թուրքիայում եւս պիտի որ շատ ապացույցներ լինեն, բայց ցավոք, մատչելի չեն:

Հաճախ պնդում են, թե թուրքական կառավարությունը հայերի հալածանքների հրաման չի տվել: Ավստրո-հունգարական փաստաթղթերը հակառակն են ապացուցում:

Պալավիչինին 1915 թ. հունիսի 24-ին գրում է. «Կասկած չի կարող լինել, որ կառավարության գործելակերպը հայերի նկատմամբ սխալ էր»: Իսկ 1915 թ. սեպտեմբերի 3-ին նույն հեղինակը գրում է. «...սակայն վերջերս եղել է նաեւ ռազմական նախարարության մի կարգադրություն, ըստ որի հայերին... այնպես պետք է բաշխել, որպեսզի ոչ մի տեղում ազգաբնակչության 5 տոկոսից ավելին չկազմեն»:

Բանակի գլխավոր հրամանատարություն, կապի բաժ., Կ. Պոլիս, 1915-ի սեպտեմբերի 12-ին.

«Հայերի վիճակը Թուրքիայում անհույս է: Ինչպես երեւում է, թուրքական կառավարությունը մտադրվել է ոչնչացնելու ամբողջ հայկական ռասան»:

Թրաուբմանսդորֆը 1915-ի սեպտեմբերի 30-ին.

«Բոլոր լուրերը համընկնում են այն կետում, որ կառավարության վերջին միջոցառումները անհամեմատ ավելի շատ մարդկային կյանքեր են տարել, քան Աբդուլ Համիդի ջարդերը»:

Եվ.

«Այսօր այլեւս հնարավոր չէ ժխտել, որ թուրքերը, անկասկած, նույնիսկ բազմիցս պատահած պետական դավաճանության ու խռովության դեպքերը որպես առիթ են օգտագործել հայկական ռասայի բնաջնջումը անցկացնելու համար, ինչը եւ նրանց, ինչպես երեւում է, մեծ մասամբ հաջողվել է: Թալեաթ բեյն ինքն ասաց ինձ վերջերս որոշակի գոհունակությամբ, որ, օրինակ, էրզրումում հազիվ թե մի հայ գտնվի»:

Ավստրիական բանակի գլխավոր հրամանատարություն, կապի բաժ., Կ. Պոլիս, 1915 թ. հոկտեմբերի 8.

«Բանակի կորպուսներն ու ինքնուրույն դիվիզիաների հրամանատարները հատուկ օրենքով լիազորվել էին ստիպողական եղանակով վերաբնակեցնելու իրենց ռազմական գործողությունների շրջանում գտնվող անվստահելի ազգաբնակչությանը: Այս միջոցը արտակարգ խստությամբ կիրառվեց հատկապես հայերի դեմ, անգամ տպավորություն է առաջանում, թե այս օրենքն ընդհանրապես միայն այն բանի համար է ստեղծվել, որպեսզի օրենքի հովանու տակ հնարավոր լինի իրականացնել հայերի լիակատար բնաջնջումը... Թուրքական շրջաններում նկատվում է այն մտայնությունը, որ թուրքական կառավարության գործողությունները հայերի դեմ կատարվում են Գերմանիայի համաձայնությամբ»:

Նադամլենցկի, 1915 թ. հոկտեմբերի 29-ին.

«Տեղական (Ադրիանապոլսի) իշխանությունները հայտարարում են, որ այս դեպքերի (հայերի հալածանքների) համար պատասխանատվություն չեն կրում, որովհետեւ գործում են Կ. Պոլսից եկած հրամանով»:

Նադամլենցկի, 1916 թ. մարտի 3-ին.

«Հրամանները, որոնք այս կապակցությամբ եկել են Կ. Պոլսից, թվում է, թե ավելի վճռական բնույթ են կրում»:

Պալավիչինի, 1916 թ. մարտի 10-ին.

«Տղամարդկանց կոտորելը, իսկ կանանց ու երեխաներին հեռավոր շրջաններ արտաքսելը... ոչ միայն չի կարելի արդարացնել, այլեւ դա ընդմիշտ իբրեւ անարգանքի բիծ կմնա թուրքական կառավարության վրա»:

Պալավիչինի, 1917 թ. մարտի 24.

«Նախարարը (Ջավիդ բեյը), ինձ հետ զրուցելիս, հայերի հալածանքն անվանեց նախկին կաբինետի մեծագույն վրիպումը: Նա ասաց, որ քաղաքական տեսանկյունից մեծ սխալ էր ամբողջ ազգեր հալածել ու բնաջնջել ցանկանալը»:

Ինքը՝ Ջեմալ փաշան, գրում է իր «Հիշողություններում».

«Կառավարությունը տեղահանումները համարում էր օսմանյան պետության ողջ քաղաքական գոյության պաշտպանության ամենաազդու եւ ամենահարատեւ միջոցը, սակայն նա մյուս կողմից այդ միջոցառումներով առիթ տվեց քրդերի ու թուրքերի հանցագործություններին: Արդյոք չէ՞ր կարելի հարցը այլ կերպ լուծել»:

Ուշադրության են արժանի «ամբողջ ազգեր բնաջնջել ցանկանալը», «ռասայի բնաջնջման քաղաքականություն», «ամբողջ հայկական ռասայի ոչնչացում», «հայերի լիակատար բնաջնջում» եւ նման այլ արտահայտությունները, որոնք օգտագործում են Պալավիչինին եւ հատկապես այնպիսի իրավական անձինք, ինչպես հյուպատոսները, իրավաբանության դոկտորներ Նադամլենցկին եւ ուրիշներ: Դա ապացուցում է, որ ջարդերի չափերը ցեղասպանության են հավասարեցվում: Նույնիսկ թուրքական ֆինանսների նախարար Ջավիդ բեյը 1917 թ. մարտի 24-ին Պալավիչինիի հետ զրույցի ժամանակ դատապարտել է հայերի կոտորածը, ասելով «ամբողջ ազգեր հալածելու եւ բնաջնջելու ցանկության մասին»: 1915 թ. օգոստոսի 13-ին Պալավիչինիի արած գուշակությունը հետագայում արդարացավ. *«Ես մեծ վեզիրի ուշադրությունը հրավիրեցի այն բանի վրա, որ կգա այն ժամանակը, երբ թուրքական կայսրությանը օգտակար ժողովրդի բնաջնջման այս քաղաքականության համար Թուրքիան պատասխանատվության կենթարկվի»:*

Պնդում են նաեւ, թե հայերի հալածանքները միայն այն ժամանակ են սկսվել, երբ սրանք Վանում ըմբոստացել են թուրքերի դեմ եւ մահմեդականներին սպանել: Ավստրիական փաստաթղթերից երեւում է, որ հայերը միայն այն ժամանակ են սկսել պաշտպանվել, երբ նրանց արդեն տեղահանում ու հալածում էին: Արդեն 1915 թ. հունվարի 26-ին Կ. Պոլսից Վիեննա հաղորդեցին, որ *«Քրդերը նորից սկսել են կոտորել գյուղերի հայ բնակիչներին, սակայն առանձին գործողությունների միջոցով, որպեսզի կաս-*

կած չառաջանա, թե համընդհանուր հայկական կոտորած է տեղի ունենում»:

Մյուս վիճելի կետը զոհերի թիվն է: Ավստրիական փաստաթղթերում մինչեւ 1915 թ. վերջը սպանված հայերի թիվը հինգ հարյուր հազարից մինչեւ մեկ միլիոն է հասնում: Լեփսիուսը եւս նշում է մեկ միլիոն թիվը: Նույնիսկ թուրքական նոր կառավարությունը, որն իշխանության էր եկել 1918 թ. զինադադարից հետո, խոսում էր ութ հարյուր հազար մեռածների մասին: Ինչ որ է, ի՞նչ դեր են այստեղ խաղում թվերը: Մի՞թե ութ հարյուր հազար նահատակների համար պակաս պիտի ողբալ, քան 1,5 միլիոնի: Այն, որ պատերազմում պաշտպանվելը նաեւ սպանել է նշանակում, հերքել հնարավոր չէ, եւ անվիճելի է, որ հայերը երբեմն վրեժ են լուծել իրենց մահմեդական համերկրացիներից: Սակայն դժվար չէ պատկերացնել, որ ութ հարյուր հազար կամ մեկ ու կես միլիոն սպանված հայերը կգերադասեին ընկնել ռազմի դաշտում եւ հանուն իրենց հայրենիքի (հայերը միշտ էլ քաջաբար կռվել են Թուրքիայի համար, 1915 թ. սկզբին այդ մասին խոսում էր նաեւ էնվեր փաշան), քան մորթվել սեփական համերկրացիների կողմից:

Փաստաթղթերն իրենց լեզուն ունեն: Մարդիկ պետք է սովորեն կարդալ այդ լեզվով, որովհետեւ այդպես կարող են դասեր քաղել իրենց անցյալից: Պատմությունը ցույց է տալիս, որ անցյալը լի է սխալներով եւ չարժե դրանք ոչ հերքել, ոչ էլ ուրիշին վերագրել: Ավելի կարեւոր է գտնել արմատներն ու պատճառները, որոնք հասցրել են սարսափելի իրադարձություններին:

ՈՒՏՈՊԻԱ

Հարկավոր է թուրքերից ու հայերից բաղկացած մի հանձնաժողով կազմել, սկսել այնտեղից, որտեղ առաջին համաշխարհային պատերազմի պայթելու պատճառով ընդհատում եղավ: Դա 1914 թ. փետրվարի 8-ին էր: Այդ օրը պայմանագրով ռեֆորմներ էին սահմանվել հայերի համար: Այդ պայմանագրի հիման վրա հարկավոր է բանակցություններ վարել: Իհարկե, այսօրվա իրադրությունն այլ է, քան 1914-ին, բայց այն, ինչ լավ սկիզբ է ունեցել, պիտի մինչեւ վերջ տարվի: Առանց երկխոսության ըմբռնումն անհնար է: Գուցե հնարավոր է իրականացնել 1,5 միլիոն մորթվածների ցանկությունը, հայրենիք վերադարձնելով նրանց զավակներին, եթե նրանք ցանկանան այդ, որպեսզի խաղաղ ու ապահով ապրեն այնտեղ իրենց իսլամական համերկրացիների հետ միասին, ինչպես ապրել են ժամանակին: Ապագան կերտելու համար հարկավոր է հաղթահարել անցյալը:

ԹՈՒՐՔԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲՈՒՄ ԾԱՌԱՅՈՂ ԳԵՐՄԱՆԱՑԻ ՍՊԱՆԵՐԸ

Վիցեգեներալիսիմուս՝	գեներալ էնվեր փաշա
Գլխավոր շտաբի պետ՝	գեներալ-լեյտենանտ Ֆոն Սեկտ
Գլխավոր գրասենյակի պետ՝	փոխգնդապետ Դուսնստ

Բաժիններ.

Օպերատիվ բաժին՝	փոխգնդապետ Ֆոն Ֆելդման
Տեղեկատվական բաժին՝	փոխգնդապետ Սեֆի բեյ
Երկաթուղի՝	փոխգնդապետ Պֆանենշտիիլ
Բնակարանային՝	գեներալ-մայոր Բիշոֆ
Զինամթերքի եւ ռազմամթերքի՝	գեներալ-մայոր Շլեե
Հաղորդակցության հսկողություն՝	փոխգնդապետ Ռուշդի բեյ
Ռազմական հոսպիտալի՝	փոխգնդապետ էնդերս
	գեներալ-մայոր Սուլեյման
	Նաուման փաշա
Կապի՝	գնդապետ Փոչերնիկ
Գլխավոր գրասենյակ կոմենդանտ՝	փոխգնդապետ Մահմուդ բեյ
Կենտրոնական արխիվի՝	մայոր Զիյա բեյ
Քարածուխի՝	մայոր Նիմյուլլեր
Շինարարության եւ ամրությունների՝	գեներալ-մայոր Լանգենշտրաս

Թուրքական բանակում ծառայող գերմանացի սպաները

Լիման Ֆոն Զանդերս՝	*I բանակի հրամանատար.*
	1914 թ. օգոստոս-1915 թ. մարտ
	V բանակի հրամանատար.
	1915 թ. մարտ-1918 թ. փետրվար
	էֆ. բան. խմբի հրամանատար.
	1918 թ. փետրվար-1918 թ. հոկտեմբեր
Ֆոն դեր Գոլց՝	*I բանակի հրամանատար.*
	1915 թ. ապրիլ-1915 թ. հոկտեմբեր
	VI բանակի հրամանատար.
	1915 թ. հոկտեմբեր-1916 թ. ապրիլ
Ֆոն Ֆալկենհայն՝	*էֆ. բան. խմբի հրամանատար.*
	1917 թ. հունիս-1918 թ. փետրվար
Կրես Ֆոն Կրեսենշտայն՝	*VIII բանակի հրամանատար.*
	1917 թ. հոկտեմբեր-1917 թ. դեկտեմբեր

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԵՎ ԱՎՍՏՐՈ-ՀՈՒՆԳԱՐԻԱՅԻ ԴԵՍՊԱՆՆԵՐՆ ՈՒ ՀՅՈՒՊԱՏՈՄՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

Գերմանիայի դեսպանները Թուրքիայում

Ֆոն Վանգենհայմ՝	*1912 թ.-1915 թ. հոկտեմբեր*
Ֆոն Քյուլման՝	*1914 թ. հոկտեմբեր-նոյեմբեր*

Ֆոն Հոհենլոհե՝	*1915 թ. հուլիս-սեպտեմբեր*
Վոլֆ Մետեռնիխ՝	*1915 թ. նոյեմբեր-1916 թ. սեպտեմբեր*
Ֆոն Քյուլման՝	*1916 թ. նոյեմբեր-1917 թ. հուլիս*
Բերնստդորֆ՝	*1917 թ. սեպտեմբեր-1918 թ. հոկտեմբեր*

Ավստրո-Հունգարիայի դեսպաններն ու ներկայացուցիչները Թուրքիայում

Դեսպան՝	Յոհան մարկգրաֆ Ֆոն Պալավիչինի
Դեսպանի խորհրդական՝	Կարլ գրաֆ Ֆոն Թրաութմանսդորֆ
Հյուպատոսները.	
Անդրիապոլիսում՝	Մաքս Հերցֆելդ 1913 թ.-1914 թ.
	Արթուր Նադամլենցկի 1915 թ.-1918 թ.
Հալեպում՝	Ալոիս Դանդինի 1913 թ.-1918 թ.
Տրապիզոնում՝	Ֆոն Մորից 1913 թ.
	Էրնստ Կվյատկովսկի 1914 թ-1918 թ.
Ռազմական կցորդ՝	բարոն Վլադիմիր Գիզլ 1894 թ-1909 թ.
	Յոզեֆ Պոմյանկովսկի 1909 թ.-1918 թ.

Ավստրո-Հունգարիայի արտաքին գործոց նախարարները

Կոմս Աեհրենթալ.	*1905 թ. հոկտեմբեր-1912 թ. փետրվար*
Կոմս Բերխթոլդ.	*1912 թ. փետրվար-1915 թ. հունվար*
Կոմս Բուրյան.	*1915 թ. հունվար-1916 թ. դեկտեմբեր*
Կոմս Չերնին.	*1916 թ. դեկտեմբեր-1918 թ. ապրիլ*
Կոմս Բուրյան (2-րդ անգամ).	*1918 թ. ապրիլ-1918 թ. հոկտեմբեր*

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ

Մեծ վեզիր՝	Սաիդ Հալիմ փաշա. 1913 թ.-1917 թ. փետրվար
	Թալեաթ փաշա. 1917 թ. փետրվար-1918 թ. հոկտեմբեր
	Իզզեթ փաշա. 1918 թ. հոկտեմբեր-1918 թ. նոյեմբեր
ԱԳ նախարար՝	Սաիդ Հալիմ փաշա. 1913 թ.-1915 թ. հոկտեմբեր
	Խալիլ բեյ. 1915 թ. հոկտեմբեր-1917 թ. փետրվար
	Նիզիմի բեյ. 1917 թ. փետրվար-1918 թ. հոկտեմբեր
	Նաբի բեյ. 1918 թ. հոկտեմբեր
ՆԳ նախարար՝	Թալեաթ բեյ (1917 թ. փետրվարից՝ փաշա).
	1913 թ.-1918 թ. հուլիս
	Զամբոլաթ բեյ. 1918 թ. հուլիս-1918 թ. հոկտեմբեր
	Ֆեթհի բեյ. 1918 թ. հոկտեմբեր
Պատերազմի նախարար՝	Էնվեր փաշա.
	1914 թ. հունվար-1918 թ. հոկտեմբեր
	Իզզեթ փաշա. 1918 թ. հոկտեմբեր
Ռազմա-ծովային նավատորմի նախարար՝	Ջեմալ փաշա. 1914 թ. մարտ-1918 թ. հոկտեմբեր միեւնույն ժամանակ՝ Սիրիայի բանակի հրամանատար.

	1914 թ. նոյեմբեր-1917 թ. դեկտեմբեր
	Ռեուֆ բեյ. 1918 թ. հոկտեմբեր
Ֆինանսների նախարար՝	Ջավիդ բեյ.
	1914 թ. մարտ-1914 թ. նոյեմբեր
	Թալեաթ բեյ.
	1914 թ. նոյեմբեր-1917 թ. փետրվար
	Ջավիդ բեյ.
	1917 թ. փետրվար-1918 թ. հոկտեմբեր

ԱՐԽԻՎՆԵՐ, ՈՐՈՆՑԻՑ ՕԳՏՎԵԼ Է Ա. ՕՀԱՆՋԱՆՅԱՆԸ

1. Ավստրիական Պետական արխիվ. Վիեննա
   Հաուս-Հոֆ եւ պետ. արխիվ
   Ընդհանուր արխիվային վարչություն
   Պատերազմի արխիվ
2. Դիյոցեզան արխիվ. Վիեննա
3. Հունգարական Պետական արխիվ, Բուդապեշտ
4. Արտեմ Օհանջանյանի հավաքածու. Վիեննա
5. Մխիթարյան միաբանության արխիվ, Վիեննա

ԿՐՃԱՏ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

AON NA - Բանակի հրամանատարության տեղեկատվության բաժին
AOS - Արտեմ Օհանջանյանի հավաքածու
AVA - Ընդհանուր արխիվային վարչություն
BA - Դեսպանական արխիվ
FASZ - Faszikel
HHStA - Հաուս-Հոֆ եւ պետ. արխիվ
KA - Պատերազմի արխիվ
Konst. - Կոստանդնուպոլիս
MEV II - Մարիա էմֆենգնիս Ֆերայն II
NPA - Նոր քաղաքական արխիվ
PA - Քաղաքական արխիվ
PL - Մամուլի վարչություն
Präs. - Նախագահական վավերագրեր
USTA - Հունգարական Պետական արխիվ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Bainville Jacques, "Frankreichs Kriegsziel", Hamburg, 1940
Banse Ewald, "Die neue Türkei", Berlin, 1919
Barckhausen Joachim, "Männer und Mächte am Bosporus", Berlin, 1938
Barikian Anahid, "Die Entstehung der armenischen Frage im 19. Jh." Diss., Wien, 1948
Barsamian W. A., "Hay Djoghowurdi badmuziun", Yerewan, 1968
Bauer Otto, "Die Nationalitäten-Frage und die Sozialdemokratie", Wien, 1924
Baumgart Winfried, "Deutsche Ostpolitik 1918", München, 1966
Bihl Wolfdieter, "Beziehungen Österreich-Ungarns zum Osmanischen Reich, österr. Osthefte Nr. 24, Wien, 1982
Bihl Wolfdieter, Die Europäischen Mächte und die Entstehung der osmanischen Verfassung vom 23. Dezember 1876, österr. Osthefte Nr. 21, Wien, 1979
Bihl Wolfdieter, "Die Kaukasus-Politik der Mittelmächte", Band 1, Wien, 1975
Brentjes Burchard, "Drei Jahrtausende Armenian", Wien, 1976
Broad Luis, "Winston Churchill", Zürich, 1944
Churchill Winston, "Die Weltkrise 1911-1918", Zürich, 1947
Czernin Ottokar, "Im Weltkrieg", Berlin, 1919
Daschnakzutiun (Verlag), "Aram", Beirut, 1969
Djemal Pascha, "Erinnerungen eines türkischen Staatsmannes", München, 1922
EL-Ghassein Faiz, "Die Türkenherrschaft und Armeniens Schmerzensschrei", Zürich, 1918
Essad Bey, "Flüssiges Gold", Berlin, 1933
Fischer Fritz, "Griff nach der Weltmacht", Düsseldorf, 1961
Frölich Paul, "10 Jahre Krieg und Bürgerkrieg", Band 1, Berlin, 1924
Giesl Wladimir, "Zwei Jahrzehnte im Nahen Orient", Berlin, 1927
Goltz von der, "Denkwürdigkeiten", Berlin 1929
Golz Hanns, "Lepsius und die Armenier", Manus. 6. April 1986, Meran
Golz Hanns, "Zwischen Deutschland und Armenien", Theologische Literaturzeitschrift Nr. 12, Halle, 1983
Guse Felix, "Die Kaukasusfront im Weltkrieg bis zum Frieden von Brest-Litowsk", Leipzig, 1940
Hirschfeld Magnus, "Sittengeschichte des Weltkrieges", Wien, 1930/31
Hovannisian Richard, "Armenia on the Road to Independence 1918", Los Angeles, 1967
Izzet Pascha, "Denkwürdigkeiten des Marschalls Izzet Pascha", Leipzig, 1927
Jaspers Karl, "Vernunft und Freiheit, ausgewählte Schriften", Stuttgart, 1960
Kadjasnuni Hovhanes, "Daschnakzutiun anelik tschuni aylews", Wien, 1921
Kapri Freiherr von, "Zwei Vorträge", Wien, 1913
Khatisian Alexsander, "Hayastani hanrapetutian zagumn", Beirut, 1968
Kirakossian John, "Aradjin hamaschcharhain paterasm yew arevmtahayutiun" Yerewan, 1967
Kraus Karl, "Die Fackel", Wien Dezember 1914
Kressenstein Kress von, "Mit den Türken zum Suezkanal", Berlin, 1977
Lanne Peter, "Armenien: Der erste Völkermord des 20". Jh.s, München, 1977
Lawrence Thomas E., "Die sieben Säulen der Weisheit", Wien, 1936

Lazian G., "Haghapokhagan Demker", Kairo, 1945
Lepsius Johannes, "Armenien und Europa", Berlin, 1896
Lepsius Johannes, "Deutschland und Armenien 1914-1918", Potsdam, 1919
Lepsius Johannes, "Todesgang des armenischen Volkes", Heidelberg, 1980
Lutz Hermann, "Lord Grey und der Weltkrieg", Berlin, 1927
Mandelstam André, "Das armenische Problem im Lichte des Völker- und Menschenrechts", Berlin, 1931
Marquart Josef, Die Entstehung und Wiederherstellung der armenischen Nation, Berlin o. J.
Mayer Klaus, "Die Organisation des Kriegshauptquartiers bei k. u. k.-AOK im Ersten Weltkrieg 1914-1918", Diss. Wien, 1963
Morgenthau Henry, "Ambassador Morgenthaus Story", New York, 1915
Nansen Fridtjof, "Betrogenes Volk", Leipzig, 1928
Nicolson Harold, "Die Verschwörung der Diplomatie", Frankfurt, 1930
Nogales Rafael de, "Vier Jahre unter dem Halbmond", Berlin, 1925
Pomiankowski Joseph, "Der Zusammenbruch des ottomanischen Reiches", Leipzig, 1928
Rohrbach Paul, "Der Krieg und die deutsche Politik", Dresden, 1914
Sabah-Gulian S., "Pataskhanatuner", Beirut, 1974
Sassuni K., "Aprilian yeghern knnakan aknozow", Beirut, 1965
Schöllgen Georg, "Imperialismus und Gleichgewicht, Deutschland, England und die orientalische Frage 1871-1914", München, 1984
Seeliger Emil, "Hotel Sacher", Berlin, 1939
"Spartakus-Briefe", Berlin, 1958
Stürmer Harry, "Zwei Kriegsjahre in Konstantinopel", Lausanne, 1917
Stürgkh Joseph, "Im Deutschen Grossen Hauptquartier", Leipzig, 1921
Stürgkh Joseph, "Politische und militärische Erinnerungen", Leipzig, 1922
Ternon Yves, "Tabu Armenien", Frankfurt, 1981
Trumpener Ulrich, "Germany and the Ottoman Empire", New Jersey, 1968
Tylor Edmond. "Der Untergang der Dynastien", Wien, 1963
Vierbücher Heinrich, "Armenien 1915", Hamburg, 1930
Volck Herbert, "Odyssee für Deutschland', Breslau, 1939
Wegener Hans L., "Der britische Geheimdienst im Orient", Berlin, 1924
Westenenk, "Die Tagebücher von Westenenk", Institut für Armenische Fragen. München, 1986
Zechlin Egmont, "Erster Weltkrieg, Ursachen, Entstehung und Kriegsziele, Göttingen
Ziemke Kurt, "Die neue Türkei, Berlin, 1931
"Hamdes Amsorya", Mechitaristen Kongregation, Wien, Juli 1920, Nr. 7
"Pogrom", Göttingen 1980, Nr. 72/73
"Deutsch-Armenische Korrespondenz", Berlin, 25. November 1918, Nr 2

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ա
Աբդուլ Ազիզ 36
Ալեքսանդր II 14
Ահարոնյան Ավետիս 160, 182, 211
Աեհրենթալ, գրաֆ 231
Ակնունի 58, 59, 81
Ամելով 212
Անդրանիկ 85, 129, 159
Անդրեասյան Տիգրան 110, 113
Անրի 66
Արամ 92, 93, 227
Արգայլի դուքս 19
Արմեն Կարո 85
Արմիկ Ավգուստին 204
Արխարունի (արքեպիսկոպոս) 51
Արց (գեներալ-գնդապետ) 168

Բ
Բանզե, էվալդ 215, 222
Բարիկյան Ա. 33
Բաուեր Օտտո 12
Բաումգարտ Վ. 139, 170
Բեյ Ֆ. 28, 29
Բեյե 75
Բեհաեդդին 80
Բերգֆելդ 123
Բեռնստորֆ Յոհան 158, 160, 171, 230
Բեռխթոլդ 52, 75, 77, 231
Բիհլ Վոլֆդիթեր 8, 116, 139
Բիշոֆ (գեներալ) 230
Բիսմարկ Ֆուրստ 17, 18, 21, 71, 200
Բրայս, վիկոնտ 123
Բռոնսարթ ֆոն Շելենդորֆ 123, 197
Բուրյան ֆոն Ռաջեյ 110, 112, 113, 136, 137, 142, 143, 155, 158, 161, 162, 174, 175, 178, 205, 212
Բուշե 148

Գ
Գաբաեւ (գեներալ) 149
Գալիցին 125
Գեգեչկորի 132, 140, 144, 148
Գիզ դը 66
Գիզլ 28, 31
Գիրս Միքայել 54, 66, 68
Գիլս Վլադիմիր 61, 62
Գլադստոն 29
Գոլց (մարշալ) 22, 24, 38, 39, 44, 61, 72, 215, 222
Գրեյ սըր Էդվարդ 52, 71
Գրենվիլ, լորդ 21
Գրոսման (գեներալ) 122
Գուշկեւիչ 61, 62
Գեւորգ Ե (կաթողիկոս) 14, 48, 178, 226

Դ
Դալվարյան 49
Դամադ Մահմուդ 30
Դանդինի դե Սիլվա 61, 99, 101, 110, 122, 219
Դերվիշ փաշա 26
Դուսնստ 230
Դուրյան Եղիշե 58
Դուֆֆերին, լորդ 21

Զ
Զադե Ռասուլ 144
Զանդերս ֆոն 61, 83, 121, 122, 160, 211, 230
Զավեն (եպիսկոպոս) 32, 85
Զարուբով 161
Զեքթի (գեներալ) 138, 141, 160
Զոհրապ (փաստաբան) 41, 90

Է
Էդվարդ (թագավոր) 37
Էլ-Ղասեյն (շեյխ) 22, 101
Էհռենթալ 77
Էնդերս 230
Էնվեր փաշա 41, 42, 79, 82, 83, 86, 87, 88, 89, 91, 96, 115, 116, 117, 121, 132, 153, 159, 160, 164, 167, 170, 181, 183, 207, 209, 212, 216, 223, 230, 231
Էսադ փաշա 181
Էռցբեռգեր Մ. 209, 210

Թ
Թալեաթ փաշա 41, 55, 68, 69, 81, 82, 88, 90, 91, 96, 101, 108, 112, 115, 116, 120, 121, 142, 153, 158, 171, 173, 174, 182, 183, 195, 202, 204, 206, 209, 210, 212, 216, 225
Թեյլոր Է. 36, 77
Թրանոն 100
Թրաուբմանսդորֆ Կարլ 108, 116, 117, 233, 234
Թուռն 50, 54

Ժ
Ժորդանիա 138, 144, 148

Ի
Իգնատեւ 14
Իզզեթ փաշա 182, 183
Իոֆֆե 173
Իշխան 92

Լ
Լեդեբուռ 224
Լեյարդ 16
Լենին 126, 127, 129, 148
Լեսլեն 196
Լեո 159
Լեփսիուս 30, 41, 59, 91, 93, 96, 99, 186, 207, 222, 236
Լիբկնեխտ 73, 224, 225
Լոսով (գեներալ) 149, 150, 151, 153, 154
Լորենս 44, 103, 230
Լուդենդորֆ (գեներալ) 138, 141, 160

Խ
Խատիսյան 147, 149, 153, 160, 165, 181, 211, 230
Խրիմյան (կաթողիկոս) 16

Ծ
Ծերեթելի 140, 148

Կ
Կալիչե 22, 23, 24, 25, 26, 30
Կալնոկի 21
Կանայան (Դրո) 85
Կարախան Լեւոն 133
Կարի Ֆիլիպ 23
Կարիեր (դեսպան) 26
Կարլ I 149, 168, 178, 183
Կարճիկյան 165
Կաֆավյան Ա. (Քեռի) 85
Կերենսկի 127
Կորգանյան (գեներալ) 149
Կոնրադ 79
Կրամոն (գեներալ) 126
Կվյատկովսկի 20, 102, 183, 188, 203, 204
Կրաուս Կարլ 200
Կրես ֆոն (գեներալ) 110, 161, 165, 168, 173, 212, 226
Կրեսենշտայն 160

Հ
Հազե 202
Հաջինսկի 149
Համիդ Աբդուլ 20, 22, 27, 28, 29, 30, 31, 35, 36, 37, 39, 41, 42, 43, 44, 45, 48, 87, 116, 121, 203, 215, 234
Համիլտոն Ալ. 44
Հախվերդյան 165
Հալիլ բեյ 41, 82, 112, 115, 116, 117, 131, 149, 206
Հալիմ փաշա 60, 81, 83, 171, 194
Հարությունյան 140
Հաքքի Ի. 102
Հերթլինգ 226
Հիլմի փաշա 37
Հինցե 173, 174
Հիռշֆելդ 189
Հմայակ արքեպիսկոպոս 57
Հյոցենդորֆ Կոնրադ ֆոն 74, 76
Հոհենլոհե 100, 101, 142, 179, 224
Հոֆ 66, 68
Հոֆեր՝ 108, 205
Հոֆման 128
Հուման 223

Մ
Մանդելշտամ 54, 56, 57, 63, 64, 65
Մանուկյան Ա. 165
Մանդլ Լ. 75, 198
Մալեզյան Վահան 58
Մատթեոս (արքեպիսկոպոս) 25
Մարշալ (բարոն) 24
Մարկվարտ 186, 222
Մելիք-Կարագյոզյան 143
Մեհմեդ սուլթան 42
Մենսդորֆ 52
Մեսրոպ (եպիսկոպոս) 161, 162, 180
Մետեռնիխ 121, 224, 230
Միդհաթ փաշա 36
Մոլթքե 76, 79
Մորգենթաու 94, 108, 195, 202, 215, 216, 222, 223
Մորից 63, 93, 230
Մուրադ 36, 138

Յ
Յագով ֆոն 52, 225
Յասպերս Կարլ 213
Յովանովիչ (դեսպան) 75

Ն
Նադամլենցկի 108, 111, 112, 113, 114, 117, 187, 205, 207, 222, 234
Նազարբեկյան 148, 149, 150
Նազարյանց 143
Նաջի 80
Նազիմ բեյ 165
Նամիկ բեյ 114
Նանսեն Ֆրիտյոֆ 13, 23, 231
Ներսես III (արքեպիսկոպոս) 14, 24
Նիազի 37
Նիկոլայ II 37, 125
Նիսմի բեյ 140
Նոգալես 94, 100
Նուրի փաշա 164, 168

Շ
Շահումյան Ստ. 129, 168, 173
Շոյբներ 205
Շեյխ-Ուլ Իսլամ 83, 102
Շեւքեթ փաշա 36, 41, 54
Շերիֆ փաշա 102, 230
Շյոբներ 123, 223
Շյոն Ֆոն 29
Շվարց 202
Շվեգել ֆոն 19
Շտայներ 162
Շտեռլիցեր 26
Շտյուրք 74, 185
Շտոֆելս 123
Շտում ֆոն 126, 174, 224
Շտումֆոլ 58
Շռաուբինգեր 208, 212
Շոլլգեն 68
Շուլենբուրգ 123, 223

Չ
Չեռնին 75, 126, 127, 128
Չեռնոխ (կարդինալ) 210, 211
Չերչիլ Ուինսթոն 79
Չիրշկի 75
Չխենկելի 144, 147, 148, 149

Պ
Պալավիչինի 49, 51, 53, 54, 55, 56, 57, 59, 60, 61, 62, 63, 77, 79, 82, 83, 84, 86, 88, 91, 94, 100, 101, 111, 112, 113, 114, 115, 116, 117, 118, 119, 120, 122, 131, 132, 140, 141, 143, 158, 159, 167, 171, 181, 187, 202, 203, 205, 206, 207, 211
Պանֆիլի 56
Պառա 39
Պաստրմաջյան 28
Պոմյանկովսկի 12, 24, 62, 72, 77, 86, 90, 91, 121, 122, 142, 149, 181, 216, 223, 225
Պիֆլ (կարդինալ) 208, 209, 210, 211
Պողոս Նուբար փաշա 48, 58, 174, 194

Ջ
Ջամալյան 143
Ջավիդ բեյ 119, 228, 229, 231
Ջելալ փաշա 102, 138
Ջեմալ փաշա 82, 119, 149, 183, 213, 228, 231

Ջերարդ Ջեյմս 78
Ջեւդետ բեյ 91, 92

Ռ

Ռադիմսկի Վլադիմիր 122, 211
Ռադոլին Ֆուրստ 24
Ռամիշվիլի 144, 148
Ռայս 188
Ռասել լորդ 17
Ռասուլ Ջադե 149
Ռեուֆ բեյ 35, 138
Ռեշիդ բեյ 46
Ռիզա բեյ 37, 102
Ռոհրբախ 77, 188, 215
Ռուստամբեկով 140

Ս

Սաբահգուլյան 191
Սաբահեդդին 37
Սազոնով 50, 54, 56, 81, 193
Սահակյան 147
Սան Ջուլիանո մարքիզ 50
Սասունի Կարո 104, 230
Սավել էդիթ 197
Սեսիլ լորդ 197
Սիլասի 162, 164, 165, 170, 212
Սկիպինելլի 205
Սկրբենսկի 210
Սպանելլի 110
Սպենսեր Հ. 44
Սոլսբերի լորդ 17, 19, 20, 30, 55
Ստալին Իոսիֆ 148
Սրվազյան Հ. 85
Սուխոն 86

Վ

Վագներ Հերմենգիլդ 75
Վանգենհայմ 53, 54, 61, 62, 68, 79, 80, 82, 83, 95, 101, 104, 121, 204, 213, 216, 223
Վարդգես 90
Վեգեներ 16
Վեհիբ փաշա 131, 132, 138, 139, 147, 148, 149, 150, 170
Վեստենենկ 28, 66, 68, 69
Վիլհելմ II (կայսր) 29, 38, 52, 71, 73, 80, 148, 168, 183
Վիլսոն 177, 178, 181, 182, 213
Վիկտորիա (թագուհի) 15, 27
Վիսկոնթի 26
Վռամյան 44, 92, 229

Տ

Տաղավարյան 90
Տեր-Մինասյան Ռ. 128
Տիսցա Իշտվան 76, 201
Տրդատ 191
Տրոցկի 128, 132, 138

Ց

Ցիխի 18
Ցիմերման 121, 186, 187

Քաջազունի 147, 148, 149, 165, 166
Քելեքյան 57
Քեմալ փաշա 42, 82
Քյուլման Ռիչարդ ֆոն 121, 127, 128, 133, 155, 158, 160, 224
Քյոպեր 72
Քրեսենշտայն 226

Օ

Օդիշելիձե 138, 139
Օհանջանյան Հ. 161, 174, 175, 176, 212
Օպենհայմ Մաքս ֆոն 78
Օրմանյան 30, 49

Ֆ

Ֆալկենհայն (գեներալ) 122
Ֆիշեր Ֆրից 74
Ֆորստեր 16, 17
Ֆրանկենշտայն 161, 165, 167, 178, 212
Ֆրանց Յոզեֆ I 74, 76
Ֆրանց Ֆերդինանդ 74, 77
Ֆունդեր 75

ԱՐՏԵՄ ՍԵԴՐԱԿԻ ՕՀԱՆՋԱՆՅԱՆ

1915 Թ-Վ ԱԿԱՆ.
ԱՆՀԵՐՔԵԼԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**(Ավստրիական վավերագրերը
հայոց ցեղասպանության մասին)**

Խմբագիր՝ Լ. Զ. ԱՆԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, 1997:

Արտեմ Օհանջանյանը ծնվել է 1936 թ. Բաքվում: Ծնողները 1920 թ. մարտին, փրկվելով Շուշիի եղեռնից, տեղափոխվել են Բաքու: Միջնակարգ կրթությունը ստացել է Թեհրանում:

1964 թ. ավարտել է Վիեննայի արվեստի համալսարանը կինոռեժիսորի մասնագիտությամբ, ապա ուսանել է Վիեննայի համալսարանում՝ ստանալով պատմական գիտությունների դոկտորի աստիճան: Նա նկարահանել է շուրջ 60 վավերագրական եւ գեղարվեստական ֆիլմեր, միջազգային երեք փառատոներում արժանացել գլխավոր մրցանակի:

1982 թ. սկսած Ավստրիական արխիվներում ուսումնասիրել է Հայաստանի պատմության հետ առնչվող նյութերը եւ Վիեննայում գերմաներեն լույս ընծայել փաստաթղթերի եւ վավերագրերի 12 հատորանոց ժողովածուն: Այս աշխատություններում առանձնահատուկ տեղ ունեն 1915 թ. եղեռնի մասին պատմող ավստրիական փաստաթղթերը: Թուրքիայում հայերի զանգվածային ոչնչացման վերաբերյալ այս գրքերը մեծ ազդեցություն գործեցին եվրոպացի գիտնականների վրա: Օհանջանյանի աշխատություններին հաջորդեցին եվրոպացի գիտնականների հայկական եղեռնի մասին տասնյակ գրքեր, որոնք հաստատում էին Ավստրո-Հունգարիայի եւ Գերմանիայի մեղքը:

Վիեննայի համալսարանի նոր պատմության ինստիտուտի ռեկտոր Վոլֆդիթեր Բիհլը Արտեմ Օհանջանյանին անվանել է «հայ-ավստրիական պատմաբան»: